.К61.54
К-39
139
5(47.92)
К-39

9(47.92)
Կ-39
15b08
24 JAN 2006
19 AUG 2011

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՎԷՐՔԵՐ

ԱՌԱՋԻՆ ՀԱՏՈՐ

Հրատարակութիւն

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ЛD05
Д0853
ՀՍԽՀ ՀԱՅԿԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ССРА Центральная библиотека
7/XI-1922
имени А. Мясн. и на
Ա. ՄԱՍ Ի. ՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ТР 139

ԺԸՆԵՎ
1903

20853 X

Ձեզ, գաղափարի անվեհեր ռազմիկներ, որ գործի մէջ և աքսորավայրերում, բանտի մէջ և կախաղաններից, տանջանքով և յոյսերով՝ Հայկական Ազատութեան արձանն էք հրաշակերտում անդուլաբար, Ձեզ եմ նուիրում Վէրքերի այս մատեանը — ձեր մեծ գործին, ձեր վիրաւոր Ցիշատակին, ձեր Հալածական Անուան։

Է. ԱԿՆՈՒՆԻ

ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

„Վէրքեր“ շատ ենք ունեցել մեր սեւաւոր պատմութեան ընթացքում. շատ ունենք և այժմ։ Ու այդ ցաւոտ վէրքերի երկարաձիգ շարքին աւելացաւ մի նորը՝ շնորհիւ այն տիրապետութեան, որից երբեմն „Վէրք Հայաստանի“ ի հեղինակը ամբողջ Արարատեան աշխարհի հետ միասին բուժումն էր սպասում։ „Կովկասեան Վէրքերն“ են դրանք, որ ահա առանձին գրքով առաջարկում ենք հայ ընթերցողներին։

Ներկայ աշխատութիւնը պարունակում է իր մէջ մեծ մասը „Կովկասեան Խաբրիկների“, որոնք տպագրուեցին „Դրօշակի“ էջերում՝ 1900—1903 թուականներին, փոփոխած ու լրացուած, նաև նոր գլուխներ՝ գրուած յատկապէս այս գրքի համար, իբրև ամփոփումն շօշափուած նիւթի։

Այն ջերմ՝ ընդունելութիւնը, որ Է. Ակնունու „Խաբրիկները“ գտան հասարակութեան կողմից, համոզիչ նշան է, որ՝ բացի նրանց գրական ու պատմական արժանաւորութիւններից՝ փաստերը այրող են, հարցը՝ կենսական։ Ներկայացնելով այս գիրքը հայ հասարակութեանը, մեր նպատակը չէ միայն հնարաւորութիւն տալ նրան՝ տեսնելու և ուսումնասիրելու իր խոր վէրքերը, այլև մատնելու՝ պատշաճ լրջութեամբ, այն միջոցների մասին, որոնք անխուսափելի են, նոյնիսկ հրամայական՝ նրանց բուժման համար...

„ԴՐՕՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ժընեվ, 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

„ՌՈՒՍԱՑՈՒՄ“

Երես

Զմերային պալատի խորհրդակցութիւնը։ — Հալածասէր քաղաքականութիւնը և փոքրիկ ազգերը։ — Կովկասեան փոխարքան։ — Իշխան Գոնդուկով-Կորսակովի ընթացքը։ — Հայոց դպրոցները և զինուորագրութեան „վանդը“։ — Շերեմետեվ։ — Վատերից վատը . . . 8

ՏԻՊ-ՌՈՒՍԱՐԱՐԸ

Մեծաւորի մուտքը։ — Իշխան Գ. Ս. Գոլիցին։ — Նրա խորհրդականները։ — Հալածանքի դարագլուխը։ — „Տեղացիներին պաշտօն չը պէտք է տալ“։ — Նշանները։ — Թիֆլիզի քաղաքային դումայի շուրջը։ — Անարդարութիւնը յաղթական, ... 17

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ

Առաջին փակումը։ — Նախատմամբ։ Ծրագիր։ — Կասկածներ Էջմիածնի հայրերին։ — Բանակում սինոդի եւ պաշտօնական օրգանի միջև։ — Դպրոցների երկրորդ փակումը։ — Նորանոր խստութիւններ. 28

ՑԱՓԾՏԱԿՈՒԹԻՒՆ

Դպրոցական կալուածքներ։ — Յափշտակութեան փաստեր։ — Եկեղեցական կալուածքներ։ — Պատարանի բռնած դիրքը։ — Եկեղեցին և նրա հարստութիւնը։ — Նորանոր հարուածների ծրագիրը. 45

„ԳՆԱՑԷՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԷՔ“

Յաւատու ճառագայթներ։ — Յատուկ քննիչների ճամբորդութիւնը։ — Մասալով և իշխան Ուխտոմսկի։ — Ի՞նչ էր պատճառը։ — Անգլիական դաւերի սրուական։ — Հայ-անգլիական համակրութիւններ։ — Քննութեան արդիւնքը։ — Անարժէք զեկուցագիր 64

ԳԱՂՑՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄ

Դէպի Պետերբուրգ։ — Բարձրագոյն ուսնկդրու-

թիւն։ — Գաղանի զեկուցագիր։ — Ի՞նչ է նրա բովանդակութիւնը։ — Հայկական միաւորներ։ — Կայսերական դիտողութիւնները։ — Գաղթեցնելիք հայերին . . . 75

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔ

Խաբուսիկ օրէնքը։ — Ո՞ւր է կրօնական ազատութիւնը։ — Ընտանեաց եկեղեցի։ — Հալածանք։ — Միսիոնար-չինովնիկներ։ — Կրօնի դատաւորութիւնը։ — Ի՞նչպէս պէտք է երդուել։ — Խեղդուած բողոք 86

„ՓԱԿԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

Բարեգործութիւն։ — Պետերբուրգի ուսած հրահանգը։ — Պէտք է փակել։ — Նոր կանոնադրութիւն։ — Մեռցնող շունչը։ — Փակուած դրադարաններ։ — Ինչպէս է հիմնուում մի դրադարան։ — Բարեգործական հիմնարկութիւնների աւերակները. 103

ՊԼՈՒԹՈՒ ՁԵՆ ԳՐՔԵՐ

Միամիա յոյսերի օրեր։ — Հրատարակչական ընկերութիւնը։ — 21 տարուայ գործունէութիւն։ — Ցպագրուած գրքերի սրակը և քանակը։ — Ընկերութեան վերջնական փակումը։ — „Ցիվիլիզացիա և սիֆիլիզացիա“. . . . 118

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

Երկիւղի նոխադդայսումը։ — Թեմական դպրոցների խնդիրը։ — „Պօլժենիա“։ — Գաղանի կօմիտէի ծրագիրը։ — Պատկեվիչի և Բլուդովի կարծիքը։ — Նիկոլայ կայսեր հրամարտակը։ — Կասկածներ թեմական դպրոցների դէմ։ — Քաղաքական ականներ. 126

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋՔ

Դարերի կոթողը։ — Գրոհ մահմեդական տիրապետութեան դէմ։ — Ներսէս Աշտարակեցու դիմումը հայութեան։ — Էջմիածնի համակրանքը դէպի ռուսաց տիրապետութիւնը։ — Թիւրքահայերի քաղաքական արժէքը։ — Մատթէոս և Գէորգ կաթողիկոսների շրջանը։ — Հաւատացեալներ Էջմիածնի իրաւասութեան։ — Փասատեր։ — Բարձն Նիկոլայի գաղանի զեկուցագիրը. . 140

ԳԱՒ-Վ ԱՐՊԵՏՆԵՐԸ

Գենեռալական նշանաբանը։ — „Հայերի գաղանի

ժողովները և Նահանգապետի հրամանը։ — Շալիկով և Տիզենհաուզեն։ — Գեներալ Ֆրեզե եւ Հայկական ցոյց Էջմիածնում։ — „Հայերը քանդում են ռուսաց եկեղեցին“։ — Կեղծ պրոկլամասիոնը։ — Կիպիանի և վրաց ապստամբութիւնը։ — Հայկական ցոյց Արծրունու թաղման ժամանակ։ — Ջրօրհնէքի շարժումը։ — Եպիսկոպոսական աքսորը։ — Մեծ դաւադրութիւնը և զաւեշտական վախճան։ — Զինուորական Ատուածը. . . 181

ԿԱՇԱՌՔԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Ընկաշնու ձեռքը։ — Դատարանի նախագահի սխալմունքը։ — Դիրեկտորական սխրագործութիւն։ — Ցենղօրական կաշառակերութեան եղանակը։ — Ցուրք ստիկանութեան։ — „Երկու չափ, երկու կշիռ“. . . . 196

ՀԱՅ ԱԾԱԿԱՆ ԻԵՋԻՆԵՐ

„Գիտէք արդեօ՞ք տեղական լեզուն“։ — Ռուսերէնը Կովկասում։ — Դատարանում և գիւղի մէջ։ — Զինուորական տեսանք։ — Լեզուական տանջանք։ — Գեղերեան դլխարկները 209

Ց Ե Ն Զ Օ Ր

Բռնաւորի պատգամը։ — Ցպագրական գործերի գրաքննութիւն։ — Ցենղօրական կօմիտէներ։ — Օրէնքը դատարկ հնչիւն է։ — Փաստեր։ — Առասպելական խոստութիւններ։ — Ի՞նչ է կատարւում Կովկասում։ — Փաստերի փոքրիկ շարան։ — Խե՜ղճ գրականութիւն. . 223

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Արևելեան քրիստոնեաների պաշտպանը։ — Պետրոս Մեծի և Եկատերինէ կայսրուհու տրամադրութիւնը։ — Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ծրագիրը։ — Արարատեան թաղաւորութիւնը։ — Ներսէս Աշտարակեցին և Հայկական զօրագունդը։ — Ռուսաստանը չիրագործեց իր խոստումը։ — Սան-Ստեֆանօյի և Բերլինի Դաշնագիրները։ — Կովկասեան ոգևորութիւններ։ — Հալածանք թիւրքահայերի շարժման դէմ։ — Խոստութիւններ Կովկասում։ — Քաղաքական կոկիծ, . . . 260

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

Հայ գաղթականները սահմանագլխին։ — Մարմնա-

ցած թշուառութիւն։— Փոխը և դարձը։— Ռուսահպատակութեան խնդիրը։—Բռնութեան „կնուար“։ — Հարձաձնների կարաւանը։—Դժգոհութեան շղթան. . 285

ԴԷՊԻ ԲԱՆՏԵՐԸ

Կալանաւորի պատմածը։ — Գիշերային խուզարկութիւն։—Դէպի բանտը։—Բանտապետի դրասենեակը։— Հանդերձարանում։ — Փակած դռան ետեւը։ — Ի՞նչ է ուզում բանտարկեալը։ — Ցեսակցութիւն։ — Գաղտնի յարաբերութեան միջոցներ։ — Հարցաքննութեան ձեւերը։ — Ժամանակակից Բաստիլը 299

ԳԱՂՏՆԻ ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐ

Կառավարչապետի դիւանատան գաղտնի հրամաններ։ — Գաղտնի հաղորդագրութիւններ Կարսի նահանգապետի և շրջանապետի կողմից։— Թիֆլիզի ժանդարմական վարչութեան կազմած գաղտնի ցուցակը։— Հայ քաղաքական կալանաւորների ցանկը 320

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ

Եկեղեցական կալուածքների խլումը։ — Հայոց եկեղեցու իրաւունքները։ — Յունիսի 12-ի հրամանը։ — Ժողովրդական ցասումը ուսաց կառավարութեան դէմ։— Ալէքսանդրօպոլի հայերի ցոյցը։ — Ցոյց Երևանում։ — Կ. Պոլսի հայոց պատրիարքի հարցը։—Կոչ. . . . 332

ՎՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ

Պատմական հրավառակը։ — Վրաստանի միացման խնդիրը։—1783-ի դաշնագիրը։—Ալէքսանդր I-ի մանիֆէստը միացման մասին։ — Դժգոհութեան նշաններ Վրաստանում։ — Ի՞նչ դեր կատարեց վրաց ազնուականութիւնը։ — Նորագոյն ժամանակները։ — Արթնացող ժողովուրդը։ — Բեկոր Զուգեցկու ապանութիւնը։ — Բողոք սեմինարիայում։ — Լեզուի խնդիր։ — Դժգոհութեան աճումը։ — Անկախ Վրաստան 348

ՆՈՐ ՕՐԵՐ

Բաժանիր, որ տիրես։ — Յեղափոխական ոգին։ — Կարմիր դրօշակը Կովկասում։ — Համերաշխութեան գաղափարը։—Կովկասեան դաշնակցութիւն . . . 361

„ՌՈՒՍԱՑՈՒՄ“

(ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ)

Զմերային պալատի խորհրդակցութիւնը. — Հալածասէր քաղաքականութիւնը եւ փոքրիկ ազգերը. — Կովկասեան փոխարքան. — Իշխան Դոնդուկով-Կորսակովի ընթացքը. — Հայոց ղեպրոցները եւ զինւորագրութեան „վտանգը“. — Կառավարչապետ Շերեմետեվ. Վատերից վատը:

Անդիժանի ապստամբութիւնից յետոյ էր: Զմերային պալատում կայացած „արքայական“ խորհրդակցութեան ժամանակ, Բամանոմվլեների տոհմին պատկանող մեծ-իշխաններից մէկը, որ, իբրև բացառութիւն, կարողացել էր արքայական տիտղոսին միացնել մի քանի ազատական զգացմունքներ՝ վրդովւած բացականչեց.

—Քսան տարի է, ինչ լսում եմ ռուսացման փրկարար նախագծերի մասին և մեզ խոստացւած անթիւ բարիքների փոխարէն այն եմ տեսնում, որ Լեհաստանում ատում են ռուսին, Ֆինլանդիայում արհամարհում են մեզ, Կովկասում նախկին սիրոյ փոխարէն՝ սկիզբն է առել մի համատարած թշնամութիւն, և մինչև իսկ Անդիժանում, ուր դեռ չեն ցամաքել ռուսաց զօրքի արեան հետքերը, ապստամբութեան պատրաստութիւններ են տեսնում...

Ակնյայտնի ճշմարտութիւն էր այդ, որ սակայն մնաց չը լսւած, անյարգ: Բողոքները ապարդիւն անցան: Եւ միապետութեան ձուլարանում յօրինւած այդ բառը մնաց իբրև նշանաբան այն քաղաքականութեան, որ

այժմ բացարձակ արշաւանք է գործում Ռուսաստանի բոլոր ծայրերում, և եթէ կամենաք, մինչև իսկ կենտրոնում, որովհետև գտնում են, որ այժմ նոյն իսկ ռուսների մէջ կան մարդիկ, որոնց պէտք է ռուսացնել, համարելով նրանց „ոչ-բաւականաչափ ռուս“ ներկայ „կուրսի“ տեսակէտից։

Երէկւանից չէ սկսւում այդ քաղաքականութիւնը։ Ընդհակառակն 1863 թւի լեհական համարձակ, բայց անյաջող ապստամբութիւնից յետոյ էր, — ապատութեան նոր փորձ 1830-ի շարժման յաջորդող սերունդի ձեռքով — որ Ռուսաստանում գրեթէ բարձրացրեց հպատակ ազգութիւնների ռուսացման քաղաքականութիւնը։ Պակայն Ալեքսանդր II-ի կայսրութեան օրով (1855-1881), երբ դէպքերը, ներշնչած 1848-ի հովերով և միացած Ղրիմի պատերազմի տխուր հետևանքներին, թելադրեցին մի շարք առաջադիմական բէֆորմներ, — Ճորտութեան ոչնչացումը՝ 1861-ին, մարմնական պատժի վերացումը 1863-ին, դատաստանական բէֆորմները 1864-ին, քաղաքային ինքնավարութիւնը 1870-ին, — այդ խաւար քարոզը չը կարողացաւ լայն ճանապարհ բանալ։ Մտքերը տարուած էին ոգևորող յոյսերով։

Անցան տարիներ, և ահա տեղի ունեցաւ մարտի 1-ի սպանութիւնը։ Կայսեր դիակը հողին յանձնելու հետ միասին՝ Պետերբուրգից հեռու տարագրուեցին նրա շրջապատողները. կոմ Լորիս-Մելիքովի աւելի քան համեստ, բայց այնքա՞ն յոյսեր ներշնչող սահմանադրութեան ծրագիրը փակուեց անեմափանց գաղտնարաններում, և նոր կայսեր մտերիմ խորհրդատուները, յանձին Ցօլստոյի և Պօբեդոնոսցեվի, համոզելով Ալեքսանդր III-ին (1881-1894), որ մարտի 1-ի սպանութիւնը և ազգայնական հարցերը պետութեան ծայրերում՝ ոչ այլ ինչ են, եթէ ոչ նախորդ կայ-

սրուվեան աղատական հովերի արդիւնք, հրապարակ բերեցին մի այլ ծրագիր՝ յետագէմ և ճնշող, որի էական կէտերից մէկն էր՝ ռուսացման խնդիրը։

Կովկասն էլ „ազգերի և ազգինքների“ այդ գեղանի երկիրը, որ երբեմն սրատաբուխ սիրով յարեց ռուսական տիրապետութեան, զերծ չը մնաց նոր հոսանքի հարուածներից։ Կարճ ժամանակում զգալիօրէն փոխուեց երկրի կառավարութեան ոգին, որը՝ յանձին փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկոլաէվիչի՝ համապատասխան չէր այդ „հոսանքին“. ընդունեց Կովկասեան „փոխարքայութիւնը“. Միխայիլ Նիկոլաէվիչը, իբրև անանպատակայարմար մարդ, պահուեց Պետերբուրգում և նրա տեղ, „կառավարչապետի“ տիտղոսով, Թիֆլիս ուղարկուեց իշխան Գոնդուկով-Կորսակով։

Մեծ իշխանը, կապուած երկրի հետ եթէ ոչ վարչական խոշոր ծրագիրներով, գէթ երկար տարիների յիշատակներով ու զգացումներով, կսկիծը սրտում հեռացաւ Կովկասից, ուր նրա կառավարութիւնը տեւել էր ամբողջ 19 տարի (1862-1881)։ Փոխադարձ յարաբերութեան գոյնը պարզելու համար՝ բնորոշ է հետեւեալ դէպքը։ Ռուս-թիւրքական պատերազմի սկզբներին, երբ Թիֆլիսի հայերը փոխարքայի միջոցով մի ուղերձ ներկայացրին կայսրին՝ խնդրելով պաշտպան հանդիսանալ օսմանեան Հայաստանի տանջուած ժողովրդին, գերմանական լրագիրներում տպագրուեցին լուրեր, թէ Կովկասի հայերը՝ իրենց մի ակնաւոր ներկայացուցչի միջոցով՝ ինքնավար Հայաստանի թագը առաջարկում են մեծ իշխան Միխայիլ Նիկոլաէվիչին։ Այդ լուրերը, ճշմարիտ է, շատ հեռու էին իրականութիւնից, քանի որ մինչև այժմ էլ ինքնավար Հայաստանի փոխարէն Թիւրքիայում գոյութիւն ունի միայն Հայկական գաւառ, բայց ինչպէս երևում է, Պետերբուրգում, 80-ական թուականներին իսկ չէին մոռացել այդ՝ փոխարքայութիւնը

ջնջելու և փոխարքային Կովկասից հեռացնելու գործը շտապեցնելու համար...

Կովկասը, ցաւ է ասել, շատ շուտ զգաց, որ այդ երկու բարձր պաշտօնեաների փոփոխութիւնը լոկ անձնաւորութիւնների փոփոխում չէ, այլ ամբողջ սիստէմի։ Թիֆլիզի մի քանի շրջաններում, ճիշտ է, յոյսեր կային, որ նոր կառավարչապետը (1882-1890) իր կոչման բարձրութեան վրայ կը լինի, քանի որ յայտնի է, որ նա նոր ազատուած Բոլգարիայի ինքնավարութեան գործադրողն եղաւ, բայց այդ յոյսերը շատ շուտով չքացան և յայտնուեց, որ իշխան Դոնդուկով-Կորսակովի „բոլգարական անցեալից“ մնացել էին միայն տժգոյն յիշատակների փշրանքներ։ Հազիւ մի տարի անցած, իշխանը իբրև եռանդուն արձագանք Պետերբուրգի տրամադրութիւններին, սկսեց զեկուցումներ տալ, թէ Կովկասի հայերը սեպարատիստական (անջատական) ձգտումներ են ցոյց տալիս և ուրեմն հարկաւոր է առաջն առնել...։ Եւ „առաջն առնելու“ սկզբի քայլն այն եղաւ, որ 1885 թուին, ամբողջ Ռուսաստանի և Եւրոպայի աչքերի առջև, նա փակեց հայոց եկեղեցական դպրոցները, թուով մօտ 500, փողոցներում թողնելով աւելի քան 30 հազար երկու սեռի երեխաներ, 900 ուսուցիչներով և վարժուհիներով...

Այդ տխուր, նմանը չտեսնուած անարդարութեան ականատեսները պատմում են, որ ամբողջ Անդրկովկասի ժողովուրդը, նոյն իսկ շատ տեղ հայերի հետ միասին վրացին, թիւրքը, ռուսը արտասուքները չէին կարողանում զսպել, երբ տեսնում էին, թէ ինչպէս ոստիկանները՝ հրելով և խփելով՝ ուսուցիչներից դուրս էին քշում փոքրիկ, 10-12 տարեկան անմեղ երեխաներին, որոնք գրքերը կռան տակ առած, կծկուած դպրոցների սենեակներում և պատշգամբներում, լաց ու կոծով գոչում էին՝

—„Մի դուրս արէք, մենք ուզում ենք կարդալ. ինչո՞ւ էք դուրս անում...“

Երկիրը սուգ էր մտել։ Իսկ Թիֆլիզի փոխարքայական պալատի շքեղ դահլիճներում ապաստանած կառավարչապետը ցնծութեան բացականչութիւններով՝ տօնում էր իր յաղթանակը, — առաջին և մեծ հարուածը՝ տրուած կրթութեան գործին...։ Եւ հետևելով նրա օրինակին, ուսումնարանական շրջանի հոգաբարձու Եանովսկին, կովկասեան կրթութեան այդ չար հրեշտակը, որ իր ամբողջ 50-ամեայ գործունէութեան ընթացքում բաց չէր արել գոնէ մի երրորդ մասը այն դպրոցների, որ մի ամսում փակեցին, ոգևորուած զեկուցումներ էր տալիս մինիստրին և կառավարչապետին, թէ „գործը յաջողութեամբ է առաջ գնում“— այսինքն՝ դպրոցները փակւում են առանց դիմադրութեան հայերի կողմից։ Ժողովրդական „լուսաւորութեան“ պաշտօնեային, ի հարկէ, վայել էր հպարտանալ դպրոցների փակումով մի այնպիսի երկրի մէջ, որը՝ իր խաղաղ զարգացման համար մի կարիք միայն ունի, այն է՝ դպրոցների կարիք... որովհետև այդպէս էր „ժամանակի ոգին“, և Եանովսկին հանգիստ խղճով ստանում էր իր եռանդի համար նոր շքանշաններ, բարձր աստիճաններ...

Վրայ հասաւ 1887 թուականը — մի անմոռանալի տարի կովկասեան հայերի պատմութեան մէջ։ Պէտք է մտցէր ընդհանուր զինուորագրութիւն, մի նորութիւն, որ անծանօթ էր հային ամէն տեղ, սկսած այն օրից, երբ նա զրկուեց քաղաքական անկախութիւնից։ Հակահայկական շարժման գլուխ անցած պաշտօնեաները՝ իշխան Գօնդուկով-Կորսակովի ղեկավարութեամբ, շտապեցին այդ առիթն էլ շահագործել, ցոյց տալու համար, որ հայերը դէմ են զինուորագրութեան, որ Անդրկովկասի զանազան կողմերում դիմադրութիւն-

ներ են պատրաստուում և ուրեմն պէտք է խիստ միջոցներ ձեռք առնել... Եւ Թիֆլիզի իշխանութեան կողմից, — հաստատ յայտնի է — հրամաններ տուեցին՝ պատրաստ լինել ամենաթոյլ փորձերն անգամ փշրելու։

Սակայն Կովկասի ամբողջ ազգաբնակութիւնը, բացի մահմեդականներից, որոնք առ այժմ ազատ են զինուորական ծառայութիւնից, այդ նոր փորձանքով ևս չգայթակղուեց։ Դա անսպասելի էր Կովկասեան իշխանութեան համար — անսպասելի մանաւանդ այն պատճառով, որ իշխանութեան ներկայացուցիչներին քաջ յայտնի էր, թէ ինչ այլանդակ և մտքերը պղտորող լուրեր են շրջում ամբոխի մէջ՝ զինուորագրութեան պատճառով։ Հաւատացնում էին, օրինակ, թէ հայ զինուորացուներին պէտք է տանեն Թուրքիայի խորքերը և այլևս չպիտի վերադարձնեն. պատմում էին, թէ հայ զինուորին պիտի ստիպեն կրօնը փոխել, լեզուն մոռանալ և վերջումն էլ ռուս աղջկայ հետ պսակել և ռուսանալ։ Իշխանութեան ղեկավարները այդ բոլորը լաւ գիտէին իրենց անթիւ լրտեսների միջոցով, բայց „Հայկական շարժում“ ստեղծելու տենչանքը այնքան մեծ էր յայտնի շրջաններում, որ ոչ մի կարգադրութիւն չեղաւ որ և է կերպով պարզելու այդ թիւրիմացութիւնները և հասկացնելու ամբոխին, որ նա սխալուած է։ Ղենդամիտ ձգտումն էր դա, փափագող որևէ խլրտման...։

Խլրտումն, սակայն, առաջ չեկաւ զինուորագրութեան ներմուծման ընթացքում, և ժողովուրդը ցոյց տուեց „խոնարհ հպատակութեան“ լիակատար պատրաստակամութիւն, եթէ հաշուի չառնենք մի բացառիկ դէպք, որը արժանի է յիշատակման, իբրև զօրեղ ապացոյց, թէ երբեմն ինչ վայրենութեան է հասնում իշխանութեան անխղճութիւնը Անդրկովկասում։ — Ղարաբաղի յետ ընկած ծմակների մէջ, նահապետականութեան

մշուշով ծածկված ցաթևևան գիւղերից մեկում, պառաւ կանայք, կուրծքերը ծեծելով՝ պատմում էին միմեանց, որ իրենց տղաներին „սալդաթ“ տանելուց յետոյ՝ իրենց աղջիկներն էլ պիտի տանեն՝ ռուս „սալդաթներին“ կին դարձնելու համար... Երևակայել կարող էք, թէ մի այդպիսի սոսկալի շշուկ, առանց հերքման մնացած, որքան էր վիրաւորում ընտանեկան խիստ բարքերով կրթուած գիւղացիների սիրտն ու հոգին... Ա.յդ բոլորը լաւ գիտէր նահանգական ոստիկանութիւնը, բայց փոխանակ որևէ պաշտօնեայի, թեմական հոգևորականութեան կամ մի այլ միջոցով պարզելու անախորժ թիւրիմացութիւնները, հրամանագրեց Զանգեզուրի ոստիկանութեան „լաւ պատրաստութիւններով“ գնալ „դիմադրութեան վայրը“ և ամէն մի փորձ արմատից ոչնչացնել... Ցեղն ունեցաւ չտեսնուած բռնութիւն, սպառնալիք, մտրակ, ծեծ ... Եւ երբ 90-ամեայ հայ գեղջկուհին և գիւղական ալեզարդ հայ քահանան բերան բաց տրին, թէ „իրանք թագաւորի թախտին զուրբան կ'երթան, բայց իրանց աղջիկներին չեն տայ, որ ռուսի կին շինեն...“, նրանց խիստ կալանաւորեցին, գանակոծեցին և, իբրև „պետական յանցաւորներ“, ամենախիստ հսկողութեան տակ ուղարկեցին կենտրոնական բանտը: Զգտնուեց գէթ մի հատիկ օրինաւոր պաշտօնեայ, որ ասէր. „Մայրիկ ջան, սխալւում ես, օրէնքը չի թոյլ տայ, որ քո աղջկան քեզանից խլեն. խլողին էլ ընդհակառակը, կը պատժի“: Եւ փոխանակ պատժելու այդ տեսակ իշխանաւորներին, 90-ամեայ գեղջկուհուն և ծերունի քահանային տանջեցին աքսորավայրերում, որովհետև նրանք համարձակուել էին ասելու, թէ „մեր աղջիկներին չենք տայ, որ ռուս սալդաթի կին շինէք“.....

Վտանգաւոր էր բռնած ճանապարհը, և բարեբախտաբար նա ընդհատուեց, թէև շատ կարճ ժամանակով:

Պետերբուրգի կառավարական շրջաններում նպատակայարմար գտան այդքան ծայրահեղ կերպով չը խաղալ կրակի հետ։ Ինքը Դոնդուկով-Կորսակով, յոգնած, քայքայուած կախեթեան գինիների զովարար հոսանքից, անընդունակ դարձաւ գործերով զբաղուելու. նա ընդունում էր իրեն դիմող և գործի մարդոց առաւօտեան ժամը 7-ին միայն, որովհետև դրանից յետոյ՝ մինչև ուշ գիշեր՝ նա գերի էր ալկոհոլի... Եւ ահա երբ նա ասպարէզից իջաւ, Պետերբուրգում „օգտաւէտ“ դատեցին փոխանակ հիւսիսից մի նորին ճամբայ դնելու, կառավարչապետի պաշտօնը յանձնել գեներալ Շերեմետեվին, որը դեռ կառավարչապետի օգնական եղած ժամանակ ճանաչուած էր իբրև խաղաղ և տեղական տարրերի հետ հաշտութիւն կայացնելու քաղաքականութեան կողմնակից։ Ճշմարիտ է, Շերեմետեվ իբրև պետական մարդ, աչքի ընկնող՝ խոշոր ուժ չէր, և, ինչպէս ասում են, երկնքից ասղերը չէր վեր բերում, բայց իբրև հակառակորդ „հալածասէր քաղաքականութեան“՝ փոքր ինչ խաղաղացրեց մտքերը, և աւելի օգտակար եղաւ երկրին, քան թէ միւսները իրենց „կարևոր“ ծրագիրներով....

Բայց ահա 1897 թուականը։ Շերեմետեվ մեռած էր։ Պետերբուրգը վերադարձած իր սովորական ուղղութեան՝ դէպի Կաղբեկի ստորոտները ուղղեց իր կարմրած աչքերը։ Եկաւ իշխան Գոլիցին, և բացուեց „ռուսացման“ մի շրջան, որի նմանը ոչ ոք չէր տեսել և չէր յիշում։ Դորի դիմաց հիները մոռացուեցան։

Հ.Ս.Խ. ԳՐԱԴԱՐԱՆ
Ազգայ. Բիբ. Խորհ.
7/XI 1922
Инвентарь Библиотека
Ա. ՄԱՍԻՍՅԱՆ

ՏԻՊ-ՌՈՒՍԱՐԱՐԸ

(ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Մեծաւորի մուտքը. — Իշխան Գ. Ս. Գօլիցին. — Նրա խորհրդականները. — Հալածանքի դարագլուխը. — „Տեղացիներին պաշտօն չը պէտք է տալ“. — Նշանները. — Թիֆլիզի քաղաքային դումայի շուրջը. — Անարդարութիւնը յաղթական:

L005
20853

Քաղաքը ոտքի վրայ է: Հպատակները անհամբեր, բայց խոնարհ, աչքերը յառած դէպի հեռուն, սպասում են. իսկ ոստիկանութիւնը, պճնած, խրոխտ հայեացքով դիտում է... փողոցները մաքրուած են. տները ներկած. ծածանում են դրօշակներ:

Գալիս է...

Այդ խօսքերն են ամենքի բերանում: Սակայն երբ, ո՞ր ժամին, ճաշից յետո՞յ թէ առաջ, երեկոյեան թէ գիշերը — այդ ոչ ոք գիտէ: Եւ ո՞վ կարող է գիտենալ: Մեծաւորի կամքը անհասանելի է, անգուշակելի, բարձր որ և է ենթադրութիւնից: Դա կարող է որևէ կայարանում ճաշի նստել, կենացներ խմել, քնել, զարթնանալ — ո՞վ կարող է նրան ասել կամ յիշեցնել թէ „ժողովուրդը սպասում է“, քշած դէպի գլխաւոր փողոցները ոստիկանութեան խստագոյն հրամանով, յատուկ պատուէրով... Կիզիչ է արևը: Ցրտաշունչ՝ քամին: Ո՞ւմ հոգն է: Պէտք է սպասել: Սպասում են փոքրիկ աշակերտները, կրծքաղարդ մանկավարժները, հոգևորականութիւնը, արհեստաւորներ, ամբոխը, ծառայողներ...

Եւ թող սպասեն, թող հոգիները դուրս գայ։ Հպատակ են, պիտի սպասեն, պիտի հոգի տան։

Ա՜հա՛, վերջապէս, հեռւից երևաց ոստիկանապետը։ Ամբոխը շարժուեց. ոստիկանները գրոհ տուին, շշացին մարակները, լուեցին ահեր, որոտաց զինուորական երաժշտութեան հրամայական թնդիւնը . . . և մեծաւորը մուտք գործեց քաղաք։

Այդպէս են եկել շատ ուրիշները։

Այդպէս եկաւ և իշխան Գոլիցին։

—

Միամիտ, հաւատացող է կովկասեան հասարակութիւնը։ Յայտնի չէ, թէ ինչպէս և ինչու, բայց յոյսերը մեծ էին, սպասելիքները գեղեցիկ։ Նոյն իսկ առասպելներ էին պատմում „սպիտակ ձիաւորի“ մասին։ Նրան ներկայացնում էին իբրև մեծահոգի, սիրահար կովկասին, ուր նա արդէն ծառայել էր իբրև զինուորական, բարեկամ տեղական ժողովուրդների, արդարութեան ասպետ . . . „Կրթւած մարդ է, նշանաւոր տոհմի ներկայացուցիչ, եռանդի և կամքի տէր, ասում էին շատերը, և նրա գալով՝ երկիրը նոր արշալոյսներ կը տեսնի“։ Վօրոնցովի օրերն էին սկսել երազել . .

—Այո՛, իշխան Գոլիցին մի „փոքրիկ“ Վօրոնցով կարող է լինել, ասում էր նրան ճանաչող մի յարգելի ռուս պարոն,— նրա տոհմին յատուկ է այդ գիծը. սակայն այդ կախւած է և նրանից, թէ ովքեր կը լինեն խորհրդականները. լաւ խորհրդականներով՝ նա փոքրիկ Վօրոնցով կը լինի, իսկ վատ խորհրդականներով փոքրիկ Պօբեդոնօսցեվ։

Դժբախտաբար այդպէս էլ եղաւ։ Թիֆլիզում շատերը գիտեն, թէ սկզբի ամիսներում օր օրի ետևից ինչ գեղեցիկ լուրեր էին բղխում իշխան Գոլիցինի ապարանքից։ Ընդունելով վարչական մարմնի ներկայացուցիչներին՝ նա ասում էր. „Ինձ համար չկայ ազգու-

թեան խարութիւն և ձեզ համար էլ չպիտի լինի. ինձ հարկաւոր են լաւ պաշտօնեաներ և դրանց պէտք է փնտրել ամեն ազգի շրջանում։“ Դիմելով կովկասեան ցենզուրական կոմիտէին, իշխանը ասաց. „Մամուլին ազատութիւն տուէք քննադատելու պաշտօնեաներին. ես ուզում եմ այդ ճանապարհով ճշմարտութիւնն իմանալ։“ Իսկ իր նախկին ծանօթ հայ զինուորականներին նա շատ անգամ մտերմաբար կրկնում էր, որ ինքը „տառում է ազգայնական հալածանքը և միանգամայն արմատախիլ կանէ ամեն մի այդպիսի փորձ,“ — մի խօսքով, մարգարիտների մի հիւսուածք, որ մի որոշ ժամանակից յետոյ գարշելի յանդգնութեամբ „ազգի“ մէջ գցեց, որպէսզի դրա տեղ պարզի ազգայնական հալածանքի ու խարութեան անարգ դրօշակը, որ այնքա՜ն եռանգով և ոգևորութեամբ ծածանեցնում է ամբողջ Կովկասի վրայ իշխան Գոլիցին, իր ընտրած նենգամիտ խորհրդականներով և արկածախնդիր թելադրիչներով։

Մի օր՝ ընդունելով իր պալատում հայոց պատրիարք-կաթողիկոս Խրիմեանին և խօսելով Էջմիածնի գործերի և կառավարչական ու կաթողիկոսական յարաբերութիւնների մասին, իշխան Գոլիցին ասաց.

— Էս մեծ համակրութիւն եմ տածում դէպի Ձերդ վեհափառութեան անձնաւորութիւնը, բայց չեմ կարող թագցնել, որ դուք շրջապատուած էք միանգամայն անվստահելի խորհրդականներով, որոնք, ցաւ է ասել, մեր յարաբերութիւնները և Էջմիածնի գործերը հասցրել են այժմեան տխուր և նոյն իսկ վտանգաւոր վիճակին։

Ցարաբախտաբար, ամենայն հայոց կաթողիկոսը չկարողացաւ կամ իրաւունք չունեցաւ հեգնելու՝

— Էս էլ Ձերդ պայծառափայլութիւն, համակրութիւն եմ տածում դէպի ձեր անձնաւորութիւնը, բայց չեմ կարող թագցնել, որ դուք էլ էս շրջապատուած էք միանգամայն անվստահելի խորհրդականներով, որոնք

ցաւ է ասել, մեր յարաբերութիւններն ու կովկասեան գործերը հասցրել են այժմեան տխուր և նոյն իսկ վտանգաւոր վիճակին։

Խորհրդականների ընտրութիւնը յաճախ լինում է ակամայ ու անգիտակցաբար, յաճախ՝ գիտակցօրէն ու նախատծուած։ Իշխան Գօրչակովի արածը՝ վերջին տեսակին էր։ Նրան ներշնչուած էր որոշ ծրագիր։ Եւ նա անձնականապէս աւելի ուժ տուեց այդ ծրագրին։

Անշուշտ, հետաքրքիր է իմանալ, թէ ովքեր կազմեցին այն „խորհրդակցական“ մարմինը, որը միացած կառավարչապետին՝ այնքա՞ն վճռական ներգործութիւն ունեցաւ։ Ահա։ Գեներալ Ֆրէզէ, նախկին նահանգապետ Երևանի, որ Պօբեդոնոսցեվեան ուղղութեան համար նահանգապետի պաշտօնից բարձրացուեց ժանդարմների շէֆի կարևոր պաշտօնին և ապա Պետերբուրգից ուղարկուեց Թիֆլիզ՝ Գօրչակովի աջ ձեռքը լինելու համար։ Կառավարչապետի դիւանատան դիրեկտօր Մ ի ց կ է վ ի չ, ռուսագաւան լեհացի, այսինքն լեհացու ամենավատ տեսակը, աւելի ռուս՝ քան ամենաթունդ ռուսը, երկչոտ ու կասկածոտ, շողոքորթ ու ինտրիգան։ Նահանգապետ Բ ը կ օ վ, որ դատաստանական նախագահի պաշտօնից Գօրչակովի կողմից կանչուեց նահանգապետութեան՝ միայն մի արժանաւորութեան — հայատեացութեան — համար, եթէ չհաշուենք նրա մի այլ արժանաւորութիւնը — կաշառակերութիւնը, որով մեծ հռչակ էր ստացել դատարանական շրջաններում. . . Փոխնահանգապետ Ս տ ե փ ա ն օ վ ի չ, որին ճակատագիրը ձգեց Կովկաս, բանաստեղծի ասելով „քախտ եւ աստիճաններ որսալու“ — մի տենչանք՝ որի համար ազգայնական հարցը ամենակարճ ճանապարհն է այժմ. . . Ահա այն առաջաւոր խումբը, որ տօն տուեց գործերին և որ իր նպատակներին հասնելու համար ոչ միայն գաւառները լքցրեց այնպիսի „չնաշխարհիկ“ նա-

հանգապետներով, ինչպէս է գեներալ Կիրէեվ Գան-ձակում, կամ թէ այնպիսի ոճրագործ գաւառապետներով, ինչպէս Բօգուսլավսկի Էգիրում, այլ և հնարաւոր համարեց երկրի միակ պաշտօնական լրագիրը յանձնել մի այնպիսի կլասիկ-ոգիէրիստի, ինչպիսին է Վէլիչկո...

Սիրտ առած բարձրագոյն լիազօրութիւնից, յենուած սենատորի բարձր տիտղոսի վրայ, և քաջալերը իր ստացած գաղտնի հրահանգներից՝ նա սկսեց շատ արագ, շատ կտրուկ, և շատ յանկարծօրէն: Զուսումնասիրեց, այլ կարեց: Զը քննեց՝ այլ ցանկացաւ: Նա ցանկանում էր — և պիտի կատարուէր: „Ես լիազօրութիւն ունեմ անելու, ինչ կամենում եմ", գոչում էր նա ամէն քայլափոխում, լինէր դիմացինը նահանգապետ թէ իր ադիւտանը, ցենզուրական կոմիտէի նախագահը՝ թէ իր ձիապանը: Պատմում են, որ մի օր, նա այդ նոյն ֆրազը կրկնեց, թէ այն ժամանակ երբ խօսում էր դատաստանական պալատի նախագահի հետ, որ նրա կարգադրութեան դէմ բողոքում էր, թէ պալատական այդու կառավարչի հետ, որը բացատրում էր թէ ծառների ճիւղերը այժմ կտրել չի կարելի: „Սամօդուր", երևի մտածեցին երկուսն էլ, առանձնասենեակից դուրս գալով: Եւ սամօդուրը սկսեց „կառավարել":

Խելագար այն մտքով՝ որ ամենից առաջ պէտք է ազատել կառավարչական մեքենան տեղացիների վտանգաւոր մասնակցութիւնից, որոնք, նրա կարծիքով, — սխալ կարծիք — տիրել էին վարչական ամէն տեսակ պաշտօններին, Գօլիցին այդ դարձրեց իր առաջին մտածմունքը և առաջին գործը: Տեղացիներին պաշտօն չը տալ — ահա այդ երեք բառերի մէջ էր ամփոփուած նոր „քաղաքականութիւնը": Շշուկները կային. շուտով եկան և փաստերը...

1897 թուի յուլիս ամսին էր, երբ լուր տարածուեց թէ Թիֆլիզի նահանգապետ իշխան Շէրվաշիձէ, հրա-

ժարում կամ՝ աւելի ճիշտ է ասել՝ հրաժարեցում է պաշտօնից։ Դղրդիւնը մեծ էր։ Իշխան Շէրվաշիձէի հրաժարականը ազդանշան էր։ Եթէ նա մնար, կը նը-շանակէր՝ տեղական խ ա ղ ա ղ ա ս է ր կուսակցութիւնը յաղթող հանդիսացաւ. իսկ հրաժարիլը — վերջնական ապացոյց, որ Ֆրէդէ-Միցկեվիչեան խումբը տիրապե-տեց ... ոչ ի հարկէ, թշնամու բանակին, այլ կառա-վարչապետի ապարանքին ... Եւ մի ամիս հաղիւ ան-ցած՝ այդ կասկածները, տարաբախտաբար, արդարացան։ Շէրվաշիձէ, չտանելով իր անձի և երկար տարիների գործունէութեան դէմ լարած դաւերը, հրաժարական տուեց, որ ի դէպ է ասել, կառավարչապետը ընդունեց մեծ հաճոյքով։ Ա յդ հրաժարականին հետևեցին այլ հրա-ժարականներ, այլ հ ր ա ց ա ս մ ն ե ր։

Ա յդ „քաղաքականութեան“ շնորհիւ Իշխան Ամի-լախվարի, աղգով վրացի, հրամանատար զօրաբանակի, կովկասեան զինուորականութեան փայլուն մի ներկայա-ցուցիչ, որ քանի մի ամիս՝ մինչև Գօլիցինի գալը՝ վա-րեց նոյն իսկ կառավարչապետի պաշտօնը, անտես արուեց, և նրա տեղ կառավարչապետի օգնական նշանակուեց գեներալ Ֆրէդէ։ Դա ընդհանուր զարմանք առաջ բե-րեց, որովհետև պարզ „տակտը“, եթէ աւելի չասենք, պահանջում էր յարգել տեղացի մի այնպիսի պաշ-տօնեայի, որ ռուսաց յաղթութիւնների համար մաղեր է ճերմակացրել։ Դրա փոխարէն՝ վիրաւորանքը կրկնա-պատկելու դիտումով, Իշխան Ամիլախվարիին նշանակե-ցին Իշխան Գօլիցինի „առանձին յանձնարարութիւնների“ պաշտօնեայ, մոռանալով, որ տարիներ առաջ՝ նոյն այդ Գօլիցին ծառայել է իբրև անչնչան զինուորական Ամի-լախվարիի ձեռքի տակ, երբ նա բանակ էր կառավա-րում ...

Նահանգապետ Շէրվաշիձէի հեռանալուց յետոյ ան-միջապէս պաշտօնից զրկուեց Գանձակի նահանգապետ

իշխան Նակաշիձէ, որպէսզի գրանց փոխարէն „ռուս-
ներ նշանակուեն։ Եւ ահա Շէրվաշիձէի տեղ նշանակուեց
Բրկով, որին — լաւ լսեցէք — քիչ յետոյ նոյն իսկ
Գօլիցինը տեսնել չէր ուզում, իսկ Նակաշիձէի տեղ
Մոսկուայից հրաւիրուեց ինչ որ գէներալ Կիրէեվ, որի
միակ արժանաւորութիւնն այն էր, որ Գօլիցինի անձա-
կան բարեկամն էր, և որը մի ամսում արդէն ցոյց տուեց,
որ այլ բան է Մոսկուայի „տրակտիրներում“ լաւ „յա-
ճախորդ“ լինելը, և այլ բան լաւ „նահանգապետ“ . . .
Ա.յդ կարևոր փոփոխութիւններին յաջորդեցին աւելի
աննշանները, սկսած գաւառապետներից և վերջացրած
պրիստաւներով։ Հայերի մասին ասելը աւելորդ է. նրանք
առանց դրան էլ „բարձր“ պաշտօնների համար ան-
յարմար էին գտնուած՝ և իբրև քաղաքականապէս „ան-
վստահելի“ տարը՝ սկսեցին հեռացուել նոյն իսկ իրենց
երկրորդական պաշտօններից։ Կառավարչապետի կար-
գադրութեամբ, արդէն պաշտօնի մէջ եղած հայերին
տեղեր էին առաջարկում կամ Ռուսաստանի ներքին
նահանգներում կամ այնպիսի վայրերում, ուր հայեր
չեն ապրում, իսկ նորերին բացարձակապէս մերժում էին
ընդունել։ Երևի դրանով պիտի իրագործուէր այն մե-
ծագղրդ ֆիրաղը՝ թէ „իր համար չկայ ազգերի և
կրօնների խտրութիւն“։

Հաղիւ մի քանի ամիս անցաւ, սակայն, և Գանձակի
նահանգի մէջ տեղի ունեցած դառն փաստերը ցոյց
տուին, որ շատ վտանգաւոր գործ է՝ պաշտօնի կանչել
երկրին և ժողովրդին անծանօթ, ոչինչ արժանիք չու-
նեցող անձինք և հեռացնել այնպիսի տեղացիներին,
որոնք ամբողջ գլխով բարձր են զանազան „գէներալ-
ներից“ և „տայնի սովետնիկներից“։ Աւազակութիւնը
միանգամից կրկնապատկեց իր ուժը. „ռուս չինովնիկ-
ների խամութեան“ վրայ վստահ՝ թուրք աւազակա-
պետները սկսեցին սպանել ոչ միայն „անդէն հպա-

տակներին", այլև կոզակներով շրջապատված պրիստաւ-
ներին, որոնց կենդանի ապացոյց պէտք է համարել
Մոնաստիրսկու և Ռաշիձէի սպանութիւնը։ Ապաղա-
կային խմբերը յանդգնաբար սկսեցին կողոպտել ոչ
միայն մուխ ճանապարհների վրայ, այլ նոյն իսկ նա-
հանգական քաղաքի դիմաց, նահանգապետի քթի տակ,
ինչպէս այդ ցոյց է տալիս Հաջիբէկովի հոչակաւոր
դէպքը, երբ աւազակները կալանաւորեցին ոստիկանա-
պետին, պրիստաւին, ռուս օֆիցերին և բազմաթիւ այլ
մարդիկ, ու մտադիր էին ձերբակալել նոյն իսկ նա-
հանգապետ գեներալ Կիրէեվին՝ իբրև խոստովանք նրա
մեծ քաջութեան ... Քիչ անցած՝ մինչև իսկ ինքը
գեներալ Կիրէեվ, յուսահատած, առաջարկ է արել
իշխան Գօլիցինին մի քանի հայերի պաշտօն տալ ոս-
տիկանութեան մէջ. „Ինչքան ռուսներ բերեցինք, բո-
լորն էլ արբեցող դուրս եկան — ասել է նա — իսկ
թուրքերը աւելի մեր ոտի տակն են փորում, քան գործ
շինում։ ուրիշ ելք չկայ, բայց եթէ տեղացիներին նո-
րից պաշտօնի կանչել"։ — Ոչ և ոչ, լսել անգամ չեմ
կարող հայերի մասին, — ահա այս է եղել Գօլիցինի
պատասխանը։ Դա մինչև այժմ էլ՝ չխրատուած փաստե-
րից՝ կանչում է այս կամ այն դիւանատան կամ վար-
չութեան ղեկավարին և յայտնում „Չեղ մնա մի քանի
հայեր կան, պէտք է նրանց ուղարկել ներքին նա-
հանգները կամ բոլորովին հեռացնել". և եթէ որևէ
մէկը փորձում է ապացուցանել թէ այդ հայերը արդ-
ժանաւոր պաշտօնեաներ են, իսկոյն թնդում է իշխա-
նական որոտը՝ „Ասել, ինչպէս ասացի ..." Յիշատակելի է
Թիֆլիզի „կօնտրօլնիյ պալատի" կառավարիչ Վ. Երեսան-
նիկովի դէպքը, որը ստիպուեց Ֆինանսների մինիստրին խնդ-
րել՝ կամ տեղափոխել իրեն Կովկասից Ռուսաստան կամ
ընդունել իր հրաժարականը, ասելով թէ չէ կարող Գօլի-
ցինի պահանջմամբ հեռացնել իր հայ պաշտօնեաներին...

Թիֆլիզի քաղաքային դումայի (խորհրդարան) դէպքը գալիս է լուսաբանելու տեղացիների դէմ սկսուած պատերազմը։ Հիմնուած լինելով ընտրողական օրէնքի վրայ, բնականաբար, քաղաքային դումաներում մեծամասնութիւնը պէտք է լինի տեղացի ազգաբնակութեան ներկայացուցիչ և ոչ թէ ռուսների, որոնք, ինչպէս յայտնի է, Անդրկովկասում շնչին տոկոս են կազմում։ Մոռանալով ահա այդ բնական իրողութիւնը, իշխան Գոլիցին իր „քաղաքագէտ“ խորհրդականներով միշտ մտնչում է, թէ „դա ռուսաց դումա չէ, այլ հայոց դումա“։ Եւ ահա կամենալով չքացնել դումաների անկախ գործունէութիւնը՝ Գոլիցին համաձակութիւն առած իրեն տուած արտօնութիւններից, ամեն քայլափոխում խառնւում է դումայի գործերում, ոչընչացնում նրա որոշումները, ինքնագլուխ հրահանգներ տալիս նրան . . . Ահա մի փաստ։ Թիֆլիզի դուման որոշում է մի հասարակ բան — իր ձեռքն առնել քաղաքի ձիաքարշը, որ կապալով է տուած մի բէլգիական ընկերութեան։ Աւելի պարզ բան լինել էլ չէ կարող։ Դուման քաղաքի տնտեսական գործերի ղեկավարն է և շատ բնական է, երբ նա ձգտում է ձիաքարշը աւելի շահաւէտ և բնակիչների համար աւելի յարմար կերպով բանեցնել։ Բայց ահա „ռուս հայրենասէրները“ շշնջում են իրար ականջի, թէ „դուման ուզում է ձիաքարշը ձեռք ձգել, որպէսզի այնտեղ էլ բոլոր պաշտօնները հայերին տայ“։ Խնդիրը լաւած է, մնում է տեսնել արդիւնքը։ Իսկ արդիւնքը այն եղաւ, որ Թիֆլիզի նահանգապետ Բրկով և փոխնահանգապետ Ստեփանովիչ՝ արտօնուած Գոլիցինի կողմից՝ սկսեցին մէկը միւսի ետևից ջնջել դումայի իրաւունքները, քանդել նրա որոշումները, նոյն իսկ սկսեցին սիրտ տալ բէլգիական ընկերութեան, վերջապէս այնտեղ հասցրին, որ կարողացան՝ Գոլիցինի գրութեամբ՝ քաղաքային վար-

չութեան (ուպրավա) երկու անդամներին հեռացնել պաշտօնից և ինչ խօսք, տապալեցին ձիաքարշի յետգնման գործը։ Եւ այժմ արժէք չունի դուման. նա կառավարչապետի և մինչև իսկ նահանգապետի խաղալիքն է...

Դրանով սակայն չվերջացաւ պատմութիւնը. մի պատմութիւնից ծագեց մի այլը։ Թիֆլիզի դատաստանական պալատի աւագ պրօկուրօր Վասիլեվ անմիջապէս հեռագրում է արդարադատութեան մինիստրին, թէ կովկասեան կառավարչապետը „իրաւունք չունէր հեռացնելու ուպրավայի անդամներին և նրա այդ վարմունքը ապօրինի է“։ Հաբուածը խիստ էր, որովհետև Վասիլեվ հայ չէր, որ կարելի լինէր հեշտութեամբ լռեցնել։ Իշխան Գօլիցին նեղն էր ընկել։ Եւ ահա մի օր նա կանչել է տալիս դատաստանական պալատի աւագ նախագահ Վրասսկուն, որպէսզի ստիպի ուշացնել այդ բողոքը։ Ասում են, թէ նոր էր Վրասսկին սենեակը մտել, որ Գօլիցին սկսում է բաւական անքաղաքավար կերպով գոռալ, նկատողութիւններ անել։ Դախագահ Վրասսկի շատ սառն կերպով նկատում է. „Ձերդ պայծառափայլութիւն, ես ձեր ստորադրեալը չեմ և բոլորովին ցանկութիւն չունեմ վիրաւորանքներ կրելու“.. Ասելով այդ խօսքերը, նա անմիջապէս դուրս է գնում և ինչպէս հաւատացնում են տեղեակ անձինք, անմիջապէս հեռագրով գանգատ է ուղարկում մինիստրին իր կրած վիրաւորանքի համար։ Իշխան-կառավարչապետը միւս օրն է միայն ղգում, որ գործը սուր կերպարանք է ստանում, նորից իր մօտ է հրաւիրում Վրասսկուն և ներողութիւն խնդրելով, առաջարկում մի կերպ ուշացնել պրօկուրօրի բողոքը։ „Մեր գործը ընդհանուր է — ասում է նա — մենք ընդհանուր ուժերով պիտի կռուենք տեղական թշնամի տարրերի դէմ և այդ պատճառով ես կը ցանկայի, որ դատաստանական իշխանութիւնը իմ դէմ չգնայ“։ Դախագահ Վրասսկի

հասկացնել է տալիս կառավարչապետին, թէ դատաստանական պալատի աւագ պրոկուրորը անկախ իշխանութիւն է, և այսօր բողոք տալով կառավարչապետի որևէ քայլի դէմ, վաղը կարող է բողոք տալ նոյն իսկ իր, դատաստանական պալատի նախագահի դէմ, և ապա ուրեմն ինքը անկարող է որևէ արգելք դնել... Ի՞նչ եղաւ վերջը,— այն, որ կառավարչապետի կարգադրութիւնը ուպրավայի երկու անդամների վերաբերմամբ չքանդուեց և ուրեմն այն անգամ էլ նա յաղթեց։

Ընդան ամիսներ։ Կառավարչապետի ճնշումները դէպի քաղաքային ինքնավարութիւնը՝ հասան իրենց գագաթնակէտին։ Նա կասկածի տակ դրեց ամեն ինչ. և՛ ծառայողներին, և՛ վարչական անդամներին, և նոյն իսկ քաղաքային դրամական հաշիւները։ Նշանակեց յանկարծական քննութիւն։ Եղան սպառնալիքներ։ Վարչութեան անդամներից մի քանիսը, պաշտօնից հեռացուցին։ „Հայկական բուն է, պէտք է քանդել“ որոտում էր սամօղուրը։ Եւ Համբերահատ՝ մեղադրողները և նոյն իսկ քաղաքային ինքնավարութիւնը, բոլոր ուժն բարձրագոյն ատեանին, կառավարիչ սենատին։ Սենատը քննեց, և գտաւ՝ անմեղ։ Սակայն դրա հետ միասին նա կատարեց անարդարութեան մի անսովոր գործ.—„թէև անմեղ են, բայց պէտք է հեռանան, որպէսզի չը կոտրուի կառավարչապետի խօսքը, չը մնասուի նրա պրեստիժը, նրա բարձր դիրքը...“։

Եւ արդարութիւնը մնաց պատժուած, հալածական, գլխիկոր. իսկ բարձրագոյն ատեանների կողմից պաշտպանուած կառավարչապետը՝ աւելի սիրտ առած, զինաւորուած անպատիժ մնալու յաւիտենական հաւատքով, շարունակեց իր ճամբան, համարձակ, աներկիւղ, առանց կարմրելու... և հասաւ մինչև ժողովրդի կրթութեան վայրերը,— ապաբախտ հայոց դպրոցները։

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՓԱԿՈՒՄԸ

(ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Առաջին փակումը. — Նախամտածուած ծրագիր. — Ուսումնարանական վարչութեան ընթացքը. — Կասկածներ Էջմիածնի հասցէին. — Բանակոչ սինոդի եւ պաշտօնական օրգանի միջեւ. — Պատմական վաւերագրեր. — Դպրոցների երկրորդ փակումը. Նորանոր խստութիւններ:

1885 և 1897, — *անմոռանալի թուականներ, լի արտասուքով և յուսահատութեամբ: Զը տեսնուած դէպքերի օրեր էին դրանք: Քաղաքներում թէ աւաններում, գիւղերի մէջ թէ շէներում՝ ոստիկանները, համազգեստով, հրամայական շեշտը ճակատին, ներս էին խուժում՝ այն վայրերը, ուր մինչև այդ չէր տարածուած նրանց թագաւորութիւնը, և այնտեղից դուրս էին գալիս փոքրիկ մանուկներ՝ արտասուալից աչքերով, դողդոջուն, ահը երեսներին . . .*

Հայոց դպրոցների փակումն էր դա:

Առաջին անգամ նա տեղի ունեցաւ 1885*-ին, երբ Ռուսաստանի գահի վրայ բազմած էր Ալեքսանդր* III, *կառավարչապետի բազմոցի վրայ՝ Դոնդուկով-Կորսակով, իսկ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի աթոռի վրայ՝ Լանովսկի:*

Երկրորդ անգամ՝ 1897-ին, երբ կայսերական գահյիսոնը բռնել էր Նիկոլայ II, կառավարչապետի սուրը իշխան Գոլիցին, և ուսումնարանական շրջանի հոգաբարձուի տիտղոսը՝ դարձեալ Խանովսկի։

Ուշագրաւ է այս պատմութիւնը։

Դեռ 1836-ին՝ Հայոց Եկեղեցու համար կազմւած մեծ ադղորդ „Պոլոժենիա"-ով, հոգևորականութիւնը և առ հասարակ Ռուսաստանի Հայ համայնքը պաշտօնապէս իրաւունք ստացաւ ունենալու իր սեփական եկեղեցական-ծխական դպրոցները։ Երեսնական և քառասնական թւականներին, երբ Անդրկովկասը դեռ չէր մաքրել իր վրայից ռուս-պարսկական և ռուս-թիւրքական պատերազմների արեան հետքերը, բնականաբար, դժւար էր ուժգին կերպով նիւթել դպրոցական գործին։ Բայց 50-ական թւականներից, երբ երկրում հաստատւեց խաղաղութիւն և միւս կողմից Հայոց հասարակութեան մէջ էլ, եւրոպական և ռուսաց մտքի զօրեղ ցնցումների պատճառով, սկսւեց մտաւոր վերածնութիւն, կովկասեան կեանքի մութ հորիզոնի վրայ սկսեցին պլպլալ լոյսի և գիտութեան թոյլ կայծեր, երևան եկան եկեղեցական-ժողովրդական դպրոցներ։ Մատթէոս կաթողիկոսը, որ՝ իր շատ թերութիւնների հետ միասին՝ ունէր մի շատ մեծ արժանաւորութիւն— անսահման սէր դէպի ուսումնարանը— հիմք դրեց ժողովրդական դպրոցներին, օգուտ քաղելով այն իրաւունքից, որ օրէնքը տալիս էր Հայոց հոգևորականութեան պետին։ Ոչ աւելի քան 15-20 տարւայ ընթացքում, մանաւանդ 70-ական թւականներից սկսած, երբ Կովկասի Հայոց մամուլի մէջ մի զօրեղ պրօպագանդ սկսւեց յօգուտ ժողովրդական կրթութեան,— այդ դպրոցների ուժը և թիւը աճեց ու հասաւ պատկառելի մեծութեան։ Եւ երբ 1882 թւին, Գէորգ կաթողիկոսի հաւանութեամբ, Թիֆլիզում կայացաւ առա-

ջին Հայոց Ուսուցչական ընդհանուր ժողովը, հայոց դպրոցական շարժման այդ նշանաւոր հանդէսը, — շատերը առաջին անգամ միայն տեսան և զգացին, թէ ինչ հսկայական քայլեր է արել կրթութեան գործը առաջաւոր Ասիայի մի փոքրիկ ազգի մէջ, որ չնայած իր մնայլ անցեալին, հերոսական ջանքեր էր թափում կուլտուրական կարապետ լինելու երկրի մէջ։ Ժողովը ցոյց տուեց, որ Կովկասը պատած է հայոց ժողովրդական դպրոցների մի ամբողջ ցանցով — բաւական լաւ պատրաստուած ուսուցիչ-վարժուհիներով, որոնք անձնուիրաբար ընդհանուր կրթութիւն և գրագիտութիւն էին տարածում այն վայրերում, ուր տարիների ընթացքում թագաւորել է միայն բռնութիւնը, սուրը, արիւնը, թալանը և տգիտութեան բթացնող ոգին . . .

Ցարաբախտաբար 82-ի ուսուցչական առաջին ընդհանուր ժողովը, որտեղ վճռուեց երկրորդ ժողովը գումարել Էջմիածնում, եղաւ Հայոց դպրոցական պատմութեան վերջին հանդէսը։ Հաղիւ 3 տարի անցած, 1885 ին, իշխան Գոնդուկով-Կորսակով և Լանսկոյի, ինչպէս տեսանք, սպանիչ հարուածը տուին հայկական կրթարաններին, — փակել տուին դպրոցները, նրանց արդիւնաւոր գործունէութիւնը քաղաքական ինտրիգի նոր ասպարէզ դարձնելով։ Եւ այդ օրուանից ահա վերջնական կերպով հրապարակի վրայ դրուեց այն դժբախտ և եղակի հարցը, որ ամբողջ Ռուսաստանում և մանաւանդ կառավարչական գաղտնի գրագրութիւնների մէջ յայտնի է „հայոց դպրոցների հարց“ անունով . . .

Դպրոցների առաջին փակումը 1885 թուին՝ տեղի ունեցաւ կրկնակի կամայականութեամբ, — այն ժամանակ, երբ կաթողիկոս չը կար. Գէորգը մեռած էր, 1884-ի կաթողիկոսական ընտրութիւնը, որ վերջացաւ Ներսէս Վարժապետեանի ընտրութեամբ, չէր

հաստատուած և դեռ ևս տեղի չէր ունեցել 85-ի ընտրութիւնը, երբ կաթողիկոս դարձաւ Մակարը։ Էջմիածնի հայոց սինոդը, որին Գոնդուկով-Կորսակովը, ռուսաց դպրոցների հոգաբարձու Եանովսկու խորհրդով, նեղն էր ձգել, միմիայն մի բան էր խնդրում — սպասել մինչև կաթողիկոսի ընտրութիւնը, քանի որ ինքը, սինոդը, նոյն իսկ օրէնքով, անձեռնհաս է կարգադրելու այնպիսի մի արտասովոր խնդիր, ինչպիսին է դպրոցների փակելու կամ յանձնելու հարցը։

Այդ տրամաբանական խնդիրը չը յարգուեց, և ոչ միայն չը յարգուեց, այլ սինոդի բռնած ընթացքի մէջ կառավարութիւնը երևակայեց գտնել գիտադրութեան նշաններ, հակակառավարչական դիրք, վտանգաւոր քաղաքական ծրագիր։ Թիֆլիզից խիստ հրահանգներ ուղարկուեցին Էջմիածնի պրօկուրօրին։ Ինքը Եանովսկի, „Կովկաս“ պաշտօնական օրգանի մէջ սկսեց մեղադրական ճառեր Էջմիածնի սինոդի դէմ։ Նենգամիտ յօդուածներ էին դրանք, երբեմն իբրև պաշտօնական աղբիւրից բղխած, „Հաղորդուած է“ ստորագրութեամբ, և յաճախ՝ իբրև խմբագրութեան գրած, պատասխանատուութիւնից փախուստ տալու մտքով։

Այդ „յօդուածները“ լուրջ երկիւղ պատճառեցին հասարակութեան։ Նրանց աղբիւրը շատ լաւ յայտնի էր։ Ցպաւորութիւնը այնքան ծանր էր, որ Էջմիածնի սինոդը, թէև գրուած շատ փափուկ և երկիւղալի վիճակի մէջ, իրան ստիպուած զգաց պատասխանել, յետ մղել իր դէմ ուղղուած մեղադրանքները։ Պաշտօնական պատասխանը, գրուած այնքա՞ն մեղմ, հաւատարմակա՞ն ոճով, տպագրուեց հայոց կրօնական վարչութեան պաշտօնական օրգան՝ „Արարատի“ մէջ 1885 թուի մարտ ամսին։ Ահա այդ հերքմնագիրը՝

ՊԱՏԱՍԽԱՆ „ԿԱՎԿԱԶ„ ԼՐԱԳՐԻ ՅՕԳՈՒԱԾԻՆ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ

«Էջմիածնի լուսաւորչական հայոց Սինոդի անդամները կարդալով «Կավկազ» լրագրի 56 եւ 60 համարները, ցաւօք սրտի տեսան առաջին յօդուածի մէջ, բացի ինքեանց եւ համայն հայոց հոգեւորականութիւնը մեղադրուած՝ ինչպէս չկատարողներ մեր ամենասիրելի Թագաւոր Կայսեր բարձրագոյն կամաց եւ հրամանաց, որոնք բացատրուած են հայոց ուսումնարանների համար ի լոյս ընծայուած կանոնադրութեանց մէջ, եւ մանաւանդ ի 16 փետրվարի անցեալ 1884 թուականի Այդպիսի մեղադրանքից իրանց անձը ազատ համարելու համար՝ Սինոդի անդամները պարտք են համարում յայտարարել, թէ իրանք միշտ ի նկատի ունեցել են ամենայն հայոց Կաթողիկոսի բազմագարեան արտօնութիւնները հայոց եկեղեցական ծխական եւ հոգեւոր ուսումնարանների վրայ, որոնք պարզապէս բացատրուած են նոյնիսկ «Կավկազ» լրագրի յառաջ բերած՝ ներքին գործոց նախարարութեան 29 սեպտեմբերի 1876 ամի № 1481 հաղորդագրութեան մէջ, որ պարունակած է կովկասեան փոխարքայի գլխաւոր վարչութեան կառավարողի 19 նոյեմբերի նոյն տարուայ գրութեան մէջ, յանուն ամենայն հայոց Գէորգ Դ. Կաթողիկոսի՝ ի տեղեկութիւն եւ ի հրահանգութիւն։ Իբրեւ հոգեւորական անձինք՝ Սինոդի անդամները չեն վստահացել այդ Հայրապետական իրաւունքները, որ նուիրական է, որ եւ իցէ կերպով խախտել։

«Մենք վերոգրեալ գրութիւնը յառաջ ենք բերում բառ առ բառ հանդերձ հայերէն թարգմանութեամբ, որպէս զի պարզաբանուի վիճելի այն խնդիրը, թէ ո՛ւմն է պատկանում հայոց ուսումնարանների բացման եւ կառավարութեան գլխաւոր իրաւունքը, Կաթողիկոսի՞ն թէ Էջմիածնի Սինոդի։ Ահա՝ գլխաւոր կառավարութեան հաղորդագրութեան բուն օրինակը, 19 նոյ. 1876, № 4423.

„Ձերդ Վեհափառութիւն,

Ի 19 աւուր յուլիսի 1874 ամի՝ Հետեւեցաւ Բարձրագոյն Հրաման Թագաւոր Կայսեր ի մասին ենթարկելու Հայոց եկեղեցական ծխական դպրոցները Կովկասում՝ եւ

Ընդրկվկասում՝ հսկողութեան ժողովրդական ուսումնարանաց տեսուչների, այժմ վերատեսուչների։

Ի նկատի ունենալով այն տարակուսութիւնները, որոնք ծագել են այս Բարձրագոյն հրամանի կատարման միջոցին, Ստաւրոպոլեցարար իշխան Բագրատիոն Մուխրանսկին, ըստ յանձնարարութեան Նորին Կայսերական բարձրութեան թագաւոր Մեծ իշխան փոխարքային Կովկասու, ի 16 դեկտեմբերի 1875 ամի, դիմեց Ներքին գործոց նախարարին բացատրելու համար հետևեալ հարցումները.

1) Հայոց հոգևոր վարչութիւնը իրաւունք ունի՞ արդեօք բանալու միայն ծխական դպրոցներ սկզբնական դասընթացքով, թէ հանրակրթական ուսումնարաններ աւելի ընդարձակ ծրագրով, որի մէջ կարողանայ մտնել ուրիշ հանրակրթական գիտութիւնների դասաւանդութիւնը։

2) Հոգևոր վարչութիւնը պարտաւո՞ր է արդեօք տեղեկութիւն տալ տեղական տեսուչներին նոր բացելիք դպրոցների եւ նրանց մէջ նշանակուող ուսուցչաց մասին։

3) Ի նկատի ունենալով, որ Հայոց դպրոցներից ոմանք խուսափում են ժողովրդական ուսումնարանների տեսուչների հսկողութիւնից, բացատրել՝ արդեօք ժողովրդական դպրոցների վերատեսուչները եւ տեսուչները իրաւունք ունի՞ն եւ պարտաւոր չե՞ն ժամանակ առ ժամանակ այցելել այդ դպրոցները։

Այդ հարցումները, ինչպէս երևում է Ներքին գործոց նախարարի օգնականի ինձ ուղղած հաղորդագրութիւնից ի 29 ապրիլի տարեայս № 1481, այսպէս են լուծուած.

1) Հոգևոր վարչութիւնը իրաւունք ունէր, չենդրելով Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի թոյլտուութիւնը, բանալու ուսումնարաններ աւելի ընդարձակ եւ կատարեալ դասընթացքով, համեմատած ծխական դպրոցների հետ, այն պայմանաւ, որ ռուսաց լեզուի, Ռուսաստանի պատմութեան եւ աշխարհագրութեան դասաւանդութիւնը այդ ուսումնարաններում՝ ենթարկուի ժողովրդական ուսումնարանաց տեսուչների հսկողութեան.

2) Հայոց հոգևոր վարչութիւնը պարտաւոր է հաղորդել ուսումնարանական տեսչութեան տեղեկութիւններ, ինչպէս նոր բացած դպրոցների, նոյնպէս եւ նորանց մէջ նշանակուող ուսուցիչների մասին։

3) Ժողովրդական դպրոցների տեսուչների իրաւունքները

և պարտաւորութիւնները այցելելու եկեղեցական դպրոցները և հսկելու նորանց մէջ պարտաւորական առարկաների դասատուութեան վրայ, ինչպէս ըստ զօրութեան բարձրագոյն հաստատեալ ի 22 նոյեմբերի 1873 ամի՝ պետական խորհրդի կարծիքի, նոյնպէս և բարձրագոյն հրամանի 19 յուլիսի 1874 ամի, չի կարող ենթարկուիլ երկբայութեան։

Զեկուցանելով Մեծ իշխան փոխարքային ներքին գործոց նախարարի օգնականի վերև պարզաբանած հարցերը, նորին կայսերական բարձրութիւնը հրամայելով ընդունել այդ բացատրութիւնները ի հրահանգութիւն տեսչութեան Կովկասեան ուսումնական շրջանի, հաճեցաւ յանձնել ինձ՝ այս մասին ծանուցանել Ձերդ Վեհափառութեան։

Կատարելով սրանով Նորին Կայսերական Բարձրութեան կամքը՝ զերազանց յարգանքս և մտերմութեամբ ունիմ պատիւ մնալ, ողորմած հովուապետ, Ձերդ խոնարհ ծառայ՝

Պ. ԿԼՈՒՇԻՆ

Հաղորդելով նախարարի վերոգրեալ հաղորդագրութիւնը, որը ինչպէս տեսանք, հաստատած է և Նորին Կայսերական Բարձրութեան կովկասեան փոխարքայի կողմից, և իբրև օրէնք առաջադրած է ի հրահանգութիւն և ի կատարումն կովկասեան ուսումնարանական վարչութեան, նոր կանոնադրութիւնների հետ, ի 16 փետրվարի 1884 ամի, Սինոդի անդամները գտնում են, թէ բացի կրօնագիտութեան դասատուութեան վրայ հսկելուց, հայոց հոգևորականութիւնը ուրիշ իրաւունք ամենևին չունի, այլ միայն պարտական է եկեղեցական բոլոր գումարները ծախսել ծիսական անունով դպրոցներ բանալու և փակելու վրայ, և միշտ փակուելի և բացուելի դպրոցների մասին հաշիւ տալ ժողովրդական դպրոցների վերատեսչաց և տեսչաց։ Հապա որո՞նք են այն մեծամեծ իրաւունքները, որ ինչպէս ասում է «Կավկազ»ի յօդուածագիրը, այդ կանոնադրութիւնները տալիս են հայոց հոգևորականութեան։

Բայց պէտք է ասել, որ նախարարի վերոգրեալ № 1481 հաղորդագրութեամբ և Մեծ իշխան փոխարքայի բարձրագոյն հրամանի վրայ հիմնելով, հանդուցեալ Կաթուղիկոսի հրամանով բացուել են զանազան քաղաքներում՝ եկեղեցական ծախսերով՝ շատ ուսումնարաններ,

աւելի ընդարձակ ուսման ընթացքով, համեմատած ծխական դպրոցների հետ, որոնք այժմ փակուել են կովկասեան կառավարութեան ձեռքով ի յաւ սրտի ամբողջ ժողովրդեան։ Միթէ նախարարի յիշեալ հաղորդագրութիւնը օրէնսդրական կարգով փոխուած է. մեզ դեռ յայտնի չէ ոչ մի տեղից։

Գալով այն հարցին, թէ «Հայոց հոգեւորականութիւնը յամառութեամբ խոյս է տուել 10 տարեայ ընթացքում կատարելու բարձրագոյն հաստատուած կանոնները՝ 19 յուլիսի 1874 ամի», մենք վստահանում ենք յայտարարել, թէ Սինոդի անդամները եւ ընդհանրապէս հայոց հոգեւորականութիւնը ռուսաց տիրապետութեան վաթսուն տարեայ ընթացքում, վայելելով միշտ ռուսաց կայսրների առատ խնամքը եւ չնորհած մեծամեծ արտօնութիւնները, երբէք մտքիցն անգամ չեն անցկացրել յամառութեամբ խոյս տալ կատարելու Բարձրագոյն հաստատուած կանոնները 19 յուլիսի 1874 ամի, այլ ընդհակառակը ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսից ստացած կոնդակների համեմատ, որոնցով պատուիրած էր հաղորդել իւրաքանչիւր տարի կովկասեան ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուն ըստ սահմանեալն կարգի տարեկան ցուցակներ բոլոր հայոց դպրոցների մասին, եւ թոյլատրել ժողովրդական դպրոցների վերատեսչաց եւ տեսչաց՝ կատարել իւրեանց պարտաւորութիւնը համաձայն վերջին կարգագրութեան, որ բայատրած էր կովկասեան փոխարքայի գլխաւոր կառավարութեան հաղորդագրութեան մէջ 21 մարտի 1880 ամի № 1515, եւ յատկապէս ի 27 մայիսի 1880 ամի № 252, կոնդակի Նորին Վեհափառութեան Սինոդի անդամները կատարել են ամենայն ճշտութեամբ առանց երբէք վրիպելու, հրամանագրելով վիճակաւոր առաջնորդաց եւ կոնսիստորիայից հայոց 31 յուլիսի 1880 ամի № № 3771—3777, եւ ստանալով թէ յառաջ եւ թէ յետոյ յիշեալ վիճակաւոր առաջնորդներից եւ թեմական տեսուչներից լիակատար ցուցակներ երկու սեռի եկեղեցական ծխական ուսումնարանաց, ուղարկել են միշտ եւ անխափան ամենայն տարի՝ Նորին Գերազանցութեան հոգաբարձուի կովկասեան ուսումնարանական շրջանի (սկսած 1873 թիւից մինչեւ 1884 թիւ. բերած է ցուցակը)։

Իսկ ինչ վերաբերում է «Կավկազ» լրագրի խմբագրի

այն խօսքերին, թէ «Յանկարծական փակումը հայոց դպրոցների էր ոչ յանկարծական, այլ պատրաստուում էր հայոց հոգեւորականութեան ձեռքով, սկսած 1874 թուականից, եւ վճռապար արտայայտուեցաւ կատակերգական non possumus—ոչ կարենք խօսքով» այդ բոլորը վերեւումը մեր յառաջ բերած դրաւոր փաստերով ինքն ըստ ինքեան ներքուստ է. հայոց հոգեւորականութիւնը չէր պատրաստում ուսումնարանների փակումը, եւ չէր էլ անդամ մտածել։ Այլ ընդհակառակն Սինոդի անդամները՝ իրաւաբանական տեսակէտից նայելով գործին, եւ զգուշանալով հայոց եկեղեցւոյ Հայրապետի իրաւանց ձեռներեցութիւնից՝ աշխատել են իւրեանց իրաւանց չափն ու սահմանը պահպանելու եւ ճանաչելու։ Ինչպէս ցոյց են տուել եւ հետեւեալ գրութեան մէջ ի 15 սեպտեմբերի 1884 № 2451, որ է երկրորդ պատասխան կովկասեան Տ. Կառավարչապետի հաղորդագրութեան 31 յուլիսի նոյն ամի, № 1062։

Նորին պայծառափայլութեան Տեառն Կառավարչապետին
Քաղաքացիական մասին Կովկասու.

Հաղորդագրութիւն Ձերդ պայծառափայլութեան որ 31 յուլիսի տարւոյս ընդ համարաւ 1062, յաղագս ի կատար ածելոյ անմիջական իշխանութեամբ Սինոդիս Էջմիածնի զկանոնս վասն եկեղեցական հայ դպրոցաց, համաձայն պահանջման առ այս նախարարութեան ներքին գործոց՝ յանելանելի վիճակ կացոյց զՍինոդս։

Սինոդս ծանուցեամբ ի 24 մայիսի տարւոյս համարաւ 1243, պատիւ կալաւ ի գիտութիւն հասուցանել Ձերդ Պայծառափայլութեան՝ թէ զգործս եկեղեցական ծխական դպրոցաց մերոց անմիջապէս վարէր ի Տէր հանդուցեալ ծայրագոյն Պատրիարքն եւ Կաթուղիկոսն ամենայն հայոց, հետեւելով օրինակի նախորդաց իւրոց։

Ծայրագոյն Պատրիարքունք զլուխ կացեալ սրբոյ Եկեղեցւոյ Հայաստանեայց՝ ըստ կանոնաց եւ դարաւոր աւանդութեանց նոյն Եկեղեցւոյ, նուիրական եղելոց նաեւ օրինաւորութեամբ Ռուսիոյ, յանձին բառնան զզլխաւոր հոգատարութիւն կրօնական բարոյական կրթութեան հայ ազգի եւ մանկանց նորին՝ ցուցանելով զճանապարհ խաղաղ եւ առաքինի կենաց եւ հնազանդութեան օրինական իշխանութեանց՝ համաձայն վայրապետութեան Ս. առաքելական։

Առ Հայս, ի սկզբնաւորութենէ անտի քրիստոնէու-

թեան, դպրոցն համարեալ է նախաղու�Եկեղեցւոյ, եւ կաթուղիկոսունք ի գլուխ կացեալ Եկեղեցւոյ կառավարեալ են եւ զդպրոցն, վասն որոյ եւ յամենայն ժամանակս հայ եկեղեցական դպրոցք բացեալ եւ հաստատեալք են կենդանեաց կաթուղիկոսաց, եւ ինքեանք կաթուղիկոսունք տուեալ են զբրահանգս եւ զկանոնս վասն այդոցիկ դպրոցաց, առանց որ եւ է միջամտութեան եւ մասնակցութեան Սինոդի Էջմիածնի։

Յորժամ յամին 1874 խնդիր եղեւ կառաւարման Բարձրագոյն ի 23 Նոյեմբերի 1873 ամի հաստատեալ կարգեաց պետական խորհրդոյն վասն ենթարկելոյ զհայ եկեղեցական-ծխական դպրոցս հսկողութեան վերատեսչաց ժողովրդական դպրոցաց, կովկասեան գլխաւոր կառավարութիւնն ի սկզբան ընդ Սինոդիս եռուտ ի գրագրութիւն, եւ ի ծանուցանել վերջնոյն զոչ ունիլն իւր իրաւունս միջամտութեան ի սոյն օրինակ գործս, զչարունակութիւն թղթակցութեանն ուղղեաց առ երջանկայիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոս։

Գործագրութիւն նորոց կանոնաց՝ ունի փոփոխել զոր այժմս է կազմակերպութիւն հայ ծխական-եկեղեցական դպրոցաց, սահմանեալն իշխանութեամբ ծայրագոյն Պատրիարք Կաթուղիկոսաց, իսկ միջամտել ի գործ իշխանութեան գլխոյ Հայաստանեայց եկեղեցւոյ՝ Սինոդս, որոյ անդամք հոգեւորականք ստորադրին Գլխոյ Եկեղեցւոյն, չունի իրաւունս եւ չկարէ ենթարկել զինքն ծանր պատասխանատուութեան առաջի Եկեղեցւոյ եւ խղճի իւրոյ։

Ուստի յարգոյալաբար յայտնելով Ձերում Պայծառափայլութեան, Սինոդս խնդարհաբար խնդրէ յարգել զինդիր Սինոդիս եւ այնու ազատել զՍինոդս ի ներկայ յանելանելի վիճակէ։

Տեղ. Կաթողիկոսի Սինոդի՝
Մկրտիչ Արքեպիսկոպոս

Անդամք Սինոդի՝

Մեսրոպ Եպիսկոպոս, Յովակիմ Եպիսկոպոս, Երեմիա Եպիսկոպոս, Ներսէս Եպիսկոպոս, Մամբրէ վարդապետ։

15 սեպտ. 1884 ամի
№ 2451

Բացի դրանից Սինոդի անդամները հեռագրով յայտնել են Տէր Կառավարչապետին, որ նոքա իրանց իրաւունք չեն

համարում Կաթուղիկոսի իրաւասութեան ձեռնամուխ լինել, եւ անա այդ հեռագրի պատճէնը.

Տեառն Կառավարչապետի
Քաղաքացիական մասին Նովիկասու.

Մինոգս պատիւ ունի յարգանօք յայտնել Ձերդ պայծառափայլութեան, զի որպէս բազում անգամ խոնարհաբար յայտարարեալ է, թէ Անդամք Նորին չհամարեն ինքեանց զիրաւունս անցանել զիրաւասութեամբ Պատրիարք Կաթուղիկոսի, որ նուիրական է վասն Հայաստանեայց Եկեղեցւոյ, զնոյնն կրկնէ եւ այժմ, թողլով զանօրէնութիւն կանոնաց հաստատելոյ ի 16 փետրվարի 1884 ամի, ի բարեհաճ նկատողութիւն բարեխնամ կառավարութեանն։

Տեղ. Բանեցապետի Մինոգի
Մկրտիչ Արքեպիսկոպոս

22 փետր. 1885

Արժանի ենք համարում աւելացնել, որ խմբագրի այն խօսքերը թէ իբր «հայոց հոգեւորականութիւնը եւ նորա ներկայացուցիչները արհամարհել են հայոց ժողովրդեան շահերը, թոյլ են տուել դիմադրութիւն իշխանութեան դէմ եւ ցանկութիւն ունին ձեռք բերել աշխարհական իշխանութիւն եւ հայ ազգի քաղաքական վիճակի առաջնորդութիւն, ընդ նմին ի չարն գործ գնելով այնպիսի սրբազան գործ, որպիսին է մանկանց դաստիարակութիւնը»), զլխովին մտացածին զրպարտութիւններ են, որոնց դէմ մենք բողոքում ենք հրապարակաւ, յայտարարելով, որ հայոց հոգեւորականութիւնը արժանի է համարուել իւր բարձր կոչմանը թէ իւր եւ թէ օտար ազգերից, սկսած հինգերորդ դարից մինչեւ ցայժմ անդադար աշխատել է աւետարանական ճշմարիտ վարդապետութեան հիմանց վրայ առաջնորդել իւր սիրելի հօտը դէպի լոյսը եւ պատրաստել ընտիր անդամներ հասարակութեան եւ անձնազոհ հպատակներ սիրող պետութեանց, որպէս եւ այժմ մեր ամենասիրելի եւ առատագութ Կայսեր համար։ Թո՛ղ այս բաներում պ. խմբագիրը չերկրայի, խարուելով հայատեացների թիւր խօսքերից եւ թո՛ղ իմանայ հաստատապէս, թէ հայոց հոգեւորականութիւնը արթուն պահապան լինելով իւր նախնեաց բազմադարեան աւանդութեանց, որոնք սուրբ են հայ ազգի—եկեղեցւոյ համար, կարողա-

ցել է ըստ չափու իւր կարողութեան դատարակել իւր ժողովուրդը եւ մեծամեծ ճիգեր թափուելեամբ ազատել Լանկթամուրների, Յազկերտների, Շահաբասների, Մոնղոլ Խանների եւ Շահ-Նազիրների ճիրաններից իւր եկեղեցին, եւ ազգը, եւ հասցնել Ռուսաց կայսրութեան փառաւոր երկգլխեան արծուոյ հովանաւորութեան։ Հայոց ազգը եւ հոգեւորականութիւնը իւր կարողութեան չափ ամենայն ջանք է գործ դրել իւր ծառայութիւնը ցոյց տալ օրինաբանեալ Ռուսաց կառավարութեան, ինչպէս ցոյց են տալիս Ռուսաց Երջանկայիշատակ Կայսերների բազմաթիւ հրովարտակները, զորս ցանկացողները կարող են գտնել Արքունի Դիւաններում։ Եւ գիտեմք եւ աներկմիտ եմք, որ մեր օրինաբանեալ կառավարութիւնը այսուհետեւ եւս անպակաս կանէ իւր գութը եւ խնամքը իւր անձնազոհ հայ ազգից եւ չի թոյլ տալ ոսնահար լինել։

«Կովկազ»ը չի բաւականանում հոգեւորականութիւնը միայն կառավարութեան առաջ կասկածելի ցոյց տալ, այլեւ ձգտում է ժողովրդեան առաջ եւս կասկածելի առնել։ Եթէ հոգեւորականութիւնը թէ կառավարութեան եւ թէ ժողովրդի հակառակ է գնում, ուրեմն ի՞նչ է նորա չարը կամ նպատակը, ո՞ւմ համար են աշխատում, ըստ «Կովկազ»ի «ձեռք բերել աշխարհական իշխանութիւն եւ առաջնորդութիւն քաղաքական վիճակի»։ Մենք աշխարհական իշխանութիւն եւ քաղաքական առաջնորդութիւն ձեռք բերելու համար չենք մտածում։ Շատ է մեզ, եթէ կարողանանք իրրեւ շնորհակալու հպատակներ վայելել մեր օրինաբանեալ Տէրութեան շնորհները։ Հոգեւորականութիւնս ոչ մի բանով վնասակար չէ եղել ժողովրդի հոգեւոր եւ մարմնաւոր շահերին բայց «պահպանելուց իւրեանց լուսաւորչական հաւատոյ վարդապետութեան մաքրութիւնը»։ որ հայոց հոգեւորականութեան իսկական պարտքն է»։

Ազարդիւն յոյսեր։ Ա՛չ պ ա շ տ օ ն ա կ ա ն վաւերագրերը, եւ ո՛չ „Հաւատարմական“ առատ արտայայտութիւնները օգուտ չունեցան։ Դպրոցների փակման հրամանը տուեց։ Եւ մինչ ոստիկանութիւնը արտասովոր ոգեւորութեամբ կնքում էր կրթարանների դռները,

Էջմիածնի մէջ, սինոդականների շրջանում տիրում էր ծանր երկիւղ. — լուրեր էին պտտում, որ Պետերբուրգից հրաման են սպասում աքսորելու այն եպիսկոպոսներին, որոնք „դիմադրութեան“ ցոյց են արել, և հրաժարուել յանձնելու ուսումնարանները: Հաւանականութեան մեծ նշաններ կային...

Սակայն կաթողիկոսական մնալուստ ընտրութիւնը մի քիչ կերպարանափոխեց վիճակը: Կառավարչական շրջաններում նոր ծրագիր էր մշակուած, — ձեռք գցել ոչ միայն դպրոցների, այլ նոյն իսկ ամբողջ Էջմիածնի ղեկը, առաջ մղելով „յարմար“ մի եպիսկոպոսի թեկնածութիւնը կաթողիկոսական գահի համար: Եւ այդպէս էլ եղաւ: 1885 թուին, ինչպէս յայտնի է, Մակար արքեպիսկոպոսն էր կառավարչական թեկնածու և այդ պատճառով Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրադեան, որ ձայների առաւելութիւն էր ստացել, մնաց մի կողմ և կաթողիկոս հաստատուեց Մակար, որի անունը ժողովրդի աչքում քիչ-շատ համակրելի դարձնելու համար՝ ռուսաց կառավարութիւնը նախօրօք արդէն համաձայնութիւն էր տուել՝ վերաբանալ փակուած դպրոցները, այն պայմանով միայն, որ նրանք այլևս չունենան նախկին ժողովրդական բնաւորութիւնը, այլ դառնան հոգևորականութեան անմիջական իշխանութեան, հետևաբար իր անուղղակի ազդեցութեան տակ: Դեռ Մակարը պաշտօնապէս չէր հաստատուած, որ տեղեակ շրջաններում գիտէին, թէ նրա կաթողիկոսութեան առաջին գործը կը լինի դպրոցների վերաբացումը:

Այդ իմաստով էլ Մակար կաթողիկոսը առաջարկութիւն արեց և դպրոցները 1886 թուին վերաբացուեցին: Բայց կար մի այլ կարևոր խնդիր՝ — ուսուցիչների և վարժուհիների ցէնզի (ուսուցչութեան իրաւունք) խնդիր, որի համար Մակար 6 տարի ժամանակամիջոց

խնդրեց, պարտաւորելով մինչ այդ ժամանակի լրանալը՝ հայոց դպրոցների դասատուներին փոխարինել ցէնդաւորներով։ Ով գիտէ, գուցէ ծերացած կաթողիկոսը „յոյս ունէր“, — եթէ այս դարձուածքը կարելի է գործածել, — որ ինքը հաղիւ այդքան տարի կ'ապրի, իսկ իրանից յետոյ „թէկուզ ջրհեղեղ“։ Այսպէս էլ եղաւ։ Վեց տարին չլրացած՝ այն է 1891-ին Մակարը վախճանուեց, և երբ 1892-ին տեղի ունեցաւ Խրիմեանի ընտրութիւնը, իսկ 1893-ին՝ նրա հաստատումը և փառաւոր մուտքը Կոմկաս, ամբողջ հայոց հասարակութիւնը, գերի ոգևորութեան և յոյսերի, համոզուած էր, որ նոր կաթողիկոսը, շնորհիւ իր ահագին ժողովրդականութեան և ունեցած լաւ համբաւի, կարող կը լինի դպրոցական հարցը աւելի հիմնաւոր կերպով կարգադրել և այդպիսով մէջտեղից վերացնել այդ մեծ „ցաւը“։ Եւ 1893 թուին՝ ամառը, երբ նոր կաթողիկոսը չէր հասել Էջմիածին, Ընդրկովկասի համարեայ բոլոր կողմերում, հայոց դպրոցների դասատուները մեծ եռանդով աշխատում էին քննութիւն տալ և պահանջող ցէնդը ձեռք բերել, որպէսզի, համաձայն կառավարութեան պայմանագրի, իրաւունք ունենան ուսուցչութիւն անելու ծխական ուսումնարաններում, յոյսերի և տանջանքի այդ փշոտ, բայց փառունակ ասպարիզում...

Սակայն դեռ այդ ժամանակ նկատելի եղաւ, որ հոգաբարձու Եանովսկին „գաղտնի“ դիտաւորութիւններ է սնուցանում իր գլխի մէջ։ Նա ծածուկ հրահանգներ էր տալիս՝ կտրել ցէնդի համար քննութիւն տուող հայ ուսուցիչներին։ Ներսիսեան դպրոցը և Ճեմարան աւարտողները, արտասահմանից եկած մանկավարժները՝ առարժան համարեցին ցէնդի, մի ձեւական վկայականի։ Հետևանքը այն եղաւ, որ բազմաթիւ պատրաստուողները, լաւ տեսնելով, որ չարամիտ դաւեր

են լաւում, թողեցին դպրոցական ասպարէզը և հեռացան ընդմիշտ . . .

Վերաբացուած ուսումնարանները, աւա՜ղ, չունեցան նախկին ուժը և հմայքը։ Լաւ ուժերը սահմանեցան հեռանալ։ Ժողովրդական իրաւասութեան ոգին, որ կազմում էր այդ հիմնարկութիւնների զարգացման գլխաւոր խթանը, ոչնչացաւ և տեղ տուեց կղերական և ոստիկանական վարչութեան։ Համայնքը, որ տարիների ընթացքում վարժուած էր հոգալ մանուկների կրթութեան ծախքը, որ իր քրտինքի պտուղներով կառուցել էր աղքատ խրճիթների կողքին սիրուն շէնքեր, հպարտ նրանց բարգաւաճման տեսարանով, սիրտը կոտրուած, յետ մղուեց, կանգ առաւ իր ոգևորութեան մէջ։ Եկան նոր դժուարութիւններ, անսպասելի արգելքներ։ Դպրոց բանալը, ուսուցիչ նշանակելը ենթարկուեց խստութեան, ձևականութիւնների։ „Հսկողութիւն“ անուան տակ սկսեցին զգուշաւոր, բայց սիստեմատիք հալածանքներ կառավարութեան պաշտօնեաների կողմից՝ որոնք քիչ-քիչ դարձան անտանելի։ Դրանով պէտք է բացատրել այն հանգամանքը, որ նախկին դպրոցների մի աննշան մասը մնաց կանգուն, վերաբացուած, տեղողական։

Այդպէս, օրինակ, 1889 թուին՝ հայոց դպրոցների թիւն էր՝ Թիֆլիզի թեմ — 44, Երևանի — 30, Զաբաղի — 17, Շամախու — 14, Ատրպատականի — 18։ Աշակերտ-աշակերտուհիների թիւը՝ 11,359։ Ուսուցիչ-վարժուհիների թիւը՝ 482։ Տարեկան ընդհանուր եկամուտը՝ 212,554 ռուբլի։ Ահագին տարբերութիւն այն թուի հետ, որ պատկերացնում էին հայոց ուսումնարանները՝ փակուելուց առաջ։

Վրայ հասաւ 1894 թուականը։ Կառավարութիւնը յայտնեց Էջմիածնի հովուապետին, թէ Մակար կաթողիկոսին տուած վեցամեայ ժամանակն անցել է և ուրեմն դպրոցական հարցը պէտք է համարել հերթա-

կան։ Վեհափառ Խրիմեանը յաջողութեան շատ քիչ յոյսեր էր տալիս և ոչ մի ելք չգտնելով, նա դիմեց Պետերբուրգ, խնդրելով էլի մի տարով յետաձգել պարմանաժամը։

Սկսեցին գրագրութիւններ Պետերբուրգի և Էջմիածնի կամ աւելի լաւ է ասել՝ Եանօվսկու և Պետերբուրգի միջև, որոնք տևեցին մինչև 1896 թուականը։ Հայոց հոգևոր իշխանութիւնը տրամադրութիւն ցոյց տուեց նոր զիջումներ անելու, վերջնապէս պարտաւորուեց միմիայն կառավարչական ցէնզ ունեցողներին դասատու կարգել, — բայց անօգուտ։ Դպրոցների փակումը սկզբունքով որոշուած էր՝ թէ Պետերբուրգ, թէ կառավարչապետի պաշտօնում...

Այդ որոշման գլխաւոր հիմքը այլևս հսկողութեան ու ցենզի խնդիրը չէր, այլ այն մտացածին, երևակայական, նենգ մատնութիւնների վրայ հիմնուած եզրակացութիւնը, թէ հայոց դպրոցները հակակառավարչական պրօպագանդի բուներ են, շատ վտանգաւոր կովկասի քաղաքական խաղաղութեան համար։ Հայկական հարցի սուր կերպարանքը այդ տարիներին՝ աւելի ևս ուժ տուեց այս ենթադրութիւններին։ Ապշած այն անսպասելի թշնամական դիրքից, որ բռնեց ռուսաց կառավարութիւնը դէպի թիւրքահայերի դատը, սկսած 1895 թուից, ամբողջ ռուսահայ ժողովուրդը արտայայտեց նախ մի խուլ զարմանք դէպի կառավարութեան վերաբերումը, և ապա մի բնական հակումն դէպի Եւրոպան, յատկապէս Անգլիան, ուր այդ միջոցին յատկանշուած տրամադրութիւն կար յօգուտ հայկական յեղափոխութեան և Թիւրքաց Հայաստանի ինքնավարութեան։ Պետերբուրգեան շրջաններում և կովկասեան կառավարչապետի ապարանքում ատամներ էին կրճատացնում։ Վիճակը ընկաւ հայոց դպրոցների վրայ, և նրանք պիտի չքանային։ „Մենք կը փակենք ձեր դպրոցները, ասաց ներքին

գործերի մինիստրը Հայոց կաթողիկոսի ներկայացուցչին Պետերբուրգում, իբրև պատիժ այն համակրութեան, որով համակուած են Հայերը դէպի Անգլիան»:

Եւ փակեցին։ 1897-ին էր դա։

Ընարդար և անտարամաբան էին կառավարութեան առաջարկած պայմանները։ Այդ պայմաններով՝ ա) Հայ համայնքը պիտի հոգայ ուսումնարանների ամբողջ ծախքը, առանց վարչական որևէ իրաւունքի. բ) Ուսուցիչներին և վարժուհիներին պիտի նշանակէ կառավարութիւնը. գ) Դասաւանդութիւնը պիտի կատարուի ռուսաց լեզուով, բացի կրօնը և Հայոց լեզուն, և վերջինը պիտի ունենայ շաբաթական դասերի աւելի նւազ թիւ՝ քան ռուսաց լեզուն. դ) Միակ և անմիջական հսկողութիւնը դպրոցների՝ պատկանում է կառավարչական դիրեկտորներին։ Բացի դրանից՝ նոյն դիրեկտորներին իրաւունք է տրւում՝ նշանակել դպրոցներում ուրիշ ազգութեան պատկանող վարժուհիներ և ուսուցիչներ, և ընդունել այլազգի երեխաներ, որքան և երբ կը բարեհաճեն։

Իսկ թէ ինչ պատճառով այդ դպրոցները պիտի կոչւէին Հայոց դպրոցներ, և ինչու ծախքը պիտի հոգար միմիայն Հայ համայնքը, — դա միապետական տրամաբանութեան գոհարներից մէկն է, որը բացատրելու և հասկանալու համար պիտի լինել կոփած՝ նոյն միապետութեան քաղաքական քուրայի մէջ...

Սակայն դա անարդարութեան ամբողջութիւնը չէր։ Միաժամանակ հրապարակ բերուեց մի այլ՝ չը լսած, և չը տեսնուած խնդիր։ Դպրոցական կալուածքների խնդիրն է դա։

ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ

(ՉՈՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Դպրոցական կալուածքներ. — Ո՞րն էր նրանց հարստութիւնը.— Կառավարութեան երազները. — Յափշտակութեան փաստը. — Եկեղեցական կալուածքներ. — Դատարանի բռնած դիրքը. — Եկեղեցին եւ նրա հարստութիւնը. — Նորանոր հարուածների ծրագիրը:

Եթէ յիսուն տարի յետոյ մի անկողմնապահ ռուս պատմագիր ուզենայ գրել Կովկասի կուլտուրական շարժման, կամ՝ աւելի լաւ է ասել, ռուսաց բիւրոկրատիայի բռնութիւնների պատմութիւնը, հասնելով հայոց դպրոցների փակմանը, նա կատարեալապէս ապուշ պիտի կարի՝ ինքն իրեն տալով այս հարցը. „Ինչու՞ խլեցին հայոց դպրոցների կալուածքները“: Այդ „ինչու՞“ դրժուար պատասխանելի է. դժուար՝ այն պատճառով, որ ոչ միայն իրաւական, այլ նոյն իսկ քաղաքական տեսակէտից անկարելի է որևէ բանաւոր մեկնութիւն տալ այդ բռնակալ՝ կամ աւելի լաւ է ասել՝ խենթ կարգադրութեան: Շատ կարևոր է ուրեմն պարզել այն գաղտնիքը, թէ ինչու՞ իշխան Գոլիցին և Հոգաբարձու Լանսկոյի ստեղծեցին դպրոցական կալուածքների յափշտակութեան հարցը, թողնելով ապագայ ռուս սերունդին արժանաւոր անունով մկրտել նախահայրերի այդ „քաղաքական քայլը“:

Սկզբունքով վճռելով ոչնչացնել հայ դպրոցները, կովկասեան կառավարչապետը, ինչպէս յայտնի է վրատհելի աղբիւրներից, հարց է տալիս՝ թէ արդեօք

գանձարանը կարո՞ղ է դրանց փոխարէն նոյն վայրերում բաց անել կառավարչական դպրոցներ, որպէսզի ռուսացմանն գործը Հայաբնակ տեղերում կանգ չառնի։ — Ոչ, պատասխանում է Հոգաբարձուն, որ բազմաթիւ փորձերից գիտէր արդէն, թէ նոյն իսկ „քաղաքական տեսակէտից“ Կովկասում որևէ դպրոց բանալու համար՝ ինչքա՞ն դժուար է եղել ամենաչնչին մի գումար անգամ ձեռք բերել ժողովրդական լուսաւորութեան մինիստրից։ Եւ վերջապէս օրտեղից տայ խեղճ լուսաւորութեան մինիստրութիւնը, քանի որ ժողովրդից հաւաքուող հարիւրաւոր միլիոնները մնում են բիւրոկրատիայի և զինուորականութեան անյատակ փորը, ոչինչ չթողնելով „լուսաւորութիւն“ կոչուած շուայլութեան համար։ Իր այդ նշանաւոր „ոչ“ի հետ Հոգաբարձու Եանովսկին ներկայացնում է աւելի նշանաւոր մի բան, մի „զեկուցում“, կամ ռուսական բառով մի դոկլադ...

Ի՞նչ է այդ նշանաւոր „զեկուցման“ գաղտնիքը։ — Խլել Հայոց դպրոցական կալուածքներն ու հարստութիւնը, որովհետև, աւելացնում է նրա տաղանդաւոր կազմողը — „Հայ դպրոցները ունեն այնպիսի մեծ հարստութիւն, որ նրանով կարելի է ապահովել անհրաժեշտ ուսումնարանների գոյութիւնը և այդպիսով ընդմիշտ ազատել կառավարութիւնը դրամական մի ծանր բեռից“։ Կովկասեան կառավարչապետի գիւանի վերջին քարտուղարն անգամ լաւ գիտէր, որ այդ „զեկուցման“ շնորհիւ հրապարակ է բերում մի ապօրինի խնդիր, անարգ յափշտակութեան մի նենգ ծրագիր, — բայց տարաբախտաբար, յանուն „պետական շահերի“ ամեն մէկը հայրենասիրութիւն համարեց լռել։ Ձայն չհանեցին ոչ կառավարչապետի խորհրդի անդամները, ոչ գիւանատան ղեկավարները, ոչ վերջապէս նրա շրջապատողները և խորհրդի կանչուած նահանգապետները։ Եւ այդ պատճառով Եանովսկու „զեկուցումը“ անցաւ,

Պետերբուրգ ուղարկեց, „օրինական ձեռականութիւն-ների“ տակ դրեց, և մի քանի ամիս անցած՝ յայտարարեց, — փակելով դպրոցները՝ խլել կալուածքները...

Ահա այդ ժամանակ էր, որ Գոլիցին՝ մի օր իր պալատի մէջ մի հայ պաշտօնեայի ընդունած ժամանակ, իրեն յատուկ գոռոցով՝ ասել էր. „Ապա թէ հայերը համարձակուին դիմադրութիւն ցոյց տալ, կը տեսնէք թէ ինչ կ'անեմ“... Հրամայուած էր պատրաստի զօրք ունենալ՝ հայկական անհնազանդութեան ամենաթոյլ նշանն անգամ ոչնչացնելու համար... Դիմադրութիւն, ի հարկէ, չեղաւ. հայերը անբողոք յանձնեցին թէ դպրոցները և թէ կալուածքները, խոնարհելով մի այնպիսի ապօրինի կարգադրութեան առաջ, որի նմանը Ընդրկովկասի տիրապետութեան 100 տարուայ պատմութեան մէջ գոյութիւն չունի:

Տարաբախտաբար թէ բարեբախտաբար, Լանսկոյ սպասած անապառ հարստութիւնը գոյութիւն ունէր միայն նրա բորբոքուած երևակայութեան մէջ: Ինչի վրայ էր հիմնուած այդ համարձակ ենթադրութիւնը, գուցէ հարցնի ընթերցողը: Դէպ՝ ռուս չինովնիկների այն ընդհանուր մոլորութեան վրայ, որ իբր թէ հայոց բոլոր հիմնարկութիւնների, մանաւանդ եկեղեցիների, ուրեմն և դրանց կից դպրոցների մէջ անհամար փող կայ դիզած — հարստութիւն, որ, այդ նոյն չինովնիկների կարծիքով, հայերը թագցնում են ապագայ Մեծ-Հայաստանը վերակազմելու համար. և երկրորդ՝ այն տեղեկութեան վրայ, որ դեռ Մակար կաթողիկոսի կենդանութեան ժամանակ տրուած էր կովկասեան ուսումնարանական շրջանի իշխանութեան:

Ի՞նչ էր այդ տեղեկութիւնը:

Ահա թէ ինչ: Հոգաբարձու Լանսկոյին, դեռ 1886 թւին, կամենալով մի փոքր արգելք դնել հայոց դպրո-

բոցների շատացման առաջ, պաշտօնապէս յայտնում է Էջմիածնի հոգևոր իշխանութեան, որ միայն այն դպրոցները կարելի է բանալ, որոնք եկամուտի կողմից ապահով են։ Էջմիածնի կողմից պատասխան է տրըւում, թէ հայոց բոլոր դպրոցները ապահով, հաստատ եկամուտ ունին, և ուրեմն այդ կողմից նրանց բացման դէմ արգելք դնել չէ կարելի...

Ահա ուրեմն՝ մի կողմից այն ընդհանուր ենթադրութիւնը, թէ հայոց եկեղեցական հիմնարկութիւնների մէջ անբաւ ոսկի է դիզուած, իսկ միւս կողմից Էջմիածնի ուած տեղեկութիւնը՝ կառավարական շրջաններում այն վերջնական կարծիքն էին ամրացրել, թէ հայոց դպրոցները փողի ամբարներ են... Այդ ամբարներն էր ահա, որ վճռեցին յափշտակել..

Յափշտակեցին... Բայց ինչ դուրս եկաւ միջից, — գրոշներ, եթէ չհաշուենք մի 10-15 դպրոցներ, որոնք յատուկ կտակներով ապահով կալուածքներ և եկամուտ ունէին։ Թիֆլիզի շրջանի կառավարչական դպրոցների վերատեսուչներից մէկը, մոլեռանդ միապետական, դպրոցների գոյքը ստանալիս, կատաղած բացականչում էր ամեն տեղ. „Սա դաւադրութիւն է. մենք տեղեկութիւն ունենք, որ Թիֆլիզի Գայիանեան դպրոցը 250 հազար բուբլի հնչուն փող ունի, իսկ մեզ տալիս են միայն 25 հազար բուբլի։ Յովնանեան դպրոցը, որ միլիոնատէր էր, բացի մի քարվանսարայից՝ ոչինչ չէ ցոյց տալիս։ Նոյնը և միւս դպրոցները։ Այո, հայերը թագցրին, լաւ թագցրին դպրոցների հարստութիւնը“...

Հայոց դպրոցների մասին անթիւ զեկուցումներ գրողները, ի մեծ դժբախտութիւն իրենց, մոռացել էին մի շատ կարևոր բան — այն, որ այդ դպրոցների մեծ մասը, պահւում էր ոչ թէ պատրաստի, հաստատ եկամուտներով, այլ ծխականների, համայնքի պատահական, կամաւոր նուէրներով։ Դպրոցական հոգաբարձուները ամսի

20-ին գանձարան չէին գնում փող ստանալու համար. հայ համայնքն էր, որ լցացնում էր ծախքի մեծ մասը երբեմն նվերներով, երբեմն ներկայացումներով, երբեմն էլ նոյն իսկ պարտք վերցնելով։ Ճիշտ է, հայոց դպրոցները ապահով էին, բայց ապահով ժողովրդի կենդանի աջակցութեամբ, տարէցտարի կրկնուող նպաստներով, և ոչ թէ գանձարանում դրած պատրաստի փողերով։ Կոյր պէտք է լինել չիմանալու համար, որ շատ տեղեր հայոց ուսուցիչները՝ իրենց հանգստութիւնը բոլորովին մոռացած՝ թատրոնական ներկայացումներ էին կազմում, „աւետիս“ էին ման գալիս, հազար ու մի դուռ էին բաղխում իրենց ռոճիկը դրստելու համար։ Այդ շատ լաւ գիտէր ամեն մի գիւղացի. չգիտէր միայն Եանովսկին, որ „դոկլադներ“ գրելու համար փաստերը քաղում էր ոչ թէ կեանքից, այլ իր հայակերը երևակայութեան մութ խորքերից...

Ընդունենք մի վայրկեան, մի բոպէ, որ կառավարութիւնը, դրդուած քաղաքական տեսակէտից, կուրացած ռուսացման տենչով կամ վախեցած այն դատարկ և շինծու լուրերից, թէ հայ դպրոցների մէջ հակակառավարչական պրոպագանդ է լինում, առիթ, իրաւունք ունէր — իր տեսակէտից, ի հարկէ — դպրոցները փակելու։ Ընդունենք, ասում ենք, մի վայրկեան, այդ տեսակէտը։ — Լաւ։ Բայց միթէ քաղաքական կամ կառավարչական որևէ տեսակէտով այդ դպրոցների փակումը իրաւունք էր տալիս գրաւել, խլել, յափշտակել նրանց սեփականութիւնը։

Պետերբուրգում, ինչպէս և կովկասեան գլխաւոր վարչութեան մէջ, քաջ գիտեն, որ հայոց դպրոցների կալուածքները կամ եկեղեցու սեփականութիւն են և կամ յատուկ կտակներով ամրապնդած գոյք։ Օրինակ, Թիֆլիզի, Ալեքսանդրոպոլի, Ախալցխայի, Բագուի և ուրիշ տեղերի շատ

դպրոցներ ունեն մեծ կալուածքներ, որ ստացել են յատուկ կտակներով. և այդ կտակ անողները իրենց հարստութիւնը նուիրել են Հայոց Եկեղեցական դպրոցին և ոչ թէ առ հասարակ որևէ դպրոցի, նրանց գործադրութիւնը յանձնել Հայոց Հոգևոր իշխանութեան իրաւասութեան և ոչ թէ առ հասարակ որևէ մարմնաւոր իշխանութեան։ Դպրոցների մեծագոյն մասը յատուկ նուէրներ ունեն, սրբագործուած օրինական կտակներով, որոշ ցուցմունքներով, որոնք, օրէնքի տեսակէտից՝ ոչոքի և երբէք իրաւունք չեն տալիս վարուելու այդ նուէրների և կտակների հետ այնպէս, ինչպէս նրանց հաճոյքն է թելադրում։ Եւ այդ բազմաթիւ կտակ անողները իրենց վերջին կամքը յայտնելիս՝ այն խորին համոզման մէջ են եղել, թէ իրենց ցանկութիւնը միշտ կը գտնուի օրէնքի խիստ և անշեղ պաշտպանութեան տակ, առանց երևակայելու, որ մի օր, դրդուած քաղաքական տեսակէտից՝ օրէնքը և դրա հետ միասին բազմաթիւ կտակները ոտի տակ կը գցեն նոյն իսկ այն մարդիկ, որոնք եկել են կովկաս՝ իբր թէ այդ օրէնքը անխախտ գործադրելու համար . . .

Դպրոցների փակումից յետոյ կովկասի շատ տեղերում, թէ մասնաւոր լիազօրներ, թէ հոգևոր իշխանութեան ներկայացուցիչներ, թէ վերջապէս ծխականներ բազմաթիւ գոկումենտներ և վաւերագրեր ներկայացրին կառավարութեանը՝ ապացուցանելու համար, որ այն կալուածքները, որ խլում են, եկեղեցուն են պատկանում, կամ այն փողերը, որ յափշտակում են, յատուկ կտակներով նախորոշած գումարներ են, անձեռնմխելի։ Շատ տեղ դպրոցների բարերարները, որոնք դեռ կենդանի են, յայտարարեցին, որ իրենց նուիրած փողը կամ տունը այժմ, երբ եկեղեցական դպրոցները փակուում են, իրենք ուզում են նուիրել եկեղեցուն կամ իրենց ժառանգորդներին։ Բայց բոլորը անօգուտ։ Ամենքին

միայն մի պատասխան էր տրուում. „Մենք այս բոլորը կը վերցնենք, իսկ դուք, եթէ գանգատ ունէք, գնացէք և գանգատուեցէք. դիմադրողները կը պատժուեն ամենախիստ կերպով“:

Այդպէս էլ արեցին: Կառավարչապետի կողմից տրուած ամենախիստ հրամանի հաւաձայն, այն բոլոր փողերը, շինութիւնները և գոյքը, որ որևէ „ինսպեկտոր“ (տեսուչ) կամ գաւառապետ համարում էին դպրոցական, խլեցին. մի մասը կնքեցին, միւս մասը պահ կամ վարձով տուին, փողերը իրենց անունով գանձարան մտցրին, ասելով „գնացէք և գանգատուեցէք, օրէնքը արտօնում է“: Բայց այդ խօսքերից անմիջապէս յետոյ, որոշ ակնարկներով հասկացնում էին, որ գանգատուողը կը նկատուի իբրև անվստահելի մարդ, մտքեր պղտորող և հակակառավարչական... Պատնէշներ էր դա, և այն շատ ահարկու: Այդ պիտի համարել պատճառ, որ հակառակ ձևական թոյլտուութեան՝ գանգատ ներկայացնելու, գանգատուողներ, չը հաշուած մի քանի բացառութիւնները, ընդհանրապէս չեղան, որովհետև վախենում էին... Գիտէ՞ք ինչ կը նշանակէ կովկասում վախենալ...

Յատիշտակութեան օրեր էին: Կառավարչական թաթը, անարգել, հասաւ մինչև զուտ եկեղեցական կալուածքները, որոնց եկամուտներից օգտուում էին փակուած դպրոցները: Դատարանական շրջաններում, համեմատաբար՝ ազնիւ և անկախ, զարմացման նշաններ էին երևում այդ աշկարայ ապօրինութեան առիթով: Վախեցած հետևանքներից՝ կառավարչական դպրոցների վարչութիւնը, սկսեց այն միտքը առաջ մղել, թէ այդ կալուածքների խնդիրը պիտի քննուի ոչ թէ դատարանական, այլ ադմինիստրատիվ (վարչական) ճանապարհով: Հարցը հասաւ կառավարիչ սենատին, որը 1902 թուի, մարտի 20-ի իր որոշմամբ յայտարարեց՝

որ „այդ տեսակ վէճերը պէտք է քննեն դատաստանական կարգով“։

Այդ որոշումը, գուցէ անսպասելի կովկասեան կառավարութեան, ինչպէս և հայերի համար, բաց արեց կապուած ձեռքերը։ 1903 թուի, մայիսի 2-ին Թիֆլիզի դատաստանական պալատի մէջ քննուեց Վրաստանի և Իմէրեթի թեմի հայ-լուսաւորչական կոնսիստորիայի մի գանգատը, որ շատ բնորոշ լոյս է սփռում խնդրի վրայ։ Ահա մանրամասները, քաղուած կովկասեան հրատարակութիւններից, և ուրեմն գրուած այն „սանձուած“ ոճով, որ յատուկ է միապետական գրաքննութեան ենթակայ երկրին։

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ

«1903 թուի մայիս 2-ին, Թիֆլիզի դատաստանական պալատը, երկրորդ քաղաքացիական բաժնում, հետեւեալ կազմով—դեպարտամենտի նախագահ Սմիտաէն, պալատի անդամներ՝ Գօլուբեւ եւ Բեազանով, դատախազի օգնական Ադիգեոզալովի մասնակցութեամբ, լսեց այն յայտնի գործը, որով Վրաստանի եւ Իմէրէթի հայ լուսաւորչական կոնսիստորիայի հաւատարմատար Մելիք-Ադամեան պահանջ էր յայտնում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը, յանձին Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի, անչարժ կայքերի սեփականութեան իրաւունքի մասին։

«Գործի հանգամանքները հետեւեալներն են։ Պահանջի խնդրագրով, տրուած 1899 թուի ապրիլի 2-ին Թիֆլիզի հանգական դատարանին, երբեւեալ հաւատարմատար Մելիք Ադամեան բացատրել էր, որ 1898 թ. մարտի 26-ի Բարձրագոյն հրամանով, յանձնարարուած էր Կովկասեան ուսումնարանական իշխանութեան՝ բոլոր անհրաժեշտ կարգադրութիւններն անել՝ իր տեսչութեան տակ առնելու այն կայքերը, որ պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցական եւ վանքական ուսումնարաններին, որոնք (ուսումնարանները) յանձնուած են իրան՝ համաձայն 1897 թ. յունիսի 21-ին Բարձրագոյն հաստատուած՝ Պետական

Խորհրդի կարծիքի։ Բարձրագոյն այս հրամանը իրագործելու ժամանակ նկատուեց, որ ուսումնարանական վարչութեան պաշտօնեաները, չը բաւականանալով ընդունելու այն կայքերը, որոնք պատկանում էին հայ-լուսաւորչական եկեղեցական եւ վանական ուսումնարաններին, դիմում էին տեղական հայ-լուսաւորչական հոգեւոր կառավարութիւններին, պահանջելով յանձնել եւ ա՛յն կայքերը, որոնք՝ իբրեւ անպայման սեփականութիւն՝ պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցիներին, իրանց պահանջները պատճառաբանելով նրանով, որ այժմ կարգադրութիւն է եղել ուսումնարանական վարչութեան կողմից՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի տեսչութեան տակ դրաւել նաեւ եկեղեցական կայքերը։ Այսպիսի պահանջով առաջին անգամ դիմեց Ախալցխայի հայ-լուսաւորչական հոգեւոր կառավարութեանը՝ Թիֆլիզի նահանգի ժողովրդական դպրոցների տեսուչ Բօգդանով, 1898 թ. օգոստոսին № 823 հաղորդագրութեամբ, որից յետոյ նա առանձին ընդունման ակտով, որ տեղի ունեցաւ տեղական դաւառական իշխանութեան ներկայացուցչի եւ վկաների ներկայութեամբ, բայց առանց հայոց եկեղեցու ներկայացուցչի մասնակցութեան, Կովկասեան ուսումնարանական շրջանի տեսչութեան եւ կարգադրութեան տակ առաւ բազմաթիւ գիւղեր եւ հողեր, 19,000 դեսեատին տարածութեամբ, որոնք անպայման սեփականութեան իրաւունքով պատկանում են Ախալցխայի հայ-լուսաւորչական սուրբ Փրկիչ եկեղեցուն եւ գտնուում են Թիֆլիզի նահանգի Ախալքալաքի գաւառում, եւ են,— Կարծախ՝ 26,365 ախչայ, Խաւէտ՝ 13,000 ախչայ, Տատէշ՝ 16,000 ախչայ, Խոզաբին՝ 15,000 ախչայ, Կարաւ՝ 1,000 ախչայ, Սուլդա՝ 8,000 ախչայ, Պոզալ՝ 3,000 ախչայ եւ ալպախ՝ 3,000 ախչայ։

«Այս պատճառով, եւ ինկատ առնելով, որ Մինիստրների Կոմիտէի՝ 1898 թ. մարտի 26-ի Բարձրագոյն հաստատած որոշման ճիշդ հիման վրայ՝ ուսումնարանական վարչութեան յանձնուած է իր տեսչութեան տակ առնել միմիայն այն կայքերը, որոնք սեփականութեան իրաւունքով պատկանում են հայ-լուսաւորչական եկեղեցական-ծխական ուսումնարաններին, իբրեւ իրաւաբանական անձերի, բայց ոչ թէ եկեղեցապատկան կայքերը, որոնց մասին յիշված անդամ չէ յիշեալ օրէնքում. որ ուսումնարանական վար-

չութեան պաշտօնատար անձերի կարգադրութիւններն ու բացատրութիւնները, վերաբերեալ եկեղեցապատկան կայքերին, համաձայն չլինելով Բարձրագոյն հրամանի ճիշդ մտքին, չեն կարող համարուել կանոնաւոր եւ օրինական, եւ որ վերոյիշեալ գիւղերի եւ հողերի՝ անպայման սեփականութեան իրաւունքով՝ հայ-լուսաւորչական եկեղեցուն պատկանելը ապացուցում են ներկայացրած վաւերաթղթերով—այսինքն 1841 թ. ապրիլի 18-ի կալուածագրով եւ 1843 թ. մարտի 2-ի վաւերացման թղթով, — հայոց կենսիստորիայի հաւատարմատարը, համաձայն Բարձրագոյն հրամանի 2-րդ կէտին, ներկայացնելով պահանջ 400,000 ռուբլու արժողութեամբ, խնդրում էր. ա) Ճանաչել Ախալցխայի հայ-լուսաւորչական սուրբ Փրկիչ եկեղեցու, յանձին Վրաստանի եւ Իմէրէթի հայ-լուսաւորչական կենսիստորիայի, սեփականութեան իրաւունքը վերոյիշեալ անշարժ կայքերի վրայ, նրանց վերաբերեալ լեռներով, գետերով, լճերով, տափաստաններով, խոտահարքներով, արօտատեղիներով եւ բոլոր տափերով, այն սահմաններում, որոնք մանրամասն նկարագրուած են կալուածագրերում, եւ բ) պահանջել Կովկասեան շրջանի ուսումնարանական վարչութիւնից յօգուտ կենսիստորիայի՝ դատաստանական եւ գործը վարելու ծախքերը։

«Այս գործը նահանգական դատարանում քննելիս՝ Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուն, պահանջի խնդրի դէմ գրած իր պատասխանով՝ առաջարկում էր տարամերժում (օտվոդ), գործի քննութիւնը դատաստանական հիմնարկութիւններին ենթակայ չը լինելու պատճառով, ապացուցանելով, որ համաձայն քաղ. դատ. օր. 1297 յօդուածի, այս վէճը պէտք է լուծուի ադմինիսդրատիվ կարգով, ուստի եւ խնդրում էր, որ այս գործը, իբրեւ անկանոն կերպով յարուցած նահանգական դատարանում՝ դադարեցուի քննելուց։ Սակայն նահանգական դատարանը, եւ ապա գատաստանական պալատը եւ կառավարիչ Սենատը, որի քննութեան հասաւ այս գործը՝ դատաենթակայութեան տեսակէտից, Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի վճռաբեկութեան խնդրով, հոգաբարձուի տարամերժումը ճանաչեցին անկանոն, իսկ այս գործը ենթակայ դատաստանական հիմնարկութիւններին, եւ այս մասին 1902 թ. մարտի 19-ին ուղարկեց Կառավարիչ Սե-

նատի հրամանագիրը Թիֆլիզի դատաստանական պալատին։

«Սրանից յետոյ Թիֆլիզի նահանգական դատարանը գործը քննելով ըստ էութեան՝ կենսիատորիայի պահանջը դատաւ լիովին ապացուցած եւ իր վճռով բաւականութիւն տուեց կենսիատորիայի պահանջներին, ճանաչելով նրա սեփականութեան իրաւունքը վերոյիշեալ անշարժ կայքերի վրայ, դատաստանական եւ գործը վարելու ծախքերը դընելով Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի վրայ։ Այս վճռի դէմ հոգաբարձուն բողոքարկու դանգատ տուեց դատաստանական պալատին, ուր ուսումնարանական վարչութեան չահերը պաշտպանում էր Պետերբուրգից եկած՝ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ Ա. Պ. Դայեվ եւ Թիֆլիզի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսուչ պետական խորհրդական Պերեվոշչիկով, որոնք ապացուցանելով կենսիատորիայի պահանջի անկանոնութիւնը՝ խնդրում էին պալատից մերժել պահանջը եւ ոչնչացնել նահանգական դատարանի վճիռը։ Մինիստրի եւ ուսումնարանական շրջանի հոգաբարձուի լիազօրների բացատրութեան նայելով՝ այս պահանջը յայտնած է առանց որ եւ է հիմքի, որովհետեւ ուսումնարանական վարչութիւնը, չը հերքելով եկեղեցու սեփականութեան իրաւունքը վիճելի կայքերի վրայ՝ պնդում էր այդ կայքերի միայն եկամուտների իրաւունքների վրայ, որոնցով ապահովում էին այն դպրոցների ծախսերը, որոնք անցան ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տեսչութեան տակ՝ համաձայն պետական խորհրդի 1897 թ. յունիս 2-ին բարձրագոյն հաստատած կարգի, եւ բացի սրանից՝ գործի մէջ ապացուցած չէ, որ ուսումնարանական վարչութիւնը յիրաւի, վիճելի կայքերը սեփականատէրից առել է իր տիրապետութեան տակ։

«Կենսիատորիայի հաւատարմատարը, պահանջի խնդրի հիմքերը պարզաբանելով՝ բացատրեց,— որ ներկայ պահանջը յարուցանելու առիթ տուեց Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի կարգադրութիւնը՝ գրաւել վէճի մէջ եղած եկեղեցապատկան կայքերը ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ, որոնք եւ ընդունել էին ընդունման ակտով, որը կազմել է ժողովրդական ուսումնարանների տեսուչ Բոգդանովը 1898 թ.ի

օգոստոսին։ Այս ակտը գործին ներկայացնելուց խուսափում է ուսումնարանական վարչութիւնը, չը նայելով պահանջի յայտնած ցանկութեանը՝ լոկ խօսքով պնդելով՝ թէ վիճելի կայքերը չեն ընդունուած նրա տեսչութեան տակ։ Իբրեւ ապացոյց, որ վիճելի կալուածները յիրաւի ընդունուած են եղել Կովկասեան ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ, կոնսիստորիայի հաւատարմատարը — բացի յիշատակելուց նոյն-ինքն ընդունման ակտը, որ կազմուած է 1898 թ-ի օգոստոսին եւ որը խնդրեց պահանջել հոգաբարձուից՝ — ներկայացրեց գործի համար, ա) Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաղորդագրութիւնը՝ 1898 թ-ի հոկտեմբերի 7-ից № 11621. բ) Կոնսիստորիայի հաւատարիագիրը՝ ուսումնարանական շրջանի հետ ծաղած գրագրութեան մասին՝ գրաւված կայքերը վերադարձնելու վերաբերմամբ, եւ գ) Ախալքալաքի գաւառապետի հաղորդագրութիւնը 1898 թ. սեպտեմբերի 3-ից № 466։ Այս գոկումենտներից ի միջի այլոց երեւում է, որ մինչեւ այս պահանջը ներկայացնելը՝ կոնսիստորիան մի քանի անգամ դիմել է Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուին՝ իրան վերադարձնելու, անվիճելի կարգով, անկանոն կերպով գրաւած անշարժ կայքերը, եւ որ՝ երբ այս ուղղութեամբ բոլոր փորձերը ապարդիւն են անցել՝ այն ժամանակ միայն կոնսիստորիան հարկադրուած է եղել դիմելու դատարանի օգնութեան եւ խնդրելու վերականգնել հայոց եկեղեցու խախտուած իրաւունքը, համաձայն Մինիստրների Կոմիտէի՝ 1898 թ-ի մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած որոշման ճիշտ իմաստին։ Սրանից անկախ՝ կոնսիստորիայի հաւատարմատարը մատնացոյց եղաւ եւ այն բանի վրայ, որ գործը նահանգական դատարանում քննելու ժամանակ նոյն ինքն ուսումնարանական շրջանի լիազօրը չը հերքեց վիճելի կայքերի՝ ուսումնարանական իշխանութեան տեսչութեանը անցնելու իրաւունքը, այլ միայն ապացուցանում էր, որ այս կայքերն ընդունուած են, 1898 թ-ի մարտի 26-ի որոշման հիման վրայ, իբրեւ սեփականութիւններ Կարապետեան եւ Եղիսաբէթեան հայ եկեղեցական ուսումնարանների, որոնց ոյդ կայքերը, ինչպէս ասում էր լիազօրը, կտակուած էին Կարապետ արքեպիսկոպոսից՝ իբրեւ լիակատար սեփականութիւն։ Բայց երբ Կարապետ արքեպիսկոպոսի կտակը

ներկայացնելով յայտնեց, որ կալուածաթղթերով եկեղեցու անունով հաստատած այս վիճելի անշարժ կայքերը արքեպիսկոպոսից կտակած էին եկեղեցուն իբրեւ անպայման սեփականութիւն, միայն նրանց եկամուտների մի մասը յատկացնելով եկեղեցական ուսումնարանների պահպանութեան՝ այն ժամանակ ուսումնարանական շրջանի լիազօրը սկսեց արդէն պնդել, թէ ուսումնարանական վարչութիւնը ամենեւին չէ էլ առել իր տեսչութեան տակ եկեղեցական կայքերը, այլ միայն պահանջում է այս կալուածների եկամուտների մի մասը Կարապետեան եւ Եղիսաբէթեան ուսումնարանների օգտին։ Վերոյիշեալից երեւում է, որ պատասխանատու կողմը մերժում էր հայոց եկեղեցու սեփականութեան իրաւունքը այն անշարժ կայքերի վրայ որոնք 1898 թ. օգոստոսին կազմուած ընդունման ակտով՝ անցել էին ուսումնարանական իշխանութեան տեսչութեան տակ, եւ որ այս վէճը արդէն գոյութիւն ունենալով, նահանգական դատարանը պարտաւոր էր վճռել այս հարցը,— արդեօք վիճելի կայքերը պատկանո՞ւմ են յիշեալ ուսումնարաններին, իբրեւ իրաւաբանական անձերի, թէ կազմում են սեփականութիւն հայոց եկեղեցու։ Եւ այս հարցը նահանգական դատարանը վճռել է բոլորովին կանոնաւոր կերպով, գործին ներկայացրուած կալուածագրերի հիման վրայ, հայոց եկեղեցու օգտին։ Այս պատճառով հայոց կոնսիստորիայի հաւատարմատարը ինդրում էր դատաստանական պալատից՝ հաստատել նահանգական դատարանի վճիռը, առանց հետեւանքի թողնելով Կովկասեան ուսումնարանական շրջանի լիազօրի բողոքարկու գանգատը, ուսումնարանական վարչութեան վրայ դնելով դատաստանական եւ գործը վարելու ծախսերը երկրորդ ատեանում։

«Դատաստանական պալատի դատախազի օգնականի պաշտօնակատար Ա. Ադիկեօզալով, հայոց կոնսիստորիայի պահանջը գտնելով անկանոն եւ անհիմն յայտնուած՝ առաջարկում էր նրա պահանջը մերժել եւ նահանգական դատարանի վճիռը ջնջել։

«Թիֆլիզի դատաստանական պալատը, մի ժամ տեւող խորհրդակցութիւնից յետոյ, դուրս բերեց հետեւեալ դատավճիռը.— նահանգական դատարանի վճիռը հաստատել, առանց հետեւանքի թողնելով Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի լիազօրի բողոքարկու գանգատը,

եւ վերջինից պահանջել դատաստանական եւ երկրորդ ատեանում գործը վարելու ծախս՝ 1280 ռուբլի յօգուտ հայոց կոնսիստորիայի »։

Բացառիկ բախտ էր դա։ Գանգատաւորներ շատ կան, բայց յաճախ առանց թղթերի, անհրաժեշտ դատարանական ձեւականութեան տեսակէտից, և ահա ինչու բազմաթիւ կալւածքների գործը մնաց մոռութեան մէջ, զոհ կառավարական յափշտակման։ Այդ յափշտակութիւնը չ'ընդհատուեց. նա կը շարունակէ իր գործը, որովհետև ունի որոշ նպատակ, դուրս նոյն իսկ դպրոցական խնդրից, ուղղուած մի այլ հիմնարկութեան — հայոց եկեղեցուն։ Ահա նախանշանը.

„Ռուսաց կառավարութիւնը մտադիր է մօտ ժամանակներս խլել հայոց եկեղեցիների կալւածքները և իրեն սեփականացնել։"

Այդ յուզիչ լուրը հրապարակ բերողը Լոնդոնի "Մորնինգ Լիդեր" լրագիրն է։ Առաջին անգամը չէ այդ։ Անգլիական մամուլը՝ լաւ տեղեակ կովկասեան „ներքին" գործերին, յաճախ քաղաքական նախազգուշութեան այդ տեսակ թմբուկներ է զարկում, երազելով երկիւղ ներշնչել Պետերբուրգի պօլիտիկոսներին։

Նոր չէ, իսկապէս, այդ երկրորդ խնդիրը, որ ծանօթ է „եկեղեցական կալւածքները խլելու" տարօրինակ անունով։ Առաջին անգամ կառավարութիւնը յարուցեց այդ՝ դեռ Գէորգ կաթողիկոսի օրով, թէև շատ մեղմ ձեւով։ Տեղի ունեցան գրագրութիւններ, բայց խնդիրը առաջ չգնաց։ Ապա՝ 80-ական թուականների կէսին, երբ տեղի ունեցաւ դպրոցների առաջին փակումը, այս խնդիրը որոշակի ձեւով կրկին յարուցուեց Պետերբուրգի մէջ, բայց, քաղաքական մի քանի պատճառներով, նորից յետաձգուեց աւելի „յարմար ժամանակի"։ Դա յարուցուում է ամեն անգամ, երբ Պետերբուրգում

կամ Թիֆլիզում կովկասեան նախկին փոխարքայի պա-
լատի մէջ կազմած „վարչական բարձր ատեաններում“
արծարծում է հայերին „լուծելու“ խնդիրը։ Զուլման
սիրահարների կարծիքով, հայոց եկեղեցին մի զօրեղ
պատանդան է, որի վրայ յենում է կովկասեան հայ
տարրի ինքնուրոյնութիւնը, և հետևաբար, երբ կարիք
կայ հարուած տալ այդ ինքնուրոյնութեանը, պէտք է
հանել նրա տակից պ ա տ ա ն դ ա ն ը — հայոց եկե-
ղեցին։ Սակայն որովհետև դ ա ւ ա ն ո ւ թ ե ա ն ազ-
ա ո ւ թ ի ւ ն ը օրէնդրութեան հիմնական կէտերից
մէկն է կազմում և որովհետև այդ „մեռած օրէնքով“
օրթօդոքս-Ռուսաստանը յաճախ փորձում է պարծենալ
Եւրոպայի առաջ, ուստի անհեռատեսութիւն է հա-
մարում ուղղակի դաւանական-կրօնական խնդիր յա-
րուցանել, այլ դրա փոխարէն յարուցուում է „եկե-
ղեցական կալուածքները խլելու„ հարցը։

Եկեղեցական կալուածքները խլելով, ռուսաց կառա-
վարութիւնը յոյս ունի հասնել գլխաւոր նպատակին,
այն է՝ ջլատել հայ-լուսաւորչական եկեղեցու ուժը։
Ահա թէ ինչպէս։ Կառավարութեան կարծիքով, հայոց
հոգևորականութիւնը կազմում է մի ահագին ուժ,
ժողովրդի վրայ ներգործող մի հսկայական տարր,
գլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ հայոց
եկեղեցին ունի անսահման կալուածքներ, որոնցից կղերը
ստանում է մեծամեծ եկամուտներ, անբաւ հարստու-
թիւն, և շնորհիւ այդ հարստութեան՝ ապահովում իր
անկախ, ինքնուրոյն դիրքը։ Հոգևորականութիւնը այդ
ա ն կ ա խ և ի ն ք ն ո ւ ր ո յ ն դիրքից զրկելու համար,
— մտածում է օրթօդոքսութիւնից դուրս ամէն բան
վտանգաւոր համարող կառավարութիւնը, — պէտք է
խլել նրա ձեռքում եղած հարստութիւնը կամ, աւելի
ճիշտ ասած, այն կալուածքները, որոնք հայոց եկեղե-
ցիներին մատակարարում են հարստութիւն։ Խլելով

այդ հաստատությունը — շարունակում են պնդել Պետերբուրգի Վետերնիխները — մենք կը խլենք հայ կըղերից նրա անկախությունը, կը դարձնենք նրան մեզանից կախված մի մարմին, որին հեշտ կը լինի թելադրել այն, ինչ ցանկանում ենք...

Դա է գաղտնիքը...

Բայց մի „գաղտնիք", որ, ինչպես և ուրիշ շատ „պետական գաղտնիքներ" Ռուսաստանում, ոչ միայն ոչինչ հիմք չունի, այլ միանգամայն արժանի է ընդունելու հեգնությամբ և ժպիտով այն բոլոր մարդկանց կողմից, որոնք քիչ-շատ ծանոթ են հարցին: Ասում ենք „հեգնությամբ և ժպիտով", որովհետև ամբողջ հայությեան մէջ այսօր ոչ մի տարր այնքան թոյլ և կենսազուրկ չէ, որքան հայ լուսաւորչական կըղերը, որ ոչ միայն ահագին ազդեցություն չունի հայ ժողովրդի վրայ, ինչպես երևակայում են „գաղտնի" զեկուցումների հեղինակները, այլ օրէցօր, և դգալիօրէն դադարում է որևէ դեր կատարելուց: 1898 թուին, կայսեր ներկայացրած մի զեկուցագրի մէջ, կովկասեան կառավարչապետը այն կարծիքն է յայտնում, թէ „հայ կղերի իդէալն է միակ և միացեալ Հայաստան", աւելացնելով որ „կղերը հայկական շարժման գլուխն է անցել": Դա լոկ սխալանք չէ, այլ բացարձակ սուտ: Եւ նենգամիտ սուտ, որովհետև ինչքան և վատ կարծիք ունենանք այդ տեսակ զեկուցումների հեղինակների մտաւոր ընդունակությունների մասին, բայց և այնպէս անկարելի է համոզել, որ նրանք այնքան կոյր և տգէտ կարամիտ լինեն, որ չը տեսնեն, թէ հայոց հոգևորականությունը շատ վաղուց արդէն դադարել է այն դերը կատարելուց, որ նրան վերագրում է հայատեաց քաղաքականությունը:

Չիգ տարիներ են արդէն, որ հայոց մամուլը, ոչ միայն Կովկասում, ուր նա անցնում է ռուսաց ցէն-

զուրայի ձեռքով, այլ և Կ. Պոլսում, Եւրոպայում, Ամերիկայում — մի խօսքով աշխարհիս բոլոր ծայրերում, ուր հնչում է հայ խօսքը, — մի ընդհանուր, միապաղաղ գանգատ ունի, այն, որ հայ կղերը տգէտ է, անգործ, պորտաբոյծ, անընդունակ դարմանելու ժողովրդի վշտերը, անկարող ըմբռնելու նրա իղձերը... Ամբողջ Թիւրքաց Հայաստանը կրօնափոխ է լինում, քրիստոնեայ-հայը դառնում է մահմեդական. մինչև իսկ հայոց կրօնական գլխաւոր հիմնարկութեան՝ Էջմիածնի շուրջը լուսաւորչական հային դարձնում են օրթոդոքս, կաթոլիկ, բողոքական, — հայ կղերը շնորհք, եռանդ չունի դիմադրելու իր „հօտի“ սպառման, իսկ Պետերբուրգի քաղաքագէտները զանազան „դոկլադների“ շնորհիւ՝ „խիստ միջոցներ“ են ձեռք առնում, յայտարարելով որ այդ նոյն կղերը պարագլուխ է հայկական շարժման և մինչև իսկ նախապատրաստող Մեծ-Հայաստանի ամբողջական վերականգման...

Որպիսի մոլորութիւն:

— Եթէ այդքան պարզ է հարցը և հայ հոգևորականութիւնը չէ նպատակակէտը, ապա ինչի՞ մէջ է „գաղտնիքը“, — երևի կը հարցնի իւրաքանչիւրը ընթերցողներից: Ահա այստեղ է, որ „ապուշ է կտրում“ սառը լոգիկան, անցնելով դէպի սև-սև մտքերի աշխարհը: Եւ ինչ կասկածներ, հրէշաւոր ենթադրութիւններ ասէք, որ չեն ծագում այժմ ամեն մի հայի գլխում՝ այդպիսի „բարդ հարցերի“ դիմաց: Ինչ ասէք, որ չի ստեղծում վախեցած երևակայութիւնը: Եկեղեցուն տուրք վճարող գեղջուկի շահը չէ — երանի՞ այդպէս լինէր — որ պաշտպանում է բիւրօկրատ միապետութիւնը: Կայ մի այլ հանգամանք, այլ նպատակ, վարագուրած, գաղտնիքի մշուշի տակ դրուած:

„Ռուսաց կառավարութեան նպատակն է — ասում են շատ հայեր — միացնել լուսաւորչական եկեղեցին

ռուսաց եկեղեցու հետ. և այդ նպատակին հասնելու համար է, որ նա ուզում է քիչ-քիչ խլել հայոց եկեղեցական կալվածքները, որպէսզի մի քանի ժամանակից յետոյ, երբ ինքը եկեղեցին այլևս միջոց չունենայ ապահովելու հոգևորականներին, կառավարութիւնը ինքը յանձն առնի պահել — ինչպէս այդ անում է ռուսաց հոգևորականների հետ — հայոց եկեղեցու պաշտօնեաներին ռոճիկ վճարելով գանձարանից. դա հնարաւորութիւն կըտայ կառավարութեանը՝ իր ձեռքի մէջ պահել հայոց հոգևորականութիւնը, իսկ դրանից յետոյ այլևս դժուար չի լինի իրագործելու երկու եկեղեցիների միացմանը հարցը“...

Ահենգամիտ ծրագիր և այնքան հրեշաւոր, որ կարող է նոյն իսկ անհաւատալի նկատուել։ Անհաւատալի, այո։ Բայց տարաբախտաբար, շատ անհաւատալի ծրագիրներ կան, որոնք բռնապետութեան շնորհիւ՝ այս դժբախտ երկրում քիչ-քիչ անցնում են „քաղաքական անհրաժեշտ միջոցների“ շարքը, որից յետոյ սկսում են պօլիցիական միջոցները՝ „բարձրագոյն“ բառի տակ սրբագործուած կարգադրութիւնները իրագործելու համար... Այդ տրամադրութեան շնորհիւ ահա, ժողովրդական երևակայութիւնը, կասկածոտ, սպասող ամեն տեսակ բռնութեան, շարունակում է ստեղծել նորանոր լուրեր. — թէ հայոց կաթողիկոսի գահը Էջմիածնից պէտք է փոխադրեն Պետերբուրգ, թէ այլևս կաթողիկոսական ընտրութիւն չպիտի լինի, այլ լոկ կայսեր կողմից կը նշանակուի մի մետրոպոլիտ, թէ միւռոնը այլևս չպիտի օծուի Էջման տեղում, այլ Նեվայի ափերում...

Եւ այլն, և այլն, և այլն...

Գրգռիչ լուրեր, ընդունակ փոթորկելու մի ամբողջ ժողովուրդ, ահաւոր շշուկներ, ատելի նրանց համար, որոնք դաւանում են համերաշխութիւն՝ նոյն պետութեան մէջ ապրող ազգերի մէջ։ Եւ եթէ այդ անարգ,

անմիտ, պախարակման միայն արժանի քաղաքականութիւնը չը վերանայ և սանձի տակ չը դրուի, կովկասը պիտի շարունակէ լինել թատերաբեմ նոր հարցերի, անսպասելի յոյզերի։ Լաւատեսները օրէցօր նուազում են։ — Հայոց դպրոցները փակողի և դպրոցական կալուածքները յափշտակողի համար բոլորովին դժուար բան չէ, լսում է շատ կողմերից, խլել նաև հայ եկեղեցիների կալուածքները։ Միամտութիւն է կարծել, թէ հայերի դէմ վրձռական կռիւ մղող „պետական մարդիկ“ կը դժուարանան իրագործել այդ միտքը, թէև քաջ գիտեն, որ եկեղեցական կալուածքները անվիճելի սեփականութիւն են՝ գոյութիւն ունեցող օրէնքի տեսակէտից, նիւրագործուած կտակներով, կայսերական հրովարտակներով կամ եկեղեցական անձեռնմխելի յիշատակարաններով։ Մինչև այժմ կատարուած վայրենի ապօրինութիւնները թոյլ չեն տալիս այդպիսի „բարեմիտ“ ենթադրութիւններ անել։ Հեղեղը ճանապարհ չի ճանաչում, իսկ բրնապետութիւնը՝ արդարութիւն . . .

Ա յսպէս ուրեմն՝

Քսաներորդ դարու շէմքում՝ հրապարակական յափշտակութիւն, մի բացարձակ գողութիւն, որի հեղինակները իշխանութեան բարձր ներկայացուցիչներն են և որոնք՝ փոխանակ մեղադրուողների նստարանի վրայ բազմելու, համարուում են պետական խոշոր մարդիկ, հայրենասէրներ, ուսուցց անուան արժանաւոր պաշտպաններ։ Մի ուրիշ ժամանակ, և ուրիշ երկրում Գօլիցին, Լանսովսկի, Միցկեվիչ, դատարան կը քաշէին, իբր օրէնքի խախտողներ, յափշտակողներ, բայց Պօբեդոնոսցևվեան բէժիմի օրով՝ այժմեան Ռուսաստանում նրանք դեռ շքանշաններ, մեծարանք և արտօնութիւններ են ստանում. .

„ԳՆԱՑԷՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵՑԷՔ“

(ՀԻՆԴԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Յուսատու մառագայթներ. — Յատուկ քննիչների ճամբորդութիւնը. — Մասալով եւ իշխան Ուխտոմսկի. — Ինչ էր պատճառը. — Անգլիական դաւերի ուրուականը. — Հայ-անգլիական համակրութիւններ. — Քնութեան արդիւնքը. — Մինիստրի եզրակացութիւնը. — Անարժէք զեկուցագիրը:

Գնացէք, ուսումնասիրեցէք...

Յաճախ է պատահում այդ: Երբ լուրերը գառնում են սպառնական, ու վտանգի հոտ է բուրում լայնատարած պետութեան անհանգիստ ծայրերից, կենտրոնը՝ ցնցուած, գերի անբացատրելի մի երկիւղի՝ յառում է աչքերը դէպի անծանօթ հեռուն, դէպի այն վայրերը, ուր քաղաքական տենդի նշաններ են երևում... Մինիստրը պատրաստում է հրամանը, Նորին Մեծութիւնը ստորագրում է „սեփական ձեռքով“, գանձարանը բաց է անում կողպած սնտուկը, և ահա սենատօրական քննիչները կամ յատուկ յանձնարարութեան պաշտօնեաները ճամբայ են ելնում, դղրդոցով, գաղտնի թղթերը ծոցին, խորհրդաւոր կնճիռը անխորհուրդ ճակատին...

— Գնացին, ուսումնասիրեցին:

Բիւրաւոր են այդ ճամբորդութիւնները, և նրանց անթիւ, անհամար զեկուցագրերը դարաններ են կազմում պետական դիւանների լուսակեաց պահարաններում: Քանի՞ քանի յոյսեր են թաղուած այդ պահարանների մէջ, և որքան սպասելիքների գերեզման են դարձել նրանք՝

անվերջ ու դժբախտ տարիների ընթացքում։

Այդ օրինակ յոյսերի մի ճառագայթ էլ Կովկասի վրայ ծագեց։ 1896 թվի մայիս ամսին էր այդ։

Պետերբուրգի „քաղաքական շրջաններում“ — եթէ այդպիսի անուն կարելի է տալ մեր „դոնիպակ“ շրջաններից ոևէ մէկին — լուր տարածուեց, թէ երկու պաշտօնական անձեր են գնում Կովկաս, քննելու „Հայկական տրամադրութիւնները“, որ այն ժամանակ օրւայ խնդիր էր մայրաքաղաքում...

— Քննիչներ են գալիս։ Շուտով այդ լուրը ճշտուեց և պաշտօնական կերպարանք ստացաւ։ Քննիչներն էին՝ ներքին գործերի մինիստրութեան կողմից՝ նոյն մինիստրութեան պաշտօնեայ Մասալով. և անձնապէս թագաւոր կայսրի կողմից՝ իշխան Էսպէր Ուխտօմսկի, գահակալի անձնական բարեկամը, որ ուղեկցեց նրան Արևելք կատարած ճամբորդութեան ժամանակ, խմբագիր „Պետերբուրգսկիյա Վեդոմոստի“ կիսապաշտօնական լրագրի, համակրելի մի հրապարակախօս։

Յանձնարարութիւնը վերին աստիճանի կարևոր էր, ուշագրաւ, այլապէս կայսեր կողմից յատուկ անձ չէր ուղևորւի Կովկաս, որովհետև „յատուկ անձ“ ուղարկելը վերապահւած է առանձին կարևոր դէպքերի համար, այն էլ այնպիսի դէպքերի, որոնք սովորաբար մնում են իբրև պետական գաղտնիք և երբէք հրապարակական խօսակցութեան նիւթ չեն կազմում։ — Արդ, ո՞րն էր այդ կարևոր դէպքը։

Անհրաժեշտ է պատմել։

Հայոց հարցը մի կողմից և հայոց դպրոցների խնդիրը միւս կողմից — ահա՛ առիթը, որ „Հայկական տրամադրութիւնները“ մայրաքաղաքում ջերմ վէճերի նիւթ դարձան։ Նոյն իսկ պալատական շրջաններում գտնուեցին „անվեհեր“ մարդիկ, որոնք բարձրաձայն դատապարտում էին ներքին գործերի մինիստրութեան

կարգադրութիւնը՝ փակելու հայ դպրոցները։ Մինիստր Գօրեմիկին, անողոք ու կարճատես, որ իր պաշտօնավարութեան գլխաւոր փէշակը դարձրել էր՝ դաւեր երևակայել, մարդիկ աքսորել, լրագիրներ փակել և ամեն ձեռնարկ արգելել, ստիպուած էր հրէշային „վտանգներ“ ստեղծել, իր կարգադրութիւնները արդարացի ցոյց տալու համար։ Ահա այդ նպատակով էր, որ դպրոցների փակման իբրև գլխաւոր պատճառ՝ հրապարակ բերուեց այն մեղադրանքը, թէ նախ՝ այդ դպրոցներում հակակառավարչական պրօպագանդ է լինում, և երկրորդ՝ այդ պրօպագանդը մեծ կապ ունի այն ընդհանուր համակրութեան հետ, որ Կովկասի հայերը սկսել են ցոյց տալ դէպի Անգլիան և անգլիական քաղաքականութիւնը . . .

Անգլիա և անգլիական քաղաքականութիւն, — այդ բառերը արդէն բաւական էին, որպէսզի Պետերբուրգի մէջ բարձրանար տհագին շշուկ, իրարանցում, որովհետև — երևի լսել էք — ամենախելացի ռուս մարդն էլ իր տրամաբանութիւնը կորցնում է, հէնց որ խօսք է բացւում անգլիական քաղաքականութեան մասին . . . Գուցէ հին Ռուսաստանը այնքան չէր վախենում մենգօլական արշաւանքից, որքան ժամանակակից ռուս դիւանագիտութիւնը՝ անգլիական քաղաքականութիւնից։ Ահարկու, անյաղթելի է բրիտանացին սլավի աչքում։ Ռուս չինովնիկի կարծիքով, անգլիացին այնքան խորամանկ, հնարագէտ և հարուստ է, որ նրա հետ մրցում սկսել՝ կը նշանակէ գնալ դէպի անխուսափելի պարտութիւն։ „Ուր անգլիացին ոտք կոխեց, այնտեղ ռուս լինել չէ կարող“։ Ահա թէ ինչու „անգլիական“ անուան յանկարծական կապը Կովկասի հայերի հետ, այն էլ այն ժամանակ, երբ թիւրքաց հայերի քաղաքական գոյութեան խնդիրը օրւայ առաջնակարգ խնդիր էր քաղաքական աշխարհում, — դող պատճառեց

ռուսաց պոլիտիկոսներին։ Ատամների կրճտոցը հայերի դէմ՝ դարձաւ աւելի կատաղի։ Եւ տարաբախտաբար, այդ փափուկ բոպէին չգտնուեց և ոչ մի հատ խորաթափանց անձ, որ տեսնէր, թէ այդ նոր „քաղաքական բաղն“ էլ նոյն քուրայի մէջ է ստեղծագործուած, որտեղ արդէն վաղուց թխուում էին ամէն տեսակ հրէշային մեղադրանքներ „Ռարատեան թագաւորութեան“ խաղաղասէր զաւակների դէմ...

Անգլօռուսական մրցման փաստը քաջածանօթ է։ Պատմական իրողութիւն է դա։ Այն օրից, երբ Մեծ-Բրիտանիան՝ Հնդկաստանին տիրացած, քաղաքական դաւանանք դարձրեց՝ կտրել ռուսների ճանապարհը դէպի հարաւ, երբ ռուսաց և անգլիական շահերը ընդհարուեցին Բօսֆօրում, — այն օրից արդէն երկու պետութիւնները դարձան անհաշտ մրցող, կանգնած ընդհարման գծի վրայ։ Բայց ի՞նչ մաս ունեն այդ հարցում կովկասեան հայերը, — իրաւամբ կը հարցնէք դուք։ Խկոյն կ'իմանաք։

Գաղտնիք չէ այլևս, որ 1878 թւին, ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, Անգլիան վճռական պաշտպանութիւն ցոյց տուեց Թիւրքիային։ Այդ պաշտպանութիւնը արտայայտուեց ոչ միայն նրանով, որ Մեծ-Բրիտանիան մատակարարեց Թիւրքիային փող, զէնք և զինուորական հրահանգիչներ, այլև զինադադարից յետոյ, Բիկոնսֆիլդի կառավարութիւնը՝ Բերլինի վեհաժողովի միջոցով՝ յետ մղեց ռուսներին Կարինից, — որը նրանք արդէն գրաւել էին իրենց զօրքերի արիւնով, — որպէս զի Պետերբուրգի տիրապետութիւնը որքան կարելի է հեռու մնայ այն գծից, որ տանում է դէպի Պարսից ծոցը — անգլիացիների համար այդ կարևոր կէտը։ „Բայց դրանով — ասում են ռուս դիւանագէտները, — անգլիացիները չհանգստացան։ Նրանց իդէալն է մի անանցանելի պատնէշ դնել ռուսական արշաւանքի առջև, և այդ

պատնէշի գլխաւոր ամրութիւնները պիտի լինեն՝ Կ. Պոլիս, Սև Ծովը, Կովկասեան լեռնաշղթան, Պարսկաստանը, Աւղանիստանը, Չինաստանը, մինչև ռուսատեաց Եւրոպան։ Այդ պատնէշով Անգլիան կարող կը լինի ընդ-միշտ փակել ռուսների ճանապարհը և ապահովել իր գերիշխանութիւնը Հնդկական ովկիանոսի վրայ և իր հարաւային գաղութներում“։

Ահա այսպէս են պատկերացնում ռուս դիւանագէտները անգլիական քաղաքական պատնէշը, որի համար թեան համար, նրանց կարծիքով, Բրիտանիան չի խնայում ոչ փող, ոչ միջամտութիւն, յաճախ գաղտնի, և ոչ էլ քաղաքական ինտրիգներ։ Եւ այդ ինտրիգներն են ահա, որոնք սկսել են գործել Կովկասում, գլխաւորապէս Կովկասեան հայերի շրջանում։ „Վերջին տարիները, — շարունակում են պնդել անգլատեաց ռուս քաղաքագէտները, — Անգլիան ձեւափոխեց իր քաղաքականութիւնը Փոքր-Ասիայում, որտեղ նա ուզում է մի նոր, տեղական պատնէշ կազմել ռուսների դէմ՝ նոյն իսկ հայերից, ստեղծելով հայկական անկախ իշխանութիւն։ Եւ որպէսզի այդ պատնէշը լինի աւելի զօրեղ և դիմացկուն, անգլիացիները ուզում են ապստամբեցնել Կովկասը, փոթորկել նրան քաղաքական շարժումներով, որ այնտեղից յետ քշել տան ռուսներին, և այդպիսով ռուսաց տիրապետութեան բնական սահմանը դարձնեն Կովկասեան լեռնաշղթան — այդ բնականապէս ամուր և վստահելի գիծը“։

Անտարակոյս, ընթերցողներից շատերը կը ժպտան այդ „քաղաքական զրոյցի“ վրայ, բայց հակառակ ժպիտ յարուցանող այդ գրութեան, այս զրոյցը շարունակում է լուրջ բան համարուել ռուս դիւանագէտների շրջանում։ Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ՝ դա նոյն իսկ պաշտօնական ձև ստացաւ։ Պատ-

մում են, որ երբ Ալաշկերտում թիւրքաց զօրքը փոքրիկ յաջողութիւն ունեցաւ և լուրեր էին պատում, թէ օսմանեան զօրաբանակը կարող է պատռել սահմանագիծը, անցնել Իգդիրը և մտնել Երևանեան նահանգը — թիֆլիզում, զինուորական բարձր ատեանի մէջ, պաշտօնապէս քննում էր այն ծրագիրը, թէ ինչպէ՞ս և որտե՞ղ պաշտպանեն Անդրկովկասի միւս կէտերը։ Այդ ծրագրի քննութեան ժամանակ՝ լուրջ կերպով սեղանի վրայ էր դրուած այն հարցը, թէ անգլիական դրդմամբ Կովկասում ապստամբ ազգեր կարող են լինել, և ուրեմն կառավարութիւնը ստիպուած կը լինի միաժամանակ կուել երկու թշնամու դէմ, — թիւրք զօրքի և տեղական ազգաբնակութեան դէմ...

Եւ այդ զառանցանքները՝ մի այնպիսի ժամանակ, երբ ամբողջ Կովկասի քրիստոնեայ ազգաբնակութիւնը, մանաւանդ հայեր և վրացիք՝ ոչ միայն կանգնած էին ռուսաց զօրքերի շարքում իբրև անձնուէր մարտիկներ, այլև ցնծութեան աննկարագրելի ցոյցերով էին ընդունում ռուսաց զէնքի ամեն մի յաջողութիւնը. այն ժամանակ, երբ հայ զօրապետները — Լազարեվ, Լօրիս-Մելիքով, Տէր-Ղուկասով, Շելկովնիկով — Ալաշկերտի, Կարսի, Էրզրումի կողմերում շլացուցիչ փայլ էին տալիս ռուսաց զօրքի արշաւանքին, իսկ թիւրքահպատակ հայերը ընդառաջ էին գալիս ռուսաց զօրքին՝ հանդիսաւոր թափօրներով, — ամենաոգևորուած նշանը քրիստոնեայ Արևելքի... Որպիսի՜ աննեղելի մոլորութիւն։ Դեռ լաւ է, որ այդ մոլորութիւնը շուտով պարզուեց, և կառավարութիւնը, գոնէ պատերազմի ժամանակ, համոզուեց, որ իր կասկածները անհիմն են, անտեղի...

Կասկածները անվախճան են։ Կովկաս մտնող անգլիացին, յաճախ նոյն իսկ առևտրականը, ամեն րոպէ և ամեն քայլի վրայ՝ ենթակայ է ոստիկանական հսկողութեան, լրտեսութեան։ Նրանց հետևում են հիւրանոցներում,

ճամբորդութեան ժամանակ, այցելութեան միջոցին։ Ար-տաքուստ յաճախ քաղաքավարի՝ գաղտնի կերպով հըս-կում են նրանց ամեն մի շարժումը։ Օրինակ։ Ինսուլ-նական թուականներին մի քանի անգամ Կովկաս այցե-լեց Գիցչերալդ, աղատախոհ մի հրապարակախօս, Թըղ-թակից „Դէյլի Նիւս“ լրագրի, ջերմ համակրող հայ-կական դատի, որ յետոյ ըստ գնաց այդ համակրութեան, գաղտնի սպանելով Թիւրքիայում, ի հարկէ Թիւրք գործակալների ձեռքով։ Շնորհիւ իր յանձնարարական-ների՝ Գիցչերալդ, սիրով ընդունուեց կառավարչապետի կողմից, ստացաւ նրանից „բաց թերթ“ անարգել ճա-նապարհորդելու Կովկասի բոլոր կողմերում, բայց դրա հետ միասին „գաղտնի հրահանգներ“ էր տրուում ոս-տիկանութեան՝ խստիւ հսկելու, թէ ուր է գնում նա, ում հետ է տեսնուում, ինչ է խօսում, ինչ է անում։ Նրա բոլոր քայլերը գիտէին։

1895-ին Կովկասի վրայով Կարին անցաւ մի այլ անգլիացի, յայտնի Թղթակից-հրապարակախօս Էմիլ Դիլօն, որի նամակները հայկական կոտորածների մասին ահագին դղրդոց բարձրացրին ամբողջ Եւրոպայում։ Դիլօն նոյնպէս ներկայացաւ կովկասեան կառավարչապետին, սիրով ընդունեց նրանից, նոյնպէս ստացաւ „բաց թերթ“ անարգել ճանապարհորդելու համար, մինչև իսկ Կարին հասնելով՝ ամենաջերմ աջակցութիւն գտաւ այնտեղի ռուսաց հիւպատոս Մաքսիմովի կողմից,— բայց և այնպէս, ոստիկանութեանը հրահանգ էր տըրուած խստիւ հսկել նրա ամեն մի քայլը։ Եւ մի տարի յետոյ, երբ նա արդէն Անգլիայումն էր, կովկասեան ժանդարմական վարչութիւնը ահագին „գործ“ էր սկսել, թէ Թիֆլիզի հայերից ով է տեսնուել անգլիացի Թըղ-թակցի հետ, ով է նրա հետ ճաշել, ինչ են խօսել, ում հետ գրագրութիւն ունի, ով նրան ճանապարհ դցեց...

Բազմաթիւ են այլ օրինակները։ Անգլիացի կապի-

տալիստներն իսկ, որոնք, ինչպէս դրամի ներկայացուցիչներ, անվնաս պիտի նկատուին քաղաքական տեսակէտից, ազատ չեն չափազանցրած կասկածներից։ Բնորոշ է հետևեալ զրոյցը։

Սրանից մի քանի տարի առաջ, երբ ջերմ խօսակցութեան նիւթ էր անգլիացի կապիտալիստների երևալը Բագուում նաւթային ձեռնարկներ սկսելու համար, և երբ մինիստրութիւնը խիստ ձևականութիւններ էր անում նրանց մուտքը թոյլատրելու, Կովկասին ծանօթ մի լեհ նկատեց ռուս պաշտօնեային.

— Ես կարծում եմ, մինիստրը թոյլ չի տայ անգլիացիներին Կովկաս գալ, որովհետև նաւթային հարցի տակ այդ խորամանկները կարող են թագցրած լինել քաղաքական նպատակներ։ Խօսք գիտէք, թէ ինչ ինտրիգներ են լարում Կովկասում...

— Այո՛, այո՛, պատասխանեց ռուս պաշտօնեան, եթէ ինձանից կախուած լինէր, ես մի հատ անգլիացի էլ չէի թողնի Ռուսաստանի սահմաններում։

— Բայց և այնպէս, — վրայ բերեց կատակաբան լեհը, — անգլիացիները կը գան Բագու, որովհետև նրանք շատ հարուստ են և նախ քան Բագու գալը՝ կանցնեն Պետերբուրգով՝ քանկները լի՝ „ազդեցիկ“ մարդկանց տեսնելու համար...

— Այդ էլ ճիշտ է, — վրայ բերեց պաշտօնեան, փողը ինչ ասես չի անիլ...

Ի՞նչ է այդ բոլորի պատճառը։ — Արդեօք այն, որ անգլիացու և ռուսի հայրենիքները հանդիսանում են քաղաքական տաք հակառակորդներ Արևելքի մէջ թէ՞ այն, որ Մեծ-Բրիտանիայի զաւակները իրենց ծանօթ շահասիրութեան հետ միասին՝ տանում, տարածում են դէպի ամեն կողմ, ուր ոտք են դնում, անգլիական պատմութեան լաւագոյն արդիւնքները, սէր դէպի ազատութիւն, բողոք՝ գլխակոր, լռակեաց անշարժութեան

դէմ, այնքա՞ն տարածուած միապետական սլավոնակա-նութեան մէջ, կամ թէ այն, որ ամբողջ Արևմուտքը, Անգլիայի հետ միասին, ներկայանում է միապետու-թեան աչքում, իբրև աղբիւր երկիւղալի հովերի, մի հողմ, որ կարող է սփռել լայնատարած քնարանում արթնումի վտանգաւոր սերմեր . . .

„Վտանգաւոր սերմերը“ որոնելու համար էր, որ Կովկաս ուղարկեցին Մասալովին և իշխան Ուխտոմսկուն, յանձնարարելով նրանց՝ ուսումնասիրել երկու էական հարց. ա) ճի՞շտ է, որ հայոց դպրոցներում հակառու-սական պրոպագանդ է մղւում, և բ) ճի՞շտ է, որ Կով-կասի հայերը տածում են ջերմ համակրութիւն դէպի անգլիացիները և անգլիական քաղաքականութիւնը։ Այդ յանձնարարութիւնը իրենց ուղեցոյց դարձրած՝ Մասա-լով և Ուխտոմսկի մեկնեցին Հիւսիսից, հասան Թիֆլիզ, տեսան ում հարկաւոր էր, կարդացին ինչ պէտք էր, գնացին Երևան, խօսեցրին նահանգապետին, մնան Էջ-միածին, մի քանի օր հիւր եղան հայոց կաթողիկոսին, ծանօթացան անցած դարձածին, կրկին վերադարձան Թիֆլիզ, լսեցին, դիտեցին, և վերադարձան Պետեր-բուրգ, շատ որոշ, հիմնաւոր պատասխանով։

Այդ պատասխանի մէջ, որ զեկուցման ձևով ներկա-յացուեց Ներքին գործերի մինիստրին, իշխան Ուխտոմսկի և Մասալով վճռական կերպով, փաստերով զինուած՝ հերքում էին կովկասեան հայերի դէմ բարձած մեղադրանքները։

— Շատ ցաւում եմ, որ չեմ կարող ընթացք տալ, — ասել է մինիստրը ընդունելով զեկուցագիրը, — որովհետև մինիստրութիւնը արդէն ներկայացրել է Նո-ին Մեծութեան՝ իր կարծիքը, բոլորովին հակառակ բովանդակութեամբ։ Մինիստրութիւնը չէ կարող փոխել իր տեսակէտը. մնում է, որ դուք փոխէք ձեր զե-կուցման բովանդակութիւնը։

. . . Յայտնուեց, որ դեռ այն օրերին, երբ Մասալով

և Ալեքսանդրի՝ տեղն ու տեղը, երկրի մէջ, փաստեր էին հաւաքում՝ հիմնաւոր եզրակացութեան հասնելու համար, Պօլեդոնոսցեվ և Գորեմիկին, հաւատարիմ իրենց մշտական սիստեմին, ուժ ունեցան վերստին պղտորել մտքերը, նորից յաղթող հանդիսացան այն փոքրիկ կուսակցութեան դէմ, որ կարողացել էր համոզել թագաւոր կայսրին՝ քննիչներ ուղարկել Կովկաս, հարցը ուսումնասիրելու նպատակով, և իբրև հետևանք այդ յաղթութեան՝ անմիջապէս առաջ մղեցին հակահայկական զեկուցումը և պաշտօնական ընթացք տուին նրան։ Եւ դրանից յետոյ էր, որ սկսեցին նոր խոտութիւններ հայերի դէմ...

„Գնացէք ուսումնասիրեցէք“ — դատարկ, անիմաստ, բառեր, ընդունակ միայն խաբելու, որովհետև, ինչպէս տեսնում էք, պետական առաջնակարգ կարևորութիւն ունեցող մի զեկուցում գրելու համար, եթէ մինչև իսկ դրանից կախուած լինի մի ամբողջ ազգի հանգստութիւնը, իսկի կարիք չկայ բարեխղճօրէն փաստերը ուսումնասիրելու և ճշմարտութեան դրօշակի տակ մնալու։ Փաստերի տեղ կարելի է դնել „օտար ինտրիգներ“ և ճշմարտութեան տեղ՝ „պետութեան ապահովութիւն“ բառերը, և գրել ամեն բան, ինչ թելադրում է մի թոյլ ուղեղ, թէև մինիստրական գանգի մէջ, կամ զգացմունքից զուրկ մի սիրտ, թէև աստեղազարդ կրծքի տակ...

Այդ տեսակ „զեկուցագրերի“ արդիւնքն է, որ այսօր կառավարչական ստրկամիտ պաշտօնեաների հետ միասին, նոյն իսկ ռուսաց մամուլի „հայրենասէր“ ներկայացուցիչները, որոնք, պետական շահերի պաշտպանների դիմակի տակ ծածկուած, վարժուել են իրենց ականջները միշտ խլշտրած պահել մինիստրական կաբինետների դրան ճեղքերի մօտ, աջ ու ձախ, տեղի ու անտեղի, մի բան են կրկնում, մի բան քարոզում. „Հայերը հակակառավարչական ձգտումներ ունեն, հա-

յերը անգլիական ինտրիգների գործիք են»։ Այդ մը-տասնանկների կարծիքով, եթէ Կովկասի հայերը փող են տալիս իրենց սովատանջ թիւրքահայ եղբայրներին, կամ բողոքում են սուլթանական ճնշումների դէմ, այդ անում են ոչ թէ մարդասիրութիւնից և եղբայրասի-րութիւնից դրդւած, այլ իբրև կոյր գործիքներ «անգլիական ինտրիգների», և կամ եթէ Եւրոպա ապաստանած հայերը ձայն են բարձրացնում յօգուտ ստրուկ եղբայրների, դա հետևանք է ոչ թէ մարդկային տարրական պարտականութեան, այլ դարձեալ «անգլիական ինտրիգների»։

Սատանաներ, դևեր տեսնել այնտեղ, ուր «անմեղ հրեշտակներ» են նստած, — դա ժամանակակից ռուս «ղեկուցագրողների» և դրանց կողմնակիցների նշանաբանն է, նրանց միակ տեսակէտը, երբ գործ ունեն ոևէ փոքրիկ ապգութեան կամ քաղաքական խնդրի հետ։ Հիւանդոտ դրութիւն, քաղաքական մղձաւանջ է դա, որ քուն չէ տալիս, խեղդում է այդ մարդակերներին, որոնք նոյն իսկ հայկական կոտորածներից յետոյ մի գլուխ գոռում են, թէ հայերը ծրագրել են և պատրաստութիւն են տեսնում, որ վերականգնեն Մեծ-Հայաստանը՝ մինչև Ռոստով Դոնի վրայ։

Եւ գիտէք ինչու համար է ստեղծւած «մինչև Ռոստով Դոնի վրայ» խօսքը։ Նրա համար, որ ցոյց տան, թէ հայերի երազած Մեծ-Հայաստան ստեղծելը կապ ունի անգլիական այն քաղաքականութեան հետ, որը հակառուսական պատնէշը ուզում է հիմնել Կովկասեան լեռների վրայ...

Իրնէկ իմանայինք, ո՞րն է աւելի հեշտ — հայերին՝ տեսնել Մեծ-Հայաստան, թէ ռուսներին ազատել Մեծ-յիմարներից...

ԳԱՂՏՆԻ ԶԵԿՈՒՑՈՒՄ

(ՎԵՑԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Դէպի Պետերբուրգ. — Բարձրագոյն ունկնդրութիւն. — Գաղտնի զեկուցագիրը. — Ի՞նչ է նրա բովանդակութիւնը. — Հայկական միտումներ. — Ի՞նչ պէտք է անել. — Կայսերական դիտողութիւնները. — Գաղթեցնենք հայերին. — Թող լուն փաստերը։ —

1898 թւի գարնանն էր։ Սիրտ առած զեկուցումներ գրելու նորագոյն եղանակից, յափշտակուած ատելութեան զգացմունքով, որ նրա որոշումների հիմնաքարն է կազմում, իշխան Գոլիցին Թիֆլիզից Պետերբուրգ մեկնեց։ Զեկուցում պիտի ներկայացնէր։ Եւ մի օր, երբ նրան արտօնուած էր արժանանալու կայսերական ունկնդրութեան — այդպէս աւետեցին լրագիրները — նա մտաւ Ձմեռային պալատը, զարդարուած շքանշաններով, իր փառքի և ուժի ամբողջ փայլով...

Գաղտնի զեկուցում։ Գաղտնի ունկնդրութիւն։ Գաղտնի որոշումներ։ Ո՞վ կարող էր երազել անգամ՝ իմանալու նրա բովանդակութիւնը, պարունակած մարգարիտները։ Բայց ահա հազիւ մի տարի անցած՝ գաղտնի թուղթը գարաններում պառկելուց ձանձրացած, շարժուեց իր տեղից, քակտեց կնիքները և հրապարակ եկաւ։

Ինչպէս պատահեց այդ։ Ճիշդը՝ ոչ ոք գիտէ։ Լուրերը շատ են և զանազանակերպ։ Մինիստրութեան մի պաշտօնեայ — այսպէս են պատմում տեղեակ անձինք — յոգնած իր լղարիկ ռոճիկից կամ գուցէ յափշտակուած հակակառավարչական իղձերով, արտագրեց պաշտօնական

վկայագիրը և վաճառեց մի կովկասեցու։ Կովկասեցին, ուրախ իր գիւտից, որոնեց անգլիացի մի թղթակից և նրան յանձնեց քաղաքական այդ գանձը։ Եւ հազիւ մի շաբաթ անցած՝ նա լոյս տեսաւ Լօնդօնում... Կարծէք ռումբ պայթեց։ Դեսպանը հեռագրեց Պետերբուրգ. մինիստրութիւնը ալեկոծուեց։ „Ուրեմն մենք թշնամիներ ունենք նոյն իսկ մեր տան մէջ“ — կրկնում էր սարսափահար մինիստրը։ Եւ ինչպէս միշտ, սկսեց քննութիւն, հարց ու փորձ։ Հեռացրին մի պաշտօնեայի, կալանաւորեցին Պետերբուրգ ապրող մի կովկասեցի, քանի մի ուրիշներին սպառնալիքներ կարդացին... Եւ մինչ մեղաւորները անմեղների հետ միասին պատիժներ էին կրում, գաղտնի զեկուցումը շարունակում էր իր ճամբորդութիւնը դէպի ամենուրեք, ուր հայ կամ հայոց գործերով հետաքրքրուողներ կան։

Ուշագրաւ է Գօլիցինի գաղտնի զեկուցումը քաղաքական արդի տրամադրութեան տեսակէտից, և ուրեմն արժանի ծանօթութեան։ Նա բաժանուած է երկու մասի՝

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ.

ՀԱՑԵՐԸ ԵՒ ՌՈՒՍԱՍՏԱՆ. ա) Հայկական միտումներ. բ) Կաթողիկոսը և Էջմիածնի Սինօդը. գ) Հայոց ծխական դպրոցները. դ) Ռուսահայոց մամուլը. ե) Բարեգործական ընկերութիւնները. զ) Գիւղական վարչութիւն. է) Քաղաքային խորհուրդներ։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ.

1) ՀՈՂԱՑԻՆ ՕՐԻՆՔԸ. ա) Ռուս գաղթականներ. բ) Օտարների հողատիրութիւնը. գ) Օտար դրամագլուխներ։
2) ԿՐՕՆԱԿԱՆ ԱՂԱՆԴԱՒՈՐՆԵՐ. ա) Աղանդաւորներ և Տօլստոյ. բ) Դուխոբօրներ։
3) ԱՒԱԶԱԿՈՒԹԻՒՆ. ա) Պատճառներ. բ) Գիւղական ոստիկանութիւն. գ) Սիբիր աքսորուածներ։

Ջեկուցման մեծագոյն մասը նուիրուած է հայերին, ունի քաղաքական գոյն և այդ պատճառով կազմում է գաղտնի հաղորդագրութեան կարևոր բաժինը։

Քաղուածքներ՝

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐ. — Հայկական շարժումը նը-պատակ ունի՝ վերականգնել անցեալ Հա-յաստանի անկախութիւնը։ Այդ շարժումը սահմանափակուած է քաղաքներում ինտելիգենտ դա-սակարգի և հայ կղերի մէջ միայն։ Գիւղական ժողո-վուրդը դեռ ևս վարակուած չէ։ Ագիտացիայի առաջին ղեկավարները եղել են՝ հայոց հոգևորականութիւնը, հայոց մամուլը և արտասահմանի հայ յեղափոխական կոմիտէները։ Իրերի այս վիճակը պարտք է դնում բար-ձրագոյն իշխանութեան վրայ՝ հաստատել աւելի կանո-նաւոր վիճակ, պաշտպանելու երկրի ժողովրդի մնացած մասը՝ հայերի շահագործող ձգտումներից և վնասակար միտումներից։ Անդրկովկասի հայերի թիւը բազդատմամբ միւս ազգերի՝ այնքան փոքր է, որ մեծ վտանգ չէ ըս-պառնում երկրի անդորրութեան, և տեղական իշխա-նութիւնը բաւականաչափ ուժ ունի անմիջապէս խեղ-դելու հայկական խառնակութեան փորձը։

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՒ ԷՋՄԻԱԾՆԻ ՍԻՆՕԴԸ. — „Անցած սեպտեմբերին, ասում է իշխան Գօլիցին, գնացի Էջմիածին, այցելելու հայոց կաթո-ղիկոսին, որը նոյն տարւայ դեկտեմբերին ինձ փոխա-դարձ այցելութեան եկաւ Թիֆլիզ։ Այս երկու առիթ-ներով ունեցած տեսակցութիւններս համոզեցին ինձ, թէ կաթողիկոսը, իր ծերութեան պատճառով, հարկա-ւոր չափով անկախօրէն չէ դատում և գտնւում է իր այն կղերական խորհրդատուների ազդեցութեան տակ, որոնք իրենց անձնական նպատակները ունին։ Դրանց

իդեալն է մեծ և միացեալ Հայաստանը. դրդում են իրենց հայրենակիցներին դեպի անջատական ձգտումներ և խորհուրդ են տալիս կաթողիկոսին՝ չը համակերպել մեր օրէնքներին և օրէնքից դերադասել իր կրօնական հիղինակութիւնը: Ա.յսպիսով կաթողիկոսը մղում է բռնել մի ընթացք, որ համաձայն չէ կառավարութեան տեսակէտներին:

„Բացատրեցի Նորին Սրբութեան, թէ Էջմիածնի Սինոդի իրաւասութեան պատկանող խնդիրների վերաբերմամբ իր տուած անձնական հրամանները կարող են մեծ շփոթութիւններ առաջ բերել իր հօտի առանձին գործերի և յարաբերութեան մէջ, և վեր հանեցի այն կէտը՝ թէ հարկ է որ իր հրահանգները համակերպէ օրէնքի պահանջներին:

„Ուսումնասիրելով խնդիրը, եկայ այն համոզման, որ այս ձգտումը, որով փափագում են պետական հեղինակութեան աղդեցութեան շրջանակից դուրս մի դիրք տալ կաթողիկոսին, ժողովրդի մտքի մէջ պիտի մտցնի այն սխալ գաղափարը, թէ կաթողիկոսը բացառիկ դիրք է գրաւում, և իբրև դրա հետևանք՝ պիտի ծնուեղ տայ տգէտ մտքերի մէջ այն համոզման, թէ կաթողիկոսը ոչ միայն հայոց եկեղեցու հոգևոր գլուխն է, այլև Ընդրկովկասի և դրացի Փոքր-Ասիական նահանգների հայերի քաղաքական միացման ներկայացուցիչը:

„Ուստի, իմ կարծիքս է, որ ռուս կառավարութիւնը պէտք է ազդու կերպով պնդէ, թէ կաթողիկոսը և Էջմիածնի Սինոդը պարտական „Անշուշտ" են կէտ առ կէտ գործադրել օրէնքը *:

„Իբրև ազդարարութիւն, և որպէսզի Էջմիածնի Սի-

---

*) Փոքրատառ բառերը՝ այն նկատողութիւններն են, որ կայսր Նիկոլայ II արել է իր սեփական ձեռքով, զեկուցումը կարդալիս:

նոգի մէջ անկանոնութիւնների առաջը առնեմ,—պատուիրեցի, որ պաշտօնանկ լինեն Սինոդի անդամներից երկու վարդապետներ, որոնց անունն է՝ Վահան Տէր-Գրիգորեանց և Դաւիթ Դաւիթեանց, այս երկրորդը՝ անձնական քարտուղար կաթողիկոսի։ Խորհուրդ տուի, որ նրանք դուրս հանեն Կովկասի սահմաններից և Ձեր Մեծութիւնը վաւերացրեց այս տնօրինութիւնը"։

ՀԱՅՈՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ։ — „Կովկասի Հայոց ծխական դպրոցները լուսաւորութեան մինիստրութեան յանձնուիլը՝ համաձայն Ձեր Մեծութեան 1897 յունիս 14-ի հրամանագրի՝ վերջին ծայր կարևոր է, իբրև միջոց՝ պաշտպանելու նոր սերունդը հայ կղերի վնասաբեր ազդեցութեան դէմ։ Հայ կրօնաւորները չուզեցին համակերպել նոր կանոներին։ Ուստի և Կովկասի բարձրագոյն իշխանութեան հրամանով, 1897-ին փակուեցին 320 հայ դպրոցներ։ 31 դպրոց միայն բաց մնաց, որոնցից մի քանիսն էլ յետոյ փակուեցին, կամ ուսուցիչների անձեռնհասութեան պատճառով և կամ նրա համար, որ կղերը՝ կաթողիկոսի տուած հրահանգների համաձայն գործելով՝ չուզեց տալ այդ դպրոցների պահպանութեան համար հարկաւոր դրամը։

„Իրաւ է, 1897-ի յունիս 14-ի կայսերական հրամանագրի մէջ բան չէ ասուած հայ-ծխական վարժարանների սեփականութեան փոխանցման մասին, բայց այդ կէտը լռելեայն հասկացուում է, որովհետև բացուելիք նոր դպրոցները անօգուտ պիտի լինէին՝ առանց նրանց պահպանութեան համար հարկաւոր միջոցների։ Ահա թէ ինչու համար Ձեր Մեծութեան վաւերացումը խնդրեցի՝ փակուած դպրոցների սեփականութիւն-

ները ժողովրդական լուսաւորութեան մինիս-
տրութեան փոխանցելու մասին, և սպա-
սում եմ նոր հրամանի»։

„Այդպէս անել"

ՌՈՒՍԱՀԱՅՈՑ ՄԱՄՈՒԼԸ — „Թիֆլիզի մէջ լոյս տես-
նող հայոց պարբերական հրատարակու-
թիւնները՝ փոխանակ աշխատելու, որ հա-
յերը ձուլեն ռուսների հետ, ձգտում են աւելի ըն-
դարձակել նրանց մէջ բացուած վիհը։ Էջմիածնի պաշ-
տօնական թերթը՝ „Արարատ", պէտք է ենթարկել
Թիֆլիզի մամուլի ընդհանուր դրութեան՝ գրաքննու-
թեան, որովհետև դիմադրել է դպրոցական նոր կար-
գադրութեան և չէ աշխատել, ինչպէս խոստացուած էր,
մերձեցում առաջ բերել հայերի և ռուսների միջև։
Նոյն հակառուսական ոգին և վնասակար ձգտումները
երևան են գալիս և այն լրագիրների մէջ, որոնք հրա-
տարակւում են հայերի ձեռքով և ռուսաց լեզուով»։
Ապա խնդրում է արտօնութիւն տալ իրան՝ հայերի
հրատարակած բոլոր հանդէսներն ու լրագիրները, ինչ
լեզուով էլ լինեն, ենթարկել մի յատուկ դրութեան,
իր անձնական հսկողութեան տակ։ Այդ նպատակով
առաջարկում է՝ ենթարկել հայոց մամուլը մի որոշ
ծրագրի պահանջներին, պատրաստուած կառավարչա-
պետի դիւանում։

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — Հայոց բարե-
գործական ընկերութիւնները զբաղուած են
աւելի քաղաքականութեամբ, քան թէ բա-
րեգործութեամբ։ Ճշմարիտ է, յատուկ օրէնքներ են հաս-
տատուած՝ կառավարական հսկողութիւնը այս ընկերու-
թիւնների վրայ ապահովելու համար, ինչպէս նաև գոր-
ծադրւում է կենտրոն նրանց գործունէութեան և հա-
շիւների վրայ. բացի դրանից, Կովկասի տեղական իշխա-

նութիւնները իրաւունք են ստացել լուծել նրանց՝ երբ կանոնադրութեան ամենափոքր շեղում անգամ տեղի ունենայ, — բայց բոլոր այդ միջոցները մեծ օգուտ չեն տալ։ Կովկասի գրեթէ բոլոր քաղաքները ունեն մասնաճիւղեր, ենթարկուած այս ընկերութիւններից մէկին՝ Բարեգործական Ընկերութեան, որի կենտրոնատեղին է Թիֆլիզ և որի նպատակն է՝ Կովկասի հայոց մէջ դաստիարակութիւն ծաւալել և նիւթապէս օգնել նրանց։ Սակայն, այդ ընկերութիւնը զուտ տոհմային ըմբռնումով է լուսաւորութիւն տարածում։ Մի քանի տարի առաջ նա մասնակցեց ռուսահայ ինտելիգենտ դասակարգի անջատական շարժման, որի ազդեցութեան տակ՝ Երևանի կլասիքական գիմնազիոնի դիրեկտորը թշնամանք կրեց մի հայի կողմից։ Յայտնի տեղեկութիւնները ապացուցին, որ անջատական ագիտացիայի շատ կուսակիցներ այդ ընկերութիւնների անդամ են։ Դրա դրամները յաճախ յատկացնում են օտար երկրների մէջ հայեր դաստիարակելու, — մի պարագայ, որ հակառակ է ռուս կառավարութեան պետական սկզբունքներին։ Առանց ուրանալու այն օգուտը, որ անհատներ ու մասնաւոր ընկերութիւններ կարող են արտայայտել դաստիարակութեան գործի մէջ, պայմանով՝ որ կատարելապէս վստահելի լինեն, կարծում եմ, որ այս հայ ընկերութիւնները արժանի չեն վստահութեան՝ իրենց առանձնայատուկ հանգամանքի պատճառով։ Եթէ հայերը ուզենան հանրային կրթութեան և դաստիարակութեան վերաբերող բուն ռուսական նպատակները քաջալերել, կարող են մասնակցել ռուսական ընկերութիւններին, որոնք զերծ են ցեղային և կրօնական ձգտումներից։ Առաջարկում է կայսրին՝ թոյլատրել իրան՝ ջնջելու Կովկասի հայոց բարեգործական հիմնարկութիւնները։

„Դուրջ ուշադրութիւն դարձնել“

ԳԻՒՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ. — Գիւղական վարչութիւնները շատ պակասաւոր են. կարիք կայ վերակազմելու դատարանները ինչպէս նաև վարչութիւնները։ Կառավարական հսկողութիւն չկայ Կովկասի գիւղերի մէջ. ամեն բան տեղացի գիւղապետների և հաշտարարի ձեռքն է, որոնք չափազանց զբաղուած են և անբաւարար։ Բաթումի, Կարսի և Արդուինի մէջ գիւղական վարչութիւն չկայ, և մի կարգ կնճռոտ խնդիրներ ու վէճեր, որոնք առնչութիւն ունեն տեղական սովորութիւնների հետ, լուծման են սպասում։ Արտօնութիւն է խնդրում բոլոր այս խնդիրները լուծել Թիֆլիզի իր խորհուրդի միջոցով, որովհետև Պետերբուրգի սենատի մէջ և „Դրա դէմ ղած քննութիւնն ու որոշումը երկար է ոչինչ չունեմ“ տեւում։

„Այս միջոցները բաղձալի են թւում ինձ, բայց նախ պէտք է լաւ ուսումնասիրեն“։

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ (Դումա). — Քաղաքային խորհուրդների մէջ հայերը գերակշիռ դիրք ունեն, որովհետև 1892-ի օրէնքը գերակշռութիւն է տալիս սեփականատէրերին։ Դրա առաջը պէտք է առնել։ Առաջարկում է, որ կառավարութիւնը ինքը ընտրէ քաղաքագլուխներ, որոշէ քաղաքային հասոյթներից նրանց տուելիք ռոճիկը և քաղաքային խորհուրդների անդամները ընտրուեն մի նոր կանոնագրի համաձայն, կառավարութեան կօնտրօլի տակ։ Առաջարկում է նաև, որ կառավարչապետը իրաւունք ունենայ հրաժարեցնելու քաղաքային խորհուրդի այն անդամներին, որոնք իրենց պարտքը պատշաճօրէն չեն կատարում։

—

Զեկուցագրի երկրորդ մասն էլ, — նեւրուած հողային

օրէնքին, կրօնական աղանդներին և աւազակութեան՝ — ներշնչած է նոյն նեղ հայեացքով, պետական խնդիրները լուսաբանելու ակնյայտնի անընդունակութեամբ։ Սակայն այդ անընդունակութիւնը սանձահարելու փոխարէն՝ հովանաւորութիւն գտաւ, հանդիպեց աջակցութեան։ Եւ երես առած Պետերբուրգի իր զօրեղ պաշտպանների ժպիտներից, հագած աստեղազարդ համազգեստը, կրկնապատկած իր դէմքի յաղթական գծերը, երկու տարի հաղիւ անցած, 1901 թուին նա ներկայացաւ մինիստրական ժողովին նոր ծրագրով։ Ժպիտներ քաղեց Գոլիցին և դեռ չսկսած պաշտօնական բացատրութիւնները՝ աւետեց, որ գտել է, վերջապէս, վտանգաւոր հայ տարրից կովկասը փրկելու միակ միջոցը։

Եւ նա եզրակացրեց այսպէս.

„. . . Կովկասը ռուսացնելու և հայկական վտանգաւոր սեպարատիզմը մի անգամ ընդմիշտ արմատախիլ անելու միջոցը այս է — չկայ այլ միջոց — զաղթեցնել Հայերին Սիբիր, աղատել այդպիսով Անդրկովկասը հայկական խռովայոյզների ներկայութիւնից և նրանց տեղ հաստատել ներքին նահանգներից բերած ուղղափառ գաղթականներին“։

Տիրեց լռութիւն։ Դա չափազանց էր արդէն։ Ամենաուղղափառ շրթունքների վրայ անգամ սառեց ժպիտը։ Եւ մինչև իսկ զինուորական մինիստրը, Կուրոպատկին, որ երբեմն, իբր կառավարիչ Անդրկասպեան երկրի, բաւական լաւ ճանաչում էր „հայկական սեպարատիզմի“ չափը, հարցրեց.

— Ի՞նչ էք կարծում, Ձերդ պայծառափայլութիւն, որքան կը լինի հայ խռովայոյզների թիւը մի այնպիսի հայաբնակ կենտրոնում, ինչպէս Շուշին է կամ Երևանը։

— ?

— Մօտաւորապէս 50 կը լինի։

— Այո, համարեա այդքան։

— Ես ընդունում եմ նոյն իսկ, աւելացրեց մինիստրը,

կրկնապատիկը՝ 100։ Եւ կարծում եմ, որ ամենալաւ միջոցը՝ „Հայկական շարժումը“ արմատախիլ անելու, է՝ կալանաւորել այդ 100 խռովայոյզները, դուրս բերել երկրից և աքսորել Սիբիր։ Դրանով դուք կատարելապէս աղատած կը լինէք երկիրը վտանգից, առանց աքսորելու մի ամբողջ ժողովուրդ։

— Ի հարկէ, ի հարկէ, կրկնեցին միւս մինիստրները։

... Ջուրն ընկաւ բոլոր հայերը գաղթեցնելու քաղաքական ծրագիրը, որի վրայ հեղինակը թափել էր իր ամբողջ հանճարը, հայատելութեան բովանդակ թոյնը...

Ընապասելի վախճան։ Բայց և անօգուտ խրատ։ Թեւաւորուած ուրիշ աւելի զօրեղ պաշտպանութիւնից՝ Գօլիցին շարունակեց նախագծուած ճամբան։ Նրա համար գոյութիւն չունի կեանքի դասը, փաստերի լոգիկան, իրականութեան ձայնը։ Նպատակին հասնելու համար, նա չի տատանւում ծածկելու թեւերը, նոյն իսկ կառավարչական ատեաններին հաւաքած փաստերը։

Ահա մի նոր ապացոյց։ 1902 թուին, կովկասեան ստատիստիքական կոմիտէն — կառավարչական մի մարմին — որոշեց տպագրել վիճակագրական տեղեկագիր այն մասին, թէ ինչ տոկոս է կազմում ոճրագործութիւնը կովկասեան ազգերի մէջ։ Տեղեկութիւնները, քաղուած պաշտօնական ատեաններից, վերաբերում էին վերջին տասն տարուայ շրջանին։ Աւանդմնասիրութիւնը աւարտուած էր և գիրքը տպագրուած, երբ նրա մի օրինակը ներկայացուեց իշխան Գօլիցինին՝ նրա կարծիքը ստանալու համար։ Եւ „օրէնքի ու արդարութեան“ ներկայացուցիչը, առանց խղճի խայթ զգալու, տուեց իշխանական հրամանը — լոյս չը հանել այդ գիրքը։ Վիճակագրութիւնը, հիմնուած անողոք թեւերի վրայ, ցոյց էր տալիս, որ քրէական յանցանքները, ոճրագործութիւնը անհամեմատ աւելի են տարածուած

Հիւսիսային Կովկասի ռուս ազգաբնակութեան, քան Ընդրկովկասի հայերի մէջ, և որ առհասարակ այս խնդրի շրջանում տեղական ազգաբնակութեան, — վրացիների, հայերի, նոյն իսկ թիւրքերի դէմ ուղղած շատ մեղադրանքներ նայած այդ թւերին, չունեն ոչէ հիմք, ուժ և արժէք...

Պաշտօնական վիճակագրութիւնը մի վճռական, թէև անուղղակի հերքումն էր տարածւած կարծիքների, մի ծաղր զանազան զեկուցումների դէմ, որոնք այնքա՜ն առատօրէն թափվելոց Պետերբուրգ են գնում: „Թող լուէ ճշմարտութիւնը“: Եւ նա լուեց. թւերը փակւեցին ստատիստիքական կոմիտէի դարաններում, առանց բողոքի, գուցէ և առանց տրտունջի...

Եւ ուրիշ շատ ճշմարտութիւններ, հպածական, անպաշտպան ճշմարտութիւններ, շարունակում են մնալ նոյնպէս փակւած, բանալիքի տակ, շղթայակապ, որպէս զի սուտը՝ գլուխը բարձր բռնած, հպարտ ու համարձակ դուրս գայ կաբինետներից և թագաւորէ քաղաքների ու ազգերի վրայ, ամբողջ պետութեան մէջ...

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱԼԱԾԱՆՔ

(ԵՕԹՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Խաբուսիկ օրէնքը. — Ո՞ւր է կրօնական ազատութիւնը. — Արտօնուած եկեղեցի. — Հալածանք. — Միսիօնար-Հինօվնիկներ. — Կրօնի դասատուութիւնը. — Ի՞նչպէս պէտք է երդուել. — Խեղդուած բողոք:

Գեղեցիկ է Ռուսաստանում Օրինագիրքը, բայց, տարաբախտաբար, խաբուսիկ: Միապետական կարգերը պահպանող յօդուածների հետ միասին, այդ բազմահատոր ժողովածուն, որի վրայ գլուխ են կոտրել պետական շատ մարդիկ, պարունակում է օրէնքներ, որոնք ուղղակի արձագանք են արևմտեան Եւրոպայի իրաւական ամենահամակրելի հասկացողութիւնների: Մի տարբերութիւն միայն կայ — այն, որ արևմուտքում նա գրուած է գործադրելու համար, իսկ Ռուսաստանում՝ ձևի համար: Եթէ մեղաւոր չեն կազմողները, մեղաւոր են գործադրողները, տասնեակ հազար չինովնիկների այն հսկայական խումբը, որ ներկայացնում է ռուս բիւրօկրատիայի մարմինը և որ յարմար ու անյարմար դէպքում ծալում, մի կողմ է դնում օրինագիրքը և գրպանից հանում մի նոր, թէև չգրուած, բայց գործադիր օրէնք, *ինստրուկցիա* (հրահանգ) անուան տակ, որ սխալուած չէք լինի, եթէ անուանէք *բիւրօկրատիայի օրէնք*:

Այսպէս, օրինակ, պետական հիմնական օրէնքով ընդունուած է *կրօնի ազատութիւն* և բոլոր դա-

ւանութիւնների հաւասարութիւն օրէնքի առաջ։ Բայց այդ հիմնական օրէնքին յաջորդում են անթիւ բացառութիւններ, մեկնաբանութիւններ, „ցիրկուլեարներ“, պետական խորհրդի կամ մինիստրական բացատրութիւններ, որոնց արդիւնքը այն է, որ այսօր Ռուսաստանում կայ միայն մեկ առանձնաշնորհուած եկեղեցի, այն է՝ օրթոդոքս, կամ, ինչպէս ընդունուած է ասել, „պրավոսլաւնի (ուղղափառ) եկեղեցի“, որի առաջ միւս բոլոր դաւանութիւնների եկեղեցիները նկատւում են հերձուածներ, որոնց դէմ կարելի է դաւեր լարել հալածանքներ գործադրել և նոյն իսկ նրանց գոյութեան դէմ խաղեր խաղալ։

Ռեթսուենական թուականներից մանաւանդ, երբ կառավարութիւնը իր փրկութեան խարիսխներից մէկը դարձրեց ռուս հոգևորականութեան նեղհոգի պրօպագանդը և երբ գահի բարձրութիւնից իսկ, Ալեքսանդր III-ի ուղղափառ շրթունքներով, ներբողներ սկսեցին կարդացուել ուղղափառութեանը, — պրավոսլաւնի եկեղեցին զօրացնելու համար՝ բոլոր միջոցները դարձան թոյլատրելի և նպատակայարմար։ Դա եղաւ միապետութեան յենարանը։ Եւ այդ ժամանակից՝ պետութեան զանազան կողմերում՝ նախ բոլոր նորածիլ դաւանութիւնները, որոնք աղանդ անուն են կրում, ենթարկուեցին միջնադարեան, ինկուիզիտորական հալածանքի, և յետոյ՝ բոլոր միւս դաւանութիւնները — կաթոլիկ, բողոքական և մանաւանդ հայ լուսաւորչական եկեղեցիները — փոքր առ փոքր սկսեցին „կառավարչական կարգադրութիւնների“ կամ ուրիշ խօսքով՝ ճնշումների առարկայ դառնալ..

Հրեշաւոր են և աննկարագրելի այն դժոխային հալածանքները, որոնց ենթակայ են, օրինակ, դուխօբորները, մոլականները, սուբբօտնիկները, շտունդիստները և այլ աղանդաւորները։ Նորագոյն ինկվիզիցիայի սև

էջերն են դրանք։ Երկու տարի առաջ՝ դուխոբորների աղէխարշ ողբի խուլ հնչիւնները հասան մինչև Եւրոպա, բայց դա նահատակ աղանդաւորների վշտերի փրշրանքն էր միայն։ Եւ գիտէք, ինչ է դուխոբորների առաջին ու վերջին յանցանքը,— այն, որ նրանք ուղղափառ չեն։ Աշխատասէր, տոկուն մի համայնք, հեռու աբբեցութիւնից ու անբարոյականութիւնից, ոգևորւած քրիստոնէական վառ սիրով դէպի ընկերը, սիրահար համայնական կենցաղի, թշնամի բռնութեան և զէնքի, դուխոբորները շէն են դարձնում ամեն մի աւերակ, ուր ոտք են դնում։ Եւ սակայն, չնայած դրան, նրանց տները քար ու քանդ արին, հողերը խլեցին, կազակների մտրակին յանձնեցին նրանց մէջքը և անասնական կրքերին՝ նրանց կանանց ու աղջիկներին. վերջն էլ մի քանի հազար հոգի անուղղակի ճանապարհով դուրս վռնդեցին Ռուսաստանից — նրանք գաղթեցին Կիպրոս և Ամերիկա — որպէսզի նրանց վնասակար վարդապետութիւնից ազատ պահեն ուղղափառ ռուս գիւղացիներին, օրթօդօքս բիւրոկրատիայի շահատակութիւնների այս անբան ու անխօս „նահատակներին“. . .

Բազմաթիւ են տխուր իրականութիւնը երևան հանող փաստերը, իբրև անհերքելի ապացոյցներ, թէ որքան կատակերգական են և ստայօդ „կրօնի ազատութիւն“ և „դաւանութեան հաւասարութիւն“ բառերը Ռուսաստանում, ուր անողոք կռիւ է յայտարարւած խղճի ազատութեան։ Հալածական են աղանդաւորները. ազատ չեն կաթոլիկ և բողոքական եկեղեցիները. ազատ չէ մնաւանդ հայոց եկեղեցին, իբրև ազգայնական խնդրի յարակից մի հիմնարկութիւն։

Ահա փաստեր։

Կովկասում գոյութիւն ունի „Ուղղափառութիւն տարածող ընկերութիւն“, որ ամեն տարի գանձարանից

ահագին գումարներ է ստանում իր նպատակի համար։ Եւ եթէ կարծում էք, թէ այդ նպատակը նրա մէջ է կայանում, որ ընկերութիւնը քրիստոնեայ է դարձնում դաղստանցի մի լեռնական կամ աւազակաբարոյ մի թիւրքմէն և կամ պատրաստում է անդամներ, նման եւրոպական միսիոնարներին, ուղարկելու Պարսկաստան, Աւղանիստան, կամ Հեռաւոր Չինաստան, — ջարաջաղ սխալւում էք։ Ընկերութեան գաղանի հրահանգներից երևում է, որ նրա գլխաւոր նպատակն է՝ հայ լուսաւորչականին ուղղափառ դարձնել, և էք կարող երևակայել, թէ ինչ մեծ յաղթութիւն է համարւում այդ քրիստոնէական ընկերութեան համար քրիստոնեայ-հային քրիստոնեայ-ուղղափառ դարձնելը։ Այդտեղ, ի հարկէ, մեծ դեր են խաղում քաղաքական նպատակները, և այդ պատճառով ընկերութեան աջակցում են ոչ միայն ռուս հոգևորականներ, այլ նոյնիսկ կառավարչական մարդիկ, ինչպէս, օրինակ, նահանգապետ, գաւառապետներ և այլն։ Դուրս է գալիս ուրեմն, որ կովկասցի հայը կամ թուրքը, իբր հպատակ, հարկ է տալիս գանձարանին, իսկ գանձարանը փոխանակ այդ փողը գործադրելու դպրոցի, հաղորդակցութեան ճանապարհների կամ երկրի ապահովութեան վրայ, տալիս է ուղղափառութիւն տարածող մի ընկերութեան, ուրիշ խօսքով՝ հայը կամ թուրքը ինքն իր փողով նպաստում է իր կրօնափոխութեան։ Եթէ ուզում էք, դա մի աբսուրդ է, բայց ի՞նչ կայ զարմանալու, քանի որ մեր պետական-վարչական կեանքի մէջ այդպիսի աբսուրդներ անթիւ են և անքաւ...

Շարունակեցէք լսել։

Գեներալ Շալիկով, Երևանի նախկին նահանգապետը, մոռանալով, որ ինքը ամբողջ նահանգի կառավարիչ է և ոչ թէ մի միսիոնար, իր գործակալների միջոցով յայտնում էր հայ գիւղացիներին, որոնք խորովւում

էին հողի պակասութիւնից, թէ այն գիւղերը կամ գիւղացիները, որոնք ուղղափառութիւն կ'ընդունեն, խկոյն նոր հողեր կըստանան։ Գաղտնի գործակալները մեծ-մեծ խոստումներ էին անում, յաւիտենական ապահովութիւն էին խոստանում աղքատ, անկար, ճարահատ գիւղացիներին։ Եւ երբ Սուրմալուի գաւառում գտնուեցին մի քանի գիւղեր, ինչպէս՝ Խալֆալու, Կողբ, ուր հայերը հողի համար իրենց կրօնը փոխեցին, միսիոնարներ-նահանգապետը իր խոստումն անգամ չկատարեց, որովհետև „ով մի անգամ արդէն ուղղափառ դարձաւ, իրաւունք չունի նորից իր նախկին կրօնին դառնալու“. հակառակ դէպքում նրա տեղը գիւղը չէ, այլ Սիբիր...

Միայն սակաւահող գիւղը չէ այդ պրոպագանդի առարկան և ասպարէզը, այլ և շղթայակապ բանտերը։ Սրանից մօտ 10 տարի առաջ Երևանի բանտը բաց էր մի ուղղափառ քահանայի համար, որ ամեն օր ներս էր թափանցում բանտարկեալների խուցերը և քարոզում հայ կալանաւորներին, որ եթէ ուզում են Սիբիրից ազատուել, իրենց յոյսը պէտք է դնեն ոչ թէ իրենց անմեղութեան կամ փաստաբանի վրայ, այլ միմիայն ուղղափառութեան վրայ։ „Ուղղափառ եղէք, հաւատացնում էր քարոզիչ-քահանան, և դուք Սիբիր գնալու փոխարէն՝ կը դառնաք ձեր ընտանիքի գիրկը“։ Միամիտներից շատերը հաւատացին, փոխեցին իրենց կրօնը, բայց և այնպէս՝ փոխանակ իրենց երեխաներին և կանանց գրկելու, մինչև այժմ էլ Սիբիրի հողն են ողողում իրենց արտասուքներով...

Լսեցէք և այս փաստը։

Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, մի հարուստ հայ վաճառական կառավարչական կապալ է վերցնում, գրաւ դնելով մի մեծ գումար։ Կապալը անյաջող է գնում. նա կորցնում է իր ամբողջ կարողութիւնը, այն էլ, ինչպէս ասում են, անարդար կերպով։

Վաճառականը յոյսը դնում է գրաւ դրած գումարի վրայ և աշխատում է գոնէ այդ յետ ստանալ։ Նրան ասում են. „Հաւանօրէն յետ կըստանաք, եթէ միայն ուղղափառութիւն ընդունէք և աշխատէք, որ ուրիշներն էլ ձեզ հետևեն“։ Դժբախտ միամիտը համաձայնւում է։ Սակայն գումարը յետ չէ տրւում։ „Դուք հետևողներ չունեցաք. նոյն իսկ ձեր ընտանիքի անդամները չհետևեցին ձեր օրինակին“, ասում են նրան յանդիմանօրէն և ճանապարհ դցում... Թշուառը մեռաւ ազքատութեան մէջ, տուած բոլորից, նոյն իսկ կնոջից և հարազատ զաւակներից...

Սունկի նման են բուսնում ուղղափառ եկեղեցիները Կովկասի զանազան ծայրերում, նոյն իսկ այնտեղ, ուր չը կան աղօթողներ։ Եկեղեցասէր հօտը չէ, որ կառուցանում է այդ փառաւոր շէնքերը, այլ պետական գանձարանը, որ ամեն տարի այդ նպատակով ահագին գումարներ է բաց թողնում, համաձայն կառավարչական ծրագրի։ Սակայն այդ նոյն ծրագրի մէջ չէ մտնում օտար դաւանութեան եկեղեցիների բազմանալը, և թէ ինչու հայերին չաճախ թոյլատրութիւն չեն տալիս իրենց սեփական ծախքով իսկ եկեղեցի կառուցանել։ Մի անգամ ընտրած տեղն են անյարմար գտնում, մի այլ անգամ՝ մակարդակը, իսկ յաճախ բացարձակ մերժումն, առանց պատճառաբանութեան։ Հինգ տարի կը լինի, ինչ Բագուի հայերը ուզում են եկեղեցի կառուցանել Բալախանի, որ աւելի քան տասն հազար մշակներ կան, գեղ. ես կապուած կրօնական ծէսերին, սակայն կառավարութիւնը չի թոյլատրում։ Դաւթարդիւնաբերողների ժողովը որոշեց՝ հոգալ ուղղափառ եկեղեցու ծախքերը՝ այն պայմանով, որ հայոց եկեղեցի էլ կառուցի։ Կառավարութիւնը ընդունեց այդ պայմանը, տացաւ ուղղափառ եկեղեցուն հարկաւոր դրամը, իսկ հայոց եկեղեցու խնդիրը մերժեց։ Նոյն համարձակու-

թեամբ մերժված է և Բագուում եկեղեցի շինելու առաջարկը։ Ամեն տարի վերսկսվում են գրագրութիւնները, հիմնված օրէնքի յօդուածների վրայ, բայց ի վերջոյ յաղթողը մնում է ուղղափառ կամայականութիւնը, կառավարչական անսանձ քմահաճոյքը . . .

Զզուելի և ցնցող են բազմաթիւ փաստերից վերցրած այս դէպքերը։ Զզուելի՛ մանաւանդ այն պատճառով, որ այդ տեսակ „գործունէութեան“ հեղինակները ազատ միսիոնարներ, միսիոնարական խմբեր չեն, որոնց գործունէութեան համար մեր կիսակրօնական դարը, տարաբախտաբար, դեռ բաւական պարարտ հող է ներկայացնում, այլ կառավարութեան պաշտօնեաներ, պետական ծառայողներ, որոնք կոչված են հոգալու „հպատակների բարեկեցութիւնը“, անկախ նրանց կրօնական համոզմունքներից . . .

Առաջ գնանք։

Կրօնի դասաւանդութիւնը պետական դպրոցներում մի երկրորդ և զօրեղ ապացոյց է այդ անհամբերողութեան։ Միապետական կառավարութիւնը, որ ոչինչ ջանք և փող չէ խնայում „ուղղափառ կրօնի“ դասերը դպրոցների մէջ շատացնելու, միաժամանակ ամեն միջոց գործ է դնում խափանելու օտար դաւանութիւնների դասաւանդութիւնը նոյն դպրոցներում։ „Ուղղափառ“ կրօնի վերաբերմամբ կառավարութիւնը մոլեռանդ-կրօնամոլ է, իսկ „օտար կրօնների“ վերաբերմամբ— անաստուած։ Այն, ինչ նա անհրաժեշտ է համարում օրթոդոքս պատանիների համար, միանգամայն աւելորդ է գտնում, օրինակ, հայ պատանիների համար։ Եւ այդ պատճառով գիմնազիոններում, իրօք, հայ աղջիկներն և տղաները կրօն չեն սովորում— մի փաստ, որ կարող է ուրախացնել անկրօններին, և այն արմատականներին, որոնք դէմ են կրօնի, իբրև մի առարկայի դասաւանդութեան, բայց ոչ միապետական կառավարութեանը, որ մեծ

յոյս է դրել կղերի և եկեղեցու աջակցութեան վրայ։

Հայոց լեզուն վաղուց արդէն հանուած է գիմնազիոն-ներում և քաղաքային դպրոցներում պարտաւորիչ առարկաների ցանկից, որովհետև „պետական գլուխ-ների“ դատողութեամբ հայը աշխարհիս երեսին երկու պարտաւորութիւն միայն ունի — մէկը՝ սովորել ռուսաց լեզուն, իսկ միւսը՝ ատել իր մայրենի լեզուն։ Եւ մէկը նոյնքան անհրաժեշտ է, որքան միւսը։ Այժմ քիչ-քիչ այդ երկու պարտաւորութիւններին աւելանում է և մի նորը — խորշել այն կրօնի դասերից, որ տանը դաւա-նում են նրա ծնողները և անուանապէս ինքը, բայց որին ծանօթ լինել, այժմեան „պոլիտիկ-մանկավարժների“ կարծիքով, ոչ միայն պէտք չէ, այլ և աւելորդ։ Ցեղն է յիշել մի ռուս ընագէտի խօսքերը. „Մենք բնա-գէտներս չենք, որ այժմ անկրօնութիւն ենք սովորեց-նում երեխաներին, այլ կառավարութիւնը, որ կրօնի մէջ էլ պոլիտիկա է մտցնում“...

Ցասը տարի կը լինի արդէն, որ, հայ երեխաներին իրենց եկեղեցու դաւանութիւնից և կրօնից սառեցնելու յոյսով, զանազան դիրեկտորներ և ինսպեկ-տորներ, ամաչելով աշկարայ կերպով վերացնել կրօնի դասերը, թոյլ չեն տալիս, որ այդ դասերը յանձնուեն քիչ-շատ ընդունակ և օրինաւոր հոգևորա-կանների, այլ ընդունում են այնպիսի դասատու քահա-նաներ, որոնք մի քանի ռուբլիների համար, նաև շը-նորհիւ իրենց սարկահոգի բնաւորութեան, ոչ միայն իսկապէս կրօն չեն աւանդում հայ աշակերտներին, այլ պատրաստ են նոյն իսկ իրենց եկեղեցու կարգերը կեղ-ծել, միայն թէ դուր գան իրենց „իշխանաւորներին“։ Եւ շնորհիւ այդ հանգամանքի, կրօնի դասերը չեն հետաքրքրում հայ երեխաներին, իսկ շատերը նոյն իսկ պարծենում են իրենց արհամարհանքով դէպի այդ դասերը ... թէև կրօնը, իբրև առարկայ, պետական

բոլոր գպրոցներում առաջնակարգ տեղ է բռնում և վկայագրերի մէջ բազմեցրած է բոլոր առարկաներից վերև, ամենքի ճակատին . . .

Եւ այս բոլոր այլանդակ խաղերը նրա համար միայն, որ ճանապարհ բաց անեն օրթոդոքս եկեղեցու համար՝ իբրև նեցուկ ներկայ ընթիմի։ Բայց վա՜յ այն կառավարութեան, որ իր յոյսը դրել է եկեղեցու վրայ . . .

Մի գիծ ևս։

Ե Ր դ մ ա ն հ ա ր ց ը, որ կովկասում 10-15 տարուց ի վեր „հրատապ հարցերից“ մէկն է, նոր լուցուցիչ է այն հալածասէր քաղաքականութեան, որ սկսած էր հայոց լեզուի և եկեղեցու դէմ։ Դատաստանական հիմնարկութիւնների մէջ դա մի անբուժելի ցաւ է դարձել։ Քառորդ դարից ի վեր դատարաններում ամենամի դաւանութեան պատկանողին երդուեցնում էին իր կրօնի ծէսերի համաձայն, իր մայրենի լեզուով, թուրքին՝ թուրք մոլլան, թուրքերէն լեզուով, հային՝ հայ քահանան՝ հայերէն, ռուսին՝ ռուս քահանան՝ ռուսերէն լեզուով և այլն։ Բայց ինչպէս երևում է, այդ տարրական արդարութիւնը շատ „լայն“ թւաց հալածանքի սիրահարներին։ „Ի՞նչ հայերէն, ի՞նչ հայոց քահանայ — մտածեցին մի օր, — Ռուսաստանում միայն մի լեզու կայ և մի իշխանութիւն“։ Եւ ահա այդ օրից սկսեցին տխուր տեսարաններ դատաստանական դահլիճներում, — հային ստիպում են երդուել ռուսաց լեզուով։ Շատ անգամ ուելորդ են համարում հրաւիրել հայ քահանայ, երդուեցնում է ինքը դատարանի աշխարհական-նախագահը, և այն էլ՝ վիրաւորական, ստոր բացնող սպառնալիքներով։

Եթէ մի օր մի հայ, մի վրացի կամ մի թուրք համարձակուի ասել „Ես չեմ ընդունում կրօնական երդում, վերցրեք ինձանից քաղաքացիական երդում“ — նրան կը նկատեն իբրև վտանգաւոր ազատախոհ և ով գիտէ

ուր կը քշեն . . . Ինչո՞ւ։ Որովհետև պաշտօնական Ռուսաստանում միայն կ ր օ ն ա կ ա ն երդումն է ընդունուած։ Սակայն երբ նոյն հայը ուզում է նոյն կ ր օ ն ա կ ա ն երդումը տալ իր կրօնի ծէսով, համաձայն իր եկեղեցու դաւանութեան, նրան ասում են. „Այդ աւելորդ է, քեզ կարող է երդուեցնել քահանայի փոխարէն և աշխարհական-չինովնիկ, փոխանակ հայերէնի, մի այլ լեզուով, փոխանակ հայոց եկեղեցու ծէսի, որևէ այլ ծիսով“, թէև հայը չի էլ հաւատում ոչ այս նոր ծէսերին, ոչ էլ նոր-երդուեցնողի հ ո գ ե ւ ո ր հեղինակութեան։ Ո՞ւր մնաց ուրեմն կրօնական երդումը և այն հ ա ւ ա տ ը, որ դրուած է այդ տեսակ ամէն մի երդման հիմքում։ Տրամաբանութիւնը այդ հարցին պատասխան տալ չէ կարող. դրա պատասխանը ստանալու համար պէտք է դիմել գահի ներկայացուցիչներին, որոնք եթէ անկեղծ լինեն, պէտք է ասեն. „Մեզ համար երդումն էլ դպրոցն էլ լեզուն էլ կրօնն էլ, ինքը ուղղափառ Աստուածն էլ մէկ նպատակի միայն պիտի ծառայեն — մ ի ա պ ե տ ո ւ թ ե ա ն և ո ւ ղ ղ ա փ ա ռ ո ւ թ ե ա ն. դրանից դուրս չկայ մեզ համար ոչ արդարութիւն և ոչ էլ իրաւունք“։

Հին-հին դարերին յատուկ այդ ամօթալի հալածանքը ժամանակակից Ռուսաստանում դարձել է այնքան սովորական, այնքա՜ն տարածուած, որ ինչպէս ասում են, տեղից վերկացողը, յանուն „ռուսացման“, հայհոյում է հային, վրացուն, լեհին, ֆիններին . . . հայհոյում են դպրոցական ամբիոնից, դատաստանական բազկաթոռից, լրագիրների էջերից, նոյն իսկ եկեղեցու բեմից . . . Սկսած է ազգերի մի խուլ, սպառնական ատելութիւն, որ եթէ մի օր պայթի, սոսկալի կայծեր կարող է ցայտեցնել. . .

Վ ա ն դ ա ւ ո ր ապագայ . . .

Դուցէ, այդ ապագայ վանդն էր պատճառը, որ

քանի մի տարի առաջ, 1897 թուին, պետերբուրգի գրական մի շրջանից, որի սիւներից մէկն էր իշխան Էսպեր Ուխտոմսկի, սկսեցին հնչել կրօնական համբերողութիւն և դաւանութիւնների հաւասարութիւն գեղեցիկ խօսքերը։ Շատերը սկսեցին յոյսեր տածել, որովհետև գիտէին, որ իշխան Ուխտոմսկին անձամբ մօտ է կայսրին, վայելում է նրա վստահութիւնն և բարեկամութիւնը։ Համեստ, չափաւոր բողոք էր դա՝ ընդդէմ կրօնական հալածանքի, և այդ՝ յանուն պետական ընդհանուր շահերի, և ոչ թէ լեհական կամ հայկական որևէ տեսակէտի։ Սկսեց բանակռիւ։

Սակայն, թէ յետադէմ ռուս մտքի մէջ, թէ բիւրոկրատիայի շրջանում այնպիսի դղրդիւն բարձրացաւ, այնպիսի քամիներ սկսեցին փչել, որ կարելի էր կարծել, թէ „կրօնական համբերողութիւնը“ վտանգ է ըսպառնում Ռուսաստանի գոյութեան։ Հետևանքը այն եղաւ, որ մի քանի ամիս հաղիւ անցած, բողոքողները լռեցին, վայր դրեցին գրիչը, տեղն տուին և վրդովւած ճահիճը խաղաղեց վերստին։

Ամենազօր և ամեն ինչ իր խեղդիչ ճանկերի մէջ առած բիւրոկրատիան էր, որ յուզեց կառավարչական „ամենաուժգին շրջանը“ և ստիպեց լռել „ազատամիտ“ ձայները, թէև այդ ձայները վայելում էին նոյն իսկ թագաւոր-կայսրի անձնական վստահութիւնը և մինչև անգամ խրախուսանքը . . . Ի՜նչ նշանակութիւն ունի մի անձ, նոյն իսկ թագակիր, երբ ամենազօր օլիգարխիան այլ կերպ է ուզում. . .

Տեղն է այստեղ յիշել մի անեկդոտ, շատ տարածւած մայրաքաղաքում։ Բանակռիւի տաք ժամանակը — պատմում են — իշխան Ուխտոմսկի գրեց մի յօդւած, որ խմբագրեց ինքը կայսրը, պաշտպանելով կրօնների ազատութիւնը և ազգերի հաւասարութեան տեսակէտը։ Երբ յօդւածը արդէն պատրաստ էր և

միւս օրը պիտի յանձնուէր տպագրութեան, կայսրը հարցրեց.

— Կակ վի դումայետե, կնեազ, զա էտօ նաս նե նակաժուտ (Ի՞նչ էք կարծում, իշխան, սրա համար մեզ չեն պատժիլ)։

— ?...

Դա, ի հարկէ, իրականութիւն չէ, բայց եթէ կայսրը արտասանէր այդ խօսքերը, նա ճշմարտութիւնից շատ էլ հեռացած չէր լինի։ Ահա այդպէս են դատում մայրաքաղաքի շրջաններում և այդ նպատակով էլ հնարել են այդ սրամիտ անեկդօտը...

Տարիներ անցան։ Եկան նոր օրերը, և վարագուրած, ծածկի տակ դրուած պրօպագանդը ընդունեց ազատ, աշկարայ, նոյն իսկ պաշտօնական կերպարանք։ Ահա անցած-դարձածներից մէկը։

1902-ի սեպտեմբերն էր։

Արարատեան դաշտի բազմատանջ վայրերում, ուր քանի մի ամիս առաջ հալածական թիւրքահայ գաղթականները հանգստի անկիւն չգտան, երևաց մի հիւր, որի նմանը վաղուց չէր տեսել այդ երկիրը։ Տանջանքին յաջորդեց „խաղաղութեան“ աւետաբերը — աստուածային սպասաւորը, որ միակ ապացոյցը պիտի լինէր այդ ապաբախտ երկրում, որ այո, գոյութիւն ունի արդարասէր Աստուածը, թէև այնքա՞ն հեռու, որ չլսեց և չի լսում այդքան բուռն ա՞խերը, տանջուող ժողովրդի այդքան սրտաբեկ աղերսանքները։ Ո՞վ էր „խաղաղութեան“ այդ ներկայացուցիչը։ Եկեղեցու հովիւ էր դա, Վրաստանի էկզարխ Ալեքսէյ, որ պատրաստ էր գնացել հայկական նահանգները, հնչեցնելու երկնքի օրհնութեան մեղեդիներ...

Եւ երբ կովկասեան լրագիրները լուր տուին, որ Վրաստանի „հովիւը“ այցելեց Էջմիածին — հայկական

կրօնական կենտրոնավայրը, ուր սիրալիր ընդունելութեան արժանացաւ նրա պետից, որի հետ երկու եկեղեցիների փոխադարձ սիրոյ և բարեկամութեան մասին ճառեր փոխանակուեցին, —շատերը զգացին ներքին սփոփանք, մի միխիթարութիւն հանդէպ այն երկարատև թշնամանքի, այն յաճախ գաղտնի, յաճախ բացարձակ անհամբերողութեան, որ ռուսական եկեղեցին՝ մղած միապետ կառավարութիւնից, վկայել է ուրիշ եկեղեցիներին և դրանց թւում հայոց լուսաւորչական եկեղեցուն։

Սակայն որքա՜ն կարճատև, փխրուն և խաբուսիկ եղաւ այդ սփոփանքը, սպասելիքների այդ նոր յոյսը։ Հաշտութեան, փոխադարձ յարգանքի հող պատրաստելու նպատակով չէր, որ միապետական ուղղափառութեան վեղարակիր ներկայացուցիչը գնաց Էջմիածին և Արարատեան երկիրը, այլ ընդհակառակը՝ կաշկանդուած հայկական եկեղեցու աւերակների վրայ առանձին եկեղեցի հիմնելու նպատակով, մի պաշտօն, որ եթէ հաճելի չէր միապետութեան գերի դարձած Ամենակարողին, գէթ հաճելի էր ամենակարող միապետութեան։

Դժուար և անդգոյշ կը լինէր հաւատալ, եթէ լուրերը լինէին մասնաւոր աղբիւրից, արդիւնք երկիւղից ամեն բան չափազանցնող ամբոխի շշուկների։ Փաստը, ցաւ է ասել, անժխտելի է, որովհետև նա արձանագրուած էր կովկասեան կառավարութեան պաշտօնական օրգանում, „Կավկազ“ լրագրի մէջ, գրուած Էկզարխին ուղեկցող մի հոգևորականի՝ աւագ-քահանայ Վ. Օստրոգովի ձեռքով, յայտնի իբրև ժիր քարոզիչ և միսիոնար, գրուած, ինչպէս հաւաստում են, նոյն իսկ Էկզարխ Ալեքսէյի գիտութեամբ, և եթէ կամիք՝ խմբագրութեամբ։

Ահա Էկզարխեան ճանապարհորդութեան այդ „կիսապաշտօնական“ նկարագրի մի հատուածը.

„Սեպտեմբերի 28-ին հովանավորը այցելեց Ալեքսանդրոպոլի բոլոր զինուորական եկեղեցիները և մերձակայ Ալեքսանդրովկա գիւղում հիմնեց մի եկեղեցի, ուսադաւանութիւն ընդունած հայերից նոր կազմուած համայնքի համար։ Հայերի մէջ այդ շարժումը դէպի ուսադաւանութիւն՝ սկսել է 20 տարի առաջ. այժմ նա կենդանի է և զօրեղ, և եթէ շլենէին կեանքի այն ճնշող հանգամանքները, որոնց մէջ ապրում են ուսադաւանութիւն ընդունած հայերը, որոնք մնալով նոյն գիւղերում իրենց նախկին հաւատակիցների հետ՝ ամէն տեսակ անախորժութիւններ են կրում նրանցից՝ այդ շարժումը լայն ալիքի նման կը տարածուէր Երևանի նահանգում։ Հասարակ ժողովուրդը չգիտէ այն տարբերութիւնը, որ կայ հայլուսաւորչականութեան և ուսադաւանութեան մէջ, և իսկապէս դա այնքան էլ մեծ չէ, որ անհանդուրժելի անդունդ դառնար։ Անդունդ կամենում են դարձնել նրան քաղաքականութեամբ պարապող տարրերը, գլխաւորապէս հնտելիգենցիայից, բայց ժողովուրդը գործ չունի նրանց հետ։ Վերջին ժամանակ կազմել են մի քանի ծիներ ուսադաւան հայերից. նրանց համար ժամերգութիւն է կատարում։ բացում են ուսումնարաններ։ Ադմինիստրացիան հնարաւոր համարեց ուսադաւան հայերին դուրս հանել իրենց նախկին տեղերից և կազմել առանձին գիւղեր։ Ա. այժմ կազմուած են Ալեքսանդրովկա և Ազինօ գիւղերը։ Թագաւոր կայսրը իր առատաձեռնութեամբ 5,000-ական բուբլի նուիրեց այդ գիւղերում եկեղեցի-ուսումնարաններ կառուցանելու համար։ Վրաստանի էկզարխը միւս օրը հասաւ Ալեքսանդրովկա, երեկոյեան ժամի 4-ին, և երկար խօսակցեց ուսադաւան հայերի հօտի հետ։ Աւագ-քահանայ Վլասովրդով, Վրաստանի էկզարխի յանձնարարութեամբ քարոզ խօսեց ժողովրդին ս. Գրիգորի, հայերի լուսաւորչի կեանքի մասին, և պարզեց այն միտքը, թէ ս. Գրիգորը ապրում էր այն ժամանակ, երբ հայերը բաժանուած չէին ուղղափառ եկեղեցուց, և թէ իսկական գրիգորեաններ՝ հանգանոյ Լուսաւորիչ Գրիգորին, երբայցի կերպով կարող են անուանուել հայերից նրանք, որոնք ընդունել են ուսադաւանութիւն։ Որովհետև այդ երեկոն սեպտեմբերի 30-ի նախընթաց երեկոն էր, երբ ուսաց եկեղեցին տօնում է ս. Գրիգորի, Մեծ-Հայաստանի Լուսաւորչի յիշատակը, ուստի այստեղ էլ մաղթանք կատարուեց այդ սուրբի յիշատակին և տաճար էլ հիմնուեց նրա անունով։

Զուգադիպութիւնը զարմանալի էր։ Ցայ Ընուած, որ սուրբ Գրիգոր Լուսաւորչի աղօթքներով ածի հայերի ուսուցման հօտը"։

Որպիսի այլանդակութիւն։

Կար ժամանակ, երբ ռուսադաւանութեան պրօպագանդը կատարուում էր գաղտնի, անուղղակի ճանապարհներով, դէպի այլակրօնները ցոյց տուող որոշ յարգանքի վարագոյրի տակ. նա կատարուում էր բանտերի մէջ, ուր կրօնափոխ բանտարկեալներին, ինչպէս տեսանք, խոստանում էին ազատութիւն դժոխանման Սիբիրից. գիւղացիների շրջանում, դատարանների շէմքերի վրայ, ուր հաւատափոխներին երազել էին տալիս անվերջ հող և հարստութիւն. քաղաքների մէջ, ուր իբրև վարձք կրօնափոխութեան՝ խոստանում էին կառավարչական կապալներ, զանազան դատաստանական վէճերի յաջող վախճան, կամ ապահով պաշտօն և ուռճիկ ուէէ հիմնարկութեան մէջ... Իսկ այժմ, կորցրած ամօթի վերջին նշոյլը, խեղդած խղճի վերջին ճիչը, այդ պրօպագանդը աներկիւղ և համարձակ՝ կատարուում է պաշտօնապէս, հրապարակով, եկեղեցիի բեմանով, պաշտօնական օրգանի էջերում, կառավարական աջակցութեամբ, կայսեր տուած փողով և հովանաւորութեամբ։

Սա է ռուսական տիրապետութեան հարիւրամեակի նորագոյն պարծանքը, միապետութեան և միապետ եկեղեցու յիշատակելի առաջադիմութիւնը, արժանի դրժբախտ ազգի հաւատարիմ երախտագիտութեան և քաղաքակիրթ մարդկութեան որոտընդոստ ծափերին...

Իբրև ամէնիստ՝ այս տողերի գրողը բարեկամ չէ որ և է եկեղեցու, ուրեմն և հայկականին։ Սակայն եթէ հարց տան, թէ որն է գերադասելի՝ հայոց եկեղեցի՞ն թէ ռուսացը, մի վայրկեան անգամ չենք տատանի և կը պատասխանենք. „Հայոց եկեղեցին"։

Երկու եկեղեցիներն եվ կապանքներ են մարդկային մտքի ազատ ու լայն զարգացման, արգելք՝ փիլիսոփայական բազմակողմանի մտածողութեան։ Սակայն, մէկը, — եթէ ներելի է այս կոպիտ համեմատութիւնը, — կապանք՝ շինած թոկից, և շատ հեշտ կտրելու համար, միւսը՝ ձուլած երկաթից, ամուր, և շատ դժուար փշրելու համար։ Մէկը, հայոց եկեղեցին, ինքը աղօթող ժողովուրդն է, միւսը՝ ռուսաց եկեղեցին, ինքը հրամայող միապետութիւնը։ Մէկը՝ մրմունջ, մեղեդի. միւսը՝ „պրիկազ“, երկիւղ։ Մէկը՝ ազգ ժողովրդի հաւատը, միւսը կոպիտ միապետութեան աջ ձեռքը, որով նա բթացնում է ռուս ժողովուրդը առանց կարեկցութեան, պահելով իր ահռելի զօրաբանակին կից՝ մի այլ նորաձոյլ բանակ,— ուղղափառ հոգևորականութիւնը, այս միաժամանակ սարուկ և ճնշող կազմը։

Ընդհանրական ռուս խեղճ ժողովրդի շրջանում, միապետ ուղղափառութիւնը իր զէնքը այժմ դարձնում է դէպի հայ ժողովուրդը և այս անգամ բացարձակ, առանց վարագոյրի։ Պատմական ստախօսութիւն, ամբարտաւան ինքնագովութիւն, հայհոյանք դէպի այն բոլորը, ինչ սուրբ է, նիւթական է զգացմունքի, հաւատի համար— ահա նորագոյն եղանակը գործելու, նկարագրած Վ. Սոտորգովի „անկեղծ“ յօդուածներում։ Ահա մի լայն ճանապարհ, անբարոյականացնելու ազգ, հաւատացող ժողովուրդը, որին կառավարութեան գործակալները վարժեցնում են հողի, փողի, հեշտութեան, նոյն իսկ մեդալի և օղի համար վաճառել խիղճը և զգացմունքը, միակ անկեղծ բանը, որ կայ ամբոխի մէջ, պատրաստելով նրան մի վիճակի, որ անասնական է և գերազանցապէս անբարոյականացնող։ Դա կրօնական էվոլիւսիօն չէ, այլ վաճառք. դա ժողովրդի կրթութիւն չէ, այլ բռնապետութեան զօրեղ պատանդան...

Եւ եթէ մի օր՝ մի հայ երիտասարդ, նոյն իսկ ոչ

„քաղաքականութեամբ պարապողներից“, կամ երիտասարդ մի վարդապետ մնի Ալէքսանդրիկա և Ագինորու ասի՝ „Հայերը, ոչ մարդկանց երկրի վրայ և ոչ Աստծուն երկնքում հաճելի չէ այդ խաբեբայութիւնը հաւատի անունով“, — այն ժամանակ, օ, այն ժամանակ, ճահիճը կը շարժուի, — գաւառապետը կը զարնի հեռագիրը, էկզարխ Ալէքսէյ՝ ստանձնած կամաւոր ժանդարմի պաշտօն՝ կը կցի այդ հեռագրին իր հայրական կարծիքը, վօստօրգով այդ „կարծիքը“ ձեռքին՝ կը վազի ժանդարմների վարչութիւն . . . կը բացուի նշանաւոր գիրքը, որի կազմի վրայ գրոշմած է „Արմեանսկօէ դէլօ“ (Հայոց գործը) և քաղաքական աքսորեալներին կ՝աւելանայ էլի մէկը, այն „ոչ այնքան հեռու վայրերում“, ուր հազար և մի եկեղեցի կայ, բայց ոչ մի Աստուած չկայ։

„ՓԱԿԵԼ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ“

(ՈՒԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Բարեգործութիւն. — Կամաւոր ոստիկանութեան տեղեկագրերը. — Պետերբուրգի տուած հրահանգը. — Պէտք է փակել. — Նոր կանոնադրութիւն. — Մեռցնող շունչը. — Փակւած զրադարաններ. — Ինչպէս է հիմնւում մի զրադարան. — Բարեգործական հիմնարկութիւնների աւերակները:

Թիֆլիզի բանուկ փողոցներից մէկի վրայ, համեստ մի տան ճակատին, երկար տարիներ կախած էր մի ցուցանակ, այս բառերով՝ „Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւն“: Հաղւագիւտ էր այս ցուցանակը և գուցէ բացառիկ: Շրջայլութեան խանութների շարքերի մէջ, այն փողոցների կողքին, ուր մէկը միւսի յետևից ձգւում են գինետներ, սրճարաններ, զւարճարաններ, ուր ամեն ինչ, նոյն իսկ չքաւորին օգնելու արտօնութիւնը, կենտրօնացած է ոստիկանութեան ձեռքին, հաճելի էր տեսնել մի հիմնարկութիւն, որ նպատակ էր դրել, օրէնքի թոյլատրած սահմաններում, արձագանք տալ հիւանդի, տնանկի, չքաւորի աղերսող ձայնին:

Քաղաքական մարմին չէր այդ ընկերութիւնը, և ոչ էլ նուիրւած սոցիալական խնդիրների լուծման բարդ զբաղումներին: Պարզ բարեգործութիւն էր նրա տենչանքը, ձևակերպւած հետևեալ կերպով նրա կանոնադրութեան մէջ.

1. Ընկերութեան նպատակն է նպաստել լուսաւորութեան

տարածմանը Հայերի մէջ Կովկասում և Անդրկովկասում և օգնել նոցա նիւթականապէս։

2. Այս նպատակին հասնելու համար Ընկերութիւնը, ըստ իւր ոյժերի զբաղացման՝

ա) Պահպանում է արդէն գոյութիւն ունեցող ուսումնարանները և նիւթականապէս նպաստում է նորերը հիմնելուն.

բ) Օժանդակում է ժողովրդի մէջ արհեստների տարածմանը.

գ) Օգնում է ուսանողներին իւրեանց ուսման տարիների մէջ.

դ) Այս է ընծայում գրքեր և պարբերական հրատարակութիւններ ժողովրդի ընթերցանութեան համար, նոյնպէս և այլ գրականական երկասիրութիւններ.

ե) Հիմնարկում է տպարաններ, վիմագրատներ և ընթերցարաններ.

զ) Հիմնարկում է հիւանդանոցներ և այլ բարեգործական հաստատութիւններ.

է) Օգնում է տառապեալներին ժողովրդական թշուառութեան ժամանակ, որպիսիք են՝ սով, տարափոխիկ ախտ, հրդեհ, և այլն։ Այսպիսի դէպքերում, ըստ պահանջման հարկի, կազմում է առողջապահական մասնախմբեր կամ ուղարկում է իւր կողմից հաւատարմատարներ.

ը) Իրաւունք ունի կարևոր դէպքերում նպաստել և այլ ազգօգուտ ընկերութիւններին։

Ծանօթութիւն. Վերոյիշեալ այն կէտերի վերաբերմամբ, որոնց մասին օրէնքով պահանջւում է կանխապէս ունենալ պատշաճաւոր իշխանութեան թոյլտուութիւնը, ընկերութիւնը սկսում է իրագործել իւր ծեռնարկները այդ թոյլտուութիւնն ստանալուց յետոյ։

Գաղտնի կամ մասնաւոր չէ այս կանոնագրութիւնը, այլ հաստատուած բարձր կառավարութեան ձեռքով, դեռ 1881 թուի յուլիսի 6-ին, և գործադրուած ճիշտ ու անշեղ կերպով, երկար տարիների ընթացքում, մինչև որ հասան նոր հոսանքի օրերը, մատնութեան և հալածանքի նորագոյն շրջանը։

Շատերը երևի չը գիտեն, — և դեռ քանի՞ քանի

գաղանիքներ կան՝ անյայտ ընդհանրութեան — որ բացի այն երկու ժ ո խ ա յ ի ն մ ե ք ե ն ա ն ե ր ի ց, որոնք կրում են ժ ա ն դ ա ր մ ն ե ր ի վ ա ր չ ո ւ թ ի ւ ն և ո ս տ ի կ ա ն ո ւ թ ի ւ ն (գաղտնի և վարչական) անունները, Կովկասում կայ և մի այլ թէև արտաքուստ անտեսանելի մարմին, որ նոյնպէս կոչւած է հսկելու պետութեան ներքին ապահովութեան վրայ։ Դա կ ա մ ա ւ ո ր ո ս տ ի կ ա ն ո ւ թ ի ւ ն ն է։ Դրա անդամները նոյնպէս ոռճիկ են ստանում պետական գանձարանից ամսի 20-ին, նոյնպէս շատ անգամ համազգեստներ են կրում, բայց իրենց ծ ա ռ ա յ ո ւ թ ե ա մ բ ներանք պաշտօնապէս ոստիկանութեան անդամ չեն, — այլ մէկը, դիցուք, ունէ „նորին գերազանցութիւն“, մեծ մասամբ պաշտօնաթող, միւսը՝ նախկին գաւառապետ, երրորդը՝ կառավարչապետի ատենի նախկին անդամ, մի ուրիշը՝ ժողովրդական դպրոցների դիրեկտօր, գիմնազիօնի ուսուցիչ կամ անդամ դատաստանական պալատի, և այսպէս ըստ կարգին . . . Դրդւած „ներքին ոգևորութիւնից“ և „արտաքին հովանաւորութիւնից“, մէկը միւսից անկախ, առանձին-առանձին, առանց շատ անգամ իրար ճանաչելու, համոզւած, որ հասարակութիւնից ոչ ոք իրենց „գործունէութեան“ մասին գաղափար չունի, կատարում են „հայրենասիրական“ մի մեծ պարտք — կանոնաւոր կերպով ուղարկում են բարձր իշխանութեան զեկուցումներ, նամակներ և գրութիւններ՝ հաղորդելով այնպիսի վըտանգաւոր նորութիւններ, որոնց գոյութեան մասին շատ անգամ տեղեկութիւն չունեն մինչև իսկ ամենագէտ գժոխային մեքենաները — ժանդարմները և ոստիկանները։

Այդօրինակ պետական „վտանգաւոր նորութիւններից“ մէկն էր այն, թէ Կովկասում հայկական ընկերութիւնները բազմացել են սունկի նման, և օ ր ի ն ա կ ա ն դիմակի տակ շարունակում են ծառայել ա զ գ ա յ-

նական և քաղաքական վտանգաւոր նպատակների։ Եւ ահա, հիմնուած մեծ մասամբ կամաւոր ոստիկանութեան ապօրինի տեղեկութիւնների վրայ, Պետերբուրգից 1894 թուին հրամանագրում է Կովկասեան բարձր իշխանութեան՝ „մանրամասն տեղեկագիր պատրաստել Հայոց բարեգործական ընկերութիւնների ամբողջ գործունէութեան մասին և կարծիք յայտնել՝ թէ որքան անհրաժեշտ է նրանց գոյութիւնը“։

Սկսեց գրագրութիւն և „գործ“։ Պատահմամբ միայն՝ հարցի ուսումնասիրութիւնը յանձնուեց մի բարեխիղճ պաշտօնեայի — տարաբախտաբար այժմ պաշտօնից հեռու — որը՝ չբաւականանալով այն մանրամասն տեղեկագրերով, որ երկար տարիների ընթացքում տեղական իշխանութիւնը ստացել էր Հայոց բոլոր ընկերութիւնների մասին, անձամբ սկսում է նոր հետազօտութիւններ անել և կազմում է մի բազմակողմանի տեղեկագիր։

Այդ տեղեկագրից պարզւում է, որ նախ՝ կատարելապէս սուտ է այն, թէ Կովկասի Հայերը ունեն բազմաթիւ ընկերութիւններ։ Այդ միջոցին, այն է 1894 թուին, Կովկասում գոյութիւն ունէին հետևեալ ընկերութիւնները. Բաքուում՝ „Հայոց Պարդասիրական Ընկերութիւնը“, հիմնուած դեռ 1863-ին, Թիֆլիզում՝ „Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը“ և „Հայուհեաց Բարեգործական Ընկերութիւնը“, երկուսն էլ հիմնուած 80-ական թուականներին, և „Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը“, հիմնուած 1881-ին, որը՝ համաձայն իր կանոնագրութեան, իրաւունք ունէր բաց անել ճիւղեր՝ գաւառական քաղաքներում և օգտուելով այդ իրաւունքից, մօտ 15 տարուայ ընթացքում կարողացել էր հիմնել հազիւ 18 ճիւղեր, այն էլ այնպիսի խոշոր քաղաքներում, ինչպէս Երևան, Բաթում, Ալեքսանդրոպոլ, Շուշի, Ախալցխա, Նախիջևան, Ախալքալաք և այլն։

Նոյն տեղեկագրից պարզւում է մի այլ հարց — այն, որ բոլոր ընկերութիւնները տարացի կերպով և ամենամեծ խստութեամբ հետևել են իրենց կանոնադրութիւններին — բոլորն էլ հաստատուած կառավարութիւնից — և երբէք մաղի չափ իսկ չեն շեղւել իրենց նպատակից։

Շատ հետաքրքիր է յիշատակել այն խօսքերը, որ տեղեկագրի հեղինակը արտասանել է կառավարչապետի խորհրդի անդամներից մի քանիսի շրջանում։

— „Նա ամենայն խստութեամբ ուսումնասիրեցի այդ ընկերութիւնների երկար տարիների գործունէութիւնը և ոչ միայն ապօրինի ոչինչ չգտայ, այլ համոզւեցի, որ նրանք բոլորն էլ անպայման համակրելի են և օգտաւէտ։ Եւ ինչպէս անհամակրելի դատել մի ընկերութիւն, որը՝ ըստ իր կարողութեան, աղքատին հաց է տալիս, չքաւորին՝ ուսում, որբին՝ ապաստան, ժողովրդին՝ գիրք։ Նկատողներ կան, որ այդ ընկերութիւնների թիւը շատ մեծ է, պէտք է կրճատել։ Ճշմարտութեան դէմ կը լինի համաձայնւել այդ կարծիքի հետ։ Կովկասում աւելի քան $1^1/_2$ միլիոն հայ կայ, և այդ ահագին ազգաբնակութիւնը ունի ընդամենը չորս զատ-զատ ընկերութիւն ու դրանցից մէկը միայն՝ իր ճիւղաւորութիւնները։ Բայց և այնպէս — աւելացնում է պաշտօնեան — Պետերբուրգին գոհացում տալու համար, պէտք է որևէ մէկը փակել։ Սակայն ո՞րը։ Հրատարակչական ընկերութիւնը։ Բայց ինչպէս, քանի որ այդ հիմնարկութիւնը իր տեսակի մէջ մի հատ է և ուրեմն շատ համարւել չէ կարող։ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը։ Բայց նա էլ կովկասեան հայուհիների միակ ընկերութիւնն է և կատարելապէս անվնաս, քանի որ (մի փոքր ժպտախառն) նրա պահածը՝ կար ու ձևի մի դպրոց է և խոհարարական դասընթացքներ, ուր ուրիշ բան չեն սովորեցնում, բայց եթէ շոր կարել և կերակուր պատ-

բաստել... Մարդասիրական ընկերութեան մասին Բագի նահանգական իշխանութեան յայտնած կարծիքը վատ չէ. մնում է ուրեմն կովկասեան Հայոց բարեգործական ընկերութիւնը, որ անպայման համակրելի հիմնարկութիւն է, այնքա՞ն տարի գոյութիւն ունի և գտնւում է միանգամայն վստահելի անձանց ղեկավարութեան տակ։ Ուրեմն ի՞նչ անել, ի՞նչպէս լուծիւն տալ Պետերբուրգի տրամադրութեան"...

Եւ երկար մտածելուց յետոյ, բարեմիտ պաշտօնեան բացականչում է. „Լա՜ւ միտք. թող փակեն այնպիսի աննշան ճիւղեր, ինչպէս են Աղնախի, Թելավի, Գօրու ճիւղերը, եթէ ուզում են, որ թիւը պակաս լինի։ Սակայն — աւելացնում է մի փոքր խորհելուց յետոյ՝ — այդ ճիւղերի տարեկան բիւջէն 300-400 բուբլու հաղիւ է հասնում, ի՞նչ պիտի անեն այդ անմեղ, փոքրիկ ճիւղերը՝ տարեկան 300 բուբլով՝ ռուսաց պետութեան դէմ... Չէ, ես այդ էլ չեմ անի"։ Եւ զեկուցում տուեց, որ գոյութիւն ունեցող ընկերութիւնները ո՛չ շատ են, ո՛չ աւելորդ, ո՛չ էլ վնասակար։

Բարեմիտ տեղեկագիրը, թէև կարճ ժամանակով, բայց փոքր ինչ խաղաղացրեց մտքերը։ Սակայն մի սահման դնելու նպատակով, Պետերբուրգից հրամայեցին փոխել Բարեգործական ընկերութեան կանոնագրքի այն կէտը, որը իրաւունք էր տալիս կենտրոնական խորհրդին բանալ՝ առանց յատուկ թոյլտուութեան՝ նոր մասնաճիւղեր գաւառական քաղաքներում։ Դրա փոխարէն ստեղծեցին այլ կանոն, որի զօրութեամբ, նոր ճիւղ բանալու համար՝ պէտք էր նախօրոք ստանալ բարձրագոյն թոյլտուութիւն։ Սկսած այդ օրից՝ այլևս ոչ մի նոր ճիւղ չը հիմնուեց և փորձ էլ չեղաւ։ Բարձրագոյն թոյլտուութիւնը՝ ահագին խոչընդոտ է, որը յաղթահարելու համար պէտք է առանձին բախտ կամ անսովոր կապեր ունենալ...

Ընցաւ հաղիւ երեք-չորս տարի։ Վրայ հասաւ նոր-բագոյն հիւանդոտ և խենթ ըէժիմը՝ իր ուժի ամբողջ համարձակութեամբ։ Ամեն ինչ փոխուեց, ամեն ինչ դարձաւ կասկածելի, վտանգաւոր, վնասակար։ Քրիստոնէական բարեգործութիւնն էլ ազատ չը մնաց կասկածից։

« Հայոց բարեգործական ընկերութիւնները զբաղւած են աւելի քաղաքականութեամբ, քան թէ բարեգործութեամբ, ասւած է գօլիցինեան գաղտնի զեկուցագրի մէջ։ Ցայտնի տեղեկութիւնները ապացուցին, որ անջատական ագիտացիայի չատ կուսակիցներ այդ ընկերութիւնների անդամ են։ Նրա դրամները յաճախ յատկացւում են օտար երկրի մէջ հայեր դաստիարակելու,—մի պարագայ, որ հակառակ է ռուս կառավարութեան պետական սկզբունքներին։ Կարծում եմ, որ դրանք արժանի չեն վստահութեան՝ իրենց առանձնայատուկ հանգամանքի պատճառով, ուստի եւ խնդրում եմ թոյլատրել ջնջելու Կովկասի հայոց բարեգործական հիմնարկութիւնները »։

Այդ առաջարկը ընդունւեց։

1899-ին հայոց բոլոր ընկերութիւնները փակւեցին, բացի Հրատարակչական ընկերութիւնից։ Մի „հայրախնամ“ զիջողութիւն միայն արեց կառավարութիւնը — յայտնեց, որ փակւած ընկերութիւններից ամեն-մէկը կարող է վերաբացւել, միմիայն համաձայն այն կանոնադրութեան, որ մշակել է ինքը կառավարութիւնը, և դրա համար ամեն մի ընկերութիւն պիտի առանձին-խնդիրը ներկայացնի կովկասեան բարձր իշխանութեան։ Նոր կանոնադրութեան համաձայն վերաբացւեցին միմիայն երեք ընկերութիւն՝ — Արդասիրական ընկերութիւնը Բաքւում, և Թիֆլիզում՝ Հայուհեաց Բարեգործական ընկերութիւնը ու Կովկասեան Հայոց Բարեգործական ընկերութիւնը, նոր անւան տակ, այն է „Թիֆլիզի Հայոց Բարեգործական ընկերութիւն“։ Գաւառական ճիւղերը դատապարտւեցին վերջնական մահւան։

Վերաբացւած ընկերութիւններին տրւած նոր կանո-

նագրութեամբ նրանց գործունէութեան նախկին շատ կէտերը, — դպրոցներ պահել, օգնել ուսանողներին, նպաստել կարօտ գրողներին, գրքեր տպագրել, հիմնել աշակերտական հանրակացարաններ, վերջապէս բաց անել գրադարաններ — ոչնչացրեցին։ Իրաւունք չկայ կատարել և ոչ մէկը այդ օգտակար գործերից. արգելւում է նպաստել ուսման, ընթերցանութեան, լուսաւորութեան։ Մուրացկանները հաց կուզեն, մի քանի կոպէկ տուէք — ուրիշ ոչինչ։ Այդ է նոր կանոնադրութեան ոգին։ Եւ միայն փողոցի մուրացիկներին օգնելու մէջն է, որ կառավարութիւնը „քաղաքական ոգի“ չէ տեսնում։—դրանից դուրս ամեն ինչ քաղաքական է։

Եւ գիտութեան ծարաւով պապակող շատ պատանիներ մնացին անօգնական. մութ ու մոռացած անկիւններում վառւած փոքրիկ ճրագները — դպրոցները — զրկւած նպաստից, փակեցին իրենց դռները, իսկ միերկու գրքոյկ կարդալու համար դէպի գրադարանները դիմող հասարակութիւնը՝ ապշած, սկսեց անիծել իր սև բախտը...

—

Կառավարչական կարգադրութեան այլանդակ պատկերը լաւ գծագրելու համար՝ աւելորդ չէ կանգ առնել, մի փոքր երկարօրէն, գրադարանների հարցի վրայ, շատ ուշագրաւ իր մանրամասներով, և շատ կարևոր՝ նպատակի կողմից։

Գրադարանը Կովկասում նոյնքան հազւագիւտ բան է, որքան Պետերբուրգում տրօպիքական բոյսը։ Պատճառը պարզ է. ինքը կառավարութիւնը գրադարան-ընթերցարաններ չէ հիմնում, և եթէ մասնաւոր անձինք կամ հաստատութիւններն էլ ուզում են այդ անել, այնքան խոչընդոտներ, դժւարութիւններ և ճընշումներ են գործ դրւում, որ ամենքն էլ հրաժարւում են այդ մտքից։ Դիցուք, մի մասնաւոր մարդ, նոյն իսկ

դրամական զոհաբերութիւն յանձն առնելով, ուզում է բանալ մի հանրամատչելի ընթերցարան-գրադարան իր մայրենի քաղաքում։ Սակայն ուզելը բաւական չէ։ Պէտք է թոյլտուութիւն։ Բայց քանի-քանի՜ ամիսներ և նեղութիւններ են հարկաւոր այդ թոյլտուութիւնը ստանալու համար — ահա կը տեսնէք։

Ամենից առաջ պէտք է դիմել նահանգապետին, ի հարկէ խնդրագրով, „մարկան“ վրան փակցրած։ Նահանգապետը խնդիրքը ուղղում է ոստիկանապետին, կամ գաւառապետին՝ եթէ խնդրատուն ապրում է ոչէ գաւառական քաղաքում։ Վերջինը՝ պրիստաւին։ Վայ, եթէ խնդրատուն երբեւիցէ, նոյն իսկ իր պատանեկութեան ժամանակ, 20-30 տարի առաջ, եղել է կասկածի տակ կամ մասնակցել է ոչէ „քաղաքական“ գործի։ Այդ դէպքում պատասխանը պարզ է. — „Ձեր խնդիրքը թողնուեց առանց հետեւանքի“։ Աւելին. խնդրատուն նոյն իսկ պէտք է իր „լաւ“ կողմերով յայտնի լինի ոստիկանութեան։ Ուստի ամեն մի անձ, որ կասկածելի էլ չէ, բայց անծանօթ, անյայտ է, երբէք չի էլ փորձում այդպիսի դիմումն անել. դրա համար միշտ առաջ են գցում ոստիկանութեան համար կատարելապէս „վրստահելի“ անձնաւորութիւն։ Սակայն՝ չնայած այդ պարագաներին, ոստիկանութիւնը դարձեալ պիտի մանրամասն տեղեկութիւններ հաւաքի։ Մի օր պրիստաւ է գալիս, միւս օրը մի աւելի ստոր ոստիկան, մի այլ անգամ գաղտնի ոստիկանութեան պաշտօնեայ, և ձեր տան շուրջը, ձեր թաղում, հարեւաններից և շատ անգամ ձեր անձնական թշնամիներից „փաստեր“ են հաւաքում։ Ոչէ թշնամու ակնարկ, ոչէ հարբած պրիստաւի կապրիզ բաւական է, որ խնդրատուն դարձեալ անյարմար համարուի։ Անցնում է 5-6 ամիս, և ահա ստացւում է դարձեալ նոյն միակերպ պատասխանը. — „Ձեր խնդիրքը թողնուեց առանց հետեւանքի“։

Բայց վերցնենք լաւագոյն դէպքը, այսինքն երբ խընդրատուն ունէ „անյարմարութիւն“ չունի։ Արգելքներ այնուամենայնիւ պակաս չեն։ Նախ կառավարութիւնը առհասարակ շատ կասկածելի է համարում ամենամի գրադարան, այն պարզ պատճառով, որ գրադարանը տարածում է գրագիտութիւն, իսկ դա „սկզբունքով“ վնասակար է, եթէ կրօնական սահմաններից դուրս է։ Բայց կայ և ուրիշ հանգամանք։ Դուք ուզում էք, դիցուք, ձեր գրադարանը է ժանագին դարձնել, որպէսզի մատչելի լինի քաղաքի ամբոխին, չքաւոր դասակարգին։ Ձեզ նկատում են, որ „անյարմար է ամբոխով զբաղուել“, և ստիպում են գրադարանի վճարը աւելի թանկ անել, որպէսզի նա մատչելի լինի միմիայն ապահով դասակարգին։ Ուրիշ խօսքով, ձեր ձգտումը՝ ծառայել չքաւոր ժողովրդի ընթերցանութեան գործին — խափանուած է, գոնէ մասամբ։ Ընթացքենք, որ կարգադրուեց վճարի հարցը։ Այդ ժամանակ խնդիր է յարուցուում տեղի մասին։ Եւ եթէ դուք ուզում էք գրադարանը հիմնել քաղաքի որևէ յետ ընկած մասում, ուր ապրում են չքաւորները, մի այնպիսի տեղ, ուր ժողովուրդը աւելի յարմարութիւններ ունի յաճախելու, ձեզ նկատում են, որ դա անկարելի է, ասելով, որ գրադարանը պիտի բաց անել քաղաքի բանուկ մասում, բանուկ փողոցի վրայ, որպէսզի „տպարանական տեսուչը (նա, որ հսկում է գրադարանների վրայ) միջոց ունենայ ամեն րոպէ մտնել և հսկել“։

Ընդունենք, որ այդ զիջողութիւնն էլ արեցիք, այնուհետև հարց է ծագում, թէ ով պիտի լինի գրադարանապետը, ի՞նչ եկամուտներով պիտի պահի գրադարանը, ով պիտի լինի պատասխանատու անձը, եթէ հիմնարկողը բացակայ է քաղաքից։ Վերջապէս, հաղար ու մի դժուարութիւններով, մի դիւանանից միւսը վազվզելով, սպասելով շաբաթներ և

ամիսներ, դուք այդ անլուր քամահաճոյքներին էլ լիուլ-թիւն էք տալիս։ Սակայն դարձեալ վախճանը հեռու է։ Սկսում է նոր „հոգեհանութիւն“ և ամենախիստը,— գրքերի և լրագիրների հարցը։

Ի՞նչ գրքեր պիտի պահէք գրադարանում։ Միթէ՞ այն, որ ձեր կարծիքով ամենից օգտակարն է կամ ձեր յա-ճախորդներին ցանկալի։ Քաւ լիցի. այդպէս մտածել Ռուսաստանում — նշանակում է խենթ լինել։ Դուք պիտի ներկայացնէք գրքերի ցուցակ։ Այդ վերջինը ու-ղարկւում է ցենզուրական հիմնարկութեանը, որ ինքը արդէն ունի նախօրօք կազմած՝ արգելած գրքերի ցուցակ, և նա՝ դրա համաձայն ուղղագրում է ձեր ներ-կայացրածը։ Սակայն այդ ցուցակն էլ մէկ չէ։ Ցուցակ էլ կայ՝ ցուցակ էլ։ Կան գրքեր, որոնք արգելուած են մի-միայն դպրոցական գրադարանների համար. կան այնպիսիները, որոնք տեղ չեն կարող գտնել ժողովրդական գրադարաններում. վերջապէս կան գրքեր, որոնք թէև գտնւում են ամենամի կլուբի գրադարանում, բայց իրաւունք չկայ պահել հանրամատչելի գրադարանի մէջ։ Դժւարութիւններ և արգելքներ, արգելքներ և դժւարութիւններ, ուրիշ խօսքով՝ մի օրինական քաոս, որ իրաւունք է տալիս իշխանութեան ամեն տեսակ հարցեր ստեղծել և դժւարին կամ անկարելի դարձնել գրադարանի բացումը։

Երևակայեցէք մի բոպէ, որ ամիսներ քաշքշելուց յետոյ — շատ անգամ այդ ձևականութիւնները տևում են ութ-ինն ամիս, նոյն իսկ ամբողջ տարի — վերջապէս հրաշքով, այո՛ հրաշքով, ստանում էք թոյլտուութիւն և բաց էք անում գրադարանը։ Ահա և առաջին այցելուն... բայց դա ընթերցող չէ, այլ ոստիկան։ — „Թոյլտուութիւն ունի՞ք“։ Ցոյց էք տալիս։ Մի քանի ժամից յետոյ դարձեալ ոստիկան՝ „Համեցէք ոստիկանատուն, կանչում են“։ Մի օր անցած գա-

լիս է ինքը տպարանական տեսուչը (ինսպեկտոր տիպոգրաֆիի), գրադարանի անմիջական իշխանութիւնը։ Եւ եթէ նա մի կասկածոտ, անհանգիստ, կապրիզոտ անձ է, „վայն եկել ձեզ տարել է“։

Մի փոքրիկ միջադէպ։

Թ. քաղաքի հայոց մի գրադարան մտնում է տպարանական տեսուչը։

— Ցոյց տուէք գրացուցակը։ Ցալիս են։

— Գրացուցակից դուրս ուրիշ գրքեր, յոյս ունիմ, չունէք։

— Ի հարկէ ոչ։

— Սա ի՞նչ գիրք է, բացականչում է տեսուչը թերթելով ցուցակը և մատը դնելով մի գրքի անուան վրայ. — „Վաղարշապատ մայրաքաղաքն հայոց“։

— Դա պատմական գիրք է, թոյլատրուած կառավարութիւնից և ձեր ձեռքով։

— Ի՞նչ պատմական, ի՞նչ թոյլտուութիւն։ „Մայրաքաղաքն հայոց“... Դա անկարելի է։

— Այո... բայց մայրաքաղաք հայոց, որ գոյութիւն ունէր սրանից 1500 տարի առաջ, 4-րդ դարում, և ոչ թէ այժմ, բացատրում է խոնարհաբար գրադարանապետը։

— Այդ միևնոյն է. ես արգելում եմ այս գիրքը։ Հայերը մայրաքաղաք չը պէտք է ունենային...

— Սա ի՞նչ է, աւելի զայրացած գոչում է տեսուչը, ձեռքը դնելով մի այլ գրքի վրայ՝ „Վէրք Հայաստանի“։

— Դա էլ թոյլ է տրուած ձեր ցուցակով. Աբովեանի աշխատութիւնն է այդ — աւելացնում է գրադարանապետը յաջողութեան ժպիտը երեսին — գրուած աւելի քան կէս դար առաջ, լի հաւակրանքով դէպի ռուսները և ռուսաց տիրապետութիւնը։

— Այդ համակրութեանը ես հաւանում եմ, բայց անունը՝ „Վէրք Հայաստանի“ չեմ հաւանում։ Չկայ Ռուսաստանում Հայաստան, ուրեմն չէ կարող լինել և

Հայաստանի վէրք։ Այսօրուանից այդ գիրքն էլ եմ արգելում։

Եւ այսպէս արգելք արգելքի վրայ։

Մէկ գրքի անունն է վտանգաւոր, միւսի ոճն է կասողն, երկրորդի հեղինակը դուր չէ գալիս „մեծաւորին“։ Մէկը ազատական հակումներ ունի, մի ուրիշը բաւականաչափ բարոյական չէ, — և ահա մէկ-մէկ այդ բոլորը արգելւում, հալածւում, խլւում է գրավաճառներից ու գրադարաններից և մատնւում խարոյկի կամ ոստիկանական արգելքի...

Դժոխային այդ պայմաններում մասնաւոր մարդիկ շատ քիչ կամ երբէք յանձն չեն առնում գրադարաններ բաց անել, մանաւանդ որ դա շահաւէտ գործ էլ չէ, և սովորաբար բարեգործական հիմնարկութիւններն են, որոնք հանդիսանում են իբրև ձեռնարկողներ։ Այդ հանգամանքն է ահա, որ ստիպում էր հայոց բարեգործական ընկերութիւններին՝ հազար ու մի նեղութիւններով հաւաքած սուղ միջոցներից՝ մաս հանել գրադարաններ հիմնելու համար այնպիսի թէև մեծ, բայց գրադարաններից զուրկ քաղաքներում, ինչպէս Թիֆլիզ, Ախալցխա, Շուշի, Ախալքալաք, Հին-Նախիջևան։ Բարոյական անհրաժեշտ պարտականութիւն էր այդ, հանդէպ խաւարի մէջ թաղուած ահագին ազգաբնակութեան, որ չունի մտքի ճրագ, որ գիրք և կարդալու տեղ չունի...

Սակայն գրատեաց կառավարութեանը այդ բոլորը թւաց շատ և կասկածաւոր, և իբրև հետևանք նրա վանդալական քաղաքականութեան ու խաւարամոլ ձգտման, մեր առաջ կանգնած է հետևեալ ողբալի պատկերը. — 18 հազար բնակիչ ունեցող Ախալցխայում կար մի հատ գրադարան — փակեցին։ 25 հազար բնակիչ ունեցող Շուշում՝ մի գրադարան — փակեցին։ 10 հազար բնակիչ ունեցող Ախալքալաքում՝ մի գրա-

դարան — փակեցին։ 12 հազար բնակիչ ունեցող Հին-Նախիջևանում մի գրադարան — փակեցին։ Վերջապես 160 հազար բնակիչ ունեցող Թիֆլիզում, ուր Բարեգործական ընկերութեան նորակազմ մատենադարանը պիտի լինէր միակ լուրջ և հանրամատչելի հիմնարկութիւնը — փակեցին։ Թոյլ չտուին գրադարան բաց անել Ալէքսանդրոպոլում, ուր 35 հազար բնակիչ կայ, Գանձակում և Երևանում, որոնք երկուսն էլ նահանգական քաղաքներ են և ունին իւրաքանչիւրը 30 հազարից աւելի բնակիչ, և ուրիշ շատ փոքրիկ քաղաքներում, ուր գրադարանը պիտի կազմէր միակ ճրագը՝ ընդհանուր խաւարի մէջ...

Այդ բոլորի տեղ մնացին՝ կնքած դռներ և կամ մի երկու հիւծուած, կաշկանդուած ընկերութիւններ, Թիֆլիզ և Բագու, իբրև ստուերներ՝ նախկին կազմակերպութեան։ Սակայն դրանք էլ թէև ենթակայ խստագոյն կանոնների և հեռու լուրջ գործունէութիւնից, ազատ չեն անընդհատ հսկողութիւնից, յարաճուն կասկածներից։ Ոստիկանները գնում են ու գալիս. դաւերը աճում են ու աճում։ Եթէ կասկածելի չեն ընկերութեան ղեկավարները, կասկածելի են գրասենեկապետը, նոյն իսկ ծառան։ Ահա մի փաստ։ 1901 թուին, Թիֆլիզի ոստիկանութիւնը Հայոց Բարեգործական ընկերութեան գրասենեակի ծառային ենթարկեց խուզարկութեան և գտաւ նրա մօտ արգելուած մի թերթիկ։ Ոչ մէկը և ոչ միւսը կապ չունէին ընկերութեան գործունէութեան հետ։ Սակայն հակառակ դրան, հակառակ վարչութեան տուած բացատրութիւններին, ընկերութեան դռները կնքեցին և ամիսներ շարունակ փակ մնացին։

Իսկ 1903 թուին Բագուի „Մարդասիրական ընկերութեան“ գրադարանն էր, որ փակուեց։ Ընտրասելի էր պատճառը։ Ոչ արգելուած գիրք էին գտել, և ոչ էլ որևէ թերթիկ գրադարանապետի կամ ծառայի մօտ։ Մի օր՝ երբ քաղաքի

հրապարակի վրայ կատարւում էր սոցիալիստական ցոյց, համակիրներից մէկը մանելով գրատուն — ուր ամեն ոք ազատ է ներս գնալու՝ իբրև ընթերցող — սկսում է պատուհանից փողոց նետել յեղափոխական պրոկլամասիոններ, ի հարկէ, առանց վարչութեան գիտութեան կամ համաձայնութեան։ Գրադարանի համար պատահական մի անձ էր նա, սակայն չը նայած դրան, գրադարանը փակւեց և ընկերութիւնը ենթարկւեց նոր կասկածների, վտանգաւոր օրեր գուշակող նոր հսկողութեան... Եւ այդ օրից, ամեն անգամ, երբ ընկերութեան ղեկավարները ստանում են „գաղտնի“ գրութիւն նահանգապետից, առաջին միտքը որ անցնում նրանց գլխով, այս է՝ „Ընկերութեան փակման հրամանն է՞ արդեօք“...

Փակելու շրջան է այս։ Փակեցին դպրոցները, փակեցին բարեգործական ընկերութիւնները, փակեցին գրադարանները, երկար տարիների՝ մաշող, բազմաթիւ ձեռքեր և անսահման եռանդ պահանջող այդ կրթական օջախները։ Փակւած դպրոցի տխուր, սրտաճմլիկ աւերակների դիմաց՝ յանդուգն աջողութեամբ գլուխ է բարձրացնում գինետունը, իսկ հալածական գրադարանների փոխարէն՝ աճում են զուարճարանները, հասարակաց տները։ Եւ ժողովուրդը, զուրկ կրթական ապաստաններից՝ գրոհ է տալիս դէպի այն վայրերը, ուր հալւում, չորանում և քար է կտրում մարդկային միտքը, զգացմունքը, ուր այնքա՜ն աջողութեամբ ուռչում և աճում է անասնացողամբոխը, անասնացնող-կառավարութիւնների այդ ապահով պատւանդանը...

ՊԷՏՔ ՉԵՆ ԳՐՔԵՐ

(ԻՆՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Միամիտ յոյսերի օրեր. — Հրատարակչական ընկերութիւնը.— 21 տարեայ գործունէութիւն. — Տպագրւած գրքերի որակը եւ քանակը. — Ընկերութեան վերջնական փակումը. — „Ցիվիլիզացիա եւ սիֆիլիզացիա“:

„Ինքնասփոփման սիրուն օրեր էին — այսպէս սկսեց իր պատմութիւնը մի հայ գրող, — օրեր միամիտ ոգեւորութեան, պատանեկան յափշտակութեան: Հասունացած մարդիկ՝ անցեալով ու դիրքով, գրողներ, դպրոցական ասպարիզում ծանօթ գործողներ բժիշկ, փաստաբան, վարժուհի, ծայրայեղ մտածողներ, և չափաւորութեան ասպետներ, վաճառական, ծառայող, — բոլորն էլ միացած, կապւած նոյն տեսչով, վազում էին դէպի ժողով... Բազմամարդ, և աղմկալի էին այդ ժողովները, — կրակոտ ճառեր, ինքնամոռացութեան հասած պայքար, մրցումն, վէճ, ընտրութիւններ, ծրագիրների մի ահագին կոյտ, գրքերի ցուցակ, նախահաշիւներ: Հսկայական չէր արդիւնքը. ամենաշատը մի քանի հատ գրքեր, անցած գրաքննիչի ձեռքով, աղատ յեղափոխական ոգուց, անիշխանական ձգտումներից... Բայց և այնպէս՝ մի ամբողջ սերունդ, որ իր առաջ ունէր ցաւերի մի ահագին ծով, կատարելիք անթիւ պարտքեր, միամտօրէն զգում էր իրան գոհ, գործի վրայ, պարտաճանաչութեան շաւղին կանգնած: Փոքրիկ գործ, մեծ ինքնագոհութիւն: Միամիտ օրեր, ինքնասփոփման սիրուն օրեր: Անցան գնացին: Կառավարութիւնը չը հասկացաւ էութիւնը, վտանգաւոր

կարծեց ժողովները, վտանգաւոր՝ ճառերը, վտանգաւոր՝ տպագրուած գրքերը“ . . .

Հրատարակչական ընկերութիւնն էր այդ, որ քսանեւ-մէկ տարի համարուեց օրինական, անվտանգ, ցանկալի, իսկ 21 տարուց յետոյ անցանկալի, վտանգաւոր, ապօրէն։ Նա էլ փակուեց։

Պաշտօնական կարգադրութեան մէջ, ինչպէս միշտ, ոչ մի բացատրութիւն, ոչ մի պատճառաբանող բառ, որ ուրիշ խօսքով կը նշանակի՝ վտանգը մեծ է և պետական, անյարմար հաղորդելու „ի գիտութիւն հասարակութեան“։

Ահա նրա բովանդակութիւնը.

„Լսելով Ներքին գործերի մինիստրի հաղորդագրութիւնը մայիսի 30-ից, 1900 թիւ, № 1270, „Հայերէն գրքերի հրատարակութեան թիֆլիզի ընկերութեան“ փակելու մասին, մինիստրների կոմիտէն կարծիք յայտնեց, — այս առաջարկութիւնը հաստատել։ Թագաւոր կայսրը, 1900 թ. յունիսի 16-ին, բարձրագոյն բարեհաճութիւն տուեց այդ որոշման“։

Ուրեմն՝

Կառավարչապետը չարախօսեց և Ներքին գործերի մինիստրը ընդունեց։ Ընդունածը ներկայացրեց մինիստրների կոմիտէին, և կոմիտէն հաստատեց։ Կոմիտէի որոշումը տարուեց կայսրին, և սա մտքով անգամ չանցկացրեց հարցնելու, թէ ինչո՞ւ են փակում, այլ տուեց իր բարձրագոյն հաւանութիւնը։ Ուրիշ խօսքով մի ամբողջ կառավարութիւն, սկսած կովկասեան կառավարչապետից մինչև Ռուսաստանի միահեծանը, մ ի ա ց ա ն և միացած ուժերով փակեցին մի փոքրիկ ընկերութիւն, որ հիմնուեց օ ր է ն ք ո վ, գործեց օ ր է ն ք ո վ և փակուեց դարձեալ „օ ր է ն ք ո վ“. . .

Ի՞նչ է, կը հարցնէք, այդ հիմնարկութեան յանցանքը, որի համար նա իր 21-ամեայ պատկառելի հասակում ենթարկուեց այդօրինակ մի ծանր, անողոք,

անդարմանելի պատժի։ Առաջինը այն է, որ նա գրքեր է տպագրում, երկրորդը այն, որ հայերէն գրքեր է տպագրում։ Հայերէ՞ն, ո՜հ, որքան անախորժ, որքան սոսկալի է հնչում այդ բառը չինովնիկութեան և նոյն իսկ մինիստրական ու կայսերական ականջներին... Որքա՜ն դառնութիւն, որքա՜ն վտանգ կայ այդ „անիծուած“ բառի մէջ... Եւ երևի երբ մինիստրների կոմիտէում վճռւում էր փակել ընկերութիւնը, սլավ ցեղի ժամանակակից ղեկավարները ուսերը թափ տալով՝ հարցնում էին. „Եւ ինչպէ՞ս է եղել, որ 21 տարուց ի վեր դա գոյութիւն ունի“...

Այո՛, 21 տարի։ 1879 թուին էր, որ Թիֆլիզի գրական մի շրջանում միտք ծագեց հիմնել այդ ընկերութիւնը, որի նպատակը պիտի լինէր — տպագրել հայերէն գրքեր։ Մշակեց նրա կանոնադրութիւնը և 1880 թուի յունուարի 21-ին կովկասեան նախկին փոխարքայ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչը հաստատեց նրան։ Կանոնադրութեան առաջին յօդուածի մէջ ասուած է.

„Հայերէն գրքերի հրատարակութեան Թիֆլիզի ընկերութիւնը“ հիմնուած է Թիֆլիզում և նպատակ ունի հրատարակել հայերէն լեզուով թէ ինքնուրոյն և թէ թարգմանական գրքեր։ Ընկերութեան հրատարակութիւնները ենթարկւում են տպագրութեան ընդհանուր կանոնադրութիւնների“։

Վերջին պարբերութիւնը արդէն բաւական էր, որ կովկասեան նախկին փոխարքան աչքերը խփած հաստատէր այդ կանոնադրութիւնը, որովհետև այն բոլորը, ինչ անցնում է ռուս ցենզորի ձեռքով, երբէք, ոչ մի տեղ և ոչ մի կերպ չէ կարող լինել վտանգաւոր կամ երկիւղալի։ Ցենզուրան այնպիսի քուրան երից չէ... Եւ հէնց այդ պարզ պատճառով է, որ 21 տարուայ ընթացքում ընկերութիւնը չէ տպագրել կամ չէ կարողացել տպագրել և ոչ մի գրքոյկ,

նոյնիսկ ոչ մի տող, որի վրայ կարողանային մատնանիշ անել, իբրև վնասակար կամ վտանգաւոր։

Դիմենք փաստերին։

Քսանեմեկ տարուայ ընթացքում ընկերութիւնը տպագրել է 187 հատ գիրք (մի քանիսը նոյն իսկ վերատպութիւններ)։ Այդ գրքերը բաժանւում են՝

Թարգմանական	133
Կոմպիլացիա	33
Ինքնուրոյն	21

Ասել է թէ՝ իբրև ինքնուրոյն գրուածքներ, որոնք կառավարութեան համար պիտի ծառայեն ինչպէս աւելի բնորոշ նիւթ, ընկերութիւնը տուել է ոչ աւելի, քան տարեկան մի գիրք։ Եւ որպէսզի աւելի պարզ գաղափար կազմէք, թէ տարեկան մէկ գիրքը չէր սպառնում քանդել Ռուսաստանը, բաւական է աւելացնել, որ այդ ինքնուրոյն համարուող գրուածքները, մեծագոյն մասամբ, ոչ այլ ինչ են, եթէ ոչ տեղագրական կամ ազգագրական նիւթեր և գլխաւորապէս հայոց հին մատենագրութիւնից, գրաբար լեզուով, վերատպութիւններ, որոնք այնքան անմեղ են, որ երևի ջնջամոլ ցենզորները թոյլատրում էին նոյն իսկ առանց կարդալու։

Թարգմանական գրուածքները, ինչպէս և կոմպիլացիաները, աւելի քան „անվտանգ“ բաներ են — վէպիկներ, կենսագրութիւններ, գիտական զրոյցներ կամ բժշկական ու առողջապահական աշխատութիւններ, ինչպէս և դասագրքեր։ Բացի Շէքսպիրի մի քանի գրքերից, ինչպէս և մի-մի հատոր Դօդէից ու Մօպասանից, որոնց լաւագոյն էջերը, ի հարկէ, գրաքննիչը արգելել է, միւս բոլոր թարգմանութիւնները, քիչ բացառութեամբ, առնուած են ռուսաց գրողներից և ռուսաց գրականութիւնից։ Եւ եթէ նոյն իսկ եւրոպական գրողներից է, այդ էլ կատարուած է ռուսերէն թարգմանութիւնների միջոցով։

Ոչ մի փաստ, ոչ մի առիթ չկայ հեռաւոր կերպով անգամ պնդելու, որ ընկերութիւնը հետևել է կամ ունեցել է ոևէ քաղաքական կամ ազգային-կան տենդենցիա. — միակ տենդենցիան եղել է հայերէն գրքեր տպագրելը, գրքեր, որոնք յաճախ վերաբերում են ընթերցանութեան ամենաչոր ճիւղերին։ Եւ եթէ կայ մի երևոյթ, որ պարզ նկատելի է ընկերութեան հրատարակչական գործունէութեան ընթացքում, այն է, որ այդ հիմնարկութեան ղեկավարները ուզեցել են, որքան կարելի է, ծանօթացնել հայոց հասարակութիւնը ռուսաց գրողների և ռուս գրականութեան հետ և այդ շատ անգամ՝ ի վնաս գրքերի արժանաւորութեան։ Գուցէ այս է յանցանքը...

Ընվտանգ լինելով բովանդակութեան և տենդենցիայի կողմից, Հրատարակչական ընկերութիւնը վտանգաւոր չէր կարող համարուել և տուած գրքերի քանակութեան կողմից, եթէ մինչև անգամ նայելու լինենք այս գործունէութեանը այն „տարօրինակ“ տեսակէտից, որով ռուսաց կառավարութիւնը առհասարակ ցանկալի չէ համարում ընթերցանութիւնը։ Փաստ. — 21 տարուայ ընթացքում ընկերութիւնը տպագրել է 187 գիրք, ուրեմն միջին թւով, տարեկան $8^1/_2$ գիրք։

Տարեկան $8^1/_2$ գիրք, — դրանից էլ ի՞նչ կարող է լինել աւելի համեստ, աւելի անվտանգ։ Բայց գուցէ կարծողներ լինեն, թէ այդ գրքերը տպագրուել են եւրոպական գրականութեան մէջ սովորական դարձած քանակով, ամեն մէկը 20, 50 կամ 100 հազար, բազմաթիւ հրատարակութիւններով։ Միամիտ ենթադրութիւն։ Երկրորդ կամ երրորդ տպագրութեան արժանացել են միայն 4-5 հատ, մեծագոյն մասը տպագրուել է միջին թւով 1,200 օրինակ։ Կան գրքեր, որոնք լոյս են տեսել միմիայն 500 օրինակ։ 2-3 հազար օրինակ տը-

պագրել են ընդամենը 3 գիրք, և 5,000 օրինակ՝ մի փոքրիկ գրքոյկ „Խօլէրա“ անունով, որի մեծ մասը վաճառած է եղել տարածել ձրիաբար, որովհետև այն միջոցին այդ հիւանդութիւնը սպառնում էր կոտորածներ անել կովկասեան գաւառներում։ Վերջապէս աւելի չէր էլ կարելի տպագրել, քանի որ ընկերութեան բիւջէն հասնում էր միջին թւով միայն 5,000 ռուբլու, այսինքն այնքան, որքան ամեն տարի գողանում է իւրաքանչիւր „նորին գերազանցութիւն“...

Կոկիծ պատճառողը միայն այն չէ, որ փակում են մի երկու համեստ, բայց անպայման պիտանի հիմնարկութիւններ, այլև այն, որ այս նոր բռնութեամբ ևս կառավարութիւնը նոր վէրք բաց արաւ հայոց հասարակութեան առանց այն էլ վիրաւոր սրտում։

Մինիստրութիւնը, ի հարկէ չը հրատարակեց այն պատճառաբանութիւնը, որի վրայ հիմնեց իր վայրենի կարգադրութիւնը։ Այդպիսի մի բան հրատարակել — կը նշանակէ խայտառակուել, ծաղրի առարկայ լինել։ Եւ եթէ մի օր այդ գաղտնի դօկումէնտն էլ, ինչպէս շատ ուրիշները, արխիվների խորքերից դուրս գալով՝ դառնայ ընդհանրութեան սեփականութիւն, այն ժամանակ կը տեսնեն ամենքը, նոյն իսկ ամենաներողամիտները, թէ ինչ հրէշաւոր սուտերի և դժոխային ձգտման զոհ է գնացել մի հիմնարկութիւն, որ սկզբից մինչև վերջ եղել է օրինական, հեռու քաղաքական ձգտումներից, գործել է ցենզուրական ճանկերի տակ, ենթակայ ոստիկանական հսկողութեան, ներշնչուած ծայրայեղ զգուշութեամբ։

Եւ, յիրաւի, անմիտ է „տենդենցիա“ տեսնել այն բանի մէջ, որ հայը հայերէն գրքեր է կարդում, կամ որ մի ընկերութիւն ժողովրդին հասկանալի լեզուով և նրան մատչելի տառերով սովորեցնում է, թէ ինչ պիտի անել, երբ խօլերա է սկսուած կամ ինչ մի-

ջոցներ պիտի գործ դնել, երբ խաղողի վազերը վարակուած են ֆիլոքսերայով, կամ որոնք են այն ձևերը, որով պիտի խնամել շերամի սերմը կամ բամբակի բոյսը։ Ինքը կառավարութիւնը փակեց հարիւրաւոր դպրոցներ, չթողեց ժողովրդի մէջ լոյսի և ոչ մի կայծ. ինքը կառավարութիւնը ոչինչ չէ տալիս միլիոնաւոր ազգաբնակութեան, որը փեթում է տգիտութեան մէջ, զոհ գնում տարափոխիկ հիւանդութիւնների. ինքը կառավարութիւնը գանձարանից մի ռուբլի չէ ծախսում ժողովրդին մի գիրք, մի բրոշիւր, մի տպած թերթ տալու համար, և երբ այս նոյն հոգսը իր վրայ է վերցնում մի ընկերութիւն՝ կօպէկ-կօպէկ հաւաքած փողերով անդամավճարներից, երեկոյթներից և նուէրներից կազմուած գումարով, — նոյն այդ կառավարութիւնը արգելում է, կնիք դնում նրա դռների վրայ և յայտարարում փակուած, իբրև վնասակար, վտանգաւոր...

Ի՞նչ անուն տալ այդպիսի մի կառավարութեան։

Բնորոշ մի յիշողութիւն։ Սրանից տարիներ առաջ՝ Պետերբուրգից սենատօրական քննիչներ ուղարկուեցին նոր նշանուած նահանգները։ Եւ փաստերը քննելուց յետոյ, երբ „գերազանցութիւններից“ մէկը պատրաստում էր իր զեկուցումը՝ թէ „ամեն ինչ կարգին է“, աւելացնելով, որ „միապետութեան և ռուսաց յաղթական զօրքի շնորհիւ ցիվիլիզացիան քայլառ-քայլ առաջ է գնում“, միւսը՝ խղճահարուած, տարուած գէթ մի անգամ ճշմարտութիւն ասելու փափագով, համբերութիւնից դուրս եկած՝ բացականչեց. „Աւա՜ղ, մենք տարածում ենք ոչ թէ ցիվիլիզացիա, այլ սիֆիլիզացիա“ (մի բասպրօստրանիաեմ նէ ցիվիլիզացիու, ա սիֆիլիզացիու)։ Դառն, բայց միշտ կենդանի ճշմարտութիւն։ Եւ իրօք։ Չինաորականութիւնը և կաշառքով յղփացած չինովնիկութիւնը ամեն տեղ, ուր նոր է ոտք դնում, ամենից

առաջ տարածում է այդ տեսակ ախտերը — ինքը կառավարութիւնը, դրդուած „պետական տեսակէտներից“, գանձարանից ահագին փող է ծախսում նոր երկիրները մեծ թւով կանայք ուղարկելու, որպէսզի նրանք իրենց տաք գրկի մէջ հալեցնեն այն սառնութիւնը, որ նուաճուած երկրների ազգաբնակութիւնը ցոյց է տալիս տիրող բռնապետութեան։ Կենտրոնից բղխող առաջին հոսանքն է այդ։ Եւ երբ հասարակաց տների, գինեվաճառանոցների և չինովնիկական անբարոյականութեան միջոցով, սիֆիլիսը՝ շնորհիւ „բարեխնամ կառավարութեան“, աւերմունքներ է գործում նահապետական բարքերով սնուած անկիւններում, ու այդ ընդհանուր շփոթի մէջ դուրս են գալիս ընկերութիւններ, խմբեր, որոնք բրոշիւրների միջոցով — որպիսի՜ անմեղ միջոցներ — փորձում են կուռել այդ աւերիչ ախտի դէմ, հասկացնել ժողովրդին՝ թէ ինչ վտանգ է սպառնում նրան, — միահեծան կառավարութիւնը փակում է այդ հիմնարկութիւնները, իբրև վնասակար, հաստատելու համար այն խօսքը, թէ՝

„Մենք տարածում ենք ոչ թէ ցիվիլիզացիա, այլ սիֆիլիզացիա“։

Թող տարածուի ախտը. խաւարի և ապականութեան մէջ թող ամբողջ գիւղեր և քաղաքներ փթեն, միայն թէ չորանայ վտանգի աղբիւրը — գիրքը, որի իւրաքանչիւր տառը նկատւում է իբրև միկրոբ, որ ձգտում է կրծել, աւերել միահեծան իշխանութեան հիմքերը, նրա հանգիստ ապագան . . .

ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Երկիւղի նախազգացումը. — Թեմական դպրոցների խնդիրը.— Ինչ է ասում պատմութիւնը. — „Պոլօժենիա“. — Գաղտնի կոմիտէի ծրագիրը. — Պասկեվիչի եւ Բլուդովի կարծիքը. — Նիկոլայ կայսեր հրովարտակը. — Կասկածներ թեմական դպրոցների դէմ. — Արգելք նորերը բանալու. — Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան բացատրութիւնը. — Քաղաքական ակնարկներ:

Անցորդը կարդում է՝

„Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրոց“:

Եւ զարմացած նայում է Թիֆլիզի ժողովրդական փողոցներից մէկի վրայ կառուցուած անշուք, համարեա կիսաքանդ շէնքին, որի ճակատին գրած է Հայոց դպրոցի գունատ ցուցանակը: — „Միթէ այս է Ներսիսեան դպրոցը“, մրմնջում է նա: Անշուք դրսից, անշուք ներսից, զուրկ ամենափոքրիկ յարմարութիւնից, անհրաժեշտ դպրոցական ամեն մի հիմնարկութեան: Եւ ամեն մի հայ իրաւամբ սպասում ու պահանջում է, որ նիւթապէս հարուստ դպրոցի վարչութիւնը հոգար եթէ ոչ շքեղութեան, գէթ առողջապահիկ տարրական յարմարութեան մասին, այնքա՞ն պարտաւորական մատաղ սերնդի ֆիզիկական զարգացման համար: Հոգացել են և շարունակում են հոգալ: Տասն տարի է ծրագիրն են կազմում, նոր շէնքի տեղ և մակարդակ են պատրաստում, անվերջ լուրեր, թէ դպրոցի վարչութիւնը շուտով նոր շինութեան պիտի ձեռնարկի — բայց ապարդիւն: Այս

անմեղ, անվնաս խնդրի մէջ էլ անհրաժեշտ արգելք կայ։ Եւ իբրև հետևանք այս արգելքի, հասարակութեան մէջ պատում են անհաւատալու չափ տարօրինակ շըշուկներ։ Կաթողիկոսը՝ տեղեակ կառավարութեան տրամադրութեան, չէ թոյլատրում նոր շէնքի կառուցումը. —ասում են շատերը։ Եւ ինչո՞ւ կառուցանել, քանի որ դպրոցի գոյութիւնն իսկ կասկածի և վտանգի է ենթակայ, — պատասխանում են միւսները։ „Թեմական դպրոցներն էին մնացել, հիմի էլ նրանց օձիքից են բռնում“ — ահա սովորական, առօրեայ, յուսահատական խօսքերը, որ լսում են ամեն կողմից։

Թեմական դպրոցներ, — ահա հերթական զոհը։

Այն օրից, երբ անարգարութեան ներկայացուցիչները կարողացան ամենաանողորմ միջոցներով փակել տալ հայոց ծխական դպրոցները, թւով հարիւրաւոր, այդ նոյն օրից նրանք դարձրին իրենց աչքերը դէպի կանգուն մնացածները, դէպի հայոց հոգևոր դպրոցները, կամ, ինչպէս պաշտօնապէս անւանում են, դէպի „հայլուսաւորչական սեմինարիաները“։ Այստեղ էլ ինչպէս միշտ, նոյն տաքտիկը — սկզբում ակնարկ՝ թէ նրանք ոչ մի կանոնադրութեան չեն ենթարկւում, ապա կասկածներ՝ թէ նրանք հակակառավարչական են, ապա՝ եղած արտօնութիւնների զրկումն, և ի վերջոյ այն, որ կազմում է բռնութեան վերջնական գործողութիւնը — „Փակեցէք, թէ չէ՝ փակել կը տանք ոստիկանութեան միջոցով զէնքի ուժով“։

Ակնարկը արդէն եղաւ։

1900 թւի դպրոցական հաշւետւութեան մէջ կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձու Լեոնտիևսկի ահա ինչ ասաց „հայոց սեմինարիաների“ համար։

„Չորս դպրոցական հաստատութիւններ, որոնք ենթակայ են Էջմիածնի հայ Լուսաւորչական Մեհեանին, նշանաւոր են նրանով, որ միակն են ամբողջ Ռուսաստանում, որոնք գոյու-

թիւն ունեն՝ առանց կառավարութիւնից հաստատուած կանոնադրութեան, չնայած՝ որ նրանցից ամենակրտսերը հիմնուած է 27 տարի առաջ, իսկ աւագագոյնը, Թիֆլիզի սեմինարիան, բացուած է 1821-ին, այսինքն 79 տարի առաջ"։

Այդ խօսքերով Հայոց դպրոցների 25 տարուայ երդուեալ թշնամին, ի հարկէ որոշ նպատակով, համաձայն նորագոյն հրահանգների, փորձեց հիմք դնել բացարձակ յարձակման, որի հողը նա պատրաստել էր տարիներից ի վեր՝ դաղտնի զեկուցումների մէջ, ծածուկ գրագրութիւններով։ Եւ սխալւած չեն նրանք, որոնք ասում են թէ այդ օրուանից արդէն Հայոց թեմական դպրոցների խնդիրը սեղանի վրայ է։

Ո՞րն է այդ դպրոցների պատմութիւնը։

1836 թուին էր, որ Նիկոլայ I կայսրը հրատարակեց Հայոց եկեղեցու կառավարութեան հիմն կազմող օրէնսդրութիւնը — „Պոլօժենիան", որի մէջ ասւած է.

Յօդ. 112. „Ամ 'ի կրթութիւն մանկանց լուսաւորչական Հայոց եկեղեցոյ յատուկածաբանական դիտութիւնս՝ հաստատեն ի վանս Էջմիածնի և յիւրաքանչիւր լուսաւորչական Հայոց վիճակս Ռուսաստանի հոգևոր դպրոցք"։

Յօդ. 113. „Հոգևոր դպրոցն, որ 'ի վանս Էջմիածնի, կոչ ընդ անմիջական տեսչութեամբ լուսաւորչական Հայոց պատրիարք-կաթողիկոսին, իսկ այլ միւս դպրոցք կախին զվիճակային իշխանութեանց"։

Որպէսզի պարզ լինի այդ երկու յօդւածների ներքին իմաստը, անհրաժեշտ է մնել մի քանի պատմական բացատրութիւնների մէջ։

Երբ Էջմիածինը վերջնականապէս ընկաւ ռուսաց տիրապետութեան տակ, Պետերբուրգի կառավարութեան գործերից մէկը եղաւ որոշ օրէնքների տակ դնել Հայոց եկեղեցու վարչութիւնը։ 1829 թուի մարտի 15-ին, մինիստր Բլուդով հաղորդեց Թիֆլիզ, Կովկասի կառա-

վարիչ կոմս Պասկեվիչին, Նիկոլայ կայսեր ցանկութիւնը՝

„... Պատրաստել Հայ-լուսաւորչական եկեղեցու կանոնադրութեան մի նախագիծ՝ կարելւոյն չափ պահպանելով նրա նախկին օրէնքներն ու ծէսերը, որ անշուշտ շատ թանկ են ազգի համար“:

Այդ թղթի հիման վրայ, Պասկեվիչ Թիֆլիզում հաստատեց մի գաղտնի կոմիտէ, որի պաշտօնը պիտի լիներ կազմել Պոլժենիայի նախագիծը: 1830 թուի յունուարի 8-ին՝ գաղտնի կոմիտէին տուած ծածուկ հրամանագրի մէջ՝ Պասկեվիչ, ի միջի այլոց, այսպէս է նկարագրում իրերի դրութիւնը.

„Նախկին Մեծ-Հայաստանի՝ ռուսաց կայսրութեան հետ միանալովը՝ Էջմիածնի աթոռը և նրա հետ հայոց եկեղեցու գործերի ծայրագոյն կառավարութիւնն այժմ գտնւում են Ռուսաստանի սահմաններում: Հաւատի պաշտպանն ազատ թոյլտւութիւնը մեր բարերար արքաների առաջին կանոններից մէկն է: Ընդունելով իր հովանաւորութեան ներքոյ մի որևէ դաւանութիւն, կառավարութիւնը պարտաւոր է հոգում՝ մնալ նաև ի տեսութիւն եկեղեցու վարչական գործերի ներկայ դրութեան:

„Հասու լինելով հայոց եկեղեցու գործերի ընթացքին, ցաւելով տեսնում ենք, թէ որքան շեղւել է նա նախկին սահմանադրութիւններից և նախաւանդ կանոններից: Ամենքին յայտնի են այն անկարգութիւնները, որ սպրդել են հայոց հոգևոր գործերի մէջ: Այդ անկարգութիւնները առաջացել են Էջմիածնական աթոռի մահմեդականների լծի տակ նստելուց և այն ազդեցութիւնից, որ պարսից շահը ու Երևանի խաները ունեցել են հայոց եկեղեցու ծայրագոյն կառավարութեան վրայ: Այդ ազդեցութիւնն էր պատճառը, որ կաթողիկոսը և Էջմիածնի Սինօդը, որ հիմնւած էր 1807 թուին Դանիել պատրիարքից, զրկելով ունեցած իրաւունքներից, ճնշւած էին իրենց գործողութիւնների մէջ: Այդ ազդեցութիւնը, ակարացնելով հայոց հոգևորականների բարքը, նրանց մէջ երկպառակութիւններ ծագեցրեց. բարձրագոյն հոգևորականութեան անդամները կուսակցութիւնների բաժանուեցին. ներքին անհամաձայնութիւնները՝ աճելով խորամանկ անձանց թելադրութեամբ, որոնք դրա մէջ իրենց շա-

հերն էին որոնում, տարածուեցին հեռաղհեռ և միւս հոգևորականների մէջ։ Եկեղեցական ատորին պաշտօնեաները առհասարակ յետին ազիտութեան մէջ են գտնուում և նրանց թիւը այնքան բազմացել է, որ ծանրաբեռնում է ժողովրդին։ Մի քանի վանքերի աբեղաներ, որոնց հետ անտանելի խստութեամբ են վարուում, պատրաստ են թողնել մենաստանները և ցրուել այն ինչ եկեղեցու արդիւնքները, որոնց քանակութեան մասին տեղեակ չեն ոչ Միսօդը և ոչ ծայրագոյն պատրիարքը, ժողովուում են և վատնուում ինքնակամ՝ ըստ հաճոյից և առանց հաշուի, միանգամայն չծառայելով իրենց նպատակին։ Կամաւոր անուանուած նուէրները ժողովելիս՝ հաղարաւոր անկարգութիւններ են կատարուում. զանազան պատճառաբանութեամբ, սպառնալիքներով, բռնութեամբ, մինչև անգամ բանադրանքով՝ կողոպտում են քաղաքների և գիւղերի խեղճ ու աշխատասէր բնակիչներից նշանաւոր գումարներ, որ գործ են դրուում ոչ թէ քրիստոնէական ձեռնարկների համար, այլ փառասէրների հաճոյքին բաւարարութիւն տալու։ Ցաճարները և մենաստանները ամայութեան մէջ են, և անխնամ մնացած՝ փոքր առ փոքր քայքայուում են։

„Ընդունելով, թէ հայոց գործերի այսօրինակ դրութիւնը չպէտք է այլևս այսպէս մնայ, քանի որ յիշեալ եկեղեցին ազատած է անհաւատների լծից և ազգեցութիւնից, և թէ այս տեսակ խանգարմունքներն շարունակելուց կարող են շատ անախորժ հետևանքներ յառաջանալ — ես ինձ պարտաւոր համարեցի հաղորդել օտար գաւառութիւնների մինիստրութեանը՝ այս խնդրի մասին իմ ունեցած մի քանի մտադրութիւնները, որ և մինիստր Բլուդով զեկուցել է Թագաւոր Կայսեր։ Նորին Կայսերական Մեծութիւնը՝ 1828 թուի դեկտեմբերի 25-ին բարեհաճեց հրամայել, որ օտար գաւառութիւնների մինիստրը արտաքին գործերի մինիստրի հետ միասին կազմեն ընդհանուր կանոններ, որոնց վրայ պիտի հիմնուի գլխաւոր հոգևոր կառավարութիւնը Էջմիածնում։

„Ենթադրելով, որ այսպիսի մի վսեմ խնդիր պահանջում է, որ ջանասիրութեամբ և ուշադրութեամբ քննուի ու մշակուի, ես կարևոր համարեցի այդ նպատակով կազմել մի առանձին գաղտնի կոմիտէ“։

Հրամանագիրը եզրակացնում է այսպէս.

„Պէտք է բարոյապէս բարձրացնել հոգևոր ատիճանը և

այդ եղանակով աւելացնել նրա յարգանքը ժողովրդի աչքում, որպէսզի հոգևորականութիւնը կարող լինի իր սեփական օրինակով ամրապնդել բարոյականութիւնը ժողովրդի մէջ։ Դրա համար հարկաւոր է կշռադատել՝ թէ ինչ եղանակով հիմնւեն դպրոցներ, որ կարող լինեն պատրաստել հոգևոր կոչման նւիրւող հայերին"։

Այս քաղաքներից շատ պարզ է, թէ ինչ նպատակի պիտի ծառայէին հայոց հոգևոր դպրոցները, որոնց հիմնարկութիւնը, իբրև օրինական կարիք, մտցրւած է պոլժենիայի մէջ և շնչւած նոյն իսկ ռուս կառավարութեան կողմից։

Պոլժենիան աւելի հիմնաւոր դարձնելու համար՝ Պետերբուրգում չբաւականացան Թիֆլիզի գաղտնի կոմիտէի և Պասկեվիչի ծրագրով, որ շատ թերի էր և վայրիվերոյ։ Մայրաքաղաքում կազմւեց մի յատուկ կոմիտէ, որը մի քանի տարի գործ դրեց այդ ծրագիրը մշակելու վրայ՝ աշխատելով, որքան կարելի է, յարմարւել հայոց եկեղեցու կարգերին և դրա հետ միասին բարձրացնել Էջմիածնի և նրա կաթողիկոսի վարկը՝ „քաղաքական տեսակէտով" իսկ։ Ծրագիրը ներկայացւեց մինիստրների խորհրդի քննութեան և վերջապէս 1836 թւի մարտի 11-ին՝ Նիկոլայ կայսրի հաստատութեան։ Կայսրը այս առիթով ուղղեց կառավարիչ սենատին հետևեալ հրովարտակը.

«Այն օրից, որ Հայաստանեայց եկեղեցու ծայրագոյն պատրիարքի եւ ամենայն հայոց կաթողիկոսի աթոռանիստ եղած Էջմիածինը մեր զօրքերի ձեռքով գրաւեցինք եւ հայոց աշխարհի հետ միատեղ Մեր կայսրութեան մասը դարձրինք, հարկ համարեցինք այդ եկեղեցու գործերի եւ պաշտօնեաների կառավարութիւնը հաստատուն եւ բացայայտ սկզբունքների վրայ դնել։ Ուստի հրամայեցինք, որ բուն իսկ տեղի վրայ ամրողջ Սահմանադրութեան մի նախագիծ պատրաստի Հայաստանեայց եկեղեցու գործերի կառավարութեան համար, եւ դրա հիմք լինեն նոյն եկեղեցու սեփա-

կան վաղեմի կարգադրութիւնները՝ համաձայնեցրած Մեր կայսրութեան ընդհանուր օրէնսդրութեան հետ։

«Նախագիծը, պատրաստելուց յետոյ՝ Մեր հրամանով կազմուած մի յատուկ ժողովի քննութեան տակ ձգուեց. յետոյ նորից էջմիածին ուղարկուեց, որպէսզի նայի, թէ պատշաճ եւ ամբողջ է արդեօք, եւ միանգամայն նրա մի քանի յօդուածների վերաբերմամբ կաթողիկոս հայրապետի հետ խորհրդակցի։

«Իսկ այժմ՝ նոյն Սահմանադրութիւնը Մեր կայսերական խորհրդարանի մէջ նորից քննուած լինելով, հաստատում ենք այն, եւ այս հրովարտակի հետ միատեղ Կառավարիչ սենատին ուղարկելով՝ հրամայում ենք, որ հարկ եղած կարգադրութիւնները կատարուեն»։

11 Մարտ 1836 ՆԻԿՈԼԱՈՍ

Ս. Պետերբուրգ

1836 թուի ապրիլի 23-ին մի յատուկ գրութեամբ՝ մինիստր Բլուդով հաստատուած Պօլօժենիան ուղարկեց Կովկասի կառավարիչ Բարօն Բոզէնին՝ հասցնելու Յովհաննէս կաթողիկոսին ի գործադրութիւն, խնդրելով հաղորդել, թէ ինչպէս պիտի սկսի գործադրութիւնը։ Բարօն Բոզէն, կատարելով այդ յանձնարարութիւնը, խնդրեց կաթողիկոսից հաղորդել, թէ ինչ եղանակով է ուզում՝ սկսել իր ձեռնարկները։ Յովհաննէս կաթողիկոսը պատասխանեց և սեմինարիաների վերաբերմամբ յայտնեց հետեւեալը.

«Թեմական առաջնորդներին կը յանձնուի որոշել, թէ եղած արդիւնքներով որտեղ պատշաճ կը համարեն հիմնել Պօլօժենիայի պահանջած հոգեւոր սեմինարիաները, եւ կազմել թէ աւանդելիք ուսման եւ թէ ներքին վարչութեան ծրագիրը եւ այդ բոլորը ներկայացնել Սինոդին՝ ի հաստատութիւն»։

Գանելով այդ կարծիքը համապատասխան Պօլօժենիային և ցանկալի, Բարօն Բոզէն իր կողմից, 1836 թուի հոկտեմբերի 27-ին, զեկուցեց մինիստրին՝ կրկնելով, որ „սեմինարիաներ բանալու և կանոնադրութիւնը պատ-

բաստելու հոգսը պէտք է, ըստ Պոլոժենիայի, յանձնուի թեմական առաջնորդներին", աւելացնելով նաև որ՝

«Թեմերի միւս տեղերումն էլ կարելի կը լինի, համաձայն միջոցների եւ պահանջի, հաստատել գաւառական եւ ծխական հոգեւոր դպրոցներ։ Իսկ Էջմիածնում օգտակար կը լինէր բանալ բարձրագոյն հոգեւոր ուսումնարան՝ Ակադեմիա անունով։ Ակադեմիայի նպատակը պիտի լինի պատրաստել հոգեւոր հովիւներ՝ բարձր պաշտօններ վարելու թէ Ռուսաստանում եւ թէ մանաւանդ արտասահմանում, ուր նրանց լուսաւորիչ ազդեցութիւնը այնտեղի հայերի վրայ հոժարապատասխան կը լինէր մեր կառավարութեան նպատակներին»։

Բարձր Բոզէնի գրութեանը մինիստր Բլուդով պատասխանեց նոյն 1836 թուի դեկտեմբերի 13-ին։ Համաձայնութիւն յայտնելով Բոզէնի կարծիքներին, մինիստրը իր կողմից շեշտում է.

«Թեմական առաջնորդների կարգադրութիւնները՝ սեմինարիաներ հաստատելու, ինչպէս եւ նրանց մէջ աւանդելիք ուսման չափ ու եղանակի մասին, պէտք է ներկայացուեն Սինոդին՝ ի հաստատութիւն»։

Իսկ ակադեմիայի մասին ասում է.

«Ձեր մտադրութիւնը՝ Էջմիածնում Ակադեմիա անունով բարձրագոյն հոգեւոր վարժարան հաստատելու մասին, ըստ իր նպատակին, ի հարկէ շատ օգտակար է։ Բայց իրագործել այդ միտքը, իմ կարծիքով, կարելի կը լինի միայն այն ժամանակ, երբ կը հիմնուեն եւ կարելոյն չափ կատարելագործութեան կը հասնեն հայոց սեմինարիաներ եւ ուսումնարանները, որ գրեթէ չկան մեզանում»։

Հարցնում ենք.—

Ի՞նչ են ցոյց տալիս այս քաղուածքները, այս պաշտօնական դօկումենտները։ — Շատ բան, որոնց հասկանալը, տարաբախտաբար, պարտաւորական չէ արդի պօլիտիկոս-շինովնիկներին, որոնց համար վաղուց գոյութիւն չունի ոչ պատմութիւն և ոչ էլ պատմա-

կան տրամաբանութիւն։ Բայց մի բան, որ նրանք պէտք է հասկանան, այդ այն է, որ հայոց դպրոցների և յատկապէս սեմինարիաների բացումը հայոց հոգևորականութեան „ապօրէն“ ձեռնարկը չէր, այլ հետևանք յայտնի, դրական և նոյն իսկ ստիպողական որոշումների, որոնք ծառայել են թէ իբրև հիմք Պոլսոյ ժենիայի և թէ նոյն իսկ մտցրուած են նրա մէջ իբրև կանոն, իբրև օրէնք, որը գործադրւում է այսքա՞ն տարի, 1836 թուականից ի վեր։

Օրէնքի համաձայն բացուած հայոց հոգևոր սեմինարիաները այժմ չորս են. — Ներսիսեան դպրոցը Թիֆլիզում, հիմնուած Ներսէս Աշտարակեցու ձեռքով 1824 թուի դեկտեմբերի 1-ին, Երևանի թեմական դպրոցը՝ հիմնուած 1837 թ. սեպտեմբերի 2-ին, Շուշու կամ Ղարաբաղի թեմական դպրոցը, Նոր-Նախիջևանի հայոց սեմինարիան՝ հիմնուած 1879-ին, բացի դրանից կայ Էջմիածնի հոգևոր ճեմարանը՝ հիմնուած Գէորգ կաթողիկոսի ձեռքով 1876-ին։

Պոլսոյ ժենիայի համաձայն՝ իւրաքանչիւր թեմ պէտք է և կարող է ունենալ իր կենտրոնական, հոգևոր թեմական դպրոցը։ Այդ թեմերը վեց են, — Բեսարաբիա-Նախիջևանի, Աստրախանի, Թիֆլիզի կամ Վրաստանի, Երևանի, Շուշու և Շամախու թեմեր։ Շամախու և Աստրախանի թեմերը մինչև այժմ էլ չունեն թեմական դպրոցներ։ Վերջինում մի քանի տարիէ արդէն, ինչ փորձեր են լինում հիմնելու հայոց սեմինարիա, սակայն դժուար թէ կառավարութեան այժմեան թշնամական տրամադրութեան ժամանակ աջողի այդ գործը։ Այդպիսի կարծիք յայտնելն անհիմն չէ, որովհետև սրանից մի քանի տարի առաջ, երբ փորձ եղաւ հիմնելու Բագուում Շամախու թեմի սեմինարիան, կառավարութիւնը ոչ միայն անհամակիր եղաւ, այլև՝ քաղաքական խորհրդաւոր՝ կասկածի տակ դրեց Խորէն եպիսկո-

պոս Ստեփաննէին, որը գնացել էր Բագու՝ հանգանակութիւն սկսելու այնտեղի հայերի շրջանում յօգուտ ապագայ դպրոցի։ Հսկողութիւնն ու կասկածը այնքան սաստկացան, որ հանգանակիչ եպիսկոպոսը ստիպւեց թերատ թողնել սկսած գործը, մի քանի ամիս յետոյ „բացատրութեան“ ենթարկւեց կառավարչապետի պալատում և ի վերջոյ մտցրւեց „կասկածելի“ հայերի ցանկը . . .

Գաղտնիք չէ այլևս, որ հակառակ նոյն իսկ Պոլսոյ ժենիայի, այսինքն հակառակ գոյութիւն ունեցող օրէնքի, կառավարութիւնը չի ուզում թոյլատրել նոր սեմինարիաների բացումը և իբրև լոգիկական շարունակութիւն այդ „քաղաքականութեան“՝ ձգտումն է ցոյց տալիս նոյն իսկ եղածները սղմելի, կամ եթէ կարելի է՝ փակելի, ինչպէս այդ արդէն պարզ երևում է նորագոյն փաստերից և գաղտնի գրագրութիւններից։

Այդ նպատակին հասնելու բոլոր միջոցները բացարձակապէս ապօրինի են, խարդախ և նոյն իսկ բռնաւոր։ Հայոց սեմինարիաները երէկ չէ, որ հիմնւած են. նրանցից մէկը արդէն տօնեց իր 75-ամեակը, միւսը՝ իր 50 ամեակը, երրորդը՝ իր 25-ամեակը։ Այդքան տարիների ընթացքում նրանք ղեկավարւել են որոշ կանոնագրութիւնով՝ մշակւած թեմական առաջնորդների ձեռքով, հաստատւած Սինոդի և կաթողիկոսի կողմից և հաղորդւած բարձր կառավարութեան ի վաւերացումն։ Այդ կանոնագրութիւնները հրատարակւած են և քաջ յայտնի են թէ հասարակութեան և թէ կառավարութեան գործակալներին։ Հարց. ինչ հիման վրայ, այն՝ ինչ անկանոն և ապօրինի չէ եղել 75-50-25 տարւայ ընթացքում, այժմ, տարիների ահագին շարքեր անցնելուց յետոյ, յանկարծ դառնում է ապօրէն, անկանոն, նոյն իսկ անթոյլատրելի։

Միամիտ չլինենք։ Այս բոլորի արմատը անկա-

նոնութեան մէջ չէ, այլ „քաղաքականութեան“ մէջ, որի աւերիչ քամին այնքան ուժգնութեամբ է փչում վերջին տարիներում,— մի քամի, որի ստեղծած հոսանքը այժմ ապօրինի և անկանոն է համարում այն բոլորը, ինչի հետ կապուած է հայոց կաթողիկոսի, Էջմիածնի կամ ուրէ թեմական անունը, որ չի վարանում քարոզելու, թէ այն, ինչ վճռւում և կարգադրւում է Էջմիածնի մէջ, ապօրինի է, անվստահելի և կասկածելի, մոռանալով, որ նոյն այդ Էջմիածնի մէջ է հաստատուած հռչակաւոր պրոկուրորը — „կառավարութեան աչքը“, որ տեսնում է ամէն բան, զեկուցանում է ուր հարկն է ամէն մի շարժուածք և դնում է իր վետօն, երբ անցած-դարձածը դուր չէ գալիս ոչ միայն օրէնքին, այլև իր քմահաճոյքին, տրամադրութեանը:

Ապօրինութիւն...

Դա հեքեաթ է, նազլ, առակ: Դա փոշի է՝ բռնութիւնը ծածկելու: Սովորական միջոց այժմեան Ռուսաստանում՝ պատճառաբանելու ուրէ չափից դուրս անարդար և անխիղճ արարք: Դրան դիմում են ամենքը: Դրան դիմեց Հարիւրմեկերորդ անգամ և „Եանովսկին ու Ընկ.“, թեմական դպրոցների հարցում հրապարակ գցելով կանոնադրութեան խնդիրը: Դրան կը հետևեն յաջորդաբար „քաղաքական կատակերգութեան“ միւս գործողութիւնները, որպէսզի ամէն ինչ կատարեալ լինի:

Այդ գործողութիւններից մէկը արդէն տեղի ունեցաւ: Ահա թէ ինչ հաղորդեց Նորերս Պետերբուրգի մամուլը.

«Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը պարզաբանեց, որ հայ-լուսաւորչական սեմինարիաները եւ ճեմարանը աւարտածները իրաւունք չունեն՝ 1) Դասատու լինել հայոց եկեղեցական-ծխական դպրոցներում եւ 2) Ազատ մնալ զինուորական ծառայութիւնից»:

Դա հրապարակական և միաժամանակ պաշտօնական մի անամօթութիւն է, որ իրեն թոյլ է տալիս մինիստրութիւնը։ Այո՛, անամօթութիւն։ Որո՞նք են այն եկեղեցական-ծխական դպրոցները, որտեղ իբրև թէ դասատու պիտի լինեն հայոց թեմական դպրոցներից և ճեմարանից աւարտողները։ Նրանք փակւած են դեռ 1897 թւին, նոյն մինիստրութեան գիտութեամբ և հաւանութեամբ։ Իսկ այն մի քանի կիսակենդան ուսումնարանները, որոնք վերաբացւեցին, արդէն կատարելապէս ենթարկւում են կառավարչական իշխանութեան, և ոչ մի մարդ չէ կարող այնտեղ ուսուցիչ լինել՝ առանց ուսումնարանական շրջանի հոգաբարձուի համաձայնութեան, առանց որոշ ցենզի, որը ձեռք բերելու համար սեմինարիա աւարտողները պէտք է յատուկ քննութիւն տան ռուսաց դպրոցներում։ Ի՞նչ միտք ունի ուրեմն այս ուշացած „պարզաբանութիւնը“, մինիստրական այս ստախօսութիւնը։

Մնացել էր միւս արտօնութիւնը — զինուորական ծառայութեան արտօնութիւնը։ Քիչ յետոյ այդ էլ ոչնչացրւեց։ — Երբ 1887 թւին Կովկասը ենթարկւեց զինուորագրութեան, հայոց թեմական դպրոցները և ճեմարանը, իբրև միջնակարգ դպրոցներ, յատուկ օրէնսդրութեամբ ստացան նոյն արտօնութիւնը, ինչ որ ռուսաց սեմինարիաները, կաթոլիկ հոգևոր դպրոցները և միջնակարգ պետական վարժարանները, — այն է՝ այդ հիմնարկութիւններն աւարտողները իրաւունք ունեն ծառայելու ոչ թէ հինգ տարի, այլ միայն 2 տարի։ Այդ օրէնսդրութիւնը հրատարակելուց հաղիւ 13 տարի անցած, կառավարութիւնը՝ հայոց սեմինարիաներին վերջին հարւածը տալու համար՝ զրկում է նրանց այդ իրաւունքից ևս։

Դարձնել թեմական դպրոցները ա ն ն պ ա տ ա կ ու զուրկ ա ր տ օ ն ո ւ թ ի ւ ն ն ե ր ի ց և այդպիսով ստի-

պել ժողովրդին չդիմել դէպի այդ հիմնարկութիւնները, —ահա այդ բռնաւոր խարդախութեան նպատակը:

„Ականը լաւ փորելու“ համար՝ կասկածներ յարուցանելու գործն էլ չէ մոռացուած: Քանի մի տարի առաջ, երբ Շերեմետեվ մեռած էր և կառավարչապետի պաշտօնը ժամանակաւորապէս վարում էր իշխան Ամիլախվարի, վրացի զօրապետը, յայտնի շրջաններում յարմար ժամանակ համարեցին մի քանի հարուածներ ևս տալ, լաւ համոզուած, որ իշխան Ամիլախվարի՝ անտեղեակ գործերին, պիտի ստորագրի... Եւ ահա մի օր՝ իշխան Ամիլախվարիի ստորագրութեամբ հրաման է գալիս Թիֆլիզի Ներսիսեան դպրոցի վարչութեան՝ անմիջապէս արձակել երկու ուսուցիչ՝ աւարտած ռուսաց համալսարանում, իբրև քաղաքականապէս անվստահելի մարդիկ: Հրամանը խկոյն կատարուեց: Աշակերտները հրճուանքի մէջ էին: Երկու հարուած մի անգամից. — նախ՝ մի ապացոյց, որ թեմական դպրոցներից մէկը անվստահելի ուսուցիչներ է պահում; և երկրորդ՝ մի հարուած կաթողիկոսին, որ իրեն „երևակայում է“ թեմական դպրոցների լիազօր տէր և պատասխանատու... Արձակուած ուսուցիչները, սրտաբեկ, յուսահատ մնածում էին՝ „Ինչո՞ւ համար, ի՞նչ ենք արել“: Ոչոքից ոչ մի բացատրութիւն: Եւ ահա մի օր Նրանցից մէկը, յոյս դրած պաշտօնականութեան վրայ, դիմում է իշխան Ամիլախվարիին խնդրելու՝ բացատրել իր յանցանքը: — „Ես ինքս էլ չգիտեմ“, պատասխանում է բարեմիտ ծերունին՝ յուզուած մի այպիսի խիստ կարգադրութիւնից, որի պատճառը իրեն բոլորովին յայտնի չէր, թէև կրում էր իր ստորագրութիւնը: — „Ես կը հարցնեմ Միցկեվիչին, դիւանատան կառավարչին“, աւելացնում է նա: Եւ երևի հարցրեց ու Նրան պատասխանեցին, որ „այդպէս պիտի լինէր“... Ու ծերունին խոնարհուեց „Հայրենիքի պաշտպանների“ անբացատրելի բացատրութեան առաջ...

Այդ փաստը միակը չէ։ Ուսուցիչներ հեռացնելու կամ չընդունելու ուրիշ շատ դէպքեր են եղել։ Մէկին չեն թոյլ տալիս ուսուցիչ կարգել, որովհետև Եւրոպա է ուսում առել. միւսին առաջարկում են չընդունել, որովհետև ոստիկանութիւնը լաւ կարծիք չունի նրա մասին. մի ուրիշը չէ կարող դասեր տալ, որովհետև ուսանող ժամանակ „աղատ մտքեր“ է դաւանել և այլ հաղար ու մի պատրուակներ։ Կասկածելի է նոյն իսկ աշխարհական տեսուչ նշանակելը։ Վստահութիւն չկայ ոչ միայն դէպի ուսուցիչները, այլ և սովորող պատանիները։ „Հայոց սեմինարիան է աւարտել“, ակնարկում է բաղմախորհուրդ կերպով ոստիկանը։ Կասկածելի է մինչև իսկ — ո՜հ, որքան դժուար է հաւատալ — դպրոցական նոր շինութիւն կառուցանելը։

Կառավարութիւնը միջամտում, արգելում է ամեն ինչ, իսկ օրէնքի մէջ շարունակում է գոյութիւն ունենալ այն դատարկ խօսքը, թէ թեմական դպրոցների կամ ճեմարանների տէրը և պատասխանատուն հայոց կաթողիկոսն է կամ հոգևոր իշխանութիւնը... մինչև որ կը հասնի բացարձակ հարուածի ժամը, երբ ներքին գործերի մինիստրը կը յայտարարէ. „Հրատարակուած է նոր ծրագիր հայոց թեմական դպրոցների համար. — այդ ծրագրով բոլոր առարկաները պիտի աւանդուեն ռուսերէն, բացի լուսաւորչական կրօնը և հայոց լեզուն“։ Եւ մի քիչ յետոյ մի ուրիշ հրաման՝ ուղղած ոստիկանութեան. „Փակել հայոց թեմական դպրոցները՝ նոր ծրագիրը չգործադրելու պատճառով“...

Հեռո՞ւ են արդեօք այդ օրերը։

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԾՈՒՐՋԸ

(ՏԱՄՆՄԻԿԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Դարերի կոթողը. — Գրոհ մահմեդական տիրապետութեան դէմ. — Ներսէս Աշտարակեցու դիմումը հայութեան. — Էջմիածնի հաստակրանքը դէպի ռուսաց տիրապետութիւնը. — Թիւրքահայերի քաղաքական արժէքը. — Մատթէոս եւ Գէորգ կաթողիկոսների շրջանը. — Հարուածներ Էջմիածնի իրաւասութեան. — Փաստեր. — Բարոն Նիկոլայի գաղտնի զեկուցագիրը:

Ճամբորդի աչքերը ուղղած են դէպի Մասիս, դէպի վեհապանծ, գեղանի լերան բարձր գագաթը:

— Հրէն է...

Եւ նա դարձնում է աչքերը դէպի ներքեւ, նայում է դէպի առաջ, ուր, հեռաւորութեան աղօտի մէջ, նկարուած են սրածայր գմբէթներ, կարծէք, օդի մէջ հաստատուած:

Եւ գեղջուկը խաչակնքում է երեսը:

Մասիսի դարեւոր ընկերն է դա, Էջմիածինը: Հին-հին դարերի ժառանգ, արիւնով ու կրակով շաղախուած մի հնութիւն, որ հաւատացեալ հօտին այնքա՜ն դժբախտութեան հետ միասին՝ կրօնական պայքարի այնպիսի խորունկ ուժ ներշնչեց, մնաց դիմացկուն, համբերատար բիւրաւոր փոթորիկների դիմաց, յաճախ անզգայ՝ ինչպէս ձիւնապատ կատարը Հարեւան Հսկայի...

Տասնեհինգ դարու պատմութիւն կայ այդ աղքատ „քրիստոնեայ“ գիւղերի, այդ վանքապատ վայրերի շուրջը: Ահա աւերակներ, ուր, թերեւս, հեթանոս Հայաս-

տանը ողբաց իր կործանումը՝ ընկած նորաբողբոջ, բայց մոլեգին վարդապետութեան հաբաածներից։ Ահա վանքեր, ուր մանուկ քրիստոնէութեան կրակով բռնուած օրիորդներ՝ Շողակաթ, Հռիփսիմէ՝ իրենց անձը դրեցին նրա սեղանի վրայ։ Ահա մի ցեխոտ, ապքատ գիւղ — Վաղարշապատ է դրա անունը,—որ երբեմն Հայկական անկախ թագաւորութեան մայրաքաղաքն էր։ Ահա քիչ հեռու՝ ինքն այն տաճարը, ուր նորադարձ հօտի բորբոքած երևակայութիւնը հեղինակեց Մ ի ա ծ ն ի Է Ջ Ը, կանգուն արձանը այն տխուր պատմութեան, որ կոչւում է քրիստոնէութեան պայքար մահմեդականութեան դէմ...

Ողբա՜ն զարհուրելի, ողբա՜ն կսկծալի էր այդ պայքարը։ Դարեր շարունակեց նա, դարերի պատմութիւն կազմեց, դարեր լցրեց իր արիւնով ու սոսկումներով, իր ախերով ու ողբով։ Եւ երբ, 19-րդ դարի սկզբին, բորբոքեց վ ր ի ժ ա ռ ո ւ հսկայական կռիւը՝ չափազանց առաջացած մահմեդականութեան դէմ մի կռիւ, որի առաջապահները կանգնած էին մի կողմից յունական կղզիների վրայ և միւս կողմից կովկասեան լեռների սահմաններում, բազմատանջ հայկական եկեղեցին, գըլուխ առած իր կենտրոնը — Է ջ մ ի ա ծ ի ն ը — նոյնպէս նեռւեց այդ կռւի մէջ։

Եւ այն օրերին, ռուսական զօրքը՝ իբր դրօշակակիր ռուս ժողովրդի ցասման՝ ընդդէմ մահմեդական տիրապետութեան, առաջ խաղաց դէպի կովկաս։ Քրիստոնեայ Վրաստանի հետ միասին, քրիստոնեայ Ադարատեան երկիրն էլ հասած համարեց փրկութեան ժամը։ Հայութիւնը իր վրայ առաւ ռ ա զ ե ց ո ւ յ ց ի դերը մի երկրի մէջ, որ իր քրտինքով էր ողողած, բայց որը անծանօթ էր եկեղեցի տիրապետողին։ Վրաստանում այդ կատարեց զ ի ն ա ս է ր ա զ ն ա կ ա ն ո ւ թ ի ւ ն ը, Հայաստանում՝ խ ա չ ա կ ի ր հոգևորականութիւնը, որ

գերիշխող ուժն էր կրօնական պայքարի այդ շրջանում. . . Եւ ժամանակի հայկական ամենաքաջ գործողը, միաժամանակ ամենատաղանդաւոր քաղաքագէտը իր ժողովրդի մէջ, Ներսէս Աշտարակեցին՝ իր ձեռքն առաւ շարժման դրօշը։ Երևացին հայ կամաւորների խմբեր։ Եւ ոգևորուած Ներսէսը 1826-ին այսպիսի կոչ ուղղեց իր հօտին.

« Հայե՛ր,

Հասնում է ժամը Արարատեան երկրի եւ հայ ժողովրդի ազատութեան։ հասնում է ժամը, երբ նախախնամութիւնը պիտի վերականգնէ իր նախկին անկախութիւնը։ Ոտի կանգնեցէք, ապստամբեցէք, քաջարի հայեր, թօթափեցէք պարսկական լուծը, ցնծացրէք աղեղարդ Մասիսը, արեամբ ողողեցէք մայրենի երկիրը, ապա ապրեցէք ընդմիշտ ազատ եւ անկախ։

Ժամ է, ժամանակ։

Առաջ։ այժմ կամ երբէք »...

Արաքսի սգաղգեաց ափերին արթնացող հայութիւնը քաջութիւններ գործեց և ռուսական տիրապետութեան համար իր անձնուիրութեան անջնջելի ապացոյցներ դրոշմեց այն հողի վրայ, ուր պարսիկ աշխարհը օրհասական գալարումներ էր կատարում՝ նահանջի չենթարկուելու համար։ Երազի օրեր էին։ Ներսէսը, իր ոգևորութեան աղբիւր էր շինել այն խոստումները, պաշտօնական և գաղտնի, որ տրւում էին Պետերբուրգից, յանուն հայկական ինքնավարութեան Արարատեան երկրում, որը լեցւում էր, շնորհիւ քաղաքագէտ վեղարաւորի, հայ գաղթականներով, եկած պարսկահպատակ վայրերից։

Հայկական ինքնավար նահանգներ, ազատւած եկեղեցի, մահմեդականութիւնից փրկւած Էջմիածին, քրիստոնեայ հովանաւորութիւն, — ո՜հ, որքա՜ն գեղեցիկ թւացին այդ խօսքերը, և որքան հրապուրիչ՝ ապագայ հեռանկարը...

Արարատեան նահանգի տիրապետութիւնից մի քանի տարի միայն անցած, 1837-ին, Նիկոլայ I կայսրը այցելեց Էջմիածինը, նորանուաճ երկրի „սիրտը“, և „սրբազան“ լեռը։ Նա անցաւ Ախալցխայի վրայով։ Այդ փոքրիկ, թիւրքաց լծից նոր ազատուած քաղաքում՝ կայսրին ներկայացաւ Հայկական գաղթականութեան նշանաւոր ղեկավար Կարապետ արքեպիսկոպոսը, և մօնաստրի այն խօսքին՝ „Ցայտնեցէք, ի՞նչ կը կամենայիք ինձանից“, պատասխանեց.

« Այս մի բուռն հայ ժողովուրդը պաշտպանեցի իմ թոյլ ուժերով մահմեդական երկում, մինչ բերի քո հզօր թեւերի տակ։ Այստեղ, մեծ արքայ, դու եղիր նոցա հայրը եւ պաշտպանը։ Իմ հայ ազգը քեզ եմ յանձնում եւ քեզ—Աստծուն »։

Հազիւ մի ամիս էր անցած, երբ Նիկոլայ I հասաւ Հայոց կրօնական կենտրօնը։ Յովհաննէս կաթողիկոսը, Նիկոլային ուղղած ողջոյն-ուղերձի մէջ, ի միջի այլոց, այս խօսքերն է ասում.

« . . . Վերջապէս կատարեցաւ ակնկալութիւն Քեւ փրկեալ Հայաստանի։ Ահա կաս արդէն առ սեղանաւ տաճարիս, յորում ի տարուց անտի հանդերձեալ է Քեզ օրհնութիւն երկնից։ Ահա տեսանեմք զամենասիրելի թագաւորն մեր եկեալ կատարելագործել զհաստատութիւն՝ զոր պարգեւեալ է աստուածային տաճարիս . . Ցայսմ միաբանական տօնախմբութեան մերում, վասն այցելութեան Քոյ հինաւուրց տաճարիս այսմիկ սրբոյ, եկեղեցիս մեր սուրբ՝ մատչի առաջի Քոյ սիրալիր յարգութեամբ. ի տաճարիս այսմիկ ընդառաջ ելանէ զրկախառն, եւ ինքնին իսկ արկանի առ Քեզ անձնծայութեամբ եւ աղերսանօք, որպէսզի ընկալցիս զնա յարքայական գիրկ քոյ »...

Այդ տեսակ խօսքեր, իբրև արտայայտութիւն ընդհանուր տրամադրութեան, երբեմն նոյն իսկ ծայրայեղ շեշտով, ռուսական տիրապետութեան սկզբներում յաճախ լսեցին Հայ ժողովրդի հոգևոր ներկայացուցիչնե-

բից եկեղեցիներում, հանրային դիմումների մէջ, կոնդակներում, հանդիսաւոր ժողովների մէջ։ Եւ այդ բոլորին ռուսաց գահի պետերը պատասխանեցին նոյնպիսի գրաւիչ ոճերով, „իրենց սրտին“ շատ մօտիկ յայտարարելով Հայկեան ազգը, նրա շահերը, նրա խաղաղութեան և ազատութեան խնդիրը...

Սակայն երբ — ասենք ժողովրդական դարձուածքով — „ոսը ամրացաւ“, երբ միապետական իշխանութիւնը այլևս կարիք չունէր ոչ հայ հոգևորականութեան և ոչ էլ հայ ժողովրդի „առաջամարտիկ“ ուժերին՝ մահմետական գրոհը ջարդելու համար, հովերը փոխուեցին, լսուեցին այլ խօսքեր և շուտով այլ սպառնալիքներ։

Միշտ այն մոլորման մէջ, որ հայ ազգաբնակութեան տրամադրութեան և շարժման ղեկը հոգևորական դասի ձեռքն է, և հետևաբար գլխաւոր զսպանակը՝ Էջմիածնում, այնքա՜ն կարևոր իր անցեալով, Պետերբուրգի իշխանութիւնը յաճախ ծայրայեղ միջոցներով, երբ կովկասեան փոխարքայի պաշտօնը կատարում էր մի „բարասիրտ“ մարդ, և երբեմն չափաւոր միջոցներով, երբ այդ պաշտօնը գտնուում էր հանգիստ ձեռքերում, սկսեց հարուածներ տալ Էջմիածնի գահակալութեան, դեռ Գէորգ կաթողիկոսի կենդանութեան օրերում։ Այդ ժամանակ էր, որ երևան եկան կաթողիկոսի իրաւասութեան խնդիրներ, վանքի արտօնութեան հարցեր, կալուածական խնդիր, դպրոցական հսկողութեան հարցեր... Եւ կարճ ժամանակում, նախկին անջատ, ըստ երևոյթին միմեանց հետ ներքին կապ չունեցող պահանջները փոխարկուեցին յայտնի սիստեմի, և Էջմիածինը քաղաքական շղթայով կապելու տենչը մտաւ պետական ծրագիրների շարքը։

Սկսած 60-ական թուականներից մինչև 90-ական թուականները, այդ ծրագիրը իրագործուեց չափաւոր եղանակով, զգուշօրէն, նոյն իսկ „զենագադարով“։

Դա ունէր իր պատճառը։

Կովկասն ու Ընդրկովկասը, ճշմարիտ է, խաղաղացրուած էին, կամ աւելի ճիշտ՝ հպատակեցրած վերջնականապէս։ Թիւրքիայի կողմից ռուսական տիրապետութեան վտանգ չէր սպառնում։— սուլթաններին այլ ցաւեր ունէին, ցաւեր՝ աւելի խոր և աւելի վտանգաւոր։ Պարսկաստանը՝ ջարդուած, ոչ միայն վտանգաւոր թշնամի չէր, այլ և „հաւատարիմ“ հարևան։ Ներսը — Կովկասի բոլոր կէտերում՝ մարած էին ապստամբութեան վերջին նշանները, ազատութեան կրակը հանգած նոյն իսկ լեռների ծերպերին։ Վերջինը Շամիլն էր, նա էլ արդէն քաւում էր իր ազատասէր մեղքերը հեռու, շատ հեռու իր պաշտած լեռներից... Սակայն, այդ բոլոր ներքին „աջողութիւնների“ հետ միասին, դեռ գոյութիւն ունէր մի այլ խնդիր, քաղաքական մի կարևոր ծրագիր, — դա Թիւրքաց Հայաստանի և դրա հետ միասին Փոքր-Ասիայի ծանօթ ծրագիրն էր։ Շմերային պալատում դեռ մինչև այսօր էլ կանգուն է սլավ վեհապետութեան այն կտակը, թէ ռուսաց միապետութեան է պատկանում Ստամբօլը՝ իր ս. Սոֆիայի գմբէթով, և Պարսից ծոցը՝ ովկիանոսի նման լայն քաղաքական շահերով։ Իսկ Հայաստանը մի բանալի է, անխուսափելի շաւիղ դէպի վերջինը, դէպի այդ կարևոր ծրագրի իրականացումը։

Դէպի Պոլիս արշաւելու համար՝ Բալկանի փոքրիկ ազգութիւնների համակրանքը վայելել, իսկ Փոքր-Ասիական ծրագիրների համար՝ Թիւրքահայ ժողովրդի սէրը — սա եղաւ կառավարութեան քաղաքական „հեռատեսութեան“ հիմքը։ Իսկ այդ համակրանքը ձեռք բերելու, ուրիշ խօսքով, երկրի տիրապետութիւնը՝ հարկաւոր բոպէին՝ աւելի հեշտ դարձնելու համար, նոյն կառավարութեան կարծիքով, միշտ պէտք էր իր կողմն ունենալ Էջմիածնի, իբրև կրօնական ազդեցիկ կենտրօնի

աջակցութիւնը, և ահա թէ ինչու նա ջանք չխնայեց բարձր պահելու կաթողիկոսի հեղինակութիւնը և հմայքը թիւրքահայերի վրայ։

Թիւրքաց կառավարութիւնը, ընդհակառակը, ջանաց, կատարելապէս հասկանալի պատճառով, չքացնել այդ հեղինակութիւնը։ Դա մի մրցումն էր երկու բռնապետութիւնների մէջ։ Պետերբուրգը միշտ ձգտեց Էջմիածնի գահի վրայ ունենալ այնպիսի գահակալներ, որոնք թեքւած էին դէպի Ռուսաստանը։ Կ. Պոլիսը՝ հակառակը։ Սուլթանի կառավարութիւնը շատ անգամ փորձեց բարձրացնել Սիսը և Աղթամարը, մանաւանդ առաջինը, որ իր աշխարհագրական դիրքի պատճառով ազատ է ռուսական ազդեցութեան երկիւղից, որպէսզի ջլատի Էջմիածնի գերիշխանութիւնը և մի պատ դնի թիւրքահայերի և Արարատեան կրօնական աթոռի յարաբերութեան մէջ։ Բայց անաջող։

Ընդհակառակը և կրօնական հմայքը շատ զօրեղ նեցուկ եղան Էջմիածնի ազդեցութեան, մանաւանդ որ ռուսաց կառավարութիւնը իր կողմից քայլ առ քայլ ձգտելով նսեմացնել ամենայն հայոց կաթողիկոսի ազդեցութեան սահմանները Կովկասի հայերի նկատմամբ, միաժամանակ ձգտեց նրա իշխանութիւնը, գոնէ ա ն ա ն ա կ ա ն, զօրաւոր պահել այն հայերի վրայ, որոնք իր սահմանների միւս կողմն էին ապրում... Բ. Դուռը յաճախ միջոցներ ձեռք առաւ խզելու Կ. Պոլսի հայոց պատրիարքների յարաբերութիւնը Էջմիածնի հետ, նրան վերագրելով քաղաքական վտանգաւոր նպատակներ. իսկ Պետերբուրգի բարձր կառավարութիւնը, ընդհակառակը, միշտ ջանալով պահպանել տալ այդ յարաբերութիւնը՝ յօգուտ Էջմիածնի գահակալութեան, միաժամանակ միջոցներ որոնեց, որպէսզի ամեն մի կարևոր գրագրութիւն և դիմումն արտասահման՝ լինի իր գիտութեամբ, իր միջոցով, հետևաբար՝ իր հաւանութեամբ։ Ահա այդ

պատճառով է, որ Էջմիածնի գահակալը պարտաւորուած է իր բոլոր ա ր տ ա ք ի ն դիմումները անել ռուսաց ա ր տ ա ք ի ն գ ո ր ծ ե ր ի մ ի ն ի ս տ ր ի միջոցով, և բոլոր այն թղթերը, գրագրութիւնները, կոնդակները, որոնք գնացել են արտասահման ծածուկ, կողմնակի կերպով, առանց մինիստրութեան միջնորդութեան, համարել են հակակառավարչական ձգտումների արդիւնք... Եւ եթէ այդպէս չեն համարել կամ յանդիմանութեան չեն ենթարկել, երևի միայն այն պատճառով, որ կարևոր չեն եղել, կամ ա ն յ ա ր մ ա ր է դ ա տ ւ ե լ աղմուկ յարուցանել այդ առիթով։ Կան չարիքներ, որոնք մատնում են անուշադրութեան, աւելի մեծ չարիքներ չստեղծելու համար...

Բայց այն օրից, երբ հայկական կոտորածների և 95-ի մեմորանդումի անկման պատճառով՝ թիւրքահայերի խնդիրը կորցրեց իր նախկին „վտանգաւոր“ կերպարանքը, երբ թ ո յ լ ա տ ր ւ ա ծ ջարդերից յետոյ՝ Պետերբուրգի կառավարութիւնը համոզուեց, որ հայ տարրը, թիւրք-հայկական յարաբերութիւնների խիստ թշնամացման պատճառով, այլևս անկարող է խաղալ քաղաքական այն խոշոր դերը, որ վերագրում էր նրան մինչև 80-90-ական թուականները, այդ օրից միապետութեան դիրքը դարձաւ վճռական, վերաբերմունքը՝ խիստ, յարաբերութիւնը՝ անսանձ, ծրագիրը՝ դժոխային։

Գէորգ կաթողիկոսի մահից յետոյ, նախ քան նրա յաջորդի ընտրութեան ձեռնարկելը, Պետերբուրգի կառավարութիւնը յանձնեց բարձր Նիկոլայիին կազմել մի զ ե կ ո ւ ց ո ւ մ կաթողիկոսական խնդրի մասին։ Բարձր Նիկոլայի, կովկասեան փոխարքայի դիւանատան նախկին կառավարիչ, երբեմն մինիստր ժողովրդական լուսաւորութեան, կովկասեան գործերին տեղեակ համարուող մի անձ, աւելի խորամանկ՝ քան խելօք „պետական գոր-

ծիչ", ձեռնարկեց այդ գործին և 1883-ին ներկայացրեց ներքին գործերի մինիստրութեան մի գաղտնի զեկուցագիր։ Պատահմամբ թէ „սերտ կապերի" շնորհիւ՝ այդ կարևոր „դոկումենտը„ պետական պահարաններից անցաւ անհանգիստ մարդոց ձեռքը և հրապարակ եկաւ (Տես երես 153)։

Ներքին գործերի մինիստրութիւնը, հարկաւ, հրահանգներ տուեց՝ հիմնւած այդ զեկուցագրի վրայ։ Այդ հրահանգներով կառավարութեան ներկայացուցիչը գնաց Էջմիածին՝ ներկայ լինելու 1884-ի ընտրութեան։ Ընտրուեց անմոռանալի Ներսէս, որ Բերլինի դաշնագրից յետոյ, իբրև մէկը 61-րդ յօդւածի հեղինակներից, դարձել էր հայ ժողովրդի սիրելին, նրա յոյսերի մարմնացումը։ Սակայն նախ քան կ. Պոլսից Էջմիածին մեկնելը՝ վարժապետեան մի քանի առաջադրութիւններ արեց ռուսաց կառավարութեան, իբրև անհրաժեշտ պայմաններ իր կաթողիկոսութեան։ Կառավարութիւնը մերժեց։ Ներսէս հրաժարուեց այլ պայմաններով կաթողիկոսական ծիրանի հագնել, և քիչ անցած՝ Պետերբուրգից յայտարարուեց, որ պէտք է նոր ընտրութիւն անել, պատճառաբանելով՝ թէ 1884-ի ընտրութեան ժամանակ տեղի են ունեցել անկանոնութիւններ։ Խաղը աշկարայ էր։ Անկանոնութիւնների մասին խօսք չկար, երբ յոյս ունէին Ներսէսին ընկճել, սակայն երբ այդ անկարելի եղաւ, ստեղծեցին ապօրինութիւնները՝ ընտրութիւնը բեկանելու նպատակով, մոռացած այն պարզ փաստը, որ կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչը ինքը՝ ճանաչել էր ընտրութեան ամբողջ գործողութիւնը ճիշտ ու կանոնաւոր և տուել իր վաւերացումը։

Հասաւ 1885 թուականը, նոր ընտրութեան տարին։ Էջմիածին գնաց, ինչպէս միշտ, կառավարական պաշտօնեայ, բայց այս անգամ շատ վճռական, շատ կտրուկ

հրահանգով — դիմադրել ուէ թիւրքահայ եպիս-
կոպոսի թեկնածութեան։ Այդ հրահանգի իրագործման
ղօրեղ „նեցուկներից“ մէկն էլ, պէտք է խոստովանել,
մի հայ եպիսկոպոս էր, ըստ երևոյթին շատ սիրող
հայոց կրօնական աթոռը, երդւած՝ հաւատարիմ „սպա-
սաւոր“ լինելու նրա պետին և նրա շահերին... Իբրև
առաջին թեկնածու՝ հանդէս բերուեց Մելքիսեդեկ Մու-
բադեան, առաջնորդ Զմիւռնիայի, կովկասեցի, հեղինակ
„Եկեղեցական պատմութեան“, և յետոյ հեռացած Ռու-
սաստանից և ճանաչւած՝ շնորհիւ իր գրքի, իբրև „հա-
կառուսական“ մարդ։ Կառավարութեան ներկայացուցիչը
ոչ մի ձայն չհանեց այդ թեկնածութեան դէմ։ Պէտք
էր արտաքուստ վարւող լինել, ինչպէս ասում է գաղտնի
զեկուցագիրը, „ձեւերի մէջ փափուկ“։ Բայց ներքուստ՝
յամառութեամբ, նախօրօք տեղի ունեցած „պատրաս-
տութեան“ համաձայն՝ առաջ մղեց Մակար եպիսկո-
պոսը, իբրև երկրորդ թեկնածու։ Աշխարհական պատ-
գամաւորները և նրանց հետ ժողովրդական զգացմունք-
ների կողմնակից մի խումբ հոգևորականներ, գլխաւո-
րապէս թեմական առաջնորդներ, ջանք գործ դրեցին,
եռանդուն ջանքեր, ընտրելու իբրև երկրորդ թեկնա-
ծու՝ Խրիմեանին։ Բայց անաջող։ Նրանց խաբեցին Մա-
կարի թեկնածութեան նախապատրաստւած
կողմնակիցները, Էջմիածնի „սեագլուխ“ մականուանեալ-
ները։

Օրօրներ կարդալով միամիտ աշխարհականներին, մի
քանի վաճառւած վեղարաւորների թելադրութեամբ՝
հոգևորականների մի խումբ, գիշերով — ընտրութեան
նախորդ գիշերը — ժողով գումարեցին, ի հարկէ՝ գաղտնի
և վճռեցին ձայն տալ Մակարին։ Կառավարութեան
ներկայացուցիչը այդ լաւ գիտէր, նախապատրաստել
էր... Միւս օրը տեղի ունեցաւ անսպասելի բան, —
երկրորդ թեկնածու՝ Խրիմեանի փոխարէն՝ հանդէս եկաւ

Մակար, որի անժողովրդական անուան մասին, նոյն իսկ „դաղանի“ կողմնակիցները չէին համարձակւում հրապարակով խօսք բանալ. . „Վարձկանները“ յաղթանակը տարան, և այդ բոպէից արդէն գիտէին, որ միամտութիւն է կարծել, թէ առաջին թեկնածուն՝ թէև ընտրուած միաձայն, համարեա երկու անգամ աւելի ձայներով քան երկրորդը, կարող է արժանանալ կայսերական հաստատութեան: Եւ պատմում են, որ „դաւադիրների“ պարագլուխ եպիսկոպոսը, ընտրութիւնից մի քանի օր յետոյ, Երևանից դէպի Թիֆլիզ անցնելիս՝ բարձրաձայն ասաց իր բարեկամ քահանային. „Տէր հայր, երեք ամսից յետոյ կը վերադառնամ Մակարի հետ“:

Եւ Մակարի հետ վերադարձան նրանք բոլորը, և նրանց հետ՝ տխուր օրեր Էջմիածնի համար: Կառավարութեան առաջին հարուածը աջողուած էր: Ընտրութեան անկախութիւնը բեկանուած, ոչնչացրուած: Դժուար չէր բեկանել նոյն իսկ կաթողիկոսին և անել տալ ինչ ուզում էին: Եւ արեցին: Ու այդ օրից խեղճ ծերունին, որի մասին ամբողջ Արարատեան նահանգը մինչև այսօր էլ երգում է՝

Մակար քանդեց ազգի տունը

փոխանակ լինելու իր հօտի իրաւունքների և ցանկութիւնների արտայայտիչ, եղաւ նախ՝ լսող, ապա՝ աղերսող խնդրող, կարեկցութիւն հայցող: Նա այլևս չէր պահանջում, չէր բողոքում, այլ միմիայն աղերսում էր կարեկցել, չդնել իրեն ծանր, անելանելի վիճակի մէջ ազգի առաջ... „Վերջապէս ձեր նշանակածն եմ“— ահա նրա անուղղակի դիմումների հոգեբանութիւնը: Եւ կառավարութիւնը համաձայնեց յիրաւի, որ շատ էլ „ծանր վիճակի մէջ չպէտք է դնել“ իր նշանակածին: Ահա թէ ինչու, օրինակ, փակելով հայոց դպրոցները 1885-ին, նոյն կառավարութիւնը, իբրև ա ն ձ ն ա կ ա ն

շնորհ իր թեկնածուին, թոյլատրեց վերաբանալ դպրոցները 1886-ին, արտօնելով Մակարին շարունակել նրանց ղեկավարութիւնը, ի հարկէ որոշ պայմաններով մինչև վեց տարի։ Ներենգ և մուրթ յարաբերութիւնների տարիներ...

Եկաւ Խրիմեան 1893-ին։ Եւ երբ լուեցին ոգևորութեան աղաղակները և հանգան հրավառութեան կանթեղները, Էջմիածնի կիսախարխուլ տաճարի շուրջը վերսկսեցին, և այս անգամ տասնապատիկ խստութեամբ, կաթողիկոսական իրաւունքների խորտակման ծանր խաղերը։ Սահմանի միւս կողմում ծովացել էր մի ամբողջ ժողովրդի արիւն։ Յարմար բոպէն էր ուրեմն հարածը ուժգնապէս կրկնելու։ Եւ կրկնեցին։ Եւ երեքկնեցին։ Ի՞նչ մնաց կաթողիկոսի ձեռքում, ի՞նչ իրաւունք և ի՞նչ արտօնութիւն։ Ոչինչ, կամ համարեա ոչինչ։

Կար ժամանակ, որ նոյն իսկ „թուլակամ“ Գէորգ սպառնալիքներ էր անում։ Էլ չենք խօսում այն հրաս-կայ-ական սպառնալիքների մասին, որ անում էին ներսէս Աշտարակեցի, Մատթէոս։ Այդ տեսակ սպառնալիքների կամ դիմումների մասին այլևս գաղափար չունէին Էջմիածնում 90-ական թուականներից յետոյ։ Մակար եղաւ հլու կատարող։ Իսկ մեծանուն Խրիմեանը — իրաւազուրկ վանահայր, որ մի իրաւունք միայն ունի, ճամբայ ելնել ուր ուզում է, և երբ ուզում է, միշտ աննկատ, միշտ առանց կարևորութեան...

Ցարինները բոլորեցին, և ոչ մի իրաւունք չմնաց անձեռնմխելի, իր ուժի մէջ։ Եւ այժմ կաթողիկոսը իրաւազուրկ, կաշկանդուած, անկարող է նշանակել իր ցանկացած հոգևորականին առաջնորդ, սինոդի անդամ, նոյն իսկ յաջորդ։ Երկու թեկնածու ընտրելու սիստեմը միշտ գոյութիւն ունէր, բայց առաջին թեկնածուն համարւում էր կաթողիկոսի ցանկացածը և յարգւում։ Այժմ այդ էլ չկայ։ Դա անզօր է նոյն իսկ ցանկացած մար-

դուն քահանայ ձեռնադրել։ Ամուսնական խնդիրները՝ մեծ չափով հանուած են իր իրաւասութիւնից։ Դպրոցական հարցը, երբեմն կաթողիկոսի ժողովրդականութեան գլխաւոր կուռանը, այլևս գոյութիւն չունի։ Նա այդ ասպարիզում չքացած է։ Նրա կարծիքը չեն հարցնում նոյն իսկ այն դէպքում, երբ նշանակում են մի պրօկուրօր կամ ուրիշ ստորին պաշտօնեայ Սինոդի համար։ Նրա և վեհարանի շուրջը նշանակում են լրտեսներ, բացարձակ, առանց քաշելու։ Հեռացնում են վանքից ում կամենում են, աքսորում են, երբ կամենում են։ Նրա կարգադրութիւնները մնում են անկատար, խնդիրները՝ անհետևանք։ Նոյն իսկ մի աննշան պաշտօնական ամնագիր՝ „Արարատ“, որ երեսուն տարուց ի վեր հրատարակւում էր Էջմիածին՝ կաթողիկոսների թոյլտուութեամբ, առանց գրաքննիչի, խլուեց նրա ձեռքից և յանձնուեց Թիֆլիզի գրաքննութեան։

Փաստերին թիւ չկայ։ Դիմումն արեց՝ մէկին ճեմարանում ուսուցիչ պահելու — մերժում։ Խնդրեց գաղթականների համար — մերժում։ Ուզեց կայսեր մի խնդիր ուղղել — մերժում։ Պետերբուրգ կամեցաւ գնալ — մերժում։ Ուրիշին ուզեց ուղարկել — դարձեալ մերժում։ Դիմեց հանգանակութեան համար — մերժում։ Խնդիրք՝ դպրոցական շէնք կառուցանելու — մերժում։ Միջնորդութիւն մի քանի անձանց համար — մերժում։ Ո՞ր մէկը յիշատակել։ Փաստերը թիւ չունեն։

Նպատակը շատ որոշ է։

Կաթողիկոսին իրաւազուրկ դարձնել։ Վճռած խնդիր է դա, բայց ի հարկէ ոչ յօգուտ ժողովրդի, այլ դարձեալ յօգուտ կենտրօնական իշխանութեան։ Տարիների ընթացքում, երբ մամուլի և հասարակութեան մէջ հնչեցին ձայներ՝ չափաւորել Էջմիածնի իրաւունքները և ընդլայնել ծխական-ինքնավարական արտօնութիւնները, կառավարութիւնը այդ համարձակ

բերաններին սանձ դրեց։ Երբ կաթողիկոսի դիմաց ժողովուրդն է, միապետութիւնը կաթողիկոսի կողմն է։ Դրանից դուրս՝ նա իր հակառակորդն է, անպայման կենտրոնացմանն խանգարողը։ Եւ իբրև այդպիսին՝ նա հալածւում է, ենթարկւում մերժումների, և զրկւում իր „անձեռնմխելի“ իրաւունքներից, ինչպէս չորացող ծառը իր տերևներից...

ԳԱՂՏՆԻ ՉԵԿՈՒՅԱԳԻՐ

Ահա բարօն Նիկոլայիի գաղտնի զեկուցումը, ներկայացրած նեբբին գործերի մինիստրութեան։ Այս պատճէնը ամբողջական է. պակասում են մի քանի նախադասութիւններ միայն, որոնք նշանակւած են բազմակէտերով։

„Ամենայն Հայոց կաթողիկոսի մահը 1882 թւի „դեկտեմբերը 6-ին և այս դէպքի պատճառով ամենայն „Հայոց Հայրապետի մօտ ապագայում կատարելիք „ընտրութիւնը, անհրաժեշտ է կացուցանում հասուն „քննութեան ենթարկել՝ պետական բարձր շրջանների „մէջ՝ հետևեալ երկու շատ կարևոր խնդիրները.

ա) Թէ գործողութեան ի՞նչ եղանակի պէտք է հետևի „մեր կառավարութիւնը կաթողիկոսական առաջիկայ նոր „ընտրութեան ժամանակ։

բ) Որպիսի դիրք պէտք է բռնէ մեր կառավարու„թիւնը նոր կաթողիկոսի վերաբերմամբ՝ նրա հաս„տատելուց և իր բարձր պաշտօնավարութեան մէջ „մտնելուց յետոյ։

„Այս երկու խնդիրների նախօրօք քննութեան և „լուծման ստիպողական հարկը այն հանգամանքից է առաջ „գալիս, որ 1857-ին, երբ Ներսէս կաթողիկոսի մահից „յետոյ՝ մի նոր Հայրապետ պիտի ընտրէր, մեր կա„ռավարութիւնը պէտք համարեց հետևել մի նոր, մինչև „այն ժամանակ ի կիր չառնւած քաղաքականութեան։

„Այս քաղաքականութիւնը արտայայտուեց առաւել թիւր-
„քիայի քան թէ Ռուսաստանի հայոց բարձր հոգևորական-
„ների դասից կաթողիկոս ընտրելու գաղափարին ընծայ-
„ուած նախամեծարութեան մէջ, որի նպատակն է՝ գրաւել
„առաւել ժիր մասնակցութիւն կաթողիկոսի ընտրու-
„թեան գործում թիւրքահայ հասարակութեան կողմից։
„Այս կերպ գործելու առիթ տուողը՝ այն ենթադրու-
„թիւնն էր, թէ հայ-լուսաւորչական եկեղեցու հովա-
„պետի ընտրելը թիւրքահայ հոգևորականների դասից՝
„կը նպաստէր ամրապնդելու Էջմիածնի աթոռի և թիւր-
„քիայի բազմաթիւ հայ ժողովրդի կապերը, վերականգ-
„նելու այս աթոռի գլխաւորութիւնը օտար աշխարհի
„հոգևոր վիճակների վրայ, որ շատ նւազել էր վերջերում,
„և այսպիսով զօրացնելու մեր քաղաքական ազդեցու-
„թիւնը թիւրքիայի հայերի վրայ։ Այն ժամանակ այս
„ենթադրութիւնների իրագործումը հաւանական էր
„թւում այն պատճառով, որ Էջմիածնի աթոռի նա-
„խընթաց պատմութիւնը չէր տալիս նիւթեր՝ այդ-
„պիսի մի խնդիր վճռելու համար՝ հիմնւել իրական
„փորձի վրայ։ Այժմ, 25 տարի անցնելուց յետոյ, երբ
„Հայրապետական աթոռի վրայ երկու անգամ բազմե-
„ցին թիւրքիայի հայ հոգևորականութեան պատկանող
„անձինք, մենք կատարեալ միջոց ունենք վերստին քննե-
„լու այդ հարցը և արդէն ոչ թէ կարծիքական յոյսերի
„վրայ յենւելով, այլ կանգնած իրական հողի վրայ, և
„միւս կողմից կշռելու՝ թէ մինչև որ աստիճան արդա-
„ցան 1857 թւի յոյսերը, և թէ Էջմիածնի աթոռի
„վրայ թիւրքահպատակ հոգևոր պետերի բազմելը ինչ
„ազդեցութիւն ունեցաւ նրա յարաբերութեան վրայ
„դէպի մեր գահը և դէպի մեր հոգևորականութիւնը,
„նամանաւանդ դէպի մեր ներքին քաղաքականութիւնը
„ռուսահայերի նկատմամբ։

„Այս գործը լիովին լուսաբանելու համար՝ աւելորդ

„չի լինի առաջ բերել մի համառօտ պատմական նկա-
„րագիր այն հանգամանքների, որոնց մէջ կատարուած
„էր վերջին երկու կաթողիկոսների ընտրութիւնը։

„Հայ-լուսաւորչական եկեղեցու կառավարութեան
„Օրէնքի-Պօլժենիայի յօդ. 915, 916, 917 և 919
„հիման վրայ (Ա. մաս Բ. հատոր Օրէնքների հաւա-
„քածուի, հրատ. 1857 թ.), կաթողիկոսական ընտրու-
„թիւնը կատարւում է ամբողջ Հայկաղեան ազգից,
„ս. Էջմիածնի տաճարում, ի ձեռն երկու երկու պատ-
„գամաւորների ամեն մի թեմից՝ թէ ռուսական և թէ
„օտարերկրեայ, Էջմիածնի սինօդի անդամների և եօթն
„աւագագոյն եպիսկոպոսների, որոնք ներկայ կը լինեն
„այն ժամանակ Էջմիածնի մէջ։

„Մինչև 1857 թիւը, օտարերկրեայ պատգամաւոր-
„ների մասնակցութիւնը անւանական էր և լինում էր
„սովորաբար գրաւոր յայտարարութեամբ՝ թէ նրանք
„կանխաւ հպատակւում են Էջմիածնում կատարելիք
„ամեն մի ընտրութեան։ Թիւրքիայի հայերը՝ իրենց յետ
„քաշելը ընտրութիւնների իսկական մասնակցութիւնից՝
„բացատրում էին Թիւրքաց կառավարութեան կողմից
„դժւարութիւն յարուցանելու երկիւղով, և դրա գործ-
„նական հետևանքը այն էր, որ կաթողիկոսի ընտրու-
„թիւնը լիովին կախւած էր ռուսահպատակ հայերի հո-
„գևոր և աշխարհական ներկայացուցիչներից, կամ՝ որ
„գրեթէ միևնոյնն է, ռուսաց կառավարութիւնից։

„1857-ին, ներսէս կաթողիկոսի մահից յետոյ, կով-
„կասի նախկին կուսակալ՝ հանգուցեալ Փէլդմարէ-
„շալ իշխան Բարիատինսկին, իր ծանուցագրով՝ յանուն
„կովկասեան կօմիտէի, կարծիք յայտնեց, թէ ցանկալի
„էր Թիւրքիայի բարձրաստիճան հայ հոգևորականներից
„մէկի վրայ ուղղել կաթողիկոսական ընտրութիւնը,
„որպէսզի դրանով Էջմիածնի աթոռի ազդեցութիւնը
„հաստատուի Թիւրքահայ եկեղեցու վրայ, և դրա միջո-

„ցով նաև թրքահպատակ հայերի վրայ առհասարակ։

„Իշխան Բարիատինսկին թէև չէր թագցնում, որ ընտ-
„րութիւնը կարող էր ընկնիլ դէպի մեզ ոչ հակամէտ
„մի անձի վրայ, որը գուցէ չէր համաձայնի ռուսական
„հպատակութեան երդումն տալ և մեր սահմանների
„մէջ մնալ, սակայն այս երկիւղը նրա աչքում փա-
„բատուում էր հետևեալ նկատումով՝

Թէ ձայների մեծամասնութիւնը կաթողիկոսական ընտ-
րութեան ժամանակ իբր թէ մեր հպատակներից է
բաղկանում.

Թէ հայերը առհասարակ անձնուէր են դէպի մեզ և
քաղաքական գործերի միջամտութիւնից խորշող"։

„Կովկասի գլխաւոր իշխանութեան այս կարծիքը հա-
„ւանութիւն գտաւ ներքին գործերի մինիստրութեան
„կողմից և ապա ներկայացուեց բարձրագոյն հա-
„ճութեան։

„Ուստի ոչ թէ միայն Կ. Պոլսի մեր դեսպանութեան
„և կովկասեան իշխանութեան բոլոր գործողութիւնները
„այդ ուղղութիւնը ստացան, ապա և նոյն իսկ Էջմիածնի
„Սինոդը, իրեն աբուած ազդարարութիւնների համեմատ՝
„որոշ ցանկութիւն յայտնեց, մի գրութեամբ՝ ուղղած
„Կ. Պոլսի հայոց պատրիարքին, որ Էջմիածնի հայրա-
„պետական աթոռի վրայ բազմի Թիւրքիայի լուսաւոր-
„չական բարձրաստիճան հայ հոգևորականներից մէկը։
„Մեր կառավարութեան այսպիսի մի բացարձակ յայ-
„տարարութիւնը և թիւրք կառավարութեան կարծես
„այն ժամանակ ցոյց տուած յօժարութիւնը՝ որ իր հը-
„պատակներն էլ մասնակցէին կաթողիկոսական ընտրու-
„թեան, այն հետևանքն ունեցաւ, որ 1858 թուին Էջ-
„միածնի մէջ կատարուած ընտրութեան ժամանակ՝ առա-
„ջին անգամ երևացին նաև Կ. Պոլսի հայոց պատգա-
„մաւորները։ Պատգամաւորները այս անգամ դեռ թիւր-
„քահպատակ հայեր չէին, այլ մեր հպատակ իշխան

„Թումանով և Գուրգէն-Բէկով, որոնք յանձնա-
„բարութիւն էին ընդունել Կ. Պոլսի Ազգային ժողովից
„ներկայացնել 90 ընտրողական քուէ՝ ի դիմաց 45
„վիճակների։ Այս երկու պատգամաւորներին տուած
„հաւատարմագրի մէջ՝ յիշատակուած էին Թիւրքիայի
„հայ հոգևորականների դասից չորս եպիսկոպոսներ,
„իբրև կանդիտատ կաթողիկոսական աթոռի։

„Արդիւնքն եղաւ՝ Կ. Պոլսի նախկին պատրիարք Մատ-
„թէոսի ընտրուելն ի գահ հայրապետական։ Ընտրողական
„ցանկում ամբողջ հայ ազգի քուէները, հաշուելով պարս-
„կական երկու վիճակների չորս պատգամաւորներին ևս,
„արտայայտուեցին 115 թուի մէջ, որոնցից 90 քուէ
„գալիս էր Թիւրքիայի 45 վիճակներից, և սրանով բա-
„ւական ազդու կերպով հերքուում էր իշխան Բարիա-
„տինսկու կարծիքը, իբր թէ ձայների մեծամասնութիւն
„կազմողը մեր հպատակ հայերն են։

„Մատթէոսի գործունէութիւնը՝ վերաբերմամբ այն
„նպատակների, որ ունէր մեր կառավարութիւնը՝ բա-
„ցարձակ նպաստելով մի օտարահպատակ հոգևորականի
„կանդիտատութեան, աննման և որոշակի սահմանուած է
„Կ. Պոլսի մեր նախկին դեսպանի հեռագրի հետևեալ
„հատուածի մէջ, 16/28 սեպտեմբերի 1865.

L'exemple de Monseigneur Mathéos nous a laissé un enseignement dont il est bon de conserver le souvenir. Patronné par nous et dévoué à nos intérêts, comme il passait pour l'être, ce prélat s'est cependant bien vite détourné de nous pour laisser éclater à la fin de ses jours des dispositions hostiles à notre égard.

(Թարգմ. — Մատթէոս կաթողիկոսի օրինակը մեզ տուեց մի դաս, որը յիշել օգտակար է մեզ։ Հովանաւորուած մեր կողմից եւ նուիրուած մեր շահերին, ինչպէս կարծում էին նրա մասին, այս բարձրաստիճան հոգեւորականը այնուամենայնիւ շատ շուտ երես դարձրեց մեզանից, եւ իր կեանքի վերջում մեր վերաբերմամբ ցոյց տուեց թշնամական տրամադրութիւններ։)

„Մատթէոս կաթողիկոսի դէպի մեր կառավարութիւնը „ցոյց տուած անբարեկամութեան ապացոյցներից մէկն էր „նրա յօրինած նախագիծը՝ „Նոր կանոնադրութիւն յաղագս „կառավարութեան Հայ-լուսաւորչական եկեղեցւոյ“, որով նա „մտադիր էր բոլորովին անջատել կաթողիկոսական իշ- „խանութիւնը մեր կառավարութեան կախումից, զլանա- „լով մինչև անգամ բարձրագոյն իշխանութեան իրա- „ւունքը՝ կաթողիկոս հաստատելու, և տալով իշխա- „նութիւն կաթողիկոսին՝ վիճակաւոր առաջնորդներ կար- „գելու, առանց կայսերական հաստատութեան։ Այս „ծրագիրը, բարեբախտաբար, ընթացք չստացաւ, իր հե- „ղինակի մահուան պատճառով։

„Մատթէոսի մեռնելուց յետոյ, Էջմիածնի գահակալ „նոր ընտրութեան ժամանակ, մեր կառավարութիւնը „մտադիր էր չունենալ ոչ մի ուղղակի մասնակցութիւն „և թողնել այդ գործը ընտրողների ազատ կամքին։ „Թիւրքահպատակ և բոլոր միւս հայերի ձայների վերև „յիշած թուական յարաբերութիւնները ըստ բաւականին „ցոյց են տալիս, որ ազատ ընտրութիւնը հաւասար է „կաթողիկոսի ընտրութեան միմիայն թիւրքահպատակ- „ների կողմից, ուստի շատ բնական էր, որ Կ. Պոլսի „մեր դեսպանատունը չը պիտի կարողանար անփոյթ „առնել կաթողիկոսական աթոռի այն թեկնածուները, „որոնք երևան էին գալիս թիւրքահայ հոգևորականների „միջից։ Նրա անկողմնակի միջամտութեանը ընտրութեան „գործի մէջ՝ առիթ էին տալիս, բացի դրանից, այն „ժամանակ Կ. Պոլսի հայ հասարակութեան մէջ պա- „տահած երկպառակութիւնները՝ միսում մի ջոկ կա- „թողիկոսի աթոռ հաստատելու պատճառով, և վերջապէս „օսմանեան կառավարութեան մօտ ուղարկուած մեր „ներկայացուցիչների զգացած յարատև անհրաժեշտու- „թիւնը՝ դիմադրելու դէպի մեզ եղած թշնամական ազ-

„դեցութեան, որ այլևայլ դեսպանատներ ունեն Կ. Պոլսի
„հայ ժողովրդի վրայ։

„Այն ժամանակուայ մեր դիտումներին և շահերին
„աւելի յարմար և իր կրօնակիցների մէջ առաւել
„վարկ վայելող կանդիտատը Էջմիածնի աթոռի համար՝
„թուում էր լինել Պրուսայի նախկին վիճակաւոր առաջ-
„նորդ Գէորգ։ Մեր դեսպանատունը այսպէս էր բնորո-
„շում նրան՝ „Էնստրի է էնտրիգան“ (ուսեալ և բան-
„սարկու)։ Վերջին նշանագիծը վերին աստիճանի ճիշտ
„դուրս եկաւ։

“1866 թ. սեպտեմբերին, Էջմիածնի մէջ կատարուելիք
„ընտրութիւններին մասնակցելու համար՝ պատգամաւոր
„եկան, այն էլ ուղղակի Կ. Պոլսից, մի հոգևորական և
„մի աշխարհական անձ։ Նրանց գալուց առաջ՝ Կ. Պոլսի
„Պոլոս պատրիարքը զեկուցանում էր գրով Էջմիածնի
„Սինոդին՝ թէ Թիւրքիայի հայոց վիճակները արդէն 65
„էին, որով թիւրքահայերի քուէների թիւը մինչև 130
„պիտի աճէր։ Սակայն այս զեկուցումը չընդունուեցաւ,
„թէպէտ թիւրքիացի պատգամաւորները Էջմիածնում
„պահանջում էին՝ ճանաչել իրենց ձայների այդ թիւը,
„սպառնալով՝ որ անհամաձայնութեան դէպքում իրենք
„յետ կը վերադառնան։ Սակայն Կովկասի գլխաւոր վար-
„չութիւնը այս սպառնալիքից չը խաբուեցաւ։ Պէտք է
„նկատել, որ թիւրքահայ ձայների այս կերպ աճեցնելը,
„որ կամենում էին վայելել Կ. Պոլսից եկած պատգա-
„մաւորները, իրական նշանակութիւն չը պիտի ունենար,
„որովհետև առանց դրան էլ՝ թիւրքիայի ձայների մե-
„ծամասնութիւնը արդէն ճնշողական էր։

„Գէորգ կաթողիկոսի, ինչպէս և Մատթէոսի ընտրու-
„թիւնը՝ կատարուեց միութեամբ ձայների։ Այս անգամ
„մեր կառավարութիւնը այնպէս բացարձակ հրապարակ
„չեկաւ ի նպաստ իր կանդիտատի, ինչպէս որ արել էր

„1857-ին, բայց և այնպէս յայտնի էր, որ նա Գէորգ
„թեկնածութեան կուսակից է։

„Նոր կաթողիկոսը՝ ինչպէս իր ընտրելուց անմիջա-
„պէս յետոյ՝ Կ. Պոլսում, այնպէս և իր առաջին ան-
„գամ Թիֆլիզ եկած միջոցին, չը դադարեց խոստանալ
„շուայլել՝ իր անպայման հաւատարմութեան մասին դէպի
„ռուսաց կառավարութիւնը, իր հաստատ դիտաւորու-
„թեան մասին՝ առաջնորդելու իր պաշտօնի մէջ կա-
„ռավարութեան ցուցմունքներով և գործելու լիովին
„նրա դիտումների համաձայն։

„Դժբախտաբար, Գէորգ կաթողիկոսի այդ բարի
„դիտաւորութիւնները նոյն ճակատագիրն ունեցան, ինչ-
„պէս իր նախորդից՝ դէպի մեր շահերը ակնկալած
„անձնուիրութիւնը։

„Կովկասի նախկին փոխարքայի գլխաւոր կառավա-
„րութեան, ինչպէս և ներքին գործերի մինիստրութեան
„գործերից կարելի է բաւականին համոզուել, թէ որ-
„չափ դժուար էր կովկասեան վարչութեանը՝ յարաբե-
„րութիւններ ունենալ հանգուցեալ Գէորգ կաթողի-
„կոսի հետ, և որքա՜ն թեքւած էր այդ կաթողիկոսը
„թօթափել ամէն մի կախումն մեր կառավարութիւնից՝
„առանց կասելու բացարձակ արհամարհանքից դէպի
„մեր դրական օրէնքները, ինչպէս և անընդատակ դի-
„մադրութիւնից՝ մեր վարչական հրահանգներին։ Իբրև
„ապացոյց կարող էին ծառայել՝ կաթողիկոսի վճռական
„հրաժարումը՝ հեռացնելու հոգևորական կոչումից մի
„հայ քահանայ, որ քրէական ոճրի համար դատա-
„բանի բարձրագոյն հաստատած վճռով՝ զրկւած էր բո-
„լոր առանձնակի և անձնական իրաւունքներից, և նրա
„անհամաձայնութիւնը ճանաչելու՝ ուսումնարանական
„իշխանութեան վերհսկողութիւնը հայոց ծխական վար-
„ժարանների վրայ, պատճառ բերելով թէ դրանք հո-
„գևոր դպրոցների կարգին են պատկանում։ Վերջին

„երկու կաթողիկոսների ամբողջ գործունէութեան եղա-
„նակը միշտ ունեցել է մի նպատակ, այն է՝ տալ կա-
„թողիկոսական իշխանութեան ոչ միայն բարձրա-
„գոյն հոգևոր, ապա և աշխարհիկ ազգային գերա-
„գահութեան տիպար հայոց ազգի վրայ, ըստ կարել-
„ույն՝ կատարեալ անկախութեամբ մեր կառավարու-
„թիւնից։ Այսպիսի յաւակնութեան բացատրութիւնը,
„ի բաց թողնելով հոգևոր իշխաններին յատուկ փա-
„ռասիրութիւնը, կարելի է ըստ երևոյթին գտնել այն
„դիրքի մեջ, որ բռնում է հայոց պատրիարքը կ. Պոլ-
„սում, ուր նրա հոգևոր և աշխարհական նշանակու-
„թիւնը բաւական խառնուած են և ուր պատրիարքը
„հանդէս է գալիս թիւրքի կառավարութեան առջև՝
„իբրև միջնորդ, ոչ միայն եկեղեցական, այլ և ազգային
„խնդիրների նկատմամբ։ Իսկ կ. Պոլսի պատրիարքի Բ.
„Դրան առջև ցոյց տուած խոնարհութեան տարբերու-
„թիւնը այն ամբարտաւանութիւնից, որ յաճախ երևան
„էին հանում Պատրիէոս և Գէորգ կաթողիկոսները իրենց
„յարաբերութիւնների մէջ՝ բարձրագոյն իշխանութեան
„ներկայացուցիչների հետ Կովկասում, բացատրելի է
„առաջին դէպքում՝ թիւրքաց կառավարութիւնից ու-
„նեցած երկիւղով..... երկրորդում՝ այն ծայրայեղ
„զգուշութեամբ, որ մեր կենտրոնական իշխանութիւն-
„ները պատիրում էին պահպանել Էջմիածնի աթոռի
„հետ բանակցելիս, զգուշութիւն, որ առաւել քծնու-
„թեան ձև ունէր, քան թէ վերահսկողութեան։

„Եթէ դառնանք այն յարաբերութիւններին, որ հաս-
„տատուած են դրսից եկած կաթողիկոսների և Էջմիածնի
„Սինոդի մէջ, ինչպէս և այն ազդեցութեան, որ ունեցել
„են թիւրքահայ կաթողիկոսները մեր հայոց հոգևորա-
„կանների բարոյական մակերևոյթի բարձրացման վրայ,
„ապա առաջին դէպքում տեսնում ենք, որ այդ յա-
„րաբերութիւնները շատ լարուած էին և անմտերմական։

„Մատթէոս և Գէորգ կաթողիկոսները, թիւրքական „բռնակալական բնազդներով լցուած՝ վճռաբար էին „վարուում Սինոդի անդամների հետ, և ամենայն կերպ „ճգնում էին հեռացնել նրանց՝ հայոց եկեղեցու վար- „չութեան մէջ մաս ունենալուց։ Այդ ընթացքը միւս „կողմից յուզում էր սինոդականների զայրոյթը, որ թէև „մեծ մասամբ թագնուած էր լինում, բայց և այնպէս „մի անգամ հրապարակով երևան եկաւ՝ Մատթէոս „կաթողիկոսի օրով, մի քանի անդամների բողոքագրի „մէջ, ուղղուած մի քանի նշանաւոր հայերի, ուր նրանք „մի առ մի յիշատակում էին կաթողիկոսի իրը թէ գոր- „ծած զեղծումները։ Մատթէոսն էլ, Գէորգն էլ բերել „էին թիւրքիայից իրենց աբբանեակները, որոնք գերա- „կշռող ազդեցութիւն ունէին Էջմիածնի վանքի ներքին „կեանքի վրայ։ — Առաջինը ի դէմս մի ոմն Անդրէասի, „որ ամենակարճ միջոցում աբբեպիսկոպոսական աստի- „ճանի էր բարձրացել և մեղ բացարձակ թշնամի էր. „ապացոյց՝ այն հանգամանքը, որ նա իր հովանաւորի „վախճանելուց անմիջապէս յետոյ Կ. Պոլիս վերադառ- „նալով, մասնակից եղաւ այնտեղ կամայօրէն կազմուած „մի ինչ որ մասնաժողովի, որը 1836-ին Պոլսոյ Ենիայի „փոխարէն՝ մշակել էր մի նոր կանոնադրութեան նա- „խագիծ՝ Ռուսաստանի հայոց եկեղեցու կառավարու- „թեան համար, որի զօրութեամբ Էջմիածնի աթոռը „սահմանուում էր մի տեսակ „Հպատակութիւնից ազատու- „թիւն“ (էկսաէրրիտօրիալիտէ) ռուսաց կայսրութեան „սահմանների մէջ։ Գէորգին սատար կամ աբբանեակ „հանդիսացաւ Մանկուէնի անուն մէկը, որի եպերելի „գործերը ստիպեցին կովկասեան վարչութեանը՝ արտաքս- „սել նրան մեր սահմաններից, որ սակայն արգելք չեղաւ „իրեն՝ կամայօրէն և հակառակ արգելքի՝ վերադառնալ „Էջմիածին և բնակուել դրա պարիսպների հովանու տակ, „կաթողիկոսական պալատի մէջ։ Այս երկու անձինք ոչ

„սակաւ նպաստեցին լարելու կաթողիկոսի և սինոդա-
„կան անդամների յարաբերութիւնները։

„Իսկ գալով վերջին երկու կաթողիկոսների վաստակ-
„ներին՝ հայ հոգևորականների բարոյական վիճակի բար-
„ւոքման նկատմամբ, հարկ է, դժբախտաբար, բոլորովին
„բացասական համարել։ Կ. Պոլսից եկած այդ երկու հոգևոր
„վերհսկիչներն էլ լինելով թերուս և սովոր տաճկա-
„կան կաշառակերութեան և շողոքորթութեան, ս. Գրի-
„գորի սրբավայրը փոխադրեցին այն աղտերը, որոնցով
„ինքնանք տոգորուած էին։ Հանգուցեալ Գէորգ կաթո-
„ղիկոսը հոչակում էր՝ իբրև երախտիքի գործ հայ եկե-
„ղեցու առջև և իր ուսումնասիրական ջանքերի ապա-
„ցոյց՝ հոգևոր ճեմարանի հաստատումը Էջմիածնի մէջ։
„Բայց թէ ինչպիսի ուսումնարան է ծածկուած այդ շքեղ
„անուան տակ, — տակաւին գաղտնիք է կառավարութեան
„համար։

„Եթէ դրանից յետոյ աչքէ անցնելու լինենք այն
„ազդեցութիւնը, որ վերջի երկու հայրապետների գոր-
„ծունէութեան եղանակը ունեցել է անդրկովկասեցի
„աշխարհական հայ հասարակութեան վրայ, ապա ան-
„կարելի կը լինի չընդունել, որ նրանք իրենց նպատա-
„կին չհասան, այն է, հայ հասարակութիւնը իրենց
„ազդեցութեան ենթարկել չկարողացան։ Լուսաւորչական
„հայերի գիւղաբնակ բազմութիւնը սակաւ է համակ-
„ում իր հոգևոր իշխանների տեսական խորհուրդներին,
„բայց և այնպէս այդ ժողովուրդը պահւում էր մի գոց
„ազդային շրջանակի մէջ, հոգևորականութեան ջանքով,
„որը ձգտում էր պատսպարել նրան ռուսաց դպրոցի
„ազդեցութիւնից։ Իսկ քաղաքաբնակ՝ առաւել կրթուած
„հայ հասարակութիւնը, որի պարագլուխը հարկաւ
„Թիֆլիզի հայ ժողովուրդն է, այնքան տոգորուած է
„արդի դրական ուղղութեամբ և այնքան քիչ յարգանք
„էր զգում դէպի իր եկեղեցու իշխանների անձնաւո-

„բութիւնը, որ չէր կարող նպաստել Էջմիածնի քա-
„հանայապետների փառամոլ դիտումներին։ Սակայն
„այս հասարակութեան մէջ էլ սակաւ չէին զարգա-
„ցել ազգային ինքնուրոյնութեան միտումը և ուս
ազգութեան տարրի մէջ լուծուելու չկամութիւնը։ Այս
„տեսակէտից՝ նա համերաշխ էր հանդիսանում կաթո-
„ղիկոսների հետ, համակրելով նրանց ձիգերին՝ իրենց
„անկախութիւնը հաստատելու, և նեցուկ գտնելով նրանց
„մէջ՝ ազգային անջատման (սեպարատիզմ) համար։
„Թէև այս ուղղութիւնը չէր արտայայտւում ոչ մի
„ապօրինի գործողութեան մէջ և չէր ներկայացնում ոչ
„մի քաղաքական վտանգ, այսու հանդերձ չէ կարող
„համապատասխանել մեր կառավարութեան ընդհանուր
„նպատակներին։

„Հայոց եկեղեցու և մեր սահմանների մէջ ապրող
„հայ ազգաբնակութեան վերաբերմամբ՝ նախկին թիւր-
„քահպատակ կաթողիկոսների հայրապետութեան ար-
„դիւնքները այդպէս էին։ Այստեղ գծագրուած պատ-
„կերը դժուար թէ անստոյգ երևի անաչառ քննողին։
„Սակայն մեր կառավարութիւնը յայտնապէս նպաստե-
„լով Պատրէոսի ընտրութեանը և ծածուկ համակրե-
„լով Գէորգի բաղմելուն սրբ. Գրիգորի աթոռի վրայ,
„առաւելապէս հետևում էր արտաքին քաղաքականու-
„թեան նպատակներին,—նա յոյս ունէր՝ այդ եղանակով
„վերահաստատել Էջմիածնի թուլացած ազդեցութիւնը
„Թիւրքիայի հայ եկեղեցու վրայ և սրա միջնորդու-
„թեամբ զօրացնել մեր քաղաքական նշանակութիւնը
„օսմանեան կայսրութեան մէջ ապրող հայ բնակիչների
„շրջանում։ Արդեօք իրագործուած է օրևէ չափով յիշեալ
„նպատակը։ Հարկաւ այդ առաւել յայտնի պիտի լինի
„արտաքին գործերի մինիստրութեան։ Սակայն Կովկասի
„նախկին փոխարքայի գլխաւոր դիւանատան մէջ գրա-
„նուած տեղեկութիւններին նայելով՝ հաղիւ թէ կարելի

„լինի դրական պատասխան տալ։ Ցարակոյս չկայ, որ „կաթողիկոսները կամենում և ձգտում էին իրենց իշխա„նութեան ենթարկել Թիւրքիայի հայ լուսաւորչական „թեմերը, բայց և այդպէս վարելով՝ նրանք հարկաւ „ի նկատի չունէին ծառայութիւն մատուցանել մեր քա„ղաքական շահերին, այլ բացառապէս հետևում էին „իրենց փառամոլ գահասիրութեան շահերին։ Նրանք „ոչ թէ ուզում էին գործիք դառնալ մեր կառավա„րութեան ձեռքում, այլ դրանից անկախ և թերևս „դրան ներհակ՝ տնօրէնները Թիւրքիայում բնակւող „իրենց հօտի ճակատագրի։ Նրանց փորձերը այդ ուղ„ղութեամբ՝ երևան եկան, ի միջի այլոց, Գէորգի ջան„քերի մէջ՝ Կ. Պոլսում Էջմիածնի աթոռի փոխանորդու„թիւն (վիկարիա) հաստատելու մասին։ Սակայն յայտնի „է, որ այս գործում նա յաջողութիւն չունեցաւ, պատ„ճառ որ օսմանեան դուռը հակառակեց այդ ձգտման, „և բացի դրանից՝ Կ. Պոլսի հայ հոգևորականութիւնը „ոչ մի համակրութիւն չընծայեց նրան։ Ի նկատի առ„նելով այն պայմանները, որոնց մէջ գտնւում է այսօր „Կ. Պոլսի հայոց ազգային վարչութիւնը, հարկաւ թէ „կարելի լինի սպասել, որ Կ. Պոլսի պատրիարքութիւնը „կամաւ հրաժարւի իր՝ հնութեամբ նւիրագործւած իրա„կան անկախութիւնից Էջմիածնի աթոռից, և աշխարհա„կան դասն էլ կամենայ ենթարկւել Ռուսաստանի սահ„մանների մէջ բազմող հոգևոր պետի ազդեցութեան։

„Դեռ 1865 թւին, Գէորգի ընտրութիւնից առաջ՝ „ներքին գործերի մինիստրը կարծիք յայտնեց թէ՝ „Մեր „կառավարութեանը հարկ էր ուշադրութիւն դարձնել „ոչ այնքան Կ. Պոլսի հայերի վրայ, քանի որ նրանք „ենթարկւում են այլ և այլ՝ մեզ թշնամի ազդեցու„թիւնների, որոնց դէմ մաքառել մեզ դժւար է, ինչքան „Ասիական Թիւրքիայի հայ ազգաբնակութեան վրայ»։ „Ըստ երևոյթին՝ միանգամայն ճշմարիտ, բայց դժւար

„իրագործելի միտք։ Միայն Կ. Պոլսի Հայ Հասարակու-
„թիւնն է, որ անւանապէս գլուխ ունենալով պատրիար-
„քին, կազմում է մի տեսակ առանձին մարմին, որի
„վրայ ազդելն հնարաւոր է. իսկ Ասիական Թիւրքիայի
„Հայ ժողովուրդը՝ ի հոգևոր մասին՝ թեմերի, իսկ աշ-
„խարհական մասին՝ օսմանեան կառավարութիւնից սահ-
„մանուած վարչական բաժանմունքների տրոհուած լինելով,
„ոչ այլ ինչ է, բայց եթէ առանձնական անհատների
„գումարումն, զուրկ ոևէ քաղաքական անկախութիւնից
„և միութիւնից ..... Բայց որ այդ ժողովուրդը՝ իր
„ինքնապահութեան առօրեայ հոգսերի մէջ՝ աչք դար-
„ձընէր դէպի Էջմիածնի կաթողիկոսը, համարելով նրան
„իր հովանաւոր, պաշտպան կամ միջնորդ, — դժուար
„թէ այդ ստուգէր որևէ հաւանականութեամբ։ Կաս-
„կածելի է մինչև անգամ, որ այդ ժողովրդի ոչ սակաւ
„մասը մի բան գիտենար Էջմիածնի գոյութեան մասին
„և այն նշանակութեան մասին, որ նա ունի հայոց եկե-
„ղեցու պատմութեան մէջ։ Բայց ամենակարևորն այն է,
„որ նոյն իսկ այդ ժողովրդին ազգակից և կրօնակից
„Կ. Պոլսի Հայ Հասարակութիւնը միանգամայն գլանում
„է նրա իրաւունքը՝ մասնակցելու կաթողիկոսի ընտրու-
„թեան, կամայօրէն իրեն է սեփականում բոլոր թեմերի
„թէ իրական, թէ շինծու քուէները, և այս քուէներով
„անարգել յաղթանակ է տալիս իր կանդիտատներին։

„Այս մտքի ճշմարտութիւնը ստուգւում է վկայու-
„թեամբ մեր գործակալների Փոքր-Ասիայում։ Օրինակի
„համար, Էրզրումի մեր հիւպատոսի հաղորդագրութեան
„մէջ, ուղղած կայսերական դեսպանատան՝ Կ. Պոլիս, 1866,
„ասւած է թէ հոգևորական և աշխարհական հայ
„մարդիկ, Էրզրումի, Մուշի, Վանի մէջ և այլ ուրեք,
„գանգատում էին թէ Կ. Պոլսի հայերը բացառապէս
„իրենց էին սեփականել ամբողջ ազգի անունով գոր-
„ծելու իրաւունքը՝ առանց նրանցից խորհուրդ հարցնե-

„լու։ Եթէ այդպէս չը լինէր, ասում էին նրանք, մենք „կաթողիկոսական ընտրութիւնը ռուսաց կառավարու-„թեան կը յանձնէինք։

„Ներելի է մտածել, թէ Հանգուցեալ Փէլդմարէշալ „իշխան Բարիատինսկու 1857 թուին յայտնած կարծիքը, „թէ Էջմիածնի Հայրապետական աթոռը ունենալով „Թիւրքիայի Հայ հոգևորական դասից ելած գահակալ, „կարող էր մի յենակէտ դառնալ մեր քաղաքական „ազդեցութեան համար Արևելքում, — ոչ այլ ինչ էր, „բայց եթէ մի ցաւալի մոլորութիւն, թէ այն պատ-„ճառով, որ յիշեալ սթոռը՝ այդպիսի պայմանների „մէջ՝ երբէք չի լինի մի հլու գործիք մեր ձեռքում, „և թէ այն պատճառով, որ Փոքր-Ասիայի հայերի մի-„տումը դէպի մեզ՝ ոչ այնքան առ Էջմիածին ունեցած „կրօնական հակմամբ է պահպանւում, ինչքան լոկ աշ-„խարհական յոյսերով՝ հզօր հովանաւորութեան վրայ ... „Ցառապեալ հայոց աչքերը ոչ թէ դէպի Էջմիածին „են ուղղւում, այլ դէպի քաղաքական զօրութիւնը։

„Գալով միւս նպատակին, որ նկատի էր առնւած „1857-թուին, այսինքն վերահաստատութիւն Էջմիածնի „աթոռի նուազած ազդեցութեան Թիւրքիայի հայ եկե-„ղեցու վրայ, — 25 տարուայ փորձը հաղիւ թէ ցոյց „տայ մի որևէ աջողութիւն այդ կողմից։ Սիսի կաթո-„ղիկոսական աթոռի անկախութեան առիթով ծագած՝ „և Պատրէոսի վախճանելուց յետոյ տաք տաք շարու-„նակւած վէճը տեղի ունեցաւ Կ. Պոլսի և Սիսի միջև, „մեկուսի թողնելով Էջմիածինը։ Կ. Պոլսի պատրիարք-„ները ընտրւում, հաստատւում և արձակւում են առանց „որևէ մասնակցութեան կաթողիկոսի, և եթէ սրա „անունն յիշատակւելիս էլ լինի հայ եկեղեցիների „մէջ, — պատմական աւանդութիւններին ընծայւած մե-„ծարանքի այդ պլատոնական յարգն է, կարծում ենք, „այն միակ արդիւնքը, որ ստանում է կաթողիկոսը .....

„Հասել է ժամանակը, երբ անհրաժեշտ է սահմա-
„նել որևէ որոշ ուղղութիւն մեր ապագայ գործունէու-
„թեան եղանակի նկատմամբ։ Ակներև է, որ մեր կա-
„ռավարութիւնը չէ կարող շեղուել ընտրութեան չմի-
„ջամտելու սկզբունքից, որ հռչակած էր Էջմիածնի վեր-
„ջին ընտրութիւնների ժամանակ, և անհրաժեշտ է
„յարգել ընտրութեան այն ազատութիւնը, որ սրբա-
„գործուած է մեր իսկ պետութեամբ։ Ամեն մի բացա-
„յայտ խոտորում այդ սկզբունքից, արդար տեղիք կը
„տար գանգատելու՝ ոչ միայն օտարահպատակ, ապա և
„մեր հայ ժողովրդին։ Այսպիսի մի միջամտութիւն չէ
„արգելում հարկաւ, որ Կ. Պոլսի մեր դեսպանատունը
„և մեր բոլոր գործակալները Թիւրքիայում արթուն
„կերպով դիտեն հայ հասարակութեան մտքերի տրամադ-
„րութիւնը՝ նոր կաթողիկոսի ընտրութեան վերաբերմամբ։
„Բայց ամենագլխաւորը մեզ համար այն խնդիրն է, թէ
„արդեօք պէտք է մեզ կուրօրէն համաձայնել, որ Էջ-
„միածնում կատարուելիք առաջիկայ ընտրութեան մէջ
„էլ Կ. Պոլսի հայ ժողովուրդը Թիւրքական հայ թեմերի
„բոլոր քուէները յափշտակէ։

„Բացայայտ է, որ քանի հանդուրժուի այսպիսի մի
„կարգ, ամենայն հայոց կաթողիկոսի ընտրութիւնը ոչ
„թէ Էջմիածնում կը կատարուի, այլ Կ. Պոլսում։ Միակ
„զէնքը, որով սպառազինուած է մնում մեր կառավա-
„րութիւնը՝ բարձրագոյն իշխանութիւնների այն իրա-
„ւունքն է, որով նա կարող է չհաստատել այդպէս
„ընտրուած կաթողիկոսին։ Սակայն այդ զէնքի գործա-
„դրութիւնն էլ փոքր ինչ անյարմար է։

„Կ. Պոլսի հայերը իրենց քուէարկութեան իրաւունքը
„յանուն Թիւրքիայի բոլոր թեմերի — լինէին դրանք
„90, ինչպէս ասուած էր 1858-ին, կամ 130, ինչպէս
„նրանք պահանջում էին 1866-ին — այն փաստի
„վրայ են հիմնում, որ Կ. Պոլսի պատրիարքը իբր թէ

„Թիւրքիայի ամբողջ հայ եկեղեցու գլուխն է, իսկ „Կ. Պոլսի Ազգային ժողովը՝ բոլոր Թիւրքիաբնակ հայ „ազգի ներկայացուցիչը։ Արդեօք ո՞ր աստիճանի օրի- „նական հիմք ունի այդ յաւակնութիւնը՝ նոյն ինքն „օսմանեան կայսրութեան վերաբերմամբ, — յայտնի „չէ. սակայն դժուար թէ դա ընդունելի նկատուի „կաթողիկոսի ընտրութեան գործում։ Այս ընտրու- „թեան եղանակը սահմանուած է մեր օրէնքներով, որոնք „հրաւիրում են ամբողջ հայ ազգի մասնակցութիւնը „այդ գործի մէջ, համաձայն թեմերի թուին. իւրա- „քանչիւր թեմ իրաւունք ունի պատգամաւոր ուղար- „կել, որոնցից մէկը՝ այն է հոգևորականը՝ կամ ինքը „վիճակաւոր առաջնորդը պիտի լինի, կամ նրա պատուի- „րակը. իսկ աշխարհական պատգամաւորը պէտք է նը- „շանակուի ազատ ընտրութեամբ այն դասակարգերի, „որոնք իրաւունք ունեն առ այդ՝ հայոց եկեղեցու հնա- „նդ սովորութեամբ։ Այս կարգը խստիւ պահպանւում „է մեր սահմանների մէջ և պահանջելի է, որ միւս „երկիրների ընտրողների համար էլ պարտաւորիչ լինէր։

„Եթէ Կ. Պոլսի հայոց պատրիարքը այն աստիճանի „գլուխ է հայ եկեղեցու, որ նրա գլխաւորութեան մէջ „բոլոր թեմերն էլ միանում են, ապա ուրեմն Էջմիած- „նում կատարելիք ընտրութեան ժամանակ, Թիւրքիայի „հայ եկեղեցին պարտ է ներկայանալ որպէս մի թեմ, „ունենալով մի հոգևոր և մի աշխարհական ձայն. իսկ „եթէ Թիւրքիայի մէջ՝ թեմական առաջնորդները, թէև „Կ. Պոլսի պատրիարքին ենթարկւող, վայելում են այն „ինքնուրոյնութիւնը, որ սահմանուած է հայոց եկեղեցու „կանոնական օրէնքներով, — հետևաբար նրանք ունեն „իրաւունք և պարտականութիւն մասնակցելու ամենայն „հայոց կաթողիկոսի ընտրութեանը՝ կամ անձամբ կամ „պատուիրակների միջնորդութեամբ։ — Նոյնն ասելի է և „աշխարհական պատգամաւորների մասին։ Իսկ Կ. Պոլսի

„թեմը ոչ մի բացառիկ արտօնութեան և լիազօրութեան
„իրաւունք չունի, թէև դա անմիջապէս առաջնորդում
„է պատրիարքի տիտղոս կրող մարդու ձեռքով։

„Շատ ցաւալի է անշուշտ, որ Թիւրքիայի բոլոր քուէ-
„ների ինքնակամ սեփականացնելը Կ. Պօլսի հայերի կող-
„մից՝ սրբագործուած էր մեր լռութեամբ, վերջին երկու
„ընտրութիւնների միջոցին։ Այդ նրանով է մեկնւում, որ
„Մատթէոս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ՝ մեր
„կառավարութիւնը բացարձակ նպաստելով Թիւրքիայի
„կանդիտատին, երևի հարկաւոր չհամարեց ուշադրու-
„թեան առնել այդպիսի մի հանգամանք, որ ոչ մի նը-
„շանակութիւն չունէր այն միջոցին, նախատեսուած և
„մեծ յոյսեր խոստացող նպատակին հասնելու համար։
„Իսկ 1866 թուի ընտրութեան ժամանակ՝ թէպէտ ոչ
„մի ուղղակի ազդեցութիւն չէր գործուած դրանց հե-
„տևանքի վրայ, բայց և այնպէս, այն միջոցին էլ թէ
„մեր և թէ Կ. Պօլսի հայ հասարակութեան կողմից
„ցանկացած կանդիտատն էր հանգուցեալ Գէորգ կա-
„թողիկոսը, որի բազմելը հայրապետական աթոռի վրայ
„երկուստեք էլ ցանկալի էր։ Հնութեան այս իրաւունքը,
„որ մեր կառավարութեան „լուիկ յօժարութեամբ“ ընդ-
„ունուած էր, բաւական դժուարացնում է հետևել մի
„որևէ որոշ ուղղութեան, որ ցանկալի է տալ թիւր-
„քական թեմերի մասնակցութեանը ընտրութեան գոր-
„ծում։ Սակայն այս կէտի վերաբերմամբ խնդիր
„յարուցանելու առիթ կարող էր համարուել, կարծես,
„այն անհրաժեշտ պէտքը, որ զգացուում է, թիւրքական
„թեմերի իսկականութիւնը որոշելու տեսակէտից, այն
„տարաձայնութեան պատճառով՝ որ առաջ էր եկել
„դրանց քանակի վերաբերմամբ, վերջին երկու ընտրու-
„թիւնների ժամանակ։ Ցանկալի էր, որ քուէի իրաւունք
„ունեցող ճանաչուէին իսկապէս հոգևոր-վարչական շրջ-
„ջանները և ոչ թէ անգոյ, կեղծ (ֆիկտիֆ) թեմերը

„միայն մի վանքով, ուր որ նստում է մի եպիսկոպոս
„կամ արքեպիսկոպոս։ Ցայտնի է որ մեր անդրկովկասեան
„երկիրների մէջ էլ՝ Ռուսաստանի հետ միանալուց առաջ
„և մասամբ մինչև նոր ժամանակներս, կային բազմաթիւ
„եպիսկոպոսական աթոռանիստ տեղեր, որոնք բոլորովին
„տարբեր էին այն գաղափարից, որ տրւում է թեմերին,
„իբրև հոգևոր վարչական հողային բաժանմունքների։
„Այս առանձին եպիսկոպոսանիստ աթոռները հետզհետէ
„անհետացան. մնացին միայն չորս թեմեր, և այս ամ-
„բողջ երկիրը՝ գրեթէ իր մէկ միլիոն հայ ազգաբնա-
„կութեամբ՝ միայն չորս աշխարհական ձայն ունի կա-
„թողիկոսի ընտրութեան ժամանակ. իսկ ամբողջ ռուսաց
„կայսրութեան մէջ՝ միայն վեց այդպիսի ձայն։ Պարսկաս-
„տանը, որ Հնդկաստանի մէջ բնակող հայերի հետ միասին
„միայն երկու թեմ է կազմում, ուղարկում է Էջմիա-
„ծին միայն երկու աշխարհական պատգամաւոր։ Այն
„ինչ Թիւրքիայի հայերը պահանջում էին և յաջողե-
„ցան էլ ընդունել տալ վերջին երկու ընտրութիւնների
„ժամանակ՝ 45 միայն աշխարհական ձայներ։ Այդպիսի
„մի ակնյայտնի անպատեհութիւն և անհաւասարութիւն
„միայն նրանով կարելի է բացատրել, որ Թիւրքիայի
„մէջ, ըստ հին սովորութեան, երբեմն անմիջապէս
„պատրիարքարանից կախւած արքեպիսկոպոսներ կամ
„եպիսկոպոսներ կան, որոնցից սակայն ամենաշնչին մասն
„է կառավարում մի թեմ, բառիս բուն առումով։ Այս
„խնդրի լուսաբանութիւնը կարծես թէ շատ անհրաժեշտ
„պիտի լինէր ձայների թուական յարաբերութիւնը ճիշտ
„կանոնաւորելու համար, ձայների, որ պիտի ունենայ
„ռուսաց կայսրութեան սահմանների մէջ բնակւող հայ
„ազգի մի մասը՝ համեմատութեամբ այն մասի, որ ապ-
„րում է օսմանեան պետութեան մէջ։ Յարաբերու-
„թիւնը 6 առ 45՝ ընաւ կարող չէ կազմել մի ար-
„դար յարաբերութիւն, եթէ հիմք առնենք ազգայ-

„նակութեան թիւը մէկ և միւս կայսրութեան մէջ։
„Այս խնդրի յարուցանելը և պարզելը ցանկալի է
„ցանկալի է որ այդ բանը կատարուէր մերձակայ ապա-
„գայում, առաջ քան թէ լրանար մօտակայ ընտրու-
„թեան համար սահմանուած տարեկան ժամանակամիջոցը։
„Ցարակոյս չը կայ որ Կ. Պօլսի մեր դեսպանատունը
„կարող է մեր հին պատմութիւնների միջնորդութեամբ ձեռք
„բերել կարի ստոյգ տեղեկութիւններ՝ Թիւրքիայում
„եղած հայոց իսկական թեմերի թուի մասին։ Այսպիսի
„պարագաներում միմիայն Կ. Պօլսի պատրիարքութեան
„ցուցմունքներին ապաւինելը չէ կարող պարտաւորիչ
„լինել, մանաւանդ որ այդ տարբեր ցուցմունքներին
„նայելով՝ հնարաւոր է եղել 20 նոր թեմերի ծագումն
„1858 թուականից մինչև 1866 թուականը։ Յայտնապէս
„տարօրինակ երևոյթ։

„Միւս՝ լիակատար ուշադրութեան արժանի և յոյժ
„կարևոր նշանակութիւն ունեցող խնդիրը՝ յարաբերու-
„թեան այն եղանակն է, որին հետևում է Էջմիածնի
„Սինոդը, կաթողիկոսի մահը Թիւրքիայի վիճակներին
„ծանուցանելիս և նոր ընտրութեան մասնակցելու հրա-
„ւիրելիս։ Ընդունուած սովորութեան համեմատ՝ Էջմիածնի
„Սինոդը ուղարկում էր Թիւրքիա՝ Կովկասի գլխաւոր
„վարչութեան և արտաքին գործերի մինիստրութեան
„միջնորդութեամբ՝ միայն երկու զեկուցական և հրաւի-
„րական հրովարտակներ, յանուն Կ. Պօլսի պատրիարքի։
„Այս եղանակը հաղիւ թէ պատշաճաւոր է և հաղիւ
„թէ յարմարեցրած նոյն իսկ այն հայեացքին, որին
„պարտ ենք հետևել Էջմիածնի ամենի յարաբերութիւն-
„ների նկատմամբ՝ Թիւրքիայի թեմերի հետ։ Թէպէտ,
„դժբախտաբար, այդ բոլոր թեմերը իսկապէս ոչ մի
„ուղղակի կախում չունեն կաթողիկոսից, որովհետև
„ամբողջապէս ենթարկուած են Կ. Պօլսի պատրիարքին,
„սակայն հայոց եկեղեցու հին կարգերի ոգուն նայելով,

„այս եկեղեցու բոլոր թեմական առաջնորդները պար-
„տաւոր են Էջմիածնի մէջ ձեռնադրութիւն ստանալ և
„կաթողիկոսին ենթարկուել։ Ս. Գրիգորի աթոռի և նրա
„Փոքր-Ասիական հոգևոր հօտի միջև գէթ որևէ յա-
„բաբերութեան վերականգնումը՝ թէ եկեղեցու աւան-
„դութիւններին համապատասխան կը լինէր և թէ մեր
„քաղաքական շահերին։ Այս նպատակին հասնելու հա-
„մար՝ օգտակար կը լինէր գուցէ սովորութիւն հաստա-
„տել, որ հայրապետի մահուան դէպքում Էջմիածնի
„Սինօդը առանձին հրաւիրական թղթեր ուղարկէր
„թիւրքական ամեն թեմ։ Այս կարգը լիովին համաձայն
„կը լինէր մեր օրէնքին, որի մէջ (յօդ. 916, Ա. մաս,
„Ա. հատոր, Կանոնագիրք կառավարութեան հայ-լուսա-
„ւորչական եկեղեցու) դրականապէս ասուած է, թէ
„Սինօդը ուղարկում է կաթողիկոսի մահը ծանուցանող
„ղեկուցագիր թէ Ռուսաստանի և թէ արտաքոյ նրա
„սահմանների գտնուող ամեն մի հայ-լուսաւորչա-
„կան թեմին։ Այս գրերը միևնոյն ժամանակ և կաթո-
„ղիկոսի ընտրութեանը մասնակցելու հրաւէր յայտնող
„պաշտօնագրեր են։ Էրզրումի հիւպատոսի՝ 1866-ին
„հաղորդած վերոյիշեալ տեղեկութիւնները իրաւունք են
„տալիս ենթադրելու թէ Սինօդի այդ օրինակ դիմումն
„առ ամեն մի վիճակ՝ համակրութեամբ կ'ընդունուէր
„Թիւրքիայի գաւառներում՝ թէ հոգևոր և թէ աշխար-
„հական հայ ազգաբնակութիւնից, և դա համաձայն կը
„լինէր ներքին գործերի մինիստրութեան 1865 թուի
„արտայայտած մտքին,—թէ մեր կառավարութեանը հարկ
„էր ուշադրութիւն դարձնել ոչ այնքան Կ. Պոլսի հա-
„յերի, որոնք ենթակայ են այլևայլ մեղ թշնամի և
„մեղ համար դժուար դիմադրելի ազդեցութիւնների,
„որքան Ասիական-Թիւրքիայի հայ ժողովրդի վրայ։

„Այս շատ ճշմարիտ գաղափարի իրագործման միակ
„միջոցը, որքան որ դա վերաբերում է Էջմիածնի

„խնդրին, այն կը լինէր, որ կաթողիկոսի ընտրութեան
„ուղղակի մասնակցելու հնար տրէր այդ ժողովրդին։
„Կարելի է հաստատ յուսալ թէ այդ մասնակցու-
„թիւնը չի արտայայտուի մեր դիտումներին և շահերին
„հակառակ գործողութիւնների մէջ։ Այսպիսի մի նորա-
„ձևութիւն, անտարակոյս, դժգոհութիւն, թերևս և բա-
„ցարձակ բողոք կը յարուցանէ կ. Պոլսի հայ հասա-
„բակութեան կողմից. բայց կասկած չկայ, որ երբ յետ-
„եալ նորաձևութիւնը կարողանայ անդամալուծել այդ
„հասարակութեան վճռող ազդեցութիւնը կաթողիկոսի
„ընտրութեան գործում և վերահաստատել մի որևէ ուղ-
„ղակի կապ Էջմիածնի և Փոքր-Ասիայի թեմերի միջև
„— այն ժամանակ եթէ կ. Պոլսի հայերն հրաժարուէին
„անգամ մասնակցել Էջմիածնի կաթողիկոսի ընտրու-
„թեան, դա մեզ փոյթ չէր լինիր։ Չէ կարելի անտես
„թողնել, որ կաթողիկոսի ազդեցութեան վերականգ-
„նումը Փոքր-Ասիայի հայերի վրայ՝ միայն նրանով է հնա-
„րաւոր, որ նա անմիջական հաղորդակցութիւններ ու-
„նենայ հայերի հետ։ Իսկ այդպիսի հաղորդակցութիւն
„այն ժամանակ միայն առաջ կը գայ, երբ նրա ընտրու-
„թեան մէջ ևս մաս ունենան այդ երկրի հոգևոր և
„աշխարհական դասակարգերը։ Քանի որ Էջմիածնի և
„մեզ սահմանակից գաւառների հայ ազգաբնակութեան
„միջև կանգնած կը լինեն կ. Պոլսի պատրիարքը և կ. Պոլսի
„հայ հասարակութիւնը, — ունայն կ'անցնեն մեր բո-
„լոր ջանքերը՝ վերահաստատելու ամբողջ հայ ազգի
„աչքում ս. Գրիգորի աթոռի գերակշռող նշանակու-
„թիւնը, և մենք՝ ընկնելով ստուերի ետևից, առաւել և
„առաւել կը վնասենք մեր ներքին շահերին և կը
„մատնենք դրանց մեզ թշնամի ուժերի ձեռքը։

„Վերոյիշեալ բոլոր կշռադատութիւնների հիման
„վրայ, կարծես անհրաժեշտ պիտի թուէր՝

„Այժմէն իսկ յանձնել կ. Պոլսի մեր դեսպանութեան

„որ նա պահանջէր՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքից ճիշտ
„տեղեկութիւններ՝ օսմանեան պետութեան մէջ եղած
„Հայ լուսաւորչական թեմերի մասին, իւրաքանչիւր թեմի
„հողային տարածութեան որոշումով հանդերձ. իսկ ըս-
„տացուելիք տեղեկութիւնները վերաստուգելու համար,
„եթէ հարկ լինի, դիմել մեր հիւպատոսներին և հարցնել
„թէ քանի՞ հատ են յատկապէս այն թեմերը, որոնք
„կազմում են որոշ քանակութեամբ բնակիչ բովան-
„դակող հոգևոր վարչական միութիւններ։

„Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու իրաւունք
„ունեցող ճանաչել միայն այնպիսի թեմեր, որոնց մէջ
„կարող է ընտրուել մի անկախ աշխարհական պատգա-
„մաւոր.

„Յատկացնել Կ. Պոլսի ժողովին միայն մի աշխարհա-
„կան պատգամաւոր ունենալու իրաւունք՝ Էջմիածնի
„ընտրութեան գործում, և պահանջել, որ իւրաքանչիւր
„թեմ կամ իր աշխարհական պատգամաւորն ընտրէ,
„կամ թէ գրաւոր կարծիք յայտնէ՝ իր ցանկութեան
„յիշատակութեամբ հանդերձ.

„Թիւրքիայի մէջ եղած իսկական թեմերի ոլքանու-
„թեան մասին տեղեկութիւն ստանալուց յետոյ՝ առա-
„ջարկել Էջմիածնի Սինոդին, որ նա՝ ընդհանուր սահ-
„մանուած կարգով՝ հրաւիրական թղթեր ուղարկէ
„առանձնապէս ամեն մի թեմի, և դրանցից ամեն մէկին
„դարձեալ առանձնակի զեկուցում տայ՝ ընտրութեան
„պայմանաժամի մասին։ Եթէ պատահի որ պատասխան
„չգայ, համարել այդպիսի թեմը ընտրութեան ոչ-
„մասնակցող և ձայն տալու իրաւունք չունեցող.

„Իրաւունք տալ իւրաքանչիւր թեմական առաջնորդի
„Թիւրքիայում—համաձայն յօդ. 917, Կանոնագիրքը կա-
„ռավարութեան լուսաւորչական-Հայոց եկեղեցու Ռու-
„սաստանում,—կամ անձամբ գալ Էջմիածին՝ կաթողի-

„կոսի ընտրութեան համար, կամ թէ մի հոգևոր նի-
„բակ նշանակել իր կողմից.

„Ընտրութեան մասնակցելու համար՝ Կ. Պոլսի պատ-
„րիարքից ուղարկուած հոգևոր անձին համարել միայն
„մի թեմի ներկայացուցիչ, եթէ նա չունենայ առանձին
„յանձնարարականներ՝ ուրիշ թեմական առաջնորդ-
„ներից.

„Բոլոր այդ կարգադրութիւնները, ըստ կարելւոյն,
„զանց չառնել հրապարակել հայոց լեզուով՝ պարբերա-
„կան թերթերի միջոցով, թէ մեր սահմանների մէջ և
„թէ միւս երկրներում.

„Այլևս բնաւ չհամաձայնել որ թիւրքական թեմերի
„բոլոր ձայները Կ. Պոլսի հայերը գրաւէին, եթէ այս
„պատճառով նրանք հրաժարուելու անգամ լինէին առա-
„ջիկայ ընտրութիւններից, և չմոռանալ՝ որ առաւել վտա-
„կացութիւն, քան թէ այն, որ ստեղծուել էր 1858 և
„1866 թուականների ընտրութիւններով, կարող չէ
„առաջ գալ:

„Ցիշեալ միջոցների ընդունելութիւնն և գործադրու-
„թիւնը ամենայն հաւանականութեամբ այն հետևանքը
„կունենայ, որ ամենայն հայոց հայրապետի ընտրու-
„թիւնը մի անգամ՝ ընդ միշտ բոլորովին օրինական և
„մեր շահերին համապատասխան հիմքի վրայ կը հաս-
„տատուէր: Այդ միջոցները, անշուշտ, համակրութեամբ
„կ՝ընդունուէին Թիւրքիայի ամբողջ հայ ժողովրդի կող-
„մից՝ ի բաց առեալ միայն Կ. Պոլսի հայերը. և եթէ
„վերջինները ազդելով օսմանեան կառավարութեան
„վրայ՝ յաջողէին դրան էլ համոզել, որ պաշտպան
„կանգնէր իրենց անհիմն պահանջներին և արգելէր ջոկ
„ջոկ պատգամաւորներ ուղարկելը Էջմիածին՝ Թիւրքիայի
„թեմերից, — դարձեալ այդ էլ չէր խափանի մեզ՝ պըն-
„դելու մեր այն լիովին օրինական սկզբունքի վրայ, որ
„մեր գործողութիւնների հիմքը պիտի լինի:

„Տարակոյս չկայ, որ եթէ այսպիսի կարգ պահպանե-
„լու լինենք, նոր կաթողիկոսի ընտրութիւնը՝ ներկայ
„թուականի (1883) վերջն կամ յաջորդ տարւայ
„սկզբին, ամենայն հաւանականութեամբ, մեր կառավա-
„րութեան կամքի համեմատ կը կատարւի։ Էջմիածնի
„մէջ շատ աւելի հեշտ կը լինի առանձին թիւրքական
„թեմերի պատգամաւորների ձայնները մեզ հաճելի անձ-
„նաւորութեան վրայ ուղղել, քան թէ դէպի մեզ հան-
„գուցանել Կ. Պոլսի հայերին, եթէ նրանց ընտրելին
„կարող չը լինէր հաւանութիւն գտնել մեր կառավա-
„րութեան կողմից։ Անհնարին է չխոստովանել, որ այս
„անգամ մեր հոգևորականների դասից մի անձի բար-
„ձրանալը կաթողիկոսական աթոռի վրայ, շատ ցանկալի
„կը լինէր, որպէսզի թէ մեր լուսաւորչական հայ հո-
„գևորականութիւնը իրեն խսպառ մերժուած չհամարէր
„այդ աթոռից, — ինչ որ շատ դառն և լքող տպաւո-
„րութիւն կը գործէր նրա վրայ, — և թէ մանաւանդ
„նոր կաթողիկոսը մեր կառավարութեան անմիջական
„աղդեցութեան տակ գտնուէր, աւելի շատ և աւելի
„լաւ անձնուէր լինելով իր եկեղեցու և օտի այն շա-
„հերին, որոնք իր գլխաւոր պարտաւորութիւնն են կազ-
„մում, և որոնք, դժբախտաբար, քիչ էին ճանաչուած
„վերջին երկու հայրապետներից։

„Հարկաւ, դժուար է մեր բարձրատիճան լուսաւոր-
„չական հայ հոգևորականների շրջանում մատնացոյց
„անել մի այնպիսի անձնաւորութեան վրայ, որը իր կըր-
„թութեամբ և բարոյական արժանիքներով՝ համապա-
„տասխան հանդիսանար այն գործին, որ սպասում է իր
„պետից՝ հոգևոր և բարոյական նկատմամբ՝ տառապեալ
„հայ եկեղեցին։ Սակայն, 25 տարւայ տխուր փորձը շատ
„բացորոշ կերպով ապացուցեց, որ Թիւրքիայի հայ
„հոգևորականութիւնն էլ ապիկար է դուրս բերելու
„իր շարքերից այդ իդէալին մերձեցող մի կաթողիկոս։

„Ռուսաստանի հայ հոգևորականների դասից ընտրելի „հայրապետը գոնե չի մտցնի Էջմիածնի մէջ այն աղե- „տալի ազդեցութիւնները, որոնք գալիս են Բոսփորի ափերից։

„Բայց որովհետև, չնայելով ոչ մի զգուշութեան՝ „վերջ իվերջոյ դարձեալ Թիւրքիայի լուսաւորչական հայ „հոգևորականներից մէկը կարող է նստել հայրապե- „տական աթոռի վրայ, որ կը խաբէր մեր յոյսերը, „ինչպէս որ խաբեցին Հանգուցեալ Մատթէոսն և Գէորգը, „— ուստի աւելորդ չի լինի ժամ առաջ որոշել մեր „գործողութեան եղանակի այն էական հիմքերը, որոնց „որ հետևելու է մեր կառավարութիւնը, Էջմիածնի աթոռի „հետ ունենալիք իր յարաբերութիւնների մէջ։ Գործո- „ղութեան այդ եղանակը սահմանուած էր Կ. Պոլսի մեր „նախկին դեսպանից, նրա հեռագրի մէջ 7/19 յու- „նիսի, հետևեալ խօսքերով.

Il serait opportun que l'administration du Caucase eût soin d'agir, dès l'installation du nouveau patriarche, afin de le maintenir dans des dispositions correctes.

(Թարգմ. — Նպատակայարմար է, որ Կովկասի վարչութիւնը չանք գործ դնէր, կաթողիկոսի հաստատելուն պէս, ուղիղ տրամադրութիւնների մէջ պահելու նրան)։

„Կովկասի գլխաւոր վարչութիւնը ընդունեց գործո- „ղութեան այդ հիմնագիրը և հետևում էր դրան, „առանց երբէք շեղելու յարգութեան և ակնածու- „թեան այն ձևերից, որոնք պահանջում էին կաթո- „ղիկոսի կոչումը կրող անձնաւորութեան հետ բանակ- „ցելիս. բայց և այնպէս նա հարկ էր դատում ազդու- „կերպով դիմադրել նրա բոլոր ձգտումներին՝ աղատ- „ուելու մեր օրէնքների և մեր կառավարչական հրա- „հանգների հնազանդութիւնից։ Այս մասին բաւական „վկայութիւն կարող են տալ Կովկասեան նախկին փո- „խարքայի գլխաւոր վարչութեան բանակցութիւնները

„ներքին գործերի մինիստրութեան հետ. մեր վար-
„չութիւնը անպատեհ էր համարում զիջողութիւններ
„բանեցնել վարչական ծանրակշիռ նշանակութիւն ու-
„նեցող կարևոր խնդիրների մէջ։ Սակայն այս տեսա-
„կէտը նեցուկ չէր գտնում կենտրոնական բարձր կա-
„ռավարութեան կողմից։ Այս վերջինը, կարծես, առաւել
„կարևոր էր դատում յամենայն դէպս հաշտ ընթացքի
„հետևել Հանգուցեալ Հայրապետի հետ հաղորդակ-
„ցելիս՝ առանց պնդելու, որ նա անպայման կատարէր
„օրէնքի պահանջները, — այն յուսով անշուշտ, թէ
„այդպիսի եղանակով կաթողիկոսի յամառութիւնը կ'ա-
„մոքւէր, և երկիւղ կրելով թերևս, թէ նա՝ բուռն
„վարմունքից՝ մի անհաճոյ թշնամական քայլ գործելու
„կըստիպուէր։ Սակայն հետևանքները այդ յոյսը չար-
„դարացրին, իսկ երկիւղները հաղիւ թէ հիմնաւոր էին։
„Հանգուցեալ Գէորգ կաթողիկոսը, իրաւ, ասում էր
„զայրացման ժամանակ, թէ կը թողնէ Էջմիածինը
„և Թիւրքիա կ'երթայ. սակայն դժուար թէ հարկ լինէր
„կարևորութիւն ընծայել այդ սպառնալիքներին, մի
„կողմից այն պատճառով, որ նա չէր հրաժարւիլ Էջ-
„միածնի վանքի մէջ վայելած նիւթական օգուտներից,
„միւս կողմից էլ այն պատճառով, որ նա չէր կարող
„չը գիտենալ թէ վերջ իվերջոյ առաւել մեծ նշանակու-
„թիւնը հաւանօրէն կը մնար սեփականութիւն ոչ թէ
„կաթողիկոսի կոչումը կրող անձին, այլ նրա կեցու-
„թեան տեղին, որ գտնւում է ս. Գրիգորի գերեզմանի
„վրայ։ Յամենայն դէպս՝ ոչ մեր կառավարութեան ար-
„ժանապատուութիւնը, ոչ էլ մեր ներքին քաղաքակա-
„նութեան շահերը չեն թոյլ տալիս, որ կաթողիկոսը
„մոռանար, թէ նա ռուսաց կայսեր հպատակն է և
„և ռուսաց օրէնքներին ենթակայ։ Նրա մէջ այս համոզ-
„մունքի հաստատելը՝ վարուողութեան պատշաճի ձևերը
„լիովին յարգելով, թերևս աւելի կարևոր և էական է,

„քան թէ առաւել կամ նուազ յոյսեր դնելը նրա մաս-
„նակցութեան վրայ՝ ի նպաստ մեր արտաքին քաղաքա-
„կանութեան շահերին։ Ամենայն հայոց ապագայ կա-
„թողիկոսի հետ՝ մեր կառավարութեան ունենալիք յա-
„բաբերութիւնների իբրև նշանաբան պէտք է ըն-
„դունել՝ Ս ո ւ ա վ ե թ ե ր ի ն մ օ դ օ, Ֆ օ ր տ ե թ ե ր
„ի ն ր է (ձևերի մէջ փափուկ եղիր, գործի մէջ՝
„անհաշտ)։

ԲԱՐՕՆ ՆԻԿՕԼԱՅԻ
Կառավարիչ Կովկասեան նախկին փոխարքայի դիւանատան

—

. . . . . .

Քսան տարի է անցել՝ դրա շարադրութեան օրից։ Եւ որպիսի՜ փոփոխութիւններ։ Զը մնաց այլևս ոչ թիւրքահայերի վրայ ազդելու ծրագիր, ոչ էլ „ձևերի մէջ փափուկ լինելու“ խնդիր։ Այժմ մի նպատակ միայն կայ, — զրկել կաթողիկոսին նրա բոլոր իրաւունքներից։ Իրաւազուրկ կաթողիկոս, և եթէ կարելի է՝ նոյն իսկ ոչ մի կաթողիկոս, — ահա արդի ծրագիրը, փայփայած նպատակը կենտրոնաձիգ միապետութեան։

ԴԱՒ—ՎԱՐՊԵՏՆԵՐԸ

(ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Գեներալական նշանաբանը. — „Եթէ չը կան, պէտք է ստեղծել“. — Դաւագործների գունդը. — „Հայերի զաղտնի ժողովները“ եւ նահանգապետի հրամանը. — Շալիկով եւ Տիզենհաուզէն. — Գեներալ Փրէզէ եւ հայկական ցոյց Էջմիածնում. — „Հայերը քանդում են ռուսաց եկեղեցին“. — Կեղծ պրոկլամասիոնը. — Կիպիանի եւ վրաց ապստամբութիւնը. — Հայկական ցոյց Արծրունու թաղման ժամանակ. — Ջրօրհնէքի շարժումը. — Եպիսկոպոսական աքսորը. — Մեծ դաւադրութիւնը եւ զաւեշտական վախճան. — Զինուվիսկութեան Աստուածը։

Լինում է չի լինում՝ մի գեներալ։ Գլխով ալեւոր, հոգւով՝ աւելի։ Ռուսպետական չէր նա, այլ իրօք, բազմած Թիֆլիզի ժանդարմական վարչութեան մէջ, հպարտ իր անցեալով, վստահ՝ ապագայի վրայ։ Խելքով փոքրիկ, բայց դիրքով՝ մեծ։ Պետ՝ մի ամբողջ վարչութեան, նա էր ծրագիրներ կազմողը, գործեր ստեղծողը, ինչպէս և գործեր թաղողը։

— Ձերդ գերազանցութիւն, ուշի ուշով քննեցի բոլորը, բայց ոչ մի գործ չը գտայ, դաւեր չը կան, — զեկուցեց Համեստ պաշտօնեան։

— Եթէ չը կան, պէտք է ստեղծել։ Հրամայաբար շեշտեց նորին գերազանցութիւնը, աչքերը յառելով իր ստորադրեալի վրայ։ Գնացէք և ստեղծեցէք։ Հասկանում էք։

Եւ գնացին ու ստեղծեցին։ Վարպետները անպակաս են։ Զինուվիսկների հսկայական գունդը, որի արշաւանքին ենթակայ է այս երկիրը, ուրիշ՝ աւելի

կարևոր գործ չունի, բայց եթէ խնդիրները յարուցանել, դաւեր ստեղծել, մանաւանդ ազգայնական դաւեր։

Դաւագործների թագաւորութիւն է այս։

Այդ է պատճառը, որ երբ Կովկասում նշանակւում է ոևէ պաշտօնեայ, առաջին հարցը, որ տրւում է, այն է՝ թէ ինչպէս է վերաբերւում նա ազգայնական խնդիրներին։ Նոյնն է և աւելի բարձր պաշտօնեաների համար։ Երբ հեռագիրը լուր է բերում, թէ կայսրը ներքին գործերի մինիստր նշանակեց,—Կովկասում, ինչպէս և Լիհաստանում կամ Ֆինլանդիայում, առաջին հարցը, որ ծագում է „հպատակ“ ազգերի գլխում, այն է՝ թէ ինչպէս է նայում նոր մինիստրը այս կամ այն ազգութեան։

Դա քաջածանօթ երևոյթ է, յայտնի ոչ միայն մեծ-մեծ քաղաքներում, այլ նոյն իսկ յետ ընկած գիւղերում, ամենատգէտ գիւղական հասարակութեան մէջ։ Դիցուք, Ընդրկովկասի ոևէ յետին գաւառում — Նոր-Բայազէթ, Զանգեզուր կամ Հին-Նախիջևան — նշանակւում է գաւառապետ կամ աւելի ստոր պաշտօնեայ՝ պրիստաւ։ Անմիջապէս ամբողջ գաւառում այն հարցն է զարթնում, թէ արդեօք նոր պրիստավը հայատեաց է թէ թրքասէր, կաշառակեր թէ օրինաւոր։ Օրէնքով արգելւած է կաշառակերութիւնը. օրէնքով թոյլ չէ տրւում հային հալածել նրա համար, որ նա հայ է, կամ վրացուն ու թուրքին պաշտպանել միմիայն նրա համար, որ նա վրացի կամ թուրք է. — բայց ո՞վ է օրէնքին նայողը։

Եւ այն դժբախտ օրերից, երբ պաշտօնեայի ընտրութեան գործում՝ առաջին տեղը բռնեց ազգայնական-քաղաքական տեսակէտը, — այն օրից դաւագործները դարձան աներկիւղ և ապականութիւնը՝ ընդհանուր։

Առանց ոևէ դրական հետազօտութեան՝ կառավարութիւնը վճռեց, որ Կովկասում կառավարչական բոլոր պաշտօնները պիտի տալ ռուսներին, և իբրև

հետևանք՝ այժմ տեղական ադմինիստրացիայի գլխաւոր տարրը կազմում են ռուս ազգութեան պատկանողներ։ Նրանք չգիտեն տեղական ոչ մի լեզու. ծանօթ չեն ժողովրդի կեանքին, տեղական պայմաններին և այդ պատճառով, եթէ երբեմն օրինաւոր մարդիկ էլ են, իրօք լաւ պաշտօնեայ չեն։ Շրջապատողները նրանց խաղալիք են շինում իրանց ձեռքում։ Տեղացիներին պաշտօններ չեն տալիս կամ շատ քիչ։ Վրացուն եթէ ոչ միշտ՝ գոնէ մեծ մասամբ ուղարկում են այնտեղ, որտեղ ազգաբնակութիւնը հայ է, յուսով, որ վրացին հայի հետ չի միանայ, այլ թշնամական դիրք կը բռնի։ Աւելի ներողամիտ են դէպի թիւրքերը. բայց դժբախտաբար, շնորհիւ ընդհանուր ապականութեան, փոքր իշատէ զարգացած, օրինաւոր թիւրքերը չեն, որ պաշտօնի են հրաւիրւում, այլ մեծ մասամբ բոլորովին տգէտ, բայց ճարպիկ կերպով ռուս „մեծաւորին“ կաշառողները։

Ընհամենատ աւելի խիստ են դէպի հայերը, որոնց, ինչպէս յայտնի է, պաշտօններ չեն տալիս։ Զինուորականին այժմ ուղարկում են Լեհաստան կամ հիւսիսային նահանգները ու Սիբիր։ Նոյն իսկ հայ զինուորներին սկսել են ճամբայ դնել նոյնին նահանգները։ Ադմինիստրացիայի քիչ-շատ պատասխանատու պաշտօնի մէջ այժմ համարեա հայ չկայ։ Ոչ մի հայ-նահանգապետ։ Նոյն իսկ ոչ մի հայ-ոստիկանապետ։ Կառավարութիւնը կասկածում է, որ նրանք կը միանան „հայկական շարժման“։ Մինչև անգամ այնպիսի անմեղ պաշտօններ, ինչպէս է փոստային ծառայութիւնը, ակցիզային պաշտօնը, հարկային տեսչութիւնը և ի վերջոյ դատաստանական պրիստավի անշան պաշտօնը՝ սիստեմատիկաբար խլում են հայերից կամ եթէ չեն խլում, այդ պաշտօնները վարող հայերին ուղարկում են այնպիսի տեղեր, ուր ապրում են վրացիներ, թիւրքեր, ռուսներ, լեռնականներ։ Նոյն իսկ պե-

տական բանկում հային պաշտօն չեն ուղում տալ Հաղարիից մէկը։ Մի Ֆինանսիստ հայ երիտասարդ, մինչև իսկ կապերով, պաշտօն է խնդրում պետական բանկի կովկասեան ճիւղերից մէկում։ Պետերբուրգում չեն ամաչում գրաւոր կերպով նրան պատասխանել, որ սիրով նրան, իբր լաւ Ֆինանսիստի, պաշտօն կրտան, որտեղ կամենայ, միմիայն ոչ... Կովկասում։ Հայերին հեռացնում են մանաւանդ Թիւրքիայի սահմանագծից, որպէսզի սահմանագլխի կէտերում ոչ մի կառավարական պաշտօն՝ տանջուող Թիւրքահայերի աղգակիցների ձեռքում չը լինի...

Շատ տրամաբանական է եզրակացնել, որ կովկասեան վարչութեան կազմը՝ դրուած այդ աստիճան անբնական և անմիտ հիմքերի վրայ, լաւ լինել չէ կարող։ Դա ապականուած է։ Ոչ միայն տեղական օրինաւոր ուժերը, այլև լաւ ռուսները տեղ չեն գտնում նրա մէջ, որովհետև բուն Ռուսաստանից մեծ մասամբ այն տեսակ ռուսներ են համաձայնում թողնել իրենց մայր հայրենիքը և գնալ հեռու Կովկաս — որ երկար ժամանակ աքսորի վայր էր — որոնք արժէք, պաշտօն, ապագայ չունեն և գնում են ապրուստ որոնելու այնտեղ, որտեղ ռուսը ծագում ունենալը՝ արդէն մի գրաւական է շահաւէտ պաշտօններ ստանալու...

Ուրեմն ողբալի է այս „երևոյթի“ քաղաքական կողմը։ Ցարուած ընդհանուր հոսանքով, ոգևորուած արագ առաջ գնալու տենչով, ռոճիկի և շքանշանի ստրուկները չեն ճանաչում ոչ չափ, ոչ սահման, ոչ օրէնք և ոչ էլ պատասխանատուութեան երկիւղ։ Հնարում են դաւեր դաւերի ետևից, մէկը միւսից աւելի վտանգաւոր։

Ահա մի քանիսը դրանցից։

1895-96 թիւն էր, ճիշտ այն ժամանակ՝ երբ Թիւրքահայերի խնդիրը սուր կերպարանք էր ստացել և Կովկասում ամեն մի չինովնիկ պարտք էր համարում

„Հայկական դաւադրութիւններ“ գտնել։ Մի ուղղափառ գաւառապետ, հոսանքից տարուած, սկսեց մէկը միւսի ետևից զեկուցումներ ուղարկել նահանգապետին՝ կրկնելով, որ քաղաքի մէջ „Հայերը գաղտնի պատրաստութիւններ են տեսնում, զէնքեր են գնում և ուղարկում, գիշերային գաղտնի ժողովներ են կազմակերպում“... Եւ միշտ վերջացնում էր նրանով, որ խոնարհաբար թոյլտուութիւն էր խնդրում „աքսորելու զեկավարներին՝ գաւառի խաղաղութիւնը ապահովելու համար“... Նահանգապետը, որ երկար ժամանակ ոչ մի պատասխան չէր տալիս այդ „քաղաքական զեկուցագրերին“, յոգնած այդ բոլորից՝ յանկարծ հեռագրով իր մօտ կանչեց գաւառապետին։ Հաւաքելով իր բոլոր փաստերը, գաւառապետը ճանապարհ ընկաւ Նահանգական քաղաքը։ Նա արդէն վաղօրօք վայելում էր այն քաղցր բոպէները, երբ մեծաւորը՝ լսելով զեկուցումները, կը սեղմի իր ձեռքը և անմիջապէս կ'առաջադրի նոր շքանշանի, „ի վարձատրութիւն նրա արթուն հսկողութեան“։ Հասաւ տեսակցութեան օրը։—„Պատմեցէք բերանացի, ինչ որ գիտէք“։ — Եւ գաւառապետը սկսեց... անլուր առասպելներ։ Հէնց այն բոպէին, երբ նա յաղթական ժպիտով աւարտեց իր պատմութիւնը, ծերունի նահանգապետը վեր թռաւ տեղից և որոտաց. „Վերադարձէք այսօր և եթ. մի կողմ թողէք այդ բոլոր յիմար պատմութիւնները, որոնք միայն ձեր գլխում գոյութիւն ունեն, և կուեցէք մի բանի դէմ — թիւրք աւազակների դէմ, որոնք քարուքանդ են անում գաւառը։ Իսկ ինչ վերաբերում է հայերին՝ նրանց համար ես եմ երաշխաւոր։ Հասկացաք“։ Այդ օրից սկսած՝ ամեն ինչ փոխուեց ու գաւառապետի զեկուցումները միշտ վերջանում էին այս խօսքերով՝ „Հայերը կատարելապէս խաղաղ են և օրինապահ“։

Խաղաղ էր Երևանը, ինչպէս ինքն Արարատ, որի

հովանու տակ նա ապրում է այսքան դարեր։ Մարդիկ իրենց գործին էին գնում. խօսում այն, ինչ թող էր տուած, և կարդում այն՝ ինչ ցենզօրն էր հաւանել։ Բայց ահա փչեցին նոր քամիներ։ Եւ ութսունական թուականներին, երբ Երևանի նահանգը կառավարում էր գեներալ Շալիկով, — որ համ ինքը վատ էր տրամադրուած դէպի հայերը, համ էլ շրջապատուած էր այնպիսի ռուս „քաղաքագէտներով“, որոնք միշտ նրա ականջի տակ փսփսում էին, թէ պէտք է խստօրէն հսկել հայերի կենտրոնին՝ Էրարատեան դաշտին, — ամբողջ Երևանի նահանգում ծլել-ծաղկեցին դաւեր, սեպարատիզմ և անհնազանդութիւններ։ Իբրև հետևանք՝ խուզարկութիւն, բանտ, նոյն իսկ աքսոր։ „Վտանգը“ այնքան մեծ էր, որ ստեղծեցին կռիւ թիւրքերի և հայերի մէջ, գաղտնի քնելը իմանալու համար։ Նահանգի կենտրոնական քաղաքը դարձրին երկիւղի, անհանգստութեան և լրտեսների բուն... Բայց հէնց որ նոյն „հայկական“ նահանգում նշանակուեց մի ուրիշ նահանգապետ, կոմս Տիզենհաուզէն, համեստաբար աւելի արդար և տակտով մի մարդ, թուրքերն էլ դադարեցին կռուել հայերի հետ, ձերբակալութիւններ և խուզարկութիւններն էլ քչացան, թէև դա թիւրքահայերի շարժման ամենատաք ժամանակն էր, պետական վտանգն էլ օդը ցնդեց...

1890 թուին՝ Մակար կաթողիկոսի օրով, Էջմիածնում կատարուում էր միւռոնի օրհնութիւն։ Կրօնական այդ հանդէսը գրաւել էր կովկասի բոլոր կողմերից մեծ բազմութիւն։ Բոլորովին պատահմամբ՝ նոյն միջոցին Էջմիածին էր գնացել մի շատ ականաւոր հայ գործոչ։ Դաւագործները աչքերը յառեցին դէպի Մասիսի ստորոտը և սկսեցին լուրեր տարածել թէ Էջմիածնում պատրաստւում է քաղաքական երկու մեծ ցոյց, մէկը՝ Մակարի

գէմ, միւսը՝ յօգուտ թիւրքահայերի. երկուսն էլ՝ ղեկավարութեամբ յիշեալ նշանաւոր հայի։ Երևանի ոստիկանութիւնը սկսեց շարժել և կրակի վրայ իւղ ածեց։ Միւռօնօրհնութիւնից երկու օր առաջ կառավարչապետ Շերեմետեվ ստանում է Երևանի այն ժամանակւայ նահանգապետ գեներալ Ֆրէզէից մի հեռագիր, որով նա՝ իբրև „քաղաքական նշանաւոր գիւտ“՝ հաղորդում է, թէ Էջմիածնում պատրաստւում է ժողովրդական ցոյց՝ ղեկավարութեամբ . . . (հաղորդւած է անունը), թոյլատուութիւն խնդրելով խիստ միջոցներ ձեռք առնել, այն է՝ 24 ժամում հեռացնել ղեկավարին Երևանի նահանգից և մի գունդ զօրք ուղարկել Էջմիածին՝ կարգ պահպանելու համար։ Կառավարչապետ Շերեմետեվ տատանւում է։ Դա սիրահար չէր „հարցեր ստեղծելու“, համոզւած, որ այդպիսի միջոցներ ձեռք առնելով՝ կարելի է չեղած տեղից բարդութիւններ ստեղծել։ Եւ կարգադրում է ոչ մի արտասովոր միջոցի չդիմել. . Միւռօնօրհնութեան ամբողջ օրը, նա անհամբեր և բաւական անհանգիստ սպասում էր տեղեկութիւնների Էջմիածնից։ Եւ հեռագիրը լուր բերեց, որ ամեն ինչ անցաւ խաղաղ, անվրդով. . . Դժւար չէ երևակայել՝ թէ ինչ ծանր հետևանքներ կարող էին տեղի ունենալ, եթէ գեներալ Ֆրէզէին յաջողւէր զօրք ուղարկել՝ պաշարման վիճակի մէջ դնելու Էջմիածինը և ահագին բազմութիւնը։ Փանաւոր մի կռիւ, ուրէ պատահական աղմուկ կարող էր թւալ զօրապետին իբր „ապդանշան“, և ահա պիտի հոսէր մարդկային արիւնը, ստեղծելով հայկական ապըստամբութեան նոր հարցեր Էջմիածնի շուրջը . . .

Երևանի նահանգում կայ խեղճ ու խաղաղ մի գաւառ, որ կրում է Սուրմալու անունը։ Հազիւ ապահով սահմանագլխի քրդական արշաւանքներից, տրւած առօրեայ ծանր աշխատանքներին, հայ ժողովուրդը վա-

ըում է այնտեղ մի չարքաշ կեանք, նոյնքան հեռու քա-
ղաքական ծրագիրներից, որքան երկինքը երկրից։ Բայ-
ցի թախտի թէ կասկածոտ մի նահանգապետի շնորհիւ՝ բոյն
դրեց այնտեղ մի „չնաշխարհիկ“ գաւառապետ՝ Բո-
գուսլավսկի, — հայատեաց, սիրահար պատմութիւնների,
կուրացած շքանշանների տենչով։ Եւ երբ, տարիներ
շարունակ, անկարող եղաւ մի շոշափելի փաստ գտնել հա-
յերին մեղադրելու, սկսեց զեկուցագրել թէ հայերը
դէմ են ռուսաց եկեղեցու կառուցման։ Բաւական չէր
ասել՝ դէմ են, պէտք էր համոզիչ, ակներև փաստ։
Ու ահա մի առաւօտ, երբ խաղաղ բնակիչները՝ հազիւ
դուրս եկած տներից, գնում էին ամեն մէկը իր գործին,
տարածուեց վրդովեցուցիչ մի լուր, — հ ա յ ե ր ը գ ի-
շ ե ր ը ք ա ն դ ե լ ե ն ն ո ր ա շ է ն ռ ո ւ ս ե կ ե-
ղ ե ց ո ւ պ ա տ ը և ք ա ր ե ր ը թ ա փ ե լ գ ե տ ի ն։
Սրբապղծութիւն էր այդ, դաւ ուղղափառ իշխանութեան
դէմ։ Սկսեց գործ, հալածանք . . . Եւ տանջանքների մի
ահագին պատմութիւնից յետոյ միայն, շատ ուշ, պարզ-
ուեց, որ եկեղեցու պատը քանդել տուողը և ծրագրողը
ինքը գաւառապետն է եղել օրէնքի ներկայացուցիչը։
Էլի ուրիշ շատ բաներ պարզուեցին, բայց գաւառի կա-
ռավարիչը շարունակեց մնալ իր պաշտօնում։ Չէ որ՝
„եթէ դաւեր չը կան, պէտք է ստեղծել“ իսկ ըս-
տեղծելու համար՝ ս տ ե ղ ծ ո ղ ն ե ր ն ե հ ա ր կ ա ւ ո ր . . .

Դա տեղի ունեցաւ գաւառի կենտրոնում։

Նշաղ պահարակելի չէ նահանգի կենտրոնում պատահա-
ծը։ Ժանդարմների պետը՝ վաղուց ատամներ էր կրճտաց-
նում քաղաքացիներից մէկի դէմ — վտանգաւոր է անունը
յիշատակել։ Բայց փաստ չը կար։ Յանկարծ երևան եկաւ
քաղաքական մի գործ, ուղղած մի խումբ հայերի դէմ,
իբրև մասնակցողներ թիւրքաց հայերի շարժման։ 1894
թուին էր այդ։ Ուշքի տակ առնուած քաղաքացին մեղա-

գրողների թեւում չէր։ Ինչ անել։ Եւ մի օր, երբ ըզ-գոյշ քաղաքացին իր գործին էր գնացել, նրա տունը շրջապատեցին, ենթարկեցին խուզարկութեան, քքքրեցին ներքնայարկը, և ո՜հ սարսափ, գտան մի գաղտնի պրոկլամասիոն, շատ վտանգաւոր բովանդակութեամբ... Ցանտէրը ափշեց։ Շատ յետոյ միայն, երբ անմեղ մեղադրեալը բանտում գլուխ էր կոտրում լուսաբանելու անցած-դարձածը, յայտնուեց, որ պրոկլամասիոնը նետուած է եղել նրա տան ներքնայարկը՝ փողոցի կողմից՝ մի ոստիկանի ձեռքով, համաձայն յանձնարարութեան և հրամանի ժանդարմների պետի... Հակառակ դրան, դաւերի վարպետը էլի երկար տարիներ մնաց իր փառաւոր պաշտօնի մէջ՝ ուրիշ անմեղներին կրակի մէջ գցելու համար...

1887 թիւն էր։ Վրաց ամբողջ հասարակութիւնը սգաւոր, խոցը սրտումը հեւեւում էր մի տխուր դագաղի, որի մէջ հանգստանում էր պատկառելի հայրենասէրը, զոհ ողբերգական մի մահի, ստոր սպանութեան։ Դիմիտրի Կիպիանին էր դա, աքսորուած իր սիրած Վրաստանից՝ մի պարզ ճշմարտութեան համար, որ նա համարձակուեց ասել Թիֆլիզի ռուս էկզարխին, իբրև արձագանք վրացիական արդար ցասման։ Նա իր աքսորավայրից Պետերբուրգ էր ուզում գնալ՝ բողոք տալու։ Բայց այդ անախորժ բողոքը լռեցնելու նպատակով՝ բարձր համարեցին նրան լռեցնել — մի գիշեր նրան սպանած գտան իր սենեակում՝ գաղտնի ճանկերով... Եւ երբ տխուր գնացքը անցնում էր Գօրօմինսկի պրոսպեկտօվ, ոստիկանութիւնը յարմար առիթ գտաւ դարձեալ պատմութիւն ստեղծելու։ Նա պահանջեց դէպի այլ փողոց դարձնել յուղարկաւորութիւնը, որ նա համարում էր ցոյց կառավարութեան դէմ։ Ոստիկանութեան սրերի դէմ իշխանների սրեր մերկացան. հաղիւ դժբախտ դա-

գաղը աղատ մնաց անմեղ արիւնով ներկուելուց։ Ոստիկանութիւնը տեղի տուեց, բայց ժանդարմների վարչութիւնը ստեղծեց մի ամբողջ գործ, վրացիական շարժման մի ահագին պատմութիւն, թղթերի մի ամբողջ արխիվ...

Վրացիներից աւելի դժբախտ եղան հայերը։

1892 թուի դեկտեմբերի 27-ին, Թիֆլիզում տեղի ունեցաւ Գրիգոր Արծրունու թաղումը, չքտեսնուած շքով։ Համազգային սուգ էր դա — բազմաթիւ պատգամաւորութիւններ՝ եկած Կովկասի և Ռուսաստանի զանազան կողմերից, աւելի քան 350 պսակ, 50 հազար ժողովուրդ՝ խռնուած թանգագին դիակի շուրջը։ Կորուստը անսպասելի և մեծ էր։ Եւ հայութեան բոլոր խաւերում բռնկուած սուգը՝ բնական արտայայտութիւն էր նրա վշտի, նրա հոգեկան դառնութեան, բեկուած յոյսերի։ Սակայն հայկական սուգն էլ դուր չեկաւ իշխանութեան հայատեաց ներկայացուցիչներին։ Եւ եկեղեցուց դուրս գալուց յետոյ, երբ հանդէսը պիտի անցնէր պալատական փողոցով, որտեղ գտնւում է Արծրունիների տոհմական շքեղ տունը, և որի առաջ ըստ եկեղեցական սովորութեան՝ ուզում էին հոգեհանգիստ կատարել, ոստիկանութիւնը կանգնեցրեց յուղարկաւորութիւնը։ Սուրը ցցուեց խաչի դէմ. պոլիցիականի սառը դէմքը՝ այլայլուած ամբոխի դէմ... Փորձեցին դէպի մի երկրորդական փողոց դարձնել ժողովրդական ալիքները։ Բայց ուշ էր արդէն։ Տխրասիրտ բազմութիւնը ականջ չդրեց։ Տեղի ունեցաւ անխուսափելի ընդհարում ոստիկանութեան և սգաւոր հայերի մէջ։ Ոստիկանութիւնը դիմեց զէնքի, փորձեց խլել հոգևորականութեան ձեռքից խաչվառը — հաւատի դրօշակը։ Ամբոխը, կրծնամոլ՝ մնաւանդ թաղման հանդէսներին, բռնկեց և գրոհ տուեց։ Եւ եթէ „Փառքի Ցաճարի“ սալայատակները չը ներ-

կուեցին մարդկային արիւնով, այդ այն պատճառով միայն՝ որ զինուորական ուժը չը դիմացաւ ժողովրդի գրոհին... Մի օր չանցած, երբ ամբողջ քաղաքը դեռ սուգի մէջ էր, սկսեցին խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Մի քանի ժամուայ մէջ դէպի բանտ և դէպի պոլիցիական բաժինները քշեցին ամեն դասակարգի մարդիկ, իբրև դրդիչներ „հայկական շարժման„։ Գաղտնի գործակալները հաղորդել էին, որ թաղման առիթով հայերը ուզում էին մեծ ցոյց անել կառավարութեան դէմ, փոխարքայի պալատի դիմաց ... Ոկսուեց քաղաքական փոթորիկ։ Եւ եթէ բանտարկեալների թիւը մնաց մօտ 25-ի վրայ և 100-ի չհասաւ, այդ շնորհիւ միայն այն հանգամանքի, որ տեսան թէ շատ հեռու են գնացել։ Ժանդարմների վարչութեան մէջ այդ դէպքը այնուամենայնիւ աւելացրեց մի նոր գլուխ „հայկական գործին“։ Եւ այդ օրից՝ թաղումն էլ անցաւ վտանգաւոր ցոյցերի շարքը ...

Բայց դրանով չվերջացաւ կասկածը։
Ցան օրից յետոյ, երբ տեղի պիտի ունենար հայերի կրօնական համախմբումը՝ ջրօրհնէքի տօնի առիթով — դարևոր սովորութիւն, որ կատարւում է ամեն տարի,— բորբոքւած չինովնիկները շշուկ բարձրացրին, թէ այդ նոր համախմբման ժամանակ էլ հայերը ուզում են նոր ցոյց անել, իբրև վրէժ և շարունակութիւն Ալծրունու թաղման ցոյցի։ „Ուզում են“-ը դարձաւ „կարող են“, „կարող են„-ը՝ „վճռել են“, և ահա պատրաստ էր ջրօրհնէքի ապստամբութեան ծրագիրը։ Հայերի դէմ կատաղած „չինովնիկները“ ոչ մի միջոց չը խնայեցին գրգռելու իշխանութիւնը։ Լուր պատեց մինչև անգամ, որ վճռւած է հանդէսին ներկայ եղող ռուս զինուորներին բաժանել սովորական՝ այդ օրւայ համար ընդունւած խլատ փամփուշտների հետ նաև գնդակաւոր

փամփուշտներ, իսկ հայ զինուորներին՝ միմիայն խլատներ։ Սկսեցին միջոցներ ձեռք առնել։ Երևացին հսկող գընդեր։ Եւ այդ ընդհանուր շփոթի մէջ գտնուեց միայն մէկը՝ տեղացի զինուորների գնդապետը, որ բողոքեց այդ ծրագրի դէմ ասելով. „Ես կասկած չունեմ իմ զինուորների վրայ, և եթէ զօրքի վրայ էլ սկսենք կասկածել, էլ ո՞ւմ վրայ պիտի յոյս դնենք“։

Զգուշութեան քարոզը այս անգամ յաղթող հանդիսացաւ։ Ոչ մի շարժուում, ի հարկէ, տեղի չունեցաւ, բացի այն շարժումից, որ հայերը գործեցին դէպի սառած գետը՝ խաչը ջուրը գցելու համար, ճիշտ այնպէս ինչպէս ռուսները, վրացիք։ Արդ, ի՞նչ կարող էր տեղի ունենալ, եթէ հազարաւոր ամբոխը շրջապատուէր զինուորներով և ոստիկաններով, բոլորն էլ գրգռուած ցնորամիտ կասկածներով։ Երևակայելը դժուար չէ...

Ահա և էջմիածնական աքսորը։

Մի երեկոյ — 1893 թուին էր այդ — երբ վանականները վերջացրած միապաղաղ աղօթքը, վայելում էին բամբասանքի սրտագրաւ ժամերը, անխուսափելի՝ աբեղայական կեանքի մէջ, յանկարծ զինուորները շրջապատեցին վանքի մուտքերը. անկիւններում փայլեցին սուիններ, խուցերի առաջ համազգեստներ, և երկիւղաբեր խստութեան մէջ կատարուեցին ձերբակալութիւններ։ Ո՞վքեր էին. — երկու եպիսկոպոս՝ Սուքիաս և Ներսէս, յայտնի իրենց տիրասիրութեամբ։ Յոյզ, իրարանցում հայոց հասարակութեան մէջ, հազար ու մի ենթադրութիւններ, լուրեր նոյն իսկ, որ հայոց կրօնականների կենտրոնը լի է զէնքերով։ Եւ այդ բոլորից յետոյ, դեռ տարին չլրացած, երկու եպիսկոպոսները յետ բերուեցին աքսորից. պարզուեց՝ որ նրանք արժանի չէին իսկ այդքան աղմուկի, և իբրև վարձատրութիւն՝ մէկը նշանակուեց թեմական առաջնորդ Բեսարաբիա,

իսկ միւսը Երևանի թեմական, նոյնպէս բարձրագոյն հաւանութեամբ։ Եւ այժմ կաբինէտի խորքերում գաղտնի տեղեկագրեր գրող պաշտօնեան քթի տակ մրմնջում է անկասկած՝ „Արժէ՞ր միթէ“...

Դարձեալ մի դաւ, փոքր ինչ կոմիքական։

1897 թուին էր։ Աշնան մի մռայլ օր, երբ երևի տրամադրութիւններն էլ մռայլ էին, Թիֆլիսի ոստիկանատանը ստացւում է մի անանիմ նամակ։ Իրարանցում։ Ոստիկանապետը վազում է նահանգապետի մօտ, նահանգապետը՝ կառավարչապետի օգնականի մօտ, օգնականը՝ կառավարչապետի մօտ։ Ո՛հ, սարսափ. հայերը ապստամբւում են։ Ապստամբութիւն Կովկասի մայրաքաղաքում, բարձր իշխանութեան քթի տակ։ Ապացոյց։ Ապացոյցները շատ են, բայց ահա նրանցից ամենաառաջինը, ամենամեծը, ամենայայտնին,— „Զիու“։ Ի՞նչ։ Այո՛, մի աննշանակ, խորհրդաւոր, նորաստեղծ բառ, որ պիտի ծառայէր հայերին իբրև աղդանշան՝ յարձակւելու այն տների վրայ, որոնց ճակատին գրւած է „Զիու“։ Ոստիկանութիւնը սկսում է փնտրել այդպիսի տներ։ Մեծ է նրանց թիւը, և համարեա քաղաքի բոլոր մասերում։ Ճիշտ է, ոստիկանութիւնը սեփական աչքով տեսաւ, որ „Զիու“ գրւած է ոչ միայն այնպիսի տների վրայ, ուր ապրում են վրացի, ռուս, գերմանացի, թիւրք, այլև այնպիսի տների վրայ, ուր բնակւում են հայեր, նոյն իսկ հայ „հայրենասէրներ“— բայց ոչինչ։ „Այդ արւել է իշխանութիւնը խաբելու համար„— վճռեցին խելք ադմինիստրատորները։ Եւ ահա սկսեցին խորհրդակցութիւններ նահանգապետի մօտ, կառավարչապետի պալատում— գաղտնի, սոսկալի, ծանր խորհրդակցութիւններ։ Պէտք էր վճռել—ի՞նչ անել։ Արդեօք պաշարման մէջ դնել ամբողջ քաղաքը, թէ պաշարել միմիայն „ղեկավարների“ բնակարանները և կալանա-

ուրեմ բոլորին... Մի օր ևս՝ և գուցէ քաղաքի վրայ կը պայթէր մի անսովոր ողբերգական դժբախտութիւն։ Բայց — փա՜ռք պատահմունքին — գեռ խիստ միջոցներին դիմելու վճիռը չկայացած՝ ոստիկանապետը խնայաւ գաղտնիքը։ Ռուս մի չինովնիկի որդին հօրից փող է խնդրում։ — Ինչու, ի՞նչ պիտի անես, հարցնում է հայրը։ — Կաւիճ պէտք է առնեմ, որ „Զիու“ գրեմ, ինչպէս ընկերներս են գրում... Ո՜հ, սարսափ. ռուս չինովնիկի որդին, հօր հաւատարիմ յաջորդը՝ „Զիու“ պիտի գրէ... Ակուեց հարց ու փորձ։ Եւ ո՜վ խայտառակութիւն՝ ապրստամբութեան գաղտնիքը բացուած է։ Ոստիկանապետը տեղեկացած եղելութեան՝ վազում է կառավարչապետի մօտ և քրտինքի մէջ խեղդուած, կարմրած, հեւալով՝ պարզում այդ խորհրդաւոր „Զիուն“, հայկական ապրստամբութեան սոսկալի՜ ազդանշանը, ուրիշ խօսքով՝ — աշակերտական այդ հանաքը։ Այո՛, ոչ աւելի, ոչ պակաս — սո՜ւսկ աշակերտական հանաք։ Երկրորդ գիմնազիօնի աշակերտները, կատաղած իրենց մի ուսուցչի դէմ, վրդովուած նրա խստութիւններից, վճռում են նրան խայտառակել. տալիս են նրան շինծու մի անուն, „Զիու“ և որոշում՝ ոչ թէ միայն գիմնազիօնի մէջ, այլ ամբողջ քաղաքում՝ փողոցներում, հրապարակների, սիւների, վերջապէս տների պատերի վրայ, ուր որ այդ հնար է՝ կաւիճով գրել „Զիու“, որպէսզի ուսուցիչը՝ ուր էլ աչք դարձնի, միայն այդ խօսքը՝ „Զիու, Զիու, Զիու“ կարդայ, և ինչպէս ռումբ՝ կատաղութիւնից տրաքի։ — Արպիսի՜ կատակ։ Եւ այն միջոցին, երբ չարաճճի գիմնազիստները կաւիճ էին առնում իրենց յարձակումները տալի ուսուցչի վրայ համատարած դարձնելու, Թիֆլիզի ռուս իշխանութիւնը զօրք և զէնք էր պատրաստում „կաւճեայ ապստամբութիւնը“ արմատախիլ անելու, թաղելու նոր անմեղներ արեան մէջ կամ բանտային խուցերում...

Անալ կը լենի կարծել, որ „կաւճեայ ապտամբութեան“ բախտաւոր վախճանը ուրախացրեց բոլոր չինոմիկներին։ Եղան ուրախացողներ, անտարակոյս։ Բայց մեծ մասը խոժոռեցին իրենց դէմքերը, երբ տեսան, որ դարձեալ մի անգամ առիթը ձեռքից փախաւ „մեծ ծառայութիւններ մատուցանելու Հայրենիքին“ կամ պարզ ասած՝ նոր շքանշաններ և աստիճաններ ստանալու։

Շքանշա՞ն և աստիճա՞ն, — դա է որ անյագ և անխիղճ բիւրոկրատիային եռանդ, սիրտ, ուժ է տալիս։ Ինարգ սիստէմի լրացուցիչն է այդ։ Նրա Հաւատամքը, նրա իդէալը, նրա Աստուածը . . .

Եւ տեսնում էք, թէ որպիսի ոճիրներ են կատարւում այդ Աստուծու անունով . . .

ԿԱԾԱՌՔԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

(ՏԱՄՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Անկաշառ ծեռքը. — Դատարանի նախագահի սիստէմը. Դիրեկտորական սխրագործութիւն. — Ցենզորական կաշառակերութեան եղանակը. — Կաշառաղատ գեղջուկ. — Տուրք ոստիկանութեան. — „Երկու չափ, երկու կշիռ“. — Ռուս-պաշտօնեայ եւ հայ-պաշտօնեայ. — Ժողովրդական մոռածողութիւն:

Երբեմն ապրում էր Թիֆլիզում ինտենդանտ-ներ ի վարչութեան մի պետ ի Հարկէ, Դորին Գերազանցութիւն, աստեղազարդ, ուժեղ, յարգուած: Ընունը չտանք, մեռած է նա... Ռուս-Թիւրքական պատերազմի ժամանակ էր — այն ժամանակ, երբ օֆիցերական խրնջոյքներում շամպայնը հոսում էր նոյնքան առատ, որքան նահատակ ռուս զինուորների արիւնը Պարսի ժայռերի վրայ, այն երանելի ժամանակը, երբ դրամատէր, չինովնիկ, զինուորական լողում էին պետական գանձարանից հոսող „Թղթադրամի Հեղեղն“ մէջ, ինչպէս ձուկը ջրում: Կապալների ոսկի դարն էր, և մեծ-ինտենդանտի առանձնասենեակը առաւօտից երեկոյ նեբս ու դուրս էին անում Հարուստ կապալառուները:

— Հարիւր Հազարով պակաս կը վերցնեմ, Ձերդ Գերազանցութիւն, ուրեմն մի խոշոր օգուտ գանձարանին և յետոյ... իբրև արտայայտութիւն իմ յարգանքի դէպի ձեզ, մի փոքրիկ նուէր...

— Դուք գիտէք, որ ես ձեզ չեմ մերժել երբէք, երբէք. կանեմ, ինչ Հնարաւոր է. իսկ ինչ վերաբերում է ձեր նուէրին, ես այդ վերցնել չեմ կարող. դա դէմ է

իմ ամենաթանկագին սկզբունքներին. երդվել եմ. երբէք իմ այս ձեռքը — ցոյց տալով իր փոքրիկ թաթը — կաշառք չէ վերցրել...

Կապալառուն գիտէր, թէ ինչ է նշանակում „երբէք իմ ձեռքը կաշառք չէ վերցրել“. հանեց ծոցից նախօրօք պատրաստած 50 հաղարը և դրեց սեղանի վրայ, Նորին Գերազանցութեան առջև։

— Երբէք, երբէք իմ ձեռքը կաշառք չէ վերցրել, ասաց գեներալը՝ յետ ընկնելով բաղկաթոռի մէջքի վրայ և կամացուկ բանալով սեղանի արկղը։ Եւ այն միջոցին, երբ նա անվրդով կրկնում էր անընդհատ „երբէք, երբէք“, դրամատէրը՝ վաղուց ծանօթ Նորին Գերազանցութեան „սիստէմին“, փոքր առ փոքր հրեց դրամի կապոցը, մինչև որ նա, առանց դիպչելու գեներալական ձեռքին, ընկաւ արկղը... Արկղը փակւեց։ Երկուսն էլ ժպտացէմ ոսի կանգնեցին։ Կապալի գործը հարթւած էր։ Եւ յետոյ էլ, ինչպէս և առաջ, այդպէս էին հարթւում և միւս կապալները, զուգընթաց ծանօթի երդման հետ, որ „երբէք ձեռքը կաշառքին չէ դիպչում“։

Ո՞վ չէ ճանաչում Ռուսաստանում Նորին Գերազանցութեան այդ տիպը. նա նստած է մինիստրութիւնների մէջ, նահանգապետի առանձնասենեակում, զինուորական շտաբում, սահմանի վրայ և մայրաքաղաքում ու կլանում է ահագին գումարներ, նոյն իսկ իր պաշտօնական պարտաւորութիւնները կատարելիս, իհարկէ, առանց իր „ձեռքը կաշառքին դիպցնելու“։

Դատարան է այս շքեղ շէնութիւնը։ Հաստատ առանձնասենեակում բաղմած է նախագահը։ Մտախոհ է նա։ Ի՞նչ է նրան զբաղեցնում. դժբախտ բանտարկեալի վիճակը, որին կէս ժամ առաջ նա աքսորի դատապարտեց, թէ մի այլ խնդիր, որ դուրս էր դատարանի պատերից... Դուռը բաղխեցին. ներս մտնողը մի

կին է։ Ծառայողները նրան լաւ են ճանաչում, և կարող են չճանաչել իրենց նախագահի կնոջը։

— Ի՞նչ կայ, կիսավախով հարցրեց ամուսինը։

— Եղբայրը եկաւ և 10 հազարը բերեց, շշնջաց կինը, դիւական ծիծաղը երեսին։

— Անհնարին է, անկարելի. մեղադրական փաստերը սարսափելի են. պրոկուրորը ոչինչ չէ զիջում, մտածում եմ, մտածում և ոչինչ չեմ կարող անել։

— Ինչ ուզում ես արա. ես արդէն խոստացել եմ և փողը վերցրել...

... Եւ կինը շարունակում էր փողերը վերցնել, երբեմն ուղղակի, երբեմն պարտամուրհակի ձևով, յաճախ էլ իր ջահել աղջկայ աշակցութեամբ, յօգուտ այն անսանձ ծախսերի, որի մէջ խրուած էր այդ „բարձր“ ընտանիքը։ Ամենքը գիտէին այդ, սակայն յանցաւորը մնաց անպատիժ և իբրև դատաւոր շարունակում էր յանուն օրէնքի բանտ ուղարկել՝ կաշառակերութեան մէջ մեղադրուող խղճուկ գրագիրներին և ոստիկանական ծառայողներին։ Զարագործ էր նա, բայց դատում էր, բազմած նախագահական աթոռին, ձեռքը յենած օրինագրքի վրայ, միշտ երդւող, որ „իր ձեռքը կաշառքի չէ դիպչել“...

Ահա, ամենահին գիմնազիստի դիրեկտորի գրասենեակը։ Նա էլ աստեղազարդ է, յարգուած, ազգեցիկ, շատ լաւ ծանօթ թիֆլիսցիներին. վաղուց մտածում էր պաշտօնը թողնել, հէնց որ կը լրանար ծառայութեան թոշակաժամը։ Եւ ինչու չթողնել. արդէն կապիտալիստ է՝ ապահով, անհոգ։ Բայց գիտէր, ինչ ճանապարհով։

— Ասա՛ Հայրիկիդ, որ վաղը ինձ մօտ անցնի, դիմեց նա հարուստ աշակերտներից մէկին, նախասենեակով անցնելիս։ Հայրիկը եկաւ։

— Գիտէք, Գրիգորի Արնաիշ, փոքրիկի համար պէտք է մէկ առանձին ուսուցիչ վերցնէք, ռուսերէնի և լատիներէնի։

— Ուրախութեամբ, միայն թէ կը խնդրէի մատնանիշ անել մէկին, աւելացրեց „միամիտ ձևացող“ հայրիկը, որ վաղուց գիտէր, թէ դասատուները, դիրեկտորի հովանաւորեալներից, արդէն պատրաստ են։

— Միամիտ եղէք. վեց ամսում ձեր որդին քննութեան համար բոլորովին պատրաստ կը լինի։

— Դժուարանում եմ հաւատալ, շատ է ծոյլ։

— Դժուարանում էք, բացականչեց դիրեկտորը, գրաղ կարող եմ գալ։

— Մէկին երկու, միայն թէ կասկածում եմ։

... Գրաղը վերջացաւ, մի նէէր հազար բուբլիանոց և մի խնջոյք՝ արտաքին վայելչութեան համար։

Այսպէս էին փոխւում աշակերտները իրենց դասատուներ, այդպէս էր հարստանում դիրեկտորը, միշտ երդումը բերանին, որ „երբէք ձեռքը կաշառքին չի դիպչել“։

Ահա մի այլ պատկեր։

„Բագուի գիմնազիստի վերատեսուչ Պ-ցկի,—պատմում է լատատեղական նամակագիրը,—չարունակ հարբած, գիշերները թղթախաղի նստած, ցերեկները հազիւ ժամանակ ունի քնելու եւ իր հրէշաւոր ծախսերի համար աղբիւրներ գտնելու մասին մտածելու։ Թէ որքան ճիշտ են այս խօսքերը,—այդ կարելի է եզրակացնել նրանից, որ տարին մի քանի անգամ հազիւ գնալով դասի, նա այնքան քիչ է ճանաչում աշակերտներին, որ եռամսեակի թուանշաններ գնելիս՝ անկարող է լինում այդ անել անճամբ եւ իր առարկաներից թուանշան գնելը յանձնում է դասարանական վերակացուներին։

„Դժբախտ է այդ գիմնազիստը՝ իր հազարից աւելի աշակերտներով, դժբախտ ոչ միայն նրանով, որ պատանիները չեն կարող այդտեղ մի բան սովորել, այլ մանաւանդ նրանով, որ կարիք էլ չկայ սովորելու։ Այնտեղ կարելի է գրամով վկայական ստանալ. գրամով են ընդունում նոր

աշակերտներ։ Անարոյականացած է ոչ միայն վերատեսուչը, այլ եւ ամբողջ ուսուցչական մարմինը։

„Բագուեցի միլիոնատէր Հ-ի որդին, բէյական դրպրոցից յետոյ՝ մինիստրական վականսիայով (այսինքն առանց քննութեան, մինիստրութիւնից նշանակելով) մտել էր Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, բայց անկարող լինելով կուրսից կուրս անցնելու համար քննութիւն տալ, հեռացուել էր ինստիտուտից։ Նա մտածում էր համալսարան մտնել, ինչպես առնելով, որ գիմնազիօնի վկայական Բագուում կարող է ստանալ առանց քննութիւնների, իսկ համալսարանում իւրաքանչիւր դասընթացքում կարելի է նստել ոչ պակաս քան երկու տարի։ Շնորհիւ Պ-ցեվի այդ ծրագիրը այսօր աջողած է կատարելապէս։ Վերատեսուչը ստանալով երիտասարդի հարուստ հօրից մի կլոր գումար, տալիս է նրան գիմնազիօնի ատեստատ, ուր պահպանուած են բոլոր կարեւոր ձեւակերպութիւնները ...

„Եթէ մէկը ուզում է իր որդուն, ազգականին կամ ծանօթին Բագուի արական գիմնազիօնը մտցնել, կարիք չը կայ հոգալ նրան լաւ պատրաստելու մասին։ Գնացէք անձամբ վերատեսուչ Պ-ցեվի մօտ, տեսնուեցէք նրա եւ սովորական խնդիրը տալուց յետոյ՝ „նուիրեցէք“ մի չոչափելի գումար յօգուտ „աշակերտական ամարային կոլոնիայի“, որի զեկավարը ինքը Պ-ցեվն է։ Լաւ կ'անէք, որ նուէրը նոյն իսկ չարձանագրէք „կոլոնիայի“ համար ժողովող նուիրատուութիւնների ցուցակում։ Կը նշանակէք թէ ոչ, յամենայն դէպս դա երկրորդական ձեւականութիւն է։ Նուէրը տալով կարող էք համոզուած լինել, որ ձեր խնդիրքի հետեւանքը կը լինի „չատ յաջող քննութիւն“։

„Տարուայ ընթացքում Պ-ցեվն իր մուտքը աւելցնելու համար գործադրում է հետեւեալ խորամանկ միջոցը։ Նրա բազմամարդ գիմնազիօնում չատ կան հարուստ ընտանիքի զաւակներ։ Երբ իրեն փող է լինում հարկաւոր, նա գրում է մուրհակներ եւ ուղարկում է այս կամ այն աշակերտի ծնողին՝ խնդրելով իրեն պարտք տալ մի որոշ գումար։ Ծնողները իմանալով, որ եթէ գրամ չտան, իրենց որդիքը պիտի մնան միեւնոյն դասարաններում, վճարում են մուրհակների գինը եւ պահում են այդ մուրհակները՝ մինչեւ իրենց որդիքը փոխում են դասարանները։ Դրանից յետոյ

չասերը ոչնչացնում են Պ–ցեվի մուրհակները մինչև հեռաբեւեալ տարին, մինչև նոր մուրհակներ . . .

„Ուսուցչական մարմնից մինչև այժմ չէ լսել բողոքի ձայն վերատեսչի եւ նրա անթիւ զեղծումների դէմ։ Հեշտ է ուրեմն երեւակայել, թէ ինչ արարածներ են դրանք եւ իրենց կողմից ինչեր են անում։ Նրանք լռել եւ լռում են նոյն իսկ այն ժամանակ, երբ անսանձ վերատեսուչը մի քանի ամիսներով իւրացնում է նրանց ռոճիկները։ Ինչո՞ւ եւ ինչից են ստիպուած լռել . . . Մտածեցէք“։

Ահա և ցենզորի գրասենեակը։ Ցենզո՞ր։ Լրագիրների կարանքները առաջը թափած, աչքերը յառած կարմիր թանաքին, նա խաղում, կտրատում է, յանուն երկրի շահերի, յանուն „ընդհանուր ապահովութեան“։ Բայց „ընդհանուր ապահովութեան“ ցնորքների մէջ՝ նա չէ մոռանում և սեփական ապահովութիւնը։ „Չէ՞ որ ես էլ մարդ եմ“։ Սակայն ո՞ւմից կաշառք վերցնի, նրա գործը գրամատէրերի հետ չէ, այլ անապահով, շարքաշ խմբագիրների և գրողների, անվարժ կաշառաուութեան։ Սակայն գաղտնիքների, նենգամտութեան ելևէջների վարժ ցենզորը դրա միջոցը գտել է։ Եւ նախ քան լրագրի համարի հրատարակութեան թոյլտուութիւնը, մի պատիկ տոմսակի վրայ նա հետեւեալ բառերն է շարադրում ուղղած հրատարակչին կամ խմբագրին.

Մեծարգոյ . . . .

Ուղարկեցէք ինձ, խնդրում եմ, փոխարինաբար 300 *բուրլի, որը հնարհակալութեամբ կը վերադարձնեմ շատ շուտով։ Թերթը պատրաստ կը լինի մի ժամից։ Ձեր գրաբերը կարող է վերցնել։*

Միշտ պատրաստ ծառայելու՝

Բ . . . . ով

„Փոխարինաբար և շատ շուտով“ խօսքերը՝ կրկնուած այդ դէպքում՝ վաղուց լաւ ծանօթ են խմբագրին։ Ցաբիների փորձառութեամբ նա եկել է այն եզրակացութեան, որ միամտութիւն է թշնամացնել գրաքննիչին և

աւելի մեծ միամտութիւն՝ յոյս դնել բողոքի կամ բարձր ատեանի վրայ։ Դա ուղարկում է կաշառքը, թէև ուրիշ անուան տակ, և իբրև մխիթարանք՝ կցում նրան մի քանի յօդուածներ, որոնք այլ դէպքում չէին թոյլատրւի... Իսկ պարտադրանքը ցենղօրը շարունակում է ջնջել, տոմսակներ գրել, շքանշաններ ստանալ և վայելել այս անարգ կառավարութեան մէջ բարեխիղճ, իր գործը ճանաչող պաշտօնեայի անուն, որի „ձեռքը երբէք կաշառքի չի դիպչում“։

Ընցնենք ուրիշ „առանձնասեռեակներ“։

Կովկասեան մայրաքաղաքի „անմատչելի“ շրջաններում ոչ ոք չէ լսել այն բարձրագիր տիկնոջ անունը, որը փոխառութիւն էր անում, սալօնի կնոջ բոլոր վայելչականութեամբ, սակայն երբէք չվճարելու պայմանով, այլ միայն այն պայմանով, որ խնդրատուի գործին ընթացք տրւի։ Ոչ ոք չէ լսել առասպելական կաշառքի այն փաստերի մասին, որոնք հարիւրներով նախշում են զինուորական ատեանները, ուր նորակոչ զինուորի „կուրծքը նեղայնելու“, „հեռատեսը կարճատես դարձնելու“, կամ „առաջին կարգի արտօնութեան իրաւունքի“ վարձատրութեան չափը սահմանուած է այնքա՜ն խիստ ճշտապահութեամբ և միաժամանակ ծածկուած այնքա՜ն ապահով ճարպիկութեամբ։ Կամ այն հրէշաւոր մեքենայութիւնների մասին, որոնք կռւում-կոփւում են դրամի ուժով, հոգևորական-կոնսիստորիական հիմնարկութիւններում, ուր աստուածայիս փողը դարձնում է չհասը՝ հաս, բարոյականը՝ անբարոյական, անժառանգը՝ ժառանգաւոր։ Եւ այդ բոլորը „անձնուէր“ զինուորականների և „աստուածընտիր“ սրբազանների հովանու տակ, որոնց ձեռքը, իհարկէ, „երբէք կաշառքի չէ դիպչում“...

Սակայն այս բոլորը կաշառակերութեան մի սիստեմն

է միայն, ընդունված մեծամեծների շրջաններում, վարագուրված քաղաքավարության շղարշով։ Բայց կայ և ուրիշ սիստեմ, տարածված վարչական ստորին շրջաններում, անողոք և սոսկալի։

Ահա քայլում է գիւղացին։ Դէպի քաղաք է գնում։ Լաստաւլի միջոցով հրաման է ստացել։ Դաշտ և գործ թողած, գունէ գուռ ընկած, 50 տոկոսով հաղիւ 25 մանէթ է գտել և այդ 25 մանէթով գնում է արդարանալու, „թէ ինչու է անտառից փայտ կտրել“։ Դրկիցները եկան ճամբայ դնելու և մի հարց միայն ասին. „ինչքա՞ն ես տանում“։ Այդ „ինչքան“-ի մէջն է ամփոփված օրէնքը, դատը, յոյսը... Հինգ օր է արդէն՝ գիւղացին գաւառական ատեանի շեմքում է։ Սպասելուց աչքը ջուր կտրեց։ Նրանից 50 մանէթ են պահանջում։ „Պակաս չի լինի“, յայտարարեցին։ Գիմում է գրագրին, գիւանապետին, „աղա-պրիստաւին“ — գաւառապետի բարձրության երբէք չի հասնի — և ամեն տեղ՝ նոյն պատասխանը՝ “Պակաս չի լինի“։ Եւ ի՞նչպէս պակաս լինի. 25 մանէթը միայն գաւառապետին պիտի հասնի, իսկ մնացածները, անյագների այդ ահագին բազմութիւնը...

Փաստերը թիւ, սահման չունեն։ Ոստիկանական կաշառակերության նկարագիրը տալու համար գուցէ նոյնքան պէտք է գրել, որքան ինքը ոստիկանութիւնն է գրում անմեղ „հպատակների“ դէմ։ Բաւականանանք մի նամակով, որը թէև ստացած Բագուի նահանգից, անպաճոյճ նկարագիրն է այն բոլոր վայրերի, ուր տիրում է պոլիցիական ամենազօր իշխանութիւնը։ Ահա թէ ինչ է ասում ականատես նամակագիրը.

„Նոր տարուն և Զատկին՝ իւրաքանչիւր գրասենեակ Բալախանիում և Սև քաղաքում (նաւթահորերի և գործարանների կենտրոնավայրերում) ուղարկում է ոստիկանապե-

տին մի յայտնի գումար (25–50–100 ռուբլի) հեռանալ կերպով շարադրած նամակի հետ (ռուսերէն).

„Ուղարկելով ընդ սմին ... ռուբլի, խոնարհաբար խնդրում եմ Ձեզ՝ ոաժանել այդ փողը Ձեր քարեծնդութեան ենթակայ ստորին պաշտօնեաների մէջ։"

(Ստորագրութիւն կառավարչի)

„Սա ընդունուած ձև է, որով գրում են համարեա բոլոր գրասենեակները, և այդ նամակների պատճէնները պահւում են գրասենեակների պաշտօնական գրքերում։ Ուղարկուող գրամը բացարձակ կաշառք է ոստիկանութեան, և միանգամայն անհրաժեշտ է համարում՝ ասենթարական, տեխնիքական և այլ բաղմաթիւ պահանջների վերաբերմամբ՝ ոստիկանական ոևէ անախորժ միջամտութեան առաջն առնելու համար։ Սակայն այդ կարգի առաքումներով չէ վերջանում գործարանների կամ նաւթահանքերի վճարը։ Թէև գրամը, ինչպէս ասում է նամակներում, ուղարկւում է ոստիկանապետին՝ իր ստորադրեալներին բաժանելու համար, բայց դա գրաւոր գոկումէնտներում անմեղութիւն պահպանելու մի ձև է—ուրիշ ոչինչ։ Իրօք՝ գրամը ամբողջապէս իւրացնում են ոստիկանապետը կամ պրիստաւը, իսկ իրենց ստորադրեալներին նրանք ուղարկում են գործարանները՝ անձամբ շնորհաւորութիւններ անելու և իրենց մասերը ստանալու համար։ Եւ դիտած է, որ երբ ոևէ գրասենեակ հրաժարւում է այդ ապօրինի տուրքերը ճշտութեամբ վճարելու, իսկոյն ոստիկանութեան այս կամ այն գործակալը գալիս է գործարան՝ մի անկարգութիւն նկատելու և պատշաճ արձանագրութիւն կազմելու համար։ Մի երիտասարդ կառավարիչ, Սև քաղաքում՝ պատմում էր, որ նոր պաշտօնի մնած՝ իր ծառայութեան հէնց երկրորդ օրը, նա արժանանում է մի թաղական վերահսկողի (օկօլոդոչնի նադզիրատել) այցելութեան։ Երբ գործարանի փոքրաց ծառայողները հասկացնում են անփորձ կառավարչին պարոնի այցելութեան նպատակը, նա մերժում է կօպէկ անգամ վճարելու, վրդովւած այդ անպատկառ ապօրինութիւնից։ Նոյնը կրկնւում է նաև հետևեալ օրը, մինչև շուտով երիտասարդ կառավարիչը մի օր տեսնում է գործարանի բակում միևնոյն վերահսկողին՝ արձանագրութիւն կազմելիս, թէ գործարանի բակը շատ կեղտոտ է և թէ դրսի մի պատը քանդւած է՝ առաց քաղաքային վարչութեան թոյլատրութիւնը ունենալու։ Կառավարիչը պիտի ամբողջ շաբաթ-

ներ և դուցէ ամիսներ դէս ու դէն քարշ դար այդ մեղադրանքները ջնջելու համար և ով գիտէ՝ որքան ծախսերի պիտի ենթարկուէր։ Նախնարհւում է իր ստորագրեալ փորձառ ծառայողների խորհրդի առաջ և ստիկանութեան պաշտօնեային իր առանձնասենեակը հրաւիրելով՝ վճարում է նրան քսան բուբլի, արձանագրութիւնը առնում ձեռքից, պատուում։ —„Շատ հնարհակալ եմ, պ. կառավարիչ, որ ինդիրը վերջացրիք այսպէս, սովորական ձևով... Ինչ անենք, ոռճիկ քիչ ենք ստանում, իսկ ծախսերս շատ են։ Արկին հնարհակալութիւն։ Վատահ եղէք ամէն կերպ ինձ վրայ“— ասում է թաղական վերահսկիչը, հեռանալով դրծարանից։

„Այս ընդունուած, ընդհանրացած, բոլորին յայտնի ձևերից դուրս, իւրաքանչիւր պաշտօնեայի սրամտութիւնից է կախուած եկամուտի նորանոր աղբիւրներ դտնել իր համար։ Բալախանիի ստիկանապետ Խ.-իցկի, օրինակ, որ եղել է կաթոլիկ կանոնաց (լեհացի քահանայ) և որը օրթոդոքսութիւն ընդունելով՝ նուիրել է իրեն ստիկանական կարիերի, իր մի որդուն, որ չէ ծառայում ոչ մի տեղ, դրել է տուել երեք նաւթահանքերում, իբրև դրասենեակի ծառայող՝ 50-ից մինչև 70 բուբլի ամսականով, իւրաքանչիւր հանքում։ Ամէն ամիս երիտասարդը գալիս է այդ հանքերը, և ստորագրելով դրասենեակներում պատշաճ ստացագրեր, ստանում իր համար նշանակուած թոշակը։ Պրիսաւները մինչև անգամ յատուկ ոճ են ստեղծել իրենց գժգոհութիւնը արտայայտելու համար, երբ կամ նրանց քիչ է կաշառք ուղարկուում կամ ժամանակին չէ ուղարկուում։ Նրանք հեռախօսով կանչում են կառավարիչներին և ասում։—„Դուք, պպ. ինժենիներներդ, շատ լաւ էք սովորել թաւանականեր առաջին երեք գոբծողութիւնները, բայց բաժանմանքում շատ թոյլ էք... Հասկանում էք՝ ինչ ինկատի ունեմ“...

„Սակայն կրկնակի անտանելի ձև է ստանում ստիկանական կաշառակերութիւնը, երբ արտայայտուում է ամենօրեայ դէպքերում այն համերաշխութեան մէջ, որ վաղուց գոյութիւն ունի աւազակների և ստիկանութեան մէջ։ Օր չէ անցնում համարեա, որ Բալախանիում և Բագուում, ինչպէս և ուրիշ տեղեր, ոստանութիւն շպատահի և երբէք չեն գտնում յանցաւորներին։ Բաւական է, որ աւազակը բաժին հանէ ստիկանին և նա անարգելիւղ կարող է իր տարը նստել, իսկ նրա տեղ կը ձերբակալուի ոստանողի առաջին պատահած անմեղ

հարեւանը։ „Կասպեան ընկերութեան“ գանձապետի ապանան գործում օրինակ, բոլոր ձերբակալեածների մէջ նոյնիսկ զինուորական ատեանը չկարողացաւ մեղադրել և ոչ մէկին։ Բաղխանում յայտնի էին իրենց ոճիրներով երկու աւազակապետներ—Քամիա և Շիշլի, որոնք երկար տարիներ ահ ու դողի մէջ էին պահում բոլոր հանրները։ Աւազակ Քամիան անձամբ պատմում է իր ծանօթներին, որ երբէք չէ տուժել ոստիկանութիւնից, երբ կատարում էր անվերջ ապանութիւններ և գողութիւններ։ Բայց հէնց որ մի քանի տարի առաջ թողնեց իր արհեստը, ոստիկանապետը նրան անմիջապէս բռնել տուեց, իբր արդէն ա ն օ գ ո ւ տ մարդու“...

Եւ այդպէս ամեն տեղ, ամեն անկիւնում։

Այս անարդ միջոցներով հաղարգլխեան „վիշապը“ ծծում, արիւնաքամ է անում ժողովուրդը։ Նրա ձեռքում տանջւում, կեղեքւում է գիւղացին, ամբողջ գիւղը, ամբողջ գաւառը։ Թոյլը՝ եասաուլի ձեռքով, աւելի ուժեղը՝ պրիստաւի կամ գաւառապետի դիւանում։ Մէկը զինուորական ատեանում, միւսը մաքսային վարչութեան մէջ, իսկ աւելի զօրեղները՝ նահանգական քաղաքներում և դրանից աւելի բարձր վարչութիւններում... Ընդհանուր համատարած կեղեքումն է սա, օրինաւորուած աւազակութիւն, որ կատարւում է չէ թէ ամայի ճանապարհների վրայ, մութ գիշերներին, այլ հանրային դիւանատներում, զարդարուած գեղեցիկ ցուցանակներով, դէպ ուր քարշ է գալիս տգէտ, երկիւղի մէջ սնած, դժբախտ ժողովուրդը՝ արդարութիւն գտնելու...։

Եւ շնորհիւ այդ ապականուած դասակարգի, սնուած և զօրացած վարչական անպէտք սիստէմների ու սոցիալական անարդար մթնոլորտում, Կովկասում ծնունդ է առնում մի նոր երևոյթ։ Կովկասեցին, որ սկզբում այնքա՛ն համակիր էր ռուսական տիրապետութեան տարածման, ներկայումս արտայայտում է խոր հիասթափութիւն և վտանգաւոր պտուղներ խոստացող հակակրանք։ Ժողովուրդի մէջ չմնաց հաւատ դէպի պետական արդի կար-

գերը, դէպի այդ կարգերի ներկայացուցիչը։ Սիստէմի պակասութիւնները լրացաւ գործադրողների պակասութեամբ։ Եւ դա սկիզբն է ռուսական տիրապետութեան սնանկութեան կոմկասում...

Այդ տխուր հիասթափման նպաստեց և այն հանգամանքը, որ անբարեխիղճ, անընդունակ, անբարոյական, կաշառքի համար ամեն բան ոտի տակ տուող չինովնիկութիւնը պատժելիս, կառավարութիւնը մտցրեց դարձեալ ազգայնական տեսակէտը։ Անբարոյական, կաշառակեր հայ չինովնիկին պատժողը ներում է անբարոյական, կաշառակեր ռուս չինովնիկին։ Այն՝ ինչ ներում է մոսկուացուն, չի ներում երևանցուն. վրացին կամ լեհացին կարող չէ անել այն, ինչ անում է իր ռուս պաշտօնակիցը։ Սա իհարկէ, անբացառիկ երևոյթ չէ, բայց դարձել է մի տեսակէտ, որ քանի գնում՝ աճում և թևաւորւում է։

Մի կենդանի ապացոյց։

Թիֆլիզում ապրում է մի պաշտօնեայ, ռուս, ուղղափառ և անկասկած՝ միապետական. Ի՞նչ է նրա անունը, անդամ դատաստանական պալատի։ Դատարանը շատ քիչ է տեսել այդպիսի ծայրահեղ մի ոչնչութիւն. կաշառակեր, այն էլ ամենավիրգէր տեսակի, արբեցող, անդամ ամենաղազիր խմբերի, անբարոյական, մշտական հերոս հասարակաց տների... Ո՞վ չէ ճանաչում նրան և ո՞վ չգիտէ, որ շատ անգամ գիշերային օրգիաներից ուղղակի դատարան է գալիս այդ „ընտանիքի հայրը“, անդամակցելու կամ նախագահելու դատավարութեան, վճիռ արձակելու յանուն արդարութեան, որի հետքերն անդամ չեն մնացել նրա գինովցած գլխում և յղփացած մարմնի մէջ։

Բայց նա չէ վնդում։

Թիֆլիզում կար և մի այլ պաշտօնեայ, նոյնպէս դատարանական, դատախազի օգնական, ծագումով հայ,

Օ-լի աղգանունով։ Վարում էր նա իր պաշտօնը, ինչպէս շատերը՝ ամսի 20-ին ռոճիկ ստանալու համար, և իբրև ոչ անարժան՝ բարձրանում էր իր աստիճաններին մէջ։ Եւ յանկարծ մի օր, կանչուած աւագ-դատախազի առանձնասենեակը, առաջարկութիւն ստացաւ անմիջապէս հրաժարուել պաշտօնից։ — „Ինչո՞ւ“, մրմնջաց յանկարծակիի եկած մեղադրուողը։ Մեղադրողը բացեց բերանը. „Դուք անարատ չէք ձեր ընտանեկան կեանքի մէջ և անհաւատարիմ ձեր կնոջ՝ կենակցում էք տիկին . . . -ի հետ։ Հասարակութիւնը գիտէ այդ։ Դուք արատաւորում էք արդարութեան տաճարը“։

Եւ նա վռնդուեց։

Վերաբերմունքի այդ „երկու չափ, երկու կշռոն“ է, որ ցնցեց և ցնցում է արդարութեան ու վստահութեան գաղափարի հիմքը կովկասեան ժողովրդի մէջ, հասցնելով երբեմն նրա կասկածոտութիւնը և հիասթափմունքը առասպելների։ „Փող տուր, ես օրինագիրքը կը փոխեմ“— ահա ժողովրդական փիլիսոփայութեան բանաձևը՝ դրած ամեն մէկի գլխին, իբրև խոր համոզմունք։ Եւ երբ, աղատ խօսքից զուրկ այս երկրում լուր է պտտում, ի հարկէ շշուկի ձևով, թէ այս ինչ մինիստրը, մեծ իշխանը կամ պալատական կարևոր պաշտօնեան կաշառուել, ծախուել է, ժողովրդական փիլիսոփայութիւնը սառնասիրտ կերպով տրամաբանում է՝ „Ի՞նչ կայ զարմանալու“։

Եւ ոչ ոք չէ զարմանում։ Եւ ոչ ոք չէ բողոքում։

Պատմում են հետաքրքիր մի զրոյց, ընորոշ՝ ժողովրդական մտածողութեան տեսակէտից, կատարուած մի հայի և ռուսի մէջ. հայը՝ դեռ կիսահիասթափ, իսկ ռուսը բոլորովին հիասթափուած։

— Տեսնես, թագաւորն էլ կաշառք կ'ուտի, հարցրեց հայը իր մտերիմ ռուսին։

— Որ տան, լա՜, պատասխանեց ռուսը սրտի խորքից. . .

ՀԱԼԱԾԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐ

(ՏԱՄՆԶՈՐՍԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

„Գիտէք արդեօ՞ք տեղական լեզուն“. — Ռուսերէնը Կովկասում. — Տխուր տեսարաններ դատարանում եւ գիւղի մէջ. — Զինուորակոչական ատեանը. — Կեղծ թարգմանութիւններ. — Լեզուական տանջանք. — Բիւրոկրատիական մանկավարժութիւնը. Հալածանք մեռածների դէմ. — Դեսլերեան գլխարկները:

Մի օր — հազւագիւտ են այդպիսի գեղեցիկ օրեր — Լեհաստանի մայրաքաղաքի կառավարիչը, իր ստորադրեալների հանդիսաւոր ընդունելութեան միջոցին, շքեղ համազգեստների մէջ ձգուած աստիճանաւորներին այս անսպասելի հարցը ուղղեց.

— Գիտէք արդեօք տեղական լեզուն:

Ոչ մի շրթունք չշարժուեց: Եւ „այո“ բառը, այնքա՜ն սովորական ցարերի ծառայողների բերանում, այդ անգամ չլսուեց խոնարհ շրթունքներից:

— Ի՞նչ է պատահել, հարցնում էին միմեանց յանկարծակիի եկած պաշտօնեաները, մի քանի օր շարունակ՝ դիւանատան միջանցքներում կամ փողոցում հանդիպելիս: Պատասխանի փոխարէն ուսեր էին վեր քաշում: Եւ նրանցից ամենահամարձակները — թէև շատ հազւագիւտ — վճռեցին, իրենց սրտի խորքում ի հարկէ, որ „նորին գերազանցութիւնը երևի շուտով պետական խորհրդի անդամ կը նշանակուի, շատ ծեր է“...

Իրաւունք ունէին: Այդ օրինակ „խելառ“ հարցեր տալու համար միապետութեան մէջ կամ պիտի լինել

շատ „ջահիլ“ — համանիշը՝ անզգուշութեան և ապատամնութեան, և կամ՝ շատ „ծեր“՝ — համանիշը թուլութեան կամ տխմարութեան... „ջահիլ“ թէ „ծեր“ էր Վարշաւայի նորեկ կառավարիչը՝ — դա մի հարց է, մութ մնացած...

Մութ չէ միայն այն, որ այդպիսի „ջահիլ“ կամ „ծեր“ երբէք չէ անցել Կովկասեան լեռնաշղթան, և Կաղբէկի ու Մասիսի ստորոտների դարեւոր տարեգրութեան մէջ ոչ դր չէ յիշում — անկարելի է յիշել մի բան, որ տեղի չէ ունեցել — որեւիցէ մի պաշտօնեայ՝ կառավարչապետ թէ նահանգապետ, դատարանի նախագահ թէ փօստային վերահսկիչ, որ իր ստորագրեալներին ընդունելիս հարցնէր՝ „Գիտէք արդեօք հայոց կամ վրաց լեզուն“: Կարո՞ղ է արդեօք այդպիսի մի հարց տեղ գտնել աստիճանաւորի ամրաձոյլ գլխում, որը մի բան է ուսել և մի բան միայն գիտէ, այն՝ որ աշխարհի երեսին մի լեզու միայն կայ, ռուսաց լեզուն — ոչ ի հարկէ Կարամզինի կամ Պուշկինի լեզուն, այլ ուրիադնիկի և կնուտի լեզուն, — որով ամենքը պիտի խօսեն: Ով գիտէ՝ նա կը խօսի, ով չգիտէ՝ թող լռի... Եւ ինչո՞ւ խօսել, քանի որ ամենալաւ հպատակը նա է, որ լուռ է և այն էլ միշտ...

Եւ լռում են: Լռում են, որովհետև, հակառակ ռուսական դարեւոր տիրապետութեան, այդ լեզուով խօսողները կազմում են ամենափոքրիկ տոկոս, աննշան և չնչին՝ ահագին ազգաբնակութեան թէ առջև: Ընտեղեակ և մոլորուած են նրանք, որոնք միամտութիւն ունին կարծելու, թէ հարիւր տարուայ ընթացքում ռուսաց լեզուն այնքան տարածուել և այնքան ժողովրդականացել է կովկասեան ազգերի մէջ, որ կարելի է այդ լեզուով խօսել ժողովրդի հետ, կառավարել դատել այդ լեզուով օրէնք գործադրել, ցաւեր իմանալ: Երբէք: Զօրանոցները, ինչարկէ լեզու չը տարածեցին և ոչ էլ ոստիկանական

պահպանողները։ Սպայի և աստիճանաւորի ետեւից չեկաւ ուսուցիչը՝ իբրև տարածող գրագիտութեան և լեզուի։ Զօրանոցին չը յաջողեց դպրոցը։ Ահա թէ ինչու, այժմ էլ, գաւառների ազգաբնակութիւնը նախկին Վրաստանում կամ Հայկական նախկին նահանգներում — վրացիներ, հայեր, թիւրքեր — դեռ ևս շատ տեղ մի խօսք անգամ չգիտէ այն լեզուից, որով մի դար է հրամայում են . . . Եւ եթէ մի օր, իբրև անսպասելի մի պատահար, ապստամբ Կովկասը թօթափէր միապետութեան լուծը, թերևս երեք օրւայ մէջ անհետ լինէին դարևոր տիրապետութեան վերջին նշանները և գուցէ ուրիշ ոչինչ չը մնար, բայց եթէ զօրանոցների հաստ պատերը և ուղղափառ տաճարների ոսկեզօծ գմբէթները . . .

Կրկնակի է դժբախտութիւնը։ Խոնարհ, երբեմն ռուսական համակրանքներով յափշտակւած ժողովրդին չսովորեցրին այն լեզուն, որով վճռւում և հրամայում է կառավարութիւնը. և ոչ էլ կառավարութեան ներկայացուցիչները պարտականութիւն յանձն առան ծանօթանալու այն լեզուներին — գէթ դրանցից մէկին, որոնցով իր ցաւերն ու կարիքներն է արտայայտում մի ամբողջ երկիր, մի քանի ազգերի հաւաքական, ահագին մարմինը։

Ցնորք է, իհարկէ, երևակայել անգամ, որ երբևիցէ ռուսաց գահի ժառանգը, այն երկար տարիների ընթացքում, երբ նա խնամքով մարզուել է անում, թէ ինչպէս պէտք է ձեռք տալ, պագնել կամ պարել, երբ ամիսներով վարժւում է գեղեցիկ կերպով իր անունը ստորագրելու „պետական պարտաւորութեան“ մէջ, — ցնորք է, ասում ենք, երևակայել, որ նա մտածէր գէթ մի քանի ժամ նուիրելու պետական կազմի մէջ մնող միւս ազգերի լեզուի ուսումնասիրութեան, եթէ ոչ իբրև արքայական պարտաւորութիւն — արքաները պարտաւո-

բուլթիւն չեն ճանաչում — դէթ իբրև յարգանք դէպի այն հպատակ ազգութիւնները, որոնք խօսում են այդ լեզուներով, որոնք „կազմում են ռուսական թագի մարգարիտները“: Ներկայ օրերում, այո, ցնորք է այդ: Ցնորք է և այն գուցէ, որ մինիստրի վրայ պարտք դրուէր ծանօթ լինելու պետութեան ծայրերում հաստատուած գլխաւոր ազգութիւնների լեզուներին, հարկաւոր դէպքում նրանց դ ա ր դ ե ր ը անմիջապէս լսելու և հասկանալու համար: Բայց միթէ ցնորք պիտի մնայ և այն տարրական միտքը, որ Կովկաս եկող պաշտօնեան, եթէ ոչ մի փոխարքայ կամ կառավարչապետ, որ պալատից հաղիւ է ոտքը դուրս դնում, գոնէ նահանգապետը, գաւառի կառավարիչը, դատաւորը, ոստիկանապետը, որոնց պարտաւորութիւնը ամեն օր նրանց կանգնեցնում է երես առ երես երկրի ժողովրդի հետ, իմանային այն ժողովրդի լեզուն, որին ուղարկուած են կառավարելու, չենք ասում ծառայելու, որովհետև Ռուսաստանում պաշտօնեան չէ, որ ծառայում է ժողովրդին, այլ ժողովուրդը՝ պաշտօնեային: Սակայն այդ տարրական կարծիքն էլ մնաց և մնում է ց ն ո ր ք ն ե ր ի շրջանում, և այն էլ՝ վրտանգաւոր ցնորքների: Երևանի նահանգապետը, կառավարիչ հայկական շրջանի, մի խօսք չգիտէ հայերէն: Քութայիսի նահանգի պետը, որ ամեն օր և ամեն ժամ գործ ունի վրացի ազգաբնակութեան հետ, չի էլ հասկանում նրա մայրենի լեզուն: Այդպէս են և միւս նահանգներում. այդպէս են և միւս պաշտօնեաները: Եւ ի՞նչ բիւրաւոր չարիքներ չը ծագեցին այդ դժբախտ կացութիւնից:

Ահա դատարանում ենք:

Դահլիճի մէջ, միջանցքներում խռնուած է ժողովուրդը, — լեռնական վրացիներ, գիւղերից եկած հայեր, սարերից իջած թիւրքեր: Գլխափաթաթ կանայք, սպի-

տակահեր ծերունիներ՝ նահապետական միամտութիւնը երեսներին, մատաղ երեխաներ՝ երկչոտ, անհանգիստ հայեացքներով։ Ամենքն էլ կուշ են եկել։ Դողը բոլորի սրտումն է։ Սպասում են ժամեր, օրեր։ Նրանց մի սենեակից միւսն են քշում, մի միջանցքից մի այլը։ Ցուած հարցերին ոչ ոք չէ պատասխանում։ Նրանց ոչ ոք չէ ուզում հասկանալ։ Ահա և դատաւորները՝ կամ քնաթաթախ աչքերով ամբողջ գիշերուայ թղթախաղից, կամ կատաղի՝ ինչպէս տանջած գայլը, ով գիտէ, ընտանեկան ինչ դրամայից... Շաբաթ են խեղճերը իրենց դատաւորների առաջ։ Մահուան և կեանքի խնդիր է։ Սակայն նրանք մի բառ անգամ չեն հասկանում։ Ցգէտ, անուս թարգմանը թարգմանում է, ինչպէս և ինչ կամենում է։ Եւ ահա մի ժամից յայտարարում են՝ „Բոլորն էլ ճանաչուած են մեղաւոր — աքսոր Սիբիր“։ Վճիռը նոյնպէս պէտք է թարգմանել։ Եւ դեռ թարգմանութիւնը չարած, դևերի նման բուսնում են զինուորները, քշում են անխօս, անկեղծ մեղադրուածներին, ինչպէս անասուններ։ Ո՞ւր — նրանք էլ չգիտեն..։ Եւ ինչու համար։ „Իշխանութեանը դիմադրութիւն ցոյց տալու համար“ — ասում է թարգմանը։ Դիմադրութիւն իշխանութեան։ Ո՞ւր, երբ...

Գիւղումն ենք։

Շինականները դողի մէջ են. փողոցներից մարդիկ փախուստ են տալիս, ինչպէս մօտալուտ փոթորկից. միայն մելիքն է երևում, գունատ, շշկլուած, ահը երեսին, նշանը վզին։ — Ի՞նչ է պատահել։ Սպասում են գաւառապետին։ Ահա և նա, գաւառի ցարը։ Կէս ժամից՝ „Հարայ-հրոցը“ գիւղն է տիրել։ Ցեսարանը պարսիկ խաների կամ թիւրք փաշաների գալուստն է յիշեցնում։ Եասաաուլները՝ կօղակների հետ գիւղն ընկած՝ հաւեր են հաւաքում, իւղ են պահանջում, լաւ գինի են որո-

նում... Եւ եթէ ձրի չեն տալիս, կամ քիչ են տալիս, մտրակը պատրաստ է։ Ծեծ, հայհոյանք, կռիւ։ Մելիքը փորձում է գանգատուել։ Գաւառապետը չհասկանալու է դնում։ Ահա յանկարծ մի սրտակտոր ճիչ, — պառաւ գեղջկուհին՝ կատաղութիւնը դէմքին, հրացայտ աչքերով, դէպի մեծաւորն է վազում։ Գանգատ ունի, — եւասաւորները նրա հարսի պատիւն են վիրաւորել։ Նա գոչում է, նա շանթեր է արձակում...

— Հաւերս էլ, կովս էլ, սաղ տունս էլ թող տանեն, թագաւորին զուրբան, բայց հարսիս հետ ինչ գործ ունեն այդ անհաւատ, գետին մտածները. Աստծու կըրակը դրանց գլխին...

— Ի՞նչ է ասում, որոտաց սենեակից գաւառապետը։

— Հաւի փող է ուզում, բացատրում է խորամանկ թարգմանը։

Արդարադատ գաւառապետը մեծահոգութեամբ քսան կոպէկ շպրտեց գանգատաւորի առաջ՝ գոչելով.

— „Լռեցրէք“։ Եւ մտրակները լռեցրին բողոքողին։ Վիրաւոր կինը յետ մղուեց, կապտած մարմնով, դողդոջուն։ Ամենազօր մտրակը խաղաղացրեց վրդովուած, բողոքող հոգին...

Զինուորական է։

Գիւղի ահագին հրապարակի վրայ ծովացած է ամբոխը։ Մէջտեղը, մի պատուանդանի վրայ, կանգնած է գաւառապետը։ Զինուորագրութեան սկիզբի տարիներն են, և նա, յանուն „արդար օրէնքի“, բացատրում է ժողովրդին՝ թէ ինչպէս պէտք է վիճակ հանել և ով է զինուոր գնում։ Ժողովուրդը ալեկոծուած է. անվստահութիւնը թափանցել է մինչև նրա հոգու խորքը։ Նա չէ հաւատում, նա կասկածներ է տանում։ Եկեղեցու բակում, ջրի ճանապարհին առասպելներ են պատմում։ Եւ ինչո՞ւ չպատմեն։ Նոր օրէնքը ոչ ոք չը բացատրեց,

յուզիչ լուրերի առաջը ոչ ոք չը կամեցաւ առնել։

— Ահա այսպէս—կրկնում է գաւառապետը ամբոխին—ամէն մէկը ձեռքը կը կոխի այս արկղի մէջ և կը հանի մի տպած համար (պէչատնի նօմէր)։

— Ազան ասում է որ — թարգմանում է թարգմանը — ամէն մարդ ձեռքը կը տանի և կը հանի փէչատած թուղթը*։

— Ո՞ւր է, ո՞ւր փէչատած թուղթը — գոռում են մի քանի կողմից, — փէչատած չէ, խաբում էք, բաց է։

Գաւառապետը՝ չը հասկացած յուզման պատճառը, զայրոյթի նշաններ է ցոյց տալիս։ Զայրոյթը աւելի է յուզում ամբոխը։ Թիւրիմացութիւնը ամբոխի աչքում դառնում է շարամիտ խաբ, իսկ ժողովրդական զայրոյթը՝ իշխանութեան աչքում՝ վտանգաւոր անկարգութիւն, դիմադրութիւն։ Յուզմունքը վերջանում է խիստ մտրակահարութեամբ։

Կառավարչապետի պատգամն է։

Գաւառները տակն ու վրայ են. նահանգապետը քաշն չունի, գաւառապետները՝ շփոթուած։ Որտեղով պիտի անցի — ոչ ոք չգիտէ։ Կամուրջները նորոգում, ճանապարհները կարգի են բերում։ Ահա և նա ինքը գաւառական փոքրիկ քաղաքում։ Ծերունի է, կորացած. թոյլ՝ մարմնով, բայց ուժեղ՝ իրաւունքներով։ Եւ կանգնած հրապարակի վրայ, շրջապատուած նահանգի բոլոր մեծերով, ժողովրդի ցաւն ու դարդը, գանգատն ու տենչն է ուզում խմանաք։ Ո՞րպիսի բացառիկ երջանկութիւն։ Սակայն ամբոխը լաւած է ... Լսում են յուզուած ձայներ, բացականչութիւններ.

---

* „Փէչատած“՝ ժողովրդի հասկացողութեամբ նշանակում է „կնքած“, մինչդեռ խօսքը տպած (պէչատնիյ) թուահամարի մասին է, որ ինքը թարգմանը չէ հասկանում։

— Չենք ուզում. մեր Նաչալնիկը (գաւառապետ) մեր տունը քանդեց, չենք ուզում. կաշառք տալով մեր հոգին ելաւ. չենք ուզում...

— Ի՞նչ են ասում։

Գաւառապետը առաջ եկաւ, նայեց թարգմանին, աչքերը գցեց Նահանգապետի աչքերին և պատուի կանգնելով կառավարչապետի առջև, հանդիսաւոր կերպով արտասանեց.

— Ձերդ պայծառափայլութիւն, ասում են, որ գպրոց չենք ուզում, փող չունենք, ծախքը չենք կարող հոգալ...

— Ի՞նչպէս, գպրոց չե՞ն ուզում. ես հրամայում եմ. մինչև վեց ամիս շինութիւնը պատրաստ պիտի լինի։ Յայտարարեցէք, — ասաց, առաջ անցաւ, նստեց կառքը, ճեղքեց ամբոխը և սլացաւ... Ու թիֆլիզ դարձած, նա շտապեցրեց դէպի Պետերբուրգ իր զեկուցումը, որ վերջանում էր այս խօսքերով „Անձամբ և տեղնուտեղը ուսումնասիրելով աղգաբնակութեան կարիքները... և այլն“։

Շարունակութիւնը գրագիրներն էլ անգիր գիտեն...

„Լեզգական տանջանքները“ — դա մի ոճէ՝ յատուկ միայն Կովկասին — հանգիստ չեն տալիս տեղական աղգաբնակութեան և՝ հիմնարկութիւններից դուրս, առօրեայ կեանքի ամեն մի քայլի վրայ։ Ահա գիւղացի հայրը նամակ ունի ուղարկելու իր որդուն, որ Բաթում է։ Նա իրաւունք չունի հայերէն գրել. պիտի թողնի գործը, մի օրւայ ճանապարհ անցնի, քաղաք գայ, դիմի մի ծանօթ կամ անծանօթի, աղերսի, որ նրա նամակի հասցէն ռուսերէն գրեն։ Մի հասցէի համար՝ մի ամբողջ օրւայ կորուստ...

— Պառաւ, որդու կարօտ մայրը քանի է եկել տեսնելու որդուն։ Նրա սիրտը տապակւում է, նա առաջ է վազում, որ մի խօսք ասի, մի խօսք լսի զաւակից։ Բայց պահապանի կոշտ ձեռքը նրան յետ է հրում. „Ռուսերէն

խոսեցէք»։ Եւ խեղճ մայր ու որդին, անասունի նման անխոս, ստիպւած են աչքերով խոսել, լռութեան մէջ որոնել իրենց կարօտը, յոյզերը . . . — Գիմնազիօնում երեխան հարց ու փորձի է կանչւած. տեսուչը սպառնում է նրա „վարքը“ պակասեցնել։ Ինչո՞ւ։ Ցեղեկացել է, որ մի քանի հոգի հայերէն կամ թիւրքերէն են խոսում իրար մէջ։ — Հաղիւ քո „եանցի“ խնդիրը վերջացաւ, հիմի էլ հայերէ՞ն ես խոսում — նկատում է վրդովւած տեսուչը։

Ի՞նչ „եանցի“ խնդիր է, կը հարցնէք։ Հայկական աղգանունների վերջաւորութիւնն է դա, որ, յիրաւի, դարձել է մի պետական խնդիր քաղաքականութեան սիրահարների համար։ Դպրոցներում մանաւանդ — էլ չենք ասում վարչական հաստատութիւններում — ստիպում են գործ չածել „եանց“, այլ դրա տեղ „օվ“, հակառակ աղգանւան տիրոջ ցանկութեան։ Դրա պատճառով է որ նոյն անունը, որ հայոց շրջաններում Տէր-Պետրոսեան է, գիմնազիօնում դառնում է Տէր-Պետրոսով, Կարապետեանը՝ Կարպով, Գրիգորեանը՝ Գրիկուրով։ Դաղը չէ այս և ոչ էլ կատակ։ — „Եանցի“ խնդիրը դեռ իր ամենաուռուն շրջանումն է և թէև ծնունդ 19-րդ դարի, պիտի զբաղեցնի միապետութեան գործակալներին և ներկայ դարում. . .

Շատ տարիներ առաջ, ռուսական տիրապետութեան նախկին շրջանում, երբ ամբողջ նահանգներ զուրկ էին մի հատիկ ռուսերէն խմացողից անգամ և երբ դեռ չէին փչում նորագոյն հովերը, կառավարչական կարգադրութիւն եղաւ պաշտօնական թղթերը գրել, բացի ռուսերէնից, նոյնպէս և վրացերէն, հայերէն ու թիւրքերէն լեզուներով։ Սակայն դա միշտ մնաց և մանաւանդ այժմ մնում է իբրև մեռելածին մի ձև, թաղւած անգործադրութեան փոշու տակ։ Քաղաքային ինքնավարութիւնները իսկ, որոնք համարւում են աւելի հասարակական քան

ստիկանական հիմնարկութիւններ, չեն արտօնուած խօսելու, գրելու այն լեզուով, որով խօսում և գրում է նրան կազմող և ընտրող ժողովուրդը։

Այս քաղաքականութեան նպատակն է, իհարկէ, և այն, որ ըստ կարելոյն շուտով և արագօրէն ոչնչացնի տեղական լեզուների նշանակութիւնը և աշկարայ դարձնի նրանց կատարեալ անկարևորութիւնը։ Եւ իրօք։ Պ ա շ տ օ ն ա կ ա ն տեսակէտից, կովկասեան ոչ մի լեզու արժէք չունի։ Հայը կամ վրացին իրենց լեզուն սիրել կարող են միայն պլատօնական, վերացական սիրով։ Գործնական կեանքի մէջ նա անարժէք է։ Նրան հալածում, նրան ծաղրում, նրան անպէտք են համարում։ Ինչքան էլ գիտնական լինէք հայոց կամ վրաց լեզուի մէջ, և ինչքան էլ կատարելագործուած այդ լեզուներում, ձեզ չեն թոյլ տայ մի քայլ անգամ անել դատարանում, փօստում կամ ուրէ վարչատան մէջ։ Տեղական լեզու խմացող պաշտօնեաներին արգելուած է խօսել այդ լեզուներով և եթէ մէկը խօսում է, նրա վրայ „ծուռ աչքով“ են նայում։ Շատ կան հայ պաշտօնեաներ, որոնք ոչ միայն իրենց „եանցը“ դարձրել են „օվ“, այլև ամենայն եռանդով աշխատում են ցոյց տալ, որ նրանք չգիտեն իրենց մ ա յ ր ե ն ի լեզուն, չեն կարդում հայերէն լրագիր կամ գիրք։ Եթէ „մեծը“ իմանայ, որ ստորադրեալ հայ պաշտօնեան իր որդուն կամ աղջկան տուել է հայոց դպրոց — նրա մասին լաւ կարծիք չի տալ իշխանութեան։ Վաճառականը կամ արհեստաւորը ազատ չեն իրենց խանութի ցուցանակը գրել այն լեզուով, որ ուզում են։ Հայ հարուստը կամ վրացի ազնուականը, եթէ ուրէ կապ ունի կառավարչական հիմնարկութիւնների հետ, ստիպուած է՝ ուրէ ազգային հիմնարկութեան նուէր արած միջոցին, մի բան էլ նուիրել, օրինակ, „Ուղղափառութիւն տարածող“ ընկերութեան կամ ռուս եկեղեցու կառուցման, որպէսզի խ է թ հայեացքների առարկայ չդառնայ։

1892 թուին Թիֆլիզում մի հայ պաշտօնեայ կառուցեց տուն և, կամենալով քարու ցեխի մէջ էլ ցոյց տալ իր հաւատարմութիւնը, տան ճակատին ահագին տառերով գրեց՝ „Ցէր, պահեա զկայսրն մեր“... Եւ իբրև վարձատրութիւն՝ նրա տունը թանկ գնով վարձեցին նահանգական վարչութեան համար։ Զազիր, անբարոյականացուցիչ միջոցներ, որոնք վարժեցնում են ամբողջ սերունդը քծնելու, ստորանալու արհեստին — մի սերունդ, որ առանց այն էլ լի է բարոյական արատներով։

Իսկ այդ սերունդների կրթարանները, — դպրոցները, միապետական քարոզների օջախ դարձած, զարգացնում են „հալածական“ լեզուների դէմ սկսած արշաւանքը՝ կրկնակի ուժով, կատաղօրէն։ Գիմնազիոններում գոյութիւն չունի վրաց կամ հայկական լեզու։ Գանձարանը, շատ հաղագիւտ բացառութեամբ, դրամ չէ բաց թողնում նրանց դասաւանդութեան համար։ Պարտաւորական չէ նրանց սովորելը, այլ ենթակայ արհամարհանքի։ Եւ շնորհիւ այդ կարգերի՝ անմեղ, առողջ ուղղութեան կարօտ ռուս երեխան, դեռ մանկութեան օրերից վարժւում է արհամարհել, ինտես առնել, նոյն իսկ ատել այն՝ ինչ ռուսական չէ, այլ տեղական, յատուկ երկրի բնիկ ազգութիւններին։

Հալածանքը գնում է աւելի հեռու։ Կովկասեցի երեխան, հաղիւ գրագէտ, դեռ սկսնակ, ստիպւած է, շնորհիւ այն դասագրքերի՝ որոնք տրւում են իր ձեռքը, չը յարգել, չը սիրել այն, ինչ պատկանում իր ծննդավայրին, հայրենի երկրին, և սիրել միայն այն, ինչ որ հեռու է, նոյնիսկ անծանօթ։ Չը ճանաչած Խմբէթի կամ Պիւնեաց երկրի գեղջուկին, նրա խրճիթը, նիստուկացը, նրա կենցաղը, նա՝ ստիպողաբար առաջնորդւում է սերտել և պատմել, թէ ինչպէս է ապրում ռուս գեղջուկը Արխանգելի, Պսկովի նահանգներում, ինչ ձև ունի նրա

տնակը և կամ որոնք են նրա կենցաղի ձևերը։ Ան-ծանօթ կովկասին, նրա կեանքին, բանաստեղծու-թեան, նա անգիր է անում Կալցով կամ Գօգօլ։ Երե-ւակայութեամբ տարուած դէպի Մայր-Վոլգայի ափերը կամ ռուսական անծայր „ստեպ“-ները, կովկասեցի փոք-րիկները չեն ներշնչւում սիրով, որ և՛ բնական է, և՛ կրթիչ, դէպի վեհատեսիլ Մասիսը, գեղանի Կազբեկը, կամ այն գեղեցիկ դաշտերն ու ձորերը, որ կարում անցնում են Մայր-Արաքսն ու Կուրը, դէպի բնութեան այն սքանչելիքները, որոնք կազմում են ստուգ երկրի անվիճելի հրաշալիքը, հրապոյրն և հմայքը ... Անտեղի, անմիտ թշնամանք դէպի այն բոլորը, ինչ պիտի կրթի ճաշակ, երևակայութիւն, սէր դէպի բնութիւնը։

Եւ աւելի ուշ, երբ պատանեկան երևակայութիւնը սա-ւառնում է դէպի աւելի բարձր, դէպի փաստերի անցեալն և ապագան — նրան չեն ներշնչում որևէ համակրանք դէպի գերմարդկային այն ցաւերը, որոնք կազմում են կովկասեան ազգերի արիւնոտ, բայց հերոսական անցեալը և կամ դէպի նրանց քաղաքակրթական ապագան, որ այնքա՜ն սիրելի է Լեռների հայրենիքին։ Միապետական մանկավարժի համար չը կայ հայկական կամ վրացական պատմութիւն, հայկական կամ վրացական բանաստեղ-ծութիւն. նրա դիտողական ուսումը՝ կովկասից դուրս է, նրա ընտրած նիւթերը՝ հեռու այդ երկրից։ Ռուսական բանաստեղծութեան և ռուս ժողովրդի սի-րով յափշտակուած պատանին՝ իրաւունք չունի սիրել մի այլ բանաստեղծութիւն, որ յօրինուած է իր երկրի մէջ, մի այլ ժողովուրդ, որի հարազատ զաւակն է ինքը, մի լեզու, որով խօսել են իր ծնողները, որը ընտանի է իր ականջին, իր կոկորդին, իր զարգացման կանոնաւոր ընթացքին ...

Մանկավարժական մի նոր մեթոդ է այդ, բոված բիւրոկրատիական դիւանատներում, գուցէ և զինուորա-

կան շտաբների մասնակցութեամբ, — մեթոդ, որ ունի իր սեփական օրէնքները, իրեն յատուկ սկզբունքներ, անծանօթ գիտութեան, անյայտ մանկավարժական նորագոյն սիստէմների մեծանուն հեղինակներին . . .

Հաղածաշունչ հողմերից ազատ չեն և մեռածները, որոնց երախտապարտ հայրենիքը կուզենար յարգանքի մի նշան ցոյց տալ արձանով կամ մի այլ յիշատակարանով։ Արգելուում է, օրինակ, քաղաքի որևէ փողոցին տալ մի նշանաւոր վրացի կամ հայ գործիչի անուն, կամ գրադարան հիմնել տեղացի ականաւորի անուամբ։ Թիֆլիզում կան Պուշկինի, Գրիբոյեդովի, Կրիլովի անուան նուիրուած փողոցներ, բայց և ոչ մի փողոց՝ կովկասեցի մի գործողի կամ մտածողի անուամբ։ Երևանեան նահանգի գիւղերից մէկում ուզեցին բանալ մի գրադարան, նուիրուած Գրիգոր Արծրունու անուան։ Արգելեցին։ Ստիպուեցին ընտրել Պուշկինի անունը, — թոյլ տուեցին։ Իհարկէ, ոչ այն պատճառով, որ անմահ Պուշկինը — որի անունը այդ գիւղում, տարաբախտաբար, առաջին անգամ էին լսում — սիրելի էր հակապուշկինեան նահանգապետին, այլ այն պատճառով, որ „յամենայն դէպս“ նա ռուս է . . . Կորած-մոլորած Պարսկաստանի մէջ գրադարաններ են հիմնուած Նազարեանի, Լաֆֆիի, Արծրունու և Պատկանեանի անուամբ, իսկ Կովկասում, ուր այդ մարդիկը ապրել, գործել են և որին նրանք ծառայել են իրենց ամբողջ ուժով, անկարելի է դրանց անունը դնել մի համեստ, կառավարչական հսկողութեան ենթակայ ընթերցարանի ճակատին։ Այդ է պատճառը, որ ոչ ոքի մտքով անգամ մինչև այժմ էլ չէ անցնում, օրինակ, խօսք բանալ Թիֆլիզի, Երևանի կամ Բագուի ոևէ հրապարակի վրայ մէկ արձան կառուցանելու կովկասեան այնպիսի գործողների յիշատակին, որոնց անունը միշտ պիտի կազմէ այդ գեղեցիկ երկրի վշտալի պատմութեան պարծանքը։ Դա կը համարուի

ցոյց կառավարութեան դէմ. դա կը նկատուի յեղափոխական փորձ . . .

Ըմբոստացած այդ տարբական արդարութեան դէմ, բռնի ուժի հաւատարիմ հովանաւորները երևի մօտիկ ապագայում կովկասեան քաղաքների հրապարակները կլցնեն զարդարել այնպիսի գեներալների և կառավարիչների արձաններով, որոնց միակ մեծութիւնը եղել է կամ արիւն թափել կամ ստրկացնել, որոնց անունը կովկասեցին կը ծածկէր, եթէ ազատ լինէր, միմիայն անարգանքով և ատելութեամբ:

Կը բարձրացնեն Գեսլերեան գլխարկները և կըստիպեն ժողովրդին գլուխ խոնարհեցնել:

Հելվեցիան Վիլհելմ Տէլլ ծնեց՝ այդ անարգ գլխարկը ոտի տակ տալու համար:

Կը ծնուի արդեօք մի նոր Վիլհելմ Տէլլ այն վիթխարի լեռների ստորոտում, ուր ըմբոստ Պրոմէթէոսը երկնքի կրակը խլեց . . .

„ՑԵՆԶՕՐ“

(ՏԱՄՆԵԻՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Բռնաւորի պատգամը. — Մտքի ոստիկանութիւնը. — Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւն. — Ցենզօրական կոմիտէներ. — Դրաքննական կանոնագիրք. — Օրէնքը դատարկ հնչիւն է. — Փաստեր. — Առասպելական խստութիւններ. — Ներսը եւ դուրսը. — Պարբերական հրատարակութիւնների վիճակը. — Ի՞նչ է կատարւում Նովկասում. — Փաստերի փոքրիկ շարան. — Ցենզօրական „մարգարիտներ“. — Խե՜ղճ գրականութիւն:

Եւ ասաց բռնաւորը՝

— „Լը լենի խօսքի ազատութիւն“:

Եւ չ'եղաւ խօսքի ազատութիւն:

— „Գնացէք և կատարեցէք իմ կամքը“:

Եւ առաքեալները գնացին:

Պարգեւատրւած ցենզօր տիտղոսով, համազգեստը հագին, կրծքին պսպղուն նշաններ, բռնկւած խստագոյն ատելութեամբ դէպի այն բոլորը, ինչ արտացոլում է մարդկային գլխից և մտքից, բռնութեան առաքեալները ատեան կազմած՝ սկսեցին իրենց աւերող, կաշկանդիչ, սև աշխատանքը...

Պետերբուրգ է նրանց կենտրօնը, Նեվայի ափերին: Եւ հազիւ թէ Պետրոսակերտում գտնւի գրչի մի հատիկ զենւոր անգամ, որ չը ճանաչէր այն հիմնարկութիւնը, որի ճակատին գրոշմած է՝ „Գլաւնօէ ուպրավլենիէ պո դէլամ պեչատի“ (Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւն) խօսքերը, խօսքեր այնքա՜ն խորհրդաւոր և երկիւղաբեր, այնքա՜ն անախորժ գրողի ականջին:

Ի՞նչ է դա։ — Դա Մ ա ա ծ ո ղ Ռուսաստանի ոստիկանութիւնն է, ոստիկանութիւն մտքի և գաղափարի, դահիճ գրականութեան և մամուլի։

Ցենզօրական կանոնագիրքը ասում է՝

„Գրաքննական գործերի և առհասարակ մամուլի ղեկավարութիւնը, Պետութեան և Լեհական թագաւորութեան սահմաններում, կենտրոնանում է ներքին գործերի մինիստրութեան մէջ, մինիստրի բարձրագոյն հսկողութեան տակ, Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան ձեռքում“։

Համաձայն այդ օրէնքի տարօրինակ արամաբանութեան, գրականութիւնն ու մամուլը այժմեան Ռուսաստանում չէ՛ հաշվարկում լ ո ւ ս ա ւ ո ր ո ւ թ ե ա ն գործօն։ Ապա թէ ոչ՝ ինչպէս բացատրել այն փաստը, որ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը, որի ձեռքումն է ամբողջ մամուլի և գրականութեան ղեկը, չէ ենթարկւում ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան, որը այսպէս թէ այնպէս կոչված է հսկելու պետական լուսաւորութեան գործին, այլ ներքին գործերի մինիստրութեան, որից կախումն ունեն այնպիսի մարմիններ, ինչպէս են, օրինակ, ոստիկանութեան և ժանդարմների վարչութիւնը։ Բնականաբար, ներքին գործերի մինիստրութեան ձեռքում՝ „մտքի կարգապահութեան“ վերաբերմամբ՝ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը նոյն դերն է կատարում, ինչ որ „ընդհանուր կարգապահութեան“ վերաբերմամբ՝ ոստիկանը և ժանդարմը։ Ասել է թէ՝ մեծանուն և երկիւղալի այդ վարչութիւնը մ ա ա ծ ո ղ Ռուսաստանի ոստիկանութիւն անուանելը՝ բառախաղ չէ, այլ հետևողական եզրակացութիւն, իրականութեան անպաճոյճ արտայայտութիւն։

„Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը“, ինչպէս և մայրաքաղաքում բաղված այլ կենտրոնական կազմակերպութիւնները, մի շատ բարդ մարմին է, — նախագահով,

փոխ-նախագահով, անդամներով, քարտուղարներով և ծառայողների մի ամբողջ լեգէօնով: Պետերբուրգից դուրս նա ունի ստորադրեալ ճիւղաւորութիւններ, որոնք կոչւում են „ցենզօրական կոմիտէներ“՝ բաղկացած մի խումբ „կարևոր“ պաշտօնեաներից և մի քանի „հասարակ“ ծառայողներից, ուրեմն էլի մի ամբողջ մարմին, որի պահպանութիւնը ամեն տարի պետական գանձարանից պահանջում է մեծամեծ ծախքեր:

Ամբողջ Կովկասի համար գոյութիւն ունի միմիայն մէկ հատ ցենզօրական կոմիտէ, որ գտնւում է Թիֆլիզում և պարտաւորութիւն ունի ի միջի այլոց՝

1) Գրաքննել կովկասեան երկրի սահմաններում լոյս տեսնող ամսագիրները, լրագիրները և այլ տեսակ հրատարակութիւններ. 2) Քննել արտասահմանից այդ երկիրը բերուող գրածքները՝ ռուսերէն կամ եւրոպական լեզուներով. 3) Քննել արտասահմանից պետութեան սահմանները մտնող հրատարակութիւնները՝ վրաց, հայոց և արևելեան այլ լեզուներով:

Կովկասեան միւս քաղաքներում, նոյնիսկ նահանգական, կոմիտէներ չկան, այլ կայ, ինչպէս օրինակ Բաքու, մի ցենզօր, որ նահանգական վարչութեան պաշտօնեայ է, շատ անգամ նոյնիսկ նահանգապետի օգնական, որի վրայ պարտք է դրած քննելու այնտեղ լոյս տեսնող լրագիրները: Եթէ կովկասեան ուրիշ քաղաքներում կան մարդիկ, որոնք ուզում են գիրք տպագրել, պէտք է ուղարկեն Թիֆլիզի կոմիտէին. տեղական ցենզորը իրաւունք չունի գրքեր նայելու: Գրքեր արգելելու պատիւը թողնւած է կենտրոնին . . .

Դա է, համառօտակի պատմած, այն մեքենան, որի „ատամների“ մէջ սղմւած է տպագրական խօսքը, գիրը:

Ահա և նրա պատմութիւնը:

Գրաքննութիւնը բռնութեան առաջնակն է: Նորագոյն ձևով նա իր սկիզբը առաւ կաթոլիկ եկե-

զեցու ծոցում։ Ալեքսանդր VI պապը (1492—1503) հրատարակեց մի „Ցուցակ արգելած գրքերի“ և դրանով գրաքննական ատեանի հիմք դրեց։ Այնուհետև եւրոպական զանազան երկիներում ծնունդ առաւ և աշխարհական գրաքննութիւնը, թէև շատ աւելի թոյլ և կարճատև՝ քան հոգևորականը, և կազմակերպուեց նրա վատթարագոյն տեսակը — նախնական գրաքննութիւնը։ Դա մուտք գտաւ նոյնիսկ Անգլիա, ուր ոչ մի գիրք չէր կարող լոյս տեսնել առանց կառավարութեան թոյլատրութեան։ Ֆրանսիայում նրա վիճակը շատ փոփոխական էր։ Մեծ յեղափոխութիւնից յետոյ սկսած յետադիմական շարժումը ծանր պայմանների մէջ դրեց տպագրական խօսքը։ 1795 թւի հալածանքներին՝ Դապոլէօն I աւելացրեց նորանոր խստութիւններ։ 1818-ին, ճշմարիտ է, հրատարակեց աւելի ազատամիտ օրէնք մամուլի վերաբերմամբ, բայց այդ չարգելեց Դապոլէօն-Փոքրիկին՝ նոյնիսկ 48-ի յեղափոխութիւնից յետոյ՝ 1868-ի օրէնքով վերականգնեցնել նախնական գրաքննութիւնը և սկսել մի ամօթալի հալածանք դէպի այն բոլորը, ինչ գլուխ չէր ծռում կայսրութեան առաջ։

Տարի կապանքների ոչնչացման պատիւը պատկանում է ամենից առաջ Անգլիային։ Ֆրանսիայում մամուլի ազատութիւնը յաղթանակեց Եվրոպայի հանրապետութեան օրով։ Դա այժմ համատարած է ամբողջ Արևմտեան Եւրոպայում, ուր ընդհանրապէս այլևս գոյութիւն չունի նախնական և ոչ էլ քաղաքական գրաքննութիւն։ — Մամուլը ենթակայ է ընդհանուր դատարանին և նրա դէմ ուղղուած հալածանքը՝ այլևս քաղաքական հայեացքների առիթով չէ, այլ հետևանք՝ մանաւոր, անհատական գանգատների։ Խօսքի ազատութեան մեծ գաղափարը իր յաղթանակը տարածեց և այնպիսի երկրներում, ինչպէս Իտալիան, փոքրիկ պետութիւններն են, որոնք քիչ

առաջ, թիւրքական լծի տակ, ենթակայ էին գրաքննութեան ամենասոսկալի տեսակին — գերեզմանական լռութեան:

Եւրոպային կից երկու երկիր միայն մնաց, ուր չկայ խօսքի ազատութիւն — Թիւրքիան և Ռուսաստանը:

Որպիսի՜ ամօթալի ներգաշնակութիւն . . .

Շատ հին և շատ տխուր է գրաքննութեան պատմութիւնը սլաւ միապետութեան մէջ: Դեռ Պետրոս Ա-ի օրով (1682-1725), ռուսական տպագրութեան մանկական շրջանում, լոյս տեսաւ կառավարչական կարգադրութիւն, որով հրամայւում էր սինոդին՝ գրաքննել բոլոր տպագրութիւնները, թէև առանձին կարիք էլ չկար, որովհետև երկար, շատ երկար ժամանակ, Ռուսաստանում գիրք տպագրելը մի արտօնութիւն էր՝ յատուկ միմիայն կառավարութեան: Զը կային մասնաւոր տպարաններ: Կառավարութիւնն էր մատակարարողը, տպագրողը և տարածողը: 1783-ին էր, որ լոյս տեսաւ այն նշանաւոր ուկազը, որով թոյլ էր տրւում բանալ մ ա ս ն ա ւ ո ր տպարաններ: Ռուսաց գրականութեան պատմութեան մէջ յիշատակելի տարի է դա: Դա եղաւ եռանդուն գործունէութեան սկիզբը . . .

Սակայն նորաբողբոջ շարժումը խորտակւեց, կանգ առաւ շատ շուտով, երբ ֆրանսիական մեծ յեղափոխութեան ալիքները բաղխեցին ցարերի թագաւորութեան սահմանագլուխը: Յեղափոխական ուժերը լաւ առիթ գտան փականքի տակ գնելու տպագրական խօսքը, իբրև „աղբիւր բոլոր չարիքների“: 1796-ին, Եկատերինէ կայսրուհու օրով, հրատարակւեց մի նոր կարգադրութիւն — փակել բոլոր մասնաւոր տպարանները: Գրաքննութիւնը կրկնապատկեց իր եռանդը: „Ամեն վտանգ Արևմտքից է գալիս“ — այդ եղաւ սլաւ միապետականների եզրակացութիւնը: Եւ 1880 թւի ապրիլ 18-ին հրատարակւեց կայսերական ու կ ա զ ը՝

„Ինկատի ունենալով, որ արտասահմանից բերվող զանազան գրքերի միջոցով ապականություն է մտցնվում կրոնի, քաղաքացիական օրէնքների և բարոյականության մէջ, հրամայում ենք՝ թոյլ չը տալ որ սրանից յետոյ արտասահմանից մեր երկիրը մուտք գործեն ամէն տեսակ գրքեր, ինչ լեզուով էլ լինեն, նոյնպէս և երաժշտական նոտեր“:

Եւ թոյլ չէին տալիս:

Ցանկիններորդ դարու սկզբից, երբ գահ բարձրացաւ Ալեքսանդր I (1801-1825), հին կարգադրութիւնները ճիշտ է, վերացուեցին, բայց քիչ անցած՝ խստութեան դաղափարը նորից յաղթանակեց: 1803-ին միտք ծագեց կազմակերպել „ցենզուրան“ իբրև մի ամբողջական, անկախ մարմին, որոշ լիազօրութիւններով, կից ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան: Որպիսի „նախանձելի“ անցեալ: Այն ժամանակ գրականութիւնը և նրա վրայ հսկող մարմինը համաբերում էր լուսաւորութեան գործոն, և այդ պատճառով ենթակայ լուսաւորութեան մինիստրութեան, մինչդեռ 1863 թուից՝ նա ներքին գործերի մինիստրութեան օրգան է, ժանդարմական վարչութեան հետ միասին:

1826-ին հրատարակուեց „Ցենզուրական կանոնադրութիւնը“: Տարիների ընթացքում նրան աւելացան նոր կարգադրութիւններ, մէկը միւսից աւելի խիստ, աւելի ձեւական: Դպրոցական գրաքննութիւնը՝ անպայման էր: 1865-ի օրէնքը մի փոքրիկ թեթեւութիւն մտցրեց, — ազատեց նախնական գրաքննութիւնից երկու մայրաքաղաքներում լոյս տեսնող ինքնուրոյն աշխատութիւնները, բայց ոչ պակաս 10 տպագրական թերթից, և թարգմանականները՝ ոչ պակաս 20 տպագրական թերթից: Բայց դրա հետ միասին իրաւունք տուեց կառավարութեան, անհրաժեշտ դատած դէպքում՝ գրաւել բոլոր գրքերը և այրել, մինչև իսկ դատաստանական հալածանքի ենթարկել հեղինակին և հրատարակչին: Այն օրէնքով նախնական գրաքննութիւնից ազատուել կարող

են Պետերբուրգի և Մոսկվայի պարբերական հրատարակութիւնները։ Մայրաքաղաքներից դուրս՝ մամուլը այդ արտօնութիւնը չունի։ Մի քանի տարուց ի վեր Կիեվի մի լրագիր, շատ անգոյն և „վստահելի“ — ստացաւ այդ արտօնութիւնը, իբրև չը տեսնուած բացառութիւն։ Դրանից դուրս ամեն ինչ ենթակայ է գրաքննութեան, և առանց ցենզորի նախնական թոյլտուութեան ոչ մի տպարան չի համարձակի մի տող, մի գիծ, մի ծաղրանկար անգամ տպագրել։ Հակառակ դէպքում — անողին սպասում է տուգանք, բանտ, աքսոր . . .

Եկան տարբեր օրեր։ 1880-ին Պետերբուրգում կազմուեց մի յանձնաժողով, կոմս Վալուեվի նախագահութեամբ, մամուլի օրէնքները թեթևացնելու նպատակով։ Տրամադրութիւնը այնքան լաւ էր, որ խորհրդակցութեան էին կանչուում նոյնիսկ մամուլի և գրականութեան ներկայացուցիչներ — մի երևոյթ, որ հազուադիւտ է չինովնիկութեան աշխարհում։ Սակայն 1881 թուի արքայասպանութիւնից յետոյ՝ յանձնաժողովի աշխատանքները ընդհատուեցին։ Քամին փոխուեց։ Եւ բարեռքման փոխարէն՝ 1882 թուի օգոստոսի 27-ին հրատարակուեցին ս ա տ ա գ ո յ ն կ ա ն ո ն ն ե ր մամուլի դէմ, դրած „ժամանակաւոր“ բառի տակ, մտքերը հանգստացնելու նպատակով։ Եւ „ժամանակաւոր“ կանոնները, ինչպէս շատ ուրիշ „ժամանակաւոր կարգադրութիւններ“, ոչ միայն շարունակեցին գոյութիւն ունենալ, այլ և մտան Օրէնքների Ժողովածուի մէջ ու դարձան մ շ տ ա տ ե ւ, հաստատուն։

Եւ այդ օրից, գրաքննութիւնը ստացաւ նոր „թռիչք“, նոր ուժ, չը տեսնուած համարձակութիւն։ Գրուած օրէնքն անգամ մնաց մեռած տառ, և հրապարակի վրայ՝ իր ամբողջ ուժով՝ թագաւորեց ցենզորի կամայականութիւնը, միացած այն անթիւ ու անհամար գաղտնի հրահանգներին, որ ամեն օր փոստը Պետերբուրգից տարածում է դէպի Ռուսաստանի բոլոր ծայրերը . . .

ցենզօրական կանոնադրութեան“ նայելով, գրաքննիչը պիտի արգելի այն գրուածքները միայն, որոնք

1) Խախտում են ուղղափառ եկեղեցու ուսմունքը և առհասարակ քրիստոնէական հաւատի ճշմարտութիւնն ու վարդապետութիւնը. 2) Շօշափում են բարձրագոյն իշխանութեան անձեռնմխելիութիւնը, կայսերական տան պատիւը և կամ ընդդէմ են պետական հիմնական կարգադրութիւնների։

Ոչ ոք Ռուսաստանում, լեգալ գրականութեան մէջ, չի էլ փորձում քննադատել միապետին, կայսերական ընտանիքը և կամ խախտել կրօնի հիմնական վարդապետութիւնը՝ քաջ գիտնալով, որ ոչ միայն այդպիսի ձեռնարկութիւն, այլ և նոյնիսկ մտադրութիւն՝ մի հետևանք միայն կ'ունենայ — բանտ կամ աքսոր։ Դա ոչ լեգալ գրականութեան գործն է։ Եւ պէտք է ենթադրել ուրեմն, որ, նոյնիսկ օրէնքի զօրութեամբ, այն, ինչ որ չէ շօշափում այդ հիմնական խնդիրները, թոյլատրելի է և ազատ արգելքներից։ Բոլորովին ոչ։ Ցենզօրական արհեստը, — եթէ միայն արհեստ անունը կարելի է տալ միտք սպանող այդ հիմնարկութեան — այն ստիճան առաջ է գնացել, որ հնարաւոր և անհրաժեշտ է համարում խափանել, ջնջել և ոչնչացնել այն բոլորը, ինչ որ նոր է, թարմ, ինչ որ կարող է միտք շարժել, հետաքրքրութիւն յարուցանել, աչք բաց անել...

Եւ կաշկանդուած, այլանդակող ճանկերի ենթակայ միտքը անկարող դիմանալու, ապաստանում է արտասահման, այն վայրերը, ուր „հպատակներին“ թոյլ է տրուած ազատ կերպով, առանց անմիջական վտանգի, երգելու իրենց այրուած սրտի ցաւերը, դժբախտ երկրի անյատակ վշտերը։ Այնտեղ են փախչում բողոքողները։ Դա է ժամադրութեան վայր՝ դժգոհների համար։

Զգոյշ կառավարութիւնը պետութեան սահմանների վրայ կանգնեցրեց չինական պատը, անթափանց,

անանցանելի, պահպանված ցենզորների և պահապան-ների ամուր շղթաներով։ Եւ որքա՜ն դժուար, վտանգա-ւոր է մի բան անցկացնել այդ պահապանների միջով... Լենդոն, Ժընեվ, Պարիզ, Բերլին ապված գրքերը, յաճախ անմեղ, բռնւում և ոչնչացնւում են հենց միայն այն պատճառով, որ հրատարակված են արտասահման։ Քա-ղաքական գրւածքները ոչ միայն արգելված են, այլ և ստացողը ենթակայ է խիստ պատժի։ Եթէ մէկի մօտ գտնւի մի բրոշիւր կամ մի համար „Իսկրա“—ռուս սոցի-ալ-դեմոկրատների օրգանը, կամ „Բեմոլիւցիոնայա Բոս-սիա“—սոցիալիստ-յեղափոխականների օրգանը, մինչև իսկ „Օսվոբոժդենիէ“, որ արտայայտիչն է ռուսաց սահ-մանադրական շրջանների,—նրա տեղը բանտն է։ Ար-տասահման քշված ռուս գործողների անունը չէ կարելի տալ, ուր մնաց նրանց գրւածքները կարդալ։

Երկար ժամանակ արգելված էր տալ Գերցենի անունը. այժմ թէև կարելի է անունը յիշատակել, բայց նրա աշխատութիւնների լիակատար ժողովածուն, տպագրւած Գերմանիա, ստանալ չէ կարելի։ Գերցենի „Կոլոկոլը“, թէև վաղուց դադարած, այն հրատարակութիւնների թւին է պատկանում, որոնց անունը շշուկով միայն կարելի է արտասանել։ Նոյնը պէտք է ասել և Լավրովի մասին, որ վախճանւեց Պարիզում, ինչպէս նաև Բակունինի կամ Կրապոտկինի վերաբերմամբ։ Արտասահմանում պէտք է որոնել ոչ միայն՝ մեռած թէ կենդանի, նշանաւոր թէ աննշան՝ ռուս յեղափոխական հեղինակների գրւածքները, այլև շատ երկեր այնպիսի գրողների, որոնք կազմում են ռուսաց լեգալ գրականութեան փառքը և որոնցից շա-տերի կենսագրութիւնը աւանդւում է կառավարչա-կան դպրոցներում։ Այդպէս, օրինակ, Տուրգենեվ, Չեր-նիշեվսկի, Նեկրասով, Տոլստոյ գրւածքներ ունեն, որոնք ազատ են միմիայն սահմանի այն կողմը։ Մինչև իսկ Պուշկինի և Լերմոնտովի գրչի տակից դուրս եկած բա-

ներ կան, որոնք մինչև այժմ էլ արգելված են, թէև այդ հեղինակների ծննդեան վրայից արդէն դար է անցել և նրանց արձաններով Ռուսաստանը պարծենում է... Եբիտասարդ գրողները իրենց նախորդներից աւելի բախտաւոր չեն, — Գորկի, Չեխով, Միխայլովսկի, Կորալենկո և ուրիշ շատեր, թէև պետութեան մէջ ապրող, ստիպված են կամ լռել, կամ ազատ խօսք ասելու համար՝ դիմել այնտեղ, ուր չէ հասնում գրաքննութեան բազուկը...

Դէպի ռուս գրողները ցոյց տրուած այդ խստութիւնը բացատրւում է այն անհիմն „քաղաքական“ տեսակէտով, որ նրանք կամ անձամբ „կասկածելի“ են եղել, կամ իրենց գրուածքների մէջ թէև անուղղակի՝ ռուսաց կառավարութիւնն են ինկատի ունեցել: Նւազ խիստ չեն, տարաբախտաբար, և դէպի եւրոպական գրականութիւնը, որը ծառայում է իբրև գլխաւոր, եթէ չասենք միակ աղբիւրը ռուսաց գրականութեան համար:

Խօսք լինել չէ կարող, իհարկէ, վտանգաւոր, յեղափոխող գրուածքների և վարդապետութեան մասին: Դրանք հալածական են անպայման: Սակայն խստութիւնը տարածւում է բոլոր ճիւղերի վրայ: Դարվինի մի քանի աշխատութիւնները երկար ժամանակ արգելված էին Ռուսաստանում: Ում մօտ գտնէին Կարլ Մարքսի „Կապիտալը“, նրա տեղը բանտն էր: Նոյն իսկ պրոֆէսոր Շէֆլէի անվտանգ բրոշիւրը սոցիալիզմի մասին՝ արգելված էր: Լուի Բլանի, Բլանկի'ի, Պրուդոնի, Բաբեուֆի, Սէն Սիմոնի, Լասսալի, Էնգէլսի մասին կարելի էր խօսել միայն շշուկով, խիստ միակողմանութեամբ: Միշտ և ցէն յաճախ վռնդւել են գրադարաններից: Բէնանի մի քանի աշխատութիւնները Ռուսաստանում միայն անունով են յայտնի: Սպէնսէր արգելված շատ կտորներ ունի: Եթէ մենք ուզենանք ամբողջութեամբ կարդալ Նոյնիսկ Վոլտէր, Վիկտոր Հիւգո կամ Զոլա, պէտք է սահմանագլուխը

անց կենանք։ „Թշնամները“ մի քանի անգամ արգելեցին, համարելով վերջին հատորները „ամենավնասակար ուղղութեան“։ Կան ցենզօրներ, որոնք կարելի են համարում կատաղեր ջնջել նոյնիսկ Շէքսպիրից, Բայրոնից, Շիլլերից կամ մինչև իսկ Կանտից կամ Հեգելից։ Միամտութիւն կը լինի կարծել, որ ռուս ցենզօրների մէջ չկան այնպիսիները, որոնք հանգիստ խղճով կարմիր թանաքով գծեր կը քաշեն Դանտէի ամենագեղեցիկ էջերի վրայ, իբրև վնասակար ու վտանգաւոր, և մկրատի կ'ենթարկեն այնպիսի բանաստեղծական կտորներ, որոնց վրայ հանգստանում է եւրոպացի ընթերցողի միտքն ու հոգին։

Աւելի լաւ վիճակի չեն արժանանում եւրոպական նորագոյն գրողներն ու պուբլիցիստները — Իբսէն, Զուդերման, Ընատօլ Ֆրանս, Ժօրէս, Պրէսանսէ, Միրբօ, Բէկլիս, Բրանդէս, Բեբել, Բերնշտէյն, Կաուցկի։ Անուններ կան, որոնց յաճախ կրկնելն իսկ անզգուշութիւն է։ Սահմանն անցնելու բախտին չեն արժանանում եւրոպական բազմաթիւ լրագիրներ, ամսագիրներ, բրոշիւրներ և գրքեր, թէև այս բոլորը, սկսած բանաստեղծութիւնից մինչև հրապարակախօսութիւնը և գիտութիւնից մինչև պատմութիւն ու վիպասանութիւնը, ոչինչ առնչութիւն չունի „միապետութեան նեղքին ապահովութեան“ հետ։

Դարձեալ մի գիծ։

„Ցենզօրական կանոնագրութեամբ“ չէ արգելւում քննադատելու օտար կառավարութիւնների գործերն ու քաղաքականութիւնը, և գրաքննիչը ոչ մի իրաւունք չունի ուրիշ երկրի մասին գրած մի պատարկմանն կամ գովասանքի տակ՝ յետին միտք տեսնել և ենթադրել, որ դա ռուսական կարգերի անուղղակի քննադատութիւն է։ Սակայն չնայած դրան, գրաքննութիւնը յաճախ թոյլ չէ տալիս ոչ օտար գրուածքների թարգմանութիւն և ոչ օտար երկրների քննադատութիւն կամ

գովասանք։ Երբեմն մի ցենզօր, Բիրուկով, արգելեց Շիլլերի „Իսաննա դ'Արկի“ թարգմանութիւնը, յայտնելով, որ „դա նսեմացնում է թագաւորի վարկը“։ Մի ուրիշը չը թոյլատրեց Գէօթէի „Էգմօնտի“ ներկայացումը՝ այսպիսի պատճառաբանութեամբ՝ „Այդ պիէսի մէջ յաճախ վէճ կայ այն իրաւունքի մասին, որ թագաւորները ունին երենց հպատակների վրայ“, և ուրեմն վնասակար է։ Նապոլէօնի մասին գովասանք չէին թոյլ տալիս՝ ասելով՝ „Նա Ռուսաստանի թշնամի էր“։ Չէին թոյլատրում և յարձակումներ՝ նկատելով՝ „Բայց և այնպէս նա կայսր էր“։ Պատմագրողը ուզում է խօսել Ֆրանսիական հանրապետութեան կարգերի մասին, նրան արգելում են. „Դուք ուզում էք ասել, որ հանրապետութիւնը աւելի լաւ է քան միապետութիւնը“։ Պուբլիցիստը յարձակւում է Թիւրքաց սուլթանի վրայ, նրան ասում են. „Իրաւունք չունէք. նա էլ միապետ է. քննադատել նրան կը նշանակէ անուղղակի կերպով քննադատել մեր միապետին“։ Ցենսուրագէտը ուզում է վերլուծել եւրոպական տնտեսական կարգերը կամ կանգ առնել ռեէ բանուորական-շարժման վրայ. „Ներեցէք — նկատում է ցենզօրը՝ կարմիր գիծը քաշելով — դա վատ մտքեր կը ներշնչէ մեր երիտասարդութեան“։ Լրագիրները գովում են անգլիացուն, արգելում են — „Անգլիան Ռուսաստանի հակառակորդն է“. յարձակում են գործում Ֆրանսիական հանրապետութեան նախագահի մի ամսթաբեր արարքի վրայ — դիցուք այն, որ նա շքանշաններ է ստանում Մեծ-Արդասպանից — կանգնեցնում են՝ „Ֆրանսիան մեր բարեկամն է“։

Կայ և վատթարագոյնը։

„Հպատակը“ ուզում է մի լրագիր կամ ամսագիր հրատարակել։ „Ցենզօրական կանոնագրութիւնը“ ըստ երևոյթին մեծ դժուարութիւն չէ յարուցանում դրա դէմ։ Պէտք

է խնդիրը գրել — մարկան փակցրած — տալ ցենզորական կոմիտէին, որը և ուղարկում է Պետերբուրգ՝ Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան, նա էլ իր կողմից ներկայացնում է ներքին գործերի մինիստրութեան, և խնդրատուն ստանում է պատասխանը — այսինքն մերժումն. թոյլատրութիւն՝ շատ քիչ դէպքում: Այդ պատասխանը տեւում է հինգ-վեց ամիս, երբեմն տարի և էլ աւելի: Հէնց այդտեղ է գաղտնիքը և պատմութիւնը...

Հետաքրքրական է մի փոքր կանգ առնել այդ „պատմութեան“ վրայ: Դիցուք Պետերբուրգում խնդիրը են ստանում թիֆլիզաբնակ ոևէ պարոնից, որը թոյլատրութիւն է ուզում լրագիր հրատարակելու: Դաս այդ խնդիրքի մէջ նշանակւած պիտի լինի՝ թէ արդեօք լրագիրը միայն գրական պիտի լինի թէ գրական և քաղաքական, ամենօրեայ թէ երկօրեայ, մանրամասն բոլոր բաժինները, գինը, նոյնիսկ մեծութիւնը, հետը կցած „գոկումենտների“ մի ամբողջ կապոց խմբագրի կամ հրատարակչի անձի մասին — նրա ծնունդը, կրօնը, ազգութիւնը, ուսման աստիճանը, զբաղմունքը, դիրքը...

Ստանալով այսպիսի խնդիր, Պետերբուրգից երեք հարց են տալիս կովկասեան իշխանութեան, — առաջինը՝ ցենզորական կոմիտէին, երկրորդը՝ ժանդարմների վարչութեան և երրորդը՝ ոստիկանութեան: Ցենզորական կոմիտէն կարծիք պիտի յայտնէ՝ թէ արդեօք ինքը այդպիսի մի լրագիր հարկաւոր է գտնում և առաջարկւած խմբագրի անձը յարմա՞ր է: Ժանդարմների վարչութիւնը պիտի տեղեկացնէ, թէ խմբագրի թեկնածուն կասկածից դուրս է թէ՞ կասկածի տակ: Եւ վերջապէս ոստիկանութիւնն իր կողմից պիտի հաղորդէ, թէ արդեօք ոևէ բանում խառնւած չէ եղել առաջարկւած թեկնածուն: Եւ ահա այս տեղեկութիւնները հաւաքելու համար սկսում են քքքրել ժանդարմական որ-

խիւնները, գաղտնի ոստիկանութեան մատեանները և նոյն իսկ ստորին ոստիկանների յիշատակարանները։ Եւ եթէ առաջարկուած խմբագիրը երբևիցէ, տարիներ առաջ, չնչին մի առիթով, ընդհարումն է ունեցել ոստիկանութեան հետ, նոյնիսկ քաղաքական կամ հասարակական բնաւորութիւն կրող հարցերից դուրս, կամ իր կեանքում մի այնպիսի յօդուած է գրել և մի այնպիսի օրգանի է աշխատակցել, որ հաճելի չէ ոևէ ցենզորի — պրծաւ... մերժումը պատրաստ է։

Ահա այդ է պատճառը որ՝ շատ հազւագիւտ բացառութեամբ՝ Ռուսաստանում խմբագրի պաշտօնը յանձնւում է միայն անգոյն, անընդունակ և իհարկէ ոևէ „կասկածներից“ կատարելապէս ազատ անձանց։ Նա այլևս գրող խմբագրող չէ, այլ մի ձևական, պաշտօնապէս պատասխանատու անձն, որ շատ անգամ ստիպւած է դատարան գնալ և բանտ նստել այնպիսի գրուածքների համար, որ ոչ գրել է, ոչ կարդացել տպելուց առաջ և ոչ էլ համակրում է։ Պետերբուրգում այդպիսի խմբագիրների համար նոյնիսկ յատուկ անուն կայ — „բանտային խմբագիր“...

Սակայն, ընդունենք, որ վերև յիշած բոլոր երեք հիմնարկութիւններն էլ խմբագրի անձի մասին լաւ կարծիք յայտնեցին—ոչ, դրա համար պէտք է շատ դոներ բաղխել, շատ „մարդկանց տեսնել“,—բայց էլի մի բարձր ատեան կայ։ Դա կովկասեան կառավարչապետն է։ Նա էլ իր կողմից պէտք է յայտնէ, որ ոչինչ չունի նոր լրագրի թոյլատրութեան դէմ, որովհետև կարող է պատահել, որ բոլոր երեք հիմնարկութիւններն էլ նպաստաւոր կարծիք տան, բայց և այնպէս կառավարչապետը ոևէ պատճառով գտնէ, որ առհասարակ նոր լրագիրը աւելորդ է։ Այդպիսի բան կարող է պատահել և պատահում է։ Բայց այս էլ վերջինը չէ։ Նոյնը կարող է կրկնւել և Պետերբուրգ։ Դիցուք կառավարչապետն էլ կարծիք յայտնեց, որ ցանկալի

է նոր լրագրի թոյլտուութիւնը, այնուամենայնիւ Պետերբուրգ — ներքին գործերի մինիստրի գիւանում կամ Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան մէջ, մի չինովնիկի „անհասանելի բարձր տեսակէտների“ շնորհիւ — կարող են գտնել, որ նպատակայարմար չէ նոր օրգանի թոյլտուութիւնը, և ուրեմն դարձեալ... մերժում։

Նշաղ բարդ չէ հրատարակչի խնդիրը։

Հին օրէնքով՝ լրագրի կամ ամսագրի տէրը կարող էր իր հրատարակութիւնը, իբրև սեփականութիւն, ծախել ում կամենայ, երբ ուզենայ։ Ցեսնելով, որ պարբերական զանազան հրատարակութիւններ այդպիսով անցնում են այն տեսակ գրողների ձեռքը, որոնք ցանկալի չեն և որոնք հրաւիրելով „բանտային“ խմբագիր՝ իրենք են ուղղութիւն տալիս օրգանին, կառավարութիւնը 1897-ին փոխեց եղած օրէնքը և հաստատեց մի նորը, որի զօրութեամբ, ոչ մի հրատարակիչ չէ կարող ինքնագլուխ և ազատօրէն վաճառել իր լրագիրը կամ ամսագիրը։ Առաջ այդ կատարւում էր պարզ կերպով,—արտօնատէրը հաղորդում էր Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան, որ ինքը ծախում է իր լրագիրը այսինչ մարդուն, նոր հրատարակիչն էլ հաղորդում էր, որ ինքը առնում է։ Ստանալով երկու կողմից այդ տեղեկութիւնը՝ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը անմիջապէս ուղարկում էր հրատարակչութեան տոմսակ՝ այսինքն սեփականութեան մի պաշտօնագիր՝ նորի անունով, և դրանով էլ վերջանում էր ամբողջ գործը։ „Նոր օրէնքը“ միանգամայն վերացրեց այդ ազատութիւնը։ Այժմ բաւական չէ միայն հաղորդել իտեղեկութիւն հրատարակչի փոփոխութեան մասին, այլ պէտք է ստանալ և թոյլտուութիւն, այսինքն՝ Պետերբուրգից պէտք է հարց առաջարկի տեղական իշխանութիւններին՝ թէ արդեօք այս ինչ անձը, որ ուզում է գնել

հրատարակութիւնը, յարմար է թէ ոչ, ուրիշ խօսքով՝ կրկնւում է այն, ինչ որ անւում է խմբագրի հաստատութեան գործում։ Եւ միայն դրական պատասխան ստացած դէպքում թոյլ է տրւում ծախել հրատարակութիւնը, ուրիշ խօսքով՝ փոխել հրատարակիչը։ Դուք տեսնում էք, որ այս նոր սահմանափակումը նշանակում է պարզապէս, որ հրատարակիչը, թէև սեփականատէր, այլևս իր սեփականութեան տէրը չէ։ Ամբողջ անարդարութեամբ, կառավարութիւնը հասաւ իր գլխաւոր նպատակին — թոյլ չտալ, որ „անցանկալի“ մարդիկ օրգանների տէր դառնան և ուղղութիւն տան . . .

1897 թւին, երբ հաստատուեց այդ օրէնքը, „Ռուս գրողների դաշնակցութիւնը“ ժողով գումարեց և վճռեց դիմել նեղքին գործերի մինիստրութեան ու՝ բացատրելով նոր օրէնքի ամբողջ անարդարութիւնը, խնդրել վերացնել նրան։ Խնդիրը պատճառաբանուեց շատ հիմնօրէն, և ենթադրւում, որ նա մայրաքաղաքի համարեա բոլոր ռուս գրողների կողմից էր ու վայելում էր ամբողջ մտածող Ռուսաստանի համակրութիւնը, — կառավարութիւնը այնուամենայնիւ չյարգեց, այլ բացէ իրաց մերժեց . . .

Եւ այդ օրից սկսած՝ նոր օրգանի թոյլտուութիւն ստանալը կամ արդէն եղած օրգանի տէր լինելը դարձել է մի անսովոր դժուարութիւն, որին յաղթելու համար պէտք է կամ գերբնական „բախտ“ ունենալ կամ մինիստր բարեկամ։ Իսկ ցենզօրների հայրենիքում օրինաւոր գրողը ոչ այս ունի, ոչ այն։ Ուստի և ասպարէզը մնում է Շչեդրինի այն հերոսներին, որոնց տաղանդաւոր երգիծաբանը անուանեց՝ „ինչ կը հրամայէք“ . . .

Ծանրագոյն են պայմանները բուն Կովկասում — քաղաքական կրկնակի հալածանքների երկրի մէջ։

Իշխան Վ. օրոնցօվի փոխարքայութեան ժամանակ էր, քառասնական թուականների վերջերին, որ պարբերական մամուլի հիմքը դրուեց Կովկասեան մայրաքաղաքում — Թիֆլիզում։ Դոյն այդ միջոցին էր, որ հրապարակ եկաւ ռուսահայերի մէջ առաջին հայերէն լրագիրը։ Դա այն ժամանակ էր, երբ Կովկասը հաղիւ անցած պատերազմական շրջանը, պատրաստւում էր ոտք դնելու երկրորդ՝ այն է խաղաղ զարգացման շրջանի մէջ։ Փոխարքան, իբրև հեռատես մարդ՝ շատ լաւ էր հասկանում, որ ռուսաց լեզուին կատարեալ անծանօթ տեղական ժողովրդի մէջ՝ մայրենի լեզուով տպագրուող լրագիրը և գիրքը մի անհրաժեշտ միջոց է թէ քաղաքակրթական խաղաղացնող մտքեր տարածելու և թէ երկիրը ամբողջ պետութեան հետ կապելու համար։ Եւ նա ոչ միայն թոյլ տուեց, այլ ջերմապէս քաջալերեց այդ գործը։ Վ. օրոնցօվի դպրոցին պատկանող մարդիկ այնքան լայն հայեացքներ գուցէ չունէին, որ խոստովանէին՝ թէ կուլտուրական մի այնպիսի ազգ, ինչպէս է հայոց ազգը, ամենայն իրաւամբ կարող է ունենալ իր մայրենի գրական լեզուն և յատուկ գրականութիւն այդ լեզուով, բայց նրանք այնքան հեռատես ադմինիստրատորներ էին, որ լաւ ըմբռնում էին, թէ քանի ռուսաց լեզուն չէ տարածուել երկրի մէջ, տեղական լեզուները պէտք է դարձնել այն միջոցը, որով տարածւում է թէ պետական և թէ քաղաքակրթական ուղղափառ։

Սակայն այդպէս չէ նայում իրերին՝ նորագոյն ժամանակների արդիւնք ռուս բիւրօկրատիան, որի կարծիքով աւելի լաւ է, որ ժողովուրդը՝ անծանօթ ռուսաց լեզուին, առհասարակ ոչինչ չկարդայ՝ քան թէ կարդայ մայրենի լեզուով։ Ահա ինչու վերջին տասն տարուայ ընթացքում կառավարչական շրջաններում, սիրահարյուղիչ ծրագիրների, մի քանի անգամ արծարծուել է այն հարցը՝

թէ արդեօք աւելի „օգտակար“ չէր լինի ազատել տեղական լեզուներով տպագրուող հրատարակութիւններից։ Եւ կովկասեան ցենզօրական կոմիտէի նախագահը, համաձայն իրեն տրուած յանձնարարութեան, 1896 թուին պատրաստել էր այսպիսի մի կարծիք. „Հայերը և վրացիները արդէն բաւական գիտեն ռուսերէն լեզուն, և ուրեմն կարիք չկայ վրացերէն կամ հայերէն գրքեր ու լրագիրներ տպագրել. թող կարդան ռուսերէն“։ „Պետական գործիչները“ մոռացել էին, որ եթէ գլխաւոր քաղաքներում ինտելիգենտ հասարակութիւնը, ինչպէս մասը բնակչութեան, խօսում է ռուսերէն, այդ բոլորովին չէ նշանակում, թէ ժողովուրդը, մանաւանդ գաւառական ազգաբնակութիւնը, նոյնպէս գիտէ այդ լեզուն։ Վիճակագրական փաստերով ապացուցուեց, որ ռուսերէն խմացողները կազմում են ազգաբնակութեան 3-4 տոկոսը միայն և շնորհիւ այդ հանգամանքի՝ պէտք և հնարաւոր համարուեց ա ռ ժ ա մ ա ն ա կ յետաձգել այդ „պետական ծրագիրը“։ Յետաձգուեց, ճշմարիտ է, բայց և այնպէս վճռուեց թոյլ չտալ, որ աւելի բաղմանան հայերէն և վրացերէն լրագիրները։

Եղածներն էլ շատ են համարում։

Ճիշտ է արդեօք այդ կարծիքը։ Թող թուերը խօսեն։

Հ ա յ ե ր ի թիւը կովկասում մէկուկէս միլիոն է։ Նրանք ունին այժմ Թիֆլիզում ամենօրեայ՝ „Մշակ“ լրագիրը, սկսած 1872 թուից, և „Նոր-Դար“՝ 1884 թուից. ամսագիրներ՝ „Մուրճ“՝ 1889-ից, „Աղբիւր“, մանկական, 1883-ից, և նրա պատկերազարդ յաւելուած „Ցարազը“՝ 1890-ից. մի կրօնական ամսագիր՝ „Արարատ“՝ 1868-ից, որ հրատարակւում է Էջմիածնում, իբր կաթողիկոսի պաշտօնական օրգան։ Ուրիշ պարբերական հրատարակութիւններ չկան, եթէ չհաշուենք մի քանի ժողովածուները, որոնք պատահական են։

Վ ր ա ց ի ն ե ր ը թուով մէկ միլիոն վեց հարիւր հազար

են։ Ունին Թիֆլիզում ամենօրեայ լրագիրներ՝ „Իվերիա“ և „Ցնօբիս Պուրցելի“. ամսագիրներ՝ „Մօամբէ“, „Ջեջելի“՝ մանկական, իր շաբաթական պատկերազարդ յաւելուածով՝ „Կվալի“։ Ուրեմն նոյնը, ինչ և հայերը։ Բացի դրանից վրացերէն լեզուով գոյութիւն ունեն երկու շաբաթաթերթեր էլ. մէկը՝ կրօնական „Մցղեմսի“, որ լոյս է տեսնում Կվիրիլի, միւսը՝ գիւղատնտեսական „Մէուրնէ“, որ տպագրւում է Քութայիս, և մի երկու ժողովածուներ, որոնք նոյնպէս պատահական են, զուրկ կարևորութիւնից։

Թերթերը, որոնք կազմում են կովկասեան աղգաբնակութեան աչքի ընկնող, խոշոր մասը, համարեա ոչինչ չունեն։ Արանից մի քանի տարի առաջ Թիֆլիզում լոյս տեսաւ թիւրքերէն մի շաբաթաթերթ, „Քէշկիլ“, որը այժմ գոյութիւն չունի։ Նորերս սկսվեց հրատարակւել մի այլ լրագիր՝ „Շարքի Ռուս“, շաբաթը երեք անգամ, ինչպէս երևում է՝ կառավարութեան նպաստով և գլխաւորապէս քաղաքական նպատակով. Նրա կատարելիք գերը առանձին յոյսեր չէ ներշնչում։

Պատկերը լրացնելու համար յիշենք և ռուսերէնները։ Այժմ Թիֆլիզում կայ երեք ամենօրեայ ռուսերէն լրագիր — „Կավկազ“, որ կառավարութեան պաշտօնական օրգանն է, հիմնւած 1847-ին, „Նովօէ-Ոբազրէնիէ“, հիմնւած 1883-ին և „Տիֆլիսսկիյ Լիստօկ“։ Բացւում՝ „Կասպիյ“ և նորերս սկսած երկու թերթեր՝ „Բագու“ և „Բակինսկիյա Իզվեստիա“, և Բաթում մի հատ լրագիր՝ „Չերնոմօրսկիյ Վեստնիկ“։ Մեծ մասը „փողոցային“ բնաւորութեամբ, հիմնւած յայտարարութիւնների յոյսով կամ ակնկալող կառավարչական նպաստի *։

---

* Թիֆլիզի պաշտօնական լրագիրը լոյս է տեսնում կառավարութեան նպաստով. միւս երկու ռուսերէն լրագիրները պատկանում են հայերի. Բագուի մի լրագիրը՝ թիւրքի, միւսը՝ մի խումբ հայ հրատարակիչների։ Ռուսերէն լրագիրների համար բուն Կովկասում

Երևան, Գանձակ կամ Ալեքսանդրապոլ չէ թոյլատրուած և ոչ մի պարբերական հրատարակութիւն։

Դժուար է թոյլտուութիւնը։

Բայց աւելի դժուար՝ թոյլտրուածի վիճակը։

Ահա լրագիրը։ Սկսում է աշխատանքը, յանուն գաղափարների, յանուն լուսաւորութեան։ Բայց որքա՜ն դառնութիւններ, որպիսի յուսահատեցնող տանջանք։ Գրական, հասարակական գործունէութիւն չէ այդ, այլ դժոխք, ուր տապակւում, այրւում է միտքը։ Ահա մի ճշտապատում պատկեր, նկարագրուած կովկասեան մամուլին լաւ ծանօթ մի անձի ձեռքով.

„Սովորաբար լրագիրը ուղարկւում է գրաքննիչին երեկոյեան 8 ժամին։ Մինչև այդ՝ մի կողմից նիւթն է շարւում ապարանում, իսկ միւս կողմից՝ խմբագիրը վազում է գրաքննական ատեան՝ լսելու նորանոր հրամաններ, թէ ինչ բանի մասին է արգելւում գրել։ Սովորաբար նախօրօք գրաքննիչը ոչինչ չէ ասում։ Գիտէք ինչու,—որպէսզի առիթ ունենայ շարւած նիւթերից աւելի շատ բան բռնելու և միւս օրը գրաքննական ատեանին ներկայացնելու, իբրև շօշափելի փաստ իր եռանդի կամ, աւելի լաւ է ասել, իբրև նշան իր արժանաւորութեան ոևէ շքանշանի։ Երեկոյ է. շարւածքը տանում են գրաքննիչին։ Ինքը տանը չէ։ Նրա ծառան—ո՜հ, ցենզորի ծառան էլ մեծ մարդ է—հրամայում է սպասել։ Եւ սպասում

ղեռ զոյութիւն չունի ընթերցողների մի այնպիսի լայն շրջան, որ կարողանար ապահովել նրանց զոյութիւնը՝ բաժանորդագրութեամբ։ Բացի դրանից՝ յայտնի է, որ ռուսերէն լեզուով հրատարակւող լրագիրների բաժանորդների անհագին մեծամասնութիւնն էլ տեղացիներ են։ Թիֆլիզում հիմնւել են եւ ուրիշ լրագիրներ ու ամսագիրներ ռուսերէն լեզուով, բայց բոլորն էլ ստիպւած են եղել դադարել բաժանորդների քչութեան պատճառով, ինչպէս օրինակ, „Ազգօր“, „Տիֆլիսկիյ Վեստնիկ“, „Կավկազսկիյ Վեստնիկ“, մինչդեռ տեղական՝ վրաց եւ հայոց լեզուներով երբեւիցէ հիմնւած ուրիշ օրգաններ, որոնք այժմ զոյութիւն չունեն, դադարել են գլխաւորապէս ոչ թէ այն պատճառով, որ բաժանորդներ չեն ունեցել, այլ այն պատճառով, որ կամ նրանց խափանել են ուղղակի կերպով, կամ ստիպել են խափանւել՝ ենթարկելով նրանց գրաքննական առանձնակի խստութիւնների։

են։ Խմբագրատանը արդէն իրարանցում կայ։ Տպարանից դա-
լիս շտապեցնում են, որովհետև եթէ շատ ուշանայ, տպագ-
րութիւնը չեն կարող վերջացնել վաղ առաւօտեան, հետևա-
բար լրագիրը փօստին չի հասնի. իսկ փօստին չհասցնել՝ կը
նշանակէ բաժանորդներին դանդատների առիթ տալ։ Խմբ-
բագրատանից նոր մարդ է վազում ցենզօրի բնակարանը։ Բայց
էլի հրամայում են—հրամայողը միշտ ծառան է—սպասել։
Ինչու՞։—Շատ պարզ պատճառով։ Ցենզօրը կամ քնած է—
եթէ քնած է, չէ կարելի նրան զարթեցնել,—կամ հիւր է
գնացել և կամ ինքը հիւրեր ունի, որոնց հետ դեռ չէ վեր-
ջացրել թղթախաղը։ Սպասում են խմբագրատանը, սպասում
են տպարանում, միայն ժամանակն է, որ չէ սպասում։ Շտա-
պում են բոլորը բան, միայն ցենզօրն է, որ չէ շտապում։

Վերջապէս ժամը 10-11-ին՝ նա մտաբերում է լրա-
գիրը։ Սոսկալի է նրա տրամադրութիւնը . . . Ո՛չ, ցենզօրական
ամենաոր տրամադրութիւն, ինչեր չես բերում դու խեղճ
գրականութեան գլխին։ Եւ ի՞նչ անեն, ի՞նչ միջոց գտնեն
այդ անբախտ գրողներն ու խմբագիրները՝ ցենզօրի ամե-
նաոր տրամադրութիւնը խաղաղ վիճակի մէջ
պահելու համար։ Մի օր կինն է կապրիզում, միւս օր պաշտո-
նակիցն է ատամնան տանում, իսկ ինքը ոչ, յաջորդ օրը որ-
դու դպրոցական քննութիւններն են վատ անցնում, մի այլ
անգամ նախագահն է դէմքը խոժոռում և կամ յանախ թղը-
թախաղն է անյաջող գնում. . . և ահա՝ կարմիր թանաքը աջ
ու ձախ գծեր է քաշում, իսկ մկրատը վերևից ներքև շար-
ւածքն է ձևում։ Երեսուն սիւնակ նիւթ ուղարկեցին, մի եր-
բորդ մասը հազիւ վերադարձաւ։ Դարձեալ վազում է խմբ-
բագիրը։ Բացատրութիւն, աղերսանք, վէճ,—բայց բոլորը
ապարդիւն։ Ո՛չ մի զիջում, ո՛չ մի փոփոխութիւն։ Շատ ան-
գամ չի էլ ընդունում. տրամադրութիւնը շատ վատ է . . .
Իսկ համարը պէտք է հրատարակել ոչ միայն այն պատճառով,
որ բաժանորդները սպասում են, այլև այն պատճառով, որ եթէ
մի քանի անգամ համարը լոյս չտեսնի և լուր տարածի, որ
դա ցենզօրական կամ, ինչպէս ընդունուած է Կովկա-
սում ասել „խմբագրութիւնից անկախ պատճառով“ է, այն
ժամանակ ցենզօրական վարչութիւնը այդ կը համարի մի
ցոյց իր դէմ և իսկոյն „խիստ միջոցների“ կը դիմի . . .

„Համարը լոյս հանել, հեշտ է ասել, բայց ինչպէ՞ս։ Դիւ-
թը պակասում է։ Սպիտակ տեղ թողնել չէ կարելի։ Դա

արգելած է, որովհետև եթէ այդպիսի բան պատահի՝ հասարակութիւնը կ՚իմանայ, որ ցենղօրն է ջնջել մինչդեռ այդպիսի բան հասարակութիւնը չպիտի իմանայ։ Խնչով լեցնել ուրեմն։—Խնչով ուզում էք. անհամ և կատարելապէս անտեղի թղթակցութիւններով ու յօդուածներով, որոնց համար ուշ գիշերը պէտք է դարձեալ թղթատուութիւն ստանալ, և կամ յայտարարութիւններով։ Բայց կարելի՞ է արդեօք ամեն տեսակ յայտարարութիւններ տպագրել։ Խնարկէ, ոչ։ Ամեն մի յայտարարութեան համար էլ յատուկ թղթատուութիւն պէտք է ստանալ։ Եթէ գրքի յայտարարութիւն է, պէտք է ուղարկէք ցենղօրին. եթէ դպրոցի կամ առհասարակ դասատուութեան վերաբերեալ յայտարարութիւն է—ուսումնարանական իշխանութեան. եթէ շուն է կորել կամ մի հին քուրք է ծախում, պէտք է ուղարկէք ոստիկանապետնուոյնիսկ մեռելի յայտարարութիւնը չէք կարող տպագրել առանց ոստիկանութեան։ Խեղճ երկիր, մարդիկ մեռնելուց յետոյ էլ ազատ չեն"...

Միամտութիւն է տրամաբանութիւն որոնել այդ տեսակ պաշտօնավարութեան մէջ։ Եւ այդ պատճառով Նրանց գործունէութեան գծերը ընորոշելու համար՝ կարիք չը կայ դիմել մանրամասն, հետևողական քննադատութեան, այլ բաւական է առաջ բերել մի ամբողջ շղթայ իրական փաստերի, որոնք իրենց ա ն ե կ դ օ տ ա յ ի ն կերպարանքով հանդերձ՝ միջոց կըտան ընթերցողին անսխալ գաղափար կազմելու այն դ ա հ ի ճ ն ե ր ի մասին, որոնք կրծում են ազատ միտքը և ազատ խօսքը մեր անբախտ երկրի մէջ։

Յետ անենք „ցենղօրական կծիկը"։

Մի հայ ֆելիետոնիստ ընտրում է իր համար կեղծանուն՝ Ա ն կ ա խ ե ա ն։ Երբ յօդուածը տանում են գրաքննիչին, նա ջնջում է „Ան" նախավանկը, և կեղծանունը դառնում է „Կախեան"։ Վրդովւած ֆելիետոնիստը վազում է ցենղօրին։— „Ռուսաստանում չկայ ա ն կ ա խ ե ա ն, փրփրած բացականչում է գրաքննիչը, ամեն մարդ կ ա խ ո ւ մ ունի կայսրից, որը եթէ ու-

զենայ, կարող է կ ա խ ե լ ամենքին, ինձ էլ ձեզ հետ“...

Ութսունական թուականներին, երբ Թիֆլիզում գրաքննիչի պաշտօն ստացաւ մի նախկին մանկավարժ, որ „հօր կողմից ռուս էր, մօր կողմից հայ“ և ծանօթ իր առասպելական խստութիւններով, հայկական լրագրութեան մէջ միանգամայն անհետացաւ հ ա յ ո ց ա զ գ բառը և նրա տեղ բռնեց՝ հ ա յ ո ց հ ա ս ա ր ա կ ո ւ թ ի ւ ն խօսքը։ Մի առժամանակ ամենքը այդ համարում էին պատահական, բայց յետոյ պարզուեց, որ գրաքննիչի համար դա մի սիստէմ էր և նա նախորոշ դիտաւորութեամբ ջնջում է ա զ գ բառը և տեղը դնում հ ա ս ա ր ա կ ո ւ թ ի ւ ն։ „Ազգը“՝ վտանգաւոր էր, նրա կարծիքով։ Եւ շատ անգամ էլ երբ, դիցուք, կարդում էր՝ հայ-ուսուցիչ, հայ-գիւղացի, հայ-վաճառական, „հայը“ ջնջում էր և պահում՝ ուսուցիչ գիւղացի, վաճառական։ Երբ հարցնում էին այդ վարմունքի շարժառիթները, նա հպարտօրէն պատասխանում էր. „Հայերը այժմ ազգ չեն և չպիտի լինին. եթէ կառավարութիւնը բարեհաճէր իմ խոնարհ կարծիքը հարցնել՝ խորհուրդ կըտայի վերացնել Ռուսաստանում ապրող բոլոր ազգերի անուանները և գործածել ե ր կ ո ւ բառ միայն՝ — ռուսներ և ոչ-ռուսներ“...

Մի այլ գրաքննիչ, որ իր ե ռ ա ն դ ի համար „նորին գերազանցութիւն“ տիտղոսին հասաւ, արգելել սկսեց նոյնիսկ պատմական-աշխարհագրական անունները։ Երբ լրագիրները գրում էին „Գանձակ“, նա ջնջում շինում էր „Ելիսավետօպոլ“. չէր թոյլ տալիս „Հրազդան“ կամ „Ախուրեան“ հայկական անունները նոյնիսկ ոտանաւորների մէջ և ստիպում էր խեղճ հեղինակին յարմարեցնել բանաստեղծութեան ոտները՝ „Գանձակ“ և „Արփաչայ“ թիւրքերէն անուններին, մտածելով երևի, որ

թիւրքերէն հնչիւնը այնքա՞ն վտանգաւոր չէ, որքան հայերէնը։ Իսկ ինքը թիւրք չէր, այլ հայ...

Ամառային մի շոգ օր, խմբագիրը հեռագիր է ստանում, որ երեխան ծանր հիւանդ է ամարանոցում և պէտք է շուտով օգնութեան հասնել։ Ի՞նչպէս վարուել։ Համարը դեռ պատրաստ չէ։ Որոշում է հետևեալը.— տպարան ուղարկել կատարելապէս անմեղ լուրեր և յօդուածներ՝ փողոցների մաքրութեան, առողջարար ջրի, մրգաբուծութեան և վերջապէս — զանազանակերպ լինելու համար — կանանց հարցի մասին, և ապա կարգադրում է՝ երեսները կապել և տպել առանց գրաքննիչին սպասելու, ապահով, որ նա ոչինչ չունի ջնջելու։ Երբ երեսները կապում են և սկսում տպագրել՝ ահա գալիս է գրաքննական թերթը, և ո՜հ, ողբալի տեսարան. գրաքննիչը ջնջել է գիւղատնտեսական յօդուածից ահա թէ ինչ.

„Անհասարակ անհրաժեշտ է յեղափոխութիւն մտցնել մեր գիւղատնտեսութեան պարապմունքների ամբողջ եղանակի մէջ. առանց այդ հիմնական յեղափոխութեան՝ մեր գիւղատնտեսութիւնը առաջ չի գնայ“...

Կանգնեցնել մեքենան, քանդել երեսները, ոչնչացնել արդէն տպագրած երեսները — այդ կը լինի դժոխային աշխատանք։ Բազմատանջ խմբագիրը՝ հիւանդ երեխային գնալու փոխարէն՝ գրաքննիչին է գնում, աղերսելու։ — „Ես չեմ սիրում յեղափոխութիւն բառը և կը խնդրեմ նոյնիսկ գիւղատնտեսական յօդուածներում գործ չածել։ Գրեցէք մի այլ բառ, օրինակ՝ բարեփոխութիւն, և ես կը թոյլատրեմ“...

Բայց միայն „յեղափոխութիւն“ կամ „ազգը“ չէ, որ գրգռում է գրաքննիչին, այլ ամէն բան, մինչև իսկ երկոտանի հաւը... Լսեցէք։ Օրերից մէկում լրագիրները ուզում են տպագրել ըեպօրտեօրի այս լուրը.

„Թիֆլիզի Վերա թաղում հաւերի մէջ երևացել է մի հիւանդութիւն, որ մի քանի ժամում սպանում է նրանց։ Զգուշացնում ենք քաղաքի բնակիչներին այդ տեսակ հաւերի միսը ուտելու“։

Լուրը արգելում է հետևեալ մակագրութեամբ՝ „Ուղարկել բժշկական վարչութեան“։ „Ամբողջ մի յեսթին միսը կարող է լինել“ — մտածել է զգոյշ պաշտօնեան։

Թղթակիցներից մէկը գրում է.

„Նախիջևանի գաւառը հող ունի, բայց ջուր չունի, մինչդեռ Հարևան Զանգեզուրի գաւառը հարուստ է ջրերով։ Ցանկալի է, որ ազգաբնակութիւնը մտածէր ջուր անցկացնել այդ գաւառից՝ անջրդի հողերը մշակելու համար“։

Ցենզորը այդ վերացական ցանկութիւնն էլ է արգելում, այսպիսի մակագրութեամբ՝ „Դրա համար նախ պէտք է երկու գաւառների իշխանութեան թոյլտուութիւնը“...

Բաժանորդները, այնքա՞ն համբերատար այս երկրում, սկսում են տրտնջալ, որ լրագիրը կամ շատ ուշ է լոյս տեսնում, կամ յաճախ բոլորովին լոյս չէ տեսնում։ Վերջապէս դիմում են խմբագրութեան՝ բացատրութիւն խնդրելով։ Ցայտնւում է, որ ցենզորը յաճախ գործ է դնում հետևեալ միջոցը. — թերթը իր մօտ պահում է մինչև գիշերւայ մէկ կամ երկու ժամը, որպէսզի աւելի լաւ ուսումնասիրի և լաւ թափանցի յօդւածների ոգու խորքը։ Եւ ուշ վերադարձնելով, տպագրութիւնն էլ, բնականաբար, վերջանում էր միւս օրը ուշ։ Բայց յաճախ էլ նոյնիսկ գիշերւայ մէկ ժամին վերադարձնելով թերթը, քիչ անցած, երբ արդէն սկսում են տպագրել յանկարծ գիշերւայ ժամը 2-ին կամ 3-ին, նա՝ ինչպէս կիսախելագար, աղմուկով ներս էր վազում և բացականչում. „Կանգնեցրէք, մի տպագրէք, մի բան պէտք է հանեմ“։ Իրարանցում,

դժգոհութիւն, աղմուկ։ Տպագրիչները իմաց են տալիս տպարանատիրոջ, տպարանատէրը՝ խմբագրին։ Գալիս է նա, և ահա մի ձանձրալի վէճ խմբագրի և ցենզորի մէջ։ Ո՞ւմն է իրաւունքը։— „Իրաւունք չունէք, քանի որ արդէն թոյլատրել էք“, կրկնում է խմբագիրը։— „Իրաւունք ունիմ, քանի որ ցենզոր եմ“, պատասխանում է միւսը։ Վերջ իվերջոյ մեքենայից հանել է տալիս երեսները և դուրս գցում իր ուզած կտորը... Միւս օրը լրագիրը լոյս չէ տեսնում, և խմբագիրը գնում է ցենզուրական կոմիտէ՝ գանգատուելու այդ գիշերային կամայականութեան դէմ. Եւ ցենզորը միշտ արդարանում էր կրկնելով. „Միայն պապն է անսխալական. ուշ գիշերը միայն հասկացայ, որ սխալել եմ, և գնացի տպարան՝ իմ սխալը ուղղելու“ — արգելելու...

1889-ին Ալեքսանդր III պիտի գնար Թիֆլիզ։ Ոստիկանութիւնը, ամբողջովին ոտքի վրայ, քաղաքից դուրս էր քշում անվստահելի անձանց, նախագուշութեան միջոցները վերջ չունէին։ Այդ միջոցին վրաց դերասանական խումբը, ազդելով քանքարաւոր մի ողբերգակի Թիֆլիզ գալուց, վճռում է ներկայացնել Շէքսպիրի „Համլէտը“, որ մինչև այդ՝ վրաց բեմի վրայ չէր խաղացած, թէև արդէն շատ անգամ ներկայացած էր ռուսաց կամ հայոց թատրոններում։ Պիեսի թարգմանութիւնը տանում են վրաց ցենզորին։ Նշանակած ժամին գալիս են յետ ստանալու։ Ո՜հ, զարմանք. ցենզորը յայտարարում է, որ թոյլատրել չէ կարող։— Ի՞նչպէս, „Համլէտը“ արգելուած։— Այո՛, արգելուած, սառնարիւն պատասխանում է ծերունի գրաքննիչը։ Ոչ մի բացատրութիւն չէ ազդում։ Դերասանական խումբը գանգատ է ներկայացնում կոմիտէին։ Կոմիտէի նախագահը, բաւական զարմացած, յաջորդ ժողովին խնդրում է ցենզորին բացատրել, թէ ինչո՞ւ է արգելում վրաց բեմի

համար „Համլէտը“, — մի այդպիսի հանրածանօթ պիէս, թոյլատրւած բոլոր լեզուներով և բոլոր բեմերի համար։ Եւ „փորձւած“ պաշտօնական, նստած իր բաղկաթոռի վրայ, յաղթական շեշտով՝ հետևեալ խորիմաստ բացատրութիւնն է տալիս ժողովին. „Ինչպէս գիտէք, յարգոյ պաշտօնակիցներ, „Համլէտի“ մէջ է այն տեսարանը, ուր տեղի է ունենում ա ր ք ա յ ա ս պ ա ն ո ւ թ ի ւ ն։ Արքայասպանութիւն, այժմ, երբ շուտով Թիֆլիզ պիտի ժամանի Նորին կայսերական Մեծութիւն Թագաւոր կայսր Ալեքսանդր Ալեքսանդրովիչը — մի գայթակղեցուցիչ դէպք է, որի առաջը պիտի առնել, և ահա այդ պարզ նպատակով, ես, իբրև հաւատարիմ հպատակ և իբրև ցենզօր, արգելեցի „Համլէտի“ ներկայացումը“...

Ամենքին տիրեց ա պ շ ո ւ թ ի ւ ն։ Եւ ոչ մի բացատրութիւն բաւական չեղաւ համոզելու „հաւատարիմ հպատակին“, թէ նա սխալւում է, այնպէս որ համբերութիւնից հանւած նախագահը յայտարարեց. „Որովհետև դուք չէք ուզում թոյլատրել, ուստի ես եմ թոյլատրում՝ իմ պատասխանատուութեամբ“... Եւ ասում են, որ դեռ շատ օրեր „հաւատարիմ հպատակը“ սպասում էր, որ անհեռատես, անփորձ նախագահը կը պատժւի իր անզգոյշ „պատասխանատուութեան“ համար, բայց աւաղ, նրա երկիւղը չիրագործւեց, որովհետև „Համլէտի“ ներկայացումից յետոյ անգամ ոչ մի վրացի, որ ներկայ էր խաղին, մտքովն անգամ չանցկացրեց արքայասպանութիւն գործել, — փորձ անել Ալեքսանդր III-ի կեանքի դէմ...

Թիֆլիզի „Ուղղափառութիւն տարածող ընկերութիւնը“ լրագիրներին ուղարկում է իր նեիրատուների անունները՝ տպագրելու։ Մի անգամ նեիրատուներն էին՝ թագաժառանգ Գէորգի իշխանը, որ նեիրել էր 500 ռուբլի, և բագւեցի թիւրք դրամատէր Թաղիեվը, որ

նոյնպէս նուիրել էր 500 բուբլի։ Թիֆլիզի լրագիրներից մի քանիսի մէջ լոյս տեսաւ այդ լուրը, բայց երկու լրագիր, որ քննում էր միևնոյն ցենզորը, անկարող եղան տպագրել։ Հարցրին պատճառը և յայտնուեց, որ ցենզորը չէ թոյլ տուել՝ ասելով. „Ի՞նչպէս կարելի է թագաժառանգի անուան մօտ դնել մի որևէ հպատակի անուն“։ — Բայց դա ընկերութեան ուղարկած ցուցակն է և երկուսն էլ 500-ական բուբլի են տուել, նկատել է խմբագիրը։ — „Այդ միևնոյն է, չեմ թոյլ տայ. եթէ ուզում էք՝ թագաժառանգի անունը տպագրեցէք այսօր, իսկ միւսինը պահէք վաղը“...

Երբեմն ապրում էր մի ցենզոր — Կրասովսկի, տիպը միապետական գրաքննիչի։ Մի օր նրան բերեցին փոքրիկ յօդուած՝ „Սունկերի վնասակարութիւնը“ վերնագրով։ Նա արգելեց յօդուածը՝ այդպիսի մակագրութեամբ. „Սունկը — ուղղափառների պասայ կերակուրն է, և գրել նրա վնասակարութեան մասին, կը նշանակէ խախտել կրօնը և տարածել անհաւատութիւն“։ Կրասովսկի մեռաւ, բայց նրա դպրոցը մնաց կենդանի։ Եկան ուրիշները, յաճախ տուելի յիմար։ — Դրանցից մէկն էլ Թիֆլիզ էր։ Քանի մի տարի առաջ նրան ուղարկեցին մի յօդուած՝ „Մրգերի արտահանութեան“ մասին։ Յուլիս ամիսն էր։ Արգելեց։ „Մրգերի արտահանութիւնը տեղի է ունենում սեպտեմբերին, — նկատում է նա — եթէ մի յետին միտք չը կայ դրա մէջ, ինչո՞ւ էք այժմ գրում“։

Մի այլ անգամ վրաց լրագիրների ցենզորը, տգէտ հայոց լեզուի մէջ, ջնջում է հետևեալ լուրը.

„Հարկաւոր ենք համարում հաղորդել, որ ցեխը՝ միացած սատկած կենդանիների մնացորդներին, թագաւորում է մեր քաղաքի փողոցներում“։

Ջնջում է, պատճառաբանելով՝ „Հաղորդելը՝ կրօնական մեծ արարողութիւն է, և կապել այդ բառը ցեխի ու սատկած կենդանիների հետ՝ կը նշանակէ

վերաւորել կրօնը“։ Բացի դրանից առաջարկում է այդ տեսակ լուրերի մէջ չը գործածել թ ա գ ա ւ ո ր բառը։

Մի ուրիշը ընջում էր յօդուածներ՝ մակագրելով „Լեզուն վատ է“, կամ „բազմակէտեր շատ կան“,—հիմնուած երևի գրաքննական այն իրաւունքի վրայ, որով ցենզօրը պիտի հսկէ լեզուի մաքրութեանը և թոյլ չպիտի տայ շատ բազմակէտեր. ամենաշատը՝ երեք կէտ։

— Վերջապէս, ինչի մասին գրենք, որ չը ընջէք, հարցնում է մի հրապարակախօս գրաքննիչին։

— Ես ինքս էլ չգիտեմ, պատասխանում է՝ շատ քիչ անգամ անկեղծ խօսող ցենզօրը. այն էլ, ինչ այսօր եմ թոյլ տալիս, վաղը առաւօտեան կարող եմ արգելել. դա կախուած է այն հրահանգից, որ այս գիշեր կարող եմ ստանալ։

Եւ հրահանգներն ու գաղտնի շրջաբերականները գալիս են ու գալիս։ Քանի մի նմուշներ.—

1897 թուին Ռուսաստանում տեղի ունեցաւ մ ի օ ր ե ա յ ժ ո ղ ո վ ր դ ա գ ր ո ւ թ ի ւ ն։ Բնական է կարծել, որ կառավարութիւնը պիտի ցանկանար, որ մամուլը հող պատրաստէր տգէտ ժողովրդի մէջ՝ այդ կարևոր ձեռնարկութեան համար։ Բայց բոլորովին հակառակը։ Դեռ նոր էին սկսել գրել, երբ առանձին հեռագրով խստիւ արգելուեց կովկասեան մամուլին՝ մի տող անգամ տպել մ ի օ ր ե ա յ ժ ո ղ ո վ ր դ ա գ ր ո ւ թ ի ւ ն ա ն մասին։ Պատճառները գաղտնի են։ Տգէտ ժողովուրդը, վախեցած, շատ բան թագցրեց, և շատ ուշ միայն հասկացաւ կառավարութիւնը իր գործած սխալը, անմիտ կարգադրութեան հետևանքները։

Ակուեց „դուխոբուրների“ եղեռնը։ Խաղաղ Ախալքալաքի ամբողջ գաւառը տակնուվրայ եղաւ. աքսոր, ձերբակալութիւններ, ծեծ, մտրակ, նոյն իսկ սպանութիւն։ Հազարաւոր մարդիկ թողեցին երկիրը,—մի ամբողջ գաղթականութիւն։ Ոչ միայն մի գաւառում, այլ

ամբողջ նահանգում, երկու տարի շարունակ, դա այրող, յուզիչ հարց էր։ Ռասպելական լուրեր էին պտտում երկրի մէջ։ Փորձեցին ձայն հանել, բայց ահա հասաւ արգելող հեռագիրը ու մամուլի մէջ և ոչ մի խօսք, նոյն իսկ յիշատակութիւն „դուխոբուր“ անուան. — կարծէք այդ դէպքը պատահած լինէր ոչ թէ Կովկասում, այլ ուրէ դեռ չգտնուած մոլորակի վրայ...

Խօլերա է — ամենառատ բանը քաղցած ու տգէտ երկրի մէջ։ Մամուլը փորձում է զգուշացնել, ուշադրութիւն հրաւիրել։ Դարձեալ հեռագիր. — „Խստիւ արգելւում է գրել խօլերայի մասին“։ Համաճարակը կոտորածներ է անում, ազգաբնակութիւնը սարսափած փախչում է. փողոցներում ամբոխը ցոյցեր է անում ոստիկանութեան հասցէին, նոյնիսկ բժիշկների դէմ։ Հիւանդանոցներից փախչում են ինչպէս մարդկային սպանդանոցից. բայց էլի ոչ մի խօսք։ Եւ ամիսներ միայն անցած, երբ Պետերբուրգում կազմւում է ուրէ „խօլերային կոմիտէ“, այսինքն կառավարչական մարմին, որի գլխաւոր պաշտօնն է թագցնել աղէտի մեծ մասը, այն ժամանակ միայն լրագիրներին իրաւունք է տրւում տպագրել տեղեկութիւններ, այսինքն այն, ինչ որ նրանց կը հաղորդէ պաշտօնական կոմիտէն։ Դրանից դուրս՝ ոչ մի փաստ։ Այսպէս եղաւ 1892-ի խօլերայի ժամանակ. այսպէս է եղել և ուրիշ դէպքերում։

Գործադուլ է։ Քաղաքի մէջ կանգ է առել կեանքը, և աշխատանքի երգի տեղ՝ հնչում է ապրստամբ աշխատաւորի սպառնալիքը։ Գործարանները չեն բանում. շուկայում ուտելեղէն չը կայ. քաղաքը զուրկ է լոյսից։ Կանգ է առել երթևեկութիւնը։ Օդի մէջ տիրում է երկիւղ, մտքերը անհանգիստ են... Սուինները են փայլում աշխատաւորի դէմ։ Մարդիկ՝ հարցական նշան կտրած, վազում, որոնում, տեղեկութիւն են ուզում։

Ահա լոյս է տեսնում լրագիրը, բայց ոչ մի խօսք գործադուլի մասին, ոչ մի տառ ահռելի դէպքերի վերաբերմամբ։ Կարծէք ոչինչ չէ պատահել...

1903 թուի յուլիսեան գործադուլի պատճառով Բագուի երկաթուղու գնացքները մի քանի օր կանգ առան։ Կանգ էր առել և ամբողջ յարաբերութիւնը՝ հարաւեան քաղաքների։ Պատառնական լուրեր էին պտտում գծի վրայ տեղի ունեցած բանւորական ընհարումների մասին։ Դարձեալ ոչ մի խօսք, ոչ մի տող ամբողջ լրագրութեան մէջ։ Եւ Թիֆլիզի լրագիրներից մէկը՝ փաստի փոխարէն՝ ա ջ ո ղ ե ց տպագրել հետևեալ „միամիտ“ ակնարկը՝

„Երէկ երկաթուղային վարչութեան գլխաւորը՝ Խմանովսկի, Թիֆլիզից ճանապարհ ընկաւ Բագու՝ իմանալու, թէ ինչու երկու օրից ի վեր այնտեղից գնացքներ չեն գալիս“։

Գործադուլները յաջորդում են գործադուլներին. փողոցներում և գործարանների շուրջը արիւն է հոսում. փակում են դպրոցները. մարդիկ՝ քաջածանօթ քաղաքին՝ բանտ են ուղարկում. տեղի են ունենում կարեւորագոյն ակտեր՝ ինչպէս Հայ-լուսաւորչական եկեղեցու կալւածքների խլումը կամ քաղաքներում պաշարման վիճակ յայտարարելը. կատարւում են բիւրաւոր բարձրագոյն անարդարութիւններ պաշտօնեաների ձեռքով — և այդ ամենի մասին՝ ոչ մի ակնարկ, ոչ մի խօսք, ոչ մի կարծիք։ Խօսքի փոխարէն՝ շշուկ, կարծիքի փոխարէն՝ լռութիւն, լռութիւն համատարած, գերեզմանային։

Իսկ լրագիրները շարունակում են լոյս տեսնել...

„Պաշտօնական արգելքները“ այժմ կրկնապատկւել են և մէկի տեղ պահանջւում է երկուսի, շատ անգամ երեքի թոյլտւութիւնը։ Օրինակ. եթէ լրագիրը ուզում է տպագրել տեղեկութիւն դումաների մասին, պէտք է բացի ցենզորից՝ ստանայ նաև նահանգապետի համաձայնութիւնը։ Ուրիշ օրինակ։ Մէկը ուզում է տպագրել ոևէ

բ ժ շ կ ա կ ա ն գիրք։ Ցենզորի թոյլտուութիւնը բաւական չէ. նա պէտք է ստանայ և բժշկական վարչութեան թոյլտուութիւնը։ Մի ուրիշը գիտաւորութիւն ունի տպագրել քննադատութիւն՝ դ պ ր ո ց ա կ ա ն հարցի մասին. բացի ցենզորից՝ անհրաժեշտ է և ուսումնարանական վարչութեան համաձայնութիւնը, որը երբէք չի ստացուում, որովհետև Ռուսաստանում չկայ մի վարչութիւն, որը կամենայ քննադատութեան ենթարկուել։ Կամ, դիցուք, մի աստուածաբան պատրաստում է մի գիրք ուսէ եկեղեցական հարցի մասին. դարձեալ՝ բացի ցենզորից պահանջուում է և հոգևոր իշխանութեան առանձին թոյլտուութիւնը, որ ուրիշ խօսքով կը նշանակի՝ ա ն օ գ ո ւ տ կերպով ամիսներով թափառել „հոգևոր“ պետի անմատչելի դռների մօտ... Մի օրինակ ևս։ Միապետը կամ նրա որդին վճռել է դուրս գալ իր պալատից՝ ճանապարհորդելու համար։ Ոչ մի լրագիր չէ կարող տպագրել այդ։ Հասարակութեան մէջ լուրեր են պտտուում, մարդիկ միմեանց հարց ու փորձ են անում, գիտեն, որ կայսրը ճանապարհորդելու է, — բայց տպագրել չէ կարելի և ոչ մի խօսք։ Պոլիցիան ոտի վրայ է. քաղաքի փողոցները մաքրուում են, հին պատերը ներկել են տալիս. — բայց մամուլի մէջ դարձեալ ոչ մի խօսք։ Գիտէ՞ք ինչու։ „Որպէսզի նախօրօք չիմացուի և ուսէ դաւադրութիւն չպատրաստուի“, փաստաբանում են չինովնիկները։ Վերջապէս գալիս է կայսրը. ամբողջ քաղաքը ոտի վրայ է, լրագիրը իր պարտքն է համարում ծանուցանել, թղթակիցներ ուղարկել, հեռագիրներ ստանալ, որպէսզի հասարակութեան հետաքրքրութեան լիութիւն տայ։ Բայց ի զուր։ Ոչ մի խօսք։ Ամեն մի լուրի համար պէտք է ստանալ կամ պալատական միներտրի յատուկ թոյլտուութիւնը, կամ պետի սպասել, որ „պաշտօնական“ լրագիրը տպագրի „պաշտօնական“

նկարագրութիւնը, որտեղից և միւս լրագիրները կա-
րող են արտատպել։

Պ ա շ տ օ ն ա կ ա ն ա ց ն ե լ ը՝ պատահական բան չէ,
այլ մի նախամտածուած, մշակուած սիստէմ, որ յղացել
և մշակել է Ալեքսանդր և Նիկոլայ կայսրների կառավա-
րութեան ամենաուժեղ ղեկավարը։ Ո՞վ է դա։—Պոբեդո-
նոսցեվ, պաշտօնով սինոդի օբեր-պրոկուրոր, միապետու-
թեան մեծ-ինկվիզիտորը, պոլիցիական ոգու մարմնացումը,
քուրմ անշարժութեան, աղբիւր բոլոր խաւար ծրա-
գիրների։ Բազմաթիւ ծրագիրներ յղացաւ նա և դրանցից
մէկն էլ մամուլին է վերաբերում։

Ի՞նչ է այդ ծրագիրը։—Վերացնել անկախ, մ ա ս-
ն ա ւ ո ր մամուլը և նրա տեղ հաստատել կ ա ռ ա-
վ ա ր չ ա կ ա ն մամուլ։ Բոլոր լրագիրները, ինչպէս
այժմ պաշտօնական թերթերը, պէտք է ունենան կա-
ռավարութեան կողմից ն շ ա ն ա կ ւ ա ծ խմբագիրներ,
կամ այլ խօսքով՝ խմբագիրը ուրիշ բան չպէտք է լինի,
եթէ ոչ մի չ ի ն օ վ ն ի կ, նշանակուած կառավարու-
թեան ձեռքով, որը անմիջապէս կ'արտաքսուի իր պաշ-
տօնից, հէնց որ կը շեղուի իր համար նախագծած ճա-
նապարհից։ Այդ նենգամիտ առաջարկով Պոբեդոնոսցեվ
միտք ունէր երկու նպատակի միանգամից հասնել.—թէ
մամուլ ունենալ, որպէսզի չասեն՝ թէ կառավարութիւնը
այն աստիճանի վայրենութեան է հասել, որ ոչնչացնում
է տպագրական խօսքը, թէ աղատել քննադատութեան
նոյնիսկ այն վերջին նշոյլներից, որոնք երբեմն-երբեմն,
ինչպէս անսպասելի կայծեր, ցայտում են մամուլի էջե-
րից . . . Սակայն այդ առաջարկը, թէև սկզբունքով դուր
եկաւ յետադիմութեան շրջապատին, բայց և այնպէս
չը գործադրուեց, և այդ ոչ այն պատճառով, որ օգտա-
կար չէր, այլ միմիայն նրա համար, որ դա կը համար-
ւէր պետական մի „սկանդալ“, ամբողջ աշխարհի ծի-
ծաղը գրգռող մի ապուշութիւն . . .

—„Ինչու՞ ոչնչացնել, ինչու՞ սագերին գրգռել, ասաց „միջին տեղը“ բռնող մինիստրներից մեկը, պօբեդօնօսցեվի ծրագիրները քննելիս, —քանի որ մենք կարող ենք ունենալ ա՛ն կա՛խ մամուլ՝ բայց միշտ ցենզորը գլխին, զ ե մ ս տ վ օ՝ բայց առանց իրաւունքի, դ ո ւ մ ա՝ առանց ինքնավարութեան։ „Այդպիսով համ ոչխարները սաղ կը մնան, համ գայլերը կուշտ կը լինեն“...

Այդպէս էլ արեցին, այդպէս էլ անում են...

Իբրև հետևանք այդ „սիստէմի“՝ Տպագրական գործերի գլխաւոր վարչութիւնը և ցենզօրական կոմիտէները լքցուած են ապիկար պաշտօնեաներով, որոնց այլանդակութիւնը յաճախ հրեշութեան է հասնում։ Քանի մի տարի առաջ Տպագրական գործերի գլխաւոր վարչութեան պետ նշանակուեց Սօլօվիեվ, տկարամիտ, անպէտք մի ծերունի, մտքերով խաւար՝ ինչպէս գիշերը, ցանկութիւններով ամուլ՝ ինչպէս քար։ Փրփուրը բերանին, այդ ծերուկը իրեն դիմողին մի բան գիտէր ասել՝ „Ի՞նչ, նոր լրագիր, եղածներն էլ դեռ շատ են, թոյլ չեմ տայ“։

„Մի օր —պատմում էր մի կովկասեցի — Պետերբուրգ գալով և ամբողջ շաբաթ ունկնդրութեան սպասելով, հազիւ պատիւ ունեցայ ընդունելու Սօլօվիեվի կաբինետում։

— Դատեցէք։

Դատում եմ։

— Ձեր անո՞ւնը։

Ասում եմ։

— Ի՞նչ էք ուզում։

„Ես պատմեցի, որ եօթ ամիս է խնդիրք եմ տալ բժշկական մի շաբաթաթերթի հրատարակելու համար, բայց ոչ մի պատասխան չկայ, և խնդրեցի մի կարգադրութիւն անել։

— „Իմ կարգադրութիւնը —սեղանին խփելով պատասխանեց ծերունին —մերժումն է։ Եթէ ուզում էք

բժշկական գիտութիւններ տարածել, տպագրեցէք այդ բոլորը ալմանախների մէջ, օրացոյցների եռեռը. կարիք չկայ առանձին թերթ հիմնելու։ Թերթեր, թերթեր, անվերջ թերթեր։ Դուք ձեր Կովկասում առանց այդ էլ շատ ունէք, և դեռ ոռպիսիները, — թերթեր, որոնք աղատամտութիւններ էլ են անում; ազգերի հաւասարութիւն, զէմստվոներ, ինքնավարութիւն և չգիտեմ ուրիշ ինչ յիմարութիւններ ասէք, որ չեն գրում։ Ես նրանց ցոյց կըտամ։ Ա՛յ, այստեղ էլ մենք քիչ չունենք այդ լիբերալներից — բացականչեց ծերունին՝ խփելով սեղանի վրայ գրած „Նովոստիի“ մի համարին, — ջհուդական աղատամտութեան բուն։ Ես դրանց աղատամտութիւն կ'ուսուցանեմ։ Գնաք բարով, ձեր խնդիրքի պատասխանը կըստանաք։ Գնաք բարով“...

Պատասխանը ստացաւ — մերժում...

Եթէ այդպէս են զեկավարները, երևակայեցէք ինչ կը լինեն տեղի և պաշտօնի համար սողուն ացած ստորադրեալները։ Եւ տխուր ապացոյցները քիչ չեն։ Կովկասեան ցենզօրական կոմիտէի մէջ երկար տարիներ աւագ գրաքննիչի պաշտօնը վարեց մի ռուս, որ երբեմն թաւրիզի ռուսաց ընդհանուր հիւպատոս էր և վռնդուեց այդ պաշտօնից այն „անմեղ“ պատճառով, որ թէև հիւպատոս, բայց կողոպտել տուեց ռուսաց փոստը՝ վարձու աւազակների ձեռքով։ Եւ չնայած այդ աւազակութեան՝ ցենզօր եղաւ, այն էլ գեներալի աստիճանով... Մի ուրիշը, որ ամբողջ քսան տարի ցենզօրի պաշտօն կատարեց, նոյնպէս գեներալի աստիճանով, այնքան անարգ էր, որ պաշտօնից դուրս գալուց յետոյ, ուրիշ ոչ մի գործ չսացաւ և սկսեց... լրտեսութեամբ պարապել։ Թիֆլիզում յայտնի են կաշառակերութեան բազմաթիւ դէպքեր, կատարուած գրաքննիչների ձեռքով... Կար մէկը, որ միաժամանակ և՛ ցենզօր էր, և գաղտնի ոստիկանութեան

անդամ ու վտանգաւոր լրտես։ Լրտեսութիւնը, առհասարակ, պետական առաքինութիւն է ցենզօրական աշխարհում։ Ազգով հայ մի պաշտօնեայի յանձնուեց ցենզօրի պաշտօնը այն պայմանով, որ նա գաղտնի զեկուցումներ տայ հայկական գործերի մասին։ Եւ այդ զեկուցագրերով, իբրև ապահով սանդուխքներով, նա բարձրանում էր դէպի գեներալութիւն . . . — Մի օր յայտնուեց, որ մի „չինովնիկ“ իր դահլիճի պատերը զարդարում է թանկագին նկարներով, որոնք ստացած էին արտասահմանից և յանձնուած նրա քննութեան։ Այդ գողը՝ մի ցենզօր էր։

Եւ այդպէս տասնեակներ, տասն տասնեակներ . . .

Բաժակը լցուած էր։

Հարկաւոր էր մի բողոք, գանգատի որևէ ցոյց, գէթ ամենափոքրիկ նշան դժգոհութեան։ Բայց, աւա՜ղ, ոստիկանների թագաւորութեան մէջ այդ օրինակ երաշները հաղւագիւտ են։ Եւ ահա՝ բողոքի ու գանգատի փոխարէն, ռուսաց գրողները՝ բաղկացած զանազան ուղղութեան և տարբեր բանակի ներկայացուցիչներից, „համարձակութիւն“ ունեցան՝ ուղղելու Նիկոլայ կայսրին ամենահոռոմտ մի խնդիրը, տարուած այն յոյսերով, որ երբեմն ներշնչում էին երիտասարդ գահակալի հրովարտակները կամ նրանց մէջ սպրդած գեղեցիկ խօսքերը.

Թագաւոր,

„Ձեր ողորմած մանիֆեստի մէջ, նոյեմբեր 15-ից, մենք, „Ձեր հպատակներս, բերկրութեամբ նկատեցինք, որ Ձեր „Կայսերական Մեծութիւնը համարում էք „արդարու„թիւնը ժողովրդական բարեկեցութեան հիմք“։

„Այդ խօսքերը համարձակութիւն են տալիս մեզ՝ զգա„ղեցնելու Ձեր ուշադրութիւնը մեր ամենահպատակ խն„դիրքով։

„Թագաւոր, Ձեր հպատակների կեանքի մէջ կայ մի ամ„բողջ պրօֆեսիա, որ դուրս է Արդարութիւնից, — դա „գրողների պրօֆեսիան է։ Մենք, գրողներս, կամ բոլո-

„ բոլոր զրկուած ենք մամուլի միջոցով մեր Հայրենիքին
„ ծառայելու հնարաւորութիւնից, ինչպէս այդ թելադրում
„ է խիղճն ու պարտականութիւնը, կամ՝ առանց օրինական
„ մեղադրանքի և օրինական պաշտպանութեան, առանց
„ քննութեան և դատարանի, ենթարկուում ենք պատիժ-
„ ների, որոնք հասնում են նոյնիսկ մինչև ամբողջ հրա-
„ տարակութիւններ դադարեցնելուն։ Սոսկ ադմինիստրա-
„ տիվ կարգադրութիւններով՝ մամուլի քննադատութեան
„ շրջանից դուրս են նետուում մեր հասարակական կեանքին
„ վերաբերեալ խնդիրներ, որոնք ամենից շատ կարօտ են
„ կանոնաւոր, բազմակողմանի քննադատութեան։ Սոսկ ադ-
„ մինիստրատիվ կարգադրութիւններով հասարակական
„ դրադարձաններից և ընթերցարաններից վերցնում են
„ այնպիսի գրքեր, որոնք գրաքննութեան կողմից թոյլա-
„ տրուած են։

„ Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը արդէն խոստովանում է
„ ուսուցց գրականութեան մեծ նշանակութիւնը։ Բարեհա-
„ ճեցէք ուրեմն, թագաւոր, ընդունել նրան օրէնքի հովա-
„ նու տակ, որպէսզի միայն օրէնքից կախուած և ցենզօրա-
„ կան անմիջական ազդեցութիւնից օրէնքով պաշտպանուած՝
„ ուսուցց ապագրական խօսքը կարողանար, իր ուժերի հա-
„ մեմատ, ծառայել Ռուսաստանի փառքին, ազդեցութեան
„ և բարեկեցութեան“։

Համեստագոյն էր խնդիրը և չափաւոր։ Մամուլի ազա-
տութեան կոչ չէր այդ, և կամ պահանջ՝ ոչնչացնելու
գրաքննութիւնը, այլ արդար մի տենչանք՝ տեսնել մա-
մուլը հովանաւորուած, ազատ՝ կամայականութեան բիրտ
հարուածներից։

Եւ պատասխանը հնչեց՝

— Խստացնել։

— Վերացնել — գոչեց մի այլ ձայն, որ գալիս էր
հեռից, խրոխտ և սպառնական...

ՀԱՅԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

(ՏԱՄՆՎԵՑԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Նախկին հմայքը. — „Արեւելեան քրիստոնեաների պաշտպանը“. — Պետրոս Մեծի եւ Եկատերինէ կայսրուհու տրամադրութիւնը. — Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի ծրագիրը. — Արարատեան թագաւորութիւնը. — Ռուս-պարսկական պատերազմները եւ Ներսէս Աշտարակեցին. — Հայկական զօրագունդը. — Ռուսաստանը չիրագործեց իր խոստումը. — Նոր դէպքեր. — Սան-Ստէֆանոյի եւ Բերլինի դաշնագիրները. — Կովկասեան ոգեւորութիւններ. — Ռուսաց քաղաքականութեան փոխելը. — Հալածանք թիւրքահայերի շարժման դէմ. — Խստութիւններ Կովկասում. — Մի քանի փաստեր. — Քաղաքական կսկիծ:

— „Պաշտպա՞ն արեւելեան քրիստոնեաների“:

Փորձեցէք մի ժողովում, կամ հասարակութեան մէջ՝ արտասանել կամ կարդալ այդ գեղեցիկ խօսքերը, և ամէն մի ռուս, ոչ միայն սլաւոնաֆիլ, այլև շատ ազատամիտ, ինքնագոհ, ժպիտը երեսին՝ կը բացականչէ „Ռուսաստանն է այդ“:

Կեղծիք չը կայ այդ բացականչութեան մէջ, գուցէ միայն մոլորութիւն: Այդ մեծահոգի դերը, աջող թէ անաջող, երկար, շատ երկար եղաւ Հիւսիսի միապետութեան նշանաբանը, ոգեւորողը և դրդիչը՝ այն երկարատեւ, համարեա անընդհատ կռիւի ընթացքում, որ մղեց քրիստոնեայ-Ռուսաստանի և հարեւան մահմեդականութեան մէջ՝ մի կատաղութեամբ, որ յատուկ է կրօնական գոյն ունեցող ճակատամարտներին:

Պետրոս Մեծը եղաւ այդ շարժման հիմնադիրը: Հակառած դէպի Արեւմուտք, ըմբոստ-միապետը չը կարողացաւ

սառնարիւն կերպով նայել հարաւի անշարժ, քարացած միապետութեան, որն, ինչպէս ժայռ, կանգնած էր ռուսական արշաւանքների հանդէպ, ու դեռ 1722-ին փորձեց փշրել այդ ժայռը և ճանապարհ բանալ դէպի հարաւ՝ սլաւ զօրքի, սլաւ ձգտումների առջև։ Հեռատես, նախկին նկատեց այն վիհը, որ բաժանում էր քրիստոնեայ Կովկասը՝ Պարսկաստանից և քրիստոնեայ Բալկանը՝ Թիւրքիայից։ Այդ վիհը լայնացնելու նպատակով սկսեց մի ջերմ պրօպագանդ և դա եղաւ սկիզբն այն խոր համակրութեան, որ ինչպէս հողմ տարածուեց Կովկասեան լեռների վրայ և Բալկանի ձորերում։

1769-ն էր։ Ռուսաց մեծաքանակ զօրքը սահում էր դէպի Թիւրքիայի սահմանները՝ Թիւզանդիոնը քրիստոնէութեան գիրկը դարձնելու երազներով հարբած. միաժամանակ դալիս էր և Եկատերինէ կայսրուհու կոչը, ուղղած Բալկանի և Կովկասի քրիստոնէութեան, — կոչ ապստամբութեան, կոչ ըմբոստացման՝ ընդդէմ սուլթանական ըէժիմի։ Ընյուսութեան մատնուած ազգերի մէջ ցոլացին յուսոյ ճառագայթներ...

Հայութիւնը անմասն և քնած չը մնաց ու հանդէս եկաւ հարաւում՝ իբրև քաղաքական կեանքի հետամուտ։ Յովսէփ աբքեպիսկոպոս Արղութեան (1743—1801), ժամանակի քաղաքագէտ-հոգևորականը, ընդունակութիւն ունեցաւ մարմնացնելու իր համազգայիների տենչը և յենուած այն բարեկամական կապերի վրայ, որ ունէր Արիապետուհու հետ, ներկայացրեց ռուսաց կառավարութեան հայկական ինքնավարութեան ծրագիրը։ Դրա հիմքը լոկ հայկական շահերը չէին, այլ ամենից առաջ այն մեծ օգուտը, որ պիտի ունենար Ռուսաստանը՝ կազմակերպելով իր սահմանների վրայ, իբրև թուրք մահմեդական հարևանների դէմ, մի այլ քրիստոնեայ երկիր, որը թիկունք ունենալով մի ուրիշ քրիստոնեայ երկիր՝ անկախ վրաստանը, կը լինէր և կը մնար

իբրև միապետութեան առաջապահ, անձնուէր պահակ Երասխի ափերին։

„Աբարատեան թագաւորութեան“ գաղափարը հաւանութիւն գտաւ Պետերբուրգում։ Սկսվեցին բանակցութիւններ երկու կողմի մէջ և կանգ առան, թէև ոչ պաշտօնապէս, հետևեալ գլխաւոր կէտերի վրայ.

Ա.) Հայկական նահանգները կազմում են առանձին թագաւորութիւն, Ռուսաստանի անմիջական հովանու տակ։

Բ.) Հայերը հարկ պիտի տան Ռուսաստանին և պատերազմի ժամանակ՝ զօրք։

Գ.) Երկիրը կառավարւում է իր սեփական օրէնքներով։

Դ.) Ռուսաց մի զօրաբաժին պիտի մնայ Հայկական նահանգներում, որոշ ժամանակով, թէ՛ երկիրը պաշտպանելու և թէ՛ նրա վրայ հսկելու համար։

Ե.) Հայոց թագաւորի ընտրութիւնը պէտք է կատարի կայսրուհու ձեռքով։ Նա պիտի ունենայ իր դեսպանը Պետերբուրգի մէջ։

Զ.) Մայրաքաղաքը՝ Երևան կամ Վաղարշապատ։ Ազգային դրօշակ՝ երեք գոյնով։

Է.) Երկու եկեղեցիներ կապում են առևտրական դաշինք և հատատում մաքսային օրէնքներ։

Սակայն „Հայկական ծրագիրները“ իրագործման բախտին չարժանացան։ Եկատերինէի մահը, 1796-ին, և դրան հետևած փոփոխութիւնները՝ վերջ դրին սկսած փորձերին, նորածիլ յոյսերին։

Դրանով, սակայն, Հայկական անձնուիրութիւնը չթուլացաւ, և 19-րդ դարու սկզբում դա արտայայտւեց շատ դէպքերում, երբեմն նոյնիսկ չափազանցրած եռանդով։ Դրա ապացոյցը պէտք է համարել Ալէքսանդր I կայսեր մի հրովարտակը՝ ուղղած Հայութեան, 1813 թ-ին։

„Մեր սիրելեալ եւ հաւատարիմ հպատակ համօրէն Հայոց ազգին, որ բնակւում է Վրաստանում, եւ նորան բաղկացնող բոլոր դասակարգի անձանց՝ Մեր Կայսերական շնորհները.

„Ճշմարիտ գոհունակութեամբ տեսանք Մենք Վրաս-

ամանի մեր գլխաւոր հրամանատարի զեկուցումից՝ մեր սրտին ախորժելի նոր վկայութիւն այն հաւատարիմ հպատակութեան երախտագիտական զգացմունքների, որոնցով վրաստանաբնակ հայոց բոլոր հասարակութիւնները միշտ ոգեւորուած են եղել դէպի մեր բարձր հովանաւորութիւնն եւ Մեր հայրական հոգատարութիւնը՝ նրանց, ինչպէս եւ այնտեղի բոլոր ժողովուրդների բարեկեցութեան համար։ Նոքա ապացուցին այս զգացումները բոլոր դէպքերում հաստատուն հաւատարմութեան բազմաեռակ փորձերով։ Նոքա ցոյց տուին օրինակելի հաստատամտութիւն եւ անձնուրէութիւն այն միջոցին, երբ թեթեւամտութիւնը եւ չարակամութիւնը զուր ջանք էին գործ դնում սասանեցնելու Վրաստանում Մեր հաստատած խաղաղութիւնը, եւ խռովայոյզ հանգամանքների մէջ՝ մնացին հաստատ եւ անսասան, զոհելով իրանց ստացուածքը եւ բոլոր միջոցները, նոյն իսկ իրանց կեանքը՝ յօգուտ Մեր ծառայութեան եւ ի բարօրութիւն հասարակաց։

„Վրաստանաբնակ ամբողջ հայոց ազգի եւ նորան բոլոր դասակարգերի այդպիսի ջերմեռանդութիւնը, նոցա ծառայութիւնները եւ մեծագործութիւնները Մեզ վրայ ախորժելի պարտականութիւն են դնում՝ վկայել ամբողջ աշխարհքի առաջ Մեր դէպի նոցա ունեցած արդարացի երախտագիտութիւնը եւ բարեհաճութիւնը։ Թող պահի այս վկայութիւնը ի պատիւ եւ ի փառս նոցա եւ ի յիշատակ ապագայ սերունդների։

„Մնում ենք դէպի նոցա Մեր Կայսերական բարեհաճ ողորմութեամբ“։

ԱԼԵՔՍԱՆԴՐ

1813, Սեպտեմբեր 15
Տեպլից

Եկան նոր յոյսերի օրեր, նոր հանգամանքներ։ 1826-1828 թուականներն էին։ Երասխի ափերին ռուս-պարսկական զինամիջոցումը պատրաստում էր վճռական քայլ անել։ Հայ ժողովուրդը՝ կանգնած երկու մրցակիցների արանքում, կարեւոր դեր ունէր կատարելիք։ Վարանում տեղի չունեցաւ։ Յաւիշտակուած գեղեցիկ խոստումներով հայութիւնը նորից իր աչքերը դարձրեց դէպի քրիս-

տոնական կառավարութիւնը և իր յոյսերի արտայայտութիւնը վստահեց Ներսէս Աշտարակեցուն (1770-1857), որ այնքա՛ն տաղանդով միացրել էր քաղաքագէտի խորատեսութիւնը ռազմիկի համարձակութեան հետ։ Ներսէս՝ ոգևորված հինգերորդ դարու հայ կղերի օրինակով, խաչաւորված և զինաւորված, անցաւ հայ կամաւորների գլուխը և ուղղեց ամբողջ հայութեան մի կոչ, կոչ կռուի, կոչ ապստամբութեան։

Բռնկուեց ժողովրդական ոգևորութիւնը. 1827-ին Թիֆլիզում կազմուեց առաջին հայկական զօրագունդը։ Կամաւորների թիւը աճում էր ամեն ժամ, ամեն օր։ Արշաւանքից երեք օր առաջ, այն է մարտի 30-ին, Ներսէս անձամբ կատարեց զօրահանդէս՝ Վրաստանի մայրաքաղաքի հրապարակների մէկի վրայ, ոչ հեռու հայոց մայր եկեղեցուց։ Նա եկաւ ձիով, մի ձեռքին խաչ՝ միւսում՝ սուր։ Ողջոյններից յետոյ՝ հոգևորականզօրապետը դիմեց իր գնդին մի ոգևորված ճառով, և հաղիւ աւարտած՝ զօրքը երաժշտական քայլերգը հնչեցնելով անցաւ իր պաշտելի պետի առջևից։ Տեսարանը ազդեցիկ էր և ոգևորող։ Ալեզարդ զօրապետի շնորհակալութեան ողջոյններին՝ կամաւորները պատասխանեցին որոտընդոստ՝ „կեցցէ՛ Ն»ով։

Մի քանի օր անցած՝ վանքի մայր եկեղեցում կատարուեց մի այլ փառաւոր հանդէս — հայկական գնդի դրօշակի օծումը։ Նոյն օրը տարածուեց ռուսաց բանակի ընդհանուր հրամանատարի շրջաբերականը, ուղղած հայ ժողովրդին, որ վերջանում էր այս խօսքերով.

„Հայեր,

„Ձեր եռանդը արժանաւորապէս վարձատրուած է։ Մեր կայսեր սղոցման աչքը դարձրած է դէպի ձեզ։ Դուք կ'ունենաք ձեր „դրօշակի“ տակ սեփական զօրագնդեր։ Ձեզ շնորհուած է զէնք, որպէսզի դրանով օգնութեան հասնէք ձեր ճնշուած եղբայներին, ապահովութիւն տաք ձեր ըն-

տանիքներին և գրաւելով կայսերական շնորհները՝ պաշտպան հանդիսանալ հայրենիքին»։

Նոյն տարեայ մայիսի 17-ին հայկական զօրագունդը, բաղկացած աւելի քան 2000 հոգուց, Ճանապարհ ընկաւ Էջմիածին և այնտեղից դէպի պատերազմի դաշտը։ Հայ աղգաբնակութիւնը Ճանապարհին ընդունում էր զինուոր-եղբայրներին սրտառուչ բերկրութեամբ — նոցա շարքերը ստւարանում էին նորանոր կամաւորներով, ենթակայ մի գերբնական յափշտակութեան։

Կռիւը վերջացաւ։ Պարսիկները սղմեցին Արաքսի միւս կողմը։ Եւ 1828 թուի յունվարի 25-ին Ղերսէսը ստացաւ՝ շքանշանների հետ միասին՝ Նիկոլայ կայսեր շնորհակալութեան ու երախտագիտութեան հրովարտակը, թէ այն „գերազանց անձնուիրութեան“ համար, որ նա ցոյց տուեց ռուսաց արշաւանքներին՝ „նոյնիսկ իր անձը վտանգի ենթարկելով“ և թէ իբրև „արտայատութիւն կայսերական համակրութեան“ դէպի հայկական ազգը։

Սակայն ոչ Ղերսէս և ոչ հայկական ազգը հրովարտակ, շքանշան չէին սպասում, այլ կայսերական խոստման կատարումն, որ վերաբերում էր դարձեալ նոյն խնդրին — հայկական նահանգների ինքնավարութեան։

Խոստումը, կատարելու փոխարէն, ենթարկուեց ձրգձգման և գաղտնի փոթորիկների։ Տարիները եկան և անցան։ Աշտարակեցին, արդէն կաթողիկոս, գործ դրեց իր ամբողջ հմտութիւնը, սակայն անօգուտ։ Պետերբուրգի հայեացքները Կովկասի վերաբերմամբ ենթարկուեցին մեծ փոփոխութիւնների, և հայկական ինքնավարութեան գաղափարը, որ արդէն նկատւում էր „անտեղի և տարօրինակ“, յիսունական թուականներին՝ երբ Ղերսէսի մի քանի ազդեցիկ բարեկամներն էլ իջան քաղաքական-վարչական բարձր ասպարէզից, հանդիպեց բացարձակ թշնամութեան։ Միջոցներ չէին խնայւում՝ աղատուելու մեծանուն ծերունու քաղաքական պահանջ-

ներից։ Գուցէ այդ է պատճառը, որ Ներսէսի անսպասելի մահը, որ տեղի ունեցաւ 1857-ին, առիթ տուեց ծանր լուրերի... Հասարակութեան մէջ երկար ժամանակ կենդանի մնաց այն կարծիքը, որ կառավարութեան մարդիկ թունաւորեցին Աշտարակեցուն, որպէսզի Հայկական ինքնավարութեան ծրագիրն էլ նրա մարմնի հետ միասին գերեզման դնեն...

Հայկական ինքնավարութեան խափանումը գրգռի և թշնամանքի աղբիւր չեղաւ։ Ընդհակառակը, յաջորդ տարիները հաշտութեան տարիներ էին։ Ոգևորուած խաղաղ զարգացման փափաքով, գոհ այն աղատ հովերից, որոնք փչում էին պետութեան կենտրոնից 60-ական թուականների բեփորմների շնորհիւ, նւիրուած աշխատանքի և մտաւոր վերածնութեան, կովկասեան հայութիւնը փոքր առ փոքր մոռացաւ Ազարատեան թագաւորութեան ծրագիրը և նւիրեց Ռուսաստանին իբրև հաւատարիմ և անձնուէր մասը լայնածաւալ պետութեան։

Բայց Ազարատեան թագաւորութեան նսեմացող գաղափարի հանդէպ՝ միաժամանակ զարգանում, աճում և ուռճանում էր մի այլ ծրագիր — թիւրքաց Հայաստանի ազատութեան խնդիրը, իբրև անխուսափելի, հրամայական հետևանք քաղաքական և տնտեսական այն դժոխային պայմանների, որոնց մէջ շղթայած էր հայութեան մեծագոյն մասը օսմանեան պետութեան սահմաններում։ Դէպի այդ նպատակի իրագործումն էր մղում ամեն ինչ, — և՛ սուլթանական բեժիմի յարաճուն այլանդակութիւնը, և՛ հայկական մտքի վերածնութիւնը, և՛ վերջապէս „Արևելեան քրիստոնեաների պաշտպանի“ սպառնական որոտը՝ ուղղած Կ. Պոլսի տիրապետողների գլխին։

Ահա թէ ինչու 1876-ին, երբ „բոլգարական սարսափներին“ յաջորդեց Եւրոպայի համատարած ցասման բողոքը, և իբրև արձագանք՝ Ալեքսանդր II սպառ-

նալիքներ կարդաց Աբդիւլ-Համիդին, որ դեռ չէր արժանացել Մեծ-Մարգասպանի պատմական տիտղոսին, կովկասեան հայերի մէջ ծագեց յոյսերի մի նոր ճառագայթ։ Սկսվեց շարժում։ Թիֆլիզը այդ շարժման արտայայտիչն եղաւ։

1876 թուի դեկտեմբերին էր։ Որոշված էր պատրաստել մի ուղերձ հայ հասարակութեան անունից, ուղղված Ալեքսանդր II-ին, հրաւիրելով նրան օգնութեան հասնել տառապող եղբայր-ժողովրդին։ Գործի ձեռնարկողը Գրիգոր Աբծրունին էր։ Պատգամաւորութիւնը, բաղկացած ինն հոգուց, ներկայացուցիչ էր հասարակութեան զանազան շրջանների։ Ուղերձը ներկայացրեց Մեծ-իշխան Միխայիլ Նիկոլաեվիչին, Թիֆլիզի պալատում։ Գործին պաշտօնական գոյն տալու համար՝ իբրև նախագահ հրաւիրված էր Թիֆլիզի քաղաքագլուխ Դիմիտրի Կիպիանի, ազգով վրացի, ջերմ համակրող հայկական դատի։ Մեծ-իշխանը սիրով ընդունեց պատգամաւորութիւնը, յայտնեց իր համակրանքը հայոց դատին, ստացաւ ուղերձը և անմիջապէս ուղարկեց մայրաքաղաք, իր թագակիր եղբօրը։

Ահա ուղերձը.

„Ձեր կայսերական Բարձրութիւն,

„Բնակելով ռուսաց կառավարութեան հովանու ներքև և վաղուց արդէն վայելելով՝ մեզ համար թանկագին պնտութեան հովանաւորութեան տակ՝ հանգստութեան և խաղաղութեան բոլոր պարգևները, մենք Թիֆլիզ քաղաքի բնակիչ հայերս, դրդված քրիստոնէական մարդասիրութեան զգացմունքից, չենք կարող անտարբեր մնալ դէպի այն աներևակայելի տանջանքները, որ կրում են ասիական Թուրքիայի սահմաններում բնակող մեր ցեղակիցները և համադաւանները, ուր ոչ անհատը, ոչ սեփականութիւնը, ոչ կրօնը, ոչ քրիստոնեաների կեանքը և ոչ նրանց ընտանիքի, կանանց և աղջիկների պատիւը ոչնչով չէ ապահովված։

„Գիտենալով թէ որքան մեր Միրելի Թագաւորը և ամ-

բողջ Ռուսաստանը անսահման համակրում են Թիւրքահպատակ քրիստոնեաների վիճակին, մինչ թէ արիւնակից և թէ կրօնակից մեր եղբայրների դրութեան բարւոքման ամբողջ յոյսը դնում ենք Ռուսաստանի հզօր հիզնակութեան ուժի վրայ և ապաւինում ենք միմիայն ինքնակալ Կայսրին։

„Քրիստոնէական մարդասիրութեան, խոր ցաւակցութեան, ազգակցութեան զգացմունքը դէպի մեր եղբայրները՝ դրդեց մեզ դիմել Ձեր կայսերական Բարձրութեան Օգոստափառ միջնորդութեանը՝ և ամենահաւատարմութեամբ խնդրել Ձեր Բարձրութիւնը՝ արկանել Թագաւոր Կայսրի ոտների մօտ մեր ամենահպատակ խնդիրը՝ պաշտպանել իր հզօր ձեռքով, Թիւրքիայի այլ քրիստոնեաներին հաւասար կերպով, մահմեդականութիւնից միշտ ճնշած հայոց ազգը, այն միջոցներով, որ նախախնամութիւնը յանձնել է նորին Մեծութեանը և որ նա աւելի յարմար կը համարի“։

Իբրև համաձայնութիւն և համակրանքի արտայայտութիւն, Ալեքսանդր II հեռագրով յայտնեց „շնորհակալութիւն Թիֆլիզի հայ ազգաբնակութեան“։

Պատերազմը սկսուեց։ Ռուսաց զօրքերը՝ հայ գեներալների ղեկավարութեամբ՝ մտան Թիւրքաց Հայաստան։ Ամբողջ Հայաստանը բռնկուեց եղբայրական համակրութեամբ դէպի քրիստոնեայ ազատարարները։ Հալածական ժողովուրդը իրեն երազում էր փրկութեան նախագաւթում։ Իսկ Կովկասի հայերը՝ ոգևորուած եղբայրակիցների մօտալուտ ա ն կ ա խ ո ւ թ ե ա մ բ, մոռացած անցեալի վէրքերը, օրհնում էին այն օրը, երբ պատմութիւնը իրենց կապեց Ռուսաստանի հետ . . .

Եւ երբ 1878 փետրուար 19-ին, ռուսաց զօրքերի թափած արեան շնորհիւ, ստորագրուեց Սան-Ստէֆանոյի դաշնագրի 16-րդ յօդուածը, ինքնավար Հայաստանի հարցը շատերը համարում էին արդէն հիմնագրուած։ Այդ յօդուածը ասում է.

„Որովհետև ռուսաց զօրքերը Հայաստանի մէջ դրաւած երկիրներից յետ քաշելուց յետոյ՝ յիշեալ տեղերում կարող են կռիւներ ու խառնակութիւններ տեղի ունե-

նալ, որոնք երկու պետութիւնների լաւ յարաբերութիւն-ները կարող են խանգարել, Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ իրագործել այն բարեռքումներն ու բարենորոգումները, որ տեղական պիտոյքները պահանջում են հայոց բնակած նահանգների մէջ, եւ երաշխաւորել նրանց ապահովութիւնը քրդերի եւ չերքէզների դէմ»:

Ազգորութեան շեշտուած նշաններ երեւացին հայութեան մէջ: Դաշնագիրը, մտածում էին նոյնիսկ շատ հեռատեսներ, անբովանդակ խոստումն չէ, այլ յուստուակտ, որովհետեւ նրա ետեւ կանգնած է գործադրողուժը: Ինքը Ներսէս Վարժապետեան, սկզբներում կասկածոտ դէպի ռուսաց քաղաքականութիւնը, անձամբ շնորհակալութիւն յայտնեց Ալեքսանդր II-ի ներկայացուցչին՝ այդ մեծախօսուտում սկզբնաւորութեան համար:

Բայց ահա գումարուեց Բերլինի վեհաժողովը: Գերմանական մայրաքաղաքում, մանաւանդ այն օրերին, երբ ամեն ինչ ենթակայ էր Բիսմարկեան նենգ քաղաքականութեան, անգլիական ծրագիրը հանդիպեց հաստակրութեան: Իսկ այդ ծրագիրը որոշ էր և անողոք. — յետ մղել սլաւ միապետութիւնը Կ. Պոլսի շրջականերից և որքան կարելի է սղմել նրա ազդեցութեան շրջանը: Անգլիական դիւանագիտութեան երկու ազդեցիկ ներկայացուցիչները, լորդ Բիկոնսֆիլդ և լորդ Սալիսբիւրի, հաւատարիմ դաւադիր դիւանագիտութեան յաւիտենական ոգուն, ոչնչացրին Սան-Ստէֆանոյի դաշնագիրը, հակառակ Ալեքսանդր II-ի սրտաբուխ բողոքներին, կործանեցին Մեծ-Բոլգարիայի ծրագիրը, վերադարձրին „բոլգարական սպառնալիքների“ հեղինակին նրա կորցրած ուժի մի մասը, ստիպեցին դուրս հանել Հայաստանից ռուսաց զօրքերը և ստեղծեցին Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը, որ խմբագրուած է այսպէս.

„Բարձրագոյն Դուռը յանձն է առնում անյապաղ գործադրել այն բարեռքումներն ու բարենորոգումները, որ պահանջում են տեղական պիտոյքները հայոց բնակած

նահանգների մէջ, եւ երաշխաւորել նրանց ապահովութիւնը չէրքէզների ու քրդերի դէմ։ Բարձրագոյն Դուռը այս նպատակի համար ձեռք առնւած միջոցները պարբերապէս պիտի ծանօթացնէ պետութիւններին, որոնք պիտի հսկեն նրանց գործադրութեան վրայ"։

Այդ դժբախտ յօդուածը, որ հիմնւած էր Թիւրքաց կառավարութեան „բէֆորմատորական բարեհայեցողութեան" վրայ, առանց տրտաքին միջամտութեան, առաջ բերեց հայ ազգի բոլոր շրջաններում խոր թշնամութիւն դէպի Անգլիան, իբրև հեղինակ այդ յօդուածի, աւելի բուռն դարձնելով այն բարեկամական զգացմունքները, որոնք մնանւանդ պատերազմի և Սան-Ստէֆանոյի 16-րդ յօդուածի պատճառով՝ երևան էին եկել հայերի մէջ դէպի Ռուսաստանը։

Այդ տրամադրութիւնը տևեց և պատերազմից յետոյ, մի քանի տարի շարունակ։ Լօնդօնում չը կար հայանպաստ շարժում։ Թայմսի սիւներին այլևս ոչ ոք չէր յիշում Հայաստանը։ Իսկ Կովկասում, գլխաւորապէս Թիֆլիզում, դեռ բուռն կերպով շարունակւում էր այն պրօպագանդը, որ պատերազմի օրերից արդէն մղւում էր յօգուտ Թիւրքաց հայերի ազատութեան։ Կովկասի հայոց մամուլը, թէև ենթակայ ռուսաց գրաքննութեան, բարձրաձայն բողոքներ էր արձակում Թիւրքաց բռնութիւնների դէմ։ Ամեն կողմ ազատ հանգանակութիւններ էին կատարւում յօգուտ Թիւրքահայ սովեալների, Թիւրքահայ պանդուխտների, Թիւրքիայում գոյութիւն ունեցող հայկական ընկերութիւնների։

Բուռն գործունէութեան շրջան էր այդ։

Արարատեան նահանգից կամաւորներ, պրօպագանդիստներ, քաջալերողներ էին անցնում սահմանը և դէպի ստրկութեան ձորերը տանում՝ ազատամբութեան հրաւէրներ։ Բաֆֆին իր հմայիչ վէպերի մէջ այդ ազատամբութեան ծրագիրն էր տալիս։ Արծրունին՝ կրա-

կոտ յօդուածներով Հայկական ինքնավարութեան այնքա՜ն գրաւիչ գաղափարն էր ժողովրդացնում, իսկ Բաֆայէլ Պատկանեան ռազմիկի սրտում մարտի մոխրածածկ կրակն էր բորբոքում... Նոյնիսկ Թիւքահայ գրողները՝ Ծերենց իր վէպերով և Փորթուգալեան իր յօդուածներով՝ Կովկաս էին ապաստանում ընդհանուր պրօպագանդը առաջ մղելու համար։ Վերձեցման խորհրդաւոր շրջան էր։ Եւ այդ մերձեցման մէջ կռուում, կոփւում էր ապագայ կռվի գաղափարն ու ծրագիրը...

Կառավարութիւնը այդ շատ լաւ գիտէր։ Լաւ գիտէր, որովհետև ռուսաց հիւպատոսները այդ միջոցներին Թիւրքաց Հայաստանի մէջ հայ տարրի ամենաջերմ պաշտպաններն էին, շատ դէպքերում նոյն իսկ գրգռողներ։ Ամենակասկածելի նամակներն և հրատարակութիւնները Թիւրքիա էին ուղարկւում նոյն հիւպատոսների միջոցով, ինչպէս և գրամ ու ամեն տեսակ օգնութիւն...

Բորբոքման շրջանը, աւա՜ղ, շատ երկար չը տևեց։ 80-ական թուականների կէսին սկսեց „քաղաքական գործադուլ“, — տիրեց լռութիւն Կովկասում, լռութիւն կ. Պոլիս, լռութիւն Եւրոպա։ Այդ ընդհանուր լռութիւնը, ճիշտ է, երբեմն-երբեմն աղմկւում էր հեծկլտող ժողովրդի ուժգին ճիչով կամ դեսպանական որևէ զեկուցագրով, բայց նա լինում էր շատ կարճատև և անանկատ, զուրկ տպաւորութիւնից...

Բայց ահա՜ 90-ական թուականները յուզիչ լուրերով։ 1890-ի յունիսի 8-ին „Զայնը հնչեց Էրզրումի լեռներէն“ և Կարինի յայտնի ընդհարումը նորից լարեց Կովկասեան հայերի „ենջած“ ուշադրութիւնը, մանաւանդ որ դրանից քիչ առաջ Վանի մօտ երկու հայ պրօպագանդիստների՝ Գօլշեանի և Աղբիպպասեանի սպանութիւնը թիւրք զինուորների ձեռքով քաղաքական կարևոր դէպքի արժէք էր ստացել արդէն։ Դրան յաջորդեց

Կ. Պոլսի առաջին ցոյցը, 1890 յուլիս 15-ին, „Հնչակեան“ կուսակցութեան մասնակցութեամբ։ Եւ այդ բոլորից յետոյ տեղի ունեցած դիւանագիտական մի քանի հարցապնդումներն ու փոքրիկ աղմուկը եւրոպական մամուլի մէջ՝ կովկասեան հայերի առջև վերականգնեցրին „Հայոց Հարցը“—թշուառ եղբայրների ազատութեան հին խնդիրը։

Դարձեալ շարժում և յուզմունք, դարձեալ երիտասարդ ուժերի մի նոր հոսանք դէպի Թիւրքաց Հայաստան և այս անգամ աւելի ուժգին, աւելի կազմակերպուած ձևով։ Շարժումը ընդհանրացաւ։ Նա մուտք գործեց գիւղերն անգամ։ Երևան եկան կուռ խմբեր և դրա հետ միասին պահանջ՝ կազմակերպելու բաժանբաժան ոյժերը։ 1890 թուի ամառն էր, երբ հիմնադրուեց յեղափոխական մի նոր կազմակերպութիւն՝ „Դաշնակցութիւնը“, որ նպատակ ունէր մի կողմից թև ու թիկունք լինել դէպի երկիր դիմող ուժերին, միւս կողմից՝ միացնել, դաշնակցել գոյութիւն ունեցող յեղափոխական մարմինները,—„Երիտասարդ Հայաստանը“ կազմած Թիֆլիզ, „Արմենիական“ խումբը՝ կենտրոնացած Վասպուրական, և „Հնչակեան“ կուսակցութիւնը՝ հիմնադրուած արտասահման։ Գործին յարեցին Հայ հասարակութեան ակնառու ներկայացուցիչներ, ինչպէս և երիտասարդութեան լաւագոյն ուժերը։ Նոյն այդ ժամանակն էր, որ Կարսի մօտ, Թիւրքաց Հայաստանի սահմանների վրայ, հանդէս եկաւ ապստամբական մի խումբ, երիտասարդ Կուկունեանցի ղեկավարութեամբ։ Ոգևորութիւնը այնքան զօրեղ էր, որ շատերը շտապեցին միանալ այդ խմբին, վճռած ներս խուժել Հայաստան և բարձրացնել ապստամբութեան դրօշը։

Սակայն ոգևորութիւնը շուտով ցրտուեց։

Կառավարութիւնը, որ քաջ գիտէր անցած-դարձածը և բոլորին հաշտ աչքով էր նայում, յանկարծ փոխեց իր „տեսակէտը“։ Պետերբուրգից ուղարկուած հրամանի

համեմատ՝ ոստիկանութիւնը ցոյց տուեց իր „ատամները“։ Մի քանի անձեր, որոնք Հայկական շարժման գլխաւոր ղեկավարներն էին համարուում, հրահանգ ստացան ձեռք վերցնել այդ գործից, „եթէ չեն ուզում ամենածանր պատասխանատուութեան ենթարկուել“։ Խիստ կարգադրութիւններ եղան դէպի Հայաստան փոխադրուող ղէնքերի և մարդկանց դէմ. տեղի ունեցան մի քանի խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Ի լրումն այս բոլորի՝ Կուկունեանի խումբը, որ սահմանի վրայ մի ընդհարումից յետոյ ձերբակալուած և բանտարկուած էր, ենթարկուեց անսովոր խստութիւնների և, ինչպէս յայտնի է, վերջումն էլ տաժանակիր աշխատանքների, „յօրինակ այլոց“...

Խստութիւնները սկսուեցին, ճշմարիտ է, բայց որոշ վերապահութեամբ։ Եւ այդ պատճառով կառավարութեան բոլոր կարգադրութիւնները Հայոց շարժման դէմ՝ աշխատում էին պահել գաղտնի, ծածկուած հասարակութիւնից, վարագուրուած։

Բնորոշ փաստ։ Հանրածանօթ մի հայ, Թիֆլիզաբնակ, 1891-ին կանչուում է Թիֆլիզի նահանգապետի մօտ, որ յայտնում է նրան, թէ կառավարութիւնը այժմ չէ կարող հաշտ աչքով նայել Հայկական շարժման, և այդ պատճառով պէտք է հեռու մնալ ոչէ պրօպագանդից։ Հայ գործիչը պատասխանում է. „Կովկասեան Հայերը պաերազմից յետոյ մինչև այժմ էլ այն համոզման մէջ են, որ կառավարութիւնը դէմ չէ թիւրքաց Հայերի շարժման, և այդ պատճառով ամեն ոք ձգտում է ըստ իր կարողութեան՝ օգնել տանջուող եղբայրներին։ Սակայն եթէ այժմ որևէ պատճառով կառավարութիւնը փոխել է իր Հայեցակէտը, իմ կարծիքով, լաւ կը լինէր պաշտօնապէս այդ մասին յայտարարել, որպէսզի թէ Հայերը զգոյշ լինեն և թէ ծանր թիւրիմացութիւնների առաջն առնուի“։

Նահանգապետը, համակրելով առաջարկին, յայտնում է, որ ինքը՝ անկարող ուէ քայլ անելու, կը զեկուցանէ կառավարչապետին, խնդրելով նրա կարծիքը։ Մի քանի օրից յետոյ բարեմիտ նահանգապետը տեղեկացնում է հետևեալը. „Ես յայտնեցի ձեր առաջարկը կառավարչապետին, սակայն նորին պայծառափայլութիւնը նկատեց, որ պաշտօնական յայտարարութիւն չէ կարող լինել՝ այն պարզ պատճառով, որ կառավարութեան քաղաքականութիւնը դէպի հայոց հարցը կարող է նորից փոխուել. այժմ այդ քաղաքականութիւնը հաշտաչքով չէ նայում հայոց շարժման, բայց մի քանի տարուց յետոյ նա կարող է փոխուել“...

Անցաւ երեք տարի։

1894 թուի աշնանն էր։ Սասունի լեռներից հնչեց քաջարի լեռնականների յուսահատ կոչը։ Շղթայած, բայց անընկճելի սասունցու աղտասէր ձայնը՝ աւելի ուժգին, քան նրա հնաձև հրացանի անզօր որոտը, թնդացրեց հայութեան սիրտը։ Բոլորի աչքերը դարձան դէպի Ցալոորիկը. յուզեց մինչև իսկ Եւրոպան։ Կ. Պոլիսը աղմուկեց. դեսպանական շրջաններում կրկին յարութիւն առաւ հայոց հարցը, և Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ միասին Պետերբուրգի միապետութեան պատուիրակն էլ, Պրժեվալսկի, ճանապարհ ընկաւ դէպի անմատչելի լեռները՝ քննելու հայկական „առաջին սարսափները“, լսելու ըմբոստ լեռնականների գանգատները...

Ամբողջ Եւրոպան հայոց հարցով էր զբաղուած։

Կարող էին միթէ լուռ մնալ հարազատ եղբայրները, կովկասեան հայերը, որոնց առաջ այդ օրից կանգնած էր մի պարտականութիւն — ամենամեծը մարդկային պարտականութիւններից։

Զբաւականացած մասնաւոր ձեռնարկներով, կովկաս-

եան հայերը շտապեցին պաշտօնական կերպարանք տալ իրենց ցանկութեան։ Շատ քաղաքներից բազմաթիւ ստորագրութիւններով դիմումներ եղան Էջմիածնի հայոց կաթողիկոս Խրիմեանին, պատգամաւորներ գնացին, առաջարկելով նրան՝ Պետերբուրգ գնալ և կովկասեան հայերի կողմից թագաւոր կայսրի զօրեղ աջակցութիւնը խնդրել թիւրքաց հայերի ազատութեան համար։ Կաթողիկոսը ենթարկուեց այդ տրամադրութեան և, չնայած ձմերային ցրտին ու զառամեալ հասակին, ուղևորուեց Պետերբուրգ, ներկայացաւ միապետին և հրապարակական մի ճառի մէջ այս խօսքերն արտասանեց՝ „Հայերի միակ պաշտպանը ռուսաց կայսրն է, որից և հայերը սպասում են օգնութիւն“։ Հեռագիրը անմիջապէս տարածեց ամեն կողմ հայոց եկեղեցու պետի այդ խօսքերը, որոնք ասուած էին այնքան վճռական, այնքան շեշտուած կերպով, որ մինչև իսկ մի փոքր աղմուկ բարձրացրին Կ. Պոլսի դիւանագիտական շրջաններում։ Պոլսի անգլիական դեսպան Գիլիպպ Քըրրի, հայկական շարժման ջերմ կողմնակից, անմիջապէս դիմեց պատրիարք Մատթէոս Խրիմեանին՝ յայտնելու իր զարմանքը „ամենայն հայոց կաթողիկոսի խօսքերի առիթով, արտասանուած մի այնպիսի բոպէին, երբ հայոց հարցը մի ջաղդային քննութեան նիւթ է, բոլոր մեծ պետութիւնների հովանու տակ“ . . .

Վրայ հասաւ 1895 թուականը։

Թուական յոյսերի և սպասելիքների։

Շարժումը երկունքի վերջին օրերումն էր։ Սպասելով եղբայրների մօտալուտ ազատութեան, կովկասեան հայերի ոգևորութիւնը հրաշքներ էր գործում։ Երկրի մէջ ամբողջ հայութիւնը իրեն զգում էր նոր կեանքի նախասենեակում և անհամբերութեան զօրեղ նշաններ էր ցոյց տալիս։ Պոլսում մշակւում էր բէֆօրմների ծը-

րագիրը։ Հակառակ Աբդիլ-Համիդի դաւերի՝ մի կա-
Եւրոպան յաղթանակի վրայ էր, — մայիսեան բէֆօրմ-
ների ծրագիրը խմբագրուած՝ պատրաստ էր . . .

Մնում էր մի բան, և ամենակարևորը սուլթանների
երկրում — գործադրել ծրագիրը։ Եւ հէնց
այն ժամանակ, երբ արհրաժեշտ էր կառավարութիւն-
ների կատարեալ համերաշխութիւնը՝ Կ. Պօլսի հրամա-
նատարի կամակորութիւնը ջախջախելու համար, — տեղի
ունեցաւ քաղաքական դաւ. դեսպան Ղելիդօվ հրա-
հանգուած իր կառավարութիւնից, երկգիմի դիրք բռնեց,
դաւաճանօրէն բաժանուեց իր պաշտօնակիցներից և քիչ
անցած՝ հրաժարուեց պաշտպանել ստիպողական
միջոցների գործադրութեան առաջարկը,
այն դէպքում, եթէ Թիւրքիան յօժարակամ չ'ընդունէր
հայկական բէֆօրմները։ Դա հայկական ողբերգութեան
նախանշանն էր։ Գերմանական դեսպանը, հաւա-
տարիմ իր կառավարութեան նենգ քաղաքականութեան,
„իւղ աւելացրեց կրակի վրայ", — պառակտումը սաստ-
կացաւ։ Սուլթանական պալատում նոր յոյսեր տածեցին։
Արևմտեան Եւրոպայից դիմումն եղաւ ռուսաց արտա-
քին գործերի մինիստր Լոբանով-Ռոստովսկուն, համոզե-
լու դիտումով, բայց ցարի մինիստրը պարզապէս կրկնեց,
որ „Ռուսաց կառավարութիւնը բացարձակապէս հա-
կառակ է սուլթանի վրայ ստիպողական միջոցների գոր-
ծադրութեան"։

Այդ օրից ամեն ինչ փոխուեց։ Եւ սկսուեց նոր շրջան։
Հակահայկական տեսակէտները, մինչև այդ գուցէ
մոխրի տակ ծածկուած, հրապարակ եկան՝ բուռն կեր-
պով, իրենց ամբողջ մերկութեամբ։ Մոռացուեցին հայ-
կական անցեալ ծառայութիւնները, մատուցած Ռուսաս-
տանին։ Մոռացուեցան ռուսաց միապետների պաշտօնական
խոստումներն ու համակրանքները։ Մոռացուեց ամբողջ
պատմութիւնը։ Միապետական կառավարութիւնը ցնցուեց,

երբ իր առաջ կանգնած տեսաւ մի ժողովուրդ, ըմբոստ՝ ստրուկ անցեալի դէմ, դժգոհ՝ արիւնոտ ներկայից և ձգտող՝ դէպի լաւագոյն ապագայ . . .

„Զը կայ Հայկական Հարց“ — այս եղաւ նշանաբանը։ Եւ հաւատարիմ դրան՝ „արևելեան քրիստոնեաների պաշտպանը“ բացարձակ, պաշտօնական հալածանք սկսեց ոչ միայն Հայոց Հարցի, այլև առհասարակ Հայութեան դէմ։ Արգելուեց գրել խօսել։ Ոստիկանական հսկողութիւն սկսուեց Կովկասից թիւրքաց Հայաստան և թիւրքաց Հայաստանից Կովկաս անցնողների վրայ։ Սկսուեցին խուզարկութիւններ, ձերբակալութիւններ և բանտարկութիւններ. աքսորը եղաւ սովորական։

Ամեն ինչ ընկաւ կասկածի, հսկողութեան տակ։ Հայերին արգելեցին նոյնիսկ փող հաց և ապաստան տալ թիւրքահայ գաղթականներին։ Արդասիրական օգնութեան գործը դարձաւ քաղաքական յանցանք։ Հայոց մամուլին և բարեգործական հիմնարկութիւններին արգելուեց հրաւէրներ կարդալ և փող հանգանակել՝ յօգուտ անտուն գաղթականների և հալումաշ փախստականների։ Մտքերը խաղաղեցնելու նպատակով՝ բարձրագոյն հրամանով թոյլատրուեց հանգանակութիւն անել յօգուտ գաղթականների — քարերը կ՚աղաղակէին, եթէ թոյլ չտուէր — բայց կենդանի գործը մեռած տառ դարձնելու համար, կարգադրուեց, որ այդ փողերը ուղարկուեն կովկասեան կառավարչապետին, որ միայն իրաւունք ունէր, ոստիկանութեան միջոցով, փող բաժանել գաղթականներին։ Բայց գիտէք՝ ինչ կը նշանակի „ոստիկանութիւն“ Ռուսաստանում։ Դա այնքան խիստ է և անմատչելի, որ գաղթականները աւելի լաւ էին համարում քաղցած մնալ, քան թէ ոստիկանութեան դիմել։ Եւ եթէ դիմէին էլ, հնՀ է միթէ հազար ու մի պաշտօնական ձևականութիւններով փող ստանալ մի այնպիսի

բարձր հիմնարկութիւնից, ինչպէս է կառավարչապետի դիւանատունը։ Այդ պատճառով է ահա, որ ճիշտ այն ժամանակ, երբ Կովկասի զանազան կողմերում գաղթականները հալւում էին քաղաքից կամ փնտանում գոմերում, երբ տարափոխիկ հիւանդութիւնները կոտորածներ էին անում նրանց շրջանում, — հաւաքած փողերը աւելի քան 60 հազար ռուբլի, մնում էին ա ն ձ ե ռ ն մ խ ե լ ի՝ կառավարչապետի դիւանատանը, և երևի դեռ երկար կը մնան, այն խաբեբայ պատճառաբանութեամբ թէ „կարիք չկայ“, մինչև որ կը գայ ժամը մի „աստուածահաճոյ“ գործ կատարելու, ուղղափառ եկեղեցի կառուցանելու Անդիժանում կամ Բուխարայի խանութեան ոևէ քաղաքում...

„Կառավարչական հոսանքը“ այնքան փոխուեց, որ ոչ միայն թոյլ չէին տալիս նոր բան գրել յօգուտ թիւրքահայերի, այլև շատ գրքեր, որոնք մի քանի տարի առաջ ռուսաց գրաքննիչների թոյլտուութեամբ տպագրուած էին Կովկաս, արգելուեցին երկրորդ անգամ տպագրելու։ Այդպէս, օրինակ, Բաքինի „Կայծերը“, „Խենթը“, „Սամուէլը“, որոնք լոյս են տեսել Թիֆլիզում և որոնց մէջ բնականաբար մի հատ բառ անգամ չկայ Ռուսաստանի դէմ, թոյլտուութիւն չստացան երկրորդ անգամ տպագրելու և այդ պատճառով գտեղի ունեցաւ արտասահմանում, Վիէննայի Մխիթարեան միաբանութեան տպարանում։ Դոյնը կարելի է ասել և ուրիշ շատ գրուածքների մասին։ Փորձ փորձեցին մի քանի գրքեր տպագրել Պետերբուրգում և Մոսկվայում, ուր հայոց տպարաններ կան և ուր, ինչպէս մայրաքաղաքներում, ցենզօրական պայմանները համեմատաբար թեթև են։ Բայց անօգուտ։ Շատ շուտով Պետերբուրգի գրաքննիչներն կարգադրութիւն ուղարկուեց շատ խիստ լինել հայերէն գրքերի վերաբերմամբ, և շնորհիւ այդ կարգադրութեան՝ այժմ երաշել անգամ չէ կարելի

շատ հասարակ բրոշիւրների վերատպութեան մասին։ „Հայոց Հարց“ բառն անգամ արգելւած է։ Սահմանի միւս կողմը կատարւող ողբերգութիւնների մասին՝ և ոչ մի ակնարկ։ Ամենախիստ միջոցներ են ձեռք առնւած Եւրոպայից եկող հրատարակութիւնների դէմ։ „Դրոշակ“ կարդալը քաղաքական յանցանք է։ Ոչ միայն յեղափոխական լրագիրները, ինչպէս „Հնչակ“, այլ նոյնիսկ չափաւոր „Արմենիա“, „Լ՚Արմենի“ արգելւած են, թէև ոչինչ չեն գրում ռուսաց կառավարութեան դէմ։ Նոյնը՝ բոլոր հրատարակութիւնների վերաբերմամբ. բաւական է, որ հայերէն է։ Այն, ինչ կարելի է տպագրել ռուսերէն լեզուով, մինչև անգամ վրացերէն, թիւրքերէն, նոյնը չէ կարելի հրատարակել պետութեան „համահաւասար“ հպատակ հայոց լեզուով, որովհետև այդ „աչքի փուշ“ դարձած հայերի մասին ամեն տեղ առանձին կարգադրութիւններ են ուղարկւած։ Այդ նոյն պատճառով դարձեալ, Թիֆլիզում կամ Կովկասի ուրիշ ոևէ քաղաքում, ցանկացողը կարող է ռուսերէն դասախօսութիւններ կարդալ, իսկ հայերէն — երբէք։ Դա էլ արգելւած է։

Աւելի նախանձելի չէ հայոց թատրոնի վիճակը։ Շատ պիէսներ, գլխաւորապէս պատմական կեանքից վերցրած, արգելւեցին։ Քառորդ դար կը լինի, որ Թիֆլիզի հայոց թատրոնը Վարդանանց տօնին, — որը միաժամանակ և եկեղեցական տօն է, — ներկայացնում էր մի պատմական-ժողովրդական ողբերգութիւն՝ „Վարդանանց պատերազմը“՝ շատ հաճելի ամբոխին։ Պիէսը արգելւեց։ Եւ դա այն պատճառով, որ նրա հերոսը՝ Վարդան Մամիկոնեան, որ ապրում էր մեզանից 14 դար առաջ, կարող է „հայրենասիրական“ զգացումունքներ ներշնչել հանդիսականներին։ Նոյն տեսակէտով արգելւեց և մի այլ ողբերգութիւն՝ „Շուշանիկը“, որ յատկապէս սիրելի էր Թիֆլիզի ժողովրդին, որովհետև մինչև

այժմ էլ այդ քաղաքում գոյութիւն ունի կրօնասէր հերոս-օրիորդի անուան նուիրուած եկեղեցին, շրջապատուած կրօնական լեգենդաներով... Եւ որպէսզի գաղափար կազմէք, թէ ինչքան ե ր ա խ ա յ ա կ ա ն է այդ կարգադրութիւնը, բաւական է յիշել, որ „Վարդանանց պատերազմը“, որ տեղի ունեցաւ 5-րդ դարում՝ քրիստոնեայ հայերի և կռապաշտ Պարսկաստանի մէջ, մինչև այժմ էլ ազատ կերպով ներկայացնում է Պարսկաստանում, ուր մի քանի անգամ պարսից թագաժառանգը և պարսից մեծամեծները գնացել են Թաւրիզի հայոց թատրոն՝ տեսնելու այդ „վտանգաւոր“ ներկայացումը...

„Ցեղական“ խստութիւնները բաւական չէին, և ահա Կ. Պոլսից ստացւում է դեսպան Ղեղեդօվի մի գրութիւնը, որով նա՝ խոնարհւելով թիւրքաց կառավարութեան „պահանջի“ առջև, մինիստրութեան միջոցով առաջարկում է կովկասեան կառավարչապետին „հարկաւոր միջոցներ ձեռք առնել, որպէսզի Թիֆլիզի հայոց մամուլը դադարի Թիւրքիայի դէմ յարձակումներ գործելուց“ և առհասարակ „Կովկասի հայերը յետ կանգնեն Թիւրքաց հայերին գրգռելուց“, քանի որ դա „փչացնում է երկու հարևան պետութիւնների բարեկամական յարաբերութիւնները“: Կովկասի հայատեաց իշխանութեանն էլ այդ էր պակաս: Խստութիւնները տանտապատկուեցին և, իբրև հետևանք այդ բոլորի, ամբողջ Ռուսաստանը ականատես եղաւ, թէ ինչպէս 1895 թուականից իվեր՝ հսկայական հալածանքը քանի գնաց՝ աճեց, զարգացաւ և ընդունեց ք ա ղ ա ք ա կ ա ն պ ա տ ո ւ հ ա ս ի կերպարանք:

Հասան ոճրի տարիները, 95-96 թուականները:

Կատաբուեցաւ պատմութեան մէջ չլսուած, չտեսնուած անարդարութիւն: Նոյն այդ դժբախտ օրերին, երբ ամ-

բոլոր Հայաստանում իրագործւում էր Մեծ-Մարդասպանի ահռելի ծրագիրը — կոտորել հայերին՝ հայոց հարցը վերջնականապէս կործանելու համար. երբ Տրապիզոն, Էրզրում, Ակն, Ուրֆա, Վան, Կ. Պոլիս արեան գետեր էին հոսում, երբ հարազատ եղբայրների երկրից փչում էր խողխողւած դիակների հոտ. երբ բռնապետի սուրը մահ էր տարածում խաղաղ ժողովրդի անպաշտպան հայրենիքի բոլոր ծայրերում,—նոյն այդ դառն օրերում կովկասեան հայութեան խստիւ արգելւած էր ոչ միայն բողոքել, այլ մինչև իսկ վշտակցել, ոչ միայն օգնութեան ձեռք մեկնել, այլև լաց լինել... Եւ նա ստիպւած էր, իբրև ստրուկ, կուլ տալ իր արտասուքները, թաղցնել իր անսահման վիշտն ու կսկիծը...

Եւ ո՞րպիսի հակապատկեր:

Ճիշտ այդ ժամանակ էր, որ ցասման թնդիւններ էին տարածւել ամբողջ Եւրոպայում. — բոլոր պարլամենտներում, հրապարակական գասախօսութիւններ, ամբողջ շարժում մամուլի մէջ: Հայկական կոտորածները անվերջ դասախօսութիւնների և գրելու առարկայ էին: Լոնդոնում հայասէր միտինգները յաջորդում էին միմեանց, իսկ Պետերբուրգում տիրում էր գերեզմանական լռութիւն: Փախստական սասունցիները՝ հազարաւոր վերստեր անցնելով, Լոնդոն հասան և ջերմ ընդունելութիւն գտան բոլոր շրջաններում, ինչպէս և Հօվարդենի դղեակում, ուր Գլադստոն յուսատու խօսքերով և բողոքի մռնչիւնով ընդունեց արիւնաքամ ժողովրդի բեկորները, մինչդեռ Պետերբուրգում՝ փախստական խղճուկ հայը անկիւն չէր գտնում նոյնիսկ „գիշերային ապաստարանների“ մէջ: Պարիզում կոչերը յաջորդում էին կոչերին, գրքեր էին լոյս տեսնում, փողեր էին հաւաքում յօգուտ որբ և քաղցած հայերի, իսկ Թիֆլիզում յիշատակութիւն անգամ չէին թոյլ տալիս: Շվէյցարիա կոմիտէներ էին կազմւում յանուն հայերի. Դանիայում ինքը թագուհին

էր անցել հանգանակութեան գործի գլուխը հեռաւոր Ամերիկայում, մինչև անգամ Գերմանիայում, միսիոնարական ընկերութիւններ էին կազմում օգնելու մի ամբողջ ժողովրդի խեղճ մնացորդներին,—իսկ Ռուսաստանում, այն երկրի մէջ, որը 1878 թուին Սան-Ստէֆանոյի դաշնագիրը ստեղծեց, որի սահմանների վրայ հայկական արիւնը յաճախ խառնուեց ռուս զինուորների արեանը՝ յանուն ընդհանուր գործի, փախստական հայը գլուխ դնելու տեղ չստացաւ և ոչ իսկ իրաւունք՝ ողբալու այն արիւնաներկ դժբախտութիւնը, որի նմանը պատմական տարեգրութիւնները չեն յիշում...

Հայը կարող է մոռանալ այդ:

Կան վշտեր, որոնք չեն մոռացուում: Էրզրումի կոտորածների ժամանակ, այն նոյն քաղաքում, ուր 1828-ին Էջմիածնի կաթողիկոսի կոնդակն էր տարածուում՝ հրաւէր կարդալով հայերին աջակից և ուղեկից լինել ռուսաց զօրքին, ուր 1856-ին, 1877-ին, ինչպէս և 1896-ին հայ ազգաբնակութիւնը իր կեանքն ու պատիւն էր զոհաբերում „ռուսասիրութեան համար", այդ նոյն քաղաքում, ռուսաց հիւպատոսարանը գերմարդկային անխղճութեամբ գոցում էր դռները բռնաւորի սրից խուսափող կանանց և մանուկների առաջ, փակում իր ականջները յուսահատութեան աղաղակների հանդէպ: Եւ այդ այն թաղի մէջ, ուր մահմեդական Պարսկաստանի հիւպատոսը՝ արտասուքը աչքերին, իբրև մարդ՝ ապաստան էր տալիս եաթաղանից վրիպած քրիստոնեայ զոհերին...

Անմոռանալի են այդ տեսակ փաստերը:

Յետագայ դէպքերը բաց արին շատ գաղանիքներ, անարգ քաղաքականութեան նոր ապացոյցներ: Երբ Մայիսեան ծրագիրը, թէև ընդունուած բոլոր պետութիւններից, հանդիպեց օսմանեան կառավարութեան տա-

ատանումներին, դիմադրութեան և ապա սովորական խա-
բին, որի հետևանքն եղաւ դժգոհութեան ընդհանուր
մրմունջ հայկական նահանգներում, — Պետերբուրգի
կառավարութեան արտաքին գործերի մինիստրը լեռզո-
ութիւն տուեց սուլթան Աբդիւլ-Համիդին՝ ընդ միշտ
լուծելու այդ „մրմունջը“, որ նկատուած էր իբրև
յեղափոխութեան խմորումն։ „Պէտք է կանգնեցնել
հայկական շարժումը՝ ինչ միջոցով և լինի“, — այդ
եղաւ Լոբանով-Ռոստովսկու գաղտնի գրութեան իմաստը,
ուղղած թիւրքաց կառավարութեան։ Ընդունողի քաջա-
լերութիւն էր այդ, դիպլոմատիական հաւանութիւն՝
սուլթանական ծրագիրներին։ Եւ քաջալերուած այդ „լեռ-
զութիւնից“՝ Եղբեզ-Բէօշկի դեռ՝ արձակեց իր գժո-
խային հրամանը։ Արիւնը հոսեց գետի նման . . . Եւ երբ
շատ քիչ անցած՝ մինիստր Լոբանով-Ռոստովսկի, Նիկոլայ
կայսեր հետ՝ Վիեննայից վերադառնալիս՝ կայսերական
գնացքի մէջ յանկարծամահ եղաւ, Կ. Պոլսի ֆրանսիական
դեսպան Կամբոն, տեղեակ նրա ստորագոյն արարքին, ար-
դարացի ցասումով բացականչեց. „Լ ո բ ա ն ո վ խ ե ղ-
դ ւ ե ց հ ա յ ո ց ա ր ե ա ն մ է ջ“. . .

Եկան այլ յաջորդներ, բայց միշտ նոյն ատելութեամբ
դէպի ազատագրական այն խլրտումը, որ սկսուած էր Արեան
ձորերում, մարդկային կեանքի ձգտող մի խաղաղասէր
ժողովրդի հայրենիքի մէջ։ Այդ ատելութիւնը կրկնակի
էր, անսանձ։ Արիւնաքամ ժողովուրդը, արդէն յոշոտուած
ու ուժասպառ, այլևս չունէր Պետերբուրգի աչքում այն
քաղաքական արժէքը, որ վայելում էր երբեմն, տարիներ
առաջ։ Հայկական ինքնավարութեան գաղափարը, նոյն
իսկ բարենորոգման համեստ մի ծրագիր, զուրկ քաղա-
քական բնոյթից, բայց ապահովող հայերի կեանքն ու
գոյքը, նրանց գոյութիւնը, — դարձաւ վ տ ա ն գ ա ւ ո ր
Ռուսաստանի համար և ենթակայ նրա հալածանքին։

Եւ ամեն անգամ, երբ հեծկլտացող ժողովրդի կեն-

սական ուժերը յուսահատական շարժումներ էին գործում՝ Եւրոպայի ծանրացած ականջներին և մաշված խղճմտանքին հաղորդելու իրենց ցասման և բողոքի աղաղակները—բողոք, որ մի օր հնչեց Զէյթունի լեռներում, 1896-ի ապստամբութեան ժամանակ, քիչ յետոյ բռնութեան կենտրոնում՝ Կ. Պոլիս, Օսմանեան բանկի պատերի մէջ, և կամ Վասպուրականի սահմանների վրայ, 1897 թուի յունիսին,—և երբ յուզած Եւրոպան փորձեր էր անում, թէև թոյլ, արդարութեան ձայն բարձրացնելու յօգուտ տանջուող և կուլող հայութեան, միշտ ամեն տեղ „արևելեան քրիստոնեաների պաշտպանն“ էր, որ հանդէս էր գալիս իբրև դիմադրող, հակառակորդ և յաճախ՝ իբրև բացարձակ թշնամի...

Հայութիւն՝ առանց ընդհանուր ձգտումների, Հայաստան՝ առանց հայութեան,— դա է ահա այժմեան Ռուսաստանի պետական ծրագիրը Փոքր-Ասիայի մէջ, նրա քաղաքական դաւանանքը Կովկասեան սահմանների վրայ, —նոյնքան կորստաբեր հայութեան համար, որքան և ամօթաբեր ռուս անուան...

Գաղթականների խնդիրը — դրա սև էջերից մէկն է։ Լսեցէք այդ տխուր պատմութիւնը։

—o—

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

(ՏԱՄՆԵՕԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Հայ գաղթականները սահմանազլխին. — Մարմնացած թշուառութիւնը. — Փախը եւ դարձը. — Պաշտօնական շրջաբերականներ. — Ռուսահպատակութեան խնդիրը. — Բռնութեան „կընուռը“. — Հալածուածների կարաւանը. — Ցիրուցան ժողովուրդ. — Դժգոհութեան շղթան:

Շարան շարան գնում են: Ոտաբոբիկ, հեւ տալով, հաղիւ ծածկած մերկութիւնը ծանր աշխատանքից կոշտացած արեւահար մարմնի, կնճռոտ՝ տարիքից առաջ, բայց վերջին ուժերը լարած՝ քայլում են նրանք... Ոսկրացած ոտքերի քալուածքը հաստատ է, վճռական: Խորունկ աչքերի փայլածքը բերկրալից է, յուսատու:

Քայլում են նրանք: Քայլում են դէպի վաթան, դէպի երկիր, որի սահմանները հրէն է, սեւին են տալիս հորիզոնի ծալքերում՝ դէպի այնտեղ, ուր այնքա՞ն վշտերի մշուշի տակ՝ յոյսերի ծիրն է ծլում:

Ո՞վքեր են դրանք, „հիւրասէր“ բռնութեան ափերից դէպի անհիւրընկալ բռնապետութեան օջախը քայլող այդ մարդիկ՝ կին, երեխայ, հարս, աղջիկ, ծերուկ, որոնք իրենց առասպելական աղքատութեան մէջ, տանջանքի ու մաշուածքի այդ չտեսնուած պատկերի տակ՝ դեռ այնքան կորովով, այն աստիճան յուսալից են:

— Ո՞վքեր են դրանք:

— Հայաստանցիներ:

Քանի մի տարի առաջ, — կոտորածների տարին էր այդ — երբ արեւան փոթորիկը հայ երկրի մի ծայրից

մինչև միւսը փչեց, երբ Կ. Պոլսի արքունական սենեակների մէջ յղփացած բռնապետութիւնը իր վախի ու ամբիծի սանձերը արձակեց և սկսեց յորդառատ հոսանքը անմեղ արեան, տեղի ունեցաւ այն մեծ փախը, որի նմանը վաղուց չէր տեսել ասիական պատմութիւնը։ Գաղթականներ չէին դրանք և ոչ էլ փող, հանգիստ, նորութիւն որոնող զարիբականներ, որոնք մի երկրից միւսն են թափառում։ Փախստականներ էին դրանք։ Սիրող երկիրը, բայց հալածական երկրից։ Աշխատող, բայց թեւերը կոտրած։ Հողին զուրբան, բայց աստանդական։ Ցիսուն հազար էին դրանք, արիւնարբու բռնութեան զոհ գնալ չցանկացողները, որոնք ապաստանեցին Կովկաս, երբեմն հիւրընկալ և այժմ „անհիւրասէր“ երկիրը։ Դառն օրեր քաշեցին։ Սև օրեր տեսան։ Եւ վշտի ժամերին՝ իրենց փախը յիշեցին։

— Հրէն է, սահմանը, գոչեց ջրոտ, կիսամերկ ալաշկերտցին, ձեռքը դէպ՝ արևելք մեկնելով։ Եւ սահմանագլխի բլրին կանգնած, կուրծքը լի վաթանի վշտերով, նա վերջին անգամ յետ նայեց։ Խօսք չէր դուրս գալիս բերանից. ձայնը որկորում՝ չորացաւ։ „Մնա՛ք բարով, սարեր-ձորեր, և դուք, կանաչ դաշտեր, աղբերակներ. ինձի չի մոռնաք, ես ձեզի չեմ մոռնալու“։

Եւ չմոռացաւ։ Տարիներ սպասեց, միշտ աչքը տնկած վաթանին։ Ու ամեն գիշեր, անկողին մտնելիս, նա միշտ այն էր մրմնջում. „Մնա՛ք բարով, սարեր-ձորե՛ր, ինձի չի մոռնաք, ես ձեզի չեմ մոռնալու“։

Ունայն յոյսեր։

Երազում էին հանգիստ գտած լինել, և ահա մի օր հեռագիրը հաղորդեց „բարձրագոյն հրամանը“, ուղղած հալածական դժբախտներին։ Եւ հիմնւած այդ հրամանի վրայ՝ կովկասեան կառավարչապետը 1901 նոյեմբերին հետևեալ շրջաբերականը արձակեց.

Ի կատարումն Բարձրագոյն հրամանների, որոնք տրված էին 1901 թուի փետրուարի 1-ին և յուլիսի 29-ին՝ այն թիւրքահպատակ հայ փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի մասին, որոնք զանազան ժամանակ, ըստ կոչած 1893 թուից, գաղթել են մեր սահմանները, առաջարկում եմ ձեր գերազանցութեան յայտնել ձեզ յանձնուած նահանգի սահմաններում գտնուող հայ փախստականներին՝ հետևեալը.

1) Զանազան ժամանակներում, սկսած 1893 թուից, Կովկասեան երկրի սահմանները իրենց կամքով եկած թիւրքահպատակ հայերին, որոնք ցանկանում են կամաւորապէս, իրենց հաշուով, հեռանալ կայսրութիւնից, համապատասխան աջակցութիւն ցոյց կը տրուի այդ բանի համար։

2) Մնացած այն բոլոր հայ փախստականներին, որոնք չեն ցանկանայ գաղթել արտասահման, թոյլ է տրւում մնալ իրենց այժմեան բնակած տեղում և գրաւել գիւղական համայնքների վրայ, եթէ այդ բանին կը համաձայնուեն վերջինները (141—146 յօդ. 9 հատ. առանձին յաւելուածի). հակառակ դէպքում, 1899 թուի հրատարակութեան 9-րդ հատորի 564-րդ յօդուածի 9-րդ պրակի զօրութեամբ, նրանց թոյլ է տրւում գրաւել մեշչանների (քաղաքային) հատարակութիւնների վրայ։ Միևնոյն ժամանակ վերոյիշեալ անձերից նրանք, որոնք կը ցանկանան բնակութիւն հաստատել ներքին նահանգներում, թոյլ է տրւում Ռուսաստանի հպատակութիւն ընդունելուց յետոյ, ճանապարհ ընկնել իրենց հաշուով՝ երկաթուղիների էժանացրած սակագնով, իրենց ընտրած տեղերը, Կովկասեան երկրից դուրս, և այդպիսի անձանց առանց արգելքի կը տրւեն պատշաճաւոր անցագրեր։

3) Թէ Կովկասեան երկրի սահմաններում մնացող և թէ ներքին նահանգները գնալ ցանկացող հայ փախստականները պարտաւոր են ռուսաց հպատակութիւն ընդունել. իսկ ռուսաց հպատակութիւն ընդունել չցանկացողները պարտաւոր են անյապաղ հեռանալ ռուսաց կայսրութեան սահմաններից։ Միևնոյն ժամանակ հայ փախստականներին իրաւունք է տրւում այժմ և եթէ Ռուսաստանի հպատակութեան մէջ մնալու, իբրև բացառութիւն 1899 թուին հրատ. 837 և 839 յօդուածների։

4) Հայ փախստականները 1902 թուից սկսած ենթակայ

են զենուորագրութեան՝ կայսրութեան մեացած ազգաբնակութեան նման։

5) Գիւղացիների հողային բարեկարգութեան ժամանակ Կովկասում, 2-րդ կէտում յիշած անձանց, եթէ նրանք կը վերաբնակուեն արդէն եղած գիւղերում՝ որոնք դեռ բարեկարգութիւն չունեն, իրաւունք չէ տրւում հողաբաժին ստանալ։

6) Քաղաքներից դուրս անշարժ գոյքեր ձեռք բերելու իրաւունքը Կովկասում թոյլ է տրւում գաղթական հայերին կամ նրանց սերունդներին ոչ վաղ՝ քան ուսաց հրպատակութիւն ընդունելուց քսան տարի յետոյ, և

7) Վերև բերած կանոնները տարածւում են այն փախստական հայերի վրայ, որոնք եկել են Կովկասի սահմանները մինչև 1901 թւի փետրուարի 1-ը. իսկ վերոյիշեալ ժամանակամիջոցից յետոյ եկածները դուրս են ուղարկելու կայսրութիւնից։

Վերոյիշեալին կցում եմ, որ Բարձրագոյն հրամանը ի կատար ածելու կարգի մասին, հայ փախստականների դրութիւնը կարգաւորելու հարցի վերաբերմամբ, ես առանձին ցուցմունքներ կը տամ ի գործադրութիւն։

Սենատոր-գեներալ-ադիւտանտ Իշխան ԳՕԼԻՑԻՆ

„Առանձին ցուցմունքներ կը տամ“...

Դրա մէջն է կարևորը, վճռականը, իսկական օրէնքը... Շրջաբերականի միւս մասերը օրէնքի ձևական յիշատակութիւնն է լոկ, այնքա՜ն դատարկահնչիւն Գոլիցիների համար, որոնք յիշում են օրէնքը այն ժամանակ միայն, երբ հարկաւոր է ոչնչ կարգադրութեան իսկական խմաստը քողարկել, ծածկել, երբ հարկաւոր է մթնացնել ժողովրդի առանց այն էլ մութ աչքերը։

„Ցուցմունքները“, ի հարկէ, տրւեցին, բայց գաղտնի, անծանօթ՝ սովորական մահկանացուներին։ Եւ իբրև արդիւնք այդ ցուցմունքների, 1902 թւի օգոստոսի 5-ին, հրատարակուեց Թիֆլիզի ոստիկանապետի դաժան հրամանը.— յայտնել հայ գաղթականներին, որ եթէ մինչև

տան օր չը վերադառնան Թիւրքիա, կը համարեն ռուսահպատակ...

Ցատանման նշան անգամ չերևաց։ Սարսափահար ռուսահպատակութեան մոքից՝ նրանք վճռեցին վաթանի ճամբան բռնել, հայրենիք վերադառնալ։

Ահա և դարձը։

Դարձ։ Որքան ցանկալի, բայց և որքա՜ն ճնշող ու վտանգաւոր։ Փակւած ճամբաների բացումն չէր այդ, որին այնքան տարուց ի վեր սպասում էր աստանդական ժողովուրդը և ոչ էլ մի խղճահարւած հրաւէր, ստացւած Թիւրքաց կառավարութիւնից։ Ոչ։ Ստիպողական մի դարձ, „դիպլոմատիական“ հալածանք, նենգամիտ մի խաղ է դա, դրւած օրէնքի խաբուսիկ ձևերի տակ։ Մանրամասնները, ստացւած բռնութեան սահմանագլխից, այն տխուր վայրերից, ուր հալածականների ախ՛ը աշնանային փոթորկի դաշնակն է կազմում, բաց են անում ողբերգական տեսարան, լուսաւորւած այնպիսի օտարօտի գոյներով, որ միամիտներին անհաւատալի և խորաթափանցներին՝ չափազանց պիտի թւին։ Սակայն տեղեկատուները վստահելի են, գիտակ գործին։

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

„... 1902 թւի օգոստոսի 11-ն էր։ Թիֆլիսի երկաթուղու կայարանը անսովոր, յուզիչ տեսարան էր ներկայացնում։ Պլատֆորմի վրայ եւ երրորդ կարգի դահլիճում ասեղ գցելու տեղ չկար։ Հայ փախստականներն էին, որոնք վերադառնում էին Թիւրքաց Հայաստան, բոլորն էլ ուրախ, ոգեւորւած։ Ահա խփում է երկրորդ զանգը՝ դէպի Կարս սլացող գնացքի։ „Մնաս բարովների“ աղաղակը ականջ էր խլացնում։ Խփում է երրորդը—գնացքը շարժւում է։ Ոգեւորւած „ուռան“ գոչեցնում է կայարանը։ Դա Թիֆլիսից մեկնող առաջին խումբն էր՝ բաղկացած մօտ 300 հոգուց։

„Միւս օրը քաղաքում օրւայ հարցը գաղթականների գնալն էր։ Այդ օրը երեկոյեան, ինչպէս նախընթաց օրը,

կայարանում կրկին նոյն բազմութիւնը, նոյն տեսարանը, նոյն ոգեւորութիւնը։ Հետեւեալ օրերին, երեկոները, կայարան էր հաւաքւում անապին բազմութիւն՝ տիկիններ, օրիորդներ եւ երիտասարդներ ու գարձեալ ուռաներով, ոգեւորութեամբ, ճանապարհ էին դնում իրենց եղբայրներին։ Հայ հասարակութեան ուրախութիւնը մեծ էր։ Գաղթականները վերադառնում էին այն երկիրը, որի հետ կապած են այնքան յոյսեր։ Ի՞նչպէս չ՝ոգեւորել...

„Ոստիկանութիւնը չարել, յանկարծակի էր եկել. երբէք չէր ուզում հաւատալ, որ գաղթականները յետ կը գնան։ Բայց ոչինչ չէր կարող անել, որովհետեւ գեռ կարգադրութիւն չէր ստացել։ Եւ երբ ոստիկանապետին յայտնեցին, որ երկու օրւայ ընթացքում մօտ 800 գաղթական արդէն հեռացել են Թիֆլիսից, նա չէր ուզում հաւատալ .. Հոսանքը քանի գնաց սաստկացաւ։

„Ահա եւ գաղթականները Կարսում։ Կարսի ոստիկանութիւնը, գաղթականներին՝ վագոններից իջնելուն պէս չրջապատելով՝ տարաւ, բանտարկեց։ Երեք օր շարունակ կանչում էր նրանց ներկայացուցիչներին եւ հայհոյելով, նոյնիսկ ծեծելով, ստիպում էր ռուսահպատակութիւն ընդունել։ Սակայն երբ տեսաւ, որ չեն ընկճւում, յուսահատ՝ արձակեց։

„Մինչեւ օգոստոսի 26-ը ամէն օր երկաթուղին Կարս էր լքցնում մեծ խմբերով գաղթականներ։ Այդ ժամանակամիջոցում գործի եկաւ եւ Թիւրքայ հիւպատոսը։ Թիւրքիան մտադիր չէր գաղթականներին յետ ընդունել։ Համոզած, որ այդքան մեծ բազմութիւն ներս խուժելով սահմանից՝ անապին աղմուկ կը հանէ եւ կարող է այդ աղմուկից եւրօպական կամ ռուսաց միջամտութիւն առաջ գալ, հիւպատոսը ամէն հնար գործ դրեց, որ արգելի այդ հոսանքը դէպի սահմանագլուխ, խոստանալով հեռացրել գաղթականների անունից Կ. Պոլիս եւ խնդրել սուլթանից՝ թոյլատրութիւն ներս մտնելու։ Բայց որովհետեւ գաղթականները համոզած էին, որ խնդրի պատասխանը մերժում պէտք է լինի եւ այդպիսի պատասխան ստանալուց յետոյ՝ չատերը կը թուլանան ու կը հրաժարւեն դէպի սահման գնալ, մերժեցին հեռագիր խմելը եւ օգոստոսի 25-ին, երկուշաբթի օրը, առաջին խումբը, 270 հոգի, դուրս եկաւ Կարսից դէպի սահմանագլուխ։ Ճանապարհին իջեւանած հայ գիւղերում նրանց ընդունում էին մեծ ոգեւորու-

թեամբ։ Մի քանի օրում սահմանագլխի Բաշգիւղ, Սթեանան, Զիլախլի, Արմաղու, Զուրուկ, Դիւլանթափ եւ Ղարափունդար հայ գիւղերը բոլորովին լքցուեցին գաղթականներով։ Այլեւս ընդունելու տեղ չկար։ Ամեն մի տան միջին թւով չորս հոգի էր ապրում, եւ հիւրասէր բասենցին բոլորին կերակրում էր անտրտունջ, եղբայրաբար։

„Որոշուեց, որ չորեքշաբթի առաւօտ բոլոր գիւղերից գաղթականները հաւաքուեն Բաշգիւղ եւ այդտեղից շարժուեն դէպի Թիւրքաց սահմանը։ Սահմանագլխի գիւղերում հաւաքուածների թիւը հազարից աւելի էր։ Դէպի սահման գնալու ցանկութիւն էին յայտնել եւ այդ գիւղերում բնակութիւն հաստատած գաղթականները, որոնց թիւը հասնում էր 1,500-ի. այնպէս որ դէպի Թիւրքաց սահմանը պէտք է գնային մօտ 2,600 տղամարդ, կին եւ երեխայ։ Երբ առաջին խումբը Կարսից շարժուեց, գաղթականների խնդրով՝ Կարսի յաջորդը այդ մասին խմաց ուեց նահանգապետին, որը պատասխանեց, թէ ինքը արդէն կարգադրել է, որ ճանապարհին ոչ ոք իրաւունք չունենայ արգելել եւ նոյնիսկ հարցնել՝ թէ ո՞վքեր են եւ ո՞ւր են գնում։ Բայց դրա հետ միասին տեղեկութիւն եկաւ, որ Սթեանան գիւղի սահմանապահ զօրքի գլխաւորը յայտնել է՝ թէ ով որ համարձակի անցնել սահմանը՝ գնդակահար կը լինի։ Գնդի հրամանատարը հրահանգել էր հնարաւորութեան չափ խիստ հսկել սահմանը, քանի գաղթականները սահմանագլխի գիւղերումն են։ Լուրը սկզբում կայծակնահար արաւ բոլոր գաղթականներին, բայց յետոյ կարծուեց, որ կարող է թիւրիմացութիւն լինել, որովհետեւ ոչ ոք չէր ուզում հաւատալ, թէ թոյլ տալով այդպիսի մեծ բազմութեան անարգել անցնել սահմանը տարածութիւն՝ Թիֆլիսից մինչեւ սահմանագլուխ, մօտ 400 վերստ, վերջին կէտում կարող են արգելել նրանց, այդքան ա մ ա ր դ ի կերպով։ Չէ՞ որ հէնց Թիֆլիսում կարող էին ասել, որ իզուր էք գնում դէպի սահմանը, չպէտք է թոյլ տանք անցնել։

„Նկատի առնելով, որ Կարսի նահանգապետը պատրաստ էր՝ արգելքներ եղած դէպքում իրեն դիմել, գաղթականները հեռագրով խնդրեցին Կարսի յաջորդին՝ միջնորդել նահանգապետի առաջ։ Երկու օր սպասեցին պատասխանի։ Երրորդ օրը գաւառի կառավարիչը եկաւ Բաշգիւղ (Կաղզւանի շրջան), հաւաքեց գաղթականների

ներկայացուցիչներին եւ յայտնեց նրանց կառավարչապետ իշխան Գոլիցինի հրամանը—կամ իսկոյն ընդունել ռուսահպատակութիւն եւ կամ դատարկել բոլոր գիւղերը ու ուրիշ կողմից անցնելու ճանապարհ գտնել։ Գաղթականների խնդիրքը՝ թոյլ տալ անցնել՝ մերժեց։ Մերժեց նոյնպէս միջնորդել կառավարչապետի առաջ, առաջարկելով գաղթականներին անմիջական դիմումն անել։

„Միւս օրը գաղթականների կողմից հեռագրով մի խնդիր ուղարկեց կառավարչապետին, որի մէջ կրկնելով այն պատճառները, որից ստիպուած չեն կարող ռուսահպատակութիւն ընդունել, եւ յիշեցնելով շրջաբերականի մէջ խոստացուած դիւրութիւնները ռուսաց սահմանը թողնողներին, խնդրում էին հրամայել ում հարկն է՝ թոյլ տալու ռուսաց սահմանը անցնել։ Զորս օր անցնելուց յետոյ ստացուեց մի հեռագիր՝ կառավարչապետի գիւանատան դիրեկտորի ստորագրութեամբ, որի մէջ ասուած էր՝ „Ձեր հեռագրի պատասխանը կը ստանաք Կարսի նահանգապետից“։

„Անցնում է մի քանի օր եւս։ Լուր է ստացւում, որ կիրակի օր նահանգապետը գալու է Բաշգիւղ։ Հաւաքւում են գաղթականների ներկայացուցիչները եւ սրտատրոփ սպասում։ Գալիս է նահանգապետը, համախմբում է ներկայացուցիչներին եւ յայտնում, որ կառավարչապետի պատասխանը էլի նոյնն է, այսինքն՝ կամ իսկոյն պէտք է ռուսահպատակութիւն ընդունէք եւ կամ դատարկէք սահմանը։ Բոլոր խնդիրքներին, աղաչանքներին, պահանջներին պատասխանուեց նոյնը՝ „Ինձ այդ է հրամայուած, եւ ես եկել եմ այդ հրամանը իրագործելու“։ Յուսահատ, համբերութիւնը հատած՝ գաղթականները, յայտնեցին նահանգապետին. „Դանակ ալ դնէք վզերնիս՝ նորէն ռուսահպատակութիւն չենք ընդունիր. ինչպէս կ'ուզէք՝ վարուեցէք“։ Նահանգապետը գնաց։

„Անցաւ մի շաբաթ եւս։ Լուրեր էին պտտում, որ ոմանց պէտք է ձերբակալեն, որպէս պրոպագանդիստների։ Յետոյ հիշդ աղբիւրից տեղեկութիւն տուեց, որ Բասենի պոլիցիական մասի կառավարչին հրամայուած է՝ անմիջապէս ուժով հեռացնել գաղթականներին այդ գիւղերից, մի մասը դէպի Արդահան, միւս մասը՝ Կարս, եւ այդ տեղերի վրայ հպատակ գրել։ Լուր եկաւ նոյնպէս, որ գաւառապետը Ղարսիւնղար եղող գաղթականներից

34 հոգի բռնութեամբ, չափարների հակողութեան տակ, տարաւ դէպի Կարս։ Բիչ անցած եկաւ Կարսի յաղորդը եւ հաւաքելով գաղթականներին՝ կաթողիկոսի կողմից յորդորեց՝ կամ ռուսահպատակութիւն ընդունել եւ կամ փոքրիկ խմբերով անցնել Պարսկաստանի վրայով Թիւրքիա։ Պարսկաստանի վրայով անցնելու խորհուրդը, ինչպէս յայտնեց, կառավարչապետի օգնական Ցրէզէն էր տուել կաթողիկոսին։ Վերջին յորդորը ընդունեց։

„Միամիտները հաւատացին—դժբախտը ե՞րբ չէ հաւատացել—եւ ճամբայ եկան, թւով 120, դէպի Էջմիածին, Աստրպատական չէլու յոյսերով։ Չորս օր տեւեց այդ ճամբորդութիւնը, քաղցած, յոգնած, ենթակայ հիւանդութեան, ուժասպառ, անքուն, անկարող մի վայրկեան անգամ դադար տալու խղճուկ գլխներին, բայց սրտապինդ, յուսավառ, թէ „ահա կը հասնենք սահմանին, կը մտնենք մի նոր երկիր եւ կը պրծնենք այս անվերջ տանջանքներից“։ Ունա՞ն յոյսեր, ցնորական երազնե՞ր։ Նոյնիսկ հայկական կրօնական կենտրոնի պատերի տակ, ուր հալածականները ամէնից քիչ էին սպասում կնուտի ներկայացուցիչներին, դարձեալ մնկաց կոզակը եւ որոտալից զոչով հրամայեց՝ „Կանգնի՛ր“։ Եւ նորից կանգնեց համրաքայլ վիշտը։ „Ռուսահպատակութի՛ւն, ռուսահպատակութի՛ւն“ կրկնեց դարձեալ ու դարձեալ։ Սակայն էլ ականջ չէր մնացել լսելու։ Անասան էր բաղմութիւնը, ինչպէս ինքը տանջանքը, անընկճելի, ինչպէս թագաւորող անարդարութիւնը։

„Էջմիածնում գաղթականներին ցուցակագրեցին, երկուսին վերցրին իրրեւ երաշխաւոր, որ ոչոք չհամարձակի գիւղից հեռանալ, մինչեւ Երեւանի նահանգապետից կարգադրութիւն լինի։ Միւս օրը եկաւ կարգադրութիւն, այն է՝ չափարների հակողութեան տակ վերադարձնել բոլորին Կարս, միեւնոյն ճանապարհով, այսինքն Իգդիր, Կողբ, Կաղզուան, Կարս։ Գաղթականների խնդրի համաձայն՝ կաթողիկոսը մարդ ուղարկեց Երեւան՝ միջնորդելու նահանգապետին, որ փոխանակ անդին պտոյտ անել տալու ոտով եւ տանջելու առանց այն էլ յոգնած, թշւառ մարդկանց, Կարս հասցնելու համար՝ թոյլ տան գնալ երկաթուղիով, իհարկէ ոչ-կառավարական հաշուով։ Այդ էլ մերժեց։ Ուղարկեցին էտապով։

„Բասենում մնացած մօտ 900 հոգին առաջին խմբի

դուրս գալուց հինգ օր ուշ դուրս եկաւ։ Կաղզւանում, երբ արդէն պատրաստ էին ճամբորդելու, նրանց չրջապատեցին կօզակներով եւ տարան Կարս։ Կարս մանելը մի սրտաճմլիկ տեսարան էր։ Անգին բազմութիւն, կանայք եւ երեխաներ, չրջապատուած ձիաւոր կօզակներով, քաղցած, յոգնած առաջնորդեցին դէպի զօրանոցը եւ բանտարկեցին։ Ցուզուած եւ զգացած էին նոյնիսկ ամենաքարասիրտ բնակիչները։ Բայց ի՞նչ կարող էին անել, ո՞վ կը համարձակուէր օգնութեան ձեռք կարկառել։ Երկրորդ օրը՝ նոյն խաղը։ „Պէտք է ռուսահպատակութիւն ընդունէք“։ Էլի մերժում։ Տալիս էին մի քանիսներին տպուած տոմսակներ, ասելով, որ դուք արդէն ռուսահպատակներ էք. գաղթականները տոմսակները չպրտում էին... Երբ այդ էլ չ՝յաջողուեց, նրանց բայ թողին, բայց հրամայեցին, որ քաղաքում ոչ ոք նրանց չ՝օգնի, որպէսզի սովամահ լինեն։ Չէին թոյլ տալիս նոյնիսկ աշխատելու, պահանջելով անցագիր։ Դրութիւնը եւ՛ ողբալի էր, եւ՛ ծանր։

„Ո՞ւր գնայ, ի՞նչ անի։

„Կովկաս մնալ թոյլ չեն տալիս. անցնել հայրենիք՝ նոյնպէս։ Պարսկաստանի ճանապարհն անգամ փակեցին։ Վաթանից կտրած՝ նրան ցոյց են տալիս ներքին նահանգները։ Եւ մի օր գաղտնիքը կատարելապէս բացուեց, երբ Վաղարշապատի գաւառապետը դիմեց գաղթականներին այս խօսքերով. „Ձեզ համար ուրիշ ճանապարհ, ուրիշ երկիր չը կայ. գնացէք Սիբիր, եւ այդ դէպքում միայն ձեզ կը տրուն դիւրութիւններ ու անցագիր“։

Բայց բազմութիւնը գրոհ տուեց։

Եւ աստանդական, անտէր՝ քշւում է նա, այդ հաճական բազմութիւնը՝ մի նահանգից միւսը, անհիւրընկալ Էջմիածնից՝ անճար Կարս, Կարսից՝ արտասուալոյ Բասենի խորքերը, Բասենից՝ մշուշապատ լեռները։ Հայկական արիւնոտ իրականութիւնն է դա. հայ ժողովրդի տասն տարեայ ողբի ուրուականը, որ պտտում է Կովկասեան սահմաններում, վերջին արարածը այն ժողովրդասպան ողբերգութեան, որի գլխաւոր դերակատարները այլեւս արիւնռուշտ քրդերը եւ քաղցած գայմագամները չեն, այլ պճնուած գահերի վրայ բազմած թագակիր ոճրագործները...

Եւ դեռ երկար, շատ երկար կը շարունակեն բաղխել սահմանի դռները՝ հայրենի օջախի սիրով վառուած փախստականները, փափագող նորից տեսնելու այն երկիրը, ուր այնքա՛ն փշոտ է ազատութեան զինուորների ճանապարհը։ Իսկ այդ դռները, փակուած բռնութեան կողպէքներով, մնում են անշարժ և չեն բացուում։ Այդ շատ լաւ էին զգում իրենք գաղթականները, որ սղմուած երկու բռնութեան արանքում, երկու կրակի մէջ ընկած, ճարահատ, վշտաբեկ, անկարող խորտակելու արգելքները, ուրիշ ելք չգտան, բայց եթէ իրենց աչքերը դարձնել դէպի հեռու, այն ազգին, որ ազատութեան առաջին դրօշակակիրն եղաւ, քաջարի պաշտպանը հալածական մարդկութեան։ Այդ տեսակ յոյսերի արդիւնք պիտի համարել այն խնդրագիրը, որ գաղթականները ուղղեցին ֆրանսիական հանրապետութեան արտաքին գործերի մինիստրին, Թիֆլիզի հիւպատոսի միջոցով, խմբագրուած „պաշտօնական“ այնպիսի շողոքորթ ձևերով, որոնք ռուսաց կառավարութեան զայրոյթը չգրգռելու նպատակն ունեն։ Ահա խնդրագիրը.

„Ձերդ պայծառափայլութիւն,

„Մենք, Թիւրքիայի հայերս, օսմանեան հպատակ, ստիպուած լինելով գաղթել 1894-96 թուի մեծ կոտորածների ժամանակ և ապաստանել Ռուսաստանի հիւրընկալ հողի վրայ, թուով 40-50,000 հոգի, ներկայ խնդրագրով աղերսում ենք ֆրանսիական Մեծ ազգի կառավարութեանը, ինչպէս աղերսած ենք արդէն Նորին Մեծութեան ռուսաց կայսեր կառավարութիւնից, բարեհաճել օգնելու ու հովանաւորելու մեզ մեր ներկայ տխուր և անտանելի դրութեան մէջ։

„Մենք սնրագործներ չենք. մենք ոչ մի յանցանք չենք գործել, բայց ստիպուած եմք թողնել մեր ծննդավայրը մղուած միմիայն թշուառութիւնից և կոտորածների երկիւղից։

„Եօթը տարուայ ընթացքում՝ Ռուսաստանը հիւրընկալեց և ապաստանեց մեզ, հնարաւորութիւն տալով աշխատել և կերակրել թիւրքիայում թողած մեր ընտանիքնե-

բը։ Մեր երախտագիտութիւնը դէպի Ն. Մ. կայսր Նիկոլայ Բ. և նրա Տունը անսահման է։ Մեր աշխատանքի արդիւնքով մենք վճարել ենք օսմանեան պետութեան բոլոր այն տուրքերն ու հարկերը, որոնք ծանրացած են եղել մեր ընտանիքների վրայ մեր բացակայութեան միջոցին։

„Սակայն հայրենիք վերադառնալու ժամանակը հասել է, որովհետև մենք անկարող ենք օգտուել ռուսաց կառավարութեան վեհանձն առաջարկից՝ ընդունել ռուսահպատակութիւն, քանի որ Թիւրքիայում մնացած մեր ընտանիքները հնարաւորութիւն չունեն Ռուսաստան գալ և միանալ մեզ հետ։ Թողնելով Ռուսաստանի քաղաքներն ու գիւղերը, ուր ապաստանած էինք, մենք ժողովուած ենք այժմ ռուս-թիւրքական սահմանի վրայ. բայց օսմանեան կառավարութիւնը մերժում է մեզ ընդունել, չնայած, որ եօթը տարուայ ընթացքում նա ճանաչած է եղել մեզ իբրև իր հպատակներ և հարկագրել է վճարել բոլոր տուրքերը։ Զմեռը մօտենում է և մեր վիճակը աւելի և աղքալի է դառնում։

„Ուստի մենք ստիպուած ենք՝ դիմել ֆրանսիական հանրապետութեան հովանաւորութեանը և յանուն մարդկայնութեան՝ աղերսել ֆրանսիական կառավարութիւնից բարեհաճել միջամտելու մեզ համար թիւրքաց կառավարութեան առջև, որպէսզի նա թոյլ տայ մեզ վերադառնալ մեր հայրենի երկիրը, մեր ընտանիքների մօտ, թոյլ տայ մշակել մեր հողերն ու դաշտերը“։

Ներկայացուցիչներ եւ պատգամաւորներ Թիւրքահպատակ հայերի՝ ապաստանած Ռուսաստան եւ խմբուած ռուս-Թիւրքական սահմանի վրայ՝

10 Սեպտ. 1902 *(Ստորագրութիւններ)*

Ռուս-Թիւրքական սահման

Ապասեցին, սպասելուց նրանց աչքը ջուր կտրեց։ Հեռաքրքիր լուրեր եկան, բայց լուրեր ապարդիւն, անօգուտ։ Այդ խնդրագրից դեռ շատ առաջ, Հանրապետութեան մինիստրը, պ. Դելկասէ, ուշադիր հասարակաց տրամադրութեան, դիմումն է անում Կ. Պոլիս, սուլթանին, առաջարկելով յետ ընդունել հալածական գաղթականներին, հաւոզուած, որ իր այդ քայլը պաշտպա-

նութիւն կը գտնի Պետերբուրգի կառավարութեան կողմից։ Սուլթանը մերժեց, և մերժեց՝ յայտնելով այս խորհրդաւոր նորութիւնը. „Գաղթականների խնդիրը արդէն վաղուց կարգադրւած է իմ և Պետերբուրգի կառավարութեան մէջ“։ Հանրապետութեան մինիստրը, թէև զարմացած, հասկացաւ, թէ որտեղից է գալիս այս դիժոխային հրամանը, որը այնքա՜ն անգութ կերպով քշում է „թշւառների հօտը“ դէպի կորուստ, դէպի սով, դէպի ոչնչացում...

Հրամանը Պետերբուրգից էր։

Կար ժամանակ, որ ինքը հայն էր, որ աղերսում, խընդրում էր ներս առնել իրեն, հպատակ գրել, դնել ռուսական դրօշի տակ։ Նոյն սահմանագլխներում, ուր այժմ հնչում է կնուտը, երբեմն եղբայրական համբոյրների ձայներ էին լսւում... Սակայն դարը փոխւեց, փոխւեց և տեսարանը։ Այժմ հայն է փախչում, խոյս տալիս, թիկունք դարձնում ռուսահպատակութիւնից։ Ահա մի բուռն ժողովուրդ, հաղիւ ոտի վրայ, որ գերադասում է վերադառնալ արևան օջախը, դէմ դնել կուրծքը դարևոր թշնամուն, խմել հալածանքի և դառնութեան բաժակը, քան մնալ և ռուսահպատակ գրւել...

Ի՞նչ է արդեօք սա—ամբոխային մի անգիտակից, անմիտ, հօտային փախ, թէ քաղաքական մի այլակերպութիւն, քաղաքական մի նախազգացումն, որ էլեկտրական ուժով ցնցում է կոտորածի մնացորդներին։ Ընբացատրելի մի երկիւղ է այդ, ներշնչւած արդի ըէժիմով, թէ այն, որ քաղաքակաանապէս վերածնւող մի ժողովուրդ գերադասում է մեռնել կուռվ, քան քաղաքական մահով, ընկնել իբրև նահատակ և ոչ իբրև թուլամորթ կամ ձուլման ենթակայ անգոյն մի զանգւած, զոհւել բացարձակ բռնապետութեան, քան մի բռնապետական ըէժիմի, որ լափում է ժողովուրդներին

մի այլ ճանապարհով, քաղաքական սպանութեամբ...

Տխուր են այս խոհերը և անլուծելի,

Բայց կենդանի փաստերը և անհերքելի։

Տարիները կը գան, կ'անցնեն, բայց արտասուաշարժ այս փաստերը կը մնան։ Ցանկալող ազգերը մեծ յիշողութիւն ունեն։ Որդիք չեն մոռանալ հայրերի գլխով անցածները, գնացող սերունդի սէրն ու հնազանդութիւնը տարիներ յետոյ կը փոխարկուի ատելութեան ու ըմբոստութեան, և մի օր, երբ „բաժակը կը լցուի", անարդարութեան ու հալածանքի զատ զատ օղակները, իմի ձուլուած, կը կազմեն դ ժ գ ո հ ո ւ թ ե ա ն շ ղ թ ա ն, որով պիտ կապուի, կաշկանդուի բռնապետութեան ձեռքն ու ոտքը։

Բռնութեան, անսանձ անարդարութեան, բարձրագոչ հալածանքի սև ըէժիմն է, որ պիտի ձուլէ այդ փրկարար շ ղ թ ա ն։ Այդ ըէժիմի շնորհիւն է, որ խաղաղականը դառնում է յեղափոխական, երկրագործը՝ զինագործ, սերմնացանը՝ ռմբացան...

ԴԷՊԻ ԲԱՆՏԵՐԸ

(ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Կալանաւորի պատմածը. — Դիշերային խուզարկութիւն. — Ոստիկանատան նկուղի մէջ. — Դէպի քանտը. — Բանտապետի զրասենեակը. — Հանդերձարանում. — Քաղաքական կալանաւորի խուցը. — Փակած դռան ետեւը. — Ի՞նչ է ուտում բանտարկեալը. — Տեսակցութիւն. — Նամակագրութեան իրաւունքը. — Գաղտնի յարաբերութեան միջոցներ. — Ժանդարմների վարչութեան մէջ. — Հարցաքննութեան ձեւերը. — Անվերջ տանջանքներ. — Ժամանակակից Բաստիլը:

— Պատմեցէք, խնդրում ենք, պատմեցէք:

Եւ երիտասարդ կալանաւորը, նոր աղատուած բանտից, համաձայնութեան նշան տուեց իր խօսակիցներին ու բոպէական լռութիւնից յետոյ, յենուած վառարանի կողքին, այսպէս սկսեց իր պատմութիւնը.

„189... թիւն էր, դեկտեմբեր ամիսը: Երիտասարդութեան շրջանում սկսած էին ձերբակալութիւններ և այնքան յաճախ, որ փողոցում միմեանց հանդիպելիս, առաջին հարցը, որ տալիս էինք, այս էր՝ „Ո՞ւմ տարան, ո՞ւմ բռնեցին“: Արդէն կէս գիշեր էր, այն ժամը՝ երբ դռան զանգը նախագուշակում է որևէ անսպասելի հեռագիր կամ անհաճոյ այցելութիւն: Հաղիւ մի բոպէ անցած, ծառան, գունատ և անհանգստութիւնը դէմքին, ներս մտաւ և մրմնջաց.

— Ոստիկանը ձեզ է ուզում:

Առանց պլպլալելու, ինքնասիրութեան սառնասրտութեամբ դուրս եկայ նախասենեակ և մի ոստիկանի փոխարէն տեսայ վեց հոգի,—ժանդարմների երկու օֆիցէր,

թաղական պրիստաւ, երկու պոլիցիական և մի վկայ, իբրև թէ հասարակութեան միջից բերուած, բայց իրաք՝ ոստիկանութեանը ծառայող մի լրտես։

— Ձեր բնակարանը պէտք է խուզարկենք։

— Ո՞ւմ հրամանով։

— Ժանդարմների վարչութեան հրամանով, պատասխանեց օֆիցէրը, զայրացկոտ շեշտով, որ նշանակում էր՝ „Ձեր գործը չէ“։

Դռների մօտ պահապան դրած, արհեստական լռութեան ենթակայ, դաժան լրջութեամբ՝ ձեռնարկեցին խուզարկութեան, որ տևեց ամբողջ երեք ժամ։ Ակռեցին գրքերից, սեղանի թղթերից և ապա անցան շորերի պահարանին և անկողնուն։ Ոստիկաններից մէկը քանդեց վերմակը և ներքնակը. միւսը մի երկաթեայ ձողով հարւածում էր պատերը, յատակը, ուէ բան գտնելու յոյսով վառուած։ Ընտվոր չը պէտք է թւայ այդ. — եղել են կրկնակի խստութիւնների դէպքեր, երբ քանդել են յատակի տախտակները, առաստաղը, ծխնելոյզները։ Թիրտ են նաև դէպի մարդիկ. մի խուզարկութեան ժամանակ, կատարուած գիշերուայ ժամը 2-ին, տանտիկինը, որ արդէն հանուել և պառկել էր, խնդրեց մի բոպէ դուրս գալ ննջարանից, որպէսզի հագնուի։ Մերժեցին, ստիպեցին մերկ վերկենալ և անմիջապէս ըսկսեցին քրքրել շորերն ու անկողինը, նրա ամբողջ լաւցքը։ Հիւանդոտ կնոջ ուշաթափութիւնը, երեխաների լացն ու կոծը, սարսափահար մօր դողը — ոչ մէկը երբէք և ոչ մի ժամանակ չէ թուլացնում խուզարկուների խստութիւնը և տմարդի վերաբերմունքը։

— Ո՞ւր են ձեր նամակները։

— Ահա դրանք են, որ տեսաք, աւելին չկայ։

— Բայց մեզ քաջ յայտնի է, որ դուք ընդարձակ նամակագրութիւն ունէք, նկատեց օֆիցէրը. ուրեմն դուք թաքցրել էք ձեր թղթերը։

— Չեմ թագցրել, բայց ոչնչացրել եմ, և այդ՝ գիտութեամբ։ Յաճախ, ինքներդ էլ կը խոստովանէք, սովորական նամակների պատճառով՝ ամիսներ պէտք է բանտում մնալ, մինչև նրանք կը թարգմանուեն և կը ղեկուցագրուեն, և յաճախ էլ, որևէ մութ դարձուածքի կամ անմեղ ակնարկի պատրուակով, տեղի է ունենում ամենախիստ կասկած և մեղադրանք։ Թէ մէկից և թէ միւսից խոյս տալու համար՝ ես սովորութիւն ունեմ ոչնչացնել իմ նամակները։

Դժգոհ և կասկածոտ, նրանք ընդունեցին այդ բացատրութիւնը, ծրարեցին եղած նամակները, վերցրին մի քանի թղթեր, արտասահմանից ստացուած լրագիրների մի քանի համար, կազմեցին արձանագրութիւն և ոտի կանգնելով՝ առաջարկեցին ինձ հետևել իրենց։

— Ներողութիւն կրեցէք դալ մինչև ոստիկանական բաժինը՝ մի թուղթ ստորագրելու համար, ասաց գլխաւորը, խուսափելով իմ հայեացքից և աչքերը առաստաղին յառելով։

Գիտէի թէ՝ ինչ կը նշանակէ այդ քաղաքավարի հրաւէրը։ Առանց որևէ պատասխանի, որ ծայրայեղ միամտութեան նշան կը լինէր, դուրս եկայ սենեակից, ասացի ծառային՝ „ինձ մի սպասէք“ և հետևեցի իմ քաղաքական տէրերին, ինչպէս քաղաքական ստրուկ։

Դուրսը անթափանցելի մութ էր, տխուր և սահմ։ „Երանի մի ծանօթ պատահէր“, բայց ծանօթների փոխարէն՝ մի ակնթարթում պատերի տակից դուրս ցցուեցին, ինչպէս դևեր, մի խումբ ոստիկաններ և շրջապատեցին կառքը։

— Կարիք չը կայ այսքան մարդկանց, պ. օֆիցէր, ես ձեզ կը հետևեմ առանց ոևէ դիմադրութեան։

Կառքը սլացաւ, ուր և որ փողոցով, անկարելի է ասել. նա ծածկուած էր, և իմ դիմաց նստած երկու ոստիկանները չէին թոյլ տալիս նոյնիսկ մութ տարածու-

թեանը նայել։ Նրանք իրանց բազուկներով ծածկում էին ամեն ինչ...

Կէս ժամից իջանք ստիկանատանը։ Որևէ թուղթ ստորագրելու կարիք ի հարկէ չը կար, ու երեք բոպէ հաղիւ անցած՝ ես ինձ տեսայ մի նկուղի մէջ։ Երբ դուռը փակեց, նայեցի շուրջս։ Վիրաւորուած անձնասիրութեան գրգիռը, միացած երկիւղի և անյայտութեան բուռն զգացմունքներին, ցնցեց ինձ։ Դա մի գեստապոր էր, առանց պատուհանի, խոնաւ, բորբոսնած, յատակը ցեխապատ։ Մուրով ծածկուած լապտերը հազիւ էր լոյս տալիս։ Այս ու այն կողմ թափթփած էին հացի կտորտանք, ոսկոր, ցնցոտիներ։ Անկիւնները վերածուած էին արտաքնոցի։ Ներթակայ գարշահոտութեան սոսկումին, բռնուած զզւանքից, անկարող էի մի քայլ անգամ անել և մեացի մեխուած նոյն տեղում։ Դին լինէր՝ կը հեծկլտար, մանուկը՝ իր սարսափը լացին կը յանձնէր, —ինչ անէի ես...

Լուսաբացին վերև հրաւիրեցին։ Ոստիկանի սենեակի մէջ, ներկայութեամբ մի քանի պաշտօնեաների, սկսեց նոր խուզարկութիւն—խուզարկութիւն ա ն ձ ն ա կ ա ն։ Դրպանները, շորերի բոլոր ծալքերը, վերարկուի աստառի տակը—ամեն ինչ և ամեն անկիւն ենթարկուեց վարժուած մատների զննութեան։ Հազիւ աւարտած՝ գլխաւորը յանձնեց հերթապահին ժանդարմների վարչութեան հրամանագիրը, մի թուղթ, որի մէջ է պարունակուում ամեն մի կալանաւորի բախտն ու գալիք օրերը...

Առաւօտեան վաղ՝ փակուած կառքը կանգ առաւ մի մեծ դարպասի առջև։ Մետեխն էր, Թիֆլիզի Պետրո-Պաւլովսկը, այն տեղը, ուր երբեմն քրիստոնէական սիրով վառուած վրաստանցին խունկ ու կնդրուկի բուրմունքն էր վայելում և որտեղից այժմ ամենքն են փախուստ տալիս, սարսափած ստրկացնող շղթայի անհաճոյ զնգոցից։

— Կալանաւոր։

Մի վայրկեանից փապարը բացուեց, ներսի զինուորը քնական հայեացք գցեց մեզ վրայ և հեռացաւ։ Հազիւ երկու րոպէ անցած՝ դարպասը լայն բացուեց և կլանեց, իբրև անյագ վիշապ, էլի մարդկային մի արարած—մէկը այն „օտարոտիներից“, որոնք բռնապետութեան սահմաններում ազատութիւնը որոնում են փակուած դռների ետևը, զնդաններում— և նորից՝ յաղթականօրէն՝ իր նախկին դիրքը բռնեց, սպասելով նորերին, նոր զոհերի . . .

Ընցանք դատարկ բակով, որին չորս կողմից նայում են անթիւ փոքրիկ պատուհաններ, ինչպէս մարող աչքեր, և մտանք բանտապետի սենեակը։ Դռնփակ աշխարհի թագաւորն է դա։ Ոչ ոք այնտեղ չէ կարող մտնել և ոչ էլ դուրս գալ առանց երկրպագութեան գնալու այդ խորհրդաւոր պաշտօնեային, որը չէ խօսում, բայց կարգադրում է, չէ նայում, բայց միշտ դիտում է։

— Տէր իմ Աստուած, ուղարկում են և դարձեալ ուղարկում, իսկ ես ոչ մի սենեակ չունեմ։ Այն օրից, որ սկսուած է հայոց գործը, այլևս ազատ տեղ չը մնաց։ Այս շաբաթ տասներեք հոգի են ուղարկել, և դեռ վաղը՝ նորերին ենք սպասում։

Եւ նորերը գալիս են, իսկ տեղի համար գանգատուող բանտապետը դիւթական հնարագիտութեամբ բոլորին էլ տեղաւորում է։ Բանտը բռնութեան ստամքն է. նա երբէք չէ յագենում։ միշտ տեղ ունի։ Գողերին, մարդասպաններին, կեղծարարներին կուտակում են միմեանց վրայ. այնտեղ, ուր միայն տասն հոգի պիտի լինի, համախմբում են քսան, երեսուն, ապականուած, անշնչելի օդի մէջ. իսկ քաղաքական յանցաւորներին, վտանգի այդ անսպառ աղբիւրներին, փակում են մէկ-մէկ, ջոկ-ջոկ սենեակներում, բաժան-

ւած մէկը միւսից հաստագոյն պատերով, խուլ և անդգայ քար ու կիրով...

— Յանձնեցէք ինձ ինչ որ ունէք,—նամակներ, թուղթ և մանաւանդ ձեր փողը, կարգադրեց բանտապետը՝ իր սեղանի առաջ նստելով։

Կալանաւորի վրայ չէն թողնում թղթի մի կտոր անգամ։ Չէ որ թուղթը հաղորդակցութեան գործիք է... Վերցնում են փողը և փոխարէնը տալիս մի ստացագիր։ Ստացագիրը ոչինչ բանի ծառայել չէ կարող, մինչդեռ երբ բանտարկեալը փող ունենայ մօտը, կարող է կաշառել պահապանին, զինուորներին, կամ որևէ բանտարկեալի միջոցով յարաբերութեան մէջ մտնել դրսի աշխարհի հետ, կամ նոյնիսկ փախուստ տալ։ Դրամը չէ կորցնում իր վարակող ուժը փակուած դռների յետևը անգամ։

Մի ժամից ինձ տարան մի այլ սենեակ։ Դա բանտարկեալների հանդերձարանն էր։ Ինչ պէտք անէին ինձ հետ — անյայտ էր։ Սենեակի մի անկիւնում՝ երկու հոգի պատրաստում էին շորեր տենդային արագութեամբ։ Կարծէք, պատանք կարողներ լինէին... Մէջտեղը նստած էին, մի սեղանի շուրջը, բանտապետի օգնականը, մի ենթասպայ և երկու գրագիր։ Օգնականը հայ էր, խոժոռ և չար դէմքով, ենթասպան—ռուս, հաճելի, վճիտ աչքերով։

— Հանեցէք, ասաց օգնականը հրամայական շեշտով. ձեր շորերի տեղ պիտի հագնէք բանտային զգեստ։

— Բայց դա օրէնք չէ. ես կը կամենայի իմ...

— Օրէնքը այն է, ինչ հրամայում են։

Սկսեց հրամանի կատարումը։

— Ներեցէք հարցնել, գուցէ մի տեղ ունէք, ուր ես կարող եմ հանել։

— Ո՛չ մի տեղ. մերկացէք շուտով, շեշտեց օգնականը կրկնակի խոժոռութեամբ։

Ծանր, հոգեմաշ բոպէներ։ Դողը պատեց ինձ, երբ գլուխս բարձրացրի և իմ աչքերը հանդիպեցին նրանց բոլորի հայեացքներին, հեգնական, լի արհամարհանքով։ Կարծէք ասում էին՝ „Թողէք ձեր ցնորքները. այսօրուանից դուք իր էք մեր ձեռքում, որին կը դարձնենք, ինչպէս կամենանք, կը գցենք, ուր ուզենանք“։ Եւ գցեցին։ Հագցրած նոյն շորերը, ինչոր մարդասպաններին և գողերին, գլխս ծածկած այն գլխարկը, որ դուք տեսնում էք դատարան տարուող ոճրագործների գլխին, մէջքիս էլ նոյն մակագրութիւնը՝ „Ն. Բ.“ (Ղահանգական բանտ), ինչ որ յատուկ է նախատինքի ենթակայ բոլոր դժբախտներին, ինձ դուրս բերին հանդերձարանից, ձեռքիս մի թղթի կտոր, վրան իմ համարը... Մտայ այնտեղ, իբրև մ ա ր դ, իրաւունքներով, դուրս եկայ ինչպէս իր՝ առանց իրաւունքների։ Եւ ինչպէս իր՝ ինձ տարան և փակեցին այն դժոխքի մէջ, որը քաղաքական յանցաւորի ա ռ ա ն ձ ն ա բ ա ն անունն է կրում։

Փոքրիկ սենեակ էր դա, մի հատիկ պատուհանով՝ օճորքի մօտ, ի հարկէ վանդակապատ։ Պատուհանի նեղ բացուածքից ոչինչ չէր երևում, բայց եթէ երկնքի մի անշան կտոր, միակ տեսարանը խեղճ կալանաւորի։ Ոչ աթոռ և ոչ սեղան։ Անկիւնում դրած էր փայտեայ մահճակալ, առանց անկողնի։ Երեկոյեան դէմ միայն պահապանները բերեցին խոտով լցցրած մի ներքնարկ, կտաւէ բարձ, դարձեալ խոտով լի, և մի վերմակ՝ զինուորների հին վերարկուներից պատրաստած, լի կասկածելի բծերով, զզւելու չափ կեղտոտ։ Կեղտոտ էր և սենեակը, սառն, խոնաւ, յատակը լի բացուածքներով, ազատ ճանապարհ մկների համար, որոնք՝ բազմատեսակ միջատների հետ միասին՝ բանտարկեալի միակ հասարակութիւնն են կազմում։

Ցնուր է այդ կացարանը, բայց ոչ սոսկալի, որովհետև կան աւելի վատերը, վատ հաղար անգամ, ան-

մատչելի մարդկային խղճմտանքին,—մի գեղանափոր առանց լոյսի, պատերին՝ բորբոս, գետնին՝ ցեխ, ցեխի մէջ մի քիչ յարդ, որ անկողնին է շղթայակապ կալանաւորի, զրկուած շարժուելու հնարաւորութիւնից, մարդկային դէմքերից—գեղանափոր, որ միաժամանակ և՛ գերեզման է, և՛ բնակարան, արտաքնոց ու տանջարան . . .

Աշտարակ է խուցը։ Կալանաւորը ոչ ոքին չէ տեսնում. պահապանն է միայն, որ գրսից՝ ամեն բոպէ, գիշեր և ցերեկ՝ դռան վրայ շինած փոպարի միջով՝ հսկում է նրա իւրաքանչիւր քայլը, շարժուածքը,—նոյն իսկ գիշերը, որովհետև իրաւունք չկայ ճրագը հանգցնել և ուրեմն խուսափել զինուորի խուզարկու աչքերից։ Կողպած դռան բանալին պահապանի մօտ է, կախուած նրա կողքին՝ ատրճանակի հետ միասին. երկրորդն ի պաշտպանութիւն առաջինի։ Իսկ երեկոյեան 9 ժամին, երբ բանտապետը՝ շրջապատուած իր ստորադրեալներով, գալիս է վերստուգելու „հպատակների“ խուցերը, այդ բանալին հանդիսաւոր կերպով նրա ձեռքն է անցնում։ Եթէ այդ բոպէից սկսած՝ կալանաւորը տկարանայ, ուշաթափի, մեռնելու անգամ լինի և կարիք ունենայ մարդկային օգնութեան—ոչ ոք դուռը բանալ չէ կարող, իրաւունք չունի։ Նա կարող է մեռնել, բայց և այնպէս դուռը չի բացուի մինչև լուսաբաց, մինչև վերստուգման առաւօտեան ժամը։

Հաղիւ մի օր անցած, երբ սկզբնական յոյզը քիչ թուլացաւ, հրապարակ եկաւ յաւիտենական խնդիրը, նոյնքան հրատապ բանտում, օրքան և ազատութեան մէջ—հ ա ց ի խ ն դ ի ր ը։ Փակուած աշխարհում, „ազնուականները“ միայն իրաւունք ունեն իրենց փողով լաւ ուտել, հոգալ իրենց մարմնի պարարտացման մասին։ Հարուստները այդ իրաւունքին տիրանում են դրամի ուժով և կաշառքով։ Մնացածները զուրկ են այդ արտօնութիւնից։

խակ քաղաքական յանցաւորները—նայած տեղին և բանտին. կան բարեմիտ բանտապետներ, մանաւանդ եթէ խոհանոցից իրենք էլ շահ ունեն, որոնք շնորհում են այդ արտօնութիւնը, բայց կան և այնպիսիները՝ որ մերժում են խստօրէն։ Մերը՝ այդպիսիներից էր։ Պետական գանձարանը շատ էլ առատ չէ դէպի կալանաւորը,—ամեն մէկի համար նա տալիս է օրական երեք կոպէկ. այդ խղճուկ կոպէկների մի մասը, հասկանալի է, բանտապետն է գողանում, միւս մասը՝ տնտեսը, և բանտարկեալի համար տակը ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ մի կտոր ոսկոր՝ մսի փոխարէն, մի ման անհամ կեղտաջուր, որ ապուր անունն է կրում, և մի կտոր հաց, որի մէջ տիրապետող դերը յաճախ աղբերի տեղ՝ հողն է կատարում։ Եւ դրանով մարդիկ պիտի ապրեն...

Մի օր, երբ տկարացած՝ բանտային հիւանդանոցն էի փոխադրուած, թախիծի և տրամութեան սև բոպէներին, կանգնած վանդակապատ պատուհանի մօտ, բակն էի դիտում։ Զբօսանքի ժամն էր. բանտարկեալները, մարդասպան, գող, թափառաշրջիկ, ոմանք շղթաներով, միւսները „ազատ", ման էին գալիս մտամոլոր, հիւծուած։ Բայց կային և այնպիսիները, որոնց երեսին ուրախութեան նշաններ էին նկատւում։ Պակաւապէտ մարդիկ — մաքուր օդը, այնքա՜ն հաղագիւտ ապականուած խուցերում, աղատութեան հաճոյք էր ներշնչել նրանց։ Ոմանք միջանցքներ էին մաքրում, միւսները արտաքնոցներ, ոմանք էլ իրենց լուացքն էին անում, փոքրիկ լ ա գ ա ն ն ե ր ի մէջ։ Յանկարծ զանգը խփեցին,—ճաշի նշան էր։ Բաղմութեան մի մասը վազեց դէպի խոհանոց, որտեղից, մի լայն անցքի միջով, խոհարարը՝ ահագին շերեփով բաժանում էր կեղտաջուրը—ապուրը։ Շատ քիչերը ամաններ ունէին. մի մասը դէպի խոհարարն էր մեկնում նոյն այն լագանները, որոնց մէջ մի քանի բոպէ առաջ իր կեղտոտ շորն էր լանում, և հաղիւ ստացած՝ վազում

էր խուցը՝ վիճակակիցների հետ վայելելու իր բաժինը...

Շաբաթը երկու անգամ այդ քաղցած, մոռացած բազմութեան համար զատիկ է,—այն օրերին, երբ ծնողները կամ բարեկամները տեսութեան են գալիս և բերում մէկը՝ մի քանի հաց, միւսը՝ մսեղէն, ձու, աւելի ունևորները՝ մի քիչ թէյ, շաքար և ծխախոտ։

Սրտաճմլիկ են այդ տեսակցութիւնները։

Բակի մէջտեղը, լայնութեամբ, երկու թոկ են անցկացնում, մէկը միւսից մի քանի արշին հեռու։ Մի թոկի երկարութեամբ կանգնում են բանտարկեալները, միւսի դիմաց՝ եկողները. մէջտեղը պահապաններ են անցուդարձ անում, որպէսզի թոյլ չտան նրանց՝ միմեանց հետ ծածուկ խօսել կամ որևէ բան տալ։ Ահա պառաւ մայրը, որ հեռից, շատ վերստեր կտրած, եկել է տեսնելու մին ու ճար որդուն. նա առաջ է վազում, ուզում է շոշափել զաւակի գլուխը, բռնել նրա ձեռքը, նայել աչքերին...„Հեռու“—հնչում է պահապանի կոշտ ձայնը։ „Հեռու“, կրկնում է մի ուրիշը՝ հրելով միւսներին, կարօտով տապակողներին։ Մնացած պահապանները այլ զբաղմունք ունեն.—մէկը հացն է միջից կիսում. մի ուրիշը քաղցրաւէնիքի տուփն է բաց անում. երրորդը՝ եփած ձուն է կոտրում։ Կասկածում են, որ նրանց մէջ կարող է թաղցրած լինել թղթի գրած կտոր, գաղտնի տեղեկութեան մի կաբևոր տոմսակ։ Այ ենթակայ այդ կասկածին՝ քրքրում են ամեն ինչ։ Ու իբր վարձատրութիւն իրենց „ազնիւ“ աշխատանքի, ուտելեղէնի լաւը, թէյի մեծ մասը, ծխախոտի կէսը սեփականացնում, վայելում են և տականքը հասցնում բանտարկեալին։ Ո՞ւմ գանգատի խեղճը,—այդ աւարին ինքը բանտապետն էլ մասնակից է...

Քաղաքական կալանաւորը՝ այդ անմեղ զուարճութիւններից էլ զուրկ է. նա ոչ ոքի չէ կարող տեսնել, և ոչոք նրան մօտենալու իրաւունք չունի։ Կինը, մայրը,

Եղբայրը ամիսներ շարունակ դիմումներ են անում, մաշում են ժանդարմների վարչութեան կամ նահանգապետի շէմքը և հարիւրից մի անգամ միայն՝ թուղթ են ստանում՝ տեսնելու իրենց սիրելիներին։ Այդ տեսակցութիւնը կատարւում է բանտապետի գրասենեակում— մի քանի զոյգ աչքերի հսկողութեան տակ։ Խօսել կարելի է միմիայն ռուսերէն։ Այցելուի իւրաքանչիւր խօսքը, շարժուածքը, ակնարկը՝ հետազօտութեան է ենթակայ, և վայ, եթէ որևէ կասկած ծագեց. — կալանաւորի վիճակը կը դառնայ աւելի ծանր, հսկողութիւնը՝ աւելի խիստ . . .

Ամիսները յաջորդում էին ամիսներին, կասկածն ու անյայտութիւնը մաշում էին ինձ,—բայց ոչ մի տող ընտանիքից կամ ծանօթներից։ Ընդուշտ նրանք գրում էին և միշտ անմեղ, միշտ անբովանդակ նամակներ, սակայն իշխանութիւնը, ինչպէս երկաթէ պատ, արգելում, չէր թոյլատրում ինձ հասցնել։ Ինքս էի ուզում գրել ի հարկէ դատախազի միջոցով, բայց միշտ՝ մերժում։ Երբեմն էլ թոյլ էին տալիս, մինչև իսկ մարկի համար փող էին նշանակում, բայց միայն խաբելու նպատակով։ Ուշ իմացայ, որ ոչ մի նամակ հասցէին չէր ուղարկւած։

— Զունէք արդեօք որևէ ասելիք, հարցրեց մի օր նահանգապետը, իր պաշտօնական այցելութեան միջոցին։

— Խնդրում եմ թոյլ տալ ինձ՝ դիմելու կառավարչապետին մի խնդրագրով։

— Դիմեցէք, օրէնքը ձեզ իրաւունք է տալիս։

— Բայց բանտապետը մերժում է այդ իրաւունքը։

— Ի՞նչ է պատճառը։

— Հեղեղեցին մեզ հայ կալանաւորները իրենց խնդրագրերով, վերջ չը կայ, պատասխանեց բանտապետը՝ պատուի կանգնելով։

— Բայց ես դեռ ոչ մի հատ չեմ գրել, դա սխալ է, աւելացրի ես։

— Թոյլ տուէք որ գրեն, պ. բանտապետ, նկատեց նահանգապետը։

— Հնազանդում եմ։

Եւ դարձեալ ոչ մի անգամ թոյլ չտուեց։— „Գնացէք, գանգատուեցէք նահանգապետին“—կրկնում էր նա միշտ, ինքնավստահ հեգնութեամբ։

Սակայն գանգատն ու բողոքը, կոչն ու վիշտը չէ հասնում նահանգապետներին, և ոչ իսկ պատի այն կողմը փակուած՝ նոյնպէս վշտահար, նոյնպէս անխօս վիճակակիցին։ Աղաղակեցէք, որքան կարող էք, գոռացէք ձեր թոքերի ամբողջ ուժով—ոչ ոք արձագանք չի տայ։ Միայն պահապանը կը բաղխի դռանը՝ իբրև լռութեան աղդարարութիւն։ Եւ այդպէս սահում են վշտի օրերն ու ամիսները։ Ինչ է կատարուում միւս խուցի մէջ, բանտի այլ մասերում, սկսած է արդեօք հարցաքննութիւն, կենդանի են ընկերները թէ մեռած,—ոչ ոք գիտէ։ Բայց անհրաժեշտ է գիտենալ, տեղեակ լինել անցածդարձածին։

Մի օր, երբ ինձ դուրս բերեցին գաղտնի բակը՝ քիչ զբօսնելու, զարմանքով տեսայ մի ընկերոջ, որին շտապով դուրս տարան։ „Ուրեմն նա էլ բռնուած է“։ Եւ այդ բոպէից իմ փափագը եղաւ գրել նրան։ Պահապանը, որ կաշառուելու բոլոր վատ հակումներն ունէր, բերեց ինձ մի քանի տեղեկութիւններ։ Եւ մի քանի օրից՝ յարաբերութիւնը արդէն սկսուած էր։ Ահա թէ ինչպէս։ Բանտապետը տուել էր ինձ կարդալու մի „Հին-Կտակարան“. գրել գրքի մէջ՝ անկարելի է. մէջը դնել թուղթ՝ նոյնպէս, որովհետև բանտի դիւանատանը անդադար զննում են բոլոր գրքերը։ Ես դիմեցի մի աննկատ միջոցի։ Հարկաւոր էր հաղորդել իմ ընկերոջ հետևեալը. „Ես էլ այստեղ եմ. քո բոլոր նամակները բռնուած են“։ Մատիտով, հազիւ նկատելի, գրքի ամեն մի երեսի առաջին և վերջին տողում ընդգծեցի այդ խօս-

քերի տառերը, նրանց կարգով ի հարկէ, ամէն մի տողում մի տառ միայն։ Ապա խնդրեցի պահապանից գիրքը, իբրև թոյլատրուած, հասցնել այս ինչ բանտարկեալին։ Ընկերս՝ ի հարկէ, խորին ուշադրութեամբ քննել և գտել էր գաղտնիքը, — բանտարկեալը լաւ հոտառութիւն ունի։ Երկու օրից՝ ստացայ նոյն գրքով, նոյն ձևով, հետևեալ լուրը. „Ինձ հարցաքննեցին, միւսներն էլ բռնուած են“։ Դրանից յետոյ յարաբերութիւնը անընդհատ էր և կատարեալ։

Մի ուրիշ օր, երբ ինձ նոր էին յետ բերել ժանդարմական վարչութիւնից, և ես՝ հոգնած, մնայլ, ներվոտ՝ սենեակի մի անկիւնից միւսն էի վազում և աշխատում պարզել հարցաքննութեան ժամանակ ինձ տրուած հարցերի յետին միտքը, յանկարծ լսեցի մի քանի բաղխումներ պատի միւս կողմից։ Կանգ առայ և ականջ դրի։ Բաղխումները կրկնուեցին։ Մօտեցայ պատին և իմ կողմից նշաններ տուեցի։ Ընծանօթը պատասխանեց։ „Ընկեր է“, յուզուած բացականչեցի ես։ Երջանիկ րոպէներ էին։ Եւ մի ժամ չանցած, ես արդէն գիտէի՝ թէ ով է իմ հարևանը, ինչի համար է կալանաւորուել և ուրիշ շատ նորութիւններ։

Բայց ինչ ճանապարհով։

— Շատ պարզ և շատ հեշտ։—Իմ հարևանը մատով կամ մատիտով բաղխում էր պատը։ Բաղխումները, որ ես լսում էի պարզօրէն, փոխարինում էին հայկական տառերը։ Բաղխումների քանակը համապատասխանում է տառերի տեղին, այբբենական դասաւորութեամբ։ Այսպէս՝ Ա—1, Բ—2, Գ—3, Դ—4, Ե—5, Զ—6 և այլն։ Այդ եղանակով, նա ամենից առաջ հարցրեց իմ անունը, հաղորդեց ինձ իրենը՝ և այդ րոպէից մենք արդէն հին ծանօթներ էինք։ Իմ գաղափարակից ծանօթը հաղորդեց նոր լուրեր. աւետեց, որ Զէյթունը ապստամբուած է, պատմեց նոր ձերբակալութիւն-

ների մասին, գուժեց մի ծանօթի մահը, ասաց և ուրիշ նորութիւններ, ախորժելի և անախորժ։

Միւս օրը, առաւօտեան, երբ վերսկսեցինք մեր „ղրոյցը“, յայտնեցի ընկերոջս, թէ հարկաւոր է փոքրիկ փոփոխութեան ենթարկել մեր բանակցութեան եղանակը, աւելի արագ և աւելի հեշտ խօսելու համար։ Դա իհարկէ ուրախացաւ։ Փոփոխութիւնը հետևեալն էր։ Հայկական այբբենը պէտք էր բաժանել եօթ շարքերի՝ ամեն մի շարքում վեց տառ, ահա այսպէս.

	1	2	3	4	5	6
1	Ա	Բ	Գ	Դ	Ե	Զ
2	Է	Ը	Թ	Ժ	Ի	Լ
3	Խ	Ծ	Կ	Հ	Ձ	Ղ
4	Ճ	Մ	Յ	Ն	Շ	Ո
5	Չ	Պ	Ջ	Ռ	Ս	Վ
6	Տ	Ր	Ց	Ւ	Փ	Քէ
7	Եւ	Օ	Ֆ	Ոեւ		

Սա այն առաւելութիւնն ունի, որ փոխանակ, դիցուք վ տառի համար, որ այբբենարանի 30-րդ տառն է, 30 բաղխում տալու,—շատ ժամանակ և աշխատանք

պահանջող մի սիստէմ,—կարող էք բաղխել 5 և 6 անգամ, որ կը նշանակէ 5-րդ կարգի 6-րդ տառը։ Հետևելով այդ կարգին՝ իբրև զուարճութիւն, բաղխեցի՝

11, 62, 14, 15, 72, 66, 55, 74, 26, 23, 11, 44, 22, 55, 52, 11, 44, 64, 15, 63,

որ կը նշանակէ՝ ԱՐԴԵՕՔ ՍՈՒԼԹԱՆԸ ՍՊԱՆՈՒԷՑ։

Ընկերս պատասխանեց՝ 46, 51 — ՈՂ։

„Դիւռը“ իր պտուղները շատ շուտ տուեց, մի շաբաթ չանցած՝ քաղաքական բոլոր հայ կալանաւորները յարաբերութեան մէջ էին իրար հետ։ Համարձակներից մէկը աւելի ժողովրդացրեց նրան, գործ ածելով իբրև միջոց՝ նամակագրութեան։ Դրանից յետոյ բանտում թոյլատրուած գրքերի վրայ սկսեցին երևալ անվերջ թաւնաններ, ըստ երևոյթին անմիտ ու անկապ։ Բանտապետը կասկածեց։

— Սա ի՞նչ է նշանակում, զայրացած հարցնում է նա, բռնելով այդ թաւնանները մի կալանաւորի ձեռքում։

— Ոչինչ, պ. բանտապետ, պարապութիւնից թաւաբանական խնդիրներ եմ լուծում. աշակերտ ժամանակ շատ էի սիրում բարդ խնդիրների վրայ գլուխ կոտրել.

Անվերջ կռիւ է այդ, որ գոյութիւն ունի կալանաւորների ու բանտային վարչութեան միջև։ Մէկը աշխատում է գաղտնի յարաբերութիւններ պահպանել, միւսը ճգնում է՝ արգելել արմատախիլ անել։ Բացւում է գաղտնի ձևերից մէկը, հնարում են մի նորը, աւելի սրամիտը։ Եւ յաճախ մարդկային ուղեղը յաղթանակում է պոլիցիական ուղեղին, բթացած իր ամենազօրութեան մէջ։

„Նամակագրութիւնը“ սակայն երկար չը տևեց։

— Ձեզ կանչում են դիւանատուն, այս խօսքերով մտաւ իմ խուցը՝ պահապանը։

Դիւանատանը սպասում էր բանտապետը՝ անսովոր

հանդիսաւորութեամբ։ Պարզ էր, որ նա արտակարգ մի նորութիւն ունէր հաղորդելու։

— Պատրաստուեցէք կէս ժամից ճանապարհ ընկնելու։

— Ո՞ւր։

— Չը գիտեմ, չեմ կարող ասել։

Հարցը չը կրկնեցի։ Դա նշան էր, որ որոշումը գաղտնի է։ Ուղիղ կէս ժամից՝ պահապանների խիստ հսկողութեամբ՝ դուրս եկայ բանտի դարպասով, նոյնքան անտեղեակ ինձ սպասող վիճակին, որքան երեք ամիս առաջ, երբ ներս մտայ։ Դարձեալ փակ կառքը սպասում էր։ Նա սլացաւ քաղաքի յետ ընկած փողոցներով, ուր բազմութիւնը արդէն ոտի վրայ էր, կեանքը եռուն։ Փակուած կառքի մի անկիւնում՝ կծկուած՝ անկարող էի դիտել մարդկանց դէմքը, տեսնել մի ժպիտ, գուցէ և ծանօթի մի հայեացք։ Մարդկային դէմքի կարօտը՝ ինձ այրում էր... Հրապարակներից մէկի վրայ յանկարծ կառքը կանգ առաւ։ Յուղարկաւորութիւն էր։

— Ո՞ւմ են թաղում, հարցրի մեքենայօրէն։

— Հանգուցեալին, պատասխանեց պահապանը լրջութեամբ։

Եւ խկոյն աւելացրեց՝

— Հրամայուած է չը խօսել...

Քսան րոպէից կառքը կանգ առաւ երկաթուղու կայարանի առջև։ Գնացքը պատրաստում էր մեկնելու։ Դանր նախազգացումը ինձ տիրեց։ „Երևի աքսորի ճանապարհն է“, մտածեցի ես։ Սկսեցին լուութեան նոր ժամեր։ Մի ժամ ժանդարմների առանձնասենեակում — լուռ. աւելի քան 18 ժամ գաղտնի վագօնում — դարձեալ լուռ. մի ժամից աւելի յաջորդ քաղաքի ժանդարմական վարչութեան նախասենեակում — նորից լուռ. ապա բանտապետի գիւանատանը — միշտ լուռ, և ի վերջոյ ամենամեծ լռաստանում — բանտի մէջ՝ լուռ մի ամբողջ շաբաթ։

Շաբթագլխին լուութիւնը ընդհատուեց։ Նորից տարան հարցաքննութեան, սկզբում օրը մի անգամ, ապա օրը երկու անգամ, վերջը՝ ամբողջ օրով, և նախկին լուութեանը յաջորդեց անվերջ հարց ու պատասխան, վէճ, մեկնութիւններ, ապա սպառնալիք, արձանագրութիւններ և դարձեալ սպառնալիք...

Նստած իր բազկաթոռի մէջ՝ գնդապետը, սեգ, լի անընդհատ ցասմամբ, իրեն զգում էր միահեծան համայն Ռուսաստանի։ Դիմացը տեղ էր բռնել ժանդարմական օֆիցէրը, փոքրիկ գլխով, բայց վեթխարի մի կազմուածքով, կարևորութեան դէպքում՝ կալանաւորների վրից բռնելու բոլոր ձիրքերով օժտուած։ Ընկիւններում թարգմանները—հոտառու քթով, ամենահպատակ գըլխով և անշուշտ՝ բազմատանջ ստամոքսներով։ Եւ ի լրումն՝ արդարութեան ներկայացուցիչը, — պրոկուրորը, լուռ, խորհրդաւոր...

— Եթէ ես մինիստր լինէի, մանչաց գնդապետը՝ խելագարի նման տեղից վեր ցատկելով, կ'ոչնչացնէի հայոց լեզուն, գրականութիւնը, եկեղեցին, թատրոնը, կը ցրուէի հայերը Ռուսաստանի բոլոր կողմերում, և դա կը լինէր վախճանը հայկական շարժման, որ մեզ այնքա՜ն տանջեց, գիշեր ու ցորեկ մեր քունը կտրեց։

— Տանջուողը դուք չէք, պ. գնդապետ, այլ մենք, անմեղ մեղաւորներս, որ դարձել ենք քաղաքական դաւադիրներ, ենթակայ բանտարկութեան ու աքսորի, մարդասիրական պարզ համակրութեան համար, ուղղած բազմատանջ և հեծեծող մի ժողովրդի արդար դատին։

Պրոկուրորը միջամտեց։ Փոթորիկը անցաւ։

— Դուք մեղաւոր էք հետևեալ երեք կէտերում, վերսկսեց բոպէաբար խաղաղուած գնդապետը.— ապօրինի ճանապարհով զէնք էք գնել և ուղարկել Թիւրքիա, կազմակերպել էք զինուած խմբեր, հիմնել էք գաղտնի տպարան ու հրատարակել արգելուած թերթեր՝ գաղտնի

կազմակերպութեան անունից, որի մի անդամն էք դուք։

Այդ երեք կէտը Հանրածանօթ բանաձևն էր, պատրաստուած ժանդարմական վարչութեան մէջ և առաջարկուած բոլոր կալանաւորներին։ Նրա ծագումը պարզ է։ Երբ սկսեց „Հայկական շարժումը“, պետական ապահովութեան կովկասեան ներկայացուցիչները տեղեկագրեցին կենտրօնին, որ Անդրկովկասն է շարժման աղբիւրը, և ամեն մի հայ երիտասարդի բնակարան զէնքի, պրօկլամասիօնների և ռազմիկների շտեմարան է։ Հրաման եկաւ Պետերբուրգից՝ խուզարկել և կալանաւորել։ Սկսեցին խուզարկութիւններ, համոզուած, որ հաղարներով հրացաններ կը բռնեն, հարիւր հաղարներով փամփուշտ, որ կը բանան ռումբի և դինամիտի պահեստներ, գաղտնի տպարաններ և ի լրումն՝ դաւադրական կազմակերպութիւն՝ ուղղած նոյնիսկ ռուսաց կառավարութեան դէմ...

Ժանդարմական յոյսերը չարդարացան։

Եւ դա նրանց կատաղութեան աղբիւրն էր։

— Եթէ դուք մեզ հարցաքննութեան էք կանչում, պ. գնդապետ, միայն նրա համար, որ անվերջ մեղադրանքներ բարդէք մեզ վրայ, առանց ականջ դնելու մեր բացատրութիւններին, այն ժամանակ անօգուտ է այս բոլորը.—փակեցէք մեզ բանտում կամ ուղարկեցէք աքսոր, ինչպէս արդէն...

— Վերադարձէք բանտ, յայտարարեց գնդապետը՝ ընդհատելով իմ խօսքը...

Յաջորդ օրը պրօկուրորը բացակայ էր, իսկ գնդապետը՝ կատակերգական տրամադրութեամբ։ Նա ինձ ընդունեց այս խօսքերով.

— Գիտեմ, դուք ուզում էք անկախ Հայաստան ստեղծել և մեզ՝ ռուսներիս նման՝ ուրիշների վրայ իշխել։ Բայց դուք չարաչար սխալւում էք։ Անգլիայի բարեկամութիւնը ձեզ չի օգնի, և մենք Հայաստանը ձեզ չենք տայ։ Կը տիրապետենք նրան և կը միացնենք Կովկասին։

ցեսէք. սահմանագլխի երկաթուղին արդէն պատրաստ է, և մենք միայն մի առիթի ենք սպասում՝ զօրք մտցնելու համար։

Փոքրիկ ընդմիջումից յետոյ՝ նա շարունակեց.

— Երէկ, հարցաքննութեան ժամանակ, ձեր ընկերներից մէկին այս հարցը տուի. „Եթէ Հայաստանը ազատուի, ինձ էլ մի պաշտօն կը տա՞ք“։ Նա խօստացաւ... Գիտէ՞ք, ես ձեր ազգակիցների մէջ շատ բարեկամներ ունեմ։ Հայերէն էլ գիտեմ—օրինակ, „Ցիցեռնակ, ցիցեռնակ“...

Ես բողոքեցի այդ „պաշտօնական կատակաբանութեան“ դէմ։ Գնդապետը զայրացաւ, շրթունքները կծեց և վերսկսեց քննութիւնը, որը երկու ժամից յետոյ վերջացաւ այս յայտարարութեամբ՝

— Եթէ մինչև երեք օր չը խոստովանէք բոլորը, ես ձեզ կը փակեմ բանտի մէջ մի ամբողջ տարի, կը զրկեմ ձեր կերակրից ու անկողնուց, չեմ թոյլ տայ մի հատիկ բողոք կամ խնդրագիր, կ՚արգելեմ ամեն մի տեսակցութիւն... բայց նպատակիս կը հասնեմ..

Եւ շարունակեցին ձգտել այդ անարգ նպատակին։

Համատարած կասկածը, որ իր թեւերով պատեց ամբողջ Կովկասը, դէպի բանտ, դէպի աքսոր, դէպի պօլիցիական հսկողութիւն տարաւ մի ամբողջ սերունդ — ամենածանր տուրքը հպատակ ազգութեան։ Քաղաք չը մնաց ազատ և ոչ էլ մի հատիկ դասակարգ։ Արհեստաւոր և ուսուցիչ, գիւղացի և իրաւաբան, գրող և երկրագործ, ուսանող և վաճառական, նոյնիսկ կին և հոգևորական,—բոլորը միաժամանակ և հաւասար խստութեամբ՝ ճաշակեցին բանտային տանջանքները, կասկածի և հալածանքի դառնութիւնները։

Զարհուրանքով լի փաստեր կան բանտային տարեգրութեան մէջ։ Ո՞ր մէկը յիշենք։ Մի օր ժանդարմական վարչութիւնը տեղեկանում է, որ մի արկղ դինամիտ է ու-

զարկուած Թիֆլիզ, Գէորգեան անունով մէկի հասցէին։ Կալանաւորում են մի Գէորգեան, որ ոչինչ կապ չունէր միւսի հետ և ոչ էլ տեղեկութիւն։ Նրան բանտարկեցին, նոյնիսկ ծեծեցին, որպէսզի խոստովանի, և եօթ ամիս տանջելուց յետոյ՝ արձակեցին... անմեղնին։ — Մի Հայուհի կալանաւորուեց և չորս ամիս բանտ նստեց միայն այն պատճառով, որ կասկածում էր՝ թէ տեսնուել է մի քանի քաղաքական յանցաւորների հետ։ 1899 թւի փետրուար 3-ի գիշերը Մոսկվայում խուզարկեցին 51 հայ ուսանողների բնակարաններ, մի մասն էլ բանտարկեցին. — վերջը „գործը դադրեցրուեց“, իբր անհիմն։ Թիֆլիզում մի ընտանիք ենթարկուեց խուզարկութեան, որդին էլ ձերբակալուեց միայն այն պատճառով, որ մի այլ կալանաւորի մօտ, որ նրանց ազգականն էր, գտնուել էր դրա մի նամակը, մի պարզ բարովագիր։ 1895 թւի ձմեռը՝ Թիֆլիզ, Բագու և Երևան կալանաւորուած և ամիսներով բանտարկուած անձանց մեծագոյն մասի դէմ ժանդարմական վարչութիւնը ոչինչ փաստեր չունէր, այլ լոկ կասկած, այն էլ հիմնուած գաղտնի լրտեսների ծախու ցուցմունքների վրայ։ Բանտարկուածներից շատերին ենթարկեցին խստագոյն հսկողութեան միմիայն նրա համար, որ նրանք չէին խոստովանում այնպիսի յանցանքներ, որ չէին գործել և չը գիտէին։

Ընվերջ են փաստերը։

Բարձրագոյն անարդարութեան անթիւ, անօրակելի այդ դէպքերն են, որոնք ստեղծեցին բանտային խորունկ լռութեան մէջ, Ռուսաստանի բոլոր կողմերում, սկսած Պետրոս-Պաւլովսկից մինչև վերջինը, ողբերգական տեսարաններ, մեծ մասամբ անյայտ՝ միամիտ հասարակութեանը։ Դիւրագգաց, բողոքող, ըմբոստ ոգիները՝ անկարող ընկճուելու, անընդունակ հաշտուելու սոսկալի իրականութեան հետ, յաճախ գիմեցին ամենադառն

ելքին,—անձնասպանութեան։ Եւ սկսեցին սրտաճմլիկ դէպքեր այն գետնափորների մէջ, ուր ազատութեան և բռնութեան յուսահատ պայքարն է մղւում...

— Ես ձեզ չեմ պատմի այդ սրտաճմլիկ դէպքերը— աղեխարշ են նրանք և չափազանց ցնցող։ Կը յիշատակեմ միայն սրբազան մի կտակ, գրուած բանտի մէջ՝ մի կալանաւորի ձեռքով, որ զոհ բերեց իրեն և այլևս կենդանի չէ. „Բանտը ինձ մաշեց՝ և ես այլևս յոյս չունեմ տեսնելու այն գեղեցիկ արշալոյսը, որի մասին այնքա՜ն յաճախ և այնքա՜ն յափշտակութեամբ խօսում էինք երազ-օրերին։ Մի խնդիրք միայն ունեմ։ Այն Մեծ-Ռուսաստանը՝ երբ կը կործանուի Պետրօ-Պաւլօվսկ—համառուսական ազատութեան գերեզմանը, չը մոռանաք, ընկերներ, այդ գալ և՛ իմ մամռապատ գերեզմանին։ Այդ օրը միայն հանգիստ կ՚առնեն իմ ոսկորները և այդ բոպէից միայն կը մոռացուին անլուր տանջանքները“։

Ռուսական Բաստիլը կործանուած և նրա փոխարէն՝ մի վիթխարի կոթող Ազատութեան, այս մակագրութեամբ՝ Յարգանք տանջուածներին։

— Երբ պիտի գայ այդ չքնաղ օրը։

Պատմութիւնը աւարտուեց. ունկնդիրները ցրուեցին, վրդովուած և վշտահար։ Եւ այնուհետև, ամեն անգամ, երբ անցնում եմ բանտերի կողքից, մեծ ու փոքր Բաստիլների մօտով, որտեղից տանջուած ընկերների յիշատակը վրէժ և բողոք է գոռում, ենթակայ անսահման ցասման՝ ես միշտ այս խօսքերն եմ մրմնջում,

— Երբ պիտի գայ չքնաղ օրը։

ԳԱՂՏՆԻ ՎԿԱՅԱԳԻՐՆԵՐ

(ՏԱՄՆԻՆՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Կառավարչապետի դիւանատան գաղտնի հրամանը. — Գաղտնի հաղորդագրութիւններ Կարսի նահանգապետի եւ շրջանապետի կողմից. — Թիֆլիզի ժանդարմական վարչութեան կազմած գաղտնի ցուցակը. — Հայ քաղաքական կալանաւորների ցանկը:

Հետեւեալ վկայագիրները, որ առաջ ենք բերում իբրեւ նմուշ, նոր եւ պերճախօս լուսաբանութիւն են Կովկասեան սահմաններում տիրապետող քաղաքականութեան:

Բացառիկ չեն այդ տեսակ թագնուած կարգադրութիւնները: Նոր հովերի սկսման օրերից՝ միապետութեան դիւանատները հեղհեղւում են գոցանով, իբրեւ մշտական հրաւէր՝ հսկելու եւ հետեւելու այն տարրին, որի ամեն մի քայլը նկատւում է իբրեւ քաղաքական շարժման նախանշան:

Երեւի շատ չի անցնի, եւ դիւանատների մէջ ծլող ու արթնացող դժգոհութեան ոգին՝ հրապարակ կը բերի գաղտնի թղթերի այնպիսի նմուշներ, որոնք սարսուռի հետ միասին ամենախիստ ցասում կ'աղդեն խաբուած հասարակութեան:

Ներկայ վկայագիրները՝ ռուսական պատմէնի հարազատ թարգմանութիւնն է, բառացի ճշտութեամբ: Նրանք ձեռք են բերուած կովկասեան զանազան քաղաքներում, —թէ ինչ ճանապարհով դա ձեռք բերողների գաղտնիքն է—հրատարակութեան տալու գովելի նպատակով:

ԿՈՎԿԱՍԵԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍԻ

ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ

ԳՐԱՍԵՆՆԱԿ

ԳԱՂՏՆԻ

Պ. Զինուորական Նահանգապետին

Կարսի Նահանգի

№ 480
4 ապրիլ 1903 թ.
Թիֆլիս

„Համաձայն կառավարչապետի պաշտօնակատարի տեղեկութիւններին՝ ստացած Ասիական Թիւրքիայից, Թիւրքահայերը՝ դրդւած հայ յեղափոխական կոմիտէների գործակալների միջոցով, պատրաստւում են ապստամբութեան։ Վերջինիս նպատակն է՝ մեր Անդրկովկասեան հայերի օգնութեամբ՝ տեղիք տալ Թիւրքերին դիմելու խիստ միջոցների եւ այդպիսով դարձնելու հայերի վրայ Եւրոպայի ուշադրութիւնը, որը պնդում է բարենորոգումների իրագործման վրայ Եւրոպական վիլայէթներում եւ մոռանում է, որ նոյնպիսի բարենորոգումներ խոստացել են սուլթանի կողմից նաեւ ասիական վիլայէթներին։

„Թիւրքաց իշխանութիւնները զանազան նախազգուշական միջոցներ են ձեռք առնում իրենց հպատակ հայերի ապստամբութեան դէմ եւ աշխատում են կատարելապէս անջատել նրանց մեր հպատակ հայերից, որոնք, ըստ երեւոյթին, շատ գործունեայ մասնակցութիւն ունեն ապստամբութիւնը նախապատրաստելու մէջ. սրա հետ միասին Թիւրքերը հաւատացած են, որ բոլոր կարգադրութիւնները լինում են Անդրկովկասեան հայերի կողմից։

„Ուրիշ տեղեկութիւնների համեմատ՝ Օսմանեան կառավարութիւնը իր ձեռքի տակ ունի անհերքելի ապացոյցներ, որ ասիական վիլայէթների հայերը պատրաստւում են ապստամբելու իրենց կառավարութեան դէմ՝ մշտական յարաբերութիւններ ունենալով Կովկասեան հայ յեղափոխական կոմիտէների հետ։ Եղեռնագրութիւն կայ, որ խառնակութիւնները պիտի սկսեն գարնան սկզբին՝ Կովկասից Թիւրքիա տանող ճարապարհները բացելուն պէս։

„Թիւրքերի կարծիքով՝ գլխաւոր կէտերը, որտեղից Անդրկովկասեան հայերը պիտի ներս խուժեն Թիւրքիա, են՝ Կաղզուան եւ Օլթի

„Այս բոլորի մասին պատիւ ունենք յայտնել Ձերդ պայծառափայլութեան, ի գիտութիւն եւ հարկաւոր դէպքում ի պատշաճ տնօրինութիւն“։

(Ստորագրութիւն)

ԶԻՆ. ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

ԿԱՐՍԻ ՆԱՀԱՆԳԻ

ԴԱՏԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՇԱՏ ԿԱՐԵՒՈՐ

ԿԱՏԱՐԵԼԱԳԻՏ ԴԱՂՏՆԻ

№ 143

13 ապրիլ 1903 թ.

Կարս

Կարսի Շրջանապետին

„Կարսի ոստիկանապետը իր զեկուցագրով՝ ապրիլի 11-ից, № 67, հաղորդում է, որ՝ ագենտների միջոցով իր հաւաքած տեղեկութիւններին նայելով՝ փախստական հայերի մէջ անպայման չարժում եւ պատրաստութիւն կայ՝ կարելիութեան առաջին դէպքում Թիւրքիա անցնելու Պարսկաստանի վրայով, որտեղ, ըստ եղած տեղեկութիւնների, նրանք գաղտնի կոմիտէից պիտի ստանան զէնք, փամփուշտներ, շոր եւ մինչեւ անգամ դրամ։ Ենթադրում են սահմանը անցնել Սուրմալուի գաւառից՝ Կարսի շրջանի՝ Բաշ-Շօրագեալ (՞), Բաշ-Քատիքլար, Աղ-Քատիքլար, Ղըզըլ-Քիւրիք-Դերէ, Փալդերման, Շօրաքի ու Խաս-Զիվոլիք գիւղերում, այլեւ Կաղզուանի շրջանի՝ Թիգար, Ղըզըլ-Ղօշ եւ Բաշ-Քիլիսա գիւղերի մներում եւ զոմերում՝ պահեստի հայ զինուորները զինավարժութիւն են սորվեցնում 6-6 հոգուց բաղկացած խմբերին, որի համար ստանում են վճար մի ինչ որ ընկերութիւնից։ Իսկ առհասարակ բոլոր հայ գիւղերում կատարւում է դրամական ժողովարարութիւն։ Գիշերները՝ 10-15 հոգուց բաղկացած զինուած խմբեր գիւղէ գիւղ տեղափոխութիւններ են կատարում։

„Որովհետեւ վերոյիշեալ տեղեկութիւններից մի քանիսը հաստատւում են նաեւ ապրիլի 11-ի № 167 ձեր զեկուցագրով՝ հայերի մէջ նկատւող շարժման եւ ձեր շրջանի համարեա բոլոր հայ գիւղերում կատարւող դրամական ժողովարարութիւնների վերաբերմամբ,—ուստի, ի լրումն ներկայ ապրիլի 2-ից եւ 5-ից, № № 120, 123, ձեզ արած առաջադրութիւններիս, ինչպէս նաեւ անձամբ իմ ձեզ տւած ցուցմունքներիս, յանձնարարում եմ.

„1) Հիմնել, ըստ ձեր հայեցողութեան, հայ գիւղերում ոստիկանական պահականոցներ, հայերի գործողութիւնների վրայ հսկելու եւ թոյլ չտալու համար, որ նրանք խմբեր զինեն, դրամ ժողովեն եւ առհասարակ կարգն ու հանգստութիւնը խանգարեն. իսկ եթէ — մարդկանց պակասութեան պատճառով — կարելիութիւն չկայ անհրաժեշտ թւով պահականոցներ հիմնել, այդ դէպքում՝ կազմակերպեցէք յաճախակի եւ ըստ կարելւոյն անընդհատ պտոյտներ հայ գիւղերի մէջ, ինչպէս եւ աւելի անհանգիստ ու կասկածելի վայրերում

„2) Առանձին ուշադրութիւն դարձնել՝ մանրամասնօրէն եւ հանդամանօրէն պարզելու Փարագետ գիւղի բնակիչ Կիրակոս Պետրոսովի արած յայտնութիւնը՝ թէ դրամի ժողովարարութիւն անում են Քեօղիք-Սաթըլմըշ գիւղում՝ Սեւախ Սարգիսովը, եւ Փարագետ գիւղում՝ Միսակ Սատուրով ու Նահապետ Սրուբովը, եւ իմանալով՝ թէ ում են յանձնում ժողոված գումարները, առանց յետաձգելու հաղորդել այս մասին անհրաժեշտ տեղեկութիւնները պրոկուրորական իշխանութեան եւ ժանդարմների վարչութեան

„3) Պաշտօնական գործերով Կաղզւան անելիք ճանապարհորդութիւնից վերադառնալուց յետոյ, խընդրում եմ Ձեզ՝ անյապաղ անձամբ գնալ հայ գիւղերը՝ իրերի դրութիւնը տեղնուտեղը պարզելու եւ հանգամանքներին նայած՝ անհրաժեշտ կարգադրութիւններ անելու, որպէս զի աւելի լաւ եւ աւելի իրական կերպով կազմակերպւեն ներկայ գործի համար անհրաժեշտ միջոցները։

„4) Կարգադրութիւն անել, որ ապրիլի 19-ին, առաւօտեան ժամը 10-ին, Կարս քաղաքում ինձ ներկայանան Մացրա, Զախմ, Քեօղիք-Սաթըլմըշ, Փա-

բագետ, Բէկլի-Ախմէտ, Դոլբանտլի, Բէրնա եւ Ջերմալը գիւղական տանուտէրների օգնականները։

„Հայկական շարժման պատճառով ագենտներ պահելու ծախսերի նախավճարը Ձեզ կ'ուղարկուի շուտով, իսկ առայժմ միջոցները քիչ լինելով՝ յատկացուում է 200 բուր.“։

Գեներալ-մայոր ՍԱՄՈՅԼՈՎ
Դրասենեակի կառավարիչ՝ ՊՕԼՍԿԻՑ

Զ. Ժ. Կ.

ՇՐՋԱՆԱՊԵՏ ԿԱՐՍԻ ՇՐՋԱՆԻ

ՇՈՒՏԱՓՈՍՏ

ԳԱՂՏՆԻ

№ 172
12 ապրիլ, 1903 թ.
Կարս

Երեւանեան Նահանգական ժանդարմական վարչութեան Կառավարչի օգնականին

«Իմ ունեցած տեղեկութիւնների համեմատ՝ ինձ յանձնուած շրջանի մի քանի հայ գիւղերում նախկին հայ գաղթականների ձեռքով կատարուում են դրամական ապօրինի ժողովարարութիւններ՝ նպատակ ունենալով օգնել հայ ապիտատօրներին, որոնք մտադիր են 10-15 հոգուց բաղկացած խմբերով մայիս ամսին անցնել մեր սահմանից դէպի թրքական հողը եւ խառնակութիւններ առաջ բերել այնտեղ։ Ինձ հասած հաստատ տեղեկութիւններին նայելով, դրամական ժողովարարութիւններ կատարում են՝ Զարուշադի Քեօղիք-Սաթըլմըշ գիւղում գաղթական Աւետիս Սարգիսովը, նոյն բաժնի Փարպետ գիւղում՝ Ալէքսանդրապոլ քաղաքի բնակիչ Միսակ Սաառուրով եւ գաղթական Նահապետ Արութովը։

„Այս մասին պատիւ ունեմ ձերդ բարեձնդութեան հաղորդել ի կարգադրութիւն“։

Ստորագրած է ԿԻՍԻԼԻՕՎ

Միաժամանակ Կարսի շրջանի շրջանապետը առանձին թղթերով, № № 179, 180, 181, 182, 183, գրում է Շօրագեալի, Սօղանլուղի, Աղբաբի եւ Կարսի մասերի իր օգնականներին՝ առաջարկելով ձեռք առնել միեւնոյն խնդրի վերաբերմամբ բոլոր հարկաւոր միջոցները ամէն բան պարզելու եւ յանցաւորներին պատասխանատուութեան ենթարկելու համար։

ԹԻՖԼԻԶԻ ԺԱՆԴԱՐՄԱԿՈՒ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻ ԹՂԹԵՐԻՑ

1895

ՑՈՒՑԱԿ

ՀԱՑՈՑ ԱԶԳԱՑԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԱԳԻՏԱՑՈՐՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՄՕՏ ԿԱՐԵԼԻ Է, ՑՕԳՈՒՏ ԳՈՐԾԻ ՊԱՐԶՄԱՆ, ԿԱՏԱՐԵԼ ՄԻԱԺԱՄԱՆԱԿԵԱՑ ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ազգանունները. Կոչում եւ զբաղմունք. Բնակատեղի

1. Ալէքսանդր Ստեփանեան (Սանդրօ), դրամափոխ, Բալչայա Կրիվայա 17 (Ն-րդ ուշաստ.)։
2. Ալէքսանդր Մովսէսեան, „Աղբիւր-Տարազի“ խմբագիր, գնացել է Ռուսիա։
3. Արամ Խաբազեան, քաղաք. վարչութեան հաշուապահ, Օրբէլեանովկ., 22, սեփական տուն։
4. Խաչատուր Մալումեան, „Մշակի“ աշխատակից. „Մշակ“ի խմբագրատուն, Բազարնայա, 11։
5. Տէր Մարկոսեան, „Մշակ“ի աշխատակից, Մալայա-Բէգխայինսկայա, տ. Եվանգուլովի, 16։
6. Սիմէօն Զաւարեան, ծառայում է ֆիլոքսէրայի խմբում, Լաբօրատօրն., տ. Ստատկովսկու։
7. Նիկողայոս Մատինեան, ֆրանսիական հիւպատոսարանի թարգման, Լաբօրատօրնայա։
8. Աշոտ Խումարեան, գրաշար, Մեչչանսկայա, 5 (5-րդ ուշ.)։
9. Յովհաննէս Ադամիրզեան, առեւտրական բանկի հաշուապահ։
10. Յարութիւն Միրզոեանց, դերձակ (արձակուած), հնչակիստ, Զիդրաչէնսկ., 1, խանութ 18։
11. Խաչատուր Վարդանեան, առանց որոշ պարապմունքի, Ախալքալաքի բնակիչ։
12. Յոլակ Տէր Սիմոնեանց, հիւսն, Յ. Միրզոեանցի խանութում (գիշեր-ցերեկ)։
13. Յակոբ Յակոբեան, ծառայող „Բօսսիա“ ապահով. ընկերութեան. հասցէն իմանալ չեղաւ։
14. Արտաշէս Սահակեան, Զալալօղլի գիւղում (Կամենկա)։

15. Օհաննէս, մշակ, ալիւրի պահեստ Թամամշեվի քարվանսարի տակը, Պուշկինսկ. (գիշեր-ցերեկ)։
16. Արշակ Թադէոսեան, ծառայող ինժիներային դիստանցիայում, Բէդխայինսկայա, 1, սեփական տուն, ճանապարհորդում է (դրօշակիստ)։
17. Ալէքսանդր Թադէոսեան, Թիֆլիզում չէ, Մոսկվա։
18. Յակոբ Թադէոսեան, ծառայում է Ներսիսեան դպրոցում, Բէլուտովսկայա, 22, սեփ. տուն։
19. Երեմ Խանտամեան, կանդիտէր, Պեսկովսկ., 4։
20. Ղազարոս Ազայեան, Նովո-Արսէնալնայա, 13։
21. Արամ Զմշկեան, հաշուապահ Շարբաբչէվի խանութում, Բազազիանաց։
22. Արաս խանեան, խմբագիր „Մուրճ“ լրագրի, խմբագրատուն „Մուրճ“ի։

Ցոլակ Տէր Սիմոնեանց գնել է զէնք եւ հասցրել Ա. Խարազեանին (նրա մօտ պահւում են զէնք եւ պատրոններ բէրդանկա)։

Մովսէսեան Մարգար, յաոնելու Նիկօին. այս վաղ էր։ Մարտիրոսեանը ունի պահեստ Աբովեանի տանը։

Յուլիս 19.

Եղնիկ Իգիթեանց, ծառայում է „Արձագանք“ի խմբագրատան, հնչակիստ, Թիւրքանպատակ. կարծեօք առանց անցագրի. Թիւրքիայում մարդ է սպանել։ Խմբագրատանը լինում է մամը 2։
Սարգիս Խանոյեան, Բալչայա Կրիվայա, 15։
Աբգար Յովհաննիսեան, իրաւասու գումայի, Բալչայա Կրիվայա, տ. Խանկալամովի, 1։
Դ. Ս. ԱրղուԹեան, (հնչակիստ)։
Սէրգէյ Արգուտինսկի, պօրուչիկ 16-րդ Գրէն. Մինզրել. գնդի։

Որտեղ էր առաջ ապրում Ալէքսանդր Միխայլով Յակոբեանց։ Որտեղ է ապրում Օրթաճալայի ճաշի Թամադա Գերասիմ Հաճի Մամուդեան (հնչակիստ)։
Որտեղ է ապրում Մուրադեան, Թամադա Օրթաճալում։
Որտեղ են ապրում Ալէքսանդր Հաճի-Փարուխեան եւ Եզոր Հաճի Փարուխեան (նրա եղբայրը)։
Նազարէթը եկաւ Թիւրքիայից (հասարակ մարդ, հնչակիստ)։

Ալէքսանդր Լիվով Ղուկասեան։

Ալէքսանդր Կարախանեան (զէնք գնող). Լաբօրատօրնայա, 37։

Սարգիս Մարուքեանց, գործակատար Լենֆիէլեանի խանութ. Դավիդով., փող. (հնչակիստ)։

Մեծատուրեան, Կօրգանովի շերամատանը, Ավչալսկայա փողոց։ Մեծ քանակութեամբ հայ լրագիրներ եւ բրօշիւրներ։

Պատեհ էր խուզարկութեան ենթարկել բժիշկ Նաւասարդեանին, „Արծագանքի" խմբագիր Աբգար Յովհաննիսեանին, բայց ի նկատի ունենալով նրանց հասարակական դիրքը, այլեւ նրանց գործելու շափազանց զգոյշ եղանակը (ցուցմունքներ եւ խորհուրդներ տալիս են միայն խօսքով), ենթադրում եմ, որ նպատակայարմար է՝ նրանց կանչել դիւանատուն եւ անել նրանց ներշնչում եւ նախազգուշութիւններ։

ԱՆՈՒԱՆԱՑՈՒՑԱԿ

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԼԱՆԱՒՈՐՆԵՐԻ

Կովկասեան եւ Ռուսաստանի Հայ քաղաքական բանտարկեալների ներկայ ցուցակը, իբրեւ առաջին փորձ, լիակատար չէ, եւ տարաբախտաբար՝ անուններ կան, որոնք պակասում են։ Այս ցանկի մէջ չեն մտնում նոյնպէս այն անձանց անունները, որոնք խուզարկութեան են ենթարկուել կամ գտնւում են ոստիկանական հսկողութեան տակ, բայց որոնք չեն բանտարկուել։

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

1. Արղութեան Յովսէփ, իշխան. ա) ձերբ. 1891 թ. Տրապիզոն եւ աքսոր. Օդեսսա. բ) ձերր. Պարսկ. 1899, բանտ. Տփխիս եւ աքսոր. Վեատկա 5 տարով։

Բաղէշեան Գարեգին, 1895, բանտ. Տփխիսում 9 ամսով եւ արտաքսւած Ռուսաստանից։

Տէր-Գրիգորեանց Անտոն, 1896, կալան. Բաքու եւ աքսոր. Հիւսիսային Կովկաս 1 տարով։

Եղիազարեան Արշակ, ձերբ. Նախիջեւան եւ աքսոր. Նովոչէրկասկ 2 տարով։

Լիսիցեան Ստեփան, բանտ. Տփխիսում 1892 1 ամսով։

Խզմալեան Թադէոս, բանտ. Բաքու, աքսոր. Հիւսիսային Կովկաս 2 տարով:
Մատինեան Նիկոլայ, 1891 Տփխիս, 3 ամիս բանտ:
Քոշարեանց Յակովբ, ծերբ. 1900 Բաթում եւ բանտ. Տփխիս:
Կարապետեան Արշակ, ծերբ. Ալէքսանդրապոլում 1896, աքսոր. Վարոնէժ:

10. Աւետիքեան Համի-Յակոբ, 1898, Տփխիս, բանտ. 1 ամսով:
Տէր-Մարկոսեան Յովհաննէս, 1892 բանտ. Տփխիսում:
Միրզոյեան Դաբրիէլ, 1892, մի ամիս բանտ Տփխիսում:
Միքայէլեան Քրիստափոր, ա) բանտարկուած Տփխիս եւ աքսորուած մի տարով Բեսարաբիա. բ) Բաքուում, 1895, բանտարկուած 5 ամսով:
Նորատեան Համազասպ, ծերբ. Ղարսում:
Տէր-Մկրտչեան Ստեփան, 1895, բանտ. Բաքու 8 ամսով եւ աքսոր. Ռուսաստան 2 տարով:
Տէր-Միքաքեան Յովհաննէս, Ալէքսանդրապոլից աքսոր. Նոր-Նախիջեւան 3 տարով:
Մարգարեան Մարտիրոս, 1896 բանտ. Ղարսում ու աքսոր. Օդեսա 3 տարով:
Օհանջանեան Սաթենիկ, օրիորդ, 1898 թ., 8 ամիս բանտ:
Տէր-Վարդանեան Վարդան, բանտ. 1898 Երեւան 1 տարի:

20. Վարդանեան Խաչիկ, ծերբ. 1895 Ախալքալաք եւ Աքսորուած Ռոստով:
Վառվառէ, օրիորդ, 1896 բանտ. Տփխիս 3 ամիս:
Խանազադեան Ռուբէն, ծերբ. Տփխիս, 5 ամիս բանտ եւ աքսոր. Ռոստով:

Գ Ր Ո Ղ Ն Ե Ր

Աղայեան Ղազարոս, 1895, բանտ. Տփխիս ու աքսորուած Նախիջեւան 2 տարով:
Ատրպետ, ծերբակալուած 1896 Տփխիս, աքսորուած Նոր-Նախիջեւան:
Իսահակեան Աւետիք, ծերբ. 1896 Ալէքսանդրապոլում, բանտ. Երեւան մի տարի, աքսոր. Օդեսա 2 տարով:
Մալումեան Խաչատուր, ա) ծերբ. Տփխիս 1892, բանտ. մի ամիս. բ) բանտ. Տփխիսում եւ Բաքուում 1895:
Սեղբոսեան Լեւոն, 1899 եւ 1903, մի-մի ամիս բանտ. Տփխ.:
Շիրվանզադէ, 1895 բանտ. Տփխ., աքսոր. Օդեսա 1 տարով:
Վարդ-Պատրիկեան, ծերբ. Կ. Պոլսում, փոխադրուած Տփխիս եւ աքսոր. Հիւսիս. Ռուսաստան 3 տարով:

Ո Ւ Ս Ա Ն Ո Ղ Ն Ե Ր

30. Աղամիրզեան Սարգիս, ծերբ. Պարսկաս. 1896, փոխադր.

Տփխիս եւ աքսոր. Հիւսիս. Ռուսաստան 3 տարով:
Բէրբէրեան Ռուբէն, ծերբ. Տփխիս 1895 թ., 2 ամսով:
Գաբրիէլեան Յովնան, 1899 թ. 5 ամիս բանտ. Մոսկվա:
Թադէոսեան Յովսէփ, ծերբ. 1899 Մոսկվա 5 ամսով:
Լատիսեան, ծերբ. 1899 Մոսկվայում 5 ամսով:
Կաֆեան Գաբրիէլ, ծերբ. 1893, աքսոր. Ռուսաստ. 5 տարով:
Ղորղանեան, ծերբ. 1899 Մոսկվայում, 5 ամսով:
Նազարեան Իպպոլիտ, ծերբ. 1899 Մոսկվա 5 ամսով:
Ստեփանեան Յակոբը, 1900 թ., 10 ամիս բանտ Տփխիս:
Տէր-Գրիգորեան Վաղարշակ, 1899, Մոսկվ. 5 ամիս բանտ:
40. Տատեան Գէորգ, 1899, բանտ. Մոսկվ. 5 ամիս:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐ

Տէր-Գրիգորեան Ջալալ, ծերբ. Ախալքալաքում 1896:
Դնունի, ծերբակալուած Տփխիսում 1892 թ., մի ամիս բանտ:
Զաւարեան Սիմէօն, ա) 1891 ծերբ. Տրապիզօն, աքսոր. Բեսարաբիա մի տարով, բ) 1892 բանտ. Տփխիս մի ամսով, գ) 1896 բանտ. Տփխիս 2 ամսով:
Տէր-Զաքարեան, բանտ. Երեւանում 1884 ու աքսորուած Օդեսսա 2 տարով:
Թադէոսեան Արշակ, ծերբ. 1896 Տփխիս եւ աքսոր. Հիւս. Ռուսաստան 2 տարով:
Մաղաթեան Հայկ, ծերբ. Երեւան 1884, աքսորուած Բեսարաբիա 2 տարով:
Վարդանեան Տրդատ, ծերբ. 1884 Երեւան ու աքսոր. Բեսարաբիա 4 տարով:

ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐ

Աղամիրզեան Յովհաննէս, կալան. Տփխիս 1895, աքսոր. Օդեսսա 1 տարով:
Բարսամեան Արշակ, ծերբակալուած Տփխիսում 1896:
50. Գիւլումեան Լեւոն, 1896 Ալէքսանդրոպոլ բանտ. 4 ամիս:
Տէր-Գրիգորեան Արշակ, Տփխ. 1892 բանտ 1 ամսով:
Դաւթեան Նեսէս, բանտ. 1895 Բաքու 5 ամիս:
Դաստակեան Աբրահամ, կալան. Տփխիս 1892 թ.
Զաքարեան, բանտ. Բագու 1895 թ. 7 ամիս եւ աքսորուած Նախիջեւան 2 տարով:
Կիրակոսեան Յովսէփ, բանտ. Բագու 1895 թ. 6 ամիս:
Կոտրաշեան Ջանիկ, Սուխում 1903 բանտ. մի ամիս:
Ղազարեան Ղազար, ծերբ. Ղարսում 1895:
Մարդանեան Փրիդոն, ծերբ. Բագուում 1896:
Յովհաննէսեան Յովհաննէս, 1895 բանտ. Բաքու 6 ամսով եւ աքսորուած Ռուսաստան 2 տարով:

60. Ցովակիմեան, 1895 քանտ. 5 ամիս Բաքու:
Նադիրեան Սիմէօն, ձերբ. Բաթում 1896, աքսոր. Ռուսաստան 3 տարով:
Սաղաթէլ, ձերբ. Բագու 1895:
Ստեփանեան Ալէքսանդր, քանտ. 1895 Տփխիս 6 ամսով, աքսորուած Նախիջեւան 2 տարով:
Սիմոնեան Սիսակ, ձերբ. Ալէքսանդրոպոլ 1895, աքսոր. Օղեսսա 3 տարով:
Օքսնեան Տիգրան, քանտ. 1892 Տփխիսում մի ամսով:

ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

Տէր Գրիգոր, ձերբ. Երեւանում 1898 եւ աքսորուած Քութայիսի նահանգը:
Տէր Յոհան, ձերբ. Ալէքսանդրոպոլում 1897, աքսորուած Ռուսաստան երեք տարով:
Հմայեակ վարդապետ, ձերբ. Երեւանում 1899, աքսոր. Ռուսաստան 3 տարով:

ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐ

Ալոյեան Գալուստ, 1902, քանտ. 5 ամիս Երեւանում:
70. Յոհաննէս Աւետիս, ձերբ. 1892, Տփխիս, 2 ամիս քանտ:
Բէկլարեան Յովհաննէս, 1895, Տփխիս, մի ամիս քանտ:
Ոսկերիչ Բախշի, 1896, մի տարի քանտ եւ 5 տարի աքսոր:
Գազանչեան Յովհաննէս, Տփխիս, 8 ամիս քանտ եւ 5 տարի աքսոր:
Գէորգեան Կարապետ, ձերբ. Ղարս, աքսոր. Պարսկաստան:
Ուսուլ Գրիգոր, ձերբ. Պարսկաստան, 3 ամիս քանտ Տփխիս:
Դաւթեան, ձերբ. Տփխիս 1892:
Դանդուրեան, ձերբ. Տփխիս 1892:
Յումարեան, քանտ. Տփխիս 1895, աքսոր. Հիւսիսային Ռուսաստան 5 տարով:
Ղազախեցի Միքայէլ, 3 ամիս քանտ եւ աքսոր. գիւղը:
80. Գանձակեցի Մկրտիչ, 1895, Տփխիս, մի ամիս քանտ:
Մակարեան Արմենակ, 1895, Տփխիս, 8 ամիս քանտ:
Մկրտչեան, ձերբ. Տփխիս 1899:
Տէր-Յովհաննէսեան, ձերբ. Տփխիս 1892:
Սիմոնեան Արտաշէս, ձերբ. Դիլիջանում 1896:
Սիմոնեան Աւետիք, ձերբ. Ազուլիս 1896 եւ քանտ. Երեւանում 6 ամիս:
Սարաֆեան (Հայր) քանտ. Տփխիս 8 ամսով:
Սարաֆեան Նաշիդ (որդի) նոյն պատիժը:
Սարաֆեան Պարոյր (որդի) նոյն պատիժը:
Սարաֆեան Դարեգին (որդի) նոյն պատիժը:

90. Վարդանեան Լեւոն, ձերբ. Դիլիջանում 1896:
Վարդան պարսկաստանցի, 1899, Տփխիս, մի տարի բանտ:
Տէր-Մկրտչեան, ձերբ. Տփխիս 1892:

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐ

Ադամիրզեան Պօղոս, ձերբ. Ասխաբադ 1896:
Թիւրքեան Յովհաննէս, 3 ամիս բանտ. Տփխիս:
Կիրակոսեան Յարութիւն, բանտ. 1 ամիս Տփխիս:
Միրիմանեան Խորէն, բանտ Տփխիս մի ամիս:
Մախլաս, Տփխիս, մի տարի բանտ եւ աքսոր 5 տարի:
Մելիք Գրիգորեան Բարսեղ, ձերբ. Տփխիս 1900, բանտ. 7 ամսով:
Մուսինեան Յովհ., ձերբ. Մոսկվա 1896, մի տարի բանտ:
100. Յակոբեան, ձերբ. Տփխիս 1892:

ԱԶԱՏ ՊՐՕՖԵՍՍԻՈՆԱՅԻ ՄԱՐԴԻԿ

Աշոտ Բագրատունի, նկարիչ, Տփխիս, 1895, բանտ. 1 ամիս:
Աբելեան Յովհաննէս, դերասան, բանտարկուած 1892 Տփխիս.
Եղիազարեան Վասիլ, փաստաբան, ձերբ. Երեւանում 1889, աքսոր. Օդեսսա 2 տարով:
Զալեան Միքայէլ, բժիշկ, ձերբ. 1895, բանտ. Բաքու 5 ամսով:
Թադէոսեան Տիգրան, բժիշկ, ձերբ. Տփխիս 1896, աքսոր. Ռուսաստան 2 տարով:
Կարա-Մուրզա, երաժիշտ, ձերբ. Վլադիկավկազ 1897:
Մուրատեան Մինաս, բժիշկ, ձերբ. Մոսկվա 1896:
Մնացականեան Դաբրիէլ, փաստաբան, բանտարկուած Երեւանում 1896:
Մատինեան Նատալիա, մանկաբարձուհի, 5 ամիս բանտ Տփխիսում:
110. Փիրադեան Գրիգոր, նկարիչ, Տփխիս, բանտ. մի ամսով, 1892:
Զալալեան Ռուբէն, փաստաբան, ձերբ. Երեւան 1889, աքսորուած Օդեսսա 2 տարով:
112. Սէրէմձեան Պետրոս, նախկին սպայ բուլգար. բանակի, բանտ. Տփխիսում 1896 մի տարով:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ

(ՔՍԱՆԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Եկեղեցական կալուածքների խլումը. — Հայոց եկեղեցու իրաւունքները. — Յունիսի 12-ի հրամանը. — Ժողովրդական ցասում ոուսաց կառավարութեան դէմ. — Ալեքսանդրօպոլի հայերի ցոյցը. — Ցոյց Երեւանում. — Բողոքի արտայայտութիւններ. — Կ. Պոլսի հայոց պատրիարքի հարցը. — Կոչ. — Կեանքի անողոք դասը:

Հիւսիսը նոր դաւ դրեց:

Եւ այս անգամ՝ հայկական տկարաթեւ եկեղեցու դէմ: „Լոյս տեսաւ բարձրագոյն հրաման՝ հայ լուսաւորչական եկեղեցու կալուածքները գրաւելու մասին“ — ահա այն հակիրճ հեռագիրը, որ ինչպէս ռումբ պայթեց Կովկասեան հայութեան գլխին, 1903 թ-ի յուլիսի սկզբներին, երբ միամիտ ժողովուրդը, համառուսական շարժումների հանդէպ, իրան համարում էր, գէթ առ ժամանակ, „մոռացած“, ազատ՝ նոր փորձանքներից:

Հետաքրքրական են նախապատրաստական մանրամասները: Ամբողջ եօթն ամիս, իշխան Գոլիցին, կովկասեան ցաւագարը, Պետերբուրգ հաստատուած՝ մտքեր էր պատրաստում իր նոր ծրագիրը յաղթանակով պսակելու համար: Պօբեդօնօսցեվ, ի հարկէ, նրան քաջալերեց: Ձայնակցեցին մի քանի վարագուրուած „ուժեր“ ևս: Եւ սրտապնդուած այդ աջակցութիւններից, նա ներկայացաւ մինիստրական կոմիտէին: Սակայն այդտեղ—անսպասելի բան—փոքրիկ դիմադրութեան հանդիպեց. „Անյարմար է և վտանգաւոր, ասում էին չափաւորները, այս խառն ժամանակներում՝ յարուցանել մի նոր խնդիր և այն էլ

այնքան փափուկ, ինչպէս է եկեղեցու կալուածքների հարցը“։ Մինիստրների մեծամասնութիւնը միացաւ այդ կարծիքին։ Բայց ծրագրի գլխաւոր հեղինակը չը յուսահատուեց։ Նա թողեց մինիստրական կոմիտէն և սկսեց այլ ճանապարհներ բռնել, պալատի „աղդեցիկներին“ համոզել... Պատմում են, որ մինիստրական ժողովը՝ ձայների մեծամասնութեամբ վճռեց մերժել կառավարչապետի ծրագիրը, բայց Նորին Մեծութիւնը, չկամենալով վշտացնել իշխան Գոլիցինին, որի մի այլ խնդիրը քիչ առաջ մերժել էր, ընդունեց փոքրամասնութեան կարծիքը և բարձրագոյն հաստատեց գողութեան առաջարկը...

Եւ նոյն այն օրերին, երբ „Կառավարչական Համբաւաբերը“ իր պաշտօնական էջերում անմահացրեց նոր կարգադրութիւնը, կովկասեան կառավարչապետը՝ հպարտ իր յաղթութեամբ, շտապեց բռնել հարաւի ճանապարհը, հասաւ Թիֆլիզ, կարգադրեց „ամենախիստ միջոցների դիմել“ նոր օրէնքը գործադրելու համար, գաղտնի հրահանգներ տուեց, պատուիրեց Թիֆլիզի պաշտօնական օրգանի մէջ յօդուածներ զետեղել և ցոյց տալ հայոց հասարակութեանը, որ „գրաւելով կալուածքները՝ կառավարութիւնը ուզում է աւելի հարստացնել հայոց եկեղեցին“, և ապա խաղաղ ու անվրդով, քնած խղճով, մեկնեց ամարանոց՝ վայելելու հանգստութեան քաղցրիկ ժամերը...

Բարդ չէ „կալուածական պատմութիւնը“։

Հայոց եկեղեցին Կովկասի մէջ ունի մեծ կալուածքներ, հող, անտառներ, տներ, ինչպէս և դրամական հարստութիւն, կտակած ժամանակի ընթացքում և վաւերացրած օրէնքի կողմից։ Այդ հարստութիւնը, չը նայած այն թալանին, որին ենթարկուեց դարեր շարունակ, դեռ շատ խոշոր է և հասնում է մօտ 90-100 մի-

լիսնի։ Դա կրօնասէր Հայի տուրքն է, մատուցած եկեղեցուն, քրիստոնէական վարդապետութեամբ յափշտակուած աղգի յարգանքը, նրա աշխատանքի և քրտինքի պտուղը, նուիրաբերուած իր տաճարներին։

Էջմիածինը և Ընդրկովկասը տիրապետելուց յետոյ, ռուսաց կառավարութիւնը 1836 թուի Պօլօժենիայով ճանաչեց Հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը և նրա վարչական իրաւասութիւնը։

Օրէնքը ասում է.

Յօդ. 117. — „Իւրաքանչիւր շարժական կամ անշարժ ստացած՝ նախանշանակեալ ի պահպանութիւն որևիցէ լուսաւորչական Հայոց մենաստանի կամ եկեղեցւոյ կամ նոցին վերաբերեալ տուաւածահաճոյ շինուածոց՝ համարի ընդհանուր ստացած ողջոյն լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց։

Յօդ. 121. — „Կառավարութիւն ստացուածոց լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց կախի անընդմիջապէս զերիցփոխանաց կամ զեկեղեցպանաց յիւրաքանչիւր եկեղեցիս եղելոց։

Յօդ. 99. — „Վանահարք պահպանեն յամբողջութեան զշարժական և զանշարժ կայս մենաստանին, և պատասխանատու լինին զկանոնաւոր կիրառութենէ եկամտից։"

Այդ օրէնքի համաձայն էլ կառավարեցին կալուածքները մինչև այն օրը, երբ փչեցին քաղաքական նոր հովեր և Հայոց եկեղեցին ընկաւ միապետութեան կասկածոտ հալածանքի տակ, որի վերջաբանն եղաւ յունիսի 12-ի բարձրագոյն կարգադրութիւնը։

Իբրև մեկնաբանութիւն այդ կարգադրութեան՝ հրատարակուեց հետևեալ պաշտօնական նենգամիտ հաղորդագրութիւնը.

„Հայ լուսաւորչական եկեղեցու կալուածքները նոյն եկեղեցու հոգևորականութեան ձեռքով կառավարելու վերաբերմամբ՝ կովկասեան գլխաւոր վարչութեան հաւաքած տեղեկութիւններից երևաց, որ այդ կառավարութիւնը չէ համապատասխա-

նում ոչ պետական իշխանութեան նպատակներին և ոչ իրեն՝ եկեղեցու օգուտներին։ Դրա հետ միասին՝ 1897 թուի յունիսի 2-ի և 1898 թուի մարտի 26-ի Բարձրագոյն հրամաններից յետոյ՝ հայ լուսաւորչական եկեղեցական ուսումնարանները և նրանց պատկանած գոյքերը ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան յանձնելու մասին՝ հայ լուսաւորչական հոգևոր իշխանութեան կողմից ծագեց ընդդիմութիւն այդ կարգադրութեան իրագործման դէմ, որ արտայայտուեց մի քանի կալուածքներ իր ձեռքում պահելու մէջ, որոնցով պէտք է ապահովուէին ուսումնարանների գոյութիւնը։ Այդ տեսակ երևոյթները վերացնելու համար՝ անհրաժեշտ նկատուեց հայ լուսաւորչական եկեղեցու կալուածքների վարչութիւնը կենտրոնացնել կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ։ Այս խնդրի մասին մինիստրների կոմիտէի կազմած պ օ լ օ ժ է ն ի է ն ներկայ տարեայ յունիսի 12-ին արժանացաւ Բարձրագոյն հաստատութեան։ Ներկայ օրէնքը, պահպանելով հայ լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքը յիշեալ կալուածքների վրայ, չէ զբաղում նրան՝ ստացուելիք եկամուտների այն մասից, որը, ուսումնարանների պահպանութեան ծախքերը դուրս գալուց յետոյ, կը մնայ ազատ։ Հայ լուսաւորչական եկեղեցու կարիքները լցուցանելուց յետոյ՝ ինկատի կայ եկամուտների 5 % ի յետաձգումով հիմք դնել այդ եկեղեցու օժանդակ դրամադլխին։ Այդ տեսակ դրամադլխի կազմութիւնը կարող է ապահովել հայ եկեղեցու բարեկեցութեան կանոնաւոր զարգացումը, մինչդեռ այժմ այդ դաւանութեան բազմաթիւ հաստատութիւնների մէջ, որոնք ընդարձակ կալուածքներ ունեն, շատ կան և այնպիսի ծուխեր, որոնց միջոցները չափազանց սուղ են և գիւղական հոգևորականութիւնը սակաւ ապահովուած։ Յիշեալ դրամադլուխը սահմանելով՝ նպատակ կայ օգնութիւն ցոյց տալ կարիք ունեցողներին։ Սրա հետ միաժամանակ պատշաճաւոր միջոցներ են ձեռք առնուում եկեղեցական կալուածքները կառավարելու նոր կարգ հաստատելու համար“։

„Պաշտօնական հաղորդագրութեան“ այդ մութ ակնարկները աւելի պարզուեցին կիսապաշտօնական, ներշնչուած յօդուածների մէջ, որոնք լոյս տեսան Պետերբուրգ ու Թիֆլիզ և որոնց ձգտումն էր համոզել հա-

յոց համայնքներին, թէ կալուածքները գրաւելով՝ կառավարութիւնը նպատակ ունի. ա) Աւելի մեծացնել լուսաւորչական եկեղեցու եկամուտները և հետևաբար նպաստել նրա բարգաւաճման, բ) Ապահովել աղքատ հոգևորականներին, որոնց վիճակը այժմ շատ ողբալի է, և գ) Ազատել եկեղեցին և կալուածքները ապօրինի յափշտակութիւններից։

Ի հարկէ, ոչ ոք չը հաւատաց։ Սրանից կէս դար առաջ, երբ դեռ այնքա՜ն նկատելի չէր կառավարչական ծրագիրների ներքին միտքը, հայերի մէջ ճշմարիտ է, գանուում էին շատ միամիտներ՝ հաւատացող „բարեխնամ կառավարութեան“ „բարեմիտ“ ցանկութիւններին, սակայն այդ երանելի ժամանակները անդառնալի կերպով պատմութեան գիրկը անցան։

Փաստերը պերճախօս են։ Ուղղափառ կառավարութիւնը, տարիներ են արդէն, ամենաանողորմ միջոցներով ականներ փորեց հայկական եկեղեցու հիմքերի տակ, յաճախ խնդիր յարուցեց երկու եկեղեցիների միացման մասին, պետական գումարներով և խաբուսիկ խոստումներով շատ հայերի ստիպեց կրօնափոխ լինել, յայտարարեց հայոց հոգևորականութիւնը իբրև „հայկական շարժման գլուխ ու միանգամայն վտանգաւոր“— և երբ մի նոր ու չարամիտ քայլ անելու փափուկ որոշման վրայ էր, ճգնեց հաւատացնել զաւեշտական լրջութեամբ, որ ինքը նպատակ ունի աւելի ուժեղացնել այն եկեղեցին, որ „թշնամի է ուղղափառութեան“ և այն հոգևորականութիւնը, որ „աղբիւր է հակառուսական պայքարի“։

Հաւատացող, այո՛, չեղաւ։ Այլ ընդհակառակը, ամբողջ հայութիւնը թէ Կովկաս և թէ սահմաններից դուրս՝ միաբերան և միակամ նկատեց վերջին կարգադրութիւնը իբրև մի դաւադիր միջոց, որ նպատակ ունի դրամական-տնտեսական ուժով՝ իր ձեռքն առնել, սարկա-

ցնել հոգևորականութիւնը, ապա առաջ անցնել և հարուածել եկեղեցու անկախ գոյութեան։ Եւ դեռ ուրիշ շատ երկիւղներ, ստեղծուած կասկածոտ ժողովրդի մտածողութեան մէջ *։

Ընթափանցելի չեն դիւանական գաղտնիքները։ Դրպրոցները փակեցին, համարելով նրանց բուն հակակառավարչական պրօպագանդի։ Կալուածքների գրաւման խնդիրը յարուցին, որովհետև „տեղեկութիւններին նայելով“, այդ „հարստութեան նշանաւոր մասը տրուում է հայկական պրօպագանդին, հայկական անկախութեան գործին“։ Եւ դրա առաջն առնելու համար էր, որ չինովնիկութիւնը վճռեց իր խեղդող ճանկերի և անյագ որկորի մէջ տեղաւորել այն բոլորը, ինչ որ կաթիլ-կաթիլ ամբարուած էր ժողովրդի կրօնական ընծայաբերութիւնից։

Հայ ժողովուրդը, որ այդ հարստութեան միակ աղբիւրն է, դէմ չէ եղել և չէ երբէք՝ հոգևոր վարչութեան վրայ հսկողութիւն նշանակելու մասին։ Հայը՝ հոգևորականութեան գերի չէ եղած։ Բայց բարեխիղճ, անխարդախ հսկողութիւնը կարող է գալ միմիայն ժողովրդից, որ գերագոյն տէրն է նոյնիսկ եկեղեցու, և ոչ թէ միապետական կառավարութիւնից, որի ճանկերը երկաթեայ են, որկորը՝ անյատակ, թշնամութիւնը՝ անսահման և բիւր անգամ աւելի վտանգաւոր ժողովրդի համար, քան եկեղեցին և նրա սպասաւորութիւնը...

Եւ բռնուած այդ վտանգի երկիւղով՝ ցնցուած նորագոյն անարդարութեան հանդէպ, ժողովուրդը բողբի և ցասման ճիչ արձակեց։

---

* Կարդացէք երես 58—63, որոնք վերաբերում են եկեղեցական կալուածքների խնդրին։ Յունիսի 12-ի հրամանը լոյս տեսաւ այն ժամանակ, երբ այս գրքի առաջին մասը արդէն տպագրութեան էր յանձնուած։

Ու „Հպատակութեան աշխարհի մէջ“ տեղի ունեցան անսպասելի և խրախուսիչ իրողութիւններ։ Ընդհանուր արթնացումն էր։ Կովկասեան շատ քաղաքների հայկական շրջանները ժողովներ կազմեցին ուր միակամ որոշումներ եղան հրաւիրելու Հայոց կաթողիկոսին, որ եկեղեցու ներկայացուցիչն է, ընտրուած ժողովրդից,—բողոքել կառավարութեան դէմ, չը յանձնել կալուածքները և եթէ հարկ լինի, հրաժարական տալ։ Առաջնորդներին ու սինոդականներին դիմումներ եղան նոյն ոգւով։

Ցատանուողները սպառնալիքներ ստացան։ Շատ գիւղերում ժողովներ եղան, ուր գեղջուկները երդուեցին մինչև վերջ դիմադրել։ Կատարուեցին թշնամական ցոյցեր։

Հայաշատ մի քաղաքում, Ալեքսանդրօպոլ, ժողովրդական ցասումը բռնկեց հրապարակով, ճիշտ այն միջոցին, երբ Հայոց ծերունի հայրապետը անցնում էր այնտեղով՝ Էջմիածնի վանքը վերադառնալու համար։

„Յուլիսի 29-ին, դրում է ականատեսներից մէկը, քաղաքի Հայ լուսաւորչական բոլոր եկեղեցիների զանգերը սկսեցին խփել, որ նշան էր լինելիք համախմբման։ Ժամ 10-ին համարեա բոլոր խանութները արդէն փակ էին. մօտ հինգ հազար հոգի, տղամարդիկ և կանայք, հաւաքուած առաջնորդարանի դուռն, սպասում էին կաթողիկոսի դուրս գալուն, որպէսզի իրենց արդար բողոքը յայտնեն... Նախ այդ բողոքը յայտնուեց պատգամաւորների միջոցով։ Կաթողիկոսը լսելով պատգամաւորներին, խոստացաւ ոչ մի թղթի չստորագրել, ոչինչ չը յանձնել և բողոքել կառավարչական կարգադրութեան դէմ։ Քիչ անցած՝ կաթողիկոսը, շրջապատուած իր շքախմբով, դուրս եկաւ առաջնորդարանից՝ կայարան գնալու համար։ Այդ րոպէին չը տեսնուած իրարանցում ընկաւ ժողովրդի մէջ։ Բոլորը միաբերան գոչում էին. „Վերհատա՛ռ, բողոքիր, մերժիր, կալուածքները մի յանձնիր, մի վճռուիր, մենք քեզ հետ ենք“։ Յուզած ամբոխը շրջապատեց կաթողիկոսական կառքը և հետևեց նրան մինչև կայարան՝ ամբողջ ժամանակը կրկնելով. „Բողո՛ք, բողոք“։ Ժողովրդական այս միակամ գոչը ուժգին տպաւորութիւն թողեց։ Յուզմունքը

այնքան մեծ էր, որ քարեր նետուեցին ժանդարմների վրայ։ Վրդովմունքը տարածուում է"։

Ուրիշ բուռն եղաւ ցասումը հայկական մի այլ կենտրոնում—Երևան։ Օգոստոսի 16-ին, երբ մայր-եկեղեցում պատարագը վերջացաւ, յուզուած ժողովուրդը, մի քանի հազար հոգուց բաղկացած՝ համախմբուեց և որոշեց դիմել Էջմիածին, բողոքելու հաստատ որոշումով։ Բայց նախ քան հայոց կրօնական կենտրոնի ճամբան բռնելը, ժողովուրդը դիմեց առաջնորդարան և ստիպեց արքեպիսկոպոս Պարզեանին՝ հանրային պատգամաւորութեան գլուխ անցնել։ Ականատեսը նկարագրում է այսպէս.

„Եկեղեցուց՝ ցուցարարները շարժուեցին դէպի Աստաֆեան դղեակաւոր փողոցը, հակառակ ոստիկանութեան թախանձանքին, անդադար գոչելով՝ „Դէպի Էջմիածին, դէպի Էջմիածին"։ Ապա թեքուեցին դէպի նահանգապետի տունը։ Երկիւղից բռնուած ոստիկանապետը՝ ամեն ջանք գործ դրեց հոսանքը կասեցնելու, բայց գրգռուած ամբոխը ականջ չը կախեց, շարունակեց շարժուել դէպի առաջ, անցաւ Հրազդանի կամուրջը և բռնեց Էջմիածնի ճանապարհը։ Նահանգապետը անձամբ շտապեց հեռագրատուն և կարգադրութիւն տուեց Էջմիածնի ոստիկանութեան։ Կարգադրեցին զինուորներ ևս ուղարկել։ Էջմիածին չը հասած՝ մի քանի հարիւր զինուորներ կարեցին ժողովրդի առաջը։ Դիմադրութիւնը մեծ էր. լուեցին հրացանի և ատրճանակի որոտներ. եղան վիրաւորուածներ. սակայն գրգռուած բազմութիւնը կանգ չառաւ, գրոհ տուեց, կորեց շղթան, առաջ անցաւ և մեծ ազմուկով ներս մտաւ Վաղարշապատ։ Լռակեաց վանքը չը տեսնուած ցոյցերի ականատես, վկայ եղաւ։ „Բողոքելը չը տա՛լ" — այդ էր լուում բոլոր բերաններից, և այդ վճռով դիմեցին կաթողիկոսին ժողովրդական պատգամաւորները։

„Գիւղերը նոյնպէս յուզած են։ Մի քանի տեղերից դէպի Էջմիածին են ուղղուել զինուած դիւղացիներ, միանալու հակակառավարչական ցոյցին, որի ալիքները աւելի ու աւելի են լայնանում"։

Բողո՜ք, բողո՜ք։ Էլ նա արձագանք գտաւ շատ հեռու։ Սահմանից դուրս, այնտեղ, ուր չը կայ ցենզոր և ոչ

էլ պոլիցիական կնուտ, բռնկումը կրկնապատկուեց։ Ազատ մամուլի էջերում որոտացին դիմադրութեան կոչեր։ Շանթեր թափուեցին բռնութեան հասցէին։

Հնչեցին զայրացման ձայներ նոյնիսկ այն երկրից, որ վաղուց արդէն բողոքողների գերեզմանոցն է։ Եւ իբրև այդ բողոքի արտայայտութիւն, Կ. Պոլսի Հայոց պատրիարքը դիմեց Էջմիածնի կաթողիկոսին, դիպլոմատիական մեղմութեան բոլոր ձևերը կրող պաշտօնական հեռաձայն գրութեամբ.

„Վեհափառ Ս. Հայրապետ,

„Պոլսոյ օտար եւ հայ թերթերու մէջ՝ Պետերբուրգէն արտասահման ուղղած հեռագիր մը տեսնուեցաւ, որ կը ծանուցանէ թէ յետ այսօրիկ Ռուսաստանի հայոց եկեղեցապատկան կալուածներն ու գոյքերը կայսերական հրամանագրով մը՝ պիտի անցնին պետական վարչութեան ձեռք այն գլխաւոր պատճառաւ, որ իբր թէ հայ կղերին ձեռքը կառավարուած ինչքերն ու գոյքերը մատակարարելու եղանակը ոչ պետական տեսակէտով կրցած էր հաճելի ըլլալ ու ոչ ալ հայ եկեղեցիին շահերուն համապատասխանել։

„Այսպիսի տնօրէնութիւն մը, որու ստուգութեան չենք ուզեր հաւատ ընծայել, ծանրակշիռ հանգամանք մը ունի կրկին տեսակէտով.—նախ՝ վասնզի միջամտութիւն մը կ'ենթադրէ Ազգին Հոգեւոր վարչութեան յատուկ գործերուն, եւ հայ եկեղեցւոյ պատկանեալ կալուածոց ու գոյից սեփականութեան ու մատակարարութեան իրաւունքն կ'առնուի անոր ձեռքէն, ու երկրորդ՝ վասնզի առանց փաստի ծանր ամբաստանութիւն մը կ'ուղղուի հայ եկեղեցւոյ պաշտօնէից դէմ, որոնց վրայ հսկելու եւ ի հարկին, երբ ո եւ է զեղծում գործուած լինի, կարեւորն ի գործ դնելու իրաւունքն կը պատկանի ամենայն հայոց ընդհանրական Հայրապետին, ու հետեւաբար բանաւոր չլինիր ենթադրել թէ քաղաքական իշխանութիւնը ուզած լինի այս իրաւունքներն ազգին ձեռքէն առնել եւ իւրացնել՝ տարտամ պատճառաբանութեամբ մը։

„Նկատելով ուրեմն որ այդ կարգի տնօրէնութիւն մը կրնայ շատ վնասակար հետեւանքներ ունենալ հայ եկեղեցւոյ համար ու մտքերու մէջ մեծ դայթակղութիւն յա-

ռաջ բերել. նկատելով որ մեր եկեղեցին մի եւ անբաժանելի լինելով, ազգն համօրէն, որ ի սփիւռս աշխարհի, մասնակից կը դառնուի անոր ընդհանուր չահերուն եւ իրաւանց, եւ համերաշխաբար զայս պահպանելու պարտաւոր եմք եւ մենք, կ'հաստատակինք խնդիրը մատուցանել սրբազնասուրբ Հայրապետիդ խորին ուշադրութեան, եւ ծարելով ի սմին նոյն հեռագրին տպեալ օրինակը, կ'խնդրենք խոնարհաբար որ չնորհ ընէք երկտողիւ մը իմացնել մեզ թէ որ աստիճան ստուգութիւն ունի հեռագրական այդ լուրն ու անդորրել զմեզ եւ համայն թիւրքահնակ ժողովուրդն, որ մեծ անձկութեամբ եւ անհամբերութեամբ ակն ունի վեհի Տեառդ սրտապնդիչ տեղեկութեանց։

Մատուցեալ ի համբոյր Օծեալ Աջոյ Սրբոյ հօրդ հոգեւորի,
Մնամ խորին ակնածանօք խոնարհ որդի

Մաղաքիա արքեպ. Օրմանեան
Պատրիարք Կ. Պոլսոյ

Կ. Պոլիս, 16 յուլիս, 1903,
N. 13976

Շարժումը կանգ չառաւ պաշտօնական անձանց ուղղած դիմումներով։ Խտացաւ, աւելի գունաւորուեց և հանդէս եկաւ իբրև հաւաքական կոչեր՝ ուղղած հայութեան, նրա զանազան մասերի կողմից։ Հանրային ցասման նշաններից մէկն էր այդ։ Ահա թէ որպիսի զայրացկոտ խօսքերով էր դիմում Կովկասի հայ ժողովրդին այդ կոչերից մէկը.

„Զը հասաւ արդեօք անվեհեր բողոքի ժամը, երբ „ամենատկար զոհն անգամ, իբրև գերագոյն արտա„յայտութիւն իր անկողոպտելի իրաւունքի՝ ցասու„մով ըմբոստանում է իր դահիճների դէմ։

„Հերիք է, որքան օրօրուեցինք խոհեմութեան մե„ղեդիներով։ Խիզախ ու ազնիւ „անխոհեմութիւնը“ „միշտ աւելի գեղեցիկ ու օգտակար է եղել։

„Բողոքը հայութեան բոլոր անկիւններում, ուր „մտածող մի գլուխ կայ և ըմբոստացող մի հոգի։

„Թող իբրև բողոքի արտայայտութիւն՝ ամենայն „հայոց Հայրապետը հրաժարական տայ և խզէ

„ամեն յարաբերութիւն հայ եկեղեցու և ռուս կա-
„ռավարութեան միջև։

„Թող պատարագների միջոցին չը յիշի ռուս
„բռնաւորի անունը։

„Թող հայոց եկեղեցիները փակեն իրենց դռները
„իբրև սգի նշան։

„Թող ժողովուրդը կաղմակերպւած ցոյցերով ու
„հանրագրերով հասցնէ իր արդար բողոքի ձայնը
„կենտրոնական կառավարութեան։

„Թող ամէն տեղ դիմադրութեամբ պատասխանեն
„կալւածքների պահանջման։

„Թող, վերջապէս, երիտասարդութեան զգայուն
„տարրը, իբրև արտայայտիչ ժողովրդի ցասման,
„կաղմակերպւի անհաշտ կռւի համար։

„Ցոյց տանք ուխտադրուժ բռնապետութեան, որ
„նա չէ կարող տեւողաբար ու անպատիժ կերպով
„խաղալ մի ազգի ճակատագրի հետ։

„Ցոյց տանք աշխարհին, որ երկչոտ, անզգայ ըս-
„տրուկներ չենք, որ մենք ևս ընդունակ ենք դի-
„մադրելու, երբ ոտնահարում են մեր սրբազան
„իրաւունքները“։

Նոր խօսքեր են դրանք, ախորժալուր, բայց տարօրի-նակ այն վայրերում, ուր միահեծան կառավարութիւնը անցած օրերին այլ բան չէր լսում, բայց եթէ խոնարհութեան մեղեդիներ, անձնուէր հպատակութեան մաղթանքներ եկեղեցու կամարների տակ։

Ինչո՞ւ չը կատարեցին այդ կամարների տակ։

Ահա նա, քրիստոնէութեան խոնարհ սպասաւորը, որ աչքերը յառած տանջանքի Հերոսին, խորին ակնածութեան մէջ՝ բարձր ձայնով արտասանում է՝ „...զԱմենաողորմած Թագաւոր կայսրն մեր...“։ Այդ հանդիսաւոր խօսքերը տարածւում են, ինչպէս ալիքներ, տաճարի

կամարների տակ։ Երգեցիկ խումբը հնչեցնում է „Ամէն“, և շատ բերաններ, հլու և հնազանդ, կրկնում են՝ „Ամէն, Ամէն“։

Հպատակ, խաղաղ, աղօթող ժողովրդի մրմունջն էր այդ, նրա սրտագին դիմումը երկնքին՝ տէրերի արևշատութեան համար։ Երկինքը, ինչպէս միշտ, լուռ մնաց. իսկ „ամենաողորմած կայսրը“, ի պատասխան և ի վարձատրութիւն, նոր հարուած տուեց աղօթող շրթունքներին, նոր անարգանք՝ հեզ ամբոխին ...

Խե՜ղճ հայ ժողովուրդ.

Դարեր շարունակ աղօթեցիր և աղերսանքն ու աղօթքը դարձրիր քո կուռքը, քո Աստուածը, քո միակ քաղաքական խմաստութիւնը։ Սարկօրէն գլուխ ծռեցիր կըրակապաշտ Պարսկաստանի առաջ։ Արաբական բռնապետները ոտքաններով մնան քո աւերուած հայրենիքը։ Սելջուկը ձեռքիդ սրի տեղ՝ բուրվառ տեսաւ։ Շրթունքներիցդ փառաբանութիւն քաղեցին Իրանի տէրերն ու Կ. Պոլսի արիւնռուշտ հրամայողները։ Խաչ ու խաչվառով դիմաւորեցիր Հիւսիսի Միապետութեան։ Աղերսագրերով և արտասուքով ներկայացար քաղաքական աշխարհին և խոհեմութիւնն ու լռութիւնը քո միակ քաղաքականութիւնը դարձրիր Սուգի օրերին, երբ հոսում էր հայ արիւնը և երբ ցեխի մէջ էին գցում քո անունն ու պատիւը։

— Ի՞նչ շահեցիր։

— Անարգանք և զրկանք. . .

Դարևոր աղերսանքի սև, անարգ օրեր։

Անցէ՛ք, գնացէ՛ք։

Ահա լսում են բողոքի հրապուրիչ ձայները. ծնկաչոք ժողովուրդը՝ ոտքի կանգնած, մէջքը շտկած՝ բռնութեան աչքերին է նայում։

Լաւագոյն օրերի լուսաստղն է այս ...

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀՐԱՄԱՆԸ

„Թագաւոր Կայսրը, մինիստրների կոմիտէի որոշման համեմատ, Ռուսաստանի հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածքների վարչութիւնը կառավարչական հիմնարկութիւնների տեսչութեան տակ կենտրոնացնելու եւ վերոյիշեալ եկեղեցու միջոցներն ու կալուածքները, — որոնցով ապահովւում էին հայ-եկեղեցական դպրոցների գոյութիւնը — ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը յանձնելու մասին, 1903 թ-ի յունիսի 12-ին Բարձրագոյն հրամայել բարեհաճեց.

1. Հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածքների յանձնումը պատշաճաւոր մինիստրութիւնների տեսչութեանը եւ վարչութեանը՝ իրագործել հետեւեալ հիմունքներով.

„1) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, վանքերին, հոգեւոր հաստատութիւններին եւ հոգեւոր դպրոցներին պատկանող բոլոր անշարժ կալուածքները, ներքեւ յիշած (յօդ. 2 եւ նրա ծանօթութիւնը) բացառութիւններով, առանձին հաստատած կանոնների համաձայն որոշուած կարգով՝ այդ դաւանութեան հոգեւորականութեան եւ հոգեւոր հաստատութիւնների վարչութիւնից առնել եւ յանձնել երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի տեսչութեանը, իսկ վերոյիշեալ հիմնարկութիւններին պատկանող դրամագլուխները յանձնել ներքին գործերի մինիստրի տեսչութեանը, պահպանելով հայ-լուսաւորչական եկեղեցու սեփականութեան իրաւունքները այդ կալուածքների եւ դրամագլուխների վրայ։

„2) Երկրագործութեան եւ պետական կալուածների մինիստրի տեսչութեանը պէտք է յանձնուեն հայ-լուսաւորչական եկեղեցու հետեւեալ կալուածքները.

„ա) Թէ բնակութիւն ունեցող եւ թէ անբնակ հողեր, ինչ անուն էլ ունենան եւ ինչ տեսակի էլ լինեն նրանք, նոյնպէս առանձին անտառները, մարգագետինները, արօտատեղերը, ձկնորսութեան տեղերը, ջրաղացները եւայլն։ Դրանից ի բաց են առնւում, սակայն, հողի այն տարածութիւնները, որոնց վրայ գտնւում են եկեղեցիների, վանքերի, մատուռների եւ այլն շինութիւնները, եւ այն հողերը, որոնց վրայ շինած են առաջնորդների տները, հոգեւոր հաստատութիւնները, ծխական թէ քաղաքային,

եւ գիւղական հոգեւորականութեան անները ու հոգեւոր դպրոցների չինութիւնները. այն հողերը, որոնք գտնւում են եկեղեցական կամ դերեզմանոցների շրջապատների մէջ եւ, վերջապէս, հոգեւորականութեան ձեռքում եղած ազաբակային հողամասերը, որոնց վրայ գտնւում են այգիներ, բանջարանոցներ, արտեր եւայլն, երեք դեսեատինից ոչ աւել տարածութեամբ՝ իւրաքանչիւր ծխական եկեղեցուն կից, որոնք չեն տրւում օտարի ձեռքը եկամուտ ստանալու համար, եւ

„բ) Հայ-լուսաւորչական եկեղեցիներին, հոգեւորականութեանը եւ այդ դասութեան հոգեւոր հիմնարկութիւններին պատկանող անների եւ չինութիւններից այն բոլորը, որոնք հարկաւոր չեն բնակութեան եւ հենց իրան հոգեւորականութեան ու վերոյիշեալ հիմնարկութիւնների անհրաժեշտ անտեսութեան համար։

„Ծանօթութիւն։ Ներկայ կանոնները չեն տարածւում այն անշարժ կալւածքների եւ դրամագլուխների վրայ, որոնք պատկանում են Ս. Պետերբուրգ եւ Մոսկվա քաղաքների հայոց եկեղեցուն։

„3) Տեսչութեան վերոյիշեալ կարգին ենթարկել նոյնպէս այն կալւածքները եւ դրամագլուխները, որոնք սրանից յետոյ, որպէս նուիրատուութիւններ եւ կտակով թողւածներ, կը ստացւեն ի նպաստ վերոյիշեալ հիմնարկութիւնների։

„4) Ցիշած կալւածքներից ստացւող եկամուտների վերահսկողութիւնը եւ դրամագլուխների կառավարչութիւնը կենտրոնացնել ներքին գործերի մինիստրութեան մէջ, օտար դասանութիւնների հոգեւոր գործերի դէպարտամենտում, որին երկրագործութեան եւ պետական կալւածքների մինիստրը, այդ կալւածքների վարչութեան հաշւետւութեան հետ միասին, պէտք է յանձնէ նրանցից ստացւած եկամուտները, իր տեսչութեան տակ առած անշարժ կալւածքների վրայ դրւած բոլոր հարկերը եւ պարտաւորութիւնները վճարելուց ու ստորեւ մատնացոյց արած յատկացումները կատարելուց յետոյ։

„Այս ներքին գործերի մինիստրութիւնը յանձնում է այդ եկամուտները, նոյնպէս եւ այն գումարները, որոնք գոյացել են նրա վերահսկողութեան տակ մնած դրամագլուխների տոկոսներից, ստորեւ յիշատակւած հանում-

ներից յետոյ, այն հոգեւոր հաստատութիւններին, որոնցից այդ կալուածքները եւ դրամագլուխները ընդունուած են։

„5) Անչարժ կայքերից ստացուող եկամուտից հանուում են իւրաքանչիւր տարի. ա) ոչ աւել քան 10% երկրագործութեան եւ պետական կալուածքների մինիստրի կարգադրութեամբ՝ վերոյիշեալ անչարժ կայքերի վարչութեան ծախսերի եւ յատուկ պահեստի դրամագլուխ կազմելու համար, յիշած կայքերի արտակարգ ծախսերին բաւարարութիւն տալու՝ նրանց բարւոքման նպատակով, եւ բ) 5% ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ կազմելու հայ-լուսաւորչական եկեղեցական օժանդակիչ դրամագլուխ՝ հայ-լուսաւորչական եկեղեցական հաստատութիւնների կարիքները հոգալու նպատակով եւ թէ այդ եկեղեցու վարչութեան ընդհանուր պահանջների համար, այն պայմանով, որ այդ դրամագլխի մէջ մնի եւ աւելորդը վերոյիշեալ (կէտ ա.) 10%-ից։

„Կասկածներ կամ թիւրիմացութիւններ ծագելու դէպքում այն հարցի առիթով, թէ հոգեւորականութեան եւ հոգեւոր հիմնարկութիւնների իրաւասութեան տակ գտնուող այս կամ այն կալուածքները եւ դրամագլուխները ենթակայ են կենտրոնացման կառավարութեան տեսչութեան տակ,— այդ հարցի վճիռը թողնուում է ներքին գործերի մինիստրի որոշման։

II. Ցանձնել՝ 1) ներքին գործերի մինիստրին. ա) մշակել հիմունքներ՝ ծախքեր անելու համար հայ-լուսաւորչական եկեղեցու օժանդակ դրամագլխից՝ համաձայն այն կանոնների, որոնք գործադրւում են հռոմէական կաթոլիկ հոգեւորականութեան օժանդակ դրամագլխի վերաբերմամբ եւ իր կարծիքներն այս հարցի մասին առաջարկել հաստատութեան՝ սահմանուած կարգով, եւ բ) սահմանել հոգեւոր հաստատութիւնների հաշուեւութեան կարգը նրանց տուած արգիւնքները ծախսելու վերաբերմամբ. 2) յանձնել երկրագործութեան եւ պետական կալուածքների եւ ներքին գործերի մինիստրներին, փոխադարձ համաձայնութեամբ, որոշելու՝ ա) այն կանոնները, որոնց համաձայն հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածքներն եւ դրամագլուխները պէտք է յանձնուեն մինիստրութիւններին ու բ) այն կանոնները, որոնց համաձայն պէտք է կառավարուեն յիշեալ կալուածքները եւ

III. Ի փոփոխութիւն մինիստրների կոմիտէի՝ 1898 թ. մարտի 26-ին Բարձրագոյն հաստատուած վճռի, որոշել, — իրաւունք տալ երկրագործութեան եւ պետական կալուածքների, ներքին գործերի եւ ժողովրդական լուսաւորութեան մինիստրներին, այս կանոնադրութեան յօդ. 1-ի հիման վրայ, հայ-լուսաւորչական եկեղեցու կալուածքները արքունի վարչութեան մէջ ընդունելուց յետոյ՝ փոխադարձ համաձայնութեամբ, յայտնի կայուցանել այն գոյքերը, որոնցով ապահովէր ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան իրաւասութեան տակ առնուած ուսումնարանների գոյութիւնը, եւ յետոյ՝ ա) յոյց տալ այն գոյքերը, որ անհրաժեշտ է թողնել ուսումնարանների անմիջական կարիքների համար, բ) որոշել՝ համապատասխան միւս կալուածքների արդիւնքի, այն դրամական գումարների չափը, որոնք պէտք է տրուեն՝ իւրաքանչիւր տարի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեանը՝ յիշեալ ուսումնարանների պահպանութեան համար։

ՎՐԱՑԻԱԿԱՆ ՀԱՐՑ

(ՔՍԱՆՄԼԿԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Պատմական հրովարտակը. — Վրաստանի միացման խնդիրը.— 1783-ի դաշնագիրը. — Ալէքսանդր I-ի մանիֆէստը միացման մասին. — Դժգոհութեան նշաններ Վրաստանում. — Ի՞նչ դեր կատարեց Վրաց ազնվականութիւնը. — Նորագոյն ժամանակները. — Արթնացող ժողովուրդը . — Վրաց երիտասարդութեան ցոյցերը . — Բեկտոր Զուդեցկու սպանութիւնը . — Բողոք սեմինարիայում . — Լեզուի խնդիր . — Դժգոհութեան աճումը . — Ուշագրաւ փաստեր . — Անկախ Վրաստան:

Վրաստանի նախկին մայրաքաղաքի գլխաւոր փողոցի վրայ, կրթութեան տաճարի դէմ յանդիման, կանգնած է մի ուշագրաւ շէնք, որ կրում է „փառքի տաճար“ մեծահնչուն անունը: Դա ռուս զինուորականութեան ձեռակերտն է, նրա փայփայած զաւակը, նուիրած Արևեան աստուծուն, մի տխուր վկայ կովկասեան պատերազմից պատմութեան, մեր անարգանքը՝ ապագայ սերունդների առաջ:

Անցնում են բազմաբեղուր երկրի բնակիչները և նայում տարօրինակ շէնքին, որի վրայ՝ Լոյսի պատուհանների փոխարէն, փակցրած են ռազմական արձանագրութիւններ՝ անլոյս մարմարիոնների վրայ փորագրած: Կարդում է ռուսը՝ և պարծենում: կարդում է հայը՝ և մտածում. կարդում է վրացին՝ և հակասական խոհերը փոթորկում են նրա սիրտն ու ուղեղը:

Նա շարունակում է կարդալ.

„... Ոչ շահասիրութեան և ոչ էլ մեր սահմանները լայնացնելու նպատակով է, որ Մենք վերցնում ենք մեզ վրայ վրաց թագաւորութիւնը կառավարելու ծանրութիւնը: Այլ մարդկայնութիւնը ու ազնուութիւնն է միայն,

որ դնում է մեզ վրայ սրբազան պարտականութիւն՝ ականջ դնել տանջուղ ժողովրդի աղերսանքին և հիմնել Վրաստանում արդարադատ կառավարութիւն...“

„Արքայական մեծահոգութեամբ“ գունաւորուած այդ մեծախոստում բառերը քաղուած են Ալէքսանդր I-ի հրովարտակից, ուղղած Վրաստանին՝ 1801 թուի սեպտեմբերի 12-ին։ Եւ հիմնուած արքայագրի այդ բառերի վրայ, ամեն անգամ երբ քաղաքական որևէ թիւրիմացութիւն պղտորում է երկու ազգերի յարաբերութիւնը, ռուսը՝ պարծանքով ասում է վրացուն. „Դուք աղերսեցիք մեզ գալ Վրաստան, մենք չէինք էլ ուզում“։ Եւ Վրաստանի զաւակը լռում է՝ գլխիկոր, տարակուսած, ամօթով ծածկուած...

Բայց միթէ՞, յիրաւի, սոսկ հպատակութեան „աղերսանք“ լսեց Վրաստանի լեռներից, ուր նրա զաւակները սովոր էին իրենց կեանքը զոհ բերել հայրենիքի պաշտպանութեան, թէ այդ հրովարտակի մէջ թագնուած է քաղաքական մի մեծ ուխտադրժութիւն, այնքան սովորական „արքայական“ յարաբերութիւնների ժամանակ։

Թող պատասխանէ պատմութիւնը։

Թուով փոքրիկ,—մօտ մէկ ու կէս միլիոն—տեղաւորուած Կուրի, Ռիոնի և Ճորոխի հովիտներում, քրիստոնեայ դեռ հինգերորդ դարից, պատմութեամբ անփայլ, զուրկ քաղաքական յաւակնութիւններից, Վրաստանը պատմական կարևոր դեր չկատարեց առաջաւոր Ասիայում։ Թիկն տուած իր գեղեցիկ լեռներին, հեռու այն քաղաքաներից ճանապարհից, որով արշաւում էին արևելքի բռնապետները դէպի իրենց ասպատակութեան դաշտերը, այդ փոքրիկ ազգը, սակայն, երկար ժամանակ շատ աւելի բախտաւոր եղաւ, քան իր հարաւի հարևանը—Հայաստանը, բռնապետների այդ յաւիտենական ոտատեղին։

Բայց 18-րդ դարուց հանգամանքները շատ փոխուեցին.

մահմեդական հարևանները չափազանց յանդգնեցան և քրիստոնեայ փոքրիկ թագաւորութիւնը դարձաւ առարկայ անդադրում հարձակումների։ Ահա թէ ինչու, երբ մահմեդականութեան սահմանների վրայ ուժգնօրէն լսեցին Հիւսիսի սպառնալիքները, փոքրիկ Իմերիան՝ ոգևորուած քրիստոնէութեան յաղթանակի ցնորքով, արձագանք տուեց Մոսկովի կոչերին, եղբայրաբար ձեռք մեկնեց և խոստացաւ թև ու թիկունք լինել խաչակիր զօրքին՝ Կուրի հովիտներում։ 1783-ի յուլիս 24-ին էր, որ Եկատերինէ կայսրուհու և վրաց Հերակլ թագաւորի միջև հաստատուեց նշանաւոր դաշնագիրը, որով Վրաստանը ընդունում էր ռուսաց կայսրների հովանաւորութիւնը, իսկ Ռուսաստանը պարտաւորում էր „Վրաստանի թշնամիներին իր սեփական թշնամի համարել“ և պաշտպանել նրան Պարսից և Թուրքաց հարձակումներից, որոնք տեղում էին անդադար և անխնայ։

Այդ դաշնագիրը և առհասարակ Վրաստանի մերձեցումը Ռուսաստանին՝ կատաղութիւն առաջ բերեց մահմեդական վեհապետների սրբունիքում։— Աղա-Մահմեդ խանի մեծ յարձակումը, 1795-ին, վրաց սահմանների վրայ, արդիւնք էր այդ քաղաքական ցասման։ Ճգնաժամի ողբերգական րոպէին՝ Ռուսաստանը անարգաբար դրժեց իր խոստմանը և պաշտպան չը կանգնեց իր դաշնակցին։ Հերակլի դիմումները՝ ուղղած Պետերբուրգ, արձագանք չը գտան։ „Այժմ նպատակայարմար չէ համարում զօրք ուղարկել Վրաստան“, պատասխանեցին այնտեղից։ և քրիստոնեայ անօգնական „դաշնակիցը“ միայնակ ընկաւ թշնամու ճանկերի մէջ։ Վրաստանի մայրաքաղաքը կոտորածների, թաղանի ու քստմնելի բռնութիւնների բեմ եղաւ,— եկեղեցիները պղծեցին, կործանեցին քաղաքի շատ թաղերը, կանայք ու աղջկերք հարէմ քաշեցին, և սոսկումը կատարեալ անելու համար՝ միտրոպոլիտ Դոսիֆէյին, եկեղեցու զառամեալ

ներկայացուցչին, Հալաբարի կամրջից կուրի ալիքների մէջ նետեցին... Ինքը Թագաւոր Հերակլը, հովէի ըզգեստ հագած՝ հաղիւ փախուստ տուեց։ Սև օրեր էին, արժանի Համիդական պատմութեան...

Եկաւ 1800 թիւը։ Ողբալի տարի խվերիական ժողովրդի տարեգրութեան մէջ։ Երկիրը ուժասպառ, յօշոտուած։ Մահմեդական թշնամիները անխիղճ ու անխնայ։ Ներքին երկպառակութիւնները սրած և վտանգաւոր։ Թագաւորը՝ Գեօրգի՝ անկարող և անհեռատես։ Ռուսական ինտրիգները՝ անվերջ և վճռական։ Ահա այդ պայմանների մէջ Պաւէլ I որոշեց վճռական հարուածը տալ ինքնավար Վրաստանին և վերջնականապէս ենթարկել կայսերական իշխանութեան։ Եւ այդ նպատակով գեներալ Կնորրինգ ուղարկուեց Թիֆլիզ, կայսերական հրովարտակով և գաղտնի պատուէրով։ Սակայն այդ միջոցին Պաւէլ վախճանուեց. Նրան յաջորդեց Ալէքսանդր I, որը տրամադրութիւն ցոյց տուեց, թէև կարճ ժամանակով, չը խախտել դաշնագիրները։ Ռուսաց մայրաքաղաքի մէջ նոյնիսկ բողոքներ լսեցին՝ Վրաստանի միացման համար գործ դրուող դաւերի դէմ։ Կոմս Վ. օրինցով յայտարարեց, որ „այդ միացումը— բացարձակ ճնշում է“։ Վրաստանի ներկայացուցիչները Պետերբուրգում ամեն ջանք գործ դրին փրկելու իրենց հայրենիքի անկախութիւնը, յիշեցրին անցեալ դաշնագիրներն ու կայսերական խոստումները, բողոքեցին յանուն վրաց ժողովրդի իրաւունքների, բայց այդ բոլորը դրական արդիւնք չունեցաւ.—Հրատարակուեց Ալէքսանդր I-ի հրովարտակը միացման մասին, շաղախուած պատմական փաստերի յեղաշրջումներով և լի զանազան խոստումներով, որոնք մնացին անկատար, ոտի տակ տրուած։

Հրովարտակը խոստանում էր՝

ա) Ինքնավար կառավարութիւն, ընտրողական սկզբունքով։

բ) Դատավարութիւն վրաց լեզուով, հատաձայն Վախթանգ թագաւորի օրինագրքի։ Դատաւորները ընտրովի։
գ) Ազգային միլիցիա։
դ) Վրաց փող, ազգային զինանիշով։

Կայսերական հրովարտակը, որ յայտարարուեց Թիֆլիզում 1802 թուի ապրիլի 12-ին միայն, չնայած իր քնքուշ ձևերին՝ ընդունուեց թշնամօրէն, դժգոհութեան նշաններով։ Գեներալ Կնորրինգ վրաց մեծամեծներից հաւատարմութեան երդում առնելու համար՝ դիմեց զինուորական նախազգուշութիւնների. իշխաններից շատերը չուզեցին ճնշման տակ երդում տալ և դուրս եկան եկեղեցուց։ Տեղի ունեցան ձերբակալութիւններ, —ռուս չինովնիկը կարող է ապրել առանց ձերբակալութեան—և դժգոհութեան ալիքները աւելի ու աւելի խոր տարածուեցին ժողովրդական խաւերում, որ սկզբնեբում ռուսական տիրապետութիւնց մեծ բարիքներ էր ակնկալում։ Ռուսասէր կուսակցութիւնը զգեցաց։ Իբրև արտայայտութիւն այն ժամանակուայ տրամադրութեան, վրաց պատմագիրները առաջ են բերում մի կարևոր վկայագիր,—Կախեթիայի ազնուականութեան գանգատագիրն է դա, ուղղած Վրաստանի գլխաւոր կառավարչին.

„Մանիֆեստով խոստացած շնորհները՝ դուք թողեցիք առանց գործադրութեան։ Մեզ ապահովութիւն է խոստացած, բայց ինչով արտայայտուեց նա։ Գիւղերը և շէները թալանւում են լեզգիների ձեռքով, իսկ դուք այդ մասին հոգ էլ չէք անում։ Հրամայած է՝ եկեղեցիների և եպիսկոպոսների գիրքը բարձրացնել, իսկ դուք նրանց ուներցածն էլ խլեցիք։ Ազնուականութեան իրաւունքները խախտած են։ Կայսրը խոստացել է գիւղացիներին 12 տարի նրանցից հարկ չառնել,—այդ էլ մնաց չիրագործած խոստում“։

„Մի խօսքով — հաղորդագրում էր 1803 թուին գեներալ Լազարեվ — ամենքը այժմ նոյնքան դժգոհ են, որքան առաջ ցանկացող էին ռուսական տիրապետութեան“։

Յետագայ փաստերը, տարաբախտաբար, աւելի տխուր կերպարանք առան։ Վրաց թագաւորական տոհմի անդամների մէջ սկսած փոքրոգի և անհեռատես գժտումները, որոնց պատճառով պառակտուեցին և իշխանական տները՝ անցնելով մէկ կամ միւս թագաւորաշնի կողմը, լաւ պատրուակ եղան ռուսաց կառավարութեան համար՝ աւելի էլ վճռական լինել իր ձգտումների մէջ—մէջտեղից վերցնել այն բոլորը, ինչ տալիս էր Վրաստանին առանձնայատուկ կերպարանք, ներքին ինքնուրոյնութեան կամ քաղաքական հեռաւոր անկախութեան գոյն։ Եւ այդ նպատակով՝ դաշնագրի զօրութեամբ ընդունուած տեղական ինքնուրոյն կառավարութիւնը ոչնչացրուեց և վարչական ամբողջ գործը յանձնուեց միապետութեան պաշտօնեաներին։ Թագաւորական տուները կատարելապէս կորցրեց իր գիրքը, պատմական արտօնութիւնը . . . Եւ որքա՞ն կարճ ժամանակում — Հերակլ Ռուսաստանի դաշնակից էր, Գէօրգի թագաւորը՝ դարձաւ վասսալ, իսկ արքայազն Վախթանգ՝ ռուսաց բանակի գեներալ . . Արքայազներ Դաւիթ, Բագրատ և Վախթանգ քշուեցին Ռուսաստան։ Դարեա թագուհին, յայտնի իր հաստատուն կամքով և խելքով, 1803-ին Թիֆլիզից ուժով հեռացրուեց Ռուսաստան՝ իբրև „աղբիւր Վրաստանի անհանգստութեան“։ Իսկ թագուհի Մարիա, նոյնիսկ առանց արքայական „որևէ յարգանքների“, աքսորուեց Վօրոնէժ... Եկեղեցու ինքնուրոյն բնաւորութիւնը խախտելու նպատակով 1830-ին ոչնչացրուեց վրաց կաթողիկոսութիւնը և շատ չանցած՝ հաստատուեց էկզարխութիւն։ Մնացել էր վրաց փողը, որով երևի „պատմական ազգասիրութեան“ միամիտ ներկայացուցիչները սիսիւում էին, այն էլ վերացուեց, թէև համեմատաբար ուշ, 50-ական թուականներին։ Եւ վարչական ամբողջ ղեկը անցաւ կենտրոնական կառավարու-

թեան ձեռքը, Պետերբուրգ։ Մ ի ա ց ա ծ Վ ր ա ստանը՝ իրեն զգաց ս տ ր կ ա ց ա ծ . . .

Դա եղաւ վրացիական դժգոհութիւնների աղբիւրը։

Յաջորդ տարիները այդ դժգոհութեան անընդհատ զարգացման տարիներ չեղան։ Ընդհակառակը։ Կարծէք հին վէրքերը սպիացած՝ մոռացուեցին, և նախկին մորմոքին յաջորդեց թմրութեան շրջան։

Այդ երևոյթի մեկնութիւնը պէտք է որոնել վրաց կեանքի մէջ։ Խվերիական ժողովուրդը, ճորտ՝ ազնուականների ձեռքում, վարժեցրած աւելի լռելու քան բողոքի, քիչ տեղեակ իր հայրենիքի քաղաքական կացութեան, իրեն պահում էր չեղոք, անտարբեր և անհոգ։ Նրա բերանը ազնուական դասակարգն էր, բազմաթիւ, ազդեցիկ և միևնոյն ժամանակ՝ սիրահար անհոգ, հանդիստ կենցաղի, տիտղոսների, արտաքին փայլի։ Այս հանգամանքը չը վրիպեց Պետերբուրգի աչքից, որը, նոյնիսկ քաղաքական ձուլման ամենատաք բոպէներին, փայփայեց վրաց թաւադներին, շոյեց նրանց գլուխը, շռայլեց ազդեցիկներին նոր արտօնութիւններ՝ նրանց միջոցով բողոքի և դժգոհութեան ձայները ընդմիշտ լռեցնելու համար։ Կովկասեան անընդհատ պատերազմները նպաստեցին այդ ծրագրին։ Ի բնէ զինասէր ազնուական դասակարգը՝ իրեն համարում էր գոհ և երջանիկ, որ առիթ ունի նետուելու կուի դաշտը և այնտեղ վայելելու փառք-պատիւ։ Ճանապարհը բաց էր։ Շատ տների ներկայացուցիչներ կարևոր դերեր ստացան պատերազմների ժամանակ։ Շատերը հռչակուեցին իբր տաղանդաւոր և քաջարի զօրապետներ — Ցիցիանով, Բագրատիոն, Օրբէլեանի, Ալեքսանդրոսիկով, Մելիկով, Ճավճավաձէ — և երգուեցին ժողովրդական աշուղների բերանով։ Ամուսնական կապեր հաստատուեցին ռուս նշանաւոր տների և վրաց ազնուականների միջև։ Եւ այդ բոլորը ազգային ինքնասիրութեան թէև միակողմանի, բայց

շլացուցիչ գոհացումն էր։ Ազգի մեծամասնութիւնը մնաց անմասն, բայց ազնուականութիւնը՝ ապահովուած ժողովրդի աշխատանքով, գոհ կառավարչական բարեհաճ վերաբերմունքից, եղաւ ռուսական տիրապետութեան ամրապնդման առաջին զօրաւիգը, նրա ճանապարհը հարթողը։ Այդ չէր ի հարկէ նրա դերը, բայց իր այլասերման մէջ ուրիշ աւելի բարձր գործ կատարելու անընդունակ եղաւ այդ երբեմն զօրեղ դասակարգը։

Բայց եկան նոր ժամանակներ, նոր շարժումներ։ Պաւերազմական փոդերը դադարեցին հնչել։ Ակուեց խաղաղ շրջան և դրա հետ միասին՝ սրով զինուած ազնուականութեան փոխարէն հանդէս եկաւ բահով զինուած վրացի ժողովուրդը, որ ճորտութիւնից ազատուեց 1867-ին։ Հազիւ արթնացած՝ նա իր շուրջը նայեց և զգաց, որ ինքը այլևս տէր չէ ոչ մի արտօնութեան, որ իրեն խոստացել էին „կայսերական խօսքով“։ Ժողովրդական հիասթափութիւնը՝ սկիզբն եղաւ ժողովրդական գիտակցութեան։ Արտապնդած դրանով և ներշնչուած նոր, ժողովրդասիրական հայեացքներով, վրաց ինտելիգենտ երիտասարդութիւնը սկսեց գործունէութիւն ամբոխի մէջ, գիւղական շրջանում, բուն վրացիական հողի վրայ։ Զգաւումն երևաց՝ հիմնել դպրոցներ, կարդալ, գրել և աղօթել մայրենի լեզուով, բարձրացնել ժողովուրդի ոգին։ Այդ ձգտումը հաճելի չը թուաց միապետական կառավարութեան, որը կարծում էր վերջնականապէս արմատախիլ արած լինել „սիրեցեալ վրաց ազգի“ անկախութեան ծիլերը, և ահա այդ տեղից առաջ եկան նոր ընդհարումներ երկու կողմերի մէջ, որոնց յարաբերութիւնը մինչև այն՝ ըստ երևոյթին՝ շատ հաշտ և շատ բարեկամական էր։

Ութսունական թուականներին պատահած քանի մի դէպքեր բաւական լոյս են սփռում այդ յարաբերութիւնների վրայ։ Յիշատակութեան արժանի է այն, որ պա-

տահեց 1887-ին Թիֆլիզի Ուղղափառ սեմինարիայում։ Այդ հիմնարկութիւնը ամենամեծն է իր տեսակի մէջ և նպատակ ունի պատրաստել կրթուած հոգևորականներ Վրաստանի համար։—Նրա սաների մեծ մասը վրացիներ են, բերուած իրենց հայրենիքի զանազան կողմերից, որպէսզի դաստիարակուեն այն ուղղութեամբ, որ ցանկալի է կառավարութեան, և ապա այդ ուղղութեան տարածողներ լինեն ժողովրդի շրջանում։ Կանոնադրութեամբ վրաց լեզուն և գրականութիւնը պարտաւորիչ են այնտեղ և գրուած պիտի լինեն լայն հիմքերի վրայ։ Սակայն սեմինարիայի ղեկավարները, նեղհայեացք ռուս հոգևորականներ, նշանակուած ռուս կառավարութեան կողմից, միշտ իրենց պարտաւոր են համարում կուել թէ վրաց լեզուի և թէ վրացիական ոգու դէմ։ Այդպիսի ղեկավարներից մէկն էր ռեկտոր Զուդեցկի, որը ռուսական ոգին դպրոցում յաղթանակել տալու համար՝ չէր կանգնում ոչ մի միջոցի առաջ։ Նա արգելում էր պարապել վրացերէն լեզուով պարապողներին հալածում, քննութեան ժամանակ կտրում էր և արտայայտում իր անարգանքը ամեն քայլափոխում։ Սաներից մէկը, Լաղեաշվիլի, որ հալածուածների թուումն էր, խնդրեց ռեկտորին արդար լինել, և իբր պատասխան՝ վերատեսուչը նրան անուանեց „շուն“։ Պատանին՝ լցուած դառնութեամբ, վճռեց բոլորի վրէժը առնել և մի ընկերոջ օգնութեամբ ծրագրեց վերատեսչի սպանութիւնը։ Հազիւ մի օր անցած, դպրոցի միջանցքում, դաշոյնը ձեռքին՝ նա յարձակուեց Զուդեցկու վրայ և գետին փռեց նրան ...

Սպանութիւնը՝ սոսկումի փոխարէն՝ համակրութեամբ ընդունուեց թէ դպրոցում և թէ դպրոցից դուրս։ Լաղեաշվիլին և իր ընկերը անչափահասութեան պատճառով ազատ մնացին կախաղանից և աքսորուեցին Սիբիր, տաժանակիր աշխատանքների։ Շատ չանցած՝ երկու երիտասարդներն էլ աքսորավայրից փախան Ամերիկա։—

Լաղնաշվիլին կենդանի է, միայն՝ արդէն վախճանուած։

Վերատեսչի սպանութիւնը առաջ բերեց այլ բարդութիւններ։ Թաղման ժամանակ Վրաստանի էկզարխ Պաւէլը, վրացատեաց և անզուսպ, դամբանական ճառի մէջ՝ անլուր վիրաւորանքներ թափեց Վրաստանի վրայ, և „անէծք կարդաց վրաց եկեղեցուն“։ Պաշտօնական մարդու բերանից վիժած հայհոյանքները ցասում առաջ բերին վրաց բոլոր շրջաններում։ Այդ ցասման արտայայտիչն եղաւ Դիմիտրի Կիպիանի, Վրաստանի ամենագովելի զաւակներից մէկը, որ այդ ժամանակ Քութայիսի նահանգի աղնուականութեան պարագլուխն էր. նա ուղղեց հայհոյաբան էկզարխին մի յիշատակելի նամակ. „Ձեր աստիճանի պատիւը պահանջում է, որ անարգուած երկրից անմիջապէս հեռանայ նրա անարգողը“։ Անարգողը չը հեռացաւ, և նրա փոխարէն, կառավարչապետի առաջարկութեամբ, Կովկասից Ստաւրոպոլ աքսորուեց Կիպիանի, որտեղ և պատկառելի գործիչը գտաւ ողբերգական մահ, ինչպէս ղոհ գաղտնի ճանկերի (տես երես 189)։

Կառավարութիւնը, ինչպէս միշտ, ղսպելու փոխարէն՝ աւելի առաջ գնաց։ Շատ քիչ անցած՝ էկզարխի պաշտօնով եկաւ մի ուրիշը՝ Վլադիմիր, որը թեւաւորուած Պօբեդոնոսցեվի յատուկ աջակցութեամբ, շարունակեց գրգռել վիրաւորուած ժողովրդի զգացմունքները։ Նա իր ջերմ հովանաւորութեան ներքոյ ընդունեց սեմինարիայի նոր վերատեսուչ Հ. Սերաֆիմին, յայտնի իր ծայրահեղ ատելութեամբ դէպի վրացիները։ Մի օր—1894-ին էր այդ—անդգոյշ „հովիւը“ աշակերտների ներկայութեամբ իրեն թոյլ տուեց՝ վրաց եկեղեցու երգեցողութիւնը անուանել „շան հաչոց“։ Այդ հայհոյանքը վերջին կաթիլն եղաւ։ Պատանիները բռնկեցին և ձեռնարկեցին մի շարք ցոյցերի, ուղղած այն մարդկանց դէմ, որոնք այնքա՜ն թեթևամտութեամբ վիրաւորում էին հիւրասիրող երկիրը։ Տարեկան ակտի ժամանակ նրանք պահանջեցին յար-

գել իրենց լեզուն։ Հրատարակեցին բողոքող պրոկլամա-սիաններ։ Լուրջ բարդութիւնների նշաններ էին երևում։ Վերջաբա՞նը։

Պօլեգօնօսցևվի հրամանով սեմինարիան փակուեց մի ամբողջ տարի և աշակերտների նշանաւոր մասը հե-ռացրուեց „գայլի վկայականով“—առանց իրաւունքի որևէ դպրոց մտնելու։ Սերաֆիմը ստացաւ ս. Ընտանի շը-քանշան, և էկզարխ Վլադիմիրը՝ ադամանդեայ խաչ, որպէս քաջալերութիւն։ Իսկ անարդար խստութիւնների ենթարկուած աշակերտները՝ դպրոց այլևս չը վերադար-ձան,—նրանք մնացին ժողովրդի մէջ, իբրև դժգոհութեան մոլեռանդ պրոպագանդիստներ։

Պրոպագանդը տարածուեց աւելի ու աւելի։

Ամբոխին բռնկեցնելու համար, օգտուեցին յարմար, նրա հասկացողութեան մատչելի մի խնդրով. դա եկեղեցու և լեզուի հարցն էր։ Ցարիներ են արդէն, որ կառավա-րութիւնը մի համարելով ուղղափառ եկեղեցին, փոր-ձում է մի դարձնել և այնտեղ գործ ածուող լե-զուն—մտցնել ռուսերէնը։ „Մեր ժողովուրդը չը գիտէ ռուսերէն, նա շատ տեղ մի բառ անգամ չէ հասկա-նում, ասում են վրացիները, ուրեմն պէտք է պահպա-նել վրացերէնը, որով միայն նա կարող է հասկանալ եկեղեցու աղօթքն ու երգեցողութիւնը“։ Սակայն միա-պետութիւնը անողոք է։ Պօլիցիական միջոցներով շա-րունակում են ստիպել ռուսերէնը գործ ածել և այդ նպատակով նշանակում են ռուս քահանաներ՝ վրացա-բնակ գիւղերում։

Պատահել են անհաւատալու չափ տխուր դէպքեր.— Մի եկեղեցում ստիպուած էին թարգման հրաւիրել՝ քահանայի ասածները ժողովրդին հասկացնելու համար։ Մի այլ տեղ, լեռնական գիւղում, միամիտ շինականները վրդովւում և այլայլում են լսելով քահանայի բերանից

ժամասացութեան ժամանակ՝ այնպիսի խօսքեր, որոնք հարբած մարդու բերանից միայն կարող են դուրս գալ: Խնդրում էին քահանային՝ չը կրկնել: Քահանան՝ զարմացած այդ տեսակ խնդիրքից, շարունակում է աղօթել: Կատաղած գիւղացիները, այլևս անկարող տանելու այդ սրբապղծութիւնը, յարձակւում են քահանայի վրայ, ծեծում նրան և դուրս նետում եկեղեցուց: Սկսւում է ահագին գործ և քննութիւն: Պարզւեց, որ այդ բոլորը արդիւնք է մի տխուր թիւրիմացութեան,—քահանայի արտասանած ռուսերէն խօսքերը նման էին, լեռնականների բարբառով, անվայել խօսքերի, և դրանից էլ ծագել էր ամբողջ պատմութիւնը: Սակայն այդ և ոչ էլ յարանման ուրիշ դէպքեր խրատ չեղան: Շարունակում են հրամայել, որ ժողովուրդը աղօթէ մի լեզուով, որ նա չը գիտէ և չէ հասկանում..

Վրաց լրագրութիւնը փորձեց, թէև խուլ ու կողմնակի կերպով՝ մատնանիշ անել այդ տեսակ անարգարութեան փաստերը: Բայց ի հարկէ թոյլ չը տուեցին, և ձեռք առան զսպող, սանձահարող միջոցներ: 1885-ին վրաց „Դրօէբա“ լրագիրը խափանւեց ընդմիշտ, այն պատճառով, որ նա իրեն թոյլ էր տուել այլաբանական և շատ անվնաս ձևով նկարագրել նախկին կառավարչապետ Դօնդուկով-Կորսակովին: 1896-ին փակեցին „Իվերիա“ լրագիրը ուրիշ ամսով՝ նրա համար, որ տպագրել էր Վրաստանի անցած անկախութեան մասին մի մենախօսութիւն, որի վերջաբանը վերաբերում էր վրաց ազգի ապագային:—Այդ „աչքի փուշ“ ապագայի մասին խօսք չէ կարող լինել դպրոցում, թատրոնի մէջ, նոյնիսկ բանկային ժողովներում;—հակառակ պարագային՝ „վրացասէր“ ռուս կառավարութիւնը զինւում է ծայրայեղ խստութեամբ, առանց որի ապրել, շունչ քաշել չէ կարող միապետութիւնը...

Հակավրացիական խստութիւնը, ինչ ասել կուզի,

չունի այն ուժն ու թափը, որով նա հանդէս է գալիս, երբ խնդիրը վերաբերում է հայերին։ Այդ կէտում տարբերութիւնը մեծ է։ „Հայը՝ թշնամի է, մինչդեռ վրացին՝ բարեկամ, որ երբեմն մոլորւում է“։ Բայց ամեն մի մոլորումն պատժւում է այնքան խստորէն, որ թողնում է բարեկամի սրտում անջնջելի հետքեր, գուցէ և անբուժելի վէրքեր...

Երևի այդ վէրքերը շատ են և խոր...

Վրաստանի այլ և այլ անկիւններում ու նրա որդոց տարբեր շրջանների մէջ՝ մերթ ընդ մերթ լսւում են դժգոհութեան այնպիսի ձայներ, որոնք քաղաքական շարժման նախանշաններ կարող են սեպւել։— 1901 թ-ի սեպտեմբերին, երբ պաշտօնական Թիֆլիզը, դիւանատներում պատրաստւած ծրագրի համեմատ, էժանագին հրախաղութեամբ տօնում էր Ռուսաստանի և Վրաստանի „միացման“ 100-ամեակը, այդ դժգոհութիւնը արտայայտւեց առանձին շեշտով։ Ժողովուրդը չը մասնակցեց տօնախմբութեան։ Ազնւականութեան պաշտօնական ճառերը՝ արտայայտութիւն չէին երկրի զգացմունքների, այլ արդիւնք դիպլոմատիական փափկանկատութեան, մեծ մասամբ ծայրայեղ։ Եւ մինչդեռ վրաց ինտելիգենտ հասարակութեան պահպանողական մասը, որի քաղաքական ամբողջ իմաստութիւնը կառավարութիւնը շողոքորթելու և հարևան հայերի դէմ նենգամիտ դաւեր լարելն է, աշխատում էր ժպտուն երևալ, միւս՝ անկախ և ազատախոհ մասը, երիտասարդութեան հետ միասին, իրեն զգում էր ամօթահար և անցած սխալների ու ներկայ վրիպումների համար պատասխանատու պատմութեան առաջ...

Մեղաւորը բռնաւոր քաղաքականութիւնն է։

Ինքը Վրաստանը, զուրկ քաղաքական հեռատեսութիւնից, մեծ յոյսերով, գուցէ և յափշտակութեամբ, իրեն դրեց միապետութեան հովանու տակ։ Բայց հենց

առաջին քայլից Պետերբուրգը դրժեց իր խոստումը, դաւաճանեց։ Դրանից յետոյ՝ մի ամբողջ դար շարունակ, ինչպէս խոստովանում է Վրաստանի միացման հարիւրամեակի առիթով տւած 1901 թուի բարձրագոյն ընսկրիպտը՝

„Պատերազմների բոլոր դաշտերում, որտեղ մեր զօրքերը կուրծք առ կուրծք հանդիպում էին Ռուսաստանի բոլոր թշնամիներին, վրաց իշխանների, թագաւորազների և ազնաւուրների սերունդները թափում էին իրենց արիւնը ռուսական գործի համար և իրենց արիական քաջութեամբ նպաստում էին ռուսական զէնքի աջողութեան“։

Հակառակ „թափած արեան“ և անպայման հաւատարմութեան, որի ապացոյցները իվերիական ժողովուրդը տւեց ծայրայեղ ոգևորութեամբ, տեղական ճնշումների ազդեցութեան տակ՝ Կազբեկի ստորոտներում, այն երկրի մէջ, ուր ժողովուրդը երբէք սիրահար չէ եղել քաղաքական ծրագիրների, ծնունդ է առնում, հայոց հարցի կողքին՝ մի այլ հարց, — վրացիական հարցը։ Նորագոյն վրաց սերնդի խոկն է դա։ Եթէ նա այսօր անտեսանելի է, վաղը կը մարմնանայ ու շօշափելի կը դառնայ։

Պոլիտիկոսները չստեղծեցին նրան, այլ ինքը կեանքը։ Նա արդիւնք է ոչ թէ երազական ցնորքների, այլ ժողովուրդների ինքնուրոյնութիւնը սպանող բռնապետական ըէժիմի։ Ընդարութեան ձայնն է այդ, որ պահանջում է ինքնավարութիւն՝ գեղեցիկ, բայց դժբաղդացած երկրի համար, ուր դեռ այնքա՞ն թարմ են կորցրած անկախութեան հետքերը...

Ողջոյն Ազատ Վրաստանին։

ՆՈՐ ՕՐԵՐ

(ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՆԱՄԱԿ)

Բաժանիր, որ տիրես. — Ցեղափոխական ոգին. — Կարմիր դրոշակը Կովկասում. — Համերաշխութեան գաղափարը. — Կովկասեան Դաշնակցութիւն։

Եւ միապետութիւնը ցնծութեան ծափ զարկեց։

Հաստատեց „կնուտի“ թագաւորութիւնը Լեհաստան, Ֆինլանդիա և Կովկաս, ու դիւական բերկրանքով քքքիջը շրթունքներին, խրոխտաց՝ „Հանգիստ է Ռուսաստանը, չը կայ այլևս սեպարատիստական շարժում, չը կայ աղգերի խնդիր“։

Եւ այն տխուր օրերին, երբ Կուրի և Արաքսի հովիտներում հարևանը հարևանի դէմ ատամներ էր կրճտում, վառուած ատելութեան կրակով, բռնութիւնը շփում էր իր ձեռքերը՝ լցուած անսահման բերկրութեամբ։ Նա վայելում էր իր աշխատանքի պտուղը։ „Բաժանիր, որ տիրես“։ Այդ եղաւ նշանաբանը, ծլած ու ծաղկած նրա անդաստանի մէջ։

Եւ որքա՜ն պարարտ էր հողը այդ քաղաքական թոյնի համար, այն ձորերում, ուր լեզուները նոյնքան բազմազան են, որքան և ինքը՝ երկրի գեղանի բնութիւնը։ — Վրացի, հայ, ռուս, թիւրք, յոյն, քուրդ, թաթ, ասորի, ուտի, լեզգի, օս, աւար, լաք, կումուխցի, բօթլեխ, մեց, չէչէն, աբխազ, չերքեզ, աբազ, կարաչայցի, նոգայ, շալմուխ, գերմանացի, մոլդավացի, — այդ բոլոր ազգերն և ազգագրական խմբերը այնտեղ են ապրում, և թէև տաքացած միևնոյն արևով, սնուած միևնոյն հողից բղխող ջրով, պատրաստ էին, և շատ յաճախ,

մէկը միւսին գլորել, մէկի աւերակը միւսի մեծութեան պատուանդան շինել. . .

Ընցած սև օրերն էին այդ թշնամանքի սկիզբը։ Պատմութիւնը չը միացրեց այդ ազգերին, այլ բաժանեց։ Կրօնքը նրանց սէր չը քարոզեց, այլ ատելութիւն։ Թիւրքը չէր ուզում մոռանալ այն օրերը, երբ ինքը քրիստոնեայ հարևանների հրամայողն էր և տէրը։ Հայութիւնը, վրացու կարծիքով, Իվերիայի ուսիչն էր։ Իսկ վրացին, հայի խօսքով, հակահայկական դաւադիր։ Եւ եկեղեցի տիրապետողը, որ պէտք է կատարէր տեղական ազգերին շաղկապող, խաղաղացնող միջնորդի կարևոր դերը, ընդհակառակը, „կրակի վրայ իւղ ածեց“, գրգռեց մէկին միւսի դէմ, աւելի էլ բաժանեց նրանց, որպէսզի իր տիրապետութիւնը լինի անխախտ, վերջնական . . .

Տխուր վկայութիւնները թիւ չունեն։ Ուխտունական թուականներին՝ Երևանի հայերի և թիւրքերի մէջ արիւնոտ կռիւ ստեղծողը ինքը կառավարութիւնն էր։ Դոյն ձգտման արդիւնքն էր այն վտանգաւոր ընդհարումը, որ տեղի ունեցաւ հայերի և վրացիների միջև, նախ Թիֆլիզի գումայում՝ և ապա Բաթումի քաղաքային ինքնավարութեան մէջ, որին իբրև արձագանք՝ սկսուեցին հայ-վրացական ընդհարումներ Թելաւ, Ղշնախ, Փօթի և այլ երկրորդական քաղաքներում։ Կառավարութեան պաշտօնական օրգանը, „Կավկազ“ լրագիրը, հակառակ գրաքննական կանոնագրքի հրամայական թելադրութեան, այդ կռւի բորբոքողն էր։ Յօդուածներ էին գրում, թէև անստորագիր, իրենք՝ պաշտօնական անձինք։ Վրաց մամուլը, անհեռատես և անտակտ, սիրտ առած, տասնապատկեց թշնամացնող քարոզը։ Եւ ազգայնական ատելութիւնը, կաթիլ կաթիլ թափանցում՝ էր աւելի ու աւելի խոր, ընտանիքի, դպրոցի, թատրոնի, եկեղեցական բեմբասացութեան, նոյնիսկ աշխատաւոր դասակարգի մէջ, որ ամենից քիչ է սիրահար քաղաքական թշնամանքի։

Եւ կառավարութիւնը տեսնում էր իր գործը...

Բայց ահա պայթեց փոթորիկ, քաղաքական մի որոտ, որի սարսեցնող թնդիւնը այլևս պետութեան ծայրերից չէր լսւում, այլ կենտրոններից, այն հսկայական քաղաքներում, ուր երբէք չէ լսւել „սեպարատիստ“ ազգերի թոյլ բողոքը, քնած ամբոխի շրջանում, որ այնքա՛ն դարեր միապետութեան ապահով պատւանդանը հանդիսացաւ։

Մեծ յեղափոխութեան ալիքները, փրփրած արթնացող ժողովրդի գալարումներով, զարկեցին, ինչպէս մրրիկ, միահեծան գահի պատւանդանին։ Սլավ ցեղի երիտասարդութեան կրծքից դանտոնական յանդգնութեան կրակ ժայթքեց։ Բանւորը ըմբոստացաւ դրամի թագաւորութեան դէմ։ Ընհող գիւղացին՝ հարկերի տակ կռացած՝ շակեց իր մէջքը։ Ամբոխը քրքիջ արձակեց աստւածային սուտի, — կղերի աղօթքի դէմ։ Ատրուկը ստրկացնողի դէմ՝ ելաւ, և հնչեց մարտի գոռ երգը...

Դժգոհ տարրերի միացմանն նախանշանն էր այդ։

Յեղափոխական ցոյցեր քիչ չեն եղել ցարերի թագաւորութեան մէջ, բայց միշտ անջատ, մի շրջանում միայն սահմանափակւած։ 1825 թւի ապստամբութիւնը՝ զինւորական էր։ 1866 և 67 թւականների դէպքերը՝ ինտելիգենտ շրջանների սեփականութիւն։ 1870—72 թւականների շարժումը՝ սահմանափակւած „դէպի ժողովուրդ“ նշանաբանով։ 1881-ի փորձը զուտ տէրօրական ձեռնարկ, իսկ 90-ական թւականների վերջերի համարձակ խառնակութիւնները՝ համապարանական երիտասարդութեան գործ։ Եւ այդ բոլորի մէջ՝ գլխաւոր դերակատարը ռուսն էր և ռուսական կենտրոնը։

Բայց ահա ծագեցին, արևի փայլով, համերաշխութեան մեծ օրերը։ Եւ այն շարժումը, որ 1901-ից սկսած առկայծում է ամբողջ Ռուսաստանը, այլևս մի շրջանի կամ

մի անջատ դասակարգի բողոք չէ, այլ շաղկապ ընդհանուր ցասման։ Այժմ ռուս կուսակցներին միանում են ուրիշ ազգեր, ռուսական կենտրոնին՝ ծայրերը։ Երբեմն ուսանողական շարժումներից իրեն հեռու էր պահում լեհը, հայը, վրացին, ֆիններ, հրեան, մահմեդականը, խաբուած՝ չեզոքութեան յոյսով, կամ մեկուսացած՝ նախկին անջատումների պատճառով։ Իսկ այժմ՝ կապուած ընդհանուր ձգտումներով և ցաւերի անհունութեամբ, երիտասարդութիւնը կուռում է առանց ազգային խնդրութեան, ձեռք ձեռքի տուած, կողք կողքի, միևնոյն շարքերում... Եւ ազգերի մէջ ատելութիւն սերմանող կառավարութիւնը, իր աչքով, սարսափած աչքով, տեսաւ, որ ռուսի հետ միասին՝ իրենց մէջքը կօղակի կնուտին և կուրծքը զինուորի հրացանին դէմ են դնում լեհն ու հրեան, որ աքսորի ու բանտի մէջ միմեանց ցաւեր ամոքում են Ֆինլանդիայի, Լեհաստանի և Կովկասի զաւակները, միասին, եղբայրաբար, գաղափարական մեծ համերաշխութեամբ։

Նորագոյն հոսանքն է այդ։

Այդ կենդանարար հոսանքը Հիւսիսում կանգ չառաւ։ Նա շարունակեց իր ճամբան, պատռեց վիթխարի լեռները և մուտք գործեց այն երկիրը, ուր քաղաքականապէս թալանուած ազգերը պապակած շրթունքներով սպասում էին մի նոր ցնցում, սիոսիալից մի խաբրիկ։

Ու այն քաղաքներում, ուր ստրկութեան դրօշակը այնքա՜ն հպարտօրէն ծածանում էր տխրագէմ հպատակների անճար գլխին, այն գիւանատների շրջակայքում, ուր գոռոզ զինուորականը և ամենակարող ոստիկանը նոր կապանքների օղակներ ձուլելով են զբաղուած, գործարանների ծխնելոյզների տակ, ուր դրամը՝ աշխատաւորի ուսերին թառած՝ նրա քրտինքով իր ժանգն է լանում, — հնչեց յեղափոխական շեփորը, լսեցին

անուններ՝ մինչև այդ հալածական, խոսքեր՝ մինչև այդ շղթայակապ...

Նորագոյն հովերը չը մարեցին կովկասեան սահմանների վրայ, այլ ընդհակառակը, առանձնակի սաստկութիւն ստացած՝ փոթորկեցին բռնապետութեան խաղաղութիւնը։ Պատահական չէր այդ, այլ հետևանք երկրի յատուկ բնաւորութեան։ Կովկասեան ազգերը սկսնակ չեն քաղաքական կուռ համար։ Կառավարութեան ընթացքն է ստիպել նրանց՝ վարժութիւններ կատարելու։ Իսկ սահմանի միւս կողմը՝ հարևան բռնապետութեան աւերակների մէջ կատարուող ողբերգութիւնը վաղուց դարձել է մի քաղաքական մ՚արդարան կովկասեան հայութեան համար, որի զաւակները՝ կախաղանների վրայ և զնդանների մէջ իրենց վերջին բոպէները պրակում են ասուածային բացականչութեամբ՝ „Մահ կամ Ազատութիւն“։ Նրանց օրինակը շատ է կենդանի և չափազանց ոգևորող...

Բայց կայ և մի այլ պատճառ։

Բռնապետութեան բէժիմը, հարբած՝ սեպարատիզմը ոչնչացնելու խելագար տենչով, քանդեց, ոչնչացրեց այն բոլորը, ինչ կազմում էր Ռուսաստանը բաղկացնող ազգերի, ուրեմն և կովկասեան ազգերի ներքին, տեղական, առանձնայատուկ զգացումը, ոգևորութիւնը, գործը։ Եւ ահա, անկարող ծառայելու սեփական ցաւերին, զուրկ միջոցներից ստեղծելու տեղական ոևէ իդէալ, գործ, վիրաւորուած՝ մարդկային տարրական իրաւունքների համար, անկարող բողոքելու, անկարող ուսուցանելու, գրելու, խօսելու մայրենի լեզուով, մայրենի ցաւերի համար,—դրանք բոլորը, իրերի անխուսափելի լոգիկով, մռռացած փոխադարձ հին թշնամութիւնները կանգնեցին նոյն շարքերի մէջ, ուս ուսի տուած, երես առ երես ընդհանուր թշնամու դէմ...

Եւ կովկասեան քաղաքները, այլև փոքրիկ աւանները,

հանդիսատես եղան քաջալերող տեսարանների։ Կարմիր դրոշակը, աշխատաւորի յաղթանակի այդ մեծ նշանաբանը, փայլեց այն վայրերում, ուր մինչև այժմ ազգերի թշնամութեան երգեր էին հնչում։ „Կեցցէ՛ ազատութիւնը“, գոչում էին բանւորները։ „Կորչի միապետութիւնը“—պատասխանում էին աշխատաւորների այլխմբեր։ Պրոկլամասիոնները, վրացերէն, ռուսերէն, հայերէն լեզուներով, ողողում են ընթերցող շրջանները։ Բաթումի մէջ բանւորները իրենց կուրծքը դէմ դրին բռնապետական հրացանին։ Թիֆլիզում՝ գործադուլի մասնակցողները ոստիկանութեան հետ մի քանի անգամ շփուեցին։ „Պրոլետարներ բոլոր երկրների, միացէք“ —ահա այն կոչը, որ հնչում էր ոստիկանութեան ականջին։ Գուրիայի մէջ գիւղացիները հրաժարուեցին „վարել կալուածատէրերի հողը“։ Իսկ Բագուն, կովկասեան բանւորութեան մայրաքաղաքը, յուլիսեան հսկայական գործադուլով, որին մասնակցեցին 45 հազար մարդ,—բռնեց ամբողջ Ռուսաստանի գուցէ և եւրոպական բանւորական շարժման պատմութեան մէջ մի տեղ, որ կարող է կենտրօնների „նախանձը“ շարժել։ Մանո՞ւկ շարժում, բայց որքան հմայիչ, որքա՜ն ուժգին...

Պատի՛ւ քեզ, արթնացող երկիր...

Բայց սա սկիզբն է միայն։ Յաղթութեան հետ միասին կը գան և փորձանքի օրեր, օրեր տանջանքի ու դառնութեան։ Բռնութեան հարուածը կը լինի անգութ, սարսեցուցիչ։ Սակայն նա չը պիտի լինի պատճառ զինադուլի և յուսահատութեան։ Մեծ գործերը մեծ զոհեր են պահանջում։

Կովկասեան ազգեր,

Սկսած կռիւը ձեզ քաջալեր։ Հաւատ մի ընծայէք բռնաւորի կեղծ ու պատիր խոստումներին։ Երես դարձրէք սեւապատում անցեալից, որ ձեր ամօթն է ու երկպա-

ռակուԹեան աղբիւրը, առնական աչքով նայեցէք դէպի ապագան, ուր ազատուԹեան արշալոյսն է Թագնուած, և ձեռք ձեռքի, սիրտ սրտի տուած՝ հարԹեցէք նրա տաս-տասկոտ ուղին։

Ընցեալը ձեզ պառակտեց։

Ապագան Թող ձեր շաղկապը լինի։ Միացէք։

ԸնհրաժեշտուԹիւն է այդ և նոյնիսկ հրամայական՝ ոչ միայն այն պատճառով, որ այդ համերաշխուԹեան մէջն է Թշնամու անկման ամենազօրեղ գրաւականը, այլև այն պատճառով, որ երբ ըմբոստուԹեան ոգին վայր կը գլորէ գահերի բարձրուԹիւնից գոնջ Թագակիրներին և գեղանի երկիրը ոտք կը դնի ազատուԹեան շաւղի վրայ, դուք կարող կը լինիք, առանց աղգայնական գերակշռուԹեան ձգտումների և Թշնամանքի, կապուել կովկասեան դաշնակցուԹեան հմայիչ գաղափարով, ու կանգնել հաւասարուԹեան և եղբայրուԹեան հողի վրայ։

Հին կռուողների շարքերին կը յաջորդեն նորերը, գաղափարը՝ տանջանքի և արտասուքի մէջ լացուած՝ կը յաղԹանակէ հպարտուԹեամբ, հպատակները կը դառնան հաւասար դաշնակիցներ, և իբրև տէր կը մտնեն Թիֆլիզի փոխարքաների փառաշուք պալատը, կովկասեան ապագայ պարլամենտը, որտեղից այժմ միապետուԹեան ցաւագար գործակալների անսանձ հրամանները սուգ ու ցասումն են տարածում ստրկացած երկրի բոլոր կողմերը։

Դա ապագայ է, բայց ոչ երազ։

Որո՞նք են այն միջոցները, որ պիտի կազմակերպեն այդ ցանկալի ապագան, և ո՞ւր է այն սպեղանին, որ կոչուած է բուժելու մորմնջիչ վէրքերը՝ նկարագրած այս էջերի մէջ, — այդ կարևորագոյն հարցերին նուիրուած կը լինի այս գրքի երկրորդ հատորը։

ԳՐԱԳԱՐ